ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ





[illegible]





[illegible]

19

ՀԱՄՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2011

9(47.925)
Ս-88

4598

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

HASMIK STEPANYAN

# THE INPUT OF ARMENIANS IN THE OTTOMAN EMPIRE

YEREVAN 2011

ՀՏԴ 93/99 (560):941(479.25)
ԳՄԴ 63.3 (5Թու)+63.3 (2Հ)
Ս 887

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Արմեն Տեր Ստեփանյան

**Ստեփանյան Հ.**

Ս 887 ՀԱՅԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ / Հասմիկ Ստեփանյան; ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստ.; Պատ. խմբ.՝ Ա. Տեր Ստեփանյան.- Եր.: Գասպրինտ, 2011.- 744 էջ:

Գիրքն Օսմանյան կայսրության դիվանագիտության, պալատական, փաշայական, ռազմական ընդգրկմամբ, բանակում, բանկային ու առևտրաարդյունաբերական համակարգում, գիտության, ճարտարապետության, քաղաքաշինության, արվեստի, կերպարվեստի, բժշկության, տնտեսության, մշակույթի, արհեստների, երաժշտության, ազգային, ամենատարբեր ասպարեզներում արևմտահայության ունեցած մեծ դերի մասին է: Առանձին ուշադրության առարկա են դարձել ամիրայական խավի գործունեությունն ու նշանակությունը: Օսմանյան կայսրությունում եվրոպական գաղափարների ներթափանցման գործում հայ մտավորականների ունեցած նշանակալի ներդրումը: Տպագրական, հրատարակչական ասպարեզը, հայատառ թուրքերեն գրականությունը անժխտելի ազդեցություն են ունեցել թուրք նոր գրականության ու նրա լուսավորիչների, թուրքերեն գրական լեզվի, թատրոնի, ժամանակակից, լրագրական ոլորտների ձևավորման ու զարգացման մեջ:

Մենագրությունը նվիրված է Թուրքիայի Հայոց Պատրիարքության հիմնադրման 550 ամյակին (1461-2011թթ.), որի ծածկույթի ներքո արևմտահայության պատմության մեջ անժխտելի է դերակատարումը: Առանց նրա անհնարին է պատկերացնել արևմտահայության ճակատագիրը մեկ ժողովրդի պատմության ընթացքում:

Նախատեսված է մասնագետների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 93/99 (560):941(479.25)
ԳՄԴ 63.3 (5Թու)+63.3 (2Հ)

ISBN 978-9939-832-37-1

© Ստեփանյան Հ., 2011

Գրքի շապիկին՝ Միքայել Ջիվանյան «Ձմեռնային»



Այս աշխատանքը նվիրում եմ վաղամեռիկ սիրելի ծնողներիս՝

**ԱՎԵՏԻՍ և ՆԱԶԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆՆԵՐԻ**

վառ հիշատակին

*Հեղինակն իր խորին երախտագիտությունն է հայտնում գրքի տպագրության հովանավորներին՝*

***ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանին և ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին***



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից ........ 9
Առաջաբան ........ 10
Համառոտագրություններ ........ 13

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

1. Օսմանյան կայսրությունը և արևմտահայությունը ........ 15
2. Արևմտահայության ազգային զարթոնքի արտահայտությունը հայատառ թուրքերեն գրականության մեջ 19-րդ դարի երկրորդ կեսին ........ 66

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

**Օսմանյան կայսրության տնտեսությունը**

1. Հողագործություն ........ 108
2. Շերամաբուծություն ........ 122
3. Ծխախոտագործություն ........ 131
4. Կենսագրական մաս ........ 136
5. Հանքարդյունահանություն, տնտեսության այլ ճյուղեր ........ 142

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

**Կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը**

1. Վաճառականական, սեղանավորական, բանկային, առևտրական, ապահովագրական ասպարեզ, երկաթուղային, տրամվայի, ջրային երթուղիներ, ընկերություններ ........ 148

**ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ**

**Հայերը պալատական, պետական ծառայության մեջ**

1. Ամիրաներ ........ 185
2. Հայերը դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմում ........ 240
3. Նախարարական պաշտոններում և վարչական ասպարեզում ........ 278
4. Հայը դատական ասպարեզում ........ 317

**ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ**

1. Ռազմական գործ, հայերն օսմանյան բանակում ........ 332

**ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ**

1. Հայերը Եգիպտոսում ........ 350

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

1. Բժշկություն, դեղագործություն ........................................ 369

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

1. Ճարտարապետություն ........................................ 430
2. Տպագրություն ........................................ 469
3. Թատրոն ........................................ 505
4. Երաժշտություն, ձայնագրություն ........................................ 538
5. Արհեստներ ........................................ 567
6. Նկարչություն, լուսանկարչություն ........................................ 602
7. Մարմնամարզություն, սպորտ ........................................ 647
8. Արևմտահայ համայնքային կյանք, միութենական շարժում, հասարակական կազմակերպություններ ........................................ 663
9. Վերջաբանի փոխարեն (հայերեն և անգլերեն) ........................................ 675

Հավելված (սուլթանների, պատրիարքական, ոչանների, վեզիրների, Մեջլիսի հայ երեսփոխանների ցուցակներ, վարչատնտեսական ցանկեր, ցուցակներ) ........................................ 684

Անվանացանկ ........................................ 714



# ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայատառ թուրքերեն գրականության տարիների մեր ուսումնասիրությունը մեզ բերեց Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում արևմտահայության ունեցած բազմակողմանի նյութի ուսումնասիրության հանգրվանին:

Հուսով ենք, որ մեր ուսումնասիրությունը կնպաստի ավելի լավ ծանոթանալ Օսմանյան կայսրությունում արևմտահայության կյանքի որոշ կողմերին: Մենք այս գրքով ցանկանում ենք տարիների մոռացության մշուշից վեր հանել հազարավոր հայ երախտավորների անունն ու գործը: Առանց նրանց անհնարին է պատկերացնել արևմտահայությունն ու նրա մշակութային կյանքի զարգացումը, ինչպես նաև Օսմանյան կայսրության կյանքի շատ ու շատ ոլորտներ, նրանց գոյության, զարգացման պատմությունը և իրական ուսումնասիրությունը:

Հուսով ենք, որ մի օր Օսմանյան կայսրության այսօրյա թուրք ժառանգները կվերանայեն իրենց պատմությունը, խղճի խայթով կմտածեն մարդկության դեմ իրենց գործած ամենամեծ ու բարբարոս մեղանչման մասին...

Հեղինակը մեծագույն պատասխանատվությամբ է վերաբերվել օգտագործված, մինչ օրս հրատարակված ու անտիպ, ձեռագիր նյութերին, տարբեր լեզուներով, տարբեր ազգերի հեղինակների հրատարակություններին ու առանձին մարդերին:

Երախտագիտության մեծ զգացումով ենք վերաբերվել մեր ուսումնասիրության մեծ ու փոքր, բոլոր «հերոսներին», նրանց ունեցած ավանդին:

Այս գիրքը խոնարհանքի տուրք է բոլոր երախտավորների, ոմանց անթաղ, լուսավոր շիրիմների, նրանց պայծառ հիշատակի առջև:

Թող հարատևի Թուրքիո Հայոց Պատրիարքությունը, որի հիմնադրման 550-ամյա հոբելյանին է նվիրված այս հրատարակությունը:

# ԱՌԱՋԱԲԱՆ

Օսմանյան կայսրությունում մեծ է եղել հայերի դերը կյանքի ամենատարբեր ասպարեզներում: Պալատական, փաշայական բարձրաստիճան պաշտոններ, դիվանագիտական կարևորագույն ծառայություններ, մշակույթի տարբեր ճյուղերից՝ թատրոն, երաժշտություն, կերպարվեստ, լուսանկարչություն, նաև՝ գիտության տարբեր ճյուղեր, բժշկություն, դեղագործություն, գրական թուրքերեն լեզվի կազմավորում ու զարգացում, լուսավորական, ինքնուրույն և թարգմանական գրականության ու լրագրական մշակույթի ձևավորում, եվրոպական առաջավոր ու հեղափոխական գաղափարների ներթափանցում ու տարածում, արհեստներ, վաճառականություն, սեղանավորություն, առողջապահություն, առևտուր, գյուղատնտեսության ու արդյունաբերության զարգացում, նոր բնագավառների կազմավորում, տպագրություն ու հրատարակչական գործ իր տարբեր դրսևորումներով, և այլն:

Այս խնդիրներին են նվիրված տարբեր լեզուներով հայ, թուրք, եվրոպացի հեղինակների բազմաթիվ կարևոր աշխատություններ, միմյանցից տարբեր մոտեցումներով ու հետաքրքրության տարբեր շրջանակներով, ուսումնասիրության զանազան տեսանկյուններով և միտումներով: Մենք խորին երախտագիտությամբ ենք օգտվել այդ հեղինակների հիմնարար ու փոքրածավալ, բազմալեզու ուսումնասիրություններից, ժամանակակիցների գործերից, հոդվածներից:

Մենք նպատակահարմար ենք գտնում այս ուսումնասիրությունը ներկայացնել հիմնականում ութ ոլորտների, որոնցից մի քանիսն այնքան շաղկապված են միմյանց հետ, որ նրանց բաժանումը որոշ չափով արհեստական կլինի: Երբեմն նույն անձին կարելի է ներկայացնել մի քանի բնագավառներում, որոնցից յուրաքանչյուրում նրա ունեցած ավանդը նշանակալի է եղել: Խառնաշփոթ չստեղծելու, նաև մեր չկրկնվելու համար, գերադասել ենք տվյալ անձի մասին խոսելիս ներկայացնել նրա վաստակը, մեկտեղելով տարբեր ասպարեզներում նրա ծառայությունները, երբեմն նույնիսկ իրարամերժ թվացող: Մենք հիմնականում չենք անդրադարձել զուտ հայկական միջավայրի տարբեր բնագավառներին իրենց գործը, ծառայությունն ու ավանդը բերած վաստակավոր, երևելի անձանց: Այդպիսիք շատ-շատ են եղել: Նրանցից ոմանք անկախապես ազգանվեր գործունեություն են ունեցել, մեծագույն բարերարներ են հանդիսացել, միլիոններ ներդրել հայկական տարբեր բարեխնամական, կրթական հաստատությունների հիմնադրման ու նրանց հետագա գործունեության ապահովման համար: Նրանցից ոմանք հայկական առաջին խել ջարդերի օրերին փակել են իրենց գործերը Թուրքիայում, տեղափոխվել Ամերիկա, Եվրոպա, սակայն շարունակել են բարեգործություններ անել հայրենի երկրում: Իհարկե, նրանցից շատերի գործունեությունն առնչվել է կայսրության թուրք և այլազգի հպատակների խնդիրների հետ, սակայն առաջ-





կիրեն միտված չեն եղել կայսրության ընդհանուր ծրագրերի զարգացմանը, այլ սահմանափակվել են արևմտահայ իրականության շրջանակով, ազգային տարբեր նպատակների, կրոնադավանաբանական, շինարարական, կենցաղային, կրթական, մշակութային ու արհեստակցական, մի խոսքով՝ համայնքային մեծ ու փոքր խնդիրներով, բառիս ամենալայն իմաստով:

Այս ամենին մենք կանդրադառնանք առանձին երևելի անձանց մասին մեր հետագա շարադրանքներում: Այս գրքում կենսագրությունների շարք ներկայացնելը (նույնիսկ արդեն հայտնի անձանց) թույլ է տալիս որևէ բնագավառում նրանց մինչ օրս ունեցած, սակայն անտեսված, մոռացված կամ չնկատված նպաստի վերհանմամբ, դրանց արժանագրմամբ, հնարավորինս այն լիարժեք ներկայացնելու միտումով: Մենք հիմնականում հպանցիկ կերպով նշել ենք նաև նրանց կատարած զուտ հայանպաստ կարևոր գործերը ևս (եկեղեցի, վանք կառուցել, վերակառուցել, վարժարան հիմնել և այլն), շեշտը դնելու համար ավելի ընդհանուր, ողջ Օսմանյան կայսրության գոյության ընթացքում մեծ ընդգրկում ունեցող երևույթների վրա:

Ուսումնասիրության մեջ որոշ օտար անուններ, շքանշաններ, կոչումներ, աստիճաններ ու տիտղոսներ հիմնականում լատինատառ են ներկայացվել: Խուսափել ենք ներկայացնել հայերեն լեզվով կամ թարգմանաբար: Մեր կարծիքով այն խառնիճաղանջության, տառադարձումների պատճառով սխալների, աղավաղումների պատճառ կդառնար: Մանավանդ որ այսօր ամենահայտնի մարդկանց, քաղաքների անունները անգամ բազմաթիվ տարընթերցումներով ենք հանդիպում: Մենք նկատի ունենք Օսմանյան կայսրության պաշտոնյաների բազմաստիճան տիտղոսները (բեյ, բեյլերբեյ, աղա, փաշա, վեզիր, սադրազամ, խեդիվ և այլն): Գալով զինվորական կոչումներին (միրալայ, մյուշիր, միրլիվա, միրիման և այլն), սրա թարգմանել ենք միայն հարյուրապետ և հազարապետ կոչումները, քանզի մնացյալի դեպքում կոչումների (անունների և իմաստի) ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունները և վերանվանումները ընթերցողին շփոթության մեջ կգցեին: Նույն տրամաբանությամբ ենք հիմնականում վերաբերվել վարչատնտեսական բաժանումների օղակներին ու դրանց պաշտոնյաների անուններին (գայմագամ, վալի, գազա, դաղի և այլն): Դրանցից ոմանց լատինատառ գրելաձևը մեզ համար փրկարար օգնակի դեր է կատարել, թույլ տվել խուսափել հնարավոր մի շարք անճշտություններից: Կոստանդնուպոլսի մասին խոսելիս օգտագործել ենք հիմնականում Պոլիս (Կ.Պոլիս) անվանումը, որն արևմտահայության համար շատ ավելի հարազատ է եղել քան մյուս անվանումները (Կոստանդինիյե, Տերսաադեթ, Ասիթանե և այլն): Ստամբուլ ևս հաճախ է հանդիպում մեր ուսումնասիրության մեջ, մանավանդ երբ թուրքական միջավայրի մասին է խոսքը: «Արևմտյան Հայաստան»-ի հետ մեկտեղ կարելի է հանդիպել «արևելյան վիլայեթներ, անատոլիական նահանգներ» անվանումներին, որը չշեշտելով հանդերձ այդ տարածքների հայերի պատմական հայրենիքը հանդիսանալու փաստը, ձգտում է միավորել, պարզ ու հասկանալի ներկայացնել այս երկու անվանումներն օտար ընթերցողների համար: Վերջիններիս համար այն հաճախ որպես երկու տարբեր հասկացություններ է ընկալվում, մինչդեռ այսկերպ հաստատում ենք, որ խոսքը Օսմանյան կայսրության տարածքում գտնվող Արևմտյան Հայաստանի մասին է: Որոշ քաղաքների անվանումների դեպքում նախընտրել ենք տալ դրանց ավելի հայտնի

ձևերը (օրինակ, Պրուսայի փոխարեն տրվում է Բուրսա անվանումը և այլն):

Գալով տեղանուններին, անուն-ազգանուններին, ապա այն անունները, որոնք ունեն արդեն իրենց հաստատված, ավանդական գրելաձևերն արևելահայերենում՝ թողել ենք նույնը: Մնացած դեպքերում նախընտրել ենք արևմտահայերեն հնչողությամբ ձևերը (Ալիքսանյան, Փափոլիչ, Բիլեզիկճյան, Ճանճի օղլի, Դեմիրճիբաշը, Մեհպար, Յափուճյան և այլն):

Մենք մեծապես օգտվել ենք վերջին տասնամյակում հրատարակված ուսումնասիրություններից ու նրանցում առկա լուսանկարչական հարուստ նյութից: Հիմնականում նկատի ունենք ժամանակակից պոլսահայ նշանավոր գիտնականներ Բարս Թուղլաճիի (Բարսեղ Թուղլաճյան), Կարո Քյուրքճյանի, Արսեն Յարմանի մեծածավալ, արժեքավոր, նկարազարդ շքեղ ուսումնասիրությունները, ինչպես նաև Րաֆֆի Փիրբարալի բացառիկ հնատպերի ամսագրերը, անուղղային հրատարակությունները, որի համար մեր խորին երախտագիտությունն ու հիացումն ենք արտահայտում:

Մենք անսահման երախտապարտ ենք մեր գլխավոր խմբագրին՝ եղբորս, մատենագետ Արմեն Տեր Ստեփանյանին, համալսարանական դասընկերուհու, թարգմանչուհի Ռոզա Լուսպարյանին, պոլսահայ ճնուշախավաք Դ.Միրիջանյանին, համակարգչային մասնագետ Վահրամ Մանուաջյանին, մեր հրատարակիչներին ու հրատարակության հովանավորներին:





# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

անգլ.-անգլերեն
ա. -առաջ
ա.թ - առանց թվականի
Արտ.- արտոնատեր
արք.-արքեպիսկոպոս
Բ.Դուռ - Բարձր դուռ, կառավարություն
բժշկ. - բժշկական
ԳԱԹ-Եղիշե Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարան
գլխ. - գլխավոր
դ. -դար
էջ. - էֆենդի
ընկ. – ընկերություն
թ. – թվական
թթ. թվականներ
խոալ.- խոալերեն
խմբ. - խմբագիր
հ. – հետո
հ. – հայերեն
հազ. – հազար
հթ – հայատառ թուրքերեն
ՀՀ ԳԱԱ -Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա
ՀՄԸՄ – Հայ մարմնակրթական ընդհանուր միություն
ՀԲԸՄ – Հայ բարեգործական ընդհանուր միություն
ՄՄ-Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան
վաճ. - վաճառական
վրդ.- վարդապետ
տպ. – տպարան
օսմ. (լիրա) – օսմանյան
փ.ա. - փողերանոցի անօրեն




Առաջին Պատրիարքանիստ եկեղեցին (1461թ.)





# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## 1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Կոստանդնուպոլիսը 360-ական թվականներին Արևելյան Հռոմեական կայսրության կենտրոնն էր: Այդ թվականին, երբ Ներսես Ա արքեպիսկոպոսը աքսորվում է Մարմարա ծովի Իշխանաց մի փոքրիկ կղզի, ենթադրվում է, որ Կոստանդնուպոլսում արդեն այդ ժամանակ հայկական փոքրաթիվ գաղութ է գոյություն ունեցել: Ավելի վաղ, 250թ. հայազգի սուրբ Մինասը իտալական Տոսկանայի շրջանում և 284թ. սվազցի ս.Վլասը, ս.Միհնոնը, ս.Մակարը արդեն հայտնի էին քրիստոնեական աշխարհին[1]:

386 թվականին, երբ Հայաստանը բաժանվում է Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև, Փոքր Ասիա են գաղթել որոշ թվով հայեր: Բյուզանդիայում ծագումով հայ կայսրերի[2] և կայսրուհիների, մասնավորապես Վասիլ Ա.Արշակունու և Մորիկ կայսեր գահակալության շրջանում հայ գաղթականները հաստատվել են հիմնականում Թրակիայում: Բյուզանդական քաղաքական շրջանակները ջանում էին, որպեսզի հայ ազնվականությունն ու մարտունակ ուժերը հեռացվեն Հայաստան աշխարհից: Երբ հայազգի Հովհաննես Բ կաթողիկոսը 565-574 թթ. պարտվում է պարսիկների կողմից, մի խումբ հայերի հետ գալիս և հաստատվում է Կոստանդնուպոլսում[3]:

---

1 Հայաստանից 250թ. Իտալիա հասած ս.Մինասը Եվրոպայի երկրներում քրիստոնեության տարածման հրախտավորներից է եղել: Ֆլորենցիայում նրա անունով եկեղեցի կա: Աշխարհում ս.Վլասի անվամբ մինչև բան 2000 եկեղեցիներ ու վանքեր կան: Նա քաղաքների հովանավոր սրբերից է (օր. Դուբրովնիկի, որի նրա անունը հնչում է՝ **ս.Վլախո**): Բնականաբար այս անունը ֆրանսերեն և խոսրերեն լեզուներով տարբեր կերպ է հնչում, սակայն խոսքը նույն սվազցի, մարդկանց և կենդանիներին բժշկող հայորդու և սրբերի շարքն անցած նահատակ-ճգնավոր եպիսկոպոսի մասին է: Նրա անվանակոչության օրը կաթոլիկ եկեղեցու օրացույցով՝ հունվարին է: Հայ եկեղեցին ևս նրան հիշատակում է հունվար ամսին: Արամ Յարմանը ոչ միայն գրել է նրա մասին թուրքերեն *Sivaz* գրքում (2008), այլև կարողացել է փնտրել, գտնել տարբեր ժողովուրդների կողմից սիրված այս սրբի գերեզմանատարը Սվազում: Արաբերեն դեղագրերի արձանագրություններով ու հավանաբար ձևի փոփոխմամբ տապանաքարը գտնվել է Սվազի Բոլոքճյան մզկիթի մուտքի աջ կողմում, մատուցարանական երկու տապանաքարերի միջև: Մեզանում 13-րդ դարի հայ ճարտարապետ **Գալուստ կամ Գեղակ (13-րդ դ., որդի Արդավանի)**-ի գործն է: Սվազի ս.Աստվածածին եկեղեցում է գտնվում Դանիշմենդների շրջանում ապրած սվազցի հայ **ս.Թեոդորոսի** գերեզմանը (Sêu Boğos Natanyan, *Sivas 1877*, İst., 2008, էջ 272-273, 203-204): Հայտնի է, որ 1851թ. Պառնի Ալիշանն այցելել է Կեսարիայի մոտակայքի Սամսուս քաղաքին կից **ս.Բենեդիկտոս** գյուղը, խոնարհվելու այնտեղ հանգչող հայազգի սուրբ մի հրաշագործ անձի՝ **ս.Միհնոնի** աճյունին: Ալիշանն այնուհետև այցելել է Բեզքիայի Գանդ քաղաքը, որ թաղված է **ս.Մակար** հայազգի եպիսկոպոսը: Այս պատմական անձինք կաթոլիկ եկեղեցու կողմից սրբերի շարքն են դասվել:

2 **Հերակլ (575-641), Ֆիլիպիկոս Բարդանես (711-713), Լևոն Ե Հայ (813-820), Արտավազդ (742-), Վասիլ Ա (812-886), Լևոն Զ (886-912), Կոստանդին Է Ծիրանածին (913-959), Ռոմանոս Լեկապենոս (914-944), Նիկեփոր Փոկաս (912-969), Հովհաննես Չմշկիկ (925-976)**: Բյուզանդիական գահին են բազմել ծագումով հայ 11 կայսրեր ու 9 կայսրուհիներ:

3 866թ. Կեսար Վարդասը վերաբացել է Կոստանդնուպոլսի Մագնավրիա համալսարանը, որը 863թ. սկսյալ ղեկավարել է **Լևոն Փիլիսոփան**: Կարծիքներ կան, որ հայտնի մաթեմատիկոս **Լևոն** (790-869թթ.), փիլիսոփա **Բարդաս** (810թ.) և **Հովհաննես Է** (867թ) քերականագետը անձնային հայկական ծագում են ունեցել: Դ դարում հայազգի **Պարույր Հայկազն (Պրոյերեսիոս)** իր դարի ամենալայն հռետոր արժանացել է, որ Հռոմում կանգնեցնեն նրա արձանը հետևյալ մակագրությամբ՝ «Թագուհին քաղաքաց՝ թագավորի ճարտարին»: Ոչ միայն բյուզանդական արքունիքում, բանակում, այլև եկեղեցում հայազգի առաջնորդներ են եղել: Հայտնի է ավելի քան 20 պատրիարք բյուզանդական բանակի հրամանատարությունը վարած **Հովհաննես Կուրկուաս** զորավարի հայկական ծագման մասին: Նույն այս

պես Հովհաննես Կոլոտի զուսպ դիվանագիտությունը: Այսպիսի վարմունքի օրինակ է եղել Ավետիք Եվդոկացի պատրիարքի ծայրահեղ հակակաթոլիկ քաղաքականությունը և ֆրանսիական դեսպանի կողմից նրա առևանգումը, մինչև Բաստիլի բանտում նրան բանտարկելը: Մի այլ պատրիարքի՝ Թումա Հալեպցու, 1657թ. արտոնակալների միջոցով սպանության պատճառ է ակնարկվում պատրիարքի «լատինասեր» լինելու հանգամանքը[23]:

Կաթոլիկացման շարժումը բուռն հակազդեցություն, բանավեճեր է առաջացրել պարբերականների էջերում: Հոդվածագիրները ըմբոստացել են Հռոմի պապի դեմ, որը ցանկանում էր հայ և հույն եկեղեցիներն «ամփոփել» Վատիկանի իր պալատում: Ինչո՞ւ, ո՞վ է պապը: Այս հարցումներին պարբերականներում հետևել են օրինակներ պապերի մասին հենց լատին պատմագրությունից, կանոններից, երբ «շատ պապեր մեղադրվել են հերետիկոսության մեջ, հրեշներ են եղել, ընտրվել թագավորների ու արքունիքների կամքով»:

Քանի որ Կ.Պոլսի պատրիարքարանն արևմտահայության համար իրենից ներկայացնում էր ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական իշխանություն և տնօրինում էր նյութական մեծ կարողության, ապա միշտ էլ սուր պայքար է մղվել պատրիարքական աթոռին տիրանալու համար: Պատահական չէ, որ երբեմն աշխարհիկ մեծահարուստ ամիրաները պատրիարք չէին ընտրում ու իրենք էին համարվում աթոռակալ, օգտվելով պատրիարքին տրվող բոլոր իրավունքներից: Երբեմն պատրիարքարանն ու ամիրայական դասը միմյանց դեմ են կանգնել, միմյանց իշխելու նախաձեռնողությամբ ու շահադիտությամբ, մեծագույն վնաս հասցնելով համայնքային կյանքին, նրա համախմբմանն ու ազգաշահ գործերին: Այսպես օրինակ, 1842թ. 27 էսնաֆների (արհեստակցական միությունների) ժողովը հրաժարվում է, ու կրկին ամիրաների ձեռքն է անցնում պատրիարքարանի վարչությունը: Սակայն աթոռակալ ամիրաները հիմնականում կարողացել են վեր գտնվել անձնական շահերից, իրենց կողմնորոշումներից, կատարել են ազգի «հայրերի» իրենց պարտականությունները, աստիճանաբար նաև լրացնելով նոր ձևավորվող բուրժուազիայի շարքերը: Ամիրաները համարյա միշտ մրցակցության մեջ են եղել միմյանց հետ: Բարեբախտաբար, *այս մրցակցության էությունն ու խնդիրը հիմնականում հանգել է այն բանին, թե ո՞վ ավելի օգտակար կհանդիսանա իր ազգին, ի՞նչ նոր հնարավորություններ կստեղծի ու կընձեռի համայնական կյանքն ավելի միաշունչ, ավելի առաջավոր ու բարվոք դարձնելու համար*: Սա շատ ավելի խորն ու նվիրական անձնազոհության արտահայտություն կարելի է համարել, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ամիրայական խավի մի նշանակալի մասը կաթոլիկության հարող ընտանիքներ են եղել: Նրանք կարողացել են վեր գտնվել այս հանգամանքից ևս, համախմբվել պատրիարքական աթոռի շուրջ՝ լուծելու համար ազգի կարևորագույն խնդիրները: Ավելին, դավանական այս տարբերությունը, ժամանակ առ ժամանակ, վտանգավոր ու բացասական իրավիճակներում հետին պլան է մղվել: Ամիրաների մի մասը, որոնք եղել են Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքարանների հովանավորներ, բարերարներ, կառուցել են եկեղեցիներ, իրենց մահվանից հետո թաղվել հենց իրենց կառուցած եկեղեցիների բակում[24]: Այդպի-

23 Թումա Հալեպցու սպանության մասին չափածո տաղի մեր հրատարակությունը տես՝ Հ.Սահակյան, *Նմուշներ հայաստանյան բարբառների չափածո գրականությունից*. Արևելյան Աղբյուրագիտություն, ժողովածու հ.1, ՀՀ ԳԱ, Եր., 1988, էջ 83-98:

24 **Միսաք ամիրա Միսաքյան** (1790-1856), սեղանավոր. Ազգային հիվանդանոցի հոգաբարձու է եղել և ազդեցիկ դեր ունեցել պատրիարքարանի գործերում: Թաղվել է Պոլսի գյուղի իր կառուցած եկեղեցու բակում:







Սուլթան Մեհմեդ Բ Ֆաթիհը և Հայոց առաջին պատրիարք Բուրսացի Հովակիմը. XVI դ. մանրանկար



Սուլթանը և քրիստոնյա հոգևորականներ. XVI դ. մանրանկար



1696 թ. Ս. Հրեշտակապետ եկեղեցու հայկական պատկանելության մասին տրված սուլթանական ֆերման




Այուբյան դինաստիայի հիմնադիր
Սալա Ադ-Դին (1174-1193)
*Անանուն իտալացի նկարչի գործ*



Երուսաղեմի տնօրինական վայրերի հայկական պատկանելության մասին Մուհամմադ Մարգարեի (570-632թ) կողմից Երուսաղեմի պատրիարք Աբրահամին տրված հրովարտակ (ֆերման)

## Օսմանյան սուլթաններ



Մեհմեդ Բ Ֆաթիհ
*Գործ՝ Ջովաննես (Ջենիլ) Բելլինիի*



Սելիմ Ա Յավուզ (1512-20)



Մուրադ Գ Ղազի (1574-95)





մի երևույթներից է եղել Հովհաննես Կոլոտ պատրիարքի օրոք հայ թարգմանական դպրոցի՝ «Դպրատան» հիմնադրումը, որը և կանխորոշիչ եղավ Օսմանյան կայսրությունում զարթոնքի դարաշրջանի մշակույթի համար բարեբեր հող նախապատրաստելու համար, իր գոյության ողջ տարիներին զարկ տալով արևմտահայ նոր գրականության զարգացմանը, տպագրության ու մամուլի, ընդհանրապես՝ մշակույթի ծաղկմանը։ Այս շրջանի արևմտահայ բնութագրի համար կարելի է օգտագործել «արևմտահայության փառքերը» անվանումը։ Դրանց թիվը շատ է։ Նրանց գտնում ենք ամենատարբեր ոլորտներում, կայսրության ամենատարբեր անկյուններում։

Ճակատագրական պահերին և՝ անհրաժեշտ, և՝ ռազմական կաթոլիկ հայերն իրենք առաջինն են ոտքի ելել (բացահայտ կամ թաքնված), պայքարելով կաթոլիկ ու բողոքական հոգևորականների, միսիոներների հայաթափման, հայակործան արշավանքի, նրանց որոգայթների դեմ։ Այս առթիվ լավագույն օրինակներից կարելի է համարել պապական, հասունյանական հակահայ պայքարի շրջանում հայ ժողովրդի միասնության համար նրանց դեմ պայքարի ելած առաջադեմ ու կրթյալ հայ կաթոլիկության ներկայացուցիչների միասնական ցույցերը։ Այդպիսի հայրենասեր կաթոլիկ գործիչներից էին Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Ծերենցը, Հովսեփ Վարդանյանը, ամիրաները, Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերն իրենց հնարավորության սահմաններում և մյուսները։ Նրանցից շատերը, համախմբվելով «Համազգեաց» միության շուրջ, բուռն պայքար են ելել պապական, միսիոներական զավթարար, հայադավ քաղաքականության դեմ։ Արևմտահայ իրականությունում ծնված առաջին ռեալիստական հակակղերական ուղղության տենչող վեպը «Ագապի»-ն (1851), մեր ազգի միասնությունն ու ուժը բեկնող խավերի ողջ արհեստականությունն ի ցույց դնող գրական արժեքավոր առաջին արտահայտությունն էր։ Առանց հեղինակի անվան հրատարակված հայատառ թուրքերենով[25] այս վեպը և մեկ տարի անց տպագրված «Պոշպողազ սիրո առեն»-ը 1852թ. բանադրանքի են արժանացել կաթոլիկ եկեղեցու, Հռոմի կողմից։ Ինքնությունը [illegible]



Երուսաղեմի տնօրինական վայրերի հայկական պատկանելության մասին Սալա Ադ-Դինի հրովարտակը



25 Մեր ժամանակների հայտնի գրականագետ, բանասեր Գառնիկ Ստեփանյանին ենք պարտական այս վեպի արևմտահայերեն թարգմանության ու նրա իրական հեղինակի՝ Հովսեփ Վարդանյանի անվան բացահայտումը (*Ակաբի*, Երևան, 1953թ.; Բոստ. 1979թ.)։ «Ագապի»-ն լատինատառ թուրքերենով լույս է տեսել Պոլսում 1991թ., իր առաջին հրատարակությունից 140 տարի անց։ Այն համարվել է առաջին թուրքերեն վեպը։ Բազմաթիվ բացահայտումներ և շտկումներ է պարունակում ֆրանսահայ նշանավոր մասնագետ, բանասեր Ժիրայր Դանիելյանի «Յովսէփ փաշա Վարդանեան. անհանգիստ դարաշրջանի ու վիպագիրը» չափազանց արժեքավոր ուսումնասիրությունը։ Տես՝ Ժիրայր Դանիելեան, «*Բանասիրութեան ճանապարհին մէջ*» գրքում։ Երևան, «Սարդիս» հրատ., 2011, էջ 181-258։



Երուսաղեմի տնօրինական վարերի հայկական պատկանելության մասին վերջին բարեպաշտ խալիֆ Ալիի (656-661) հրովարտակը

պրոցած հեղինակը ոչ այլ որ էր, քան ժամանակի ամենազարգացած մարդանցից մեկը, ճանաչված ու մեծ հեղինակություն ունեցող պալատական բարձրաստիճան պաշտոնյա Հովսեփ Վարդան Փաշան (Վարդանյան), դավանանքով կաթոլիկ: Հաջորդ տարի՝ 1853թ. նույնպիսի բանաստեղծի է արժանացել Լը Սաժի «Կաղ սատանա» վեպի հայատառ թուրքերեն թարգմանությունը, կատարված Հովսեփ Վարդանյանի կողմից: Սակայն 1857թ. Հովսեփ Վարդանյանը վերտիպչայանները մտցրել է իր հեղինակած, թարգմանած և խմբագրված գրքերի ցանկում (տպագրված ներբանական գրքի «Թէլէղրաֆ Ըխպալէսի» գրքի եռեւում): Բանաստեղծը զրաշտկայում ավելի փնտրվող, փանտելի էր դարձրել վերտիպչյալ գրքերը: Այս պայքարի պատմությանություններից են երևելի կաթոլիկ հայերի վերադարձը առաքելական եկեղեցու գիրկը: 1856թ. մայիսի 18-ին Մխիթարյան միաբանության հայրերից Գաբրիել Այվազովսկին, Ամբրոսիոս Գալֆայանը և Սարգիս վրդ. Թեոդորյանը ընդունում են հայ եկեղեցու դավանությունը: Նմանատիպ օրինակներից են 1877թ. Մաղաքիա Օրմանյանի (1841-1918), ականավոր թեմեր Գաբրիել փաշա Ներյանի ընտանիքը կաթոլիկ եկեղեցուց հրաժարվելն ու առաքելական եկեղեցու գիրկ վերադարձը (1878):

Բնականաբար, տպագրական կառավարությունը չափազանցված էր, ոսկեցի հաճախակի փոխվեին պատրիարքները: Յուրաքանչյուր նման դեպքում կառավարությունը որոշակի գումար էր գանձում: 1600 թվականից մինչև Հովհաննես Կոլոտի պատրիարք դառնալը (1715), 115 տարվա ընթացքում պատրիարքական աթոռ են բարձրացել 55 դեմքեր (գրեթե 60-70 անգամ), միջին հաշվով հազիվ 2-3 տարի պատրիարք մնալով: Ավելին, նույն անձը կարողացել է մի քանի անգամ զբաղեցնել պատրիարքական աթոռը: Այսպես օրինակ, Կարապետ Կեսարացին պատրիարք է դարձել՝ 5, Դավիթ Արևելցին՝ 4, Հովհաննես Խուլը՝ 3 անգամ և այլն[26]:

Պոլսո պատրիարքարանի ժողովներն իրենց օրակարգում անընդհատ ունեցել են գավառահայության հարստահարության հետ կապված բազմաթիվ խնդիրների քննարկումներ: Կարևորագույններից է եղել նաև ազգային սորքի փոխարեն օսմանյան բանակին զինվոր տալու խնդիրը, սակայն այս բանակցությունները ի վերջո դադարել են հարցի հետևյալ ընդունմամբ. 1871թ. հոկտեմբերին «Մանզումէի էֆքեար» հայատառ թուրքերեն օրաթերթի էջերում այս խնդրի մասին հոդվածներում տպավորիչ են եղել Պեկեյան(մի այլ տեղ Պենյան) և Ոսկանյան էֆենդիների եզրերը, որոնց խոսքերի իմաստը հետևյալն էր՝ «Հրացանը մեծ տերությանց ձեռաց մեջ մեծ գործեր կը գործէ, բայց փոքր, անվարժ ձեռքերի մեջ ալ խիստ վտանգավոր է...»:

26 Հ. Սիրունի, էջ 55: Տես նաև գրքի Հավելված բաժնում:





Պատրիարքարանին ու նրա շրջապատին հուզող թերևս ամենակարևոր հարցը՝ առաքելական եկեղեցու հետևորդներին կաթոլիկական ու ավետարանական միսիոներական որոգայթներից հնարավորինս զերծ պահելու չափազանց դժվար, համարյա անլուծելի խնդիրն է եղել:

Արևմտահայ իրականությունում բուռն գործունեություն են ծավալել կաթոլիկական եկեղեցու տարբեր ուխտերի քարոզիչներ՝ ճիզվիտներ, կապուցիններ, հիսուսյաններ, դոմինիկյաններ, ֆրանցիսկյաններ, լազարիստներ, կարմելիտներ, ունիթորականներ և ավետարանական տարբեր կազմակերպություններ: Այս հարցերն ուսումնասիրության համար նյութ են դարձել և լայնորեն լուսաբանվել Ս.Պետերբուրգի համալսարանի և Արևելագիտության ինստիտուտի խորհրդային շրջանի երկու ականավոր արևելագետ թուրքագետների՝ Անատոլի Ժելտյակովի և Յուրի Պետրոսյանի աշխատություններում:

Օսմանյան կայսրությունում դպրոցական գործի զարգացումը 19-րդ դարի կեսերից սերտորեն կապվում է քրիստոնյա ժողովուրդների շրջանում վերոհիշյալ միսիոներական ուխտերի գործունեության հետ: Հայ իրականությունում միսիոներական ուխտերի գործունեության մասին հարուստ նյութեր են պարունակում ժամանակի հայերեն և հայատառ թուրքերեն մամուլը, հայարենակ տարբեր գավառների պատմությանն ու կյանքին, այդ վայրերում հայերի ճակատագրին նվիրված գրքերը, հայրենակցական միությունների հրատարակությունները, ինչպես նաև եվրոպական լեզուներով առկա պատկառելի թվով գրականությունը: Դրանցից ոմանք մանրամասն ներկայացումներ, փաստական ու լուսանկարչական հարուստ նյութեր են պարունակում Օսմանյան կայսրության ողջ տարածքում միսիոներական շարժման մասին: Հայրենակցական միություններին, Արևմտահայաստանի առանձին նահանգներին նվիրված գրքերի հեղինակները հաճախ ամբողջական գլուխներ են նվիրել իրենց գավառներում, քաղաքներում կաթոլիկ և ավետարանական միսիոներների ներթափանցմանն ու հաստատմանը, նրանց գործունեությանն ու հայ բնակչության հետ ունեցած նրանց փոխհարաբերություններին:

Ճիզվիտներն Օսմանյան կայսրություն են ներթափանցել ֆրանսիական հովանավորությամբ 1538 թվականին: Այս ուխտի գործունեությունն ուղղված էր կայսրությունում և նրա քրիստոնյա հպատակների շրջանում ֆրանսիական ազդեցության տարածմանը[27]: Դեռևս 1688թ. Էրզրումում հիսուսյանների ուխտին հաջողվել էր որոշ հայերի կաթոլիկ դարձնել: Այս կարևոր խնդրի քննարկումներին տարբեր ժամանակներում, տարբեր պատրիարքների օրոք, հրավիրվել ու իրենց մասնակցությունն են բերել (երբեմն զաղտնի) կաթոլիկ հայ համայնքի երևելի ներկայացուցիչները[28]:

27 1583թ. Հռոմի պապը Կ.Պոլսում, ֆրանսիական դեսպանի միջնորդությամբ, Պերա հարուստ թաղամասում հիմնում է ճիզվիտական հովանավորությամբ «St. Benoit» քոլեջը, որը գործում է մինչև օրս: Այս մասին տես Աղաբեկյան Արշակ, *Պատմություն Եկեղեցւոյ Հայոց*, Կահիրե, 1952, էջ 850:
1625 թվականին Կ.Պոլսում ֆրանսիական ներկայացուցչության խորհրդական Ռիշելյե Ժոզեֆ որ Գրավիցի ջանքերով կազմակերպվեց կապուցինյան ուխտի «St. Louis» քոլեջը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կաթոլիկական տարբեր ուխտերին պատկանող դպրոցներում սովորում էին ավելի քան 100 հազար երեխաներ: Տես՝ А.Д.Желтяков, Ю.А.Петросян, *История просвещения в Турции (конец XVIII - начало XX века)*, М., 1965, с. 131-132.
28 1816թ. **Պողոս Ը Գրիգորյան Աբրահամայրենցին** (1815-1823) հոգևորականների և աշխարհականների միացյալ մի ժողով է գումարել պատրիարքարանում, քննարկելու համար հայ համայնքի վիճակը: Կաթոլիկների կողմից մասնակցել է Հովսեփ Թնկըյանը: Նրա որդին՝ Թնկըյան Հովհաննես ամիրան (1789-1868), եղել է արտադրամասատեր Փոսաղ փաշայի սեղանավորը, Պետական խորհրդի անդամ, 1842թ. Ռուսիայի բանկային ընկերության հիմնադիր անդամներից: 1817թ. մայիսի 23-ին պատրիարքը

ժամակ բարեկամական ու համդուրժողական են եղել, կախված պատրիարքական աթոռներում բազմած հոգևորականների վերաբերմունքից, նրանց աշխարհայացքից:

Պատրիարքները կապ ունեին պալատի հետ, ընդունելություններ էին արժանանում սուլթանների կողմից, քննարկում հայ ժողովրդի վիճակը, այս կամ քաղաքական խնդիրներում, պատերազմների ժամանակ նրանց կատարելիք դերի շուրջ հարցեր: 1877թ. հոկտեմբերին սուլթան Աբդուլ Համիդ Բ-ն, Յըլդըզի պալատում ընդունելով Ներսես Վարժապետյան պատրիարքին, հավաստացրել է, որ ինքն ափսոսում է պատերազմների ժամանակ զենքը ձեռքին անձնվիրաբար զոհված հայերի և նրանց գլխին եկած փորձանքների համար, սակայն թափված արյան պատասխանատուն ինքը չէ: Որպես հաստատումն իր խոսքերի ու իր բարի հարաբերությունների, սուլթանը Ներսես Վարժապետյանին առաջին աստիճանի ***Osmaniye*** է շնորհել: Այդ շրջանում պատրիարքներին իրավունք է տրվել դրամի փոխանիչ-տոմսակներ (10, 20 փարայի փոխարժեքով) տպագրել Պոլսի և գավառների տարբեր եկեղեցիներում գործածության համար՝ տոմսակների վրա նշվելով տվյալ եկեղեցու անունը:

Օսմանյան սադրազամները որևէ կարևոր հարց քննարկելու համար երբեմն ոչ թե հայոց պատրիարքին են պալատ, կամ Բարձր Դուռ կանչել, այլ՝ իրենք են այցելել պատրիարքարան: Սադրազամ Միդհատ փաշան առաջին անգամ լինելով 1877թ. այցելել է Ներսես Վարժապետյան պատրիարքին և փոխադարձ այցելության հրավիրել: Սադրազամը ջանքեր էր գործադրում միավորելու հպատակ ժողովուրդներին: Նա հայտնում էր, որ մեծ համակրություն է ունեցել հայ հպատակների նկատմամբ: Երբ մեծ վեզիրն աքսորվել է Թաիֆ, նրա հետ է եղել քարտուղարը, կաթոլիկ դավանանքով Անտոն Քըլըճյանը (Անտուան Քալճյան, 1819-1884): Փաշան, որ երկու սուլթանների գահընկեցության գործում մեծ ծառայություն էր մատուցել Աբդուլ Համիդ Բ-ին, երբեք չի վայելել սուլթանի վստահությունը: Խանգարող էին հենց անցյալում սուլթանի կողմից գործադրված դավադրություններին փաշայի տեղյակ լինելը: 1877թ. փաշան աքսորվել է: Իհարկե, պատրիարքներին հյուր գալը համեմատաբար ավելի ապահով է եղել, քանզի հայտնի են դեպքեր, երբ թուրքական կողմի «հրավերից» հետո հայ երևելիները մահացել են: 1892թ. արքեպիսկոպոս, մշակութային ու գրական երևելի գործիչ Խորեն Նար-բեյ Գալֆայանը (1832-1892) հրավիրվել է ոստիկանական կենտրոն, սուրճով թունավորվել, մահացել: 1879թ. արքեպիսկոպոս Խորեն Նար-բեյը Ռումինիայի և Բուլղարիայի հայոց հոգևոր գործերը բարենորոգելու համար կառավարությունից ստացել էր 3-րդ և 2-րդ աստիճանի ***Mecidiye***[34]:

1906թ. Ռազմական նախարար Մահմուդ Շևքեթ փաշան և Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան ևս այցելել են պատրիարքարան, կարևոր հարցեր քննարկելու համար: Հայոց պատրիարքարանը և պատրիարքները Պոլսի քաղաքական, դիվանագիտական միջավայրում առանձնակի կշիռ են ունեցել ու մեծ հեղինակություն են վայելել: Նրանց նկատմամբ ունեցած հարգանքի ապացույցներից կարելի նկատել պատրիարքական թաղման թափորներին օտարների մասնակցության մակարդակը, որը դուրս է եկել դիվանագիտական արարողակարգի սահմաններից: Այսպես օրինակ, 1910թ. դեկտեմբերին Իզմիրլյան պատրիարքի

34 1879թ. Սոֆիա ուղարկված կառավարական հանձնաժողովում լավ ծառայության համար Դոմինյան և Կարապետ էֆենդիները ***Rütbe-i Sâniye*** և ***Mütemayiz***-ով են պարգևատրվել, իսկ քարտուղարներ Պետրոս էֆենդին շնորհվել է 5-րդ աստիճանի ***Mecidiye***: Հանձնաժողովի ղեկավար Յահյա փաշայի քարտուղարներն են եղել Կարապետ Դավութ բեյ Արթինյանը և Գաբրիել Նորատունկյանը:





## Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ



Հակոբ Բ Նալյան (1741-48, 1752-64)

Մաղաքիա Օրմանյան (1896-1908)
Հովհաննես Չամաչյան (Պալատեցի) (1831-39, 1840-41),
Մատթեոս Իզմիրլյան (1894-96, 1908-09),
Գևորգ Քերեստեճյան (1858-60),
Մկրտիչ Խրիմյան (1869-74)
Նկարիչ Վահրամ Մանավյան

Զավեն Տեր-Եղիայան (1913-15, 1919-22)
Զաքարիա Քոբուլյան Կաղզվանցի (1773-81, 1782-99),
Սարգիս Ե Կույումճյան (1860-61),
Հարություն Ա Վեհապետյան (1885-88),
Պողոս Բ Թաքթաքյան (1863-69)
Եղիշե Դուրյան (1909-11)
Նկարիչ Ռուբեն Սևոյան



Վենետիկի ս.Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Աբբահայր Սեբաստացի





բար լեզվի զարգացումը: 1727թ. հայատառ թուրքերեն տպագրված Մխիթար Սեբաստացու հեղինակած «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին Հայոց, շարադրեցեալ տաճկական լեզուաւ» դասագիրքը ու նրան կից բառարանը այս գործընթացի առաջնեկներն էին: Մխիթարյան հայերենով հրատարակությունները կարճ ժամանակում սկսեցին մաքրվել բարբառային ու օտար տարրերից: Արևմտահայերենը, հայատառ թուրքերենի շնորհիվ՝ նաև թուրքերեն լեզուն, սկսեցին մաքրվել ու գրական արևմտահայերենը, նոր թուրքերենը սկսեցին իրենց վերելքը: Նոր, գրական թուրքերենի զարգացման գրավական հանդիսացավ ինքնուրույն ու թարգմանական հայատառ թուրքերեն գրականությունը, պարբերական մամուլը:

Նույն այդ շրջանում Զաքարիա Կաղզվանցի Փոքուզյան (1719-1799թթ.) պատրիարքի (Կ.Պոլսի պատրիարք է եղել 1773-1781թթ.) ջանքերի շնորհիվ մայրաքաղաքում բացվել են առաջին թաղային, ծխական վարժարանները: Դրանցից անդրանիկը Գումգափու թաղի Յոչընը փողոցի մեջ Ծնորհք ամիրայի մեկենասությամբ բացված դպրոցն էր: Այնուհետև՝ Պալաթ, Բերա, Սամաթիա, Օրթագյոյ, Գուրուչեշմե, Սկյուտար թաղերի դպրոցները: Պատրիարքը համոզված էր, որ հայ եկեղեցու հակառակորդների դեմ մրցելու զորավորագույն միջոցը դաստիարակության ու զարգացման ջանքերն են ու ինքն էլ անձնազոհ նվիրվեց այս կարևոր գործին: Նրա բազմաշերտ կենսագործունեության արդյունքն էր շինարարական գործը (եկեղեցիներ, հիվանդանոցներ), հրատարակչական շարժումը՝ հայերեն, հայատառ թուրքերեն կրոնական, գրական, գիտական գրքերի հրատարակությունը, նաև՝ բազմաթիվ դասագրքեր, օրացույցներ և այլն: Նա թողեց հոգևոր ու աշխարհիկ աշակերտների մի խումբ, որոնք նոր աստիճանի հասցրին նրա գործը: Պատրիարքական աթոռին ընտրվելու կապակցությամբ նա Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոնից հատուկ կոնդակ ստացավ, որում նաև 6 կարևոր հրահանգներ էին պարունակվում.

ա. Հայաստանեայց եկեղեցու ավանդույթներին համեմատ հովվել.

բ. Ժողովուրդը զգուշացնել ոչխարի մորթով գայլերից ու մեզանից հեռացած կրոնն ապականողներից.

գ. Հավատարիմ ու խորհրդական իշխանավորների հետ խորհրդակցելով գործել.

դ. Արժանավորներին պատվել, իսկ բանսարկուների ու խռովարարների նկատմամբ խիստ լինել ու պատժել, եթե խրատները չեն օգնում.

ե. Հավատքի ու կրոնի մեջ փորձառուներին առաջնորդ կարգել.

զ. Հավատարիմ, հնազանդ ու ենթակա մնալ Մայր աթոռին:

Ամբողջ իր գործունեության ընթացքում Զաքարիա Կաղզվանցին հավատարիմ մնաց հայրապետական այս հրահանգին ու իր նախորդների՝ Հովհաննես Կոլոտ ու Հակոբ Նալյան պատրիարքների ավանդներին ու նրանց գործի արժանավոր շարունակողը եղավ: Գործունեություն, որը մեծապես խանգարում էր կայսրությունում եվրոպական երկրների նպատակներին, ուստի Ավստրիայի ու Ֆրանսիայի դեսպանների՝ պատրիարքի պաշտոնանկությունը պահանջող բողոքներն ի վերջո բավարարվեցին սուլթանի կողմից, և նա 1781թ. աքսորվեց Բուրսա: 1782 թվականին, տասն ամիս անց, նա կրկին պատրիարքական աթոռը վերագտավ՝ շնորհիվ եպարքոս Իզզեթ փաշայի, ի գնահատություն Կաղզվանցու «Ազգասեր» անունը կրած իր հոտի:

Դպրոցական կյանքի զարգացման բնագավառում հայ պատրիարքները նաև բանավճռային ակումբների դեր են խաղացել: Գավառներում կազմակերպվող խոստումնային կազմակերպություններ, տիկնանց, բարեգործական միություններ, ինչպես և Օսմանյան կայսրությունում բոլոր միությունները պարտավոր են եղել ունենալ իրենց կանոնադրությունները, որոնք կամ տպագրվել են պատրիարքականների էջերում և, որ ավելի հաճախ է պատահել՝ տպագրվել են առանձին տետրակների տեսքով: Գավառներում լուսավորական շարժման հիմնական բեռն իրենց վրա են կրել հենց այդ կազմակերպությունները: Նրանք կոչված են եղել ձեռնարկել աղջկանց անկախ ու բարեկարգ վարժարանների հիմնադրում, որ նաև արհեստներ պիտի դասավանդվեին, ասոսր լինեին ամենատարբեր դպրոցական խնդիրների լուծման համար: Այս կանոնադրություններից, ծանոթում հայտնված տարբեր նամակներից իմանում ենք, որ իգական վարժարաններում որոշ գավառների տիկնանց միության ջանքերը ուղղված են եղել այդ դպրոցներում ամբիկուռի ուսուցչուհիների դասավանդման հրավիրման խնդիրներին:

Դպրոցական խնդիրների մասին հոդվածներ են գրել արևմտահայ մտավորականության բոլոր բնագավառների մարդիկ: Սա նշանակում է, թե որքան սրտամոտ, կարևոր են համարել նրանք ազգի դաստիարակությունը: Հանրաճանաչ դերասանապետ Մարտիրոս Մնակյանը, որն իր հյուրախաղերի պատճառով ծանոթ էր գավառահայության ուսումնական խնդիրներին, Պոլիս վերադարձին, 1868թ. Կեսարիայում նոր կազմակերպվելիք մի դպրոցի մասին գրում է, թե պետք է դասավանդվեին անպայման հայկաբանություն, տաճկերեն, ֆրանսերեն, ազգային և սուրբ պատմություններ, քրիստոնեական վարդապետություն, թվաբանական գիտություն, թվաբանություն, աշխարհագրություն, տոմարականություն, օրինագիտություն առակաները:

Իհարկե, դպրոցական խնդիրները բոլոր ժամանակներում էլ ունեցել են նման «հիվանդություններ», երբ դպրոցում ծխել են, խմել, դումար խաղացել, դատարկապորտությամբ զբաղվել: Դպրոցական ծրագրերում առողջապահության, բնախոսության, մարդակազմության դասերի գոյությունն ուղղված էր այդ հոռի կողմերի հնարավոր շտկմանը: Սակայն դպրոցների ու աշակերտության անմխիթար վիճակի պատճառները նաև գավառահայությունն ինքն էր, քանզի տղաներին 12-14 տարեկանից հանում էին դպրոցից, ուղարկում աշխատելու, նաև ափսոսելով 50-200 դուռշ ուսման վարձը: Այստեղ է, որ անգնահատելի է եղել որոշ բարերարների կողմից վարժարանների, գիշերօթիկների, որբանոցների հովանավորությունը, ձրի դպրոցների բացումը, զոնե՝ կիրակնօրյա: Մյուս կողմից, պատրիարքականների էջերն ավետում են տարբեր գավառներում, քաղաքներում, գյուղերում, ամենահեռավոր շրջաններում անգամ դպրոցների, ընթերցասիրաց ակումբների բացման լուրերը և այդտեղ հայտնի մտավորականների դասախոսությունների մասին հայտարարությունները, տարեկան քննությունների արդյունքների ու ավանդական հանդեսների առթիվ կազմակերպված ցուցահանդեսների, ձեռքի աշխատանքների վաճառքի-վաճառքի մասին լուրերը: Պատրիարքականները, որպես կանոն դպրոցական տարվա ավարտին տպագրում էին հաշվետվություններ ավարտողների թվի, որակի մասին, նրանց անունները, միացյալ դպրոցական լուսանկարները:

Սուլթան Մահմուդ Բ-ն քրիստոնեական աշխարհիկ դպրոցների օրինակով 1828 թվա-







Սահակյան որբանոց (Կոնիա)

կանից ի վեր մի շարք ոչ կրոնական, երկրորդական ու մասնագիտական վարժարաններ էր բացել, որ ոչ մահմեդականների մուտքն արգելված էր: Քիչ ավելի ուշ ակնհայտ էր դառնալու, որ այս, մասնավորապես մասնագիտական դպրոցները չէին կարող հաստատել իրենց՝ առանց այլազգի մասնագետների, ուսուցիչների, նաև՝ հայազգի ուսուցիչների ու աշակերտների, որոնք առատորեն պիտի լրացնեին Օսմանյան կայսրության ամենատարբեր նախարարությունների ու վարչությունների մասնագետ-պաշտոնյաների տեղերը, հասնելով բարձրագույն աստիճանների: Իհարկե, հայերն ու հույներն ունեին իրենց ազգային վարժարանները, սակայն սուլթանական այս դպրոցները ձրի էին[63]: Կաթոլիկ և բողոքական, ամերիկյան միսիոներների դպրոցներում մասնավոր հետաքրքրություն կար հայազգի պատանիների նկատմամբ: Ակնհայտ էր, որ թուրքերը հաճախում էին թրքական դպրոցները, հույները՝ հունական պատրիարքարանի դպրոցները, կաթոլիկները՝ Վատիկանի, իսկ բողոքականները՝ հիմնականում ամերիկյան նպատներով սնվող դպրոցները[64]: Հայ աշխարհիկ, եվրոպական մակարդակ ապահովող դպրոց՝ համարյա չկար: Ուստի զարմանալի չէր, որ հայերը ձգտում էին օտար դպրոցներ: Անհրաժեշտ էր եվրոպական ոգով վարժարաններ ունենալ: Այդ գործին լծվեցին Պոլսո պատրիարքները, հայ ազգային ջոջերը:

Արևմտահայ միջավայրում, քաղաքներում, հայաշատ նահանգներում ու գյուղերում կրթությունը դառնում է հայ ազգային ու մտավորական շրջանակների համար կարևորագույն խնդիրներից առաջնայինը: Այս ոլորտը ևս մեծապես կապված է Օսմանյան կայսրությունում կրթական կյանքի, թուրքերենի ու թուրքերենով ուսուցման խնդիրների հետ, որով և առիթ է հանդիպացել մեր այս ուսումնասիրության: Այնպիսի տպավորություն է, որ ոչինչ չի խնայվել դաստիարակության, կրթական գործի կազմակերպման համար: Կայսրության ամենածայրամասային մի վայրում, հայկական գյուղում հնարավոր էր հանդիպել այնպիսի մտավորական դեմքերի, որոնք, թվում է, հարիր էին լոկ մայրաքաղաքային կյանքին: Արտասահմանում կրթություն ստացած, գիտական աստիճաններ ու ճանաչում ունեցող մեկը,

63 Սուլթանի դպրոցում արձանագրված 110 աշակերտներից միայն 11-ն են մահմեդականներ եղել, մնացածը՝ քրիստոնյաներ: Ասում են, որ Աբդուլ Համիդ Բ-ն շատ էր բարկանում իր նախարարների վրա, որոնք տոկոս անգամ չգիտեին հաշվել: Սուլթանը, որ Հակոբ փաշայից սովորել էր տոկոս գտնել՝ չէր կարողանում հանդուրժել իր ցածր գրագիտությամբ պաշտոնյաներին: 1858թ. Պոլսո պատրիարքի՝ կառավարությանն ուղղված մի նամակից բացահայտվում է, որ պատրիարքը շնորհակալություն է հայտնում, որ բժշկական դպրոց 40 հայ ուսանողներ են ընդունել:

64 1834թ. սկսում է գործել առաջին միսիոներական բողոքական դպրոցը Պոլսում հայերեն սովորած Համլինի կողմից:

Թուրքերենի դասագրքեր ու քերականներ են ստեղծվել հայ լեզվաբանների կողմից ոչ միայն թուրքերի, այլև ֆրանսիացիների, գերմանացիների ու այլ ազգերի համար ևս: Սա բնականաբար տուրք է Օսմանյան կայսրության նկատմամբ եվրոպական տերությունների կողմից տածած հետաքրքրության: Այս դասագրքերը ուղղված էին լինելու նախևառաջ Օսմանյան կայսրություն դիվանագիտական առաքելություն կատարողներին, վաճառականներին, ճանապարհորդներին, տարբեր երկրներից ներկայացնող միսիոներներին:

Թուրքերենի 35 ամյա մշակող Անտոն Թնկրի 1000 էջանոց 2 մեծ հատորով օսմաներենի քերականությունը 1911թ. մարտ ամսից սկսել էր հրատարակվել թուրքերեն *"Servet ve Fünün"* հայտնի պարբերականում:

Պատկառելի գրականություն է հրատարակվել (ինքնուրույն ու թարգմանական, հայերեն և հայատառ թուրքերեն լեզուներով)՝ նվիրված Օսմանյան կայսրության պատմության առանձին շրջաններին, պատմական անձանց՝ սուլթանների ու վեզիրների մասին: Այս գրականությունը սկիզբ է առել Օսմանյան կայսրության հետ միաժամանակ: Հայերեն ու հայատառ թուրքերեն նման ձեռագրերը պատկառելի թիվ են կազմում[80]:

Հայ գիտնականներ Ստեփան Կուրտիկյանի, Հարություն Մրմրյանի ուսումնասիրությունները՝ Արևելքի դասական գրականության մասին, նշանակալից ներդրում են հանդիսանում այս բնագավառի ուսումնասիրության գործում: Այս աշխատությունները այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքը[81]:

Կուրտիկյան Ստեփան (1865-1948), լեզվաբան, մանկավարժ, բանաստեղծ, պարսկական և արաբական չափածո գրականության և լեզվի լավագույն մասնագետներից է եղել: Պաշտոնավարել է հայկական և թուրքական դպրոցներում, դասավանդել թուրքերեն, օսմաներեն, արաբերեն, պարսկերեն, ստեղծագործել է այդ լեզուներով: Մեծ հեղինակություն է վայելել թուրք մտավորականության շրջանում: 1887թ. օսմաներեն թարգմանությամբ հրատարակել է արաբ և պարսիկ բանաստեղծների, փիլիսոփաների քերթվածների, առակների ընտրանի: Նա 1929թ. հրատարակել է լատինատառ թուրքերեն առաջին գրքերից՝ «Հայրիյա» բանաստեղծությունների ժողովածուն: 1902թ. Պատրիարքարանին պատկանող հայկական դպրոցների հիմնադիր խորհրդի անդամ Ստեփան Կուրտիկյանին շնորհվում է 4-րդ աստիճանի Osmaniye:

Կեսարացի Արթին Հինդօղլին (1780-1840) մեկն է այն հեղինակներից, որը ֆրանսերենով ու գերմաներենով թուրքերենի դասագրքեր է հեղինակել, մեծ ծառայություններ մատուցել թուրքերենի զարգացմանը: Նա կրթությունը ստացել էր Վենետիկի Մխիթարյանների մոտ, ապա՝ Վիեննայում թարգմանչի, թուրքերենի մասնագետի պաշտոններ վարել: Մի քանի լեզուներ տիրապետող Հինդօղլին հեղինակել է ֆրանսերեն-թուրքերեն բառարան, ֆրան-

*Թուրք(օսմ) ֆրանս բառարան*, Կ.Պ. 1911, Տպ. Միհրան: 1911թ. Ներսես Զաքարյան, *Պարզեկրապատում նոր քերական օսմաներեն լեզուի*. Պ. Տպ. Մատթեոսյան: 1912թ. Պետրոս Քերեսթեճյանը հրատարակում է օսմաներենի լավագույնը համարված էթիմոլոգիական բառարանը՝ ֆր-օսմաներեն: Bedros Kerestedjian, *Dictionnaire Etymologique de la langue Turque*, Londres, 1912, 2 v; p.358+40.

80 13-րդ դարի պատմիչ **Մաղաքիա Աբեղան (Գրիգոր Ակներցի 1250-1335)** գրել է 1273թ. «*Պատմություն վասն ազգին Նետողաց*» աշխատությունը, որը 1870թ. տպագրվել է Պետերբուրգում և Երուսաղեմում միաժամանակ: Այս աշխատության մեջ հիմնականում շարադրված է թաթարների պատմությունը: Մեր օրերում այն թարգմանվել է թուրքերեն:

81 Յ.Գ.Մրմրեան, *Արեւելքի խորհուրդներէն. Ջելալեդդին Ռումի, Շէյխ Սէդիից. Սուֆիներ ու մեվլեւի դերվիշներու կարգը*: 1912.





սերենով թուրքերենի ուսուցման ձեռնարկ, գերմաներենով թուրքերենի դասագիրք է տպագրել Վիեննայում (1829): Կրկին Վիեննայում, 565թ. էջից բաղկացած ֆրանսերեն-թուրքերեն Hazne-i Lugat բառարանն է տպագրել (1831): Հեղինակել է հայերեն-գերմաներեն-թուրքերեն և հայերեն-թուրքերեն-գերմաներեն բազմալեզու բառարաններ:

Հինգլյան Հովհաննեսը (1866-1950) և Պերպերյան վարժարանի տնօրեն Գալուստ Մաքարյանը (1860-1941) Նշանթաշում, Խալիլ Ռըֆաթ փաշայի ապարանքում, եվրոպական ժամանակակից մեթոդներով ուսուցանելու համար 1908թ. հիմնադրել են Նոր Դպրոց՝ յոթամյա ուսուցմամբ: Այս դպրոցի գաղափարին Հինգլյանը հանգել էր Մաքրուհյաց, Թարգմանչաց, Բեյօղլուի և Կեդրոնական վարժարաններում իր տնօրինության տարիներին:

Պետրոս Կարապետյան Զեքի (1872-1937), լեզվաբան, մանկավարժ, բառարանագիր: Դասավանդել է օսմաներեն Պոլսո տարբեր դպրոցներում: Հիմնադրել է Կարապետյան աղջկանց և արական վարժարանները (1907-08): Հեղինակ է 17 կարևոր գործերի, որոնք բոլորն էլ առնչվում են օսմաներենի հետ՝ օսմանյան գեղագրության, վայելչագրության, օսմաներենի բազմաթիվ քերականությունների, գրականության պատմության, արաբերենի և պարսկերենի քերականությունների, դասագրքերի, թարգմանությունների ժողովածուների, հայ-օսմաներեն և օսմաներեն-հայերեն մեծ ու փոքր արժեքավոր բառարանների (50 հազ բառ, 1912թ.): Նրա գործերում օսմաներենն արտահայտվել է նաև հայատառ թուրքերենով:

Հայ լեզվաբաններին, բացի բուն օսմաներեն լեզվից, հետաքրքրել են նաև օսմաներենի վայելչագրության հարցերը: Տպագրել են մի շարք վայելչագրության դասագրքեր: Թուրքական մթնոլորտում Ղուրանի տարբեր սուրաների՝ վայելչագրության կանոններով արված հատվածները, բացի կրոնական, ավելի շատ՝ նաև գեղարվեստական ու հուշանվերային արժեք ունենալը ուղղակի կապ ունեն հենց այս դասագրքերի տպագրության հետ և դրանց արդյունքն են: 1894թ. Մ. Տեոյանը տպագրել է «Օսմաներեն վայելչագրության մեթոդ»ը:

Հայ մտավորական, դասախոսական, գիտական շրջանակների համար տարածված մի օրինաչափություն է նկատվում: Այս անհատներից շատ շատերը ոչ միայն բազմակողմանի զարգացած մարդիկ են եղել, այլ խելապես մի քանի տարբեր մասնագիտությունների են տիրապետել, աշխատել տարբեր ասպարեզներում, միշտ գտնելով մի հնարավորություն, տեղ՝ տուրք տալու համար ազգային դաստիարակության ասպարեզին:

Հովսեփ Յուսուֆյանը (1858-1914) Կայսերական համալսարանում չափագիտություն, բնագիտական գիտություն է ավանդել, ստեղծելով դրանց օսմաներենով դասընթացները: Հաշվեկալության պետ, վարչական ժողովի անդամ, նախագահ՝ «Շիրքեթի Հայրիեյի», Հանրային կրթության Բարձրագույն ժողովի անդամ: Եղել է Օրթաքեոյի «Թարգմանչաց» վարժարանի հոգաբարձու (1880), ազգային երեսփոխան: Փարիզում գիտական մի համաժողովում եղել է Օսմանյան կայսրության պատվիրակը և ստացել ֆրանսիական *Chevalier de Légion d'Honneur* պատվանշան: Եղել է թավջութակահար, «Քնար» երաժշտական միության սատարողներից:

Մանիսաճյան Հովհաննես (1862-), Նիքսարացի բնագետ և Բեռլինի արևմտյան լեզուների ճեմարանի դասախոս: Հեղինակել է թուրքերենի քերականություն՝ գերմանացիների համար: Մասնագետ միջատների, բրածոների հավաքման և դրանց համակարգման: Գտել է նոր տեսակներ, որոնցից մի քանիսն իր անունն են կրում:

# 2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

**Ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական գրականություն**

19-րդ դարի 50-60-ական թվականները արևմտահայերի կյանքում սոցիալական-տնտեսական նկատելի առաջընթաց են արձանագրել: Հայերի ազգային հասարակական կյանքը գլխավորող ամիրայական դասն իր դիրքերը զիջեց ազգային բուրժուազիային: Հայ բնակչության բուրժուական խավերը սերտորեն կապված էին Եվրոպայի հետ: Սկսվեց մեծ աշխուժություն հասարակական, քաղաքական կյանքում: Պայքար էր գնում ամիրայական իշխանության դեմ: Վերջիններիս հայ համայնքը ղեկավարելու գործը 1850-ական թվականներից սկսեց թուլանալ: 1853թ. հաստատված «Ուսումնական խորհրդի» անդամները 1857թ. գործի անցան՝ ստեղծելու հայերի ազգային գործերը ղեկավարող կանոնադրությունը: Այս ընթացքում հայ շրջանակներում արդեն ծնունդ էր առել երիտասարդ հայրենասեր առաջադիմականների մի սերունդ, որը թերթերի, ամսագրերի ու հանդեսների էջերից հայերենով ու հայատառ թուրքերենով առաջ էր քաշում հայ ազգային ազատագրական շարժման գաղափարները, պայքարի ձեռնոց նետելով սուլթանական բռնակալությանը (Հակոբ Սվաճյան, Մատթեոս Մամուրյան, Գրիգոր Չիլինկիրյան և ուրիշներ): Այս շարժումը եթե մի կողմից համահունչ էր երիտասարդ թուրք առաջադիմականության բաղձանքներին, մյուս կողմից՝ չէր կարող աննկատ անցնել կառավարության աչալուրջ աչքից: Այն դեռ շատ գլխացավանքների էր տեղիք տալու, բազմաթիվ աքսորների ու պարբերականների փակման պատճառ դառնալու:

1863թ. հրապարակվեց (հայերեն և հայատառ թուրքերեն լեզուներով) «Ազգային Սահմանադրություն Հայոց»-ը (Նիզամնամէի Միլլէթի Էրմենիյան): Գավառներում ապրող հայության «Սահմանադրությունը» ոչինչ չէր տալիս և ոչնչից չէր պաշտպանում, սակայն և մեծ արձագանք չունեցավ: Դրան հակառակ՝ Կ.Պոլսում և այլ քաղաքներում ապրող և գործող հայերի, բուրժուական մտածողության կրողների և դեմոկրատական խավերի շրջանակներում այն խանդավառության մեծ ալիք բարձրացրեց: Բնականաբար հայ հասարակական կյանքում, քաղաքական ու մշակութային շրջանակներում «Սահմանադրության» առաջացրած արձագանքներն իրենց արտացոլումն ունեցան գրականության մեջ ևս: Հայատառ թուրքերեն գրականության զարթոնքի շրջանը միանգամայն համընկնում է 1850-1870-ական թվականների սահմանադրական շարժման տարիների հետ: Այսպիսի աշխուժությունը զարկ տվեց թատրոնի, գրականության, հրատարակչության, գեղանկարչության բուռն զարգացմանը հետագա մի քանի տասնամյակների ընթացքում, ընդհուպ մինչև 19-րդ դարի 90-ական թվականները: Այսպիսի վերելքի պատճառը դժվար չի ընկալել: Հասարակական մտքի առջև կանգնած հիմնական նպատակը ազգային ինքնագիտակցության բարձրացման խնդիրն էր: Այս շարժումը համակցված էր Օսմանյան կայսրությունում առավել ընդհանուր վերելքի հետ: Հայ ժողովրդի մայրենի լեզուն կորցրած մասը հնարավորություն չէր ունենալու մասնակից դառնալ հայերենով լույս ընծայված գրականությանը, չէր կարող կարդալ տասնյակ թերթերն ու հանդեսները, հետևել արևմտահայ նոր գրականության զարգացմանը: Նրանք





զրկված էին Ղևոնդ Ալիշանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Պետրոս Դուրյանի, Գրիգոր Օտյանի և այլոց գործերը կարդալու հնարավորությունից: Զրկված էին «Զարթոնքի շրջանի սերունդ» ընդհանուր անվանմանն արժանացած գրողների ու հրապարակախոսների գործունեությանը հետևելուց: Անհրաժեշտ էր հենց այս խավերին մասնակից դարձնել սկսված շարժմանը: Այն հնարավոր էր իրականացնել միայն նրանց հասկանալի լեզվով՝ թուրքերենով, այն է՝ հայատառ թուրքերեն գրքերի ու պարբերականների շնորհիվ:

Բոլորովին պատահական չպետք է համարել հենց այս շրջանում «Ագապի» վեպի լույս աշխարհ գալը հայատառ թուրքերենով: Մինչ այդ արևմտահայերը չեն ունեցել «Ագապի»-ի նման գեղարվեստական արժեք ներկայացնող հայերեն լեզվով վեպ: Վեպն, ինչպես հայտնի է, նվիրված է արևմտահայ իրականության բարդագույն խնդիրներից մեկին՝ կաթոլիկ հայերի դեմ հայ առաքելականների մղած պայքարին: Վեպն ինքնին սիրո ողբերգական պատմություն է ներկայացնում, որի գլխավոր հերոսները զոհ են դառնում կրոնական ֆանատիզմին և դավաճանությանը:

1850-60-ական թթ., կապիտալիստական հարաբերությունների զարգացման և հայ ազգային բուրժուազիայի ձևավորման շրջանում, կրոնա-բարոյախոսական թեման հայատառ թուրքերեն գրականության մեջ սկսում է իր տեղը զիջել հայ ժողովրդի առավել զարգացմանը նպաստող թեմաներին: Առաջադիմական այս շարժումը 80-ական թթ. սկզբից սկսում է թուլանալ՝ հետևանք սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի կառավարության շրջանի քաղաքական խստագույն բռնությունների, երբ հետապնդման էին ենթարկվում առաջադեմ բոլոր հասարակական շարժումները, անգամ մշակույթը: Հայկական դպրոցներում արգելված էր հայ ժողովրդի պատմության, պատմական աշխարհագրության դասավանդումը: Արգելված էին հայերեն թատերական ներկայացումները, ազգային երգարվեստը և այլն: Մինչդեռ հենց այս տասնամյակներին է նկատվել ֆրանսիական հեղինակների վեպերի թարգմանությունների նշանակալի աշխուժացումը: 19-րդ դարի 80-90-ական թվականներին հրատարակված գրքերի 90%-ը այս վեպերն են: Հայատառ թուրքերեն թարգմանվել և հրատարակվել են Քսավիե դը Մոնթեպենի, Էժեն Սյուի, Ժյուլ Վերնի, Բուակոբե դը Ֆորթունեի և այլ հեղինակների բազմահատոր ստեղծագործությունները: Այս վեպերի երևան գալը չի կարելի տարերային համարել: Առավել ևս չի կարելի այն բացատրել կոմերցիոն, շահադիտական նպատակներով: Այն լրջորեն պայմանավորված էր քաղաքական շեշտադրմամբ: Հատկանշական է այն փաստը, որ այդ տարիներին արևմտահայ իրականությունում սկսվել էր պայքար՝ բուրժուական-առաջադիմական և ֆեոդալական-թեոկրատական հոսանքների միջև: Առաջադիմական գաղափարների ներկայացուցիչները ձգտում էին թարգմանել հիմնականում ֆրանսիական հեղինակների վեպեր, որոնք ուղղված էին ֆեոդալական աբսոլյուտիզմի դեմ և դիմակազերծ էին անում կաթոլիկ եկեղեցու իրական բնույթը: Այսպիսին էր Էժեն Սյուի «Թափառական հրեան» վեպը, որ լույս տեսավ 1863 թվականին՝ Կարապետ Փանոսյանի հայատառ թուրքերեն թարգմանությամբ: Փոխարենը, Հռոմի պնդմամբ, Միքայել Նալբանդյանի գաղափարների հետևորդների գաղտնի խմբակների տարածման շրջանում, Վենետիկի Մխիթարյան միաբանները թարգմանում և 1868 թ. հայատառ թուրքերենով հրատարակում են պատրե Պրեշիանի «Լիոնելլոյի արկածները» 515 էջանոց վեպը: Այս վեպում հերետիկոսներ են համարվում աստծո ճշմարիտ ուղուց հեռացած և առաջադեմ հոսանքնե-


1868

ի հայտ եկան փաշայական, պալատական, անդամավորների բազմազգ աշխարհի նույնքան սահմանկեցուցիչ տեսարան: Հատկանշական է, որ Զմյուռնիայում նույն այս տասնամյակում հրատարակվել է «Ժիլ Պլաս դը Սանտիլյանի պատմությունը»:

Հայ ժողովրդի միասնության համար պայքարող առաջադեմ ու կրթյալ հայ հայրենասեր կաթոլիկ գործիչներից էին Հովսեփ Վարդանյանը, Ծերենցը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը և այլոք: Ասվածի լավագույն ապացույց է հանդիսանում ականավոր հայ հասարակական-քաղաքական գործիչ, գրող, հրապարակախոս, Բարձր Դռան բարձրաստիճան պաշտոնյա Հովսեփ Վարդանյանի (Վարդան Փաշա) գրական ժառանգությունը[3]:

Ամենամեծ հայագիտական կաթոլիկ կենտրոնի՝ Վենետիկի ս.Ղազար կղզու Մխիթարյան միաբանության հայրերը, մի կողմ թողնելով կաթոլիկ գաղափարախոսության տարածման գործը՝ զբաղված էին հայ ժողովրդի հերոսական անցյալի վերհանմանը միտված երկերի հրատարակությամբ: Այս գործունեության հետևանքով իրական հնարավորություն էր ստեղծվում հայ ժողովրդի դավանական միավորման համար: Այս հանգամանքը խաթարում էր Հռոմի անսահման իշխանությունը հայ կաթոլիկների վրա: Հայ իրականության համար այս երանելի միացման գաղափարը նոր թափ ստացավ Միքայել Նալբանդյանի Թուրքիա կատարած երկու այցելությունների շրջանում:

Հայտնի է, որ 1867թ. Վատիկանը հատուկ որոշում հրապարակեց, որն արգելում էր ս. Ղազար կղզու մխիթարյաններին զբաղվել հայ ժողովրդի պատմության և մշակույթի ուսումնասիրությամբ: Այս որոշումը պահանջում էր ուժեղացնել զուտ կրոնական քարոզչությունը: Վատիկանի այս որոշումը, հայտնի հրապարակախոս և գրող Արփիար Արփիարյանի վկայությամբ՝ մեծ դառնության առիթ էր հանդիսացել միաբանության հայրերի շրջանում, մասնավորապես ականավոր բանաստեղծ, բանասեր ու պատմաբան Ղևոնդ Ալիշանի (1820-1901) մոտ:

* * *

19-րդ դարի ֆրանսիական լուսավորիչների ստեղծագործությունների թարգմանությունն ու հրատարակումը հայերեն և հայատառ թուրքերեն՝ նշանակալի երևույթ էր ոչ միայն արևմտահայ իրականության մեջ, այլև Օսմանյան կայսրությունում: Վոլտերի երկերի

3 Հովսեփ Վարդանյանի ստեղծագործությանը կանդրադառնանք նաև «Ագապի» վեպի և «Նապոլեոնի պատմությունը», «Արևելյան պատերազմների պատմությունը» պատմական աշխատությունների առիթով:





թարգմանությունը որևէ լեզվով՝ նախ և առաջ հանդիսանում է այդ ժողովրդի հոգևոր զարգացման չափանիշը: Այս իմաստով Վոլտերի երկերի մուտքը Թուրքիա՝ նշանակալի երևույթ էր: Կ.Պոլսում և Զմյուռնիայում իրականացվել են Վոլտերի «Միկրոմեգաս», «Կանդիդ կամ օպտիմիզմ», «Զադիգ կամ Ճակատագիր», «Զաիր» երկերի հայերեն և թուրքերեն թարգմանությունները: Այս առումով չպետք է մոռանալ «թուրք մտավորական» շրջանակներին[4]:

Թուրքական նոր գրականության հիմնադիրներից Շինասին «Փիլիսոփայական երկխոսություններ» անվան տակ օսմաներեն է թարգմանել հատվածներ Վոլտերից, Ռասինից, Լամարթինից, Մյուսեից, Հյուգոյից, Բուալոյից, Ժիլբերից, Ֆենելոնից, Լաֆոնտենից: Նամըք Քեմալը թարգմանել է Ռուսոյի «Հասարակաց դաշինքը», Մոնտեսքյոն: Զիյա Փաշան թարգմանել է Մոլիերի «Տարտյուֆը», Ֆենելոնի «Տելեմաքը» և Ռուսոյի «Հասարակաց դաշինքը» օսմաներենից արաբերենի է վերածել: Շամսեդդին Սամին թարգմանել է Հյուգոյի «Թշվառները», Ահմեդ Միդհատը՝ Էմիլ Ռիշբուրգի «Անիծյալ աղջիկը» (1883) և այլն:

Այս ստեղծագործությունները թուրքերեն (օսմաներեն) են թարգմանել նաև այն հայ մտավորական գործիչները, որոնք պաշտոնավարել են կառավարական շրջանակներում: Այսպես օրինակ, «Նոյեան աղաւնի» շաբաթաթերթի խմբագիրներից Ագոբ Սահակը (1823-1900), որը Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունում կարևոր պաշտոններ է վարել, թուրքերեն է թարգմանել «Մեծն Պետրոսի պատմությունը», Վոլտերի «Կառլոս ԺԲ-ի պատմությունը», Պ. Սեյի «Քաղաքական տնտեսությունը», Ռեշիդ Փաշայի հետ միասին՝ Մաքիավելլիի «Իշխանը», քաղաքական նշանավոր անձանց մասին ուսումնասիրություններ: Գասպար Թոյտուզը թարգմանել է Մոլիերի «Ակամա բժիշկը» (1849թ.), Դիարբեքիրցի Հակոբ Լյութֆին՝ «Եզովպոսի առակները» (1873թ.) և այլն: Քսավի դը Մոնթեպենն են թարգմանել Սուլեյման Վեհպին և Մանուկ Գյումուշյանը (1874թ.), Ժյուլ Վերն՝ Հովհաննես Ղուկասյանը և այլն: Ալ. Դյումայի «Կոմս Մոնթե Քրիստո» վեպը թարգմանել է թուրքական առաջին "*DIYOJEN*"(1870-1873) և "*HAYAL*"(1873-1877) երգիծաթերթերի հրատարակիչ, ազգությամբ կեսարացի հայտնի հույն լրագրող Թեոդոր Քասաբը (1835-1905) և տպագրել իր թերթի տպարանում 1871-1873 թթ.: Օսմաներեն "*HAYAL*"-ն ունեցել է հենց սկզբից իր հայատառ թուրքերեն «*ԽԷՅԱԼ*» տարբերակը (1873-1874): Հայերի և թուրքերի կողմից օսմաներենով կատարված թարգմանությունները հիմնականում տպագրվել են Կ.Պոլսի մի շարք հայկական տպարաններում: Բնականաբար, թուրքական պալատական շրջանների պատվերով կամ խորհրդով կատարված այս թարգմանությունները դուրս չեն եկել նախատեսված ընթերցողական նեղ շրջանակներից: Օսմաներեն բոլոր թարգմանությունները միասին շատ ավելի փոքր ընթերցողական շրջանակ են ունեցել քան այդ ստեղծագործություններից մեկի հայատառ թուրքերեն տպագրությունը: Երբ այս գործերի հայերեն հրատարակությունները նախատեսված էին հայ մտավորական լայն շրջանակների համար, ապա դրանց հայատառ թուրքերեն հրատարակությունները գավառի, կիսագրագետ թրքախոս հայերի համար չէ որ տպագրվել են: Կայսրության մեծ քաղաքների տարբեր ազգերի մտավորական ընտանիքներում ընդունված սովորություն է եղել կարդալ հայատառ թուրքերեն գրքեր, պարբերա-

4 Թուրք լուսավորիչների կատարած թարգմանությունների, ինչպես նաև ֆրանսիական թատրոնային գրականության թուրք և հայ թարգմանիչների մասին տես՝ Turgut KUT, *Ermeni Harfli Türkçe Telif ve Tercüme Romanlar. 1-Victor Hugo'nun Mağdurin Hikâyesinin Basılmış Nüshası*, İst., հոդվածը. (Մեր ունեցած առանձնատիպի վրա չկա հրապարակման թվականը):

հանել առօրյա, հասարակությանը հուզող հարցեր՝ նաև որոշ սոցիալական խնդիրներ: Նրա մանր բուրժուական մտահորիզոնը, քրիստոնեական գաղափարախոսության չափանիշներից վեր բարձրանալու անկարողությունը թույլ չեն տվել հեղինակին հանգելու խորը ընդհանրությունների: Գրական տաղանդը, վեպի կառուցվածքային և սյուժետային զարգացումների նկարագրության վարպետությունը, իր հերոսներին խորը հոգեբանությամբ ներկայացնելը մեծապես նպաստել են օնեական վեպերի տարածման մեծ հաջողությանը:

Բուակոպե դը Ֆորտյունեյի (1821-1891) վեպերը հայատառ թուրքերենով նույնքան դյուրությամբ են կարդացվում, ինչպես կարդացվում են այսօր թուրքերեն թարգմանված գործերը: Դրան նպաստում է նաև այն, որ յուրաքանչյուր խսկ էջում նոր, հետաքրքրությունը գրգռող դեպքեր են, իրադարձությունների անսպասելի լուծումներ: Հերոսների ողբերգական ճակատագրերը, ուժերի վերջին լարմամբ չարի դեմ անում պայքարի զոհերը իրենց էջերին են գամում ընթերցողներին, ստիպելով հետևել իրադարձությունների զարգացմանը: Հեղինակի գաղափարախոսությունը դուրս չի գալիս չարի և բարու հակադրման ընդհանրական չափանիշների սահմաններից:

* * *

19-րդ դարի 50-70-ական թվականների արևմտահայ իրականությունում կատարված թարգմանություններն ունեցել են շատ որոշակի նպատակադրվածություն: Մեծ նշանակություն է ունեցել թարգմանվող գործի գեղարվեստական արժեքը, նրա գաղափարական ուղղվածությունը, ազդեցությունը: Աբդուլհամիդյան բռնակալության շրջանի գրաքննական արտասովոր խստությունները ու սահմանափակումները կանգնեցրին գրական գործունեության այսպիսի ուղղությունը: Հայ թարգմանիչներն օգտագործում էին բոլոր հնարավորությունները, որպեսզի այդ տարիներին հրատարակվող վեպերը ոչ միայն իրենցից ընթերցանության հաճելի ու հետաքրքիր նյութ ներկայացնեն, այլ հասարակությանը օգտակար լինեն: Նկատենք, որ թարգմանիչների բանակի մեծ մասը ժամանակի ամենազարգացած անձերից են եղել: Նրանք լավ ծանոթ են եղել ֆրանսիական հարուստ գրականությանը և մշակույթին, եվրոպական գաղափարախոսությանը: Այս թարգմանիչները տիրապետել են մի քանի լեզուների: Եզակի երևույթ չի եղել, երբ նույն անձը նույնպիսի վարպետությամբ թարգմանություններ է կատարել իտալերենից, ֆրանսերենից և այլ լեզուներից: Համոզված կարելի է ասել, որ հայատառ թուրքերեն թարգմանական հսկա գրականությունը, որ մուտք է գործել թուրքական և թրքախոս հայերի շրջանակ՝ կոչված էր ծառայելու նրանց ընդհանուր մտավոր զարգացմանը: Թարգմանվող գործերը խմբագրերի կողմից պատահական ընտրության արդյունք չեն եղել, որ ամիսներ, տարիներ շարունակ տպագրվել են թերթերում: Ահա թե ինչ է գրում արևմտյան հեղինակների թարգմանական գործերի հրատարակիչներից մեկը: Նրա հավաստմամբ, թարգմանություններն ընտրվում են ոչ տպաքանակի ապահովման և տվյալ պարբերականի ժողովրդականացման նկատառումներով: Ընտրության նպատակներն ավելի հեռահայաց են: Հրատարակիչները հիմնականում ձգտում են հատընտիր, հաճելի և օգտակար գրքերի շնորհիվ սեր և ճաշակ զարգացնել մտավոր ու հոգևոր զգացումների նկատմամբ, սովորեցնել ընթերցողներին այն վեր դասել առօրյա կենցաղից, զարգացնել ընթերցողների մտավոր հնարավորությունները և հոգևոր սնունդ ապահովել նրանց համար:





Ըստ գրահրատարակիչների համոզմունքի՝ վնասակար գրքեր չկան: Իհարկե, որքան մարդ՝ նույնքան բնավորություն կա: Եվ եթե հաջողվի ընթերցողական լայն շրջանակների մեջ սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ, ապա բարոյապես բավարարված կհամարվեն այս գործին նվիրված մտավորականները[20]:

Այս առթիվ ցանկանում ենք անդրադառնալ հարցի մի այլ կողմի՝ թարգմանությունների լեզվական առանձնահատկությունների վրա: Նշենք, որ ոչ բոլոր հայատառ թուրքերեն թարգմանությունների լեզուն է նույնը եղել:

Կան գրքեր, որոնք այսօր ժամանակակից ընթերցողը մեծ դժվարությամբ կկարդա: Այդպիսի հրատարակությունների թիվը մեծ չէ: Դրանք գրված են պալատական շրջանակների համար, համապատասխան ծեքծեքուն ոճով՝ արաբիզմների առատ օգտագործմամբ: Ցուցադրական օրինակ կարող են հանդիսանալ Հովսեփ Վարդանյանի ստեղծագործության երկու կողմերը:

«Պատմություն Նապոլեոն Բոնապարտի» և «Պատմություն Արևելյան պատերազմների» աշխատությունների հեղինակը միանգամայն տարբեր, ժողովրդի ամենալայն խավերին հասկանալի լեզվով է շարադրել իր «Ագապի» հայտնի վեպը, հանրամատչելի գրքույկները, երգիծական «Շատախոսը» երկը և այլն: Բնականաբար, պալատական այս բարձրաստիճան պաշտոնյան նկատի է ունեցել ընթերցողական իրարից շատ տարբեր երկու շրջանակներ: Ոչ պալատական շրջանակների համար գրված գործերը Հովսեփ Փաշան գրել է ժողովրդական պարզ, բոլորին հասկանալի խոսակցական թուրքերենով: Այնուամենայնիվ, այս լեզվով ներկայացնել Ալեքսանդր Դյումայի կամ Ժյուլ Վեռնի վեպերի թուրքերեն թարգմանությունները՝ անհնարին էր: Ժողովրդական թուրքերենի բառացանկը բավականին սահմանափակ էր և օտար լեզուներից թարգմանելու ընթացքում հազարավոր բառեր չունեին համարժեք նշանակություն կամ իսպառ բացակայում էին թուրքերենում:

Թարգմանիչները նման դեպքերում կամա թե ակամա ստիպված էին դիմելու ծեքծեքուն օսմաներենին, այսինքն արաբիզմներով հագեցված թուրքերենին՝ ձգտելով հանդերձ չխախտել թուրքական շարահյուսական ու ձևաբանական օրինաչափությունները, ընտրել հնարավորին չափ ժողովրդին հասկանալի բառեր, դարձվածքներ: Ցավոք, միշտ չէ, որ նման ձգտումները հաջողությամբ են պսակվել և արդարացրել իրենց: Այսպես, օրինակ, բազմաթիվ հատորներ թարգմանած Կարապետ Փանոսյանի գրածները՝ Հակոբ Պարոնյանի կարծիքով առանց համապատասխան բառարանների անհնարին էր հասկանալ:

Օրինակ, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի կողմից «Փարէզի և Վէնայի» սիրավեպը թարգմանելիս նկատի է առնվել այն հանգամանքը, որ գիրքը կարդացվելու է ոչ միայն միջին ընթերցողական խավի կողմից, այլև հայ, թուրք և մյուս ազգերի մտավորականների կողմից: Այսպիսով հասկանալի է դառնում թարգմանչի ձգտումը՝ երկը ներկայացնել հնարավորինս հասկանալի գրական թուրքերենով:

Հայատառ թուրքերեն թարգմանական գրականության այս բուռն տասնամյակները հայտնի են դեպի ֆրանսիական գրականություն ունեցած շեշտակի հակվածությամբ: Բացի հարստագույն և առաջադեմ այս գրականությանը տուրք տալու օբյեկտիվ պատճառներից, չպետք է անտեսել այս ֆրանսիամոլության սուբյեկտիվ պատճառները, որոնք ակամա պա-

20 Արթուր Պեռնէ, *Նապոլէոնի ընտանեկան գաղտնիքները*, Հալեպ, ա.թ., առաջաբանում (հայերեն):

բարտ հող են ստեղծել գրականության, մասնավորապես թարգմանական գրականության զարգացման համար: Խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրության տիրակալների, պալատական կարևոր դեմքեր հանդիսացող ատենականավորների, բարձրաշխարհիկ խավի, ճառավորականության շրջանում մասոնական օթյակների տարածմանը: Թուրքական կառավարող շրջանների վերին շերտերում ծայր առած մասոնական շարժումը դեպի իրեն է ներգրավել շատ մարդկանց, վերանել թուրք իրականությունում հայտնի մի կոչիչի, որն ունեցել է իր տպագիր "Envar-ı Şarkiye" (Արևելքի ճառագայթ) պարբերականը: Հետաքրքիր է, որ այս պաշտոնաթերթը Կաիրում լույս է տեսել 1866-1877 թվականներին օսմաներեն (1-ին և 4-րդ էջերը) և հայատառ թուրքերեն լեզուներով (2-րդ և 3-րդ էջերը) նույն բովանդակությամբ:

**Պատմական ստեղծագործություններ**

Բազմադարյան հայ ճառենագիտությունն ընդգրկում է պատմության, աստվածաբանության, չափածո գրականության և այլ ասպարեզների վերաբերող բազմաթիվ բնագրեր՝ ընդօրինակված տասնյակ, երբեմն՝ հարյուրավոր ձեռագրերում:

Հայատառ թուրքերեն նմանատիպ ձեռագրերը շուրջ 20-ն են: Դրանց մի մասը հետագայում արժանացել է տպագրության, իսկ մնացածները հասել են միայն ձեռագիր վիճակում:

«Պատմութիւն Դահմաս Ղուլու խանի» երկի հեղինակ, 18-րդ դարի պոլսահայ պատմաբան Թամպուրի Արութինը կամ Քյուչուկ Արութինն իմացել է թուրքերեն, պարսկերեն, նվագել է թամպուր, որից և մականունը՝ Թամպուրի Արութին: Պարսկաստան, դեպի Նադիր շահի արքունիք է ճանապարհորդել թուրքական դեսպան Արդուլ Զեքի խանի հետ: Աշխատանքը գրել է հայատառ թուրքերեն: 1800թ. առաջին անգամ ձեռագիրը հրատարակվել է Վենետիկում[21]:

Հաջորդ պատմական երկը, որ տպագրվել է հայատառ թուրքերենով՝ դա ականավոր հայ պատմաբան, լեզվաբան, աստվածաբան և ճանկավարժ, Ս.Ղազարի Մխիթարյան միաբանության հայրերից Միքայել Չամչյանի «Խրախճան պատմութեան հայոց» երկի թուրքախոս հայերի համար հայատառ թուրքերենով շարադրածի տպագրությունն է 1812 թվականին՝ «Կիզգարի բէվարիխ» խորագրով, տպագրված կրկին ս.Ղազար կղզում[22]: Նշանավոր «Հայոց պատմության» համառոտ՝ 500 էջից բաղկացած շարադրանքի համար Մ.Չամչյանն օգտագործել էր նաև Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Տարեգրական պատմութիւնը»[23]:

Հովհաննես վրդ. Աղավնի (Հովհաննես Արք. Հաննա, 1693-1733թթ.) անձի և անվան շուրջ կան մի շարք տարակարծություններ: Սարգիս Սոմալյանի հայ գրականության պատմու-

21 16-րդ դարի բանաստեղծ Հովհաննես Վարագեցին որպես ականատես գրել է Վասպուրականում Դահմաս Ղուլի խանի փայլագործությունների մասին:

22 Այս և մյուս հրատարակված պատմական աշխատությունների մասին տես նաև տառանմանափոխության ձեռագրերին նվիրված գլխում: 1827թ. «*Պատմութիւն Հայոց*» թարգմանվել է անգլերեն:

23 **Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը (1637-1695)** պոլսահայ մատենագիտության ամենահայտնի դեմքերից է եղել: Տիրապետել է մի շարք լեզուների, եղել բազմաժողովածի զարգացած հասարակական, մշակութային գործիչ: Անվանի արաբագետ-հայագետ, Հռոմի Տիբերին Ակադեմիայի թղթակից անդամ, կյանքի վերջին տարիներին Հայաստանի Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի աշխատակցության բաժնի ղեկավար **Արամ Տեր-Ղևոնդյանն** ապացուցել է, որ Քյոմուրճյանի «*Պատմություն*» օգտագործվել է նաև արաբ ականավոր պատմաբան Մուսթաֆա Բաշիի կողմից, նրա «*Զամի աղ-դուվալ*» («Տիեզերական պատմություն») գրքի հայերի մասին հատվածում, որը գրվել է 1681 թվականին, այսինքն՝ Ե. Քյոմուրճյանի «*Պատմություն*»-ից հետո: Այս մասին տես՝ Բանբեր ՀՀ ԳԱ, Եր., 1960, N 7-8, էջ 143-150):





յանը նվիրված խոսքերին աշխատությունում (Վենետիկ, 1829, էջ 165) Հովհաննես Կոլոտ պատրիարքի աշակերտներից ուրիշը՝ «Աղավնի» հորջորջմամբ, Սեբաստիայում նահատակվել է կարողիկության ընդունած լինելու պատճառով: Հովհաննես Կոլոտ պատրիարքին նվիրված Գ.Բամպուքճյանի աշխատության մեջ այս կարծիքին հակակշռող փաստեր են բերվում: Անհնայն հավանականությամբ, խոսքը տարբեր անձերի է վերաբերվում: Երուսաղեմցի Հաննա նախկնապոպը մեզ հետաքրքրում է իր թողած ճառենագրական ժառանգության, մասնավորապես իր «Երուսաղեմի պատմությամբ»: 1727թ. ավարտված այս գործը (377 էջ) հայերեն լեզվով առաջին անգամ հրատարակվել է 1734 թվականին Կ.Պոլսում, Աստվածատուր Դպրի տպարանում, և այնուհետև ունեցել 4 տպագրություն: Գրքի ամբողջական հայերեն վերնագիրն է՝ «Գիրք Պատմութեան Սրբոյ եւ մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս, եւ սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: 1814 թվականին, Մատթեոս Դպրի տպարանում հրատարակվել է այս երկի հայատառ թուրքերեն թարգմանությունը, «Ազիզ վէ Ազիմ Երուսաղէմ»-ը (372 էջ), որի թարգմանիչն է եղել անվանի կրթական ու մշակութային գործիչ Թագվոր վարժապետ Ալանյանը (1746-1836): Պատմական այս երկը կարևոր է ոչ միայն Երուսաղեմի կամ երուսաղեմահայոց պատմության համար, այլև մասամբ պոլսահայոց պատմության համար,- գրում է Գ.Բամպուքճյանը[24]:

Պատմությանը վերաբերող աշխատությունների մասին խոսելիս հարկ է առանձնակի ուշադրություն հրավիրել Հովսեփ Վարդանյանի «Նապոլեոն Բոնապարտի պատմությունը» ստամնասիրության վրա: **Հովսեփ Վարդան Փաշա (Հովսեփ Վարդանյան, 1815-1879),** բազմակողմանի զարգացած, տաղանդավոր գրող, պատմաբան, խմբագիր-հրապարակախոս, դիվանագետ-քաղաքագետ, Օսմանյան ծովային ուժերի գլխավոր թարգմանիչ: Գրական, հրապարակախոսական ստեղծագործություններում արտահայտվել է հիմնականում հայատառ թուրքերենով: Եղել է պոլսահայ պարբերական մամուլի բացառիկ անուններից: Համարվել է օսմանյան լրագրության համար առաջին մեծությունը: Ծնվել է արամանադագործի ընտանիքում, շատ վաղ տարիքում որբացել է: Որոշ տեղեկությունների համաձայն Վարդան փաշայի մայրը ծառայել է պալատում, որպես գահաժառանգ արքայազնի ստնտու:



Յովսեփ Վարդան փաշա

Ուսումը ստացել է հիմնականում Վիեննայի Մխիթարյան միաբանների վարժարանում, ուր ուղարկվել է 10 տարեկանից: Բացի հայերենից և օսմաներենից տիրապետել է ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն լեզուներին: 1837թ., 22 տարեկանում, Արքունի նավարանի թարգմանիչ[25] է նշանակվել, ապա ստացել է Ծովային Ա թարգմանչի աստիճան, ստացել

24 Գ.Բամպուքճեան, *Յովհաննէս Պատրիարք Կոլոտ*, Ստամբուլ, 1984, էջ 153-159.

25 **Գիտակ-Թարոս** բեյը Արքունի Նավարանի Ա թարգման է եղել 1870-ական թթ.: Մինչ այս մենք բանիցս անդրադարձել ենք նաև Վարդան փաշայի անձին:

մանական վեպեր կարդացող թրքախոս հայ շրջանակների կամ կայսրության թրքախոս մյուս ազգերի համար: Նույնիսկ պալատական տիրող խավի և դիվանագիտական շրջանակներում մի քանի տասնյակից ավելի մեծ թիվ չպետք է կազմեին «վերամբարձ օսմաներենի» գիտակները: Մինչդեռ նման թանկարժեք հրատարակության ճյուղական ծախսերը եղգալու համար անհրաժեշտ էր նկատի ունենալ առնվազն 1000-ի հասնող ընթերցող:

Հարց կարող է առաջանալ, թե այդ դեպքում ինչու" գիրքը գրված չի եղել օսմաներենով: Մանավանդ, որ հեղինակը բավական հմուտ է եղել թուրքերենին և տիրապետել արաբերենին: Օսմաներենը եղել է լոկ պալատական շրջանակին հատուկ: Իսկ հայատառ թուրքերեն, նույնիսկ վերամբարձ օսմանիզմով հագեցած գիրքը կարող էր ծառայել ոչ միայն կրթյալ հայերին, այլ նաև զարգացած թուրքերին, բուլղարներին, ալբաններին և մյուս ժողովուրդների ռուսավորականներին, որոնց անպայման կհետաքրքրեր այս հրատարակությունը: Հովսեփ Վարդանյանն այն հեղինակներից էր, որի ստեղծագործությունները, թարգմանությունները և թերթը` «Մէճմուայը Հավատիս»-ը կարդում էին թուրքերը, Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդները` սովորելով հայերեն տառերը[32]:

Հովսեփ Վարդանյանի գրչին է պատկանում պատմագիտական մի այլ կարևոր աշխատություն ևս: Սա երկհատոր «Արևելյան պատերազմների պատմություն» ուսումնասիրությունն է[33]: Այն Ղրիմի պատերազմի պատմության մի հատվածն է ներկայացնում: 650 էջերում նկարագրվում են 1877 թվականի հունիսի 15-ից դեկտեմբերի 30-ը Անատոլիական և Ռումելիի ճակատների կռիվները: Գիրքը գրված է ճիշտ «Նապոլեոն Բոնապարտի պատմության» ոճով: Ցավոք, շարադրանքն անավարտ է մնացել հեղինակի վաղահաս մահվան պատճառով` 1879 թվականի մարտի 28-ին:

1858 թ. Կ.Պոլսում լույս է ընծայվել օսմանյան սուլթանների համառոտ ժամանակագրությունը «Թարիխ-ի Միխթէսար Փատիշահում Ալիշանը Ալի Օսման» վերնագրով[34]: Հայերեն և հայատառ թուրքերեն ձեռագրերը պարունակում են Օսմանյան կայսրության տարբեր շրջանների, տարբեր սուլթանների պատմության համառոտ և ընդարձակ շարադրանքներ: Դրանք իրենցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում և կարող են քննական հրատարակության հայերեն և թուրքերեն լեզուներով: Հայատառ թուրքերեն պատմական չոփս չափածո ձոն է հրատարակել պոլսահայ հայտնի բանաստեղծ Գ.Բամպուքճյանը: Դրանք նվիրված են սուլթան Մահմուդ Բ-ին, որը հայտնի է եղել իր քրիստոնեանպաստ քաղաքականությամբ[35]: Պատմական արժեք ներկայացնող այս հրատարակությունը գիտական լույս ընծայելով է ներկայացվել թուրքական գիտական ամսագրում, իսկ տեքստը վերածված է լատինատառ թուրքերենի:

1859 թվականին Կ.Պոլսում հրատարակվել է ֆրանսերենից թարգմանված Նասիֆ Մալուֆի «31 սուլթանների համառոտ պատմությունը» աշխատանքը: Թարգմանիչն է Պասկալ Թիրաքյանը` ֆրանսերենի և օսմաներենի ուսուցիչ: Սա կայսրության առաջին սուլթան Օսմանից (1256) սկսած` 31 սուլթանների մասին է, յուրաքանչյուրի մասին առանձին[36]:

32 Metin And. Tanzimat..., s. 36.

33 Տպագրվել է Կ.Պոլսում 1878-1879 թթ.:

34 20 էջից բաղկացած այս գիրքը մեզ ծանոթ է միայն ցուցակներից:

35 Kevork Pamukciyan, *İkinci Sultan Mahmud'a Dair Ermeni Harfli Türkçe Dört Manzum Methiye*, Belleten, cilt LIV, s. 211, Ankara, 1991, s. 1053-1073.

36 Գիրքը գտնվում է Փարիզի Նուբարյան մատենադարանում:





Հետաքրքրություն է ներկայացնում 1862թ. Էջմիածնում տպագրված «Ֆիհրի՛սթի բիթաալ. Պատմութիւն Հայկից մինչև 1780. Ղուկասի Էջմիածնի կաթողիկոսութեանը» գիրքը:

Գառնիկ Սանփանյանի վկայությամբ 1864 թ. Կ.Պոլսում հրատարակվել է «Պատմութիւն Հայոց» գիրքը, որն ամենայն հավանականությամբ Միքայել Չամչյանի մի քանի վերահրատարակություններից մեկն է` նախատեսված դպրոցական ուսուցման համար թուրքերեն լեզվով: Համաձայն նույն աղբյուրի, 1872 թ. Կ.Պոլսում տպագրված «Հիշատակ կամ ընթերցումներ. Կարևոր և համառոտ հայկական պատմություններ» գիրքը ևս հայկական դպրոցների համար նախատեսված հրատարակություններից մեկն է եղել: Հայատառ թուրքերենով պատմական արժեք ներկայացնող մի անչափ հետաքրքիր «նամակ» է պահպանվում ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում: Խոսքը վերաբերում է Փարիզում Թուրքիայի դեսպան Ֆազըլ Մուստաֆա փաշայի նամակին` ուղղված սուլթան Աբդուլ Ազիզին: Նամակը Օսմանյան կայսրությունում սահմանադրական կարգեր հաստատելու անհրաժեշտության մասին է: Տպագրվել է Կ.Պոլսում, հայատառ թուրքերենի է փոխածվել օսմաներենից և 18 էջից է բաղկացած: Տիտղոսաթերթին մատենագիտության անհրաժեշտ այլ տեղեկություններ չենք գտնում[37]:

Որոշ հրատարակությունների մասին մեր աղբյուրները սահմանափակվում են տարբեր գրավաճառանոցների հրատարակած ցուցակներով: Այդպիսի սուղ տեղեկություն ունենք բուլղար հեղափոխական Զաքարիա Ստոյանովին նվիրված «Թէմսալը վաթանբերվէրի» (Հայրենասիրության օրինակ) գրքի մասին: Հրատարակվել է Կ.Պոլսի «Ճերիտէի Շարգիյէ» տպարանում 1909թ. և 70 էջից է բաղկացած: Թարգմանիչն է Հակոբ Վարժապետյանը:

1879թ. Կ.Պոլսում ամերիկյան «Ռոբերտ» քոլեջի օսմաներենի ուսուցիչ Գալուստ Թիրաքյանի կողմից արաբերենից թարգմանվել, հայատառ թուրքերեն և օսմաներենով` էջ առ էջ հրատարակվել է Մյունեջջիմ Բաշիի «Համառոտ Հայոց պատմությունը» (էջ 64): Ամենայն հավանականությամբ, սա հեղինակի «Տիեզերական պատմության» Հայաստանին և հայերին վերաբերող հատվածն է: Հայատառ թուրքերենով հրատարակվել է նաև հայարնակ տարբեր գավառների սոցիալ-քաղաքական իրավիճակի մասին հրապարակախոսական գրականություն: Նրանցում տեղի ունեցող տեղաշարժերի և կարևոր իրադարձությունների մասին պատմող գրքերն իրենցից ներկայացնում են այս կամ այն վայրի մասին յուրատեսակ պատմական ակնարկ, որոնց հետաքրքրությունն անժխտելի է:

1870-ին լույս է ընծայվել ոմն Մ.Է-ի «Բարձրագոյն տէրութեան այժմու եւ ապագային զօրութիւնը» (Կ.Պոլիս,16 էջ): 1872թ. Կ.Պոլսում լույս է տեսել «Պոլսի գրավումը և Մահմուդ փաշայի դեպքը» 40 էջից բաղկացած գիրքը, որի թարգմանիչն ու տպագրիչն է ոմն` Գ.Ս.: Հեղինակի անունն անհայտ է: 1897թ. Կ.Պոլսում հրատարակվել է Ավետիս Իրֆանի «Օսմանյան պետության և հունաց պատերազմի պատկերազարդ պատմությունը» (30 էջ), որին ծանոթ չենք: 1885թ. Պլովդիվում հրատարակվել է Տաճատ Լութֆիյանի «Արևելյան Ռումելիան և հայերը» գրքույկը:

Բուն Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող գրքերի թիվը եթե հայատառ թուրքերենով շատ չէ, դրա փոխարեն հայատառ թուրքերեն պարբերական մամուլը բավականին հարուստ է այս առթիվ լրագրողական-պատմական համառոտ և ընդարձակ հրատարակություններով:

37 *Թարիխչէ իքտամէր խիյան պոլոնեան լէվհէլէրը: Ֆազըլ Մուստաֆա Փաշա թարաֆընդան թագդիմ օլունան հազրէթի շահանէյէ արզըդանըն բէրաթիյէսի*: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարան:

պատմական ու լեզվաբանական մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Մխիթարյան միաբանության Վենետիկի հայերերից Գաբրիել Ավետիքյանի (1751-1827) «Իտալերէն-հայերէն, հայատառ թուրքերէն բօսքանեան բառարանը» մեզ հայտնի երրորդ բառարանն է, որ հրատարակվել է 1775 թվականին: Նույն հեղինակը հայտնի է իր առակներն համառոտ քերականությամբ՝ հայերեն գրաբար և տաճկերեն բացատրությամբ (1792, 488 էջ): Վենետիկյան հաջորդ հրատարակությունը Մանուել Ջախջախյանի (1770-1835) բառարաններն են իտալերենի, հայերենի, տաճկերենի օգտագործմամբ: Վենետիկյան բառարանագիտական դպրոցի մյուս ներկայացուցիչներն են՝ Մկրտիչ Ավետիքյանը, Սոփիաս արք. Սոմալյանը (1776-1846), Սամուել Գանթարյանը (1838-1908): Մխիթարյան միաբանության Տրիեստի, ապա վիեննական ճյուղի հրատարակություններից են Տեվենի օղլու Մահտեսի Սիմոնի որդի պարոն Կարապետ Գաղատացիի (?-1788) Այբբենարանը, կից՝ տաճկական բառերի աշխարհաբար մեկնությամբ, (Տրիեստ, 1781, 71 էջ), որը ծառայել է որպես դասագիրք Մխիթարյան վարժարանների համար: Տրիեստից Վիեննա տեղափոխվելուց հետո առաջին բառարանը Ակգերյան Հարությունի (1774-1854) կազմածն է: Մխիթարյան միաբանության վիեննական ճյուղի մյուս բառարանագիր հեղինակներն են Հակոբոս Պոզաճյանը (1808-1883), բառալեզու և բազմալեզու խոսակցական բառարանների կազմող Փիլիպոս Ճամճյանը (1818-1902), Եփրեմ Չագըճյանը, Սրապիոն Էմինյանը (1823-1854), Ղևոնդ Հովնանյանը (1817-1897): Վիեննայում է հրատարակվել պոլսեցի կաթոլիկ Արիստակես և Ստեփանոս Ազարյան եղբայրների քառալեզու բառարանը (1848), Քյոփեկյան Ամբրոսիոսի եռալեզու բառարանը և թուրքերենի համառոտ քերականությունը՝ բաղկացած 1000 էջից:

Վենետիկի Մխիթարյան նախկին միաբան Ամբրոսիոս Գալֆայանը (1826-1906) հեռանալով կաթոլիկական եկեղեցուց, Գաբրիել Այվազովսկու հետ միասին Փարիզում բացել է Հայկազյան վարժարանը, ապա աշխատել Թեոդոսիայի ազգային վարժարանում, որ և հեղինակել է թուրք-հայերեն 2 բառարաններ (1836, 1864): Հետագայում, 1865թ., կրկին Փարիզ վերադառնալով, հրատարակել է համառոտ հայ-ֆրանսերեն-տաճկերեն մի բառարան «Նոր բառգիրք Ֆրանսահայ»-ը, որը հայտնի է Լուսինյան բառարան անունով, սակայն այն չի առնչվում մեր նյութի հետ:

Հայատառ թուրքերեն բառարանները հիմնականում լեզվական բնույթի են եղել՝ կազմված այբբենական կարգով: Կանդրադառնանք նաև առանձին բառարանների, ըստ կիրառական նշանակությունների:

Կ.Պոլսում որոշակի թիվ են կազմում հարևան ժողովուրդների լեզուների օգտագործմամբ բառարանները: 1826թ. տպագրված պարսկերեն-հայերեն-թուրքերեն-արաբերեն բառարանը (715էջ) մեզ ծանոթ է ձեռագրական հովարածուներից: Այն կազմել է լեզվաբան, պատմագիր Գևորգ Դպիր Տեր Հովհաննիսյան Պալատեցին (1737-1812): Պոլսի բառարանագիտության ամենահայտնի անուններից են հրապարակախոս Տիգրան Գաբամաճյանը, Միհրան Աբիկյանը (1855-1938), Ջեքի Պետրոս Կարապետյանը(1873-1937), Սարգիս Գասապյանը (1842-1907), Մ.Գ.Մինասյանը (1870-1936), Ձ. Փափազյանը և ուրիշներ:

Կ.Պոլսում բացի ընդարձակ, բազմալեզու բառարաններից, տպագրվել են կիրառական, առօրյա նշանակության փոքրածավալ բառարաններ, խոսակցական բառարաններ, բառատետրեր՝ հայերեն պիտանի բառերի տաճկերեն թարգմանությամբ:







«Նոր դպրոցի» հիմնադիր բառարանագետ Հովհաննես Հինդլյան

Բառարաններից մի քանիսը հունարենի օգտագործմամբ են եղել, ինչպես Տիգրան Գրիգորյանի, Վ.Մարգարյանի, Դ.Զօլաքյանի (Զօլաքիտիս)՝ հունարեն, թուրքերեն լեզուներով ընտանեկան խոսակցությունների բառարանը (1887): Ս.Խոջայանը հրատարակել է հունարեն, ֆրանսերեն, հայերեն, թուրքերեն ընտանեկան խոսակցական բառարան(1865), Տիգրան Գրիգորյանը՝ ութլեզվյա բառարան և խոսակցական բառարան(1870): Մյուս բառարանագիրներն են՝ Գալուստ Թիրաքյանը (1840-1910), Թովմաս Թերզյանը (1840-1909), Հարություն Գայսերյանը, Սարգիս Գասապյանը (1842-1907), Պողոս Գալըպճյանը, Վահան Գալըպճյանը և ուրիշներ: Մի շարք բառարանների վրա բացակայում են այն կազմողի անունները:

Երբ բառարանները նախատեսված են եղել դպրոցականների համար, ապա քիչ չեն դեպքերը, երբ նրանք եղել են չափածո, ոտանավորի նման, որը ոչ միայն դյուրացնում էր առաջարկվող նյութի ընկալումը, այլ նաև ավելի տպավորիչ, հիշվող էր դարձնում այն՝ իր հանգավորված ընթացքով: Այդպիսիք էին Պաղտասար Դպրի կազմած դասագրքերը հայտնի Դպրատան աշակերտների համար: Չափածո բառարաններից է նաև Պողոս Դասատաց Դպիր Տյուրիկեցի Թորոսյանի «Տետրակ համառոտ թուրք-հայերեն բառարանին» (Նոր Նախիջևան, 1794):

Բառարանների հեղինակներից մի քանիսը նաև թուրքերենի դասագրքեր, ձեռնարկներ են հեղինակել (Միհրան Աբիկյան, Ջեքի Պետրոս Կարապետյան, Պողոս Գալըպճյան, Սոփիաս Սոմալյան, Մ.Գ.Մինասյան և ուրիշներ): Սա պատահական չէ, քանի որ նրանց մի մասը որպես թուրքերենի, կամ այլ առարկաների ուսուցիչներ են աշխատել: Նույնիսկ նրանց կազմած բառարանների վրա երբեմն կարդում ենք՝ «Ի պետս ազգային վարժարանաց»: Այս դեպքում հնարավորինս պարզեցված, դյուրամատչելի են դարձված առաջարկվող բառարանները, դասագրքերը: Այսպես, օրինակ, Պողոս Գալըպճյանի անգլերեն, հայերեն, թուրքերեն բառարանում՝ անգլերեն բառերի հնչումը ևս հայատառ է (Կ.Պոլիս,1890), իսկ պարոն Միհրան Արամանյանի գիրքը կոչվում է «Ֆրանսերեն լեզու. բարեկամ մանկանց: Բառագրքույկ և խոսակցավարժութիւն հայերէն, գաղղիերէն, տաճկերէն հնչումներով»: Այդ դասագրքերը և բառարաններն ունեցել են երբեմն տասնյակից ավել տպագրություններ: Դպրոցական բառարաններ հրատարակվել են հենց տեղերում, ինչպես օրինակ Այնթապում՝ Մարաշի աղջկանց վարժարանի համար: Նայած թե ո՞ր միսիոներական կազմակերպության հովանավորությամբ է գործել տվյալ դպրոցը, ապա համապատասխան լեզվի բառարաններն ու դասագրքերն են տպագրվել: Մարաշում ամերիկյան միսիոներները մեծ ազդեցություն ունեին: Որբանոցներ, ծերանոցներ, դպրոցներ... Գերիշխողը այստեղ անգլերենն է եղել:

Կ.Պոլսի հետեղեռնյան շրջանի բառարաններից հատուկ ուշադրության է արժանի Հակոբ Ճոլոլյանի (Սիրունի) զինվորական բացատրական բառարանը հայերեն, ֆրանսերեն,

թուրքերեն լեզուներով: Այնքանով է սա հզակի, որ զինվորական վարժարաններում հայերի մուտքն արգելված էր և զինվորական ասպարեզը հայերի համար ընդունելի չէր, ի տարբերություն զինվորական բժիշկների մասնագիտության: Բայց եթե հայերը մուտք չունեին այստեղ որպես ուսանողներ, ապա մուտք ունեին ուսուցիչների մակարդակով: Ընդհանրապես մասնագիտական լուրջ հավակնություններ ունեցող թուրքական ուսումնական (տեխնիկական) հաստատություններում որոշ առարկաներ, ինչպես նաև լեզուների, այդ թվում թուրքերենի ուսուցումը կատարվել է հայատառ թուրքերենով գրված դասագրքերի օգնությամբ: Բնականաբար, բառարանները մեծապես օգնել են այս գործընթացին: Այս կերպ ուսանողները շատ ավելի արագ են յուրացրել առաջարկվող նյութը, քան թե այն կսովորեին արաբատառ օսմաներենով: Այդ մասին գրվել է նույնիսկ գրքի վերնագրում, ինչպես Հ. Տէր Մելքոնյանի կազմած հայերեն, թուրքերեն քերականության դասագրքի՝ «թուրքերի համար» (1913):

Երկու սասնյակի չափ բառարաններ են տպագրվել Ֆրանսիայում: Սակայն դրանք կապվում են 2-3 հեղինակների անվան հետ միայն: Փարիզյան հրատարակություններից առաջինը Խորեն արք. Գալֆայան Նար-Պեյի (1832-1892) հայ ուսանողների համար կազմած ֆրանսերեն-թուրքերեն խոսակցական բառարանն է (1859թ): Փարիզում տպագրված մի շարք բառարանների տպագրության պատմությունը կապվում է իզմիրցի հայտնի փորագրիչ, հրապարակախոս, տպարանատեր, «Արամյան» հայտնի տառատեսակի հեղինակ Ճանիկ Արամյանի (1820-1879) անվան ու գործունեության հետ, որը Եվրոպա էր մեկնել տառերի փորագրության իր արվեստը կատարելագործելու համար: Նա միայն 1860-62 թթ. Վալտեր հայտնի տպագրիչի մոտ տպագրել է մոտ 10 բառարան, նաև ավելի ուշ: Նրա 309 էջից կազմված «Բառագրքույկ»-ները ավելի քան 7 տպագրություն են ունեցել:

Բառարանները հաճախ կոչվել են բառգրքեր, բառգրքույկներ, բառերի հավաքածուներ, Վեցիազարեակ (կազմված բառերի քանակով), Բառգիրք խոսակցության, զրուցատրություններ, խոսակցական բառարաններ...

Երբեմն տիտղոսաթերթին նշվել է բառարանի պարունակությունը: Այսպես օրինակ 1888թ. Միհրան Աբիկյանի 1150 էջանոց բառարանի վրա արձանագրված է՝ 24 000 բառ և 8000 ոճ: Մ.Աբիկյանը, որը հեղինակ է հայատառ թուրքերենի օգտագործմամբ թուրքերեն և օսմաներեն 26 բառարանների, մի այլ բառարանի վրա նշել է՝ 13000 գրագիտական, պաշտոնական և գիտական բառ, 700 ոճ: Նրա մի այլ գիտական բառագրքույկ ներառում է հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուները: Հայտնի է, որ տեխնիկայի վերաբերյալ բառերը, տերմինները գրական նոր թուրքերենը փոխառել է գերմաներենից: Ահա այս բառարանն այդ գործընթացի արտահայտություններից մեկն է հանդիսացել (1895): Պողոս Գալըպճյանի բառարանի վրա նշված բառաքանակը 20000 բառ(1890) է:

Այս հրատարակությունների թվում ամենահայտնի տպագրությունները կատարվել են Թուրքիայում: Պոլսահայ նշանավոր լուսավորական գործիչ՝ խմբագիր, ուսուցիչ Միհրան Աբիկյանը (1855-1938), դրանց կազմողներից ամենահայտնին է և ամենաբեղունը: Աբիկյանը հեղինակ է հայերենով մի քանի տասնյակ օսմաներենի դասագրքերի: Եթե դրանց մի մասում օսմաներենը ներկայացված է հայատառ թուրքերենի միջոցով, ապա մյուսներում այն արաբատառ է, որն ուսումնասիրության հատուկ առարկա է: Այն մաս է կազմում հայ լեզվաբանների կողմից թուրքերեն լեզվի դասագրքերի հեղինակման ավանդույթի և այսպի-





սով՝ թուրքերենի զարգացման գործում հայերի բերած նպաստի մասին նյութի: Օսմաներենի, արաբերենի հայ քերականագետների մեջ հիշատակության է արժանի Գրիգորյան Հենրիկ Հոջան (1819-1904)[45]:

1890-ական թթ. Կ.Պոլսում սկսել են հրատարակվել բազմալեզվյա (թուրքերեն, հայերեն, հունարեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, անգլերեն) գործնական բառարաններ: Այդպիսի բառարան կազմողներից է եղել Ստեփան Ֆէրահճեանը: Մոտ 15 տարի շարունակ Կ.Պոլսում վաճառականների համար տպագրվել են տարեկան 2 հատոր «Հուշատետր-օրացույցներ»(պարզ և գրպանի), որոնք իրենցից ներկայացնում էին հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն բառարաններ և բառալեզու օրացույցներ (agenda):

Մյուս հայտնի հեղինակը Պետրոս Զեքի Կարապետյանն է (1873-1937), հայտնի օսմանիստ, լեքսիկոգրաֆ, թուրքերենի ուսուցիչ: Նրա 1912թ. Կ.Պոլսում տպագրված «Մեծ բառարան օսմանէրէնէ հայերէն»-ը պարունակում է 50 հազար բառ և արտահայտություններ: Միհրան Աբիկյանի և Պետրոս Զեքի Կարապետյանի հրատարակած բազմաթիվ դասագրքերը և բառարանները (հայատառ թուրքերենով և օսմաներենով) մեծ ավանդ են ունեցել թուրքերեն լեզվի զարգացման, նրա բառապաշարի հարստացման գործում: 1897 թ. հրատարակվել է Ահմեդ Մուխթարի «Ոստայը բէտրիտր լիսանը» («Հայերեն ուսանելու համար»), որի Ա-Ե մասերը հայատառ թուրքերենով են: Տպագրվել է Կ.Պոլսում Ճիվելեկյանների հայտնի տպարանում՝ 128 էջից: Միաժամանակ նա տպագրել է հայատառ թուրքերեն-հայերեն առձեռն բառարան, բաղկացած176 էջից: Հեղինակը՝ Ահմեդ Մուխթարը (1852-1907) եղել է Կ.Պոլսի Արքայական դպրոցի հայերենի ուսուցիչը: Կարող ենք ենթադրել միայն, որ թուրքական նոր ձևավորվող տեխնիկական ուսումնական հաստատությունների համար քաղաքատնտեսության ու տնտեսագիտության վերաբերյալ գրքերը գերմաներենից հայատառ թուրքերենի թարգմանած Ահմեդ Մուխթարն այս դեպքերում նկատի է ունեցել նաև նույն այդ ուսանողներին: Իր հայատառ թուրքերենի ձեռնարկով հնարավորություն է ընձեռել օգտվել նույն այդ լեզվով գոյություն ունեցող գրքերից, ձեռնարկներից: Զարմանալի չպետք է համարել, որ այդ ժամանակ հայտնի օսմանիստներ Պետրոս Զեքի Կարապետյանի (17 աշխատությունների հեղինակ) ու Միհրան Աբիկյանի բազմաթիվ գրքերի ու դասագրքերի կողքին, ազգությամբ թուրք մասնագետի կողմից ևս հեղինակվել է հայատառ թուրքերենի դասագիրք: Ամենայն հավանականությամբ, Արքայական դպրոցում դասավանդելուց բացի, տվյալ ուսումնական հաստատության դասախոսներից ոմն Մուխթար, նախընտրել է թուրք ուսանողներին հայատառ թուրքերենը հրամցնելու՝ իր կարծիքով լավագույն տարբերակը: Սա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ մի շարք հաստատություններ բացառում էին հայազգի դասախոսների ու ուսանողների մասնակցությունը տվյալ կրթական օջախում: Այն հիմնականում վերաբերվել է ռազմական ու հարակից մասնագիտությունների ուսուցմանը:

Հայտնի է, որ հայերը Օսմանյան կայսրությունում նոր ձևավորվող արդյունաբերության որոշ ճյուղերի հիմնադիրներն են եղել, առաջինները, որոնք եվրոպական համալսարաններում հետևելով գիտության տարբեր ուղղություններին, մասնավորապես իրավունքին, բժշկությանը, կենսաբանությանը, կենդանաբանությանը, բուսաբանությանը՝ վերադարձել

45 Նրա աշխատասիրություններից են թուրքերենի քերականությունը (1868), արաբերենի երկու քերականությունները (1892), «*Hülasatü'l Sarf*» թուրքերեն գործը:

նն Թուրքիա, ներդնելով իրենց ողջ գիտելիքները, դարձել այդ ճյուղերի փնտրված մասնագետներ: Կ.Պոլսի ստրանական ու փաշայական ամենահայտնի պարտեզների լավագույն մշակողները եղել են հայ բուսաբանները, գյուղատնտեսները, հողագետ այգեպանները, ծաղկեմշակները, ծխախոտի, բամբակի, խաղողի, շերամաբուծության մասնագետները: Վերադառնալով ուսումնառության վայրերից, նրանք կազմակերպել են գիտական հավակնություն ունեցող միություններ, հիմնադրել պարբերականներ, հեղինակել գրքեր, որոնք պիտի նպաստեին Օսմանյան կայսրությունում ամենատարբեր բնագավառների զարգացմանը: Հայատառ թուրքերեն գրականությունը հաստատումն է նրանց արգասաբեր գործունեության: Բառարանների առումով հետաքրքրություն է ներկայացնում բժշկական ամենահայտնի ու ամենավաղ տպագրվածը, Միքայել Ռեստեն Տեր Պետրոսյանի՝ հիվանդությունների, դեղերի, բույսերի, հանքանյութերի, կենդանիների, գազերի, հեղուկների անունների 9-լեզվյա բառարանը (Վենետիկ, 1822, 542 էջ): Այն 3 տպագրություն է ունեցել: Կ.Պոլսում՝ Ն.Արթինյանի առնկերի բառարանը ֆրանսերեն, հայերեն, թուրքերեն լեզուներով (1908):

Երուսաղեմյան հրատարակություններից հայտնի է Պողոս Աղխանապյանցու (? -1853) «Ձանազանութիւն հինգ դարուց»-ի հայատառ թուրքերեն հրատարակության մեջ եղած արաբերեն և պարսկերեն բառերի բառարանը՝ բացատրված հայերենով ու թուրքերենով (1844, 1881):

Երբեմն բառարանները մաս են կազմել հայատառ թուրքերեն այս կամ գրքի, ինչպես դա եղել է նաև Մ.Գարրինյանի «Հասընտիր»-ի դեպքում: Թուրքերեն բնագրին հետևել է թուրքերեն, հայերեն բառարանը (1893):

Հայկական գաղթավայրերում հրատարակվածներից են Արմենակ Պետևյանի՝ բույսերի անունների պատկերազարդ, բազմալեզվյա բառարանը լատիներեն, արաբերեն, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն լեզուներով (Կահիրե, 1936թ.1099 էջ):

Մեծ Եղեռնից հետո Արևելքի, Եվրոպայի հայկական գաղթավայրերում շարունակվում է բառարանների տպագրության ավանդույթը: Այս բառարաններում երբեմն բացակայում է հայերեն լեզուն, այն միայն թուրքերենը ներկայացնելու համար է կիրառվում: Այսպես, օրինակ, Բեյրութում հրատարակված ֆրանսերեն, թուրքերեն բառարանը փաստորեն ֆրանսերեն-հայատառ թուրքերեն է (1931): Բեյրության հրատարակությունների մեջ որպես բառարաններ կազմող հայտնի է Կ.Կիլիկեցին: Բեյրութի 1926թ. տպագրության մեջ առաջին անգամ հանդիպում ենք գրպանի զրուցարանի, որ հայերենի և հայատառ թուրքերենի հետ խաբաներեն լեզուն կա:

Հունաստան տարագրված հայերի համար 1923թ. Աթենքում լույս է ընծայվում հունարեն, հայերեն, թուրքերեն առձեռն բառարան և նույն լեզուներով զրուցարան՝ Հայկ Գնդունու հեղինակությամբ:

Դարասկզբին անգլերենի օգտագործմամբ բառարանների թիվն ավելանում է, իսկ եղեռնից հետո՝ այն նույնիսկ անհրաժեշտություն է դառնում: Մեծ տարածում է ունեցել Ի.Ա.Եբանի պատկերազարդ թուրքերեն, անգլերեն զրուցագիրքը (Բոստոն, 1914): 1919-1920թթ. Ետրուպան Ասորի հեղինակությամբ տպագրվում է 3 մասից բաղկացած մի բառարան՝ անգլերեն, հայերեն, հայատառ թուրքերեն լեզուների տարբեր զուգորդությամբ Նյու-Յոր-





քում (1919), ապա՝ Լոս Անջելոսում (1920): Հայատառ թուրքերենով լույս են տեսել մոտ 25 երկլեզու, 30 եռալեզու, 12 քառալեզու, 10 բազմալեզու բառարաններ, 15 երկլեզու և բազմալեզու զրուցարաններ, 5 տարբեր բնագավառների բառարաններ:

Հայատառ թուրքերենով հրատարակված դասագրքերն ընդգրկել են դպրոցներում դասավանդվող ամենատարբեր առարկաները: Այն հանգամանքը, որ կայսրության ոչ մահմեդական բնակչությունը, չնայած քաղաքական անընդհատ հալածանքներին, մեծ հաջողությունների է հասել կրթական ասպարեզում քան բուն թուրքերը, նկատել են դեռ ժամանակակիցները: Այս հանգամանքը գրավել է նաև Թուրքիայի լուսավորության հարցերն ուսումնասիրող խորհրդային շրջանի գիտնականներին[46]:

Դասագրքերի հրատարակությունների բազմաթիվ հեղինակներ դպրոցների ուսուցիչներ են եղել: Լույս են տեսել աշխարհագրությանը նվիրված հարցերի ու պատասխանների միջոցով կազմված հետաքրքրաշարժ դասագրքեր: Դրանք հիմնականում ֆիզիկական աշխարհագրությանը վերաբերող գունավոր քարտեզներ են՝ Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի, Ամերիկայի մասին հարց ու պատասխաններով: Դպրոցականների համար համառոտ աշ-



Պոլսի աղջկանց ամերիկյան քոլեջի մի դասարան
(Լուս. Աբդուլլահ եղբ., 1885)



Պոլսի աղջկանց ամերիկյան քոլեջի 1904թ. շրջանավարտներ (Լուս. Սեբահ և Ժոայե)



Պոլսի աղջկանց ամերիկյան քոլեջի մի դասարան
(Լուս. Աբդուլլահ եղբ., 1891)

խարհագրության ուսումնական ձեռնարկներ ենստեղծվել տարիքային տարբեր խմբերի համար, ինչպես նաև՝ տարրական աշխարհագրության նկարազարդ ձեռնարկներ երեխաների համար: Բազմաթիվ և ամենամյա տպագրություններ են ունեցել թարգմանությունների համար ձեռնարկները, զվարճալի այբբենարանները, կիրակնօրյա դպրոցների դասագրքե-

46 А.Д.Желтяков, Ю.А.Петросян, *История просвещения в Турции (конец XУIII - начало XX века)*, М., 1965.

հրատարակել է Ն.Տաղավար անունով՝ 1898թ., Կ.Պոլսում: Այս անվանի գիտնականն ու ազգային գործիչը Մեծ եղեռնի հոշոտված զոհերից մեկը դարձավ:

Օսմանյան կայսրությունում բուրժուական հարաբերությունների ձևավորումը ընթերցողներին, այդ թվում ինարկե արևմտահայությանը նոր պահանջներ էր առաջադրում: Հրատարակվում է գերմանացի Օտտո Հյուբների «Քաղաքատնտեսությունը» 1869 թվականին: Թարգմանությունը գերմաներենից պարզ թուրքերենի, ինչպես նշվում է տիտղոսաթերթում, կատարել է Մեհմեդ Միդհատը: Տպագրվել է այս գիրքը Կ.Պոլսի Պ.Հյուզի տպարանում: Մեր կարծիքով, այս գիրքը որպես դասագիրք է ծառայել թուրքական ուսումնական հաստատության համար, և այսպիսի առարկայի թարգմանությունն օսմաներեն, առավել ևս դրա ընկալումն օսմաներենով՝ անհնարին կլիներ: Լավագույն տարբերակ է ընտրվել այն մատչելի դարձնելու համար. լեզուն՝ պարզ թուրքերեն, իսկ շարադրանքն արդեն շատերին ծանոթ հայատառ թուրքերենով:

Ավելի ուշ, 1908թ. հրատարակվել է տնտեսագիտության ձեռնարկ, ամենայն հավանականությամբ նույն Մեհմեդ Միդհատի թարգմանությամբ, որը նույն նպատակին էր ծառայելու: 1870թ. հրատարակվել է Չերվարի Ռաֆայելի «Տեղեկագիրք առևտրի վերաբերյալ» 220 էջ կազմող գիրքը, որի հույժ կարևոր լինելու հանգամանքը՝ որպես տեղեկատու ձեռնարկ իր ժամանակակիցների համար՝ կասկած չի հարուցում:

Մկրտիչ Ենգաիբյան ամիրան է սկսել Օսմանյան կայսրությունում շերամապահության գործը և զբաղվել մետաքսագործությամբ: Նա մարտնչել է Թուրքիայում շերամապահության ու մետաքսագործության բնագավառների զարգացման համար: Մի քանի գավառներում ֆաբրիկաներ է բացել և, որպես առաջադեմ մարդ, ցանկացել այս ամենը դնել գիտական հիմքերի վրա: Նա 1874թ. սկսած շերամապահության վերաբերյալ համարյա ամեն տարի



Աբրո Սահակ (Աբրոյան)



Յակոբ Խոջավերդյան



Պիմեն Չարդարյան

ողեցույց գրքույկներ է հրատարակել հայատառ թուրքերենով: Ընդհանրապես, գավառներում պարզ թուրքերենով բացատրությունները ավելի շահեկան էին, քանզի այդ ֆաբրիկաներում միայն հայեր չէ, որ աշխատում էին: 1858թ. Կ.Պոլսում հրատարակվել է բամբակի մշակության մասին «ուսումնագիրք», որը ապացույց է ինչպես շերամապահության, այնպես էլ գյուղատնտեսության այս ճյուղի զարգացման նկատմամբ հայերի ունեցած շահագրգռ-





վածության մասին: Այս գրքերը մեծ պահանջարկ են վայելել:



Հայկազուն Պեկիյան



Նշան Գաֆաֆյան

Տնտեսական նոր տիպի հարաբերությունների ապացույց կարելի է համարել հաշվապահության մասին գրքերը (մոտ 160 էջանոց հրատարակություններ), կենդանիների մասին հատորները: Այդ բոլորը համարյա նույն շրջանում՝ 1870-թվականներից սկսած: Ընդհանրապես Թուրքիայի նման երկրի տնտեսության համար կարևոր բնագավառ էին հանքերի ուսումնասիրության խնդիրները: Հայատառ թուրքերենով հրատարակվում են հանքաբանությանը, գյուղատնտեսությանը, անասնապահությանը, անտառաբուծությանը վերաբերող գրքեր, որոնք չի կարելի համարել նեղ, միայն հայ ազգի շահերին ծառայող տպագրություններ: Հայտնի է, որ Թուրքիայում, ի թիվս մշակույթի շատ բնագավառների, հայերի հետ է կապվում տարբեր բնագավառների այս կամ այն ճյուղի ստեղծումն ու զարգացումը: Բնորոշ է մի հանգամանք, որ այդ մարդիկ չեն սահմանափակվել զուտ պրակտիկ գործունեությամբ և փորձել են տարբեր գրքերի, հրատարակությունների միջոցով այն դարձնել բոլորի սեփականությունը, հետաքրքրել կայսրության տարբեր ժողովուրդներին: Այս նպատակների համար լավագույնս է ծառայել հայատառ թուրքերեն գրականությունը[54]: 1866 թվականին լույս է տեսել Տեր Թորոսյան Սարգսի հեղինակած «Լուսանկարչական հանդես»[55], իսկ դեռևս 1857 և 1858 թվականներին Հովսեփ Վարդան փաշան (Վարդանյան) ֆրանսերենից թարգմանել և հրատարակել է էլեկտրական հեռագրի գործածության վերաբերյալ մի գրքույկ: Այս և մյուս հրատարակությունները նպատակ էին հետապնդում նախ և առաջ հայ ժողովրդին ծանոթացնել Արևմուտքի գիտության և տեխնիկայի նորամուծություններին, հաջողություններին: Հրատարակելով հայատառ թուրքերեն, այս ամենի օգտակարության շրջանակը միանգամից բազմապատկվում էր՝ ի շահ կայսրության բոլոր մյուս ազգերի, որոնց հայատառ թուր-

54 Մանուկ վրդ. Քաջունու կազմած «*[illegible]*» հրատարակությունը, որը 306 էջից է բաղկացած՝ 1899թ. հրատարակվել է Ս.Ղազարում: Կ.Պոլսի հայտնի ծաղկեմշակ-անտառագետ **Հակոբ Խոջավերդյան** (1883-1925), հայատառ թուրքերեն «Ըէնճի զիրաաթ դաղէրասը» (Կ.Պոլիս, 1906) գյուղատնտեսական պատկերազարդ թերթի բովանդակ, ծաղկեմշակման բազմաթիվ հայատառ թուրքերեն հոդվածների հեղինակ է: Միջազգային ցուցահանդեսների մասնակցած, Մախթար փաշայի պարտեզներն ու ջերմոցները դրախտի վերածած մասնագետը կրթություն էր ստացել Բելգիայի Վան-Հոթ հաստատությունում:
Այս բնագավառում հայտնի դեմքերից է եղել Նշան Գաֆաֆյանը (1865-?): Ֆրանսիայում կրթություն ստացած, Ծանրահայի շերամաբուծական ընկ. պատասխանատու անդամ, Իզմիրի, Բուրսայի, ապա Կ.Պոլսի վարժարանների անօրեն, երկրագործական նախարարության գիտության բաժնի օգնական անօրեն, որի հոդվածները տպագրվել են Ֆրանսիայում, Տոկիոյում: Հայկազուն Պեկիյանի հետ միասին հրատարակել է «Ըէնճի զիրաաթ դաղէրասը» հայատառ թուրքերեն գյուղատնտեսական պատկերազարդ թերթը Կ.Պոլսում 1906 թվականին:

55 Օսմանյան շրջան լուսանկարչությանը նվիրված Էնգին Չիզգենի գրքի հրատարակության առթիվ հրատարակվել է Գ. Բամպուքճյանի հոդվածը, որը արտատպված են Թուրքիայում այս ասպարեզի հայազգի հիմնադիրներից մի քանիսի կատարած հազվագյուտ լուսանկարները: Տես՝ «Tarih ve Toplum», 1987, İst., aralık, s. 27-29.

բերեն գրականությունից օգտվելն օրինաչափ երևույթ էր դարձել:

Կ.Պոլսում գործունեություն էին ծավալել հայտրավոր հայ բժիշկներ, իրավաբաններ, որոնք կրթություն էին ստացել եվրոպական երկրներում՝ Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում և այլուր: Հայատառ թուրքերենով հրատարակվել են բժշկության տարբեր բնագավառներին նվիրված բազմաթիվ գրքեր՝ ինքնուրույն ուսումնասիրություններ և թարգմանական հետազոտություններ, ուղեցույցներ, տեղեկագրեր: Դրանց բազմազանությունը ցույց է տալիս նաև բժշկության զարգացման մակարդակը Թուրքիայում: Հրատարակվել է մանկահասակ տղաների ու աղջիկների հիգիենայի պահպանման անհրաժեշտ կանոնների մասին գրքերի մի ամբողջ շարք[56]: Բնականաբար, այն նախատեսված էր հայ դպրոցականների համար, լրացնում էր նրանց կենցաղը ժամանակակից հիգիենայով, զանազան դեպքերի համար խորհուրդներ պարունակում: Բժշկական գրքերի մի շարք ներկայացնում է հիվանդությունների ու դրանց ախտորոշման, բուժման տարրական տեղեկատուներ, մայրերի համար ձեռնարկներ, անատոմիայից, առամնաբուժությունը, առողջապահությանն ու ընդհանուր հիգիենային նվիրված հրատարակություններ: Ակնհայտ հարուցած վնասների մասին հրատարակվել են բժշկական առանձնակ գրքույկներ:

Հայատառ թուրքերենով հրատարակվել են նաև այլազգի բժիշկների ժամանակին կարևորություն ներկայացնող աշխատությունները:

Հայատառ թուրքերենով հրատարակված գիտա-հանրամատչելի գրքերի միայն ցանկն արդեն բավարար ապացույց է Օսմանյան կայսրության, հատկապես հայերի շրջանում առաջադիմական զարգացումների փաստի, որն արդյունք էր եվրոպական առաջընթացի ներթափանցման, բուրժուական հարաբերությունների հաստատման: Նոր սոցիալ-տնտեսական հարաբերություններն առաջադրում էին երկրում գիտության, տեխնիկայի, տնտեսության ոլորտներ նոր մոտեցումներ դասավիարակել:

Հայատառ թուրքերեն մի շարք հրատարակություններ ինքնին հայերի, թուրքերի ու մյուս ժողովուրդների կյանքի, կենցաղի մասին պատկերացում տվող գրքեր են: Ընթերցողների լայն շրջանակ են ունեցել ու մեծ հաջողություն վայելել հայ խոհարարների գրքերը, որ հավաքված են եղել ոչ միայն հայկական, բյուզանդական, արևելյան խոհանոցի բաղադրատոմսեր, այլև եվրոպական խոհանոցն է ներկայացված եղել: Այս գրքերն անընդհատ վերահրատարակվել են, միշտ նորանոր հավելումներ ներկայացնելով: Մեծ ժողովրդականություն են վայելել երգարանները, երազահանները, գուշակության գրքերը: Անհրաժեշտ ու պարբերական հրատարակություններից են եղել օրացույցները, տարեցույցները, որոնք նաև տարբեր լեզուներից թարգմանություններ են եղել: Նրանցում բևավոր խոսքերի, անեկդոտների ու խրատների հայատառ թուրքերեն էջեր են տպագրվել: Այսպիսի գրականությունը ծառայել է ոչ միայն հայերին, այլև մատչելի է եղել տարբեր ժողովուրդների անձնատարբեր խավերին: Հետքրքրություն է ներկայացնում 1859թ. Փարզում հրատարակված ֆրանսերեն-հայերեն երկհատոր ուղեցույց զրուցարանը՝ ճանապարհորդ ուսանողների համար, որի հեղինակն է Խորեն վրդ.Գալֆայան Նար Պեյը, (1831-1892), որն այդ տարիներին պաշտոնավարել է Փարիզի Մխիթարյանների Մուրադյան վարժարանում: Նրա տանկերենից հայերեն ընդարձակ բառարանը հրատարակվել է Կ.Պոլսում 1892թ., 670 էջով: Այս հրատա-

56 Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Արմենակ Հայկունու երաստարդների առողջապահությանը նվիրված մի քանի գրքույկները, տպագրված 1900-ական թվականներին:







Օրիորդաց վարժարանի խմբանկար
Ադն, 1870-ական թթ. (վարժոիի եվչինե Սողյանի բնտանիքի՝ գրող Կավիդ Սողոսյանի արխիվից)

յակությունը փաստում է հայ երիտասարդների եվրոպական երկրներում ուսմնառության մեկնելու ծայր առած սովորությունը: Արևմտահայ իրականությունում լավագույն, առաջադեմ կրթություն առանալու ձգտումները դառնում էին կենտական խնդիր ոչ միայն ամվանի ու հարուստ ընտանիքների շրջանում: Բազմաթիվ օժտված հայ երիտասարդներ եվրոպական երկրներ ուսումնառության էին մեկնում հայրենասեր հովանավոր-բարերարների մեկենասության շնորհիվ:

Հայատառ թուրքերեն հրատարակությունների մեջ կարևոր տեղ են գրավում օսմանյան պետության օրենքների ներկայացումը, բազմահատոր տպագրությունները: Դրանք ֆիրմանների հավաքածուներ են եղել, քրեական, քաղաքացիական, դատական օրենսգրքեր, իրավաբանական տեղեկատու գրականություն, ժառանգության, կտակի, նվիրատվության, հողային ունեցվածքի (վակուֆների) մասին առանձին օրենքներ, և նույնիսկ՝ «Կանոնագիր հրամանագիր շենքերու հիմերուն շինութեան մասին» (ա.թ.): Դրանք հիմնականում օսմաներենից կատարված մասնագիտական թարգմանություններ են: 1876թ. հրատարակվել են քրեական օրենսգրքի 119 հոդվածներ և նրանց բացատրությունները հայատառ թուրքերեն և օսմաներեն:

1881-1882թթ. տպագրված երկհատոր «Տեսթուր» օրենսգրքերի թարգմանիչն ու հրատարակիչը եղել է Կարապետ Փանոսյանը: Այն տպագրվել է իր խմբագրած «Մանզումէի Էֆքեար» թերթի տպարանում: Օրենսդրական հիմնական ժողովածուների՝ «Մեջելլե»-ների հայատառ թուրքերեն բազմահատորյակի հրատարակության թարգմանիչն է եղել Նիկողայոս Թոքովյանը, որի տպագրած օրենքները հազարից ավելի էջեր են պարունակում (հիմնական հրատարակությունները՝ 1891 թվականին են եղել[57]): Իրենց բնույթով այս գրականությանն են հարում «Դատարանների ընդհանուր սկզբունքը» (1872, Կ.Պոլիս), ինչպես նաև մի շարք տպագրություններ ունեցած «Ազգային Սահմանադրութիւն Հայոց, հաստատեալ 1863թ.», «Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւո ի Ռուսաստան»-ը, որը հայտնի է «Պոլոժենիա» անվամբ և տպագրված է եղել Ս.Պետերբուրգում՝ հայատառ թուրքերենով, 1836 թվականին: Նույնը 1883 թվականին Կ.Պոլսում տպագրվել է հայերեն և հայատառ թուրքերեն: 1863թ. Հովսեփ Վարդանյանի կողմից հրատարակվել է «Սահմանադրական ճշմարտութիւնն էր եւ անոնց պարտադ-

57 Թուրք իրավագիտության պատմության մեջ կարևոր տեղ է գրավում Սարգիս Քարաքոչ (Քարաքոչյան) էֆենդին (1865-1944): Նա հանրապետական շրջանի անձնահեղինակավոր իրավագետներից է և բազմաթիվ օրենքներ, կոդեքսներ կազմող, խմբագրող, իրավաբանության ասպարեզում գիտական աշխատությունների հեղինակ և նշանավոր փաստաբան: Նրա մասին տես Գ.Բաժայրբճյանի հոդվածը՝ «Tarih ve Toplum», 1987, ocak, s. 20-22.




Փաստաբան Մուրադ Մուրադյանը կնոջ՝ Մարիամի և ավագ որդու՝ Արա-Վահրամի հետ
(Փաստաբանը 1915 թ. Մեծ եղեռնի հոշոտված մտավորականներից է, գրող Դավիթ Մուրադյանի պապը: Որդին՝ Արմեն-Թուղթ ծածկանունով, որպես ամերիկյան բանակային, 1918թ. Դալլասյան լեգեոնի կազմում մասնակցել է ճակատագրական մարտերին)

լուսինները» 87 էջանոց ընական ուսումնասիրությունը: Այս շարքում պետք է ընդգրկել նաև 1917թ. Երուսաղեմում հայերեն և հայատառ թուրքերենով տպագրված «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան»-ը, «Կանոնագիր հայ կաթոլիկների» (հայերեն և հայատառ թուրքերեն, 1872), «Կանոնագիր Նշանախօսութեանց եւ հարսանեաց» կրկին երկլեզվյա, 1929թ. Հալեպում տպագրված գրքույկը: Հետաքրքրություն է ներկայացնում «Նոր կանոնագիր անօսրաչափութեան եւ կշիռներու» (1870, Կ.Պոլիս)[58], որը կարևոր քայլ էր կենցաղում և գիտության բնագավառում եվրոպական չափերի հետ միանմանության հաստատման գործում: Հիմնականում հայերեն և հայատառ թուրքերեն լեզվով են տպագրել այս կամ այն հայկական եկեղեցական միության, մշակութային կամ գիտական կենտրոնի ու որևէ հասարակական կազմակերպության կանոնագրերը: Հայերեն և հայատառ թուրքերեն են հրատարակվել արքունի հրովարտակները[59]:

* * *

Հայատառ թուրքերեն լեզվով ստեղծվել է բովանդակային առումով բազմազան և ծավալուն ուսումնական գրականություն: Այն կյանքի էր կոչվել շնորհիվ արևմտահայ իրականությունում սկիզբ առած լուսավորական շարժման: Այս շարժման հիմնական արտահայտություններից էր 18-րդ դարում Կ.Պոլսի Հայ պատրիարքական Աթոռին կից վարժարան-

58 Մեր կարծիքով, այն կազմել է չափագետ Հակոբ Պողոսյանը, որը 1909 թ. նշանակվել էր Օսմանյան համալսարանի ռեկտոր:

59 «Թարգմանութիւն Արքունի հրահանգին, որ փնտրողական տրոց բաշխման եւ հատարման համար արքունի հրաման, ըղկուած կառավարութեան»: հայերեն և հայատառ թուրքերեն 6 հոդվածներ, Կ.Պոլիս (1870) 6 էջ: Հրատարակվել է հաջորդ տարի ևս:





ների և Օսմանյան կայսրությունում աշխարհիկ դպրոցների հիմնադրումը:

19-20-րդ դդ. հայատառ թուրքերենով ստեղծված ուսումնական գրականության մի մեծ մասի ստեղծումը սերտորեն կապված է եղել արևմտահայ իրականությունում միսիոներական տարբեր ուխտերի գործունեության հետ: Նրանց այդ ջանքերի շնորհիվ հրապարակ եկան տարբեր լեզուների դասագրքեր, քերականներ, բառարաններ, ընթերցարաններ: Ամերիկյան միսիոներական դպրոցներում, որ հայ աշակերտները նշանակալի թիվ են կազմել, միայն պատմության ուսումնասիրության համար դպրոցական ծրագրում 11 պատմական տարբեր առարկաներ են եղել: Դրանց մի մասի դասագրքերը նույնպես հայատառ թուրքերեն են եղել: Հրատարակվել են բնական գիտություններին վերաբերող ուսումնական ձեռնարկներ:

Հայատառ թուրքերենն օգտագործվել է մոնումենտալ բազմալեզու բառարանների և բազմալեզվյա խոսակցական բառարանների՝ զրուցարանների ստեղծման համար: Վերոհիշյալները նամականիների, թուրքերեն լեզվի բազմաթիվ դասագրքերի հետ միասին, ինչպես նաև բոլոր գիտնականներն են խոստովանում, մեծ ավանդ են ներդրել նոր, գրական թուրքերեն լեզվի ստեղծման ու զարգացման գործում, ունեցել գործնական մեծ կիրառություն: Կյանքի ու կենցաղի ամենատարբեր կողմերին նվիրված հայատառ թուրքերեն գիտա-հանրամատչելի գրքերը ապացույց են հայատառ թուրքերեն գրականության ունեցած կենսական ու գործնական մեծ նշանակության: Հայատառ թուրքերեն գրականությունը հնարավոր է դարձրել ընթերցողների ամենալայն շրջանակների շփումը ինքնուրույն և մասնավորապես թարգմանական գրականության հետ: Այն հաղորդակցման միջոց է հանդիսացել Օսմանյան կայսրության ժողովուրդների սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքի, իրազեկ դարձնելով արտասահմանի գիտության, տեխնիկայի բնագավառներում առաջընթացին ու հաջողություններին[60]:

Հայատառ թուրքերեն գրականությունն իր ավանդն ունի նաև Օսմանյան կայսրությունում գիտական մտքի տարածման ու նոր գրականության, մանկավարժության, լուսավորական ասպարեզի զարգացման գործում:

60 Ռազմական, զինվորական ու տեխնիկական բնագավառների շուրջ հայատառ թուրքերեն գրականության համարյա բացակայությունը արդյունք է այն բանի, որ ռազմա-տեխնիկական ուսումնարաններում հայեր գործնականորեն չէին ընդունում: Ռազմա-դատախազական կազմում կային հայեր, որոնք կրթություն էին ստացել եվրոպական համալսարաններում: Ռազմա-տեխնիկական դպրոցներում հայ մասնագետների ծառայություններից օգտվում էին, որպեսզի կադրեր պատրաստեն Օսմանյան բանակում: Այս ոլորտում ծառայող հայերը հիմնականում զինվորական բժիշկներ են եղել: Սակայն, բոլոր զինվորական բժիշկների սերնդի անցից հետո՝ հայ բժիշկների ծառայությունները խստագույնս մերժվեցին: Ազգային փոքրամասնությունների նման իրավիճակն այս բնագավառներում, բնականաբար բացառում էր հայատառ թուրքերեն գրականության ստեղծումն այս շրջանակներում:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
# ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

## ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ...

Օսմանյան կայսրության ընդարձակ տարածքները ենթադրում էին, որ այն ուշ-շուտ կոչված է դառնալու երկրագործական, գյուղատնտեսական զարգացման երկիր: Որքան էլ որ երկրի տերերն իրենց բնույթով քոչվորական տիպի ներկայացուցիչներ էին, այնուամենայնիվ, այն երկրները, որ նրանք նվաճել էին՝ նստակյաց ժողովուրդների պետություններ էին, ուր տարբեր ազգեր արդեն դարեր ի վեր զբաղվում էին հողագործությամբ, ձևավորելով ավանդույթներ, որոնք պիտի շարունակվեին արդեն որպես հպատակ ժողովուրդների գլխավոր զբաղմունք և գոյության միջոց: Գերավարված ժողովուրդների հետ ապրելով, մահմեդական մասն աստիճանաբար պիտի սկսեր նրանց նման մշակել հողը, զբաղվել նստակյաց հպատակ ժողովուրդների զբաղմունքով, նորովի փորձելով ապահովել իր կյանքը:

Հողագործությամբ զբաղվող ողջ Անատոլիան ծանրաբեռնված էր բազմաթիվ ու բազմազան տուրքերով, որոնց բեռան տակ կռացած ժողովուրդները, անկախ հողագործի իրենց դարավոր սովորույթներից հեռանալուց, ոչ մի կերպ չէին հասցնում «օրինակելի հարկատուներ» լինել[1]: Թշվառ, կեղեքված, անընդհատ հարձակումներից հոգնած, անիրավությունների նորանոր արտահայտություններին չկարողանալով դիմագրավել, Արևմտահայաստանի հայաշատ նահանգներից նրանք ակամա ստիպված էին թողնել իրենց հայրենիքը, բռնել պանդխտության ճանապարհը: Դա և՛ դեպի մեծ քաղաքներն էր ուղղված, և՛ դեպի երկրից դուրս: Լավագույն դեպքում, ընտանիքի որևէ անդամ էր պանդխտության մեկնում այն սին հույսով, որ գուցե զրկանքների ու նվաստացման նոր միջավայրում, տաժանակիր աշխատանքով կկարողանա հեռվից օգնել պարտքերի մեջ խրված, բռնություններին հանդիման կանգնած իր ընտանիքին: Մեր պանդխտության մեջ պահպանված հայերեն ու թուրքերեն (հայատառ թուրքերենով գրի առնված) պանդխտության երգերը նույնքան կարոտակեզ, սրտաճմլիկ ու ողբերգական են, որքան եղերերգերը: Ահա այսպիսի սոցիալ-քաղաքական ու բարոյա-հոգեբանական ծանր վիճակում էր գտնվում արևմտահայության հիմնական հատվածը Օսմանյան կայսրության հայաշատ գավառներում, ուր չէր դադարում նրա գլխին կախված լինել բռնի մահմեդականացման վտանգը, դրանից հետևող իր բոլոր տխուր հետևանքներով: Այնուամենայնիվ, երբ խոսում ենք գյուղատնտեսության տարբեր բնագավառների մասին, ապա նկատի ունենք հենց այս հալածված, թշվառ վիճակի մեջ գտնվող հայ հպատակ գյուղացուն: Միայն 18-րդ դարից սկսած կարող ենք խոսել Օսմանյան կայսրության գավառների հարաբերական զարգացման, առաջադիմության, վիճակի փոքր ինչ բարելավման մասին: Այն մեծապես կախված էր քաղաքների ու գյուղերի կապի, հայ վաճառականների, իսկ ավելի ուշ՝ հայ նորաստեղծ բուրժուական դասի, ամիրաների ազգօգուտ քաղաքականության հետ, երբ պատրիարքարանի հետ մեկտեղ աշխատանք էր տարվում, որպեսզի գավառում հայը ու-

1 Լեոն Վարդան, *Հայերը Օսմանեան եւ պարսկական կայսրութիւններում մէջ ԺԵ-Ի դար*: Երևան, 2004թ, 559 էջ: Ե.Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարանի հրատարակություն:





ծացման չենթարկվի, պահի իր ազգային ավանդույթները, վերադառնի հայերենի թուրքախոս շրջաններում, հավատարիմ մնա իր կրոնին, կարողանա գոյատևել իր գյուղում:

Բնականաբար Օսմանյան կայսրության գավառները տարբերվել են իրենց գյուղատնտեսական, անասնաբուծական զբաղմունքների յուրահատկությամբ:

16-17դդ. Սվազը, Թոքատը հողագործական արտադրության կենտրոններ են եղել: Անկյուրան՝ բրդի և թիֆթիկի (անգորայի այծի բուրդը, մոհեր): Բուրսան՝ մետաքսի և ծխախոտի կենտրոն: Եվրոպական երկրներ, մասնավորապես Անգլիա, Ֆրանսիա և Հոլանդիա էին արտահանվում բարձրորակ ոչխարի բուրդ, մետաքսի հումք, օպիում, բուսական յուղեր: Եվրոպական պետությունները միմյանց հետ մրցում էին այս երկիրը որպես սեփական շուկա, գաղութ ունենալու և այն վերահսկելու համար[2]: Իզուր չի, որ գյուղատնտեսական այս շրջաններն իրենց վերահսկողության տակ պահելու համար այս երկրները ձգտում էին հյուպատոսություններ ունենալ մի շարք գավառական կենտրոններում: Հետագայում, նույն այս հյուպատոսությունները միացյալ ուժերով արգելք էին հանդիսանում կայսրության հարկահավաքներին, պետական պաշտոնյաներին՝ այս շրջանների արտադրության մասին փաստեր հաշվեկշիռ կազմելու, նրանց կողմից արտասահման արտահանվող ապրանքը վերահսկելու գործում: 1843թ. այդ շրջաններում հարկահավաքությունը դրվեց զինվորականների վրա, որը ծայրահեղ ու փրկարար հանդիսացավ օտար հյուպատոսական գերծառայություններով «բռնագրավված» շրջանները վերահսկելու համար[3]: Նրանք բացեիբաց միջամտում էին երկրի ներքին գործերին, առևտրի կազմակերպմանն այդ գավառներում, որով տեղի մոլեռանդ խավերին լարում էին իրենց դեմ: Այդպիսի օրինակներից կարելի է համարել Կեսարիայում անգլիական հյուպատոսության վրա հարձակումն ու քարուքանդ անելը, երբ հյուպատոսը հայտարարեց, որ իրենց գործունեության հիմնական նպատակը Գյուլհանեի Հաթթը-Շերիֆի կենսագործումն է: Հյուպատոսը վերահսկում էր նաև արտադրական պրոցեսները, պարտադրելով նահանգի կառավարությանն անգամ ներկանյութ-սերմերի ցանքսի չափերը, արտահանվող կաշվի քանակը, անգամ անգլիական կտորներով կարվող կանացի գլխաշորերի՝ յազմաների քանակը: Սամսոնի անգլիական հյուպատոսը, որ հայտնի առևտրական էր, տարիներ շարունակ վերահսկել է անգլիական շահերն այս շրջանում: Առանց մաքսի ու առանց հայտարարագրման նրանք երկրից հանում էին ամենատարբեր տեսակի հումք, կայսրություն վերադարձնելով այն մշակված՝ կտորների, տնտեսական ու կենցաղային ամենատարբեր առարկաների տեսքով, վաճառում, ու կարճ ժամանակ անց հսկայական հարստությունների տեր դառնում: Նրանք իրենց «դիվանագիտական առաքելությունը» զուգակցել են Թուրքիայի տնտեսությունն ըստ իրենց շահերի փոփոխությունների ենթարկելուն: Դրա հետևանքներից էր, որ մի օր պարզվեց, որ եզակի թիֆթիկի բրդի ինքնարժեքը համարյա կիսով չափ ընկել է[4]: Դա բնականաբար մեծագույն հարված էր և՛ անասնապահությանը, և՛ մանուֆակտուրային գործունեությանը: Հումքը անգլիացիներն ու ֆրանսիացիները հանում էին երկրից բեռնավորված նավերով, իսկ երկիր էին բերում արդեն

2 Шеремет В.И., *Османская Империя Западная Европа вторая треть XIXв.* М 1886.
3 Նույն, էջ 273.
4 1864թ. Սկյուտիչ Կալաճյանը Բեյա սանջաքի Գեյվեի գյուղում հիմնում է բամբակի մշակման գործարան: 1867թ. Անթաքիայում բամբակագործ ու բեղ պատրաստող գործարանը (8 տարի առաջ հիմնված) բացելու համար Հալեպ Արդահադը արտասահմանից մեքենաներ, դազգահներ է բերել տալիս:

ֆրանսերեն, օսմաներեն, ռուսերեն, հայերեն, հայատառ թուրքերեն լեզուներով հրատարակել են 48 հոդվածներից բաղկացած կանոնադրություն՝ երկար տարիներ Թիչաբէք օղլու-ի նախագահ Արիստակես Ազարյանի գլխավորությամբ: Նրանք 12 համար ունեցած պարբերական են նաև հրատարակել: Որոշ ժամանակ առևտրի ու գյուղատնտեսության բնագավառները մեկ նախարարություն են կազմել, որը հայ մասնագետները, պաշտոնյաները որոշակի որակ են կազմել:

1867թ. Ադանայում Պետրոս Թոփլյանցի ջանքերով հիմնադրվում է «Հողագործական ընկերություն»:

1881թ. Տրապիզոնում «Հայ գյուղատնտեսական միության» կողմից հիմնվում է «Երկրագործական ընկերություն»: Նույն տարին հողագործություն սովորելու համար Հակոբ Ամասյանի ջանքերի շնորհիվ Ֆրանսիայի մի քանի կենտրոններ (Փարիզ, Գրինյոն, Մոնպելիե) են ուղարկում 8 հայ երիտասարդներ, այդ թվում՝ գավառներից:

1889թ. Սելանիկում երկրագործական վարժարան է հիմնադրվում, իսկ 1910թ. Ադաբազարում՝ Արևելյան երկրագործական միություն Կարապետ Նազարյանի գլխավորությամբ:

Հիմնադրվում էին եվրոպական տիպի ագարակներ, որոնք նույն այդ եվրոպական գիտական մոտեցմամբ ուսուցման մեթոդիկայի մաս էին ծառայում: Ուսման ու երկրագործական տարբեր աշխատանքներ նորովի մոտեցմամբ էին կատարվում: Հայտնի են Արամ Երամը, Ռուբեն Քյաթիպյանը, Երվանդ Աղաթոնը, Հայկազուն Պեկեյանը, Նշան Անդրեասյանը, Հակոբ Զաքարյանը, Նշան Գալֆայանը, Վահան Սուրենյանն ու շատ ուրիշ անուններ: Նրանք Թուրքիայում երկրագործության, անտառագիտության, գյուղատնտեսության, անասնաբուծության երախտավորներն են եղել:

Հալքալիի հողագործական վարժարանի ծրագիրը կազմված էր հիմքում ունենալով Մոնպելյեի, Գրինյոնի, Ռենի և Փարիզի երկրագործական համալսարանների ծրագրերը: Այստեղ գործնական ուսուցման համար կային օրինակելի ագարակներ, տարբեր տիպի լաբորատորիաներ: Բարձրագույն կրթություն ստացած հայ մասնագետները արտասահմանից վերադարձին զբաղվել են նաև դասախոսական գործունեությամբ, դասավանդել Հալքալիի և գյուղատնտեսական այլ վարժարաններում: Այսպիսի մասնագետներն աչքի են ընկել իրենց խոր գիտելիքներով, ինչպես օրինակ Գրինյոնն ավարտած Աբրահամ Ալլահվերդին, որը 1889թ. Ֆրանսիայից վերադառնալով երկար տարիներ եղել է Հալքալիի նշանավոր պրոֆեսորներից: Ռումելիի կայսերական ագարակներում պաշտոնավարելուց հետո Վահրամ Թորգոմյանը նշանակվել է Սուլթանի Անձնական գանձարանի պաշտոնյա:

Բուրսայում շերամապահական դպրոց է բացվում, որի տնօրեն է նշանակվում Մոնպելյեի հողագործական վարժարանն ավարտած Գևորգ Թորգոմյանը: Հատուկ դպրոցի անհրաժեշտությունը նաև նրանում էր, որ շերամների որոշ հիվանդությունների պատճառով արտադրողականությունը խիստ իջել էր և պետք էր հատուկ մասնագետ, որը ծանոթ լիներ նման դեպքերում կիրառվող ֆրանսիական միջոցներին, Պաստերի առաջարկած խնամքի ձևերին: 66 ուսանողներից 14 մուսուլման, 11 հույն և 41 հայ: Շենքը ֆրանսիացի ճարտարապետ Զոոտոն է կառուցել: Ավարտական դիպլոմների վրա ֆրանսերենով գրված է եղել «Institut séricultur de Brusse»:





* * *

Կայսրության համար **անտառների** օգտագործումը կարևոր է եղել ամենից առաջ ռազմական տեսակետից: Զինապահեստի (արսենալ), նավաշինարանի համար անհրաժեշտ որակի փայտերը բերվում էին Չանաքքալեից, Բոլուից, Իզմիթից, Էսքիշեհիրի անտառներից: Այս նպատակների համար օգտագործվող անտառները կարիք ունեին մասնագիտական պահպանման, մշակման, լրացման: 1857թ. Բահչեքոյում հիմնվեց Թուրքիայի առաջին «Անտառի վարժարանը»՝ ստեղծված կրկին ֆրանսիական նմանատիպ վարժարանների ծրագրերի հիման վրա: Վարժարանի առաջին 9 ուսանողներից 6-ը թուրքեր և 3-ը հայեր են եղել (Արթին Սարաֆյան, Մարգար Մահզենճյան, Ռեթիկ Օսյան): Այս դպրոցի տնօրենների թվում է եղել 1873թ. շրջանավարտ Ավետիս Ալլանյանը (Ռեմզի), որը մեծ ներդրում է ունեցել տնտեսության այս ճյուղի գիտական կազմակերպման ու մասնագետների պատրաստման խնդրում: Այս դպրոցի մասնագետների պարտականությունն էր լավագույն անտառանյութ մատակարարել ռազմածովային կարիքների, նավաշինության համար: Ընտրովի ծառատեսակները կտրվում ու բերվում էին Ստամբուլ, որ անհրաժեշտ մշակման էին ենթարկվում: Նպատակահարմար ճկատվեց այս ծրագրի իրականացման համար մասնագետ հրավիրել Ֆրանսիայից: Այդ մասնագետը եղել է Միսյո Տասսին (Tassy). Նրա հայրենիք վերադարձից հետո 1859թ. դպրոցը փակվում է և վերաբացվում միայն 1867թ. հրավիրված մի խումբ ֆրանսիացի մասնագետների գալստյան առթիվ: Մ.Բրիկոնի (Bricogne M.) գլխավորությամբ ժամանած անտառագետներն իրենց հսկողության տակ են վերցնում կայսրության կարևոր անտառների վերահսկողությունը Էդիրնեյում, Քասթամոնում, Բոսնիայում և այլուր: Ֆրանսիացի մասնագետները գիտական հիմքերի վրա դրեցին անտառների մշակումը, պահպանությունն ու շահագործումը: Անտառի բարձրագույն դպրոցի երկրորդ տնօրենը դարձավ հրավիրված անտառագետներից Միսյո Միմոնը: 1869թ. մշակվեց «Անտառի մասին» օրենքը: 1857-1892թթ. այս բարձրագույն մասնագիտական դպրոցն ունեցել է ավելի քան 60 հայ շրջանավարտներ: 1870-71թթ. երբ ֆրանսիացի մասնագետները վերադարձան իրենց երկիր, դպրոցի տնօրինությունը, որոշ առարկաների դասախոսների պաշտոնները ստանձնեցին հայ մասնագետները: Ամեն տարի մոտ 10 շրջանավարտներից 4-5-ը հայեր են եղել: Հայ ուսանողների թիվը այնքան էլ չմեծացավ, որովհետև նրանք սովորում էին գյուղատնտեսական այլ հաստատություններում, Հալքալիի վարժարանում և իհարկե, հնարավորություններ էին ստեղծվում հայ ուսանողների մասնագիտական ուսումնառությունը կազմակերպել եվրոպական գյուղատնտեսական կենտրոններում, հատկապես ֆրանսիական հողագործական դպրոցներում: 1877թ. Անտառների ու Հանքերի նախարարությունը գլխավորեց Պետրոս Կույումճյանը: 1884թ. Բուրսայից վաճառական Մերիկ օղլու Հովհաննեսը և Անտառների վարչության հսկիչ Խաչատուր էֆ. ստանում են 2-րդ աստիճանի ***Sanayi Nefise Madalyası***.

1892թ. միաձուլված Հալքալիի անտառի և Գյուղատնտեսական դպրոցները 1909թ. կրկին բաժանվում են, սակայն քրիստոնյա ուսանողներ այլևս չեն ընդունվում:

Այս ագարակներում և փորձարարական հողատարածքներում օրինակելի արտեր, վարդի տնկարաններ էին աճեցվում, որոնք նախատեսված էին վարդի յուղի արդյունաբերության համար (Սպարտայում): Հայ **ծաղկաբույծների** համբավը, միջազգային ցուցահանդեսների մասնակցության ու արտասահմանյան մասնագիտական մամուլին աշխատակցելու շնոր-

պես դրա 3 համարները լույս էին տեսել որպես *ՏՆՏԵՍԱԿԱՆՍ* թերթի գյուղատնտեսական հավելված: Նրա նպատակներից էր օգտակար լինել նոր «կենսաբուժ նորազատ Հայաստանի հայության, հայրենիքի վերաշինության» գործին: Հայ գյուղատնտեսական միության *ՏՆՏԵՍԱԿԱՆՍ* ամսօրյա հավելվածը տպագրվում էր Պոլսի «Ժ. դԱնիրեա» տպարանում, Սեպուհ Ստեփանյանի, Հրանտ Դանցիկյանի, Հայկ Սերենգյուլյանի կողմից 1919թ. օգոստոսից սկսյալ:

Բացի հայերեն ու հայատառ թուրքերեն պարբերականներից, գյուղատնտեսության ասպարեզում նորությունների ու ձեռնարկումների անդրադարձել են նաև Պոլսի այլ թերթեր ևս: *LA TURQUIE* ֆրանսերեն թերթը Գյուղատնտեսության նախարարության ուշադրությունն է հրավիրել Հովսեփ Չայանցի մի կարևոր գյուտի վրա: Գյուտի էությունը կայանում էր գյուղատնտեսությանը մեծ վնաս հասցնող անձրևաորդերի դեմ պայքարի նորահայտ միջոցին:

Գյուղատնտեսության բնագավառը միավորել է երկրի տնտեսության մի քանի ուղղություններ: Մասնավոր պրոֆեսիոնալիզմի կրթություն ստացած մասնագետները այնքան հարգի են եղել, որ միաժամանակ մի քանի տեղ են ծառայել: Սուլթանական պալատը, առաջին կարգի պալատականներն ու փաշաները միմյանց հետ մրցել են, որպեսզի այս կամ այն հայտնի հայ մասնագետը ծառայի իրենց ընտանիքին, խորհրդատու կամ վերակացու լինի իրենց այգիների, ագարակների խնամքը եվրոպական մակարդակով կատարելու համար: Սովորաբար այս մասնագետները կարողացել են միաժամանակ զբաղվել նաև մանկավարժական գործունեությամբ, պարբերականներ հրատարակել կամ թղթակցել տեղական ու արտասահմանյան գիտական մամուլին, զբաղվել գիտական գործունեությամբ, հեղինակել գրքեր, կատարել թարգմանություններ: Նրանց հեղինակած գրքերի մի մասի վրա գրված էր՝ «բաժանվում է անվճար»: «Երկրագործական Յառաջդիմութիւն ի Թուրքիա» շարքի հրատարակությունները իրապես ողողվել են շահագրգիռ վիլայեթներ, ուր բաժանվել են անվճար: Դրանք վերաբերել են ամենատարբեր խնդիրների[19]: Այս մասնագետների որոշակի մասը հաջողությամբ գործել է տարբեր նախարարություններում ու վարչություններում, քաղաքապետարաններում ու գավառներում՝ նահանգապետերին կից խորհուրդներում[20]:

19 Քիմիական աղբեր. *Ո՞րքան ո՞ր պարարտ ի՞նչպէս*, Կ.Պոլիս, 1910:

20 **Միհրան Հեքիմյանը** (1847-1927) անասնաբուժության սպեցիալիստ է եղել Հալեպի Գյուղատնտեսական դպրոցում: Ավարտելով Վենետիկի Ռաֆայելյան վարժարանը, վերադարձին 42 տարի պետական ծառայության մեջ է գտնվել: Մի կողմից անդամակցել է Սուլթանի անձնական ագարակների և անտառների տնօրինության ու անշարժ գույքի վերահսկողության վարչությանը, մյուս կողմից՝ Անասնաբուժության դպրոցի տնօրինությունն է վարել: Հեղինակել է մասնագիտական մի քանի ձեռնարկներ (1882): Նա երկրում առաջին մասնագետն է եղել անասնաբուժության բնագավառում: *Ulûv-ı sâni* աստիճան է ունեցել, 2-րդ աստիճանի *Osmanîye* և Ա կարգի *Mecidiye* շքանշաններ և ոսկե *Liyakat* մեդալի է արժանացել: **1884թ.** Անասունների և հավերի դպրոցի տնօրեն Հեքիմյանը ստացել է *Rütbe-i Sâniye* շքանշան, 3-րդ աստիճանի *Osmanîye*:

**Վահան բեյ Սուրենյան** - Տնօրեն Երկրագործական ու առևտրի նախարարության Երկրագործական ճյուղի:

**Ռուբեն Քյաթիպյան** - Երկրագործական նախարարության կարևոր ճյուղի՝ Երկրագործության քաղաքականության բաժնի տնօրեն, գիտական առաջընթացի մեծ պաշտպան, ընդհանուր քննիչ, մասնագետ գյուղատնտես:

**Նշան Կալֆայան** - Երկրագործական նախարարության գյուղական տնտեսության մասնագետ, գիտական առաջընթացի բաժնի փոխտնօրեն:

**Սասուն Էֆենդի** - խորհրդական:

**Հրանտ Տանձիկյան**- Թուլուզի անտառատնտեսության վարժարանի, Հալեպի դասախոս:





# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ


Հայկազուն Պեկեյան


Սիմոն Քոչուկյան


Ալեքսիս Անեմյան


Հարություն Հայաճյան


Միհրան Սուքիասյան


Երամ Երամյան


Սասուն Էֆ.


Վահան Սուրենյան


Նշան Կալֆայան


Գևորգ Թորգոմյան


Հրանտ Տանձիկյան




Շերամապահության ինստիտուտը 1905թ.




Շերամապահության ինստիտուտի 1914թ. դիպլոմը ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով, տրված Միհրան Բուլղուր Գալֆայանին



Հերեքեի մետաքսի գործարանի հայ բանվորուհի (Լուս. Արդույանի հոր.)

1913թ. Հայկական գյուղատնտեսական ՄԵԱԿ միությունը այս բնագավառը ճ աստայականացնելու, գիտական ներմուծումներ անելու, հողագործներին ավելի տնտեսելով գործելու համար հրատարակում է 17 հոդվածներից կազմված իր կանոնադրությունը[37]:

Հայերի մոտ ջուլհակագործությունը տարածված էր քաղաքներում, գավառներում: Այսպես օրինակ, Հովնան Վարժապետյանը, որ 19-րդ դարի վերջերին Մարաշի խտավորիչներից էր համարվում, Մարաշի ջուլհակների արտադրանքը արտահանում էր Կեսարիա, Փոքր Ասիայի քաղաքները, Սիրիա[38]:

Միայն Ադանայում 15 մանածագործական ֆաբրիկաներ հիմնադրվեցին՝ կտավի, բամբակի[39] (տարբեր պրոցեսների համար՝ մշակումից մինչև թելերի արտադրությունը), սառույցի արտադրության: Նորարարություններն ու գյուտերը ուղեկցում էին արտադրությունների

հոդվածները: 1904թ. Պոլսում Հասցի հրատարակվել է «*Բնականի գյուղական դպրոցական*»-ն «*Գյուղատնտեսական*»-ը մասնագիտական պատկերազարդ գյուղատնտեսական հայատառ թուրքերեն պարբերականները: 1907-8թթ. եղել է «*Արևելք*» պարբերականի գյուղատնտեսական բաժնի աշխատակիցը: Այս բնագավառում Կարինի Սանասարյան վարժարանի ներդրած տնօրեն գյուղատնտեսական դասընթացներին կազմակերպել է աշխատել: 1909թ. աշակերտների խնդրանքով պաշտոնի է կոչվել Պոլսի Հալքալիի երկրագործական վարժարանում որպես շերամապահության ու երկրագործության ուսուցիչ: 1910թ. նշանակվել է օսմանյան տնօրեն երկրագործական նախարարության գիտական ճյուղի: 1910թ. մայիսի 1-ից երկրագործական նախարարության պաշտոնյա Սոլեյման բեյի հետ լույս է ընծայել «*Չիֆթճի ղազեթեսի*» օսմաներենով մասնագիտական պարբերականը, որը նորություն էր թուրքերի համար: Տեղափոխվել է Հունաստան, եղել շերամապահության տարածման ընդհանուր քննիչ: Գիտական գործերի հեղինակ է: Կյանքի վերջին տարիներին եղել է Թեհրանի երկրագործական դպրոցի ուսուցիչ և Իրանի շահի կալվածքների գիտական ճյուղի պետը: Ընտրվել է Ֆրանսիական ակադեմիայի թղթակից անդամ:

37 1910թ. Ադաբազարում **Մարկոս Թերզյանը** հիմնում է «Արևելյան երկրագործական միություն»-ը: Նույն տարին Ադաբազարում հիմնվում է «Հայ գործակցական ընկերություն»-ը:

38 1899թ. **Գրիգոր Գալուստյանը** գրել «*Մարաշ կամ Գերմանիկ*»-(Ջուլհակների դեմքերը):

39 Այս արտադրությանն ուղեկցվում էր հարակից արտադրություններով՝ բամբակենիների (կապոկենի վրա դաշտը, նույնիսկ վրձնով կտորի վրայի նկարները գծելկալով), վերմակի ծածկոցների, ջուլհակագործների, կտավագործների, գորգագործների ու կարպետագործների: Նույնիսկ ամենաաղքատ ընտանիքում կինը գտնի գործելու դազգահ ունեին:



շրջան: Միևնույն Առավածատրյանը սանդղել էր մի մեքենա, որը տարագագործության մեջ արտադրությունը բազմապատկում էր: Բամբակամշակման հետ կապված ֆաբրիկաներ են գործել Մերսինում, Տարսոնում և այլուր:



Հերեքեի մետաքսի գործարանի մասնագիտացված խանութը Պոլսի կենտրոնում (Լուս. Արդույանի հոր.)

Օսմանյան կայսրության տիրակալության շրջանում արդեն որոշ գավառներ հայտնի են եղել բամբակագործությամբ ու դրա մշակմամբ: Բամբակագործության հետ սերտորեն կապված են եղել մի քանի արհեստներ՝ ջուլհակությունը, ներկարարությունը, ներկեր պատրաստելու, մոմագործության, փայտե դաջող կաղապարների պատրաստման, անկողին պատրաստողների, դերձակների, գոտիագործների, կոնաձև այլ (այալքանյկա) գլխարկներ ու դրանց կաղապարներ պատրաստողների մասնագիտությունները: 1455-85թթ. Թոքատում եղել են այս բոլոր արհեստանոցները, իսկ դրանցով զբաղվողների կեսը՝ 280 հայ արհեստավորներ են եղել, 223 ջուլհակներ: Չթի հայտնի առևտրական Կոնչեգյուլ Հովհաննեսի նախաձեռնությամբ հայ վաճառականները մի միություն են կազմել, որի ղեկավարը 1851թ. եղել է Հաճի Նշան Շիրինյանը: Նրանց պարտականություններից էր այս արտադրության զարգացումը երկրի հայաշատ նահանգներում:

Դեռևս 1790-ական թթ. Պոլսի Գումկունենոր թաղում մի հայ հնարեց «նազմա» կոչված գլխաշորը: Հայկական տաղանդի, վարպետության արտահայտություններից էր Թոքատում նուրբ մուսլինի(շղարշի) վրա (հետագայում նաև այլուր, բամբակե նուրբ այլ տեսակի կտորների վրա) դաջելու արվեստը, որը և ծնեց մինչ օրս այդպես հայտնի կանացի գլխաշորը՝ յազման: Եազման ծառայում էր աղքատիկ կանանց համար իբրև գլխաշոր: Ամենապարզից մինչև ամենաշքեղ, ոսկեթել, արծաթաթել, ծոպերով ու մարգարտաշար, հուլունքազարդ յազման բեռ բարակ, սակայն դիմացկուն կտորից էր, տարբեր գույների, իսկ դաջված զարդանախշերի ներկերը դիմակայուն էին արևի, լվացքի դեպքում: Այս գյուտը տարածվեց հայերի շրջանում, նրանց դարձնելով դրա արտադրողներից, հասցնելով այն արվեստի աստիճանի: Որքան էլ որ թուրք ուսումնասիրողները պնդում են, որ մահմեդական կանանց համար օգտագործվող յազմաները պատրաստվել են միայն մահմեդականների կողմից՝ բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Զմյուռնահայ Հակոբ Անիրա Սարգսյանը 19-րդ դ. սկզբին Վիեննայում հնարել է «Ֆրենկ նազմասի»-ն (ծաղկավոր նուրբ կտոր):

Այս հավաքական արվեստի արտահայտություններից կարելի է նկատել մինչև օրս աշխարհի, մասնավորապես Արևմտահայաստանում, Պոլսում եկեղեցական հագուստների, շուրջառների, ծածկոցների, վարագույրների, ծիսական շքեղ ոսկեկար ու արծաթեկար, թանկարժեք քարերով կարված պսակառական ու հարուստ խավի հագուստների ասեղներ

կս, եղել են հայերը: Օսմանյան կայսրության ծխախոտի (Ռեժի) անանուն ընկերության հսկողությունը վստահվել է Նորի բեյին և Ընդհանուր հարկային վարչության տնօրեն Սարգիս Համաճյանին: Այս գլխավոր հսկիչ է նշանակվել Անտոն փաշա Թնկըրզադեն: 1894թ. Սարգիս Համաճյանը՝ Ծխախոտի կայսերական վարչության կողմից նշանակվել է «Թուրք Ռեժիի» ներկայացուցիչ: Բուխարեստում հիմնադրված Ծխախոտի ազգային ընկերության Պոլսի մասնաճյուղի տնօրեն է նշանակվել Օ.Մինասյանը (1882):

Եգիպտոսի հայ համայնքն աչքի էր ընկնում իր ճկունի որակով, համախմբվածությամբ, երկրում ճկունի դիրք ու հարգանք վայելում թե՛ քաղաքական, պետական ծառայության ասպարեզում և թե՛ տնտեսության կազմակերպման առումով:

Երկրի տնտեսության զարգացմանն աջակցում էր իրար հաջորդող հայկական տնտեսական, ֆինանսական, հասարակական տարբեր միությունների, կազմակերպությունների ստեղծումն ու նրանց բուռն գործունեությունը[56]:

Պողոս Նուպար Փաշան եգիպտական կառավարության կողմից սկսում է իրականացնել Սուդանում ջուր անցկացնելու նախագիծը: Այն ծխախոտագործության նոր հեռանկարներ էր բացելու: Այս գործի հայկական արտահայտություններից պետք համարել Սուդանում հայկական գաղութի ձևավորումը:

Միջազգային ցուցահանդեսներում հայ ծխախոտագործները շարունակաբար հաջողություններ են գրանցել: Մի շարք ցուցահանդեսներում հենց հայ մասնագետներն են դառնում Օսմանյան կայսրության պատվիրակության ղեկավարները, ներկայացնում երկրի ծխախոտագործությունը: 1899թ. Լորդֆեր Պալեռզյանը Ֆիլադելֆիայի (ԱՄՆ) Գյուղատնտեսական միջազգային կոնգրեսում եղել է Օսմանյան կայսրության պատվիրակը: Այս ցուցահանդեսներում աչքի ընկած մասնագետները համարյա թե մեխանիկաբար արժանանում են նաև Օսմանյան կառավարության շքանշաններին, մրցանակներին ու այլ շնորհների, որով կառավարությունը խրախուսում էր տվյալ բնագավառի հաջողությունները, նրանց ղեկավար-մասնագետներին: 1905թ. Իզմիրցի հայտնի վաճառական Սերգո Պալեռզյանին և Բուլկանյան ծխախոտի ընկերության Պոլսի ներկայացուցիչ Արշակ Ուննյանին կառավարության կողմից արժանի ***Liyakat Madalyası*** է շնորհվել:

1886թ. Կարապետ Մարոսյանը Կահիրեի Մոհամեդ Ալի հրապարակում բացում է ծխախոտի ֆաբրիկա ու վաճառատուն-ընկերություններ:

1902թ. Եգիպտոսի Ասյուտ քաղաքում Մարոսյան և Սարգսյան առևտրական տների կողմից ծխախոտի ֆաբրիկա է հիմնադրվում, որի հայ աշխատողների 20 երեխաների համար բարեգործական դպրոց է հիմնվում: Այսպիսով, ծխախոտի ու բամբակի արտադրության կենտրոնների շուրջ կազմավորվել ու զարգացել են հայկական համայնքները:

1914թ. Կահիրեում՝ Գրիգոր և Կարապետ Մելքոնյան եղբայրները ծխախոտի նոր ֆաբրիկա են հիմնում և Սուդանի իրենց 80 մասնաճյուղերում օրական 19 միլիոն ծխախոտ են արտադրում: Հայկական ծխախոտագործության այս զարգացումը մեծապես տուժում է Եգիպտոսում անգլիական վերահսկողության առաջին իսկ շրջանից: Շատ գործարաններ աստիճանաբար անգլիական հսկողության տակ են ընկնում, ապա նաև՝ նրանց սեփականությունն են դառնում:

56 1900թ. **Երվանդ Աղաթոն** հիմնում է Եգիպտոսի Գյուղատնտեսական միությունը:





**Անասնաբուծություն**

Հողագործությունից հետո տնտեսության կարևոր ճյուղ պետք է համարել անասնաբուծությունը: Հայերեն, հայատառ թուրքերեն ձեռագրերում, ինչպես նաև տպագիր շրջանում առկա անասնաբուծության, կենդանաբանության, անասնաբուժության մասին երկերը վկայում են այս բնագավառում հայերի ունեցած ավանդի, հետաքրքրության, դրանով զբաղվելու մասին: Մասնավորապես 19-րդ դարը եղել է այս բնագավառի գիտական կազմակերպման շրջան, շնորհիվ բազմաթիվ հայ մասնագետների, գիտնականների: Նրանք երկրագործական ուղղվածության մաս են դարձրել երկրում անասնաբուծությունը, հիմնել անասնաբուժական ու անասնաբուծական վարժարաններ, բուծել համբավավոր «թիֆթիկ» բուրդ տվող անգորական այծերի տեսակը[57], զբաղվել արաբական ձիերի բուծմամբ, զարկ տալով նաև տնային տնտեսության մեջ հայտնի կենդանիների բազմացմանը: Պոլսահայ հայտնի երկրագործ Հակոբ Ամասյանի նախաձեռնությամբ Պոլսում անասնաբուժական քաղաքային վարժարան է հիմնադրվել: Պոլսի շրջակայքում՝ Սան-Ստեֆանոյի (Եշիլքյոյ) մոտ հիմնադրվում է Հալքալըի համբավավոր երկրագործական վարժարանը, որ մինչև օրս գործում է: Հիմնադիրը, Ամասյանը 1892թ. ներկա չի գտնվել այս վարժարանի բացմանը, քանի որ պաշտոնից հեռացվել էր: Նա է, որ առաջին անգամ ծավալեց կարտոֆիլի, եգիպտացորենի, բամբակի լավագույն տեսակների մշակումը, «մոհեր» կոչված այծերի ու արաբական ձիերի բուծումը, փորձարարական արտեր ու տնկարաններ տարածեց, նախաձեռնեց երկրագործական կենտրոնների (սանջակների) հաստատումը Պոլսում և արևելյան գավառներում, աջակցեց երկրագործական դրամատան հիմնադրմանը (ագրոբանկի նախատիպը):

Անասնաբուժական վարժարաններ հիմնադրվել են ոչ միայն Պոլսում: Այս մասնագիտական դպրոցներում ևս հայ դասախոսների պակասը չի զգացվել[58]: Նրանց առընթեր, Գյուղատնտեսության նախարարության կողմից, թույլատրվել են բժշկական, բակտերիոլոգիական ու նման լաբորատորիաների գործունեությունը: Երբեմն հայկական, նաև օտարալեզու մամուլը համապատասխան նախարարությունների ուշադրությունն է հրավիրել այս լաբորատորիաներում կատարված հայտնագործությունների վրա, որոնց շտապափույթ ներդրումը տնտեսության մեջ պետք խրախուսվեր[59]: Հայտնի անասնաբույժի համբավ է ունեցել արքունի վառոդապետների տոհմից *Տաղյան Պողոս Բեյը (գնդապետ, 1862-1934)*, որը եղել է ձիաբուծության մասնագետ:

Անասնաբուծությունը շատ կարևոր էր անասնապահական դիմագիծ ունեցող մի երկրի համար: Առանձին նահանգներ, ինչպիսիք էին Տրապիզոնը, Ղարսը, Արդահանը հայտնի

57 Անգորական և սովորական այծերի խաչակով Թուրքիան առաջնակարգ տեղ է զբաղեցրել:

58 1894թ. Մարզիֆոնի անասնաբուժական դպրոցում աշխարհագրություն է դասավանդել **Միհրան** էֆենդին, ֆրանսերեն՝ **Գարբիս և Արթին** էֆենդիները: 1894թ. Հալքալըի գյուղատնտեսական դպրոցի մշակման կենտրոնի տնօրեն է նշանակված հայտնի բուսաբան **Հովհաննես Պեկիյանը**, որը բուսաբանի տնօրեն էր Այլանդերի էֆենդին, բնության և անասնաբուժության ֆրանսերենով դասախոսը՝ **Արթին Քեմալ** էֆենդին: Անասնաբուժական դպրոցի ներքին հիվանդությունների դասախոսն էր գնդապետ **Միհրան բեյը**, որը 1905թ. արժանացել է արծաթե ***Imtiyaz*** շքանշանի: Նախագույն շքանշանակրություն արժանացել են ***Rahia*** շքանշանների, ինչպես օրինակ՝ 1901թ. Արթին, Համբարձում, Սիրատ, Միհրան, Գրիգոր և Սիրած անվամբ ուսանողները:

59 1910թ. նույնին Երզնկայում հանդիսությամբ բացվել է Գյուղատնտեսության նախարարության խնամքը **Թերզյան** էֆենդիի հիմնած բակտերիոլոգիական անասնաբուժարանը՝ եզերի համաճարակի դեմ պայքարելու նպատակով:

էին կաթնամթերքի արտադրությամբ: Թուրքական գյուղի ուսումնասիրողներից Ի.Հյուսրեվը[60] գրում է, որ 20-րդ դարի առաջին տասնամյակներին, օրինակ, Տրապիզոնի շրջանից յուրաքանչյուր շաբաթ 80 տակառ սերուցքային յուղ է ուղարկվել Պոլիս, 20 տակառ՝ Իզմիր: Վաճառականները գնում էին կաթը, այն մատակարարում ֆաբրիկաներին, խանութներին: Որակյալ կաթնամթերքի, մանավանդ սերուցքների արտադրության վրա է հիմնված արևելյան անուշեղենների պատրաստման մի ամբողջ ոլորտ:

Կենտրոնական Անատոլիան, որ բարձրակարգ բրդի հումք և հացահատիկային բույսեր էր մատակարարում, տարեկան 650տ. բուրդ էր արտադրում, որից միայն 200տ. Անկարայում էր օգտագործվում՝ հիմնականում վերմակեղենի, գորգի արտադրության մեջ, իսկ մնացածն արտահանվում էր: Ամերիկյան, անգլո-թուրքական, տեղական ընկերությունները, առանձին վաճառականական տներ զբաղված էին արտահանմամբ, ինչպես նաև տեղական մանածագործական ֆաբրիկաների մատակարարման հարցերով: Այն շրջանները, որոնք զբաղված էին արտահանման շուկայի համար արտադրություններով, բնականաբար զարգանում էին դրսից եկած ապրանքների շնորհիվ, որպես ապրանքափոխանակության արդյունք:

Արևմտահայ բնագետներից Իզմիրցի Հակոբ Զաքարյանի անունը կապված է երկրում ընտանի թռչնաբուծության ուսումնասիրության բնագավառի հետ: Նա Հալեպի հողագործական վարժարանում, որ ագարակի տնօրինությունն է վարել, միաժամանակ հավաբուծություն է դասավանդել: Այս բնագավառում հայտնի է եղել նաև Էմիրյան Մարտիրոսը, որն այս ոլորտի մասին հայատառ թուրքերենով գրքեր է հրատարակել:

Հայկական պարբերականները միշտ էլ անդրադարձել են գավառների տնտեսական խնդիրներին: Ըստ այդպիսի հրապարակումների, տեղեկանում ենք, որ Մուշը հնարավորություն է ունեցել «մշակելու ընտիր ձիեր, պատվական եզներ, ազնիվ ոչխարներ, բուրդ, բեչա, գորգ ու կարպետներ, կաշի, ընտիր յուղ, աղեկ գինի, մաքուր ու համեղ հաց, տարբեր տեսակի հունդեր, տանկեր աճեցնելու»: Մուշում մշակել են առատ եղած խեժը, Սասնա լեռների երկաթը: Մուշն առատ է եղել որսի կենդանիներով: 19-րդ դարի կեսերին վաճառականությունը շատ չէր զբաղվում Մուշի հնարավորություններով, որով կասեցվել է դրա զարգացումը, իսկ ժողովուրդը մնացել է խեղճ վիճակի մեջ: Պարբերականներում հրապարակվող այս նյութերը պետք է գրավեին երկրագործության ու անասնապահության զարգացմամբ մտահոգ խավերին:

Պարտադիր չէ պնդել, ապացուցելու հայ մասնագետների ավանդը այս կամ այն ասպարեզում: Նրանց բարձրագույն ու պատասխանատու պաշտոններում ներգրավված լինելը օսմանյան կայսրության նման մի երկրում՝ արդեն անհերքելի ապացույց է նրանց ունեցած որակի, նպաստի: Առանձին կենսագրությունների ներկայացումը կօգնի վերագտնելու բազմաթիվ արժանավոր մասնագետների անուններ, վերհիշել նրանց գործերը, վեր հանել բազմակողմանի զարգացած, տաղանդավոր մասնագետների, նվիրյալների կերպարները:

* * *

**Դևեջյան Գարեգին** (1868 1964), խարբերդցի: Ձկնորսության Բալըքհանեի կենտրոնի տնօրեն: Նրա հեղինակած կոթողային «Ձուկ և ձկնորսություն» 500 էջանոց, 200-ից ավելի նկարներով գործը հրատարակվել է Պոլսում 1906թ. ապրիլին: Հրատարակությունից 10 տարի անց այս գիրքը 1915թ. օսմաներենով տպագրվել է Ստամբուլում, իսկ 1926թ. «Ձկնորսությունը և ձկնորսները Թուրքիայում» վերնագրով թարգմանվել է ֆրանսերենի ու մի քանի հրատարակություն ունեցել: Կարևոր հանգամանք էր, որ ձկների անվանումները նաև լատիներեն են եղել: Ներկայացվել են նաև բոլոր գետերը, լճերը, նրանց կենդանական աշխարհը և որսի քանակը: Գիրքը թարգմանվել է նաև հունարեն: Այս եզակի աշխատությունը համարում է այս բնագավառի ուսումնասիրություններից ամենաարժեքավորը, նախակարապետը: Այս գործի հիման վրա են գրվել այլոց հետագա մի շարք աշխատությունները Թուրքիայում: Սա սոսկ գիտական աշխատություն չէ: Այստեղ օգտագործված են նաև բանահյուսական, պատմական նյութեր, որով այն իր տեսակի մեջ անկրկնելի է մինչ այսօր: Այն մեծ նպաստ ունի եվրոպական գիտական շրջանակներում ձկնաբանությամբ զբաղվողների շրջանում, աղի ու քաղցրահամ, ծովային, կանգնած ջրային ավազաններում ու հոսող ջրերում ձկներին վերաբերող հնարավոր բոլոր խնդիրների ուսումնասիրության առումով: 2006թ. Պոլսի ԱՐԱՍ հրատարակչատունը այս գրքի թուրքերենով 3-րդ տպագրությունն է իրականացրել: Այն 576 էջ է պարունակում:

**Պողոս փաշա Նուպար** (1851-1930)[61]. Զավակն է Նուպար փաշայի, մեծանուն դիվանագետի: Կրթությունը ստացել է Ֆրանսիայում և Շվեյցարիայում: Աշխատել է ֆրանսիական ընկերություններում, երկաթուղիներում: Նա հոր դիվանագիտական ասպարեզից ավելի նախընտրել է մեծ ձեռնարկություններով զբաղվելը: Պողոս Նուպար փաշան 1900թ. հնարել է կատարելագործված շոգեքարշ հերկահարը (տրակտորի նման), որի համար ստացել է ֆրանսիական կառավարությունից «*Chevalier de Légion d'Honneur*»-ի ասպետական խաչ և «Ոսկե մեդալ»՝ Փարիզի միջազգային ցուցահանդեսում: 1906թ. Միլանի միջազգային ցուցահանդեսում ստացել է Ոսկե մեդալ ու «*Chevalier de Légion d'Honneur*»-ի աստիճան: Արժանացել է Ֆրանսիայի երկրագործական ընկերության ոսկե մեդալին որ հորջորջվում էր՝ «Olivier de Servs»: Այս շքանշանը տրվում էր 4 տարին մեկ, երկրագործության ասպարեզում լավագույնը հանդիսացած գյուտարարին: 1905թ.և 1906թ. որպես Եգիպտական կառավարության պատվիրակ մասնակցել է Հռոմի երկրագործական միջազգային ինստիտուտի առաջին և երկրորդ ընդհանուր ժողովներին, որը տեղի էր ունենում Իտալիայի թագավորի բարձր հովանավորության ներքո: Նա կարևոր դեր է խաղում այս համաժողովներում, ղեկավարում նիստեր, քանի որ մեծագույն ծառայություններ էր մատուցել և շարունակում էր մատուցել աշխարհի երկրագործությանը: Նա տնօրինում է Եգիպտոսում Պեհերայի Երկրագործական անգլիական ընկերությունը: Ինքն էր Եգիպտոսում երկաթուղային ցանցի վերակազմիչը 7 տարի շարունակ, ապա՝ տրամվայների Աղեքսանդրիայի ընկերության և Կահիրեի ընկերության հիմնադիրը: Բազմաթիվ այլ պաշտոններ է վարել: Սուեզի ջրանցքի նրա ծրագրի գործադրումը նախընտրելի համարվեց անգլիական նման ծրագրից:

Պողոս Նուպար փաշան ազգային մեծագույն գործիչներից է, Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիրը:

60 I. Hüsrev. *Türkiye köy iktisadiyatı*, s, 64-65

61 Այս երևելի այրի կենսագրությունը շատ հայտնի է: Ներկայացնում ենք միայն երկրագործության հետ առնչվող մասը:

վարել Գիզայի գյուղատնտեսական նախարարության ուսումնասիրությունների կենտրոնը, ղեկավարել բամբակի արտադրությունը: Արժանացել է «Նեղոսի» 5-րդ աստիճանի շքանշանի: Ուսանողական շրջանում իր կազմած հերբարիումի և կենդանիների հավաքածուի հիման վրա 40 տարվա աշխատասիրությունից հետո հրատարակել է 1100 էջանոց և 3657 անուն ներառող բույսերի անունների լատիներեն, արաբերեն, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, թուրքերեն նկարազարդ բառարանը[68]: Թողել է նաև «Հայ բուսաշխարհ» անտիպ գործը:

**Քաջունի Մանուել** (1823-1903), Վենետիկի Մխիթարյան հայրերից, բազմիր արբա (1903): Մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի, մեխանիկայի դասագրքերի հեղինակ: Հանրագիտարանային արժեք ունեցող հազարավոր էջերի հեղինակ, քիմիական էլեմենտների աղյուսակի հեղինակ, ուր հայկական անուններ են տրվել բազմաթիվ քիմիական տարրերի: Նրա ամենաարժեքավոր գործերից է «Բառգիրք արունստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց» հանրագիտարանը (3հ., 1891-93թթ.): 1899թ. Վենետիկում հրատարակել է «Պարտիզպանութիւն. անուանք գլխավոր բանջարեղենաց հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն և իտալերէն» 306 էջանոց պատկերազարդ գործը, ուր տաճկերենն արտահայտված է հայատառ թուրքերենով[69]:

* * *

Հայ մասնագետների կողմից, ինժեներական կրթություն ստացած կամ ոչ՝ հնարվել են գյուղատնտեսական աշխատանքներին ծառայող մի շարք մեքենաներ: Դրանք ներկայացվել են եվրոպական միջազգային ցուցահանդեսներում, պատենտավորվել, արտադրվել, վաճառվել [70]:

**Լևոն Մարաշլյանը**, տարոնահայ, 1910թ. հնարում է կալի մեքենա, որի վրա 500 ոսկի է ծախսում: Այն օրական 100 գրիվ ցորեն էր հանում, իր տեսակի մեջ գերազանցելով եվրոպական նմանօրինակ մեքենաներին:

Իգդիրցի երկրագործ **Միհաս Ճատուրյանը** 1909թ. մի *կալի մեքենա* է հնարել «Միհաս» անվամբ, որի համար 15 տարվա կառավարական մենաշնորհ է ստացել:

Գյուղատնտեսության բնագավառում սկսել էր կարևոր դեր խաղալ դաշտերում օգտագործվող տեխնիկայի ներմուծումը օտար երկրներից: 1909թ. Ադանայի ջարդերի ժամանակ հայ ազգաբնակչության կոտորածին հետևել է գյուղատնտեսական տեխնիկայի ջարդը: Այս շրջանը, երկրի ամենազարգացած գյուղատնտեսական շրջաններից էր ու հնարավորություն էր ունեցել դաշտային տնտեսության մեջ առատորեն օգտագործելու եվրոպական տեխնիկան և աննախընթաց հաջողություններ էր արձանագրել այս բնագավառում:

68 Armenag Bedevian, *Illustrated Polyglottic Dictionary of Plant Names*, Cairo, 1926, Նույն այս Բառարանը հայատառ թուրքերեն հրատարակվել է 1936թ. 1099 էջ: Տես՝ Յասմիկ Ա. Ստեփանյան, *Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն* (1727-1968), Ստամբուլ, 2005, h.1648: Տես նաև՝ Жуковский П.М. Земледельческая Турция, 1933, Москва, Ленинград. Կ.Պոլսում Ն. Արիֆյանը ֆրանսերեն, հայերեն, թուրքերեն լեզուներով տանկերի բառարան է հրատարակել(1908):

69 Յասմիկ Ա. Ստեփանյան, *Մատենագիտություն*... էջ 288, h.1214:

70 Այս մասին տես առանձին դեպքերի կենսագրություններում:





**Հանքարդյունաբերություն**

Օսմանյան կայսրության ընդարձակ տարածքները հարուստ էին բնական հանածոներով, հանքանյութերով[71]: Տնտեսության այս ճյուղը վերահսկվում էր հիմնականում կառավարության առընթեր Անտառների ու հանքերի վարչության կողմից: 19-րդ դարում այս գերատեսչությունը տնօրինողների թվում բավականին թվով հայ մասնագետներ են եղել, որոնք որպես տնօրեններ են աշխատել, տարբեր հանքերի վերահսկիչներ եղել: Հանքերի մի մասը Օսմանյան կառավարությունը որոշակի ժամանակաշրջանի համար շահագործման է հանձնել իր երկրի առանձին անհատ արդյունաբերողների, ինչպես նաև օտար ընկերությունների: 1909թ. հայտնի գիտնական, Հայ Ազգային խորհրդի և Օսմանյան սահմանադրական ժողովների պատգամավոր Նազարեթ Տաղավարյանի հեղինակությամբ Պոլսում լույս է տեսնում «Երկրագործութեան անտառաց եւ հանքաց զարգացումն ու շահագործումն» գործը, որն ինչպես արդյունաբերության նոր զարգացող ճյուղերից մեկը, ուր հայկական մասը կարևոր դեր էր խաղում՝ դրված էր գիտական ռելսերի վրա, եվրոպական վերջին առաջընթացին հաղորդակից դարձնում շահագրգիռ կազմակերպություններին, առանձին արդյունահանողների: Հանքարդյունաբերության ասպարեզում զբաղված շահագործողները ստեղծեցին ձուլարաններ, որոնց համար հայ հրատարակիչները նույնիսկ ուղեցույց գրականություն սկսեցին հրատարակել:[72]

19-րդ դարի երկրորդ կեսերին հայ պաշտոնյաները, սկսած նախարարներից մինչև վերահսկիչներն ու փորձագետները, հանքերի գլխավոր տնօրենները, պատկառելի տոկոս են կազմել այս նախարարությունում[73]: Եվ քանի որ այս բնագավառը ևս գտնվում էր եվրոպական տերությունների ու առանձին օտար արդյունաբերողների ուշադրության ու ծգտումների շրջանակում, ուստի այս նախարարությունը մեծապես համագործակցում էր Արտաքին գործոց նախարարության, կառավարության հետ: Խանգարիչ հանգամանք էր Արևելյան Անատոլիայի տնտեսական նշանակության կենտրոններում եվրոպական հյուպատոսական ծառայությունների չափազանցված, ծայրահեղ ինքնուրույնությունը, ընդհուպ Կայսրության վերահսկողության մեխանիզմներին խոչընդոտելը:

Էներգետիկ պաշարների առումով քարածխի պաշարները ամենահարուստն էին: Երկիրը հարուստ էր ոչ լավորակ լիգնիտի՝ մուգածուխի պաշարներով: Եվարկե ոչ բոլոր հանքավայրերը արդյունաբերական նույն նշանակությունն ու շահագործելիությունն են ունեցել: Այս հանքերը ձգվում էին ողջ մերձսևծովյան շրջաններով՝ Էրեյլիից մինչև Ռիզե: Ածխահանքերից հայտնի էին՝ Էրզրումից 10 ժամ հեռու գտնվող Գուխան և Օրենոր գյուղերի ածուխը: Էրէյլիի[74] հանքերից 1884թ. օգտագործվում էր 71 տոննա, իսկ 1908թ.՝ 767. 329 տ:

71 Այս մասին տես Ն.Յ.Լույշովկյա, «Թուրքիա» տնտեսա-աշխարհագրական աշխատության մեջ Եր.,1958:

72 *Օսմանեան յուլարան*, Կ.Պոլիս, Տպ.Շամբ, 1910.

73 1886թ. Անտառների ու հանքերի գլխավոր տնօրեն **Պետրոս Կույումճյանի** նախագահությամբ, մասնատան վարիչ **Նորատունկյանի** հետ մի քանի անգամ Առևտրագործնախարարությունում ժողովներ են գումարվում: 1902թ. Կոստիկի անտառների, հանքերի վերահսկիչ **Հովսեփ** էֆենդին արժանի *Liyakat Madalyası*-ի է արժանանում: 1902թ. Կոստիկի հանքերի վերահսկիչ **Արամ Երամ** էֆենդին արժանի *Liyakat Madalyası*-ի է արժանանում: 1902թ. Անտառների, հանքերի ու գյուղատնտ. նախարարության փինանսական վարչության պետ **Արտաշես Ալյուզենյանը** ***Mütemayiz*** շքանշանի է արժանանում: 1898թ. Անտառների, հանքերի նախարարության գյուղատնտեսական հանքերի տեսչի ժամանակ Արամ Երամը՝ 2-րդ աստիճանի ***Osmanlye*** է ստանում:

74 **Բարսեղ Հովսեփյանը** (1832-1920) եղել է երկաթի ու ածխի առևտրական և եգիպտական կառավարության

Քասբենունում շահագործվում էր 15 հազ. արտավար ածխահանք:

Օսմանյան կայսրությունն ուներ նաև նավթի պաշարներ Մոսուլ, Բաղդադ, Դերջան վայրերում: Սրանք 30 տարվա օգտագործման համար տրված էին բելգիական ընկերությանը:

Սև և գունավոր մետաղներից հայտնի էին երկաթի, պղնձի, խրոմի, մանգանի, մոլիբդենի, անագի, ցինկի, ծծմբի հանքանյութերը, նաև՝ բորաքս(բէնեքսի), ալեբաստր, կավը, սղոնգ, հանքային ջրեր, թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, հրակայուն, շինարարական նյութեր:

Պղինձը տարեկան 1մլն 200 000 կգ էր շահագործվում: Անագի հանքեր կային Սվազի, Իմեպոլսի մոտ: Արծաթով հայտնի էին Կյումուշխանեն, Շաբին Գարահիսարը:

Կապար կար Թորոս լեռան վրա: Վանում կապարի ու ծծմբի հանքեր էին շահագործվում:

Սնդիկ կար Կոնիայում: Մարմար՝ Քիոս, Բիթլիս, Մարմարա կղզու շրջակայքում:

Քարաղով հայտնի էր Իգդիրը: Կարինը 40 մլն քաշ աղ էր արտադրում, իսկ Հալեպը՝ 12 մլն.: Մեռյալ ծովի աղը ևս կարևոր բաժին էր կազմում: Տարեկան արտադրվում էր 300 հազ. տ աղ, որից 80%-ը արտահանվել է: Հանքարդյունաբերության այս ճյուղի զարգացման մեջ հայերն իրենց ուրույն դերն են ունեցել: Նրանք եղել են բազմաթիվ հանքերի տերեր, արդյունահանողներ:

1840-ականներից սկսած Թոքաթյան, տիվրիկցի Գափամաճյան եղբայրները երկաթի վաճառականությամբ են զբաղվել, բացելով Լոնդոնի, Մանչեստրի հետ առևտրական կապեր: Չքի հայտնի առևտրական Կոնչեգյուլ Հովհաննես էֆենդին վերոհիշյալ ընտանիքների շառավիղներից է:

Մի քանի հետաքրքիր տեղեկություններ հանքերի մասին:

Ամիրաներ Միսաքյան Ալեքսանը և Միսաքյան Հակոբը, որ Ակնցի Եղիազարի քրոջ որդիներն են եղել, ծառայել Մուհամեդ Ալիին, 1830-ականներին ստացել են Մաքարխայի արահանքերի շահագործման մենաշնորհը:

**1888թ. Բուրսայի և Բալըքեսիրի արծաթի ու պղնձի հանքի 80 %-ը պատկանել է Տրդատ Տատյանին (1860-1916)[75]:**

**1891-2թթ. Ուսբուփ սանջաքի Կոմանովա շրջանի Լուքան գյուղի խրոմի հանքերը 40 տարով հանձնվում են Գրիգոր Փաշայանին:**

**1893թ. Իզմիրի սանջակի Գեյվե քաղաքի (գայմակամներն են ղեկավարում) Օրթաքեո-**

ամփոփ հայդուկայինը: 1890թ. հիմնադիրներից է եղել Էրեկլիի ածխահանքի ընկերության և մեծ գործունեության ծավալել, միջազգային համբավ ունեցել, ազգային երեսփոխան եղել, հանձնառել է Կեսարիական փարժարանի հիմնադիրներից: Իր մեծագույն արժանիքն էր ազգին օգտակար անհատներ պատրաստելը և ինքն օրինակ էր հանդիսանում իր վարքով ու գործով: Նրա բոլոր 6 զավակները ստացել են եվրոպական կրթություն: Արամը և Սուրենը՝ վաճառական, Պետրոսը՝ իրավաբան, Միհրանը՝ ճարտարապետ, Երվանդը բժիշկ և Հրանտը՝ հանքային երկրաբան: Պետրոսը եղել է ազգային երեսփոխան, օսմանյան մեջլիսի պատգամավոր, Համբոգոսը շինության նախարար, միշտ օգտակար իր ազգին, նրա ծանրագույն ժամանակներում (Ադանայի ջարդերը), լինելով հայ-թուրք հաշտեցման կողմնակից:

75 Ներսես Խոջայով բեյ Տատյանի երրորդ որդին է: Եղել է հանքարդյունաբերող: 1882թ. ավարտել է Ղալաթասարայի լիցեյը (Մեքթեբ-ի սուլթանի): 12 տարի վարել է Պեշիքթաշի Մաքրուհյաց վարժարանի տնօրինությունը: Հիմնադրել է Մաքրուհյաց սանուց միությունը (1886), բեթե ատլետիկայի միությունը (1888) և ազգային գործերում միշտ ներկայանալի դերակատարություն է ունեցել: Զբաղվել է պղնձի, արծաթի, երկաթի ու այլ հանքերի գնմամբ ու շահագործմամբ:





յի Սարքիր դաղում գտնվող երկաթի հանքերի Տրդատ բեյ Տատյանին պատկանող մասի 60%-ից 17-ը ստացվում են ֆրանսիացի Էմիլ Բոդենիի օգտին: 1899թ. Իզմիրի սանջաքի Աղաբազարի մոտ երկաթի հանքերի 80% շահագործում էր Տրդատ Տատյանը:

**1894թ. Բուրսայի Կարասի սանջաքի Դեմիրտաշկյոր ու Քըզըլար գյուղերի արծաթի ու արճիճի հանքերը 99 տարով հանձնվում են Տրդատ Տատյանին ու Յորգի Սևաստափոլին:**

**1908թ. Տրդատ Տատյանին պատկանող Իզմիրի պղնձահանքերի հետագա օգտագործման համար նրա ու մասնատեր անգլիացի Ժերարդ Ֆ.-ի միջև նոր պայմանագիր է կնքվում:**

**1895թ. Եգիպտոսի Էժիմեթ վայրում սկսում է գործել Լևոն Գոզանյան եղբայրների երկաթաձուլարանը:**

**1895թ. Կեյվեի վարչական խորհրդի անդամներից Սարգիս Կարապետյանը վկայական է տալիս շրջակա երկաթի հանքերը Իզմիրի սանջակին պատկանելու մասին, տեղի բնակիչների կողմից աշխատանքները զգուշությամբ չտարվելու պատճառով:**

**1912թ. Բուրսայի արծաթախառն արճիճի հանքերի հիմնական բաժնետերերի՝ Ահմեդ Ջելալեդդին փաշայի, Տրդատ Տատյանի, հանքագործ Տիգրան Պարոնյանի միջև համաձայնագիր է ստորագրվում:**

**Ոչ հանքային հանածոներից Օսմանյան կայսրության տարածքներում հայտնի են եղել** կերակրի աղի, սոդայի, բորակի, ծծումբի պաշարները: 1899թ. Ղալաթիայի վաճառականներից Բարսեղ Հալաճյանը Բոլու սանջակի Գոյնուք վայրում սնդիկի ու արսենիկի(մկնդեղի) հանքեր գնելով, իր 77.5% մասից 5%-ը Տրդատ Տատյանին է թողնում:

1899թ. Գրիգոր Դանիելյանը Բուրսայում, Գեմլիկ վայրում բորաքսի հանքից 3% Տրդատ Տատյանին է թողնում:

1904թ. Շիրինյան էֆենդիին է տրվում Դենիզլիի մոտի խրոմի հանքերի շահագործման իրավունքը:

1905թ. հանքային ինժեներ Պարգև Մարկոսյանը նշանակվում է ողջ Այդըն նահանգի հանքերի ինժեներ:

**1910թ. Լոնդոնում դեսպանատան առևտրական խորհրդական Գալուստ Կյուլպենկյանը 2-րդ ատիճանի *Osmaniye* է ստանում: 1914թ. Կյուլպենկյանը հիմնադրում է «*Թըրքիշ Պետրոլիում* կոմպանիան»[76]: Նա ըստ կանոնադրության իր ձեռքում էր պահում ընկերության 5 տոկոսը:**

**Ածուխի մեծ արդյունաբերող է եղել Արթին Քարամանյանը:**

**Օսմանյան կայսրությունում շինանյութերի արտադրությունը մեծապես կախված է եղել հանքագործության հաջողություններից: Ցեմենտի, աղյուսի, կղմինդրի, ապակու, գիպսի, մոզաիկ սալիկների, կրի, գաճի գործարանները կրաքարի առատության շնորհիվ, բացվում էին մեկը մյուսի ետևից: 1856թ. «Էսայան Հակոբ և եղբ.» ընկերությունը հիմնում է երկաթաձուլարան և հաստոցաշինարան՝ Սիրքեճիյում: 1865թ. Ղալաթիայում Հովակիմյան եղբայրները հիմնում են ձուլարան (գործարան) և մեքենանոց՝ ընդհանուր կապարե խողովակների արտադրության և մեծաքանակ վաճառք կազմակերպում:**

**«Թ. Բազումեան և ընկ.»-ը Սիրքեճիյում սկսում է աղյուսի, կղմինդրի (Մարսելից, Լիվորնոյից), ամեն տեսակի մարմարի, տարբեր քարերի (Մալթայից, Ժենից) վաճառք:**

76 Նրա հայրը՝ Սարգիս Կյուլպենկյանը սուլթանի կողմից նշանակվել է Տրապիզոնի կուսակալ:

1909թ. հունվարին Տրապիզոնում հիմնվում է «Կոմինոսի և աղյուսի ընկերությունը»: Պոլսում և Արևմտյան Անատոլիայի կենտրոնական քաղաքներում մեկը մյուսի հետևից բացվում են շինանյութի ֆաբրիկաներ ու խոշոր պահեստներ, խանութներ: 1846թ. Իզմիրում Ջյուջե (Թզուկ) Կարապետ Տյուզօղլին (Տյուզյան) և Հաջի Կարապետ Պզտիկյանը թղթի ֆաբրիկա են բացում: Հայ արդյունաբերական խավը երբեմն հանդես է եկել միաժամանակ մի քանի ասպարեզներում: Այսպես օրինակ, 1860թ. Սամսունում հիմնադրվում է «Կ.Խնճիճյան և որդիք» առևտրական տունը, որը բաժանմունքներ ուներ Տրապիզոնում և Էրզրումում: Նրանց հոր կողմից հիմնադրվել էր շշերի *խցանների ֆաբրիկա*: Զբաղվում էին երկաթեղենի, պղնձե ապրանքների, դանակների, հյուսածքեղենի, ժամացույցների մեծ ընտրանի ունեցող մեծածախ առևտրով: Պոլսում քառահարկ շենք զբաղեցնող առևտրական այս տունը հաճախ կազմակերպում էր եվրոպական և ամերիկյան ճարտարվեստի ապրանքների ցուցահանդես-վաճառքներ: Ընդունելի էր սակարկության և ապառիկով վաճառքի սկզբունքը: Նույն 1860թ. Պոլսում հիմնված ժամացույցի և զոհարեղենների «Գ.Մազլումյան և որդիք» վաճառատունը ներկայացուցիչն էր «ամենաճշգրիտ» *Recta* ժամացույցներ, ավստրիական ու անգլիական դրամարկղներ, անկիզելի պահարաններ, ջուր զտող գործիքներ, մեքենաների «Պիրելլի» և այլ մակնիշի դողեր, արծաթե սպասք վաճառող օտար արտադրողների:

Տեղական արտադրությանը զուգահեռ հայ վաճառականները երկիր էին բերում շինանյութի լայն ընտրանի Մարսելից, Լիվոռնոյից, Մալթայից, Ժնևից, Իտալիայից: Հայ վաճառականները նաև արտաքին շուկա էին հանում կայսրության ապրանքները, արտադրանքը՝ նախապես կազմակերպելով դրանց շատերի արդյունահանումը, գործը, զարգացումը: Արդյունաբերողների ու վաճառականների այս օղակը ներառում էր բազմաթիվ արհեստների գոյությունը, երկաթուղային ու բանկային համակարգի զարգացում, ճանապարհաշինարարություն, հյուրանոցային բիզնես: Արտասահմանյան ուղղակի ներմուծվող շինանյութի հետ մեկտեղ մեծ բաժին է տրվում երկրում տեղական հանքերի օգտագործմանը, այն շինանյութի արտադրության մեջ ներդնելու համար:

**Մածունը Ֆրանսիայում, եվրոպական շուկայում**

Միջազգային ասպարեզում անուն ու հաջողություն է վայելել հայկական մածունը և դարձել տարբեր եվրոպական ժողովուրդների կենցաղի մի մասը:

1924 թ. փարիզյան «Gazette du Bon Ton» պարբերականում անհայտ նկարչի կողմից տպագրված մի գունավոր փորագրանկար ներկայացնում է Փարիզի Սորբոն փողոցում ձիու հետ մածուն վաճառող Արամ անունով մի հայի: Դեռևս Սուլթան Ազիզի ժամանակ, Սամաթիայի ու Եդիկուլեի միջև գտնվող Էբյենեգ կոչված հողամասի վրա հիմնված ագարակում կեսարացի Դորմենջյանների ընտանիքում էին պատրաստում այդ մածունը: **Արամ Դորմենջյանը**, որ Սորբոնի համալսարանում քիմիագիտություն էր ուսանում, հոր մահվանից հետո ուսումը շարունակելու համար ստիպված է լինում աշխատել, դրամ հայթհայթել: Այնուամենայնիվ հոր մահից հետո անկարող էր ուսումը շարունակել ու ստիպված էր հոգալ իր և Սամսունում մնացած ընտանիքի կարիքները: Հենց նա էլ մտածում է արտածել իրենց պատրաստած մածունը Ֆրանսիա: Նա հիմնել էր «Դանոն» մածունի ընկերակցությունը:





Այս անունը մինչև օրս էլ հայտնի է Ֆրանսիայում: Ֆրանսիացիները մեծ դժվարությամբ ու կասկածով էին մոտենում այս մթերքին: Գլխավոր արգելքն այն էր, որ ֆրանսիացիները գաղափար չունեին մածունի մասին, չգիտեին, թե ի՞նչ է այն, ինչի՞ց է պատրաստվում, թե ինչպե՞ս է այն պատրաստվում և փախենում էին այն գնել, օգտագործել: Արամ Դորմենջյանը որպեսզի ապացուցի այս կարևոր մթերքի օգտակար սնունդ հանդիսանալու փաստը, դիմում է հայտնի «Պաստյոր» բժշկական հաստատությանը, որոնք իրենց լաբորատորիաներում անհրաժեշտ ստուգումներ կատարելուց հետո ապահովում են մածունի մասին կարևոր մի տեղեկագիր: Այդ շրջանում ինստիտուտի ղեկավարն էր պրոֆ. Մեչնիկովը: Այն կանաչ ճանապարհ է բացում մածունի օգտագործման ու սպառման համար Ֆրանսիայում, իսկ տիրոջը՝ մեծահարուստների ցանկում տեղ ապահովում: Հետագայում Արամ Դորմենջյանը «Դանոն»-ը վաճառել է ֆրանսիացիներին: Այս անվանումը մինչ օրս մնում է Ֆրանսիայի կաթնամթերքի ամենահայտնի արտադրողներից, հանդիսանալով[77] արտադրության հսկա:

77 Ժնևում մենք հանդիպեցինք Չիլինկիրյան ազգանունով մի տիկնոջ, որի ընտանիքը Ֆրանսիա էր հաստատվել Օսմանյան կայսրությունում մինչ Մեծ եղեռնը կատարված ջարդերի պատճառով: Այս ընտանիքը զբաղվել էր Փարիզում մածունի պատրաստմամբ ու դրա առևտրով: Տիկինը պատմում էր, որ իրենց սնանկացման պատճառը հանդիսացել է «Դանոն»-ի մեծաքանակ արտադրությունը: Նա հնավաճառների շուկաներից գտնում, գնում էր դարասկզբին իրենց ընտանիքի վաճառած մածունի կավե ամանները, որոնց վրա ֆրանսերենով «Հայկական մածուն» էր գրված:

ուգործ, կարուձև, գլխարկագործություն, գորգագործություն: Քահանայի, ուսուցիչների և պաշտպանյալների զավակները կես թոշակ էին ստանում: Տարեթոշակը՝ 36 օսմ. լիրա: Այս դպրոցի «Կանոնադրությունը» Պաղտասարյանի մոտ է տպագրվել: Դիպլոմը՝ ֆրանսերեն և օսմաներեն լեզուներով էր, գրված՝ «Կոլլեջ կոմերսիալ Բագրատունի», հիմնադրված 1898 թ.: 1898թ. Ամասիայում, մետաքսի ու մանուֆակտուրայի վաճառականներ Հաջի Եփրեմ և Հաջի Մարտին Իսրաենոսյան եղբայրների կողմից բացվում է առևտրական դպրոց: Սուլթանը տեսնելով ու շփվելով միսիոներների, օտար դիվանագետների հետ, համոզվում է եվրոպական տիպի կրթությանն իր երկրում տեղ տալու, նրան հետևելու քաղաքականության անհրաժեշտության մեջ: 1680թ. Հռոմի պապի արտոնությամբ հայ կաթոլիկ վարդապետ Մելքոն Թասբազը շրջել էր Փոքր Ասիայի հայաշատ վայրերով, տարածել կաթոլիկություն, կաթոլիկական հավատքի փոքր օջախներ հիմնադրել: 1688թ. Էրզրումում հիսուսյանների ուխտին հաջողվել է որոշ հայերի կաթոլիկ դարձնել:

Այդ և նման մի շարք արտաքին հարաբերությունների լուծման հարցերում, եվրոպացիների ցանկություններին հնարավորինս ընդառաջելու, կենցաղում եվրոպամոլության որոշ տարրերը ներդնելու պատճառով նա երկրի պահպանողական ավագանու, կղերի կողմից որակվել է որպես «Գյավուր (անհավատ) Փադիշահ»: Նույն վերաբերմունքին է արժանացել նաև Աբդուլմեջիդ սուլթանը: Նա ձգտում էր լավագույն հարաբերություններ ունենալ եվրոպական, մասնավորապես ֆրանսիական արքայական տան հետ: Որպես ապացույց իր բարի ձգտումների, նա ֆրանսիական թագուհուն նվեր է ուղարկում 150.000 ֆրանկ արժողության մի մանյակ, որն արվեստի բացառիկ գործ էր, պատրաստված արքայական հայ ոսկերչապետ Հոճա Պողոսի կողմից:

Այնուամենայնիվ նույն այս Սուլթանը ստիպված է եղել արգելելու միսիոներական հաստատություններում մահմեդականների ուսումնառությունը, որքան էլ որ գիտակցում էր եվրոպական համալսարաններում թուրք երիտասարդության կրթության անհրաժեշտությունը: Դրա կողքին՝ պալատում, հարուստ ապարանքներում սկսվում է ընտանեկան, մասնավոր օտար ուսուցիչներ ունենալու սովորույթը: Նույնը շարունակվում է Աբդուլհամիդ Բ սուլթանի օրոք: Արքայազնները, բարձրաստիճան պալատականների ընտանիքների զավակները տանը օտար լեզուներ են սկսում սովորել, սովորում են շփվել տարբեր արվեստների, երաժշտության հետ, որն աներկբայորեն նրանց պիտի մոտեցներ տարբեր երկրների արքայական ընտանիքներում ընդունված սովորույթներին, մակարդակին: Նույնպիսի մոտեցում էր պալատական ու հարուստ հարեմներում: Միայն թե մահմեդականների համար օտար դպրոցներում սովորելու արգելքը շարունակում էր ուժի մեջ մնալ: Այդ պատճառով, թուրք ուսումնասիրողների խոստովանությամբ, մեծ քաղաքներում հայերը համարվել են ամենագործունյա, բանիմաց տարրը[33]: Իզմիրում թուրքական տարրը միայն որոշ արհեստների է տիրապետել, իսկ քաղաքի տնտեսական կյանքի զարգացման մասին երբ խոսենք, 19-րդ դարում ամենահայտնի երախտավորներն են եղել **Պալեոլյան եղբայրները, Արապյանները, Էսայանները, Քասապօղլու եղբայրները**: Կայսրության պալատական, հոգևոր բարձրաստիճան անձիք երկար ժամանակ շարունակել են նայել հայ սեղանավորների ձեռքին: Իսկ եղած սեղանավորների կեսը հայեր ու հույներ էին, քառորդը՝ հրեա, և քիչ

33 Իզմիրում, օրինակ, առևտրի ասպարեզում թուրքական տարրը համարյա թիվ չի կազմել:





ավելի փոքր թիվ էին կազմում լևանթենները (եվրոպացիները):

Արևմտահայ իրականությունում սեղանավորական ասպարեզը մեծապես պայմանավորված էր հայ, հույն, հրեա արքունի, պետական և տարբեր կարգի սեղանավորների գործունեությամբ: Օսմանյան կայսրությունում եվրոպական երկրների ու դրա հետ՝ կյանքի, կենցաղի, գաղափարների, գիտական, առաջադիմական, կապիտալիստական հարաբերությունների ներթափանցմամբ փոխվեցին այս ասպարեզի գործունեության ձևերը: Այն ևս զարգացում սկսեց ապրել: Աստիճանաբար նրանք զինվորագրվելու էին եվրոպական բանկային համակարգն արտահայտող կանոններն ու օրենքները: Դրանից խուսափելն անհնար էր, քանզի Օսմանյան կայսրություն էին մուտք գործում եվրոպական բոլոր երկրներից բանկային հայտնի տներ, իրենց բանկային ու ապահովագրական գործակալությունները հաստատելով Պոլսում և նահանգներում:

Այս գործի երախտավորների օրինակ է հանդիսանում կարենցի **Կարապետ Գարագաշը** (1840 -1902): Եղել է հայտնի ֆինանսիստ ու ֆրանսիագետ: Հայրը քառորդ դար ծառայել էր փողերանոցի տեսուչ Հակոբ Չելեպի Տյուզյանի մոտ: 1853թ. ավարտելով Չամիչ ընտանիքի և Միհրան բեյ Տյուզի հովանավորությամբ ուղարկվում է Փարիզի Մուրադյան վարժարան, ուր ակնառու հաջողություններ է հանդես բերում ֆրանսերեն և անգլերեն լեզուների տիրապետման մեջ: Սովորել է Միքայել Փորթուգալի, Հովհաննես Սաքըզի և Պետրոս Քերեսթեճյանի հետ, որոնք բոլորն էլ կարևոր պաշտոններ պիտի գրավեին օսմանյան Ելմտական (ֆինանսական) նախարարությունում, պայքարելով բարձրացնել միջազգային ֆինանսական ոլորտում Թուրքիայի քայքայված վարկը[34]: Կարապետ Գարագաշը 16 տարեկանում Ելմտական նախարարության պարտքերի հատուցման բաժնում նշանակվում է որպես երկրորդ հաշվակալ: 1861թ. նշանակվում է Մեծ եպարքոս Ֆուադ փաշայի կողմից Օսմանյան կայսրության կառավարության առաջին կանոնավոր բյուջեն կազմող, ֆրանսիացի ընդհանուր քննիչ, մարկիզ Պլեորի մոտ որպես անձնական քարտուղար: Մարկիզ Պլեորի այս երիտասարդ օգնականի ավանդը նշանակալի է լինում: Նա գործուն դեր է կատարում Ելմտական նախարարության երկարատև բանակցությունների գործընթացում, որի նպատակն էր սեղանավորական գործողությամբ թղթադրամը հանել շրջանառությունից, պետության երերուն պարտքը դնել հաստատուն հիմքերի վրա: Այս ամենը ծնունդ տվին 1863թ. 2 մլն.700 հազ. դրամագլխով «Բանկ Օտոմանի» հաստատմանը: Բանկի ընդհանուր քարտուղար է նշանակվում Կ.Գարագաշը: 4 տարի աշխատելուց հետո վերադառնում է Ելմտական նախարարություն՝ որպես Հաշվակալության դիվանի պետ: 1869թ. Մեծ եպարքոս Ալի փաշայի հրամանով նախարարը Գարագաշին անվանում է այդ նախարարության Ֆրանսիայի գծով ընդհանուր քարտուղար և նախարարության Բանակցությունների դիվանի պետ: 1871-73թթ., երբ անպաշտոն էր, նախարարությունը փոխառությունների ու արժեթղթերի գործի ձախողումների պատճառով գտնվում էր ծանր վիճակում: Նա նախարարությանն իր բարենորոգումների ծրագիրն է ներկայացնում, համաձայն որի «Բանկ Օտոմանը» վերածվելու էր պետական դրամատան: Նախարարը նրան ուղարկում է Փարիզ՝ որպես խորհրդական: Լոնդոնում, Վիեննայում և Բեռլինում ունեցած խորհրդակցությունների արդյունքում 1874թ. ընդունվում է նրա ներկայացրած ծրագիրը: Ըստ պայմանի, «Բանկ Օտոմանն» իր դրամագ-

34 1894թ. Ֆինանսների նախարարության գնահատման հանձնաժողովի անդամ **Օհան Փիլիպոսյանը** Հռոմի Պապի կողմից արժանացել է *St. Grégoire* ասպետի շքանշանի:

յունը պիտի բարձրացներ 10 մլն. անգլիական ֆունտ ստեռլինգի և առանձներ կայսրության տուրքերի հավաքիչի ու վճարողի դերը: Շնորհիվ այս ծրագրի միջազգային ասպարեզում թեև բարձրանում է Օսմանյան կայսրության վարկը, սակայն նախագիծը չի իրականացվում անհրաժեշտ գումարների բացակայության պատճառով: 1896թ. Գարագաշը Հաշվապահության ատյանի անդամ է դառնում: Ուներ ***Ulây-ı sâni*** աստիճան:

1887-88թթ. մենակ խմբագրել է *GAZETTE ECONOMIQUE FINANCIERE* ֆրանսերեն շաբաթաթերթի հայատառ թուրքերեն տարբերակի 51 համարները: Բազմաթիվ թարգմանություններ է հրատարակել, որ կատարել էր ֆրանսերենից, անգլերենից և գերմաներենից: Լիցեյի է վերածել Պերայի հայ կաթոլիկ ս.Գր. Լուսավորիչ վարժարանը ու ցմահ գործուրացել վրան: Ուսումնական խորհրդի անդամ է եղել, հայտնի բարերար: Մահացել է կաթվածից:

* * *

Հայ սեղանավորների մեծ ավանդույթ ունեցող արևմտահայ միջավայրում հայ մեծատունները ի թիվս այլոց, 1842թ. հիմնել են բանկային հսկա երկճյուղ ընկերություն՝ Անատոլի և Ռումելիի ընկերությունները: Առաջինը՝ տնտեսում, հավաքում էր իր հարյուրավոր աշխատողների միջոցով Անատոլիայի հարկերը: Երկրորդը՝ Ռումելիի հարկերը: Կայսրության ողջ հարկերը, տուրքերը հավաքվում էր այս ընկերությունների միջոցով: Այդ տուրքերը չհավաքած նրանք պետական գանձարանին կանխավճար էին տալիս, դրանով իսկ դյուրացնելով, ապահովելով պետական բյուջեի հավասարակշռությունը, մյուս կողմից՝ իրենք էլ շահելով հետագա իրենց գործունեության արդյունքում: Այս երկու ընկերություններից յուրաքանչյուրի հիմնադրմանը 6-ական ամիրաներ էին զբաղված: «Անատոլու քումպանեաշը»-ի (Անատոլիական ընկերության) անդամներ էին Պետրոս ամիրա Քյուրքչյուհանյըն, Հարություն Ամիրա Երկանյանը (կամ Ուզունյան), Ակնցի Միսակ Միսակյան ամիրան (1793-1856), Մկրտիչ ամիրա Ճեզաիրլյանը, Բաղդասար ամիրա Չերազյանը և Պողոս ամիրա Աշճանը: «Ռումելի ընկերությունը» ներկայացնում էին Ճանիկ ամիրա Փափազյանը, Մակարդ ամիրա Սարիմյանը, Արթին(Հարություն) ամիրա Գելցեյանը, Աբրահամ ամիրա Ալլահվերդյանը, Հովհաննես ամիրա Թնկրը (Թնկրյանը) և Հովսեփ ամիրա Դավոդյանը: Ղեկավարներն էին Արթին ամիրա Երկանյանը, Հարություն Ամիրա Ուզունյանը, որը Սուլթանից աղամանդակուռ ***Iftihar Madalyası*** պատվանշան էր ստացել: Պետական տուրքերի հավաքման այս երկճյուղ հայկական ընկերությունն իր նախադեպը չունեցող երևույթ էր Կայսրությունում, սակայն, հակառակ իր փառավոր սկզբին ու կազմությանը, երկար չկարողացավ դիմանալ՝ վճարողների գեղծարարությունների ու խարդախությունների պատճառով: Մեծագույն խանգարիչ հանգամանքներից էր նաև Կայսրությունում օտար հյուպատոսությունների առևտրական գործերի անձեռնմխելի ու համարյա անհնարին վերահսկողությունը: Այն է՝ երկրից դուրս հումքի արտածում և իրենց երկրներից սպառման ապրանքների ներմուծում, վաճառք: Այդպիսի հյուպատոսներից մի քանիսը հսկայական հարստություն դիզեցին հայաշատ նահանգներում՝ դիվանագիտական անձեռնմխելիության վահանի տակ իրենց ունեցած զուտ անձնական գործունեության շնորհիվ: Այս ամենը կառավարելի չէր ու պետական գանձարանը մեծ կորուստներ էր կրում, անգամ ի վիճակի չլինելով գոնե նորմալ





տեղեկատվություն, վիճակագրություն ունենալու: Այս երկու բանկային ընկերությունները երկար կյանք չունեցան: Նրանց չփրկեց նաև այն, որ մաքսատներից որոշները հայ տնօրեններ ունեին, ինչպես Միսակ ամիրա Միսակյանի եղբայրը, Գևորգ ամիրան, որ Լիբանանի մաքսատան տնօրենն էր՝ և հնարավորինս աջակցում էր նրանց:

Հայտնի են եղել նաև առանձին սեղանավորներ, որոնք կառավարությունից գնել են այս կամ այն նահանգի տուրքերը հավաքելու իրավունքը: Այդպիսի դեմքերից է եղել Բաղեշցի երևելի **Տեր Ներսեսյան Խաչատուր Խանը (1810-1895).** Եղել է պետական ու ազգային անվանի գործիչ: 16 տարեկանից փոխադրվել է Պոլիս, համագործակցել Հակոբջանյանի, Գազազյանի նման հայտնի վաճառականների հետ: Նրան բաժին է ընկել Պարսկաստանի հետ առևտուրը: Թավրիզում նշանավոր դիրք է գրավել և այնտեղից կառավարությանը մեծագույն ծառայություններ մատուցելու համար ստացել *խանի* տիտղոս: Տարիներ անց վերադարձել է Կարին, շարունակել առևտրական գործը: Պետական կալվածատիրության է հետևել, նախ՝ Կարինի, ապա Վանի շրջանի մաքսերը հավաքել: Երկար տարիներ անդամակցել է Կարինի շրջանի Կուսակալության ժողովին: Այդ ընթացքում Օսմանյան կառավարությունից ստացել է վաճառականի *պետական* աստիճան ու շքանշաններ: Գավառացիների մեջ այդպիսի շքանշաններ ստացողի նախադեպը չէր եղել: Նշանակվել է ռուսական հյուպատոսի պատվակալ թարգման: 1877թ. Օսմանյան սահմանադրության երկրորդ տարվա նստաշրջանի համար Կարինից ընտրվել է երեսփոխան: Հաստատվել է Պոլսում: Ազգային կարևոր գործունեություն է ունեցել:

* * *

1887թ. հրատարակվում է «Տոկոսի օրենքը», ըստ որի, սկսած այդ թվականից, Թուրքիայում ամենաբարձր տոկոսը կարող էր լինել տարին հարյուրին՝ 9: Այնինչ՝ ամիսը 100 ղուռշին 30 փարա: Այս օրենքն իր մի շարք հոդվածներով կարգավորում էր գործառույթները:

«Վակֆ» կալվածքների ժառանգական իրավունքները, կալվածական տուրքերը ևս կարգավորվում էին մի շարք հոդվածներով: 1899 թվականից ի վեր Ֆինանսների նախարարությունը ըստ այս օրենքի և գնկույցի է գանձել տուրքերը:

Հրատարակվել են տարբեր օրենքներ, որոնք միտված էին ոչ միայն օրինական դաշտ ապահովելու, այլև ընդհանուր փաստիքներ էին տալիս ճիշտ կողմնորոշման համար: Դրանցից էր *Դրոշմապարքի* օրենքը: Այն վերաբերել է Կայսրությունում ամենատարբեր ապրանքներին՝ դատական նիստերի տված բոլոր վճռագրերին, տեղեկագրերին, թղթատարական ու այլ ստացագրերին, երաշխավորագրերին, ափանդագրերին, այն ամեն ամենին, որը փոփոխման, կնիք դրոշմելու, հաստատելու կարիք ուներ: Եղել է գնային ցուցակ տարբեր տեսակի դրոշմաթղթերի համար: Կողմնորոշվել են ըստ 1883թ. 35 հատուկ հոդվածների: Առանձնահատուկ հոդվածներով են առաջնորդվել տեղական, օտար թղթատարական կազմակերպությունները (փոստը, հեռագիրը): Օտարների թվում են եղել անգլիական, ավստրիական, գերմանական, ֆրանսիական կազմակերպությունները: Առանձին ցուցակներ են եղել տարբեր պետությունների զանազան դրամների մասին և առաջին հերթին՝ թուրքականի: Հաշվի են առնվել բնականաբար մետաղը, դրամը, կշիռը, արժեքը (նաև օտար դրամով):

Չմոռանանք, որ սուլթան Աբդուլմեջիդի տիրակալության առաջին տարիներին Ֆինանս-

ների նախարարության կողմից փորձ արվեց մինչ այդ ոսկե, արծաթե, պղնձե դրամների կողքին տպագրել թղթե դրամներ: 1840թ. առաջին 1, 2, 5, 10, 50 դուրուշանոց և 20 փարանոց «կայիմե»-ները (բանկնոտ) ասպարեզ մտան: Բացի թղթադրամներից տպագրվել են նաև դրամական «փոխանիշներ», որոնք նախատեսված են եղել հայկական, հունական եկեղեցիներում և հրեական սինագոգներում օգտագործելու համար: Բացի օսմաներենից, դրանց վրա հայերեն, հունարեն, ֆրանսերեն, եբրայերեն լեզուներով տպագրված է եղել այն կառույցի անունը, որի համար նախատեսված է եղել: Այսպիսի դրամական «փոխանիշներ» են տպագրվել և օգտագործվել բոլոր եկեղեցիների, սինագոգների համար առանձին-առանձին: Այն իրեն չի արդարացրել, քանզի եկեղեցում մոմի, ողորմության համար մանր փոխանիշներ միշտ չեն գտնվել, իսկ խոշորներն էլ հարմար չեն նկատվել: Նույնպիսի փոխանիշներ և դրոշմանիշներ գործածվել են որպես շոգենավի տոմսեր, կամուրջ անցնելու տոմսեր: Առանձին գործարաններ և արտադրություններ հատուկ իրենց համար տպագրել են նման դրամափոխանիշներ: Հետագայում այս ամենը վերափոխվել է դրոշմաթղթերի, տարբեր գործածության տոմսակների[35]:

Բանկային համակարգի կարևոր գործառնությունների թվում ապահովագրական ասպարեզն ուրույն մաս է կազմել: Եղել են ապահովագրության տեսակներ, գործել են տարբեր երկրների պետական ու մասնավոր գործակալություններ, որոնք ունեցել են իրենց մասնաճյուղերն Օսմանյան կայսրությունում և որպես կանոն՝ կենտրոնական գործակալությունը եղել է Պոլսում: Այս ասպարեզը ևս առանձին օրինական դաշտով է պաշտպանված եղել, ուր կանոնադրական հոդվածները պարզորոշել են Օսմանյան կայսրության օրենքների հետ ապահովագրության հարաբերության դաշտը: Տրվել են բացատրություններ ապահովագրողի և ապահովագրվողի պարտականությունների մասին, նաև՝ լրացուցիչ գործնական խորհուրդներ:

Բանկային համակարգի առաջացման բնագավառում կարևոր իրադարձություններից են դառնում հայ առաջին՝ Օսմանյան առևտրական դրամատան, 1853թ. «Բանկ Օտոման»-ի և «Թուրքիստան»-[36] բանկի հիմնադրումները: Մասնավորապես վերջինիս հիմնադիրներ էին հայերը, հույները:

Ավելի քան 200 տարի Փողերանոցի տնօրինությունը վարել են հայ ոսկերչապետերի գերդաստանները: 19-րդ դարի երկրորդ կեսից նրանք իրենց տեղը զիջեցին եվրոպական տիպի կառույցներին, բանկերին, հաշվեգրքացներին: 1856թ. հաստատված «Օսմանյան բանկը» 1863թ. կայսերական հրովարտակով վերահաստատվել էր որպես «Օսմանյան կայսերական բանկ» կամ՝ «Բանկ Օտոման»: Նրա կենտրոնական գրասենյակը գտնվում էր Ղալաթիայի Վոյվոդա փողոցում: Այն գլխավոր գործակալություններ է ունեցել Լոնդոնում և Փարիզում: Դարեվերջին այս բանկը ղեկավարել են հիմնականում եվրոպացիները, որոնց մի մասը հիմնական բնակություն էր հաստատել Ստամբուլում[37]: Բանկային բնագավառը սկսել է դիտվել որպես երկրի անվտանգության ու տնտեսական զարգացման կարևոր հանգր-

35 Cüneyt Ölçer, *Ufuk Değerli Osmanlı Kâğıt Paraları* , Tarih ve Toplum, Ist., 1985, eyll, s.46-56.

36 Հիմնադիրը՝ Սուլթանի անձնական գանձարանի սեղանավոր **Պողոս բեյ Մըսրլըն** էր, որը բեյի տիտղոս և երեք առանձնաշնորհյալ պատվանշաններ է ստացել Սուլթանից.

37 1904թ. «Բանկ Օսմանի»-ի տնօրեն Պանդելյին, ճարտարապետ պրոֆ. **Լևոն Կյուրքչյանին** Գյումուշյանը պատրաստման պատվիրում է իր համար բնակարան կառուցել: 1916թ. **Պերճ Քերեսթեճյանը** սպասում է իր Օսմանյան բանկի գլխավոր տնօրեն նշանակմանը:





վան: Այս ասպարեզի ամենատարբեր մասնագետներ ժամանակ առ ժամանակ գնահատանքի ցույցերի ու շնորհների են արժանացել սուլթանական կառավարության, նաև անձամբ՝ Սուլթանի կողմից[38]:

Ընդհանրապես Պոլսի համայնքում այս շրջանում կատարվել է նաև ի հաշիվ օտար մասնագետների, օտար աշխատուժի՝ բանկային, ապահովագրական գործը ներկայացնող հարուստ խավից մինչև տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների, ուսուցիչների:

Եվրոպական բանկային համակարգի ներմուծումն Օսմանյան կայսրությունում ընթանում էր այս բնագավառում բազմաթիվ մեծ ու փոքր, սակայն կարևոր նորամուծությունների հաստատմամբ:

Պոլսի առևտրական պալատի (թիջարեթ օդասը) հիմնադիր անդամներ են ընտրվում Մանուկ Ալպանօղլին, Հակոբ Պոյաճյանը, Հովհ.Գյումուշյանը, Բարսեղ Հալաճյանը, Անտոն Հաճյանը:

«Արևելյան տնտեսագիտական միություն հայոցը» կազմավորվում է Պոլսում՝ 90 հոդվածից կազմված կանոնագրով, որի նպատակն էր՝ «Հայոց մտային եւ նիւթական զարգացումը»: Միջոցը՝

«1. Ընկերութիւնն ուղղակի իր ձեռներեցութեամբ գործելով եւ թե համանպատակ ազգային ձեռնարկութեանց գործնական ուղղութիւն տալով՝ իր նպատակին իրացման կաշխատին ընտրանոք:

2. Ազգային առաջադիմութեան նպաստելու տեսակետէ ծագեալ թե զուտ բարեգործական և թե շահադիտական ամեն ձեռնարկութիւնք՝ ընկերութեանս գործառնութեանց շրջանակին մեջ կմտնեն անխտիր»:

1883թ. հունիսին Օսմանյան պետության փոխառության արժեթղթերի համար նախարարների հավաքին որպես պատվիրակ Փարիզով Լոնդոն է մեկնում Ֆինանսների նախարարության թարգմանական բաժնի տնօրեն և արտաքին կապերի պատասխանատու Պետրոս Քերեսթեճյանը: Վերադարձին նա լսումներ է կազմակերպում Արտգործնախարարությունում, համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ:

1885թ. Սուլթանի Անձնական գանձերի նախարար Հակոբ Գազազյանը Թուրքիա ներմուծեց «չեք»-ը դրամի փոխարեն օգտագործելու գործառույթը:

1890թ. Ղալաթիայում «Չոբուրեան Ղ.Փ. Դրամատուն»-ը հայտարարում է Սակարանի ու դրամական գործողությունների, արժեթղթերի վաճառք, գավառից հանձնարարությունների կատարում, արժեթղթերի կարևոր շահերի տեղեկացում, վիճակախաղեր-արժեթղթեր: Այն է՝ այդ տարիների բանկային համակարգի համար ընդունված ծառայությունների լիարժեք մատուցում:

Հայկական բանկերը, կամ բանկերի հայազգի ղեկավարությունը, օտար բանկերի Օսմանյան կայսրությունում ներկայացուցչությունների հայ տնօրենները, որ բառ ամենայնի տիրապետել են գործի բոլոր նրբություններին, դարձել են երկրի ֆինանս-տնտեսական զարգացման առաջամարտիկներն ու երախտավորները:

38 1880թ. «Բանկ Օսմանի» պաշտոնյաներից **Հակոբ փաշա Գազազյանը (1832-1891)**, որ եղել էր Սուլթանի անձնական գանձարանի նախարարը, ***Ülâ-i sâni*** աստիճանի պարգևագրում է ստացել: 1902թ. «Բանկ Օսմանի»-ի դրամաշրջանառության գործերի բաժնի տնօրեն Պերճ Քերեսթեճյանին շնորհվել է 4-րդ աստիճանի ***Osmaniye***:

*հավանի և գոնե մեկ բաժնեգին վճարի անընդհատ»:* Հաջորդ, 1887 թվականից սկսում է հրատարակվել նրանց *«ՏՆՏԵՍ»* պարբերականը:

Առևտրի սենյակներն աստիճանաբար վերափոխվում են՝ Առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության սենյակների, որոնց ղեկավար կազմը երկար ժամանակ հայերից է կազմված եղել: 19-րդ դարում, երբ Եվրոպա-Ամերիկա-Ռուսաստան-Օսմանյան կայսրություն տնտեսական հարաբերությունները զարգացման որոշակի որակ էին ներկայացնում, Պոլսում և նախանգային կենտրոնական քաղաքներում սկսեցին սնկի նման աճել տարբեր օտար գործակալությունների ներկայացուցչությունները: Այդ ներկայացուցչությունների տնօրենների, ներկայացուցիչների մեջ հայերը որոշակի բարձր տոկոս են կազմել: Դրանք եղել են օտարերկրյա ապահովագրական տարբեր տիպի գործակալությունների, բանկերի, ֆիրմաների մասնաճյուղեր: Երկրորդ քայլն արդեն սեփական գործակալությունների ու բանկերի հիմնադրումն էր, որ կապված էր ֆինանսական մեծ միջոցների հետ և հնարավոր էր մի քանի հիմնադիր անդամների միության դեպքում միայն: Զուգահեռ շարունակվել է օտար և խառը հիմնարկների գործունեությունը: Կապիտալիզմի ձևավորման այս շրջանը մի անգամ ևս ապացուցեց առևտրական ասպարեզում հայերի հատուկ հակվածությունը, բազմաթիվ հայոնի անուններ ծնելով տարբեր բնագավառներում:

Օսմանյան կայսրության տարբեր ծայրերում հիմնադրվում են կապիտալիստական չափանիշներով, բնական հանածոները տնօրինող առանձին ու միացյալ ընկերություններ՝ որոշակի ժամանակի համար շահագործման իրավունքներով: Այդ կառույցները, ինչպես և բանկերը բաժնետերեր են սկսում փնտրել, Օսմանյան կայսրություն մտցնելով նաև *«Սեկյուրանի»* (Բորսայի) ինստիտուտը:

Այստեղ հիմնական պաշտոնյաները հայեր էին՝ շնորհիվ իրենց մասնագիտական կրթության, լեզուների իմացության, առևտրական կյանքում ավանդական ջիղ ցուցաբերելու ունակությամբ[45]:

Պոլսում, Օսմանյան կայսրության տարբեր անկյուններում Առևտրական վարչությունների ղեկավարներ են նշանակվում հայ մասնագետներ[46]: Այս բնագավառի պաշտոնյաները վայելում են կառավարության ուշադրությունը և պարբերաբար արժանանում պարգևատրումների, շքանշանների, որով էլ ավելի է կարևորվում նրանց ներկայացրած ասպարեզը[47]: Հայկական միջավայրում կուսակցական նեղ շրջանակների կողմից սկսվում է առանձին հայոնի առևտրական-պաշտոնյաների նկատմամբ չարակամ գործողությունների մի շրջան[48]:

1887թ. Պոլսի Առևտրական պալատի (թիջարեթ օդասը) հիմնադիր անդամներ են ընտր-

45 1906թ. **Գառնիկ Աճառյանը** արտածող և ներմուծող արևմտյան ընկերության ներկայացուցչություն է հիմնում:
46 1906թ. **Գրիգոր Յաքի Մանդիկյանը** նշանակվում է Կավալայի առևտրական վարչության նախագահ: Կավալան, այսօր էլ Հունաստանի ծխախոտագործության կենտրոններից է:
47 1893թ.Սեղանավորների պետ **Սարգիս Քաչչյանը** սեղանավորների ավագանի է նշանակվում:
1894թ. «Զիրաաթ բանկի» վարչության նախագահ **Հովհաննես Նալբանդյանին** շնորհվում է առաջին կարգի *Mecidiye*: 1898թ. Առևտրական սենյակի գլխավոր խորհրդական **Մանուկյան էֆենդիին** 3-րդ աստիճանի *Mecidiye*, իսկ Առևտրական սենյակի առա[ջի]ն քարտուղար, «ԹԻՋԱՐԵԹ ԳԱԶԵԹԵՍԻ»-ի (Առևտրական օրաթերթ) տնօրեն ու գլխավոր խմբագիր Զարեհ Յուսուֆյանին 4-րդ աստիճանի *Mecidiye* է շնորհվում:
48 1894թ. հայոնի բանկիր, կառավարությանը և Պատրիարքին մոտ կանգնած **Սիմոն Մաքսուդը** երկու հնչակյանների կողմից հարձակման է ենթարկվում Ղալաթիայում:





վում Մանուկ Ալլահվերդին, Հակոբ Պոյաճյանը, Հովի.Գյումուշյանը, Բարսեղ Հալաճյանը, Անտոն Հաճյանը:

1908թ. հիմնադրվում է Հայկական արևելյան նոր տնտեսական միությունը: Նախաձեռնող չորս հիմնադիր անդամներից էին փաստաբան Տիրան Յորգանճյանը, ևս 3 գործարարներ:

1908թ. Գարբրճի թաղամասում բացվում է «Հայկական Օսմանյան Առևտրական Անանուն Ընկերության Դրամատուն»ը (Օսմանլը Թիջարէթ Անոնիմ Բանկասը, կամ՝ Բանկ կոմերսիալը): Տնօրենը Թագվոր Սուքիասյանն է եղել: Վարչական խորհրդի անդամները են եղել՝ Արշակ խան Կարագյոզյանը (նախագահ), «Ա. և Մ. Կարագյոզյան առևտրական տան» նախագահ Արսեն Կարագյոզյանը, վաճառական Գառնիկ Սարգիսովը, սեղանավոր Մկրտիչ Մանուկյանը, «Պետրոս Քենաճյան և որդիք» առևտրական տան ներկայացուցիչ Սարգիս Քենաճյանը, «Իմնիօն» ապահովագրական ընկերության Արևելքի մասի տնօրեն Միհրան Կայսերլիյանը: Դրամագլուխը 100 000 ոսկի էր:

Այս դրամատունը կատարում էր՝ առևտրական տոմսերի, մուրհակների, փոխանակագրերի, արժեթղթերի, բեռնագրերի փոխառություններ՝ վարկեր: Գնում և վաճառում էր արժեթղթեր, օտար դրամներ տեղական և օտար հրապարակների վրա: Տալիս էր չեքեր, վարկագրեր, փոխանակագրեր և հեռագրական վճարումի հրամաններ Թուրքիայում և անհնար: Գանձում և զեղչում էր առևտրական տոմսեր, մուրհակներ, փոխանակագրեր, բաժնեթղթեր և կտրոններ: Ընդունում էր դրամական ավանդներ նպաստավոր պայմաններով, ստանձնում էր կալվածական փարձակալությունների պատասխանատվությունը, շենքեր վարձու տալիս, գանձում վարձերը, վարձակալների հետ կապված դժվարությունները կանխում, անհրաժեշտության դեպքում վարձի փոխարեն կանխավճարներ անում: Ստանձնում էր թե՛ տեղական և թե՛ օտար տների, կոմպանիաների ներկայացուցչությունը: Կազմում էր առևտրական ու ճարտարագիտական ընկերություններ և մասնակցում դրանց գործառույթներին: Ներկայացնում էր Մ. Խաչատրյանց և Պ. Շիշյանց Բաքուի քարյուղի արտածման հանրածանոթ Տները: Այն հովանավորել է բազմաթիվ առևտրական ձեռնարկներ:

Առևտուրն Օսմանյան կայսրությունում սկսում է վերանել որակապես: Այն դառնում է պետության գործերից մեկը: Առևտուրը՝ որպես նպաստացուցիչ, հպատակներին միայն բույլատրելի զբաղմունք, դառնում է Օսմանյան կայսրության պետական բյուջեի հատույթներից ու արտաքին քաղաքականության կարևոր գործառույթներից: Տարբեր երկրների հետ առևտրական պայմանագրերի կնքման ժամանակ հաշվի է առնվել հայազգի քաղաքական գործիչների, ֆինանսական ու առևտրական գործերի մեջ մասնագիտացած հայ պաշտոնյաների կարծիքը, որոնք կամ՝ իրենք են կնքել այս պայմանագրերը կառավարության կողմից և կամ՝ մասնակցություն են ունեցել առևտրական պայմանագրերի կազմմանն ու դրանց կնքմանը: Միջպետական առևտրական հարաբերությունների զարգացման, պայմանագրերի կնքման համար պայման էին հանդիսանալու միջազգային որակի ֆինանսական, բանկային ինստիտուտներին, ու եվրոպական հաշվողական մերոդներին զիտակ, միջազգային առևտրական օրենքներն իմացող փաստաբանները: Օրինակ, 1905թ. Թուրք-սերբական առևտրական պայմանագրի ստորագրմանը, ծաքսատան պետ Հասան Ֆեհմի փաշայի գլխավորությամբ, մասնակցում էին կառավարության խորհրդականներ Գաբրիել Նորատունկյանը և Ալլու բեյը:

Հայ մեծահարուստները, սեղանավորներն ու վաճառականները չափազանցված էին ունենալ հաշվակալների, առևտրականների, գործին բանիմաց փաստաբանների կողքին, իրենց փոխարինող սերունդ: Երկրում բացվում են առևտրական դպրոցներ, և դրանցից ոմանց հիմնադիրները հայ երևելիներն էին: Մեծահարուստ բրքահայ վաճառական **Մարութե Իբրահիմյանը** (1865-1920) հիմնադրում է *Ամասիայի Առևտրական վարժարանը*: 1920թ. Մարութե Իբրահիմյանի՝ Բելգրադում գնացքի վրաից մահազդի տեքստը հաստատում է, որ հենց նա է հանդիսացել Ամասիայի Առևտրական դպրոցի հիմնադիրը:

**Այբրփարմալյան Հակոբ** (-1922). Կեսարացի գործարանատեր է եղել, որը հիմնականում զբաղվել է կաշվի վաճառականությամբ:

Հայ վաճառականների մի մասի գործունեությունը դուրս է եկել առևտրական գործերի սահմաններից, այս անգամ՝ քաղաքական, պետական շրջանակներում համագործակցության առումով: **Տեր-Ներսեսյան Խաչատուր խանը (1810-1895)**՝ հայտնի վաճառականը, գործել է նաև Պարսկաստանում, ստացել *խան*-ի տիտղոս: Իր առևտրական գործունեության համար սուլթան Աբդուլմեջիդից ստացել է պատվանշաններ, մի քանի ֆերմաններ, որոնք բազմաթիվ առանձնաշնորհներ էին տալիս նրան: Քաղաքային ղեկավարության ու դատարանի անդամ է եղել, հայտնի ազգային գործիչ:

Երևելի հայ վաճառականները մաս են կազմել Օսմանյան Մեջլիսի ներկայացուցչական խմբերի:

Մի քանի տասնյակ հայ վաճառականներ և ֆաբրիկանտներ զբաղվել են մետաղածուլությամբ, երկաթեղենի ու դրանից պատրաստված խողովակների, գյուղատնտեսական գործիքների արտադրությամբ, վաճառքով: Այս ամենը նրանք միահյուսել են արտասահմանից ներկրված ամենատարբեր շինանյութերի վաճառքի հետ:

Երկաթե հաստոցներ, ճախրով գործող շարժիչներ, ջրաղացներ, երկաթե իրեր, գալվանացված ու ոչ գալվանացված արտասահմանյան մետաղե ապրանքներ, շինանյութեր ու ամեն տեսակի գործիքներ են վաճառել տասնյակից ավել հայ վաճառատները, ինչպես **Հակոբ Էսայանի, Կարապետ Միլոսյանի, Ռուբեն Շրանյանի, Արթին Քեմհարճյանի, Ռուբեն Քեմհարճյանի** վաճառատները: 1890թ. Ղալաթիայում բացված **Պ.Ն.Գազանճյան**՝ երկրագործական նյութերի, գործիքների ամենամեծ վաճառատանը կարելի էր գտնել գյուղատնտեսության մեջ կարևոր գործիքներ, այդ թվում՝ մեղվաբուծության, կարագի, թելպանրի, կաթի ու յուղի մեքենաներ, պայտի եվրոպական մեխեր, վառարաններ, խմիչքներ պատրաստելու գործիքներ... Որոշ շինանյութերի վաճառատների գովազդային տեքստերից հայտնի է դառնում շինարարության ասպարեզ մտած նորությունների, նորաձևությունների մասին: Այսպես, օրինակ, **Օ.Տերունյանի** մեծ վաճառատունը (1890) ամեն տեսակի շինանյութերի, աղյուսի, կոնստրուկցիաների հետ միասին վաճառել է խոռակաձև տարբեր գույների ու որակի մարմար, մոզաիկ սալիկներ, սալիկներ՝ պատերի ու հատակի, խոհանոցի ու լողարանների, պատշգամբների ու պարտեզների համար:

Տեղական ու արտասահմանյան շինանյութերի, վառելանյութի ֆաբրիկաները, գաջի, ցեմենտի, աղյուսի, կղմինդրի գործարաններն ու առանձին վաճառականներ ունեցել են հատուկ ծառայություններ՝ իրենց ապրանքը պատվիրատուներին նավերով և կառքերով փոխադրելու համար:





**Արթին և Տիգրան Խաչենճյան** եղբայրները Օրթաքեոյում ծխնորսական ռոկանների ֆաբրիկա են ունեցել (1902):

Վաճառականական գործունեության այս շրջանում առանձին հմայք է հաղորդել մասնավորապես ֆրանսիական, անգլիական նորաձև ապրանքների ներկրումն ու վաճառքը: Այն նախատեսված էր բնականաբար հարուստ խավի, դիվանագիտական ներկայացուցչությունների և Պոլսում կարևոր պաշտոններ զբաղեցրած օտար մասնագետների համար, որոնք պետք իրենց քաղաքակրթությունից ու նորաձևությունից հեռացած չզգային եվրոպական ու ասիական այս խաչմերուկում: Եվրոպական լավագույն ժամացույցները (գրպանի, պատի, ձեռքի, ոսկյա և այլ շղթաներով), կանացի գլխարկներն ու հագուստները, զարդերը կարելի էր գնել Պոլսում: «Ռոյալ» գրամեքենաներ, «Զինգեր» կարի մեքենաներ, գրասենյակային իրեր, զարդեր, գործիքներ և իհարկե՝ արվեստի հին ու նոր գործեր: Հնավաճառները սկսում են իրենց արժանի տեղը գտնել վաճառականական աշխարհում:

**Պ.Նեվրուզ** վաճառատունը Սուլթան Համամ պողոտայում տղամարդու և կանացի սպիտակեղենի կողքին զբաղվել է նաև հոլանդական ընտիր գարեջրի առևտրով (1892):

**Պոզաճյանները**, որ Երզնկայից Պոլիս էին գաղթել մի քանի դար առաջ, հայտնի են դարձել նրանով, որ պատրաստել են մահմեդականների սիրելի ըմպելին՝ **«պոզա»-ն (կորեկօղին)**: Ալկոհոլային խմիչքները հիմնականում արտադրվել են հայերի, հույների կողմից: Խմիչք պատրաստող Հակոբ Սուքիասյանը ստանում է *Sanayi Madalyası*[49]. Արտասահմանից այս բնագավառին անհրաժեշտ գործիքներ, հաստոցներ ներմուծող վաճառականները որպես կանոն, կառավարության հատուկ հրահանգով ազատվել են մաքսերից:

Ալկոհոլային խմիչքների 3-րդ համաձնաժողովը, որը կայացել է Պոլսում 1892թ. Հովհ. Նորյանի նախագահությամբ, հաստատում է այն փաստը, որ արտաքին և ներքին առևտուրը վերահսկվել է առևտրական սենյակների ու առանձին հանձնաժողովների կողմից: Վերահսկվել է մասնավորապես ալկոհոլային խմիչքների ներքին արտադրությունն ու վաճառքը: Օսմանյան կայսրության ողջ տարածքում ամենատարածված խմիչքներից են եղել խաղողից և անիսոնից պատրաստված օղիները, որոնք հիմնականում արտադրվել է **Սոխիսն, Պողոս Պերպերյանների** կողմից և կոչվել են «Պլեճիկ» և «Օլգան»: 1895թ. **Կոզմոզ Երեցյանը** բացել է ալիրոտի գործարան Ակնի Կամարակապ գյուղում: 1908թ. հայկական «Նեկտար» անունով գարեջուրը շուկա է դուրս գալիս Պոլսում: **Քնար Գալիբյանի** «Չեկիշի բրնա շարաբը» խմիչքը, համապատասխանելով բոլոր արժեհամակարգերին (ստանդարտներին), ներկայացվել է Վիեննայի արդյունաբերական ցուցահանդեսին՝ մասնայական արտադրության համար:

Քյոթահիայում **Չարաքչիչյան եղբայրները** բանձր մրգահյութի պատրաստման և արտահանման ֆիրմա են հիմնում (1909): Չոր մրգերի պատրաստումն ու առևտուրը սկիզբ է առնում Իզմիրում և ընդարձակվում ողջ շրջակա վայրերում:

Իհարկե, այս վաճառականական մրճույրտի համար առաջին անհրաժեշտության առարկաներից են եղել արկղերը: Պոլսահայ Տիգրան Մոսկոֆյանը (-1926) անվանի արկղարար (լուցանի պաշի) և արկղագործների ավագ է եղել: Տակառագործներն ու արկղագործները բի-

[49] «Boza» անունով կաթնագույն ոչ ալկոհոլային սեզոնային խմիչքը այսօր լայնորեն վաճառվում է, որպես 1876թ.-ից սկսյալ Հոջա Իբրահիմ և Սադըք եղբայրների արտադրանք: Պատրաստվում է աշնանը զարի բերքի ժամանակ: Պարունակում է զարու փոշի, ջուր, շաքար: Խմում են դարչինի հետ: Մեկ լիտրանոց խմիչքն արժի չորս 4$:

բեղյա և մետաղյա այլ տուփեր ու ամաններ են արտադրել հայկական գործարաններում:

1893թ. **Յավրույանը և Խազուլյանը** թիթեղյա տուփերի մեծ գործարան են բացել Բահչե-քափըյում:

1895թ. սկսել է գործել **Արմենակ Ասլանյանի** «Կարի օրինակելի ֆաբրիկան» Շիշլիյում, որը կառավարական բժիշկների կողմից երաշխավորված է եղել և հիվանդների ու երեխաների համար պատվերով կար է արտադրել:

1911թ. սկսում է գործել **Զ.Ճնորհքյանի** կանացի հագուստի ու արդուզարդի, պերճանքների խանութը: 1870թ. ֆրանսիական կոշիկների վաճառատուն է բացվում Մահմուդ Փաշայում, որը հիմնել էր 25 տարվա հայտնի կոշկակար **Դամիանոս Փափազյանը**: Գործում էր **Հերում Սերյան եղբայրների** փարիզյան ապրանքների «Նորաձևության մեծ վաճառատուն»-ը, որը մասնաճյուղեր ուներ Վառնայում, Ռուսճուգում, Սոֆիայում, Փարիզում: **Զիվան Դավուդյանը** եվրոպական ու թրքական շաքարեղենի մեծ վաճառատուն է բացել Գումգափու թաղում: Լոնդոնյան կամ փարիզյան հայտնի վաճառատները նույն անվանումներով վաճառասրահներ են բացել Պոլսում: 1908թ. հիմնադրվել է «Ա լա վիլե դը Լոնդր» անգլիական ապրանքների **Մնահինյան** վաճառատունը Պերայում: 1920թ. լոնդոնյան «Կարմիր արաղաղ» վաճառատունը Պոլսի Պերա թաղամասում բացում է իր մասնաճյուղը ի դեմս **Սարեն Յաղուբյանի**: 1918թ. հայտնի զինավաճառ **Մկրտիչ Ֆրենկյանը** սկսում է վաճառել ֆրանսիական հայտնի «Կուրվուազիե» կոնյակը, համբավավոր հատուկ գիներ: Նա Ֆրանսիայից ներկրում էր կենցաղում արդեն ընդունելություն գտած լվացքի օճառի «Սապոնիրե» հայտնի ու անվնաս փոշին, որ արտադրվում էր ֆրանսիական Շերանտոնում, ինչպես նաև՝ «Քատ», «Լիզոլ» հակաբորբոքային հեղուկները և այլն: Այնպիսի տպավորություն էր, որ Եվրոպայում դեռ նորույթ համարվող շատ ապրանքներ Օսմանյան կայսրությունում արդեն խոլ սկսվում էին վաճառվել, շոյելով բազմահազար եվրոպացի հաճախորդների ինքնասիրությունը: 1885թ. սկսում է գործել **«Գ.Սարգիսօֆ և ընկ.»** ժամացույցների, զոհարեղենների, ժամացույցների շղթաների համբահայտ վաճառատունը, որն իր ապրանքանիշն ուներ:

**Կարապետ Նորատունկյան** վաճառատունն առաջարկել է ֆեսի, խաղաթղթերի, տղամարդու էլիտար փողկապների, արդուզարդի ապրանքների, շքեղ գավազանների, կրկնակոշիկների, հովանոցների լայն տեսականի: Խանութը գտնվել է Հաջի Բեքիր աղայի խանութի դիմաց: «Վենիս» վաճառատունը Պերայում վերջին նորաձևության ֆրանսիական, անգլիական և իտալական հագուստներ, մուշտակներ և ապրանքներ է միայն վաճառել (1911): «Էրտալ» խանութը մասնագիտացված է եղել սոսկ կանացի ապրանքների համար, որը նույնպես նորույթ էր: Բերայում վաճառվել են կանացի և տղամարդու զարդեր, կորսետներ:

1911թ. **Երվանդ Միրիճանյանը** բացել է «Եվրոպական հագուստ» կարի արհեստանոց վաճառատունը: Ռեդինգոտներ, ֆրակներ, սմոկինգներ գնելու կամ պատվիրելու համար պետք չէր Փարիզ հասնել: Հայտնի նորաձևության արհեստանոց-վաճառատները (Երվանդ Միրիճանյանի, Հակոբ Թահչարուրյանի և շատ ուրիշների) ապահովել են հսկա մի մայրաքաղաքի ու մեծ քաղաքների երևելի խավին, ծառայողներին[50]: Հայ վաճառականները, եվրոպական օրինակով սկսում են զբաղվել առանձին հանդիսությունների կազմակերպմամբ ու անհրաժեշտ ողջ ապրանքների մատակարարմամբ: Սկսում են իրար հետ մրցել հարսանեկան արտա-

50 Այնուամենայնիվ, երևելի հայերից ոմանք, ինչպես օրինակ Գրիգոր Զոհրապը, իրենց և ընտանիքի հագուստները պատվիրել են միայն Փարիզում և Լոնդոնում:





րողությունների համար ծաղիկներ, մոմեր, հագուստներ ու այլ անհրաժեշտ և մոդայիկ իրեր առաջարկող վաճառատները: Կանացի վարսահարդարների սրահներն իրենց հերթին տուրք տալով ժամանակի պահանջներին, Եվրոպայից ներմուծել են կեղծամներ՝ հարսանիքների ու պարահանդեսների առթիվ: Չայնարկիչների (գրամոֆոնների) ու ձայնապնակների վաճառատները առատորեն առաջարկել են ձայնապնակներ և ժամանակի լավագույն «շնիկով» գրամոֆոնները, որոնցից այսօր շատ կարելի է գտնել Պոլսի հնավաճառների մոտ:

**Չողուրյան-Թարթայանների** կողմից Պերայի Թունելի հրապարակում բացված կերպասեղենի «Մինեռվա» ապրանքանիշով կարի արհեստանոցի արտադրած հագուստները, ինչպես նաև մարմնամարզիկների հագուստները 1904-05թթ. Մարսելի միջազգային ցուցահանդեսում առաջին աստիճանի ոսկե մեդալ են շահում:

«Վ.Եավրույան և Խազուլյան» առևտրական տունը ոչ միայն Արևելքի՝ չինական, ճապոնական, հնդկական լավագույն թեյի ամենահին ու մեծ վաճառատունն էր, այլև վաճառում էր ֆրանսիական ու անգլիական ամենավերջին նորաձևության բրդե կերպասներ ու դրանցից կարված կոստյումներ, միաժամանակ լոնդոնյան ապահովագրական ընկերություններից մեկի ներկայացուցիչն էր: Նրանք մասնակցում էին միջազգային ցուցահանդեսների, վերադառնում պատվո վկայականներով, ոսկե մեդալներով, ունեին սեփական ապրանքանիշեր (Խազուլյան թեյի ապրանքանիշը *փիղն* էր):

Որոշ առևտրական տներ հանդես են եկել որպես պետական հաստատությունների մատակարարներ, որը մեծապես ազդել է նրանց հեղինակության բարձրացման համար:

1888 թվականից **Կնոպյան** վաճառատունն իր «Խարխիս» ապրանքանիշով Թուրքիայում կառավարական պաշտոնատների, երկաթուղային ընկերությունների, ջրաղացների, ծխախոտի ֆաբրիկաների, ջրի, գազի և շոգենավային ընկերությունների միակ հայթայթիչ-մատակարարն է եղել:

Ապրանքային, վաճառականական ընկերությունները գործել են եվրոպական լավագույն ավանդույթներով: Նրանք ներկայացուցչություններ են ունեցել տարբեր վայրերում, պատվերներ են ընդունել գավառներից, արտասահմանից, վաճառել ապրանքների մեծ տեսականի, առաջարկել աշխատանքներ, ապրանքներ, զբաղվել մեծածախ ու փոքրածախ առևտրով: Սովորաբար բոլոր այս ծառայություններն արտահայտվել են նրանց բազմալեզու գովազդներում, ուր, բացի հասցեներից, սկսել են տեղ գտնել հեռախոսային համարները, ինչպես, օրինակ, Եմի ջամիյում գտնվող **Գրիգոր Մազլումյանի** հայկական մեծ վաճառատունը 1868թ. առաջարկում էր ոսկեղեն, ադամանդեղեն, դրամարկղներ (սեյֆեր), անգլիական հեծանիվներ, «Ռեքրա», «Լոնժին» ժամացույցներ և այլ ապրանքներ ներկայացնող իր գովազդում առաջին անգամ տվել է նաև հեռախոսի համարը՝ 1038: 1862թ. **Հ.Գ.Փափազյանի** մեծածախ զոհարեղենի, ժամացույցների մեծածախ վաճառքի կենտրոն է եղել Ստամբուլի Վեզիր խանում: Հաջողության գրավականներից էին արտասահմանյան ցուցահանդեսներում նրանց ստացած ոսկե մեդալներն ու դիպլոմները, որը գովազդներում ներկայացվում էր: Առաջին անվադողերն ու մեքենաների վաճառատները, հագեցված «Պիրելլի» անվադողերով, եղել են հայ վաճառականների հպարտության առարկան 20-րդ դարի սկզբին:

Մեծ տարածում են ունեցել կահույքագործական ֆաբրիկաներն ու վաճառատները, որոնք միաժամանակ զբաղվել են հարակից՝ պաստառապատման, վերանորոգման, տեղադրման

աշխատանքներով ևս: Օրինակ, 1866թ. Շիշլիի «Մեզոն Նաղյան» ֆաբրիկան առաջարկել է «ամեն տեսակ կահույք» (հյուրասենյակներ, ննջարաններ, աշխատասենյակներ աղմինիստրացիայի համար, վարագույրների կորնիզներ և պաստառապատում, տեղադրում, գորգեր, ջահեր, ապակեղեն, սենյակի ժամացույցներ և այլն):

1870թ. **«Հ.և Գ. Մուրադյան»** ձանուֆակտուրայի մեծաքանակ և մանրածախ ընկերությունը առևտուր էր անում Իրանի, Բուլղարիայի, Մերձավոր Արևելքի քաղաքների հետ: Առևտուրը կատարվել է հիմնականում Մանչեստրից:

Բուրսան, ավելի քան մյուս քաղաքներն ու շրջանները, դառնում է ոչ միայն շերամապտուծության, այլև բամբակի, հում մետաքսի մշակման ֆաբրիկաների կենտրոն: 1860թ. Բուրսայում **Տիգրան Գյուլյանի** և **Օննիկ** Էֆենդիի կողմից հիմնադրվել է մետաքսի առաջին գործարաններից մեկը: Բուրսայում նույնատիպ մետաքսի ֆաբրիկա են հիմնել **Հովսեփ Բզըջյանը և Մանուկ Բալաբանյանը** (1877թ.): Բամբակի ֆաբրիկաներ են հիմնել **Ռաֆֆի Էմիրզյանը և Կարապետ Դերվիշյանը**:

1864թ. **Միրտիչ Կայսերլիյանը** Բիգա սանջաքի Գեյիքլի գյուղում հիմնում է բամբակի՝ մշակման գործարան: 1869թ. Խարբերդում բամբակի ու մետաքսի ֆաբրիկա է հիմնել արաբկիրցի **Գրիգոր Ֆաբրիկատորյանը**: Արաբկիր-Մեզիրեյում Գրիգոր Ֆաբրիկատորյանը բացում է բամբակի ու մետաքսի բարձր որակի ֆաբրիկա, մասնակցում Լիոնի միջազգային ցուցահանդեսին և Առաջին մրցանակ ստանում: Ֆաբրիկատորյան եղբայրները եղել են ամենաերևելի ու հաջողակ գործարարներից:

Խարբերդում գործել է նաև **Խաչադուր Քյուրքճյանի** մետաքսի շերամաբուծական ֆաբրիկան: 1883թ. Խարբերդում հիմնադրված Գր. Քյուրքճյանի մետաքսի գործարանը, արտասահմանից բերված գործելու մեքենաների շնորհիվ ընդարձակում է իր արտադրությունը: Գյուրունում **Սարգիս Մինասյանը** մետաքսի առևտրական տուն է հիմնում:

Հայ գործարարները չեն կենտրոնացնում իրենց արտադրությունը միայն մայրաքաղաքում: Նրանք փորձում են զարկ տալ արդյունաբերությանն ու առևտրին նաև տարբեր հայաբնակ նահանգներում: 1876թ. Կեսարիայում Սարգիս Հեքիմյանը հիմնում է **յուղեու** ֆաբրիկա, որը 1878թ. հրդեհվում է: 1881թ. Օննիկ Չելեպիի կողմից Սիվրիհիսարում ալյուրի ֆաբրիկա է բացվել: Եղիա Շահբազ Մահդումյանները Այնթյուփում աղյուսի ֆաբրիկա են հիմնել:

Թուրքիայի տնտեսության համար կարևոր են եղել գորգերի, կարպետների վաճառականները, որոնց հաջողություններից է կախված եղել այն մի քանի բնագավառների զարգացումը, որոնք գործագործության մաս են կազմել: Նույն վաճառականները սովորաբար զբաղվել են և՛ բուրդական, և՛ պարսկական արտադրանքի վաճառքով: 1901թ. քիլիմի (կարպետի) առևտրական Միսակ Մարտինյանին շնորհվել է 4-րդ աստիճանի ***Osmaniye***:

**Կույումճյան Հովհաննես**, 19-րդ դարի հայտնի վաճառական էր, բանկիր:

**Թոփալյան Հայկազունը** (1864-)՝ վաճառական էր, զբաղվել է Թուրքիայի, պարսկական և հնդկական գորգերի վաճառականությամբ, 1891թ. Չիկագոյի ցուցահանդեսում եղել է Իրանի կայսերական պատվիրակն ու ընդհանուր տնօրենը: Պարգևատրվել է պարսկական կառավարության ***Şir-ü Hurşid*** և այլ պատվանշաններով, Թուրքական կառավարությունից ստացել է ***Mecidiye***, Վենետիկայից՝ ***Post del Lizivedor***: ԱՄՆ նախագահ Ռուզվելտին է նվիրել 50 հազար $ արժեքի մետաքսահյուս, մարգարտահյուս պարսկական 6,5մx4մ մեծությամբ աշխարհում եղած ամենաչքնաղ գորգերից մեկը, իսկ ավելի ուշ՝ նմանատիպ գորգ է նվիրել Չիկագոյի թանգարանին, ունեցել է մարմարե շքեղ պալատ Նյու-Յորքի մոտ, որ վարել է պարսկական հյուպատոսի պաշտոնը, եղել Մորգանի մտերիմ բարեկամը:





**Մկրտիչ Տոնէլյան** (Տոնելյան,-1914) երևելի վաճառականը երկու անգամ ընտրվել է Օսմանյան պառլամենտի դեպուտատ: Իր առևտրական գործունեության համար սուլթան Մեջիդը նրան շնորհել է բազմաթիվ առանձնաշնորհներ ստանալու մասին ֆերմաններ: Անդամ է եղել քաղաքի ղեկավարության ու դատարանի: Ստացել է պատվանշաններ: Հայտնի ազգային գործիչ է եղել:

Թուրքական արտաքին քաղաքականության, արտաքին առևտրի պայմանագրերի, եվրոպական պետությունների կողմից տրված վարկերի ու դրանց վճարման ընթացքի մասին լավագույն աղբյուրներից են ռուսական դիվանագիտական ծառայությունների մանրամասն զեկուցագրերը: Ընդհանրապես, օտար երկրների դիվանագիտական անձնակազմերի զեկուցագրերն իրենցից ներկայացնում են այս շրջանում Օսմանյան կայսրության ու եվրոպական երկրների միջև պետական մակարդակով համառոտ, բացահայտ խարդավանքների արձանագրումներ:

1909թ. Բաքվի հայ նավթարդյունաբերողների առաջին կարգի նավի ներմուծումը սկսվում է Հայկական բանկի միջնորդությամբ: Բաքվեցի հայ գործարարները մուտք են գործում Պոլիս, համատեղ ձեռնարկություններ ստեղծում: Բաքվեցի Հովհաննես Ծաղչիբեկյանը Օրթաքեոյում ուներ ամեն տեսակի մրգերի ու բանջարեղենների պահածոյի ֆաբրիկա: Այս երկուսի վաճառքի ընդհանուր ներկայացուցչությունը՝ Ս.Արապյանի և Բ.Գալխայանի կողմից հիմնվում է Սիրքեճիյում, կրկին Հայկական բանկի օժանդակությամբ:

1910թ. սեպտեմբերին առևտրի ու բանկային գործի հայտնի հայ գիտակներ, առևտրականներ, վաճառականներ Արթին Ասլանյանը, Հերում Սերյանը, Արսեն Արսենյանը, բանկիրներ Կարապետ Թահչարարունյանը և Մկրտիչ Մանուկյանը տարբեր ապրանքների ներմուծման ու արտածման համար հիմնադրում են *«Օսմանյան առևտրական ընկերություն»*: Նույն տարին Քարթոն Օղլիում «Օսմանյան առևտրական միությունը» կից բացում են «Հայկական անոնիմ առևտրական միություն»: Հայկական առևտրական անանուն ընկերություններ են բացվում կանոնադրությունները հրատարակելուց հետո, Պոլսում ու մեծ քաղաքներում, երկրի տարբեր մասերում[51]:

1910թ. «Բանկ Հոնգրուայի» և «Բանկ դը Բրյուսելի» կողմից 24 հազար բաժնեմասով և 12 մլն. շվեյցարական ֆրանկով հիմնադրվում է «Օսմանյան անանուն էլեկտրական ընկերությունը»: Միաժամանակ, 1910թ. Տրամվայի ընկերության վագոնները էլեկտրականությամբ աշխատեցնելու համար համաձայնագիր ու պայմանագիր է ստորագրվում:

1912թ. կայսերական հրովարտակով հիմնված «Շիրակ» Օսմանյան անանուն կոոպերատիվ ընկերությունը 300 հազ. օսմանյան ոսկի դրամագլխով, իր տպագրված մեկ բաժնեթղթի համար պահանջում էր 1 օսմ. ոսկի: Կենտրոնատեղին՝ Պոլիսն էր, վարիչը՝ Կ.Խանճյանը:

1919թ. Պոլսում Հայ ֆինանսական հանձնաժողովի Կենտրոնական խորհուրդ է հիմնադրվում: 1922, 1931-33թթ. Պոլսում հրատարակվել է առևտրական, տնտեսական, ֆինանսական *«Վաստակ»* շաբաթաթերթը (8-16 էջ) Արտաշես Գալփակճյանի կողմից:

51 1913թ. Արամ Հալաճյանն և ուրիշներ Էրզրումում Նորին հիմնադրում են *Անկախական, Արդյունաբերական ու ֆինանսական* օսմանյան անանուն ընկերությունները:

վարժարաններ, եղել Ազգային գերագույն ժողովների անդամ 1847-53թթ.: Վենետիկի Մխիթարյաններին մեծ նվերներ է տվել, իր միջոցներով գրքեր, քարտեզներ տպագրել: Թողել է անտիպ գործեր: Նրա ժառանգները հիմնադրել են Տատյան վարժարանը 1866թ.: Նրա Ներսես որդին, որ հայերեն ու ֆրանսերեն գործեր է թողել, վախճանվել է 1872թ.:



Պողոս Տատյան

**Պողոս բեյ Տատյան (1800-1863).** Սիմոն ամիրայի երկրորդ զավակն էր, որ իր Հովհաննես եղբոր նման եղել է ժամանակի զարգացած մարդկանցից մեկը, կատարել կարևոր գործեր: 1826թ., երբ Պոլսի վառոդարանը հանձնվեց Սիմոն ամիրային, նրա կողմից իրեն փոխարինող նշանակվեց զավակը՝ Պողոս բեյը, որն իր հոր մահվանից հետո վառոդապետ եղավ 1832թ., Սուլթան Մահմուդի կողմից անվանվելով Ընդհանուր տեսուչ Կայսրության վառոդարաններին: Նրա բարեկարգած վառոդը մեծ ծառայություն ունեցավ Ղրիմի պատերազմի ժամանակ, Դանուբի ափերին տեղի ունեցած մարտերի ժամանակ: Ընորհակալ Սուլթան Աբդուլ Մեջիդը նրան Առաջին կարգի պաշտոնատար անվանեց, 1856թ. տալով բեյի տիտղոս և արժանացրել է «Մեջ»-ի աստիճանի: 1846թ. ապրիլի 4-ին Աբդուլմեջիդ Սուլթանը այցելելով Այ Ստեֆանո (Եշիլքեոյ) գյուղը, վատ եղանակի, անձրևոտ լինելու պատճառով 4 օր հյուրընկալվում է Պողոս Տատյանի տանը: Սուլթանը հաճախ էր այցելում Տատյանների տուն: Հատուկ նրա համար նախատեսված կար լվացվելու արծաթե սափոր, անհրաժեշտ ամեն ինչ[48]: Գումգափըի դպրոցից բերված 20 երեխաների երգը հանույթ է պատճառում Սուլթանին և նրանց ուսուցիչներին 500 և ամեն մի դպրոցականի 200 ղուրշ է նվիրում: Երեք անգամ Եվրոպա է գործուղվել, հանձնարարված գործը հրաշալի կատարել: 1855թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսում մասնակցել է Նապոլեոն Գ-ի պատվո ճաշկերույթին, ներկայացվել Կայսերը: Ազգային բարերարության առումով առատաձեռնությամբ արժանիորեն շարունակել է ընտանեկան ավանդույթները, մեծ գործեր ու նաև շինություններ կատարելով ազգի համար: Հաշտարար դեր է խաղացել Հռոմի պապի և Պոլսո Պատրիարքարանի բարդ հարաբերությունների միջև: Նախագահել է Հայոց Ազգային Խորհրդարանը: Նրա նպատակն էր ցույց տալ երկու եկեղեցիների միաբանությունը և ամեն ինչ անել ազգը միավորելու, այդ ճեղքվածքը վտանգավոր ու ցավագին չթողնելու, փոխադարձ հակակրությունները մեղմացնելու համար: Մահացավ Փարիզում, ուր բուժման էր գնացել: Փարիզում (առարկական բահանայի չեն հասցրել գտնել) կաթոլիկ քահանայի խոստովանությունից հետո է մահացել: Այս պատահական հանգամանքը չահարկվել է հայ եկեղեցու ու հասունյանականների, կաթոլիկների պայքարում, իբրև թե նա որպես կաթոլիկ է մահացել: Մեծ ծառայություններ է մատուցել հայ համայնքին, Կայսրության 5 մյուս ազգերին ևս, բանիցս փրկարար դեր խաղալով ազգամիջյան հարաբերություններում: Նրա

48 Սուլթանի ջերմ վերաբերմունքը Տատյան ամիրայական գերդաստանի հետ արդյո՞ք կապ ունի հայրենու, ապացույց Պերբենիյալ Վալիդե Սուլթանի անտառության փաստի հետ, որի արդյունքում ծնվել է արյունապես Աբդուլ Համիդ Բ սուլթանը: Պերբենիյալ Վալիդե Սուլթանն իր սուլթան ամուսնու հետ միասին հայերի նկատմամբ հատուկ բարեհաճություններով է աչքի ընկել: Հայտնի են 1868թ. Սամաթիայի և Պերայի հայ կաթոլիկ աղքատ աղջիկների վարժարաններին հացի ու մսի մթերաբաժինների իրական ճառականարարման միջնորդությունների մասին հատուկ ֆերմանները:







Կառավարիչ Առաքել Տատյանի դուստր (Իշխանուհի Պերիքա) ամուսինը՝ Յակուբ Խանի որդին, Մեջիդ Խանը

բաղտմը բազմամարդ ու բազմազգ է եղել, որպես եզակի ու հաշտարար, բարեգործ անձի: Թաղումը կատարվել է Ղալաթիայի եկեղեցում, ապա փոխադրվել Հայոց Պատրիարքական եկեղեցի, ուր և ամփոփվել է իր դին: Նմանապես մասնակցել է Պատրիարքարանի, քաղաքական կյանքին: Եղել Ազգային Ս.Փրկիչ հիվանդանոցի խնամատար-հոգաբարձուն 1844-48թթ.: Վերակառուցել է եկեղեցիներ (Եշիլքեոյի Ս.Ստեփանոս, Զեյթինբուռնի Ս.Հակոբ), հիմնադրել դպրոցներ, խոշոր գումարներ նվիրաբերել դպրոցներին:

Նրա թոռը՝ Գևորգ Ալյանյանը (1849-1922, եղել է Երվանդ Օտյանի մորեղբայրը) վիպական աստիճանով ճարտարապետ է եղել, փարիզյան կրթությամբ: Նա Հայդար փաշա-Իզմիթ գծի առաջին ճարտարապետն է եղել, 1892-1902թթ. դրա օգնական անօրենը և 1909թ. տնօրեն՝ կամուրջների ու խճուղիների շինարարության: Նրա ղեկավարության տակ են եղել հանրային շատ շինություններ, երկաթուղային շինարարություններ, Սկյուտարի ջրաբաշխությունը, Սկյանիկի ու Հայդար փաշայի նավահանգիստների կառուցումը և շատ այլ պետական նշանակության կառույցներ: Գրել է աշխարհագրության, բնագիտության շուրջ գրքեր, որոնք որպես դասագրքեր են ծառայել հայկական դպրոցներում: Մեր ժողովրդը ֆրանսիացիներին ծանոթացնելու համար հրատարակել է ֆրանսերենով 1909թ. հայ ժողովրդի պատմության մասին մեծ ուսումնասիրություն: Եղել է Ազգային երեսփոխան, Ուսումնական, Տնտեսական խորհուրդների ատենապետ, Պատրիարքարանի Քաղաքական ժողովի անդամ, 1911թ. ատենապետ Ազգային Վարչության, Միացյալ Ընկերութեանց Գործադիր Ժողովի (1880թ.), նախագահ Հայկական Բանկային վարչական խորհրդի, որը 1914թ. անժամանակ վախճան ունեցավ ու չկարողացավ վերականգնվել:



Իշխանուհի Պերիքա

**Տատյան Առաքել բեյ (1820-1886).** Հովհաննեսի որդին է՝ վառոդապետ: Բարձրագույն կրթություն է ստացել Վիեննայում, Փարիզում, Լոնդոնում: Ազատլի արքունի վառոդարանի վառոդապետ: 1843թ. վերադարձել է Պոլիս: Տատյանների առհմի վառոդապետության տիտղոսը կրող վերջին անձն է: Անդամակցել է Պատրիարքարանի Ազգային ժողովին և նրա կողմից պատգամավոր եղել:

**Տատյան Արթին փաշա (1830-1901**). Հովհաննեսի երրորդ որդին է՝ վեզիրության աստիճանի հասած դիվանագետ: Թոռ անունը՝ Հարություն Գարեգին: Բարձրագույն կրթությունը ստացել է Փարիզի Սենտ Բարբ (*Saint Barb*) և Լուի լը Գրան (*Louis le Grand*) քոլեջներում, ապա ավարտել Սորբոնի դիվանագիտության բակալորիան: 1846թ. վերադարձել է Պոլիս: Աշխատել է Արտգործնախարարության Կապի վարչությունում որպես ֆրանսերենի մասնագետ: 1851թ. պրուսական կայսեր կողմից արժանացել է ***Couronne de Preusse*** շքանշանի: 1859թ. նշանակվել է ծառայելու Բ.Դռան Թարգմանական հատուկ գրասենյակում:



Հարություն փաշա Տատյան

Դիվանագիտական առաքելությամբ մեկնել է Օդեսա, Փարիզում (1860թ.) դեսպանատան առաջին քարտուղար եղել երկու տարի, ապա մեկնել է Իսպանիա՝ դիվանագիտական առաքելությամբ: 1865թ. վերադարձել պաշտոնավարելու Արտգործնախարարության Կապի վարչությունում: 1866թ. Պետական Խորհրդի Առաջին ատենանի օգնական, 1867թ.՝ Իսկական անդամ ընտրվել:

1869թ. Անտառների նախարարությանն է անցնել: 1870թ. Ֆինանսների նախարարության խորհրդական է եղել ու ստացել *Ulây-ı sâli* Ա աստիճան: 1871թ. Անտառների և Ընդերքի վարչությունում ընդհանուր քննիչ տնօրեն դարձել:

Թանզիմաթի հռչակումով Օսմանյան կայսրությունն իր բոլոր գործողություններում, որոշումներում որպես հենակետ էր ունենում եվրոպական, մասնավորապես ֆրանսիական օրինակը: Փարիզի վարչատնտեսական բաժանման օրինակով Պոլիսն էլ բաժանվեց քաղաքամասերի: Իր կարևորությամբ առաջինը հանդիսացող Բեյօղլու-Ղալաթիա քաղամասը կոչվեց վեցերորդ՝ նմանակելով Փարիզի Քաղաքապետարանի, ամենակառավարյալ մասի 6-րդ քաղամասը հանդիսանալու օրինակին: Տատյան Արթին փաշան այդ 6-րդ քաղամասի նախագահությունը ստանձնեց 1872թ., դառնալով այս կարևոր հաստատության 8-րդ նախագահը: 1874թ. Ռումելի Երկաթուղային գծի վերահսկողութական մարմնի անդամ է դառնում, բարձրանում *Bala*-ի աստիճանի: Վայելել է Աբդուլ Համիդ Բ սուլթանի սերն ու վստահությունը: 1875թ. Աբդուլ Համիդ Բ սուլթանը հրավիրվում է նրան որպես Արտգործնախարարության խորհրդական: Պետական ամենակարևոր բանակցություններում հանդես է եկել որպես առաջին դեմք, դրանց կազմակերպիչ[49]: 1875թ. ավստրիական Ֆրանց Իոսիֆ կայսեր կողմից պարգևատրվել առաջին աստիճանի *Couronne de Fer* շքանշանով: 1881թ. հունական սահմանները կարգավորելու արտակարգ պատասխանատվությամբ է օժտվում: 1887թ. ***վեզիրի*** աստիճան է ստանում: 1888թ. Արտգործնախարարության կողմից Բուլղարիայում ներկայացուցիչ է նշանակվում: Արտգործնախարարության, ապա Բ.Դռան բոլոր կարևոր գրությունները, որոշումները նրա ձեռքի տակով էին անցնում, որոշների կազմողն ու հեղինակն է հանդիսանում: 1897թ. Պետական խորհուրդ է մտցվում, Փաշայության տիտղոսի ու բազմաթիվ շքանշանների արժանանում: Իրանի շահի կողմից 2 –րդ աստիճանի *Şir-ü Hurşid* շքանշանի է արժանացել:

**Տատյան Ներսես Խոսրով բեյ (1825-1872).** Հովհաննեսի երկրորդ որդին է: Բացառիկ տաղանդի տեր ինժեներ և մեխանիկ: Հոր հետ ճանապարհորդել է Եվրոպայում: Սովորել է Անգլիայում, Մանչեստրի մեքենայական ինժեներության ինստիտուտում: Բարձրագույն ինժեների դիպլոմով վերադարձել է և աշխատել Զեյթինբուռնի մետաղաձուլարանում որպես տնօրեն: Գրել է մեխանիկայի մասին գրքեր: Որոշ կարևոր կիրառելի գյուտերի հեղինակ է եղել: Գրել է «Հրահանգ շերամապահության կամ շերամներին սնուցելու կերպը» հայերեն և հայատառ թուրքերեն գիրքը (1871թ.): Թարգմանել է «Նոր Օրենսդի բանբակի մշակությունը» (Փարիզ, 1859):

**Տատյան Սիմոն բեյ (1847-1906).** Ներսես Բեյ Տատյանի ավագ որդին է: Կրթությունը ստացել է Ֆրանսիայում: Ավարտել է նաև «Հարրիյե»-ն, ստացել հարյուրապետի զինվորական աստիճան: 1890-ական թթ. Իզմիրում երկաթուղիների ֆրանսիական գործակալության կոմիսեր է եղել: 1892թ. մինչև կյանքի վերջը Հանրօգուտ աշխատանքների նախարարության ինժեներ է եղել: Բազմաթիվ պետական պարգևներ է ստացել:

**Տատյան Թովմաս (1802-1828).** Սիմոն Ամիրա Տատյանի երկրորդ որդին է: Թարգմանիչ և ցուցակահար: Ֆրանսերենից թարգմանել է զինագործության վերաբերյալ գրքեր: Զոհվել է Ազատլըի վառոդարանում տեղի ունեցած պայթյունից:

**Տատյան Գրիգոր Միհրան բեյ (1832-1882).** Հովհաննեսի չորրորդ որդին է: Եղել է Հովսեփ Վարդան փաշայի աշակերտը: Փարիզի Սամուել-Մուրադյան վարժարանում է սովորել, կատարելագործվել Լոնդոնում, Մանչեստրում, 1848թ. վերադարձել է, Ազատլըի վառոդարանում աշխատել: 1849թ. «***Nişan-ı Iftihar***» է ստացել, մասնակցել 1853-55թթ. Ղրիմի պատերազմին, հոր մահից հետո ժառանգել վառոդապետի պաշտոնը, մինչև արքունի վառոդապետի աստիճանի է բարձրացել: Աբդուլմեջիդ սուլթանից ստացել է սուր (Քլըճ) և բարձրագույն աստիճանի *Mecidiye*:



Գրիգոր Միհրան Տատյան

**Տատյան Միքայել (1844-1911)** Եվրոպայում հայտնի հեղինակ է եղել, լրագրող: Պողոս Տատյանի որդին: Կրթությունը ստացել է նախ Փարիզի Հայկազյան վարժարանում, ապա Սենտ Բարբ, Լուի լը Գրան (1864թ.) քոլեջներում: Պոլիս է եկել 1867թ., շուտով վերադարձել Փարիզ և 1867թ. սկսել է կանոնավոր հրատարակել «Revue des deux mondes» ամսագիրը, ապա «Droit des Nations» ֆրանսերեն գիրքը, որը Մանուել Ոսկանյանը թարգմանել է հայերեն, տպագրել Տիվիրճյան տպարանում: Փարիզում 1867թ. հրատարակել է նաև «La Société Arménien contemporain» գործը: Որպես հեղինակ գրվել է՝ T. Le Prince Mec. B.Dadian.

**Տատյան Պողոս Բեյ (գնդապետ, 1862-1934)**. Վառոդապետ Գրիգոր Տատյանի ավագ որդին է: Սովորել է զինվորական վարժարանում, Բայրութի դիվանագիտական դպրոցում: Հայտնի անասնաբույժ: Թուրքական բանակում է ծառայել, եղել երկրի տարբեր գավառներում, որպես փորձված անասնաբույժ հանդիսացել: Մասնակցել է Բալկանյան պատերազմին, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Չանաքքալեի մարտերին: Օսմանյան պետության կողմից պարգևատրվել է 7 շքանշաններով: Որպես Աքսարայի անձնական բարեկամ, ինքն է ընտրել նրա համար արաբական նժույգներ: Որդին՝ Լևոն բեյը մինչև 1922թ. ղեկավարել է Թունելների վարչությունը: Մյուս երկու որդիներն էլ են եղել պետական պաշտոնյաներ, իսկ Զարեհը (1906-1964) առաջին անգամ Թուրքիայում օգտագործել և տարածել է մեքենաներ ներկելու «Դուկանո» «տարբերակը»:

**Տատյան Տիրան բեյ (1855-1908).** Տատյան Արթին փաշայի զավակը: Տիրապետել է ֆրանսերեն, խալդերեն, հունարեն լեզուներին: Պետական, դիվանագիտական կարևոր

49 Հայկական հարցից ու հայատառ թուրքերեն պարբերականներում արձանագրել են նրա պետական ծառայության հանդիպումները ու բանակցությունները, ինչպես նաև Սուլթանի հետ նրա անկեղծ ու սերտ հարաբերությունները: Այնուհետ ապացուցություն է, որ այդ շրջանում ոչ արտաքին դիվանագիտությունը պատճեն է Արթին Տատյանի շուրջը և նա է եղել ամենատես բազմաթիվ քաղաքական կարևոր իրադարձությունների:

պաշտոններ է վարել: Կրթությունը ստացել է Եվրոպայում: Արտգործնախարարությունում աշխատել է Կապի բաժանմունքում, իսկ 1882թ. որպես Արտգործնախարարության Հետազոտական բաժնի տնօրեն է պաշտոնավարել: 1908թ. Պետական խորհրդի անդամի աստիճան է ստացել: 1882թ. Պարսից շահից ստացել է «*Şir-ü Hurşid*», 1884թ.՝ Քարադաղի իշխանից «Danilo»-ի 3-րդ աստիճան, 1888թ. ստացել է «*Couronne de Fer*», 1897թ.՝ «*Chevalier de Légion d'Honneur*» և այլ շնորհներ:



Կարապետ Եազը Նշանյան. Տրդատ Տատյանի դիմանկարը

**Տատյան Տրդատ (1860-1916).** Նշանավոր, հանքերի տեր:

**Տատյան Վահրամ (1857-1917).** Դիվանագետ, իրավագետ: Ծնվել է Նշանավոր Տատյանի 4-րդ որդին: Փարիզում իրավագիտություն է ուսանել, տիրապետել լեզուների: 1887թ. անտանացել է հունգարացի իշխան Էդմոն Զիչինիի դստեր, գեղեցկուհի Վանդայի հետ: Եղել է Բուդապեշտում Օսմանյան կայսրության գլխավոր հյուպատոս: Եղել է Նապոլեոնին, ապա Մուզաֆերեդդին շահի, ինչպես նաև փոխարքա Մեհմեդ Ալիի գլխավոր խորհրդականը, և Զինվորական գլխավոր խորհրդին կից՝ խորհրդական օգնական: Վարել է կարևոր պաշտոններ: Զրկվել է սուլթանական բարեհաճությունից չարախոսության ու սադրանքի պատճառով: Նա մեղադրվել է իր երիտթուրքերին իր շուրջը համախմբելու և սուլթանի դեմ դավադրելու համար:

* * *



Բիլեզիկչի ամիրա
Փորագրանկար Լուի Դյուպրեի «Ճանապարհորդություն Աթենք և Կոստանդնուպոլիս» գրքից
(Փարիզ, 1825թ.)

Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Օրագրության» երկում հիշատակվում է Օսմանյան կայսրության արքունի դրամահատարանում 1656թ. աշխատած ոմն հոգևորական Վարդանի մասին: Դրամահատարանում պայմանականորեն հինգ տիպի աշխատողների ենք տարբերում: Առաջինները՝ հատված դրամների մետաղների մաքրությունը, որակը, թանկարժեք մետաղների տոկոսն են որոշել:

Երկրորդները եղել են դրամահատարանի տնօրենները: Հայազգի ոսկերիչ տնօրեններ են եղել **Միքայել, Հովհաննես, Սարգիս, Միքայել, Գրիգոր, Հակոբ, Մինաս Տյուզյանները, Գալպակ Արթին Ամիրա Պեզճյանը, Պողոս Բիլեզիկչին**:

Երրորդ խումբը՝ դրանք դրամահատարանի սեղանավորներն են եղել: Այսինքն, նրանց փոխ տված գումարներով է գործել փողերանոցը: Այս ճյուղում հայ սեղանավորները ևս մեծագույն վստահություն ու հարգանք են վայելել օսմանյան սուլթանների կողմից: Հայտնի են հետևյալ արքունի փողերանոցի սեղանավորները՝ **Ծերուն ամիրա (-1752), Գևորգ ամիրա (1756-1836), Ավետիս Շամդանճըյանը (1801-1888), Գրիգոր աղա Մանասյանը, Մանասյան Մինաս աղա (կամ ամիրա,** 1800թ. Օրթաքեոյում հաստատված, փողերանոցում արծաթե դրամների հատման փորձագիտության ուստաբաշը (վարպետապետ)[50].

Չորրորդ խմբի ծառայողների մեջ են եղել՝ **Կեմիրճիբաշը Միքաիչ** աղան (1778-1828, հաստատված Էդիրնեքափըյում), ոսկերչապետ Հոճա **Պողոս Տյուզյանը** (1797-1871), ծուլարանի պաշտոնյա Հոճա **Տիգրան Ալեքսանյանը**, գանձապետարանի պաշտոնյա **Յաղըրճըօղլու Հոճա Պետրոսը** (նա մեկն է 1853թ. ստեղծված Օսմանյան բանկի երեք հիմնադիր անդամներից), 1875թ. գանձապետ նշանակված **Սարգիս բեյ Տյուզյանը** (1851-1919):

Հինգերորդ խմբում, դրամահատարում պաշտոններ ունեցած հայազգի ծառայողների պաշտոնների անունները որոշակի պարզ չեն: Թահմինեի օղլու Հովհաննեսի որդի **Կարբհանեճի Փիլիպոսը** (-1750, հաստատված Բալըքլըյում): Դարբհանեճի Ղուկասը (-1764, հաստատված Էդիրնեքափըյում), **Ստեփանոս ամիրա Ռեթեոսյանը** (1730-1799, հաստատված Սկյուտարում), **Ստեփան օղլու Դարբհանեճի Պետրոսը** (-1812, հաստատված Սկյուտարում), **Դարբհանեճի Գևորգը** (1794-1843, հաստատված Բալըքլըյում):

**Տյուզյաններ[51].** Արքունի ոսկերչապետեր, ճկարիչներ: Նրանք սերնդեսերունդ իրենց ձեռքում էին պահում Փողերանոցը, դրամահատարանը, որպես ոսկերիչներ, տնօրեններ[52]:

Այս գերդաստանի նախապետներից Հարություն անունով անձը 1600թ. Տիվրիկից գաղթել էր Պոլիս և այնքան մեծ հաջողություններ ունեցել ոսկերչության մեջ, որ Արքունի ոսկերիչ էր անվանվել ու իր խանութը բացել Կապալըչարշըում գանձատան մոտ: Նրա որդին՝ Մահտեսի Սարգիսը հենց հոր մահվան օրը Սուլթան Սելիմ Գ-ից ստացել էր Արքունի ոսկերչի պաշտոնն ու տիտղոսը: Վալիդե (մայր) թագուհու համար ոսկերչական դժվարագույն մի պատվերի համար որպես վարձատրություն չնչին մի գումար էր խնդրել, որի համար ստացել էր «չիտակ»՝ «Տիզ» մականունը: Նրա որդիներն են եղել Հովհաննեսն ու Տեվկերը:

**Միքայել Հոճա Չելեպի Տյուզ (1724-1783).** Փողերանոցի տնօրեն: Չելեպի մականունը նրանց կարողին լինելու նշան էր: Արքունի ոսկերչապետ 1742թ.: Հովհաննեսի ավագ որդին է: Մանկուց ճկարչության նկատմամբ հատուկ հակում է ունեցել: 18 տարեկանից ուսանել է ճարտարապետ՝ քիմիան, ճկարչությունը: Ոսկերիչ լինելով, նա Ֆրանսիայից բերել էր տալիս շատ նկարներ, հարմարեցնելով արևելյան ճաշակին, պատրաստում էր ընտիր քարեղաններ, սկահակներ, ծաղիկներ, որը մեծ պահանջարկ է ունենում պալատի (մասնավորապես Սուլթան Համիդ Ա-ի կողմից, որը շատ բան էր գնում նրանից, բաշխելով) և նրա մերձավոր շրջապատի կողմից: Այդ արհեստը սովորեցնելով շատ հայերի, այն տարածեց ու զարգացրեց: Հավատարմորեն ծառայել է Մահմուդ Ա, Օսման Գ, Մուստաֆա Գ, Աբդուլհամիդ Ա սուլթաններին: Նրան է վստահվում Փողերանոցը, դրամահատարանը, որ Տյուզյան ամիրայական ընտանիքը մեծ

50 Նրա աղջիկը ամուսնացել էր վաճառական Հովհաննես Տատյանի հետ:
51 Ազգանվան իմաստը՝ շիտակ, արդար լինելու արտահայտությունից է գալիս:
52 Տյուզյանների փողերանոցի տնօրինելու շրջանում հաշվեմատյանների մի մասը եղել են հայատառ թուրքերենով: Տես՝ Արսեն Յարմանի գրքի մի պատկերը ( 53 էջ):

փոխարեն Մայր տաճարի սեղանավորն ու անօրինողը Փողերանոցի, 1877թ. ընտրվել է նաև Սահմանադրական ժողովի առաջին հայ պատգամավոր (Meclisi Mebus azası):

1850թ. Պերայում աղքատ աղջիկների համար մի դպրոց է հիմնադրում, որ նրանք արհեստներ պետք է սովորեին, տանտնային եվրոպականին մոտ կրթություն: Այս դպրոցում անօրինուհի է եղել տիկին Նոյրինգերը:

**Հակոբ Չելեպի Տյուզյան (1817-1891).** Պալատական ոսկերիչ և Փողերանոցի տնօրեն: Հովհաննես Չելեպիի որդին: Նա էլ է հովանավորել հայկական խաղացողության հեղինակ Համբարձում Լիմոնճյանին և նրա խմբի երաժիշտներին՝ կատարելագործվելու և եվրոպական նոտաներով ու հայկական նոտագրությամբ գրի առնելու հայ, թուրք երաժշտության նմուշները[58]:

**Սարգիս Չելեպի Տյուզյան (1851-1919).** Փողերանոցի գլխավոր տնօրեն 1875թ., Միհրանի որդին: 1878-ին *Bala*-ի 2-րդ աստիճանի ժապավեն (տիտղոս) է ստանում Աբդուլ Համիդ Բ-ից: 1876թ. հոր հետ մեկնում է եվրոպական ճանապարհորդության:

**Ազնավուրյան (Ազնավոր).** Միշտ չէ, որ ամիրայական գերդաստանները ներկայացրել են միայն մեկ ասպարեզ: Որոշ գերդաստաններ իրենց ճանապարհը սկսել են մեկ, և շարունակել այլ ասպարեզում, ունենալով նույնքան համբավ, հաջողություններ ու հեղինակություն:

Ազնավուրյան գերդաստանը շատ հին է: Նրանց նախահայրերից Դավիթը Վրաստանից Ակնաց է գաղթել, ժամանակի սուլթանի հրամանով զբաղվել տեղի հարկահավաքությամբ: Ընտանիքի մի ճյուղն էլ Իզմիր է եկել, զբաղվել վաճառականությամբ: Հետագայում զբաղվել են ոսկերչությամբ: 1709թ. Եգիպտոս գալով Իբրահիմ փաշա կուսակալի ժամանակ մինչև ֆինանսների նախարարի պաշտոնի բարձրացել: Այս ամիրայական գերդաստանում 6-7 հայտնի սեղանավորներ են եղել:

**Կարապետ ամիրա Ազնավուրյանը (Ազնավոր, 1745-1853).** Սեղանավորների պետ, մյուբաշիրի է եղել: Երևելի, ազդեցիկ ազգային գործիչ: Կարևոր դեր է խաղացել Երուսաղեմում 1811թ. հայ-հոռնական բնդհարումների կարգավորման, հայ-հոռնական թշնամական անհամաձայնությունները հարթելու խնդրում: Նա Շեյխ-ուլ-իսլամի գրասենյակում գտնարված աշխարհիկ խորհրդի կողմից ժողովում հայերի շահերի և քաղաքացիական խնդիրների կարգավորման համձնաժողովում պատասխանատու դեկավար է նշանակվել: Հայերի շահերի պաշտպանությամբ և դրանց նյութական մասնակցության համար մեծ համակրանք է վաստակել: Նա գործուն մասնակցություն է ունեցել նաև 1817թ. առաքելական ու կաթոլիկ հայ համայնքների միջև կրոնական անհամաձայնությունները հարթելու գործում: Քարտաչեշմեյում Պողոս աղբ. Գրիգորյանի տանը գումարված ժողովներում նա պատրիարքական խմբին հարողների ներկայացուցիչներից է եղել: Երկու որդիները ևս մեծ ազգայիններ են եղել: Նրանցից Ստեփանը եղել է Ս.Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձու, իսկ մյուս՝ Հովհաննես որդին եղել է ս.Հակոբ կաթոլիկ հայ համայնքի հիվանդանոցի հոգաբարձում: Ամիրան ևս ենթարկվել է հետապնդումների: 1820թ. աքսորվել է Սարըզ կղզի:

Այս ընտանիքից է **Վիչեն Ազնավուրը** (1807-1871): Նա Փողերանոցում Միհրան Տյուզի մոտ տնօրեն է եղել:

Հայտնի բասաբան **Ժորժ Ազնավուրը** (1861-1920) պապենցի, ևս այս ընտանիքից է:

58 Տես՝ Սասունապարանի մի չարք ծնողները:





**Ազնավուրյան Գասպար (-1806).** Իր ժամանակի հեղինակավոր սեղանավոր ամիրաներից է եղել, ծագումով Ակնի Աղտչեխ գյուղից:

**Գևորգ ամիրա Բահչըվանօղլու (Փափազյան, Պարոնիգարոնյան 1807-1885).** Ակնցի: Նա եզակի տեղ է զբաղեցնում 19-րդ դարի սեղանավորների և պետական այրերի շարքում: Նախ զբաղվել է ոսկերչությամբ, նույր կտորեղենի առևտրով (թյուլպենտի): 1834թ. Եղիրենցի Բահչըվանօղլու Ավետիս աղայի հետ միասին հիմնել են «Բահչըվանօղլու» ընկերությունը: Երկրորդ կարգից անցնում է որպես առաջին կարգի սեղանավոր: 1839թ. անօրինել է բանկային «Ռոմենի ընկերությունը»: Եղել է Ֆինանսների նախարարության Հաշվակալական հանձնաժողովի անդամ: 1856թ. մասնակցել է Հանրային շինության ընկերության հիմնադրմանը: 13 տարի եղել է Հանրային շինության տնօրենների խորհրդի անդամ: 1861թ. դարձել է սեղանավորների «քեդխուդա»: 1866թ. եղել է Միդհատ փաշայի նովանավորությամբ ստեղծված Անվտանգության խորհրդի հիմնադիր անդամներից: Միդհատ փաշայի բարեկամությունն ու վստահությունն է վայելել, նրա աջ ձեռքը համարվել: 1867թ. եղել է Սուլթան Աբդուլազիզի եվրոպական ճանապարհորդության պատվիրակության մեջ: Առանձնակի մոտիկ, ջերմ հարաբերություններ է ունեցել Սադրազամ Ֆուադ և Ալի փաշաների հետ: Երբ Միդհատ փաշան սուլթանի բարեհաճությունը կորցրեց, ապա նրա հետ միասին Գևորգ ամիրա Փափազյանը զրկվեց սուլթանական պալատի բարյացակամությունից ու մինչև մահ մնաց այդ վիճակում: 1865թ. ստացել է *Ulây-ı sânî* աստիճան: 1866թ. սեղանավորների պետ Գևորգ ամիրա Բահչըվանօղլուին (Փափազյան) արքայական գանձարանին մատուցած մեծ ծառայությունների համար շնորհում են *Rütbe-i* saniye

1866թ. կազմակերպված «Ապահովագրական խորհրդի» հիմնադիրների թվում է եղել: Նա եղել է Օսմանյան ֆինանսական հաշվակալական հանձնաժողովի անդամ: Ս.Փրկչի Ազգային հիվանդանոցի հոգաբարձուների մեջ կարևոր դեր է ունեցել: Երբ 1843թ. Ս.Փրկիչի ձեռնագործարանը փակման էր դատապարտված, նա 40 000 դուրշ է դնում և այն վերաբացում: Նա մասնակցել է նաև Ազգային Սահմանադրության ստեղծման աշխատանքներին: 1860թ. եղել է Ս.Փրկչի հոգաբարձուների թվում: Վերջին ամիրաներից է:

**Եաղուպ Ամիրա Ակնցի (Հովհաննիսյան Հակոբ, 1672-1752).** Հայտնի բեզիրգյանբաշի (վաճառականների պետ): Հայրական հարստության շնորհիվ ծննդավայր Ակնից անցնում է Պոլիս, կարճ ժամանակ անց դառնում ազդեցիկ անձնավորություն: 1703թ. Դալի սուլթան Ահմեդ Գ-ի հրովարտակով Արքունի սեղանավոր և վաճառականապետ է կարգվում: Դա նշանակում է, որ մեծ դրամատեր էր և համապատասխանում էր այդօրյա վարկային ու բանկային հաստատությունների կատարած գործունեությանը: Միաժամանակ ազգային բուռն գործունեություն է ունեցել: Հակոբ Նալյան պատրիարքի կողմից արժանացել «Հովանի Գեղեցիկ և տանապաշեն 2-րդ Զորաբաբել» տիտղոսներին[59]: Այսպես, 1751թ. կնոջ հետ մեծ նվերներով

59 Ի թիվս բազմաթիվ բարեգործությունների, Երուսաղեմի Ս.Հակոբյանց տաճարում սբ.Մակարի տապանն է շինել, Քրիստոսի Ս.Գերեզմանին ոսկե կանթեղ նվիրել, նորոգել Ս.Հարության տաճարի վերնատունը, Աշոտ [illegible] [illegible] 1752թ. [illegible] [illegible]

Ամեն ինչ ապարդյուն էր: Երկար ժամանակ նրա տան ճակատի Մ՛Ն տառերն էին, իսկ տունը Ավստրիական դեսպանատուն էր դարձել: Նրա ամենասիրած գիրքը Նապոլեոն Բոնապարտի կենսագրությունն էր[76]: 1860թ. հիվանդ վերադառնում է ու 1861թ. մահանում բշվառության մեջ:

Մեծ եպարքոս Մուստաֆա Ռեշիդ փաշայի միջոցով է, որ Մ. Ճեզաիրլյանը 1847թ. արքայական հրովարտակ էր ձեռք բերել, որով արտոնություն էր տրվում Պատրիարքարանին առընթեր ունենալու Գերագույն (20 աշխարհականներից կազմված) կամ Քաղաքական ու Հոգևոր (14 հոգևորականներից կազմված) Ժողովներ: Գերագույն կամ քաղաքական ժողովը հիմնականում ամիրաներից ու մեծահարուստներից էր կազմված, սակայն հետագայում նրան անդամակցել են նաև էսնաֆները (արհեստավորական միությունների ներկայացուցիչները): Նրա ապարանքի սալոններում հավաքվել են ժամանակի հայտնի մտավորականներն ու արվեստագետները:

**Սերվերյան(Գևորգյան) Հովհաննես (1786-1858).** Արքունի ճարտարապետների կեսարացի գերդաստանի հիմնադիր: Պապը՝ (Հակոբ Սերվեր օղլուն, -1801) դարբին է եղել: Հայրը՝ Գևորգը, դերձակ է եղել: Հովհաննեսն իր ճարտարապետական ուսումը կնոջ հոր՝ Գրիգոր ամիրա Պալյանի մոտ է ստացել: Մի շարք նշանավոր ճարտարապետական հուշարձանների, պալատների ճարտարապետների թվում նաև Սերվերյանի անունն է, մանավանդ որ աշխատել է Պալյանների հետ միասին: Գրիգոր Պալյանի մահվանից հետո կնոջ եղբոր՝ Կարապետ Պալյանի հետ միասին կրել է արքունի ճարտարապետի տիտղոսը: Մեծ ավանդ է ունեցել 1831թ. Սկյուտարի Ենիճամիի կառուցման ու զորանոցի կառուցման խնդրում, ճեմարանի կառուցման ծախսի մեծ մասը վճարելով: Մեծագույն հոգածություն է ցուցաբերել, սատար եղել արվեստին հետևող հայ երիտասարդներին: Ամիրան բարի ու փայտի վրա բանդակելու եկրոպական արվեստը մտցրեց Օսմանյան կայսրություն, այս գործը ու նկարչությունը սովորեցնելով մի խումբ աշակերտների: Այն մեծապես նպաստեց նաև կայսրությունում կնիքների գործնական կիրառությունը համարելով դրանց գեղարվեստական ձևավորման ու արժեքի հետ, որն այսօր գիտական ուսումնասիրության հատուկ հետաքրքրության առարկա է, մանավանդ մեր օրերի պոլսահայ տաղանդավոր գիտնական, օսմանյան մշակույթի գիտակ Կարո Քյուրքճյանի համար:

Գործերն են՝ պալատներ, Պատրիարքարանը (1819), Սկյուտարի Ս.Խաչ եկեղեցին (1830), Գալաթիաճուկի եկեղեցին ու դպրոցը, մի քանի եկեղեցիներ ևս:

**Սերվերյան Հարություն Ամիրա (1822-1889).** Արքունի ճարտարապետ: Հովհաննեսի ավագ որդին է: 1849թ. Արդույմենջիդ սուլթանը նրան կարևոր կառույցների համար պատվանշան է տվել: Եղբոր՝ Ստեփանի հետ Օրթաքյոյի մզկիթի ճարտարապետներն են:

**Սերվերյան Ստեփան (1824-1891) և Գրիգոր (1834 (կնքվել է)-1864)** Հովհաննեսի ճարտարապետ որդիներն են: Փարիզում են ստացել մասնագիտական կրթությունը:

**Մու(ռ)ճյանները** - Խասգյուղում ապրող մոմագործ ու մոմավաճառ, սեղանավորներ են եղել: Այս գերդաստանի անդամներն են եղել **Սարգիս (1750-1818)** և **Առաքել Ամիրա (1750-1832)** երկորյակ եղբայրները, Սարգսի որդին՝ **Հովհաննես Ամիրան (1770-1859)**, թոռը՝ **Աբրահամ Մոճյանը**, ծոռը՝ **Նիկողոս Մոճյանը (1777-1861)**, **Սարգիս Մոճյանը (1825-1890)**, **Միքայել Մոճյանը (-1894)**, որ ամիրայական այս ընտանիքի հայտնի անուններից են եղել: Նրանք զբաղվել են չափազանց կարևոր գործով: Նրանք են անօրինել մոմի, վառոդ, լուսավորող նյութերի ապարեզը, մեծ համարում ունեցել պալատում ու սեղանավորությամբ զբաղվել: Այս բանկային իշխան- եղբայրների գերդաստանի մասին գրելիս Պ.Կատոնը նկարագրում է նրանց տունը Խասքեոյ (շքեղշյուղ) թաղում: Հրաշալի ճարտարապետական անսամբլը այնպես էր վեր խոյացել Ոսկեղջյուրի վրա ու այնպիսի հսկա տարածքով փռվել, կարծես թե մեր բարի ժամանակների հայկական թագավորության իշխանական ամրոց լիներ: Այս պալատի ու հարակից շինությունների մարմարը, որով այն կառուցված էր, բերվել էր իտալական Կարարայից: Նրանց առանձնական ծառուղին, որի վրա բացվում էին տան դարպասները՝ պահակների կողմից հսկվում էին: Այս ապարանքը լավագույնն էր, որի հետ չէին կարող մրցել նրանց հարևան զարմիկների տները՝ Հակոբ ամիրա Լափիճի (1750-1833), Սարգսի որդու՝ Հովհաննեսի տունը: Այս ապարանքներում կազմակերպվում էին խնջույքներ, որոնց համբավը դժվար է եղել թաքցնել: Այս խնջույքների նկարագրությունը, ինչպես նաև այս գերդաստանի մասին հետաքրքիր մանրամասներ գտնում ենք Ժ.Կատոնի «Ամիրաներ» գրքում: Խնջույքի


Սարգիս Մոճյան
*(1825-1890)*


Միքայել Մոճյան
*(-1894)*

հսկայական սեղանները ծածկված են եղել արծաթաթելով գործված հայտնի «Աղաբաշի» կամ փարիզյան նուրբ կտորեղենից պատրաստված ծածկոցներով, որոնք նախապես պարկվել են Դամասկոս՝ այն ոսկեկար ու արծաթաթել ասեղնագործություններով զարդարելու համար: Արծաթե գավաթներով խմել են բոհեմյան գրաֆիններից, իսկ ուտեստները մատուցվել են երկնագույն-սպիտակ նրբագույն Քյոթահիայի ափսեներով, որոնք մանավոր պատվերներով են կատարվել: Ամիրաները սակայն չեն սահմանափակվել Վենետիկի կամ Իզնիկի ֆաբրիկաներում հատուկ պատվերներով պատրաստված թանկարժեք սպասքներից: Դրանց կողքին եղել է Մինգի դարաշրջանի չինական նրբագույն ճենապակե սպասք, որի զարդանախշերը հիացմունքի են արժանի եղել, ինչպես նաև ֆրանսիական հախճապակի: Այս խնջույքների համար հատերով գառնուկներ են բերվել, որոնք խորովվել են, սկիզբ դնելով խնջույքի առավել արևելյան մասին: Ոչպես կանոն,

76 Նա տպագրել տվեց նաև Հիսարյանի «Համառոտ փառք Մեծին Նապոլեոնի» (1847): Մյուս տպագրել տված գրքերն են՝ Զոհրայան, *Ընթացքամիջոցում* (1852), և Սարկոսյան, *Մանր ոտանավոր բովանդակությամբ* (1855):

առաջին *Բեյ* պատվավոր կոչումն ունեցած քրիստոնյա քաղաքական այրը դարձավ, 30 տարի հանդիսանալով Խեդիվի միակ ու գլխավոր խորհրդականը[79]:

Եղբայրը՝ **Պետրոս ամիրա Յուսուֆյանը (1778-1846)**, Տրիեստում առևտրական ներկայացուցիչ էր, համակարգող Եվրոպայի հետ առևտրի, խեդիվ Մեհմեդ Ալիի սեղանավորն ու գործակալը Եվրոպայում, Տրիեստի առաջին վաճառականը: Նրա մոտ է սկսել իր վաճառականական մեծ հաջողությունները նրանց զարմիկը՝ հռչակավոր Աբրահամ Ալյանը (1793-1857): Պետրոս ամիրան իր ողջ հարստությունը և խեդիվի սեղանավորությունը ժառանգեց **Աբրահամ Ալյանին**: 1846թ.Ալյանն Խեդիվի միջնորդությամբ Սուլթանից ստանում է *Nişan-ı Iftihar*.

Պողոս Ամիրայի զարմիկն էր Եգիպտոսի վարչապետ **Նուբար փաշան (1825-1899)**, առաջին *փաշա* տիտղոս կրող քրիստոնյան: Փեսան՝ **Տիգրան փաշա դ'Աբրո (1846-1904)**, Արտաքին գործերի նախարար,19-րդ դ. Եգիպտոսի վերջին հայ կառավարիչներից էր: **Առաքել բեյ Յուսուֆյանը (1826-1858)**, Սուդանի առաջին քրիստոնյա կառավարիչը եղավ, արժանանալով «Արդարասեր» կոչմանը: Ազգակից գործարարների այս խումբն իր ձեռքում էր կենտրոնացրել եգիպտական տնտեսությունը, առևտուրը, մեծագույն նպաստ բերելով ու երաշխավորելով այս երկրի տնտեսական զարգացումը, ճանապարհ հարթելով անկախության համար: Իսկ նրանց գործունեությունը դարձավ տիպար գործարար այրերի պետական ծառայության համար[80]:

**Նորատունկյաններ**. 16-րդ դարից հայտնի տոհմաբանությամբ այս Տիվրիկցի գերդաստանի ամիրայական հայտնի դեմքերից առաջինը եղել է **Արթին (Հարություն) ամիրա Նորատունկյանը (1772-1834)**. Նախ զինվորական, ապա արքունի և կայսրության հացի հայթայթողներն են եղել, հացագործապետներ: Ենիչերիների կողմից սպանության փորձ է արվել: Հայ կաթոլիկների ու հույների միջև ծագած խնդիրներում ակտիվ միջամտություն է ունեցել: Պոլսո պատրիարքի դեմ նրա ունեցած դիրքորոշումը պատճառ է դարձել, որ 1823թ Սուլթանի հրամանով աքսորվի Սվազ: Արթին Ամիրա Նորատունկյանը մեծ բարեգործություններ է արել: Եղբայրը՝ Բաղդասարն ու նրա որդիները շարունակել են այս գործը: Այս գերդաստանի փայլուն անդամներից է հայտնի դիվանագետ, օսմանյան պետական գործիչ **Գաբրիել Նորատունկյանը (1852-1936)**, հացագործապետ Հաջի Գրիգորի որդին[81]: Նա վարել է նաև արտգործնախարարի պաշտոնը: Նրա նկարով փոստային բացիկ է եղել:

Նրանց գերդաստանից է եղել դիվանագետ, 1902-07թթ. Ռումինիայի Գալաց քաղաքի հյուպատոս **Հրանտ բեյ Նորատունկյանը (1875-1957)**. 1884-86թթ. սովորել է «Մեքթեբի Սուլթանի» դպրոցում և Կենտրոնական Լիցեյում: Ֆրանսիայի Էքս ան Պրովանս քաղաքի և Սորբոնի համալսարանների իրավաբանության ֆակուլտետներն է ավարտել: 1903թ. Ռումինի

ժամանակավորապես մանր գործերով զբաղվի, դիմանա մինչ ճգնաժամն անցնի: Դրանով խուսափել են ծայրահեղական խառնակչություններից:

79 Նրա մահից հետո, նրա սնդուկներից մեկում գտնվեցին փոխարքայի ստորագրությամբ մաքուր թղթեր, անհրաժեշտության դեպքում նրա անունից հրամաններ տալու համար: Սա Խեդիվի կողմից նրա անձի, գործի նկատմամբ հայտնի վստահության գերագույն աստիճանի ապացույցներից էր:

80 Եգիպտոսի տնտեսական, քաղաքական կյանքում դեր խաղացած մնացած հայ անվանիներին մեկ հոդվածում չենք անդրադառնա, քանզի նրանց, մասնավորապես **Նուբարյան** տոհմի անդամների մասին մեծարժեք գրականություն է ստեղծվել, բազմաթիվ ուսումնասիրություններ են հրատարակվել:

81 Նրա մասին տես Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության հայ պաշտոնյաներին նվիրված մասում:





երկաթուղու արբիտրաժային հանձնաժողովի քարտուղարն է եղել: 1912թ. Պետերբուրգի Գլխավոր Հյուպատոսության գլխավոր քարտուղարն է եղել, 1914թ. Բելգրադի Դեսպանության խորհրդական եղել: 1918-1928թթ. Վիեննայի Գլխավոր դեսպանատան գլխավոր քարտուղար է եղել: Բազմաթիվ օտար ու օսմանյան պատվանշաններ է ունեցել, 1908թ. *Ulay-ı Sâlis* ստացել: 1910թ. Սերբիայի Պետար թագավորի կողմից արժանացել ***St. Sava*** շքանշանի և ***Mecidiye*** 3-րդ աստիճանի շքանշանի, ***Couronne de Romanie*** (1909), ***Romanof*** մեդալ (1913) և այլն: 1957թ. հրատարակել է Le Coup de Téléphon (հեռախոսազանգ) վեպը, բանաստեղծություններ, իսկ 1950թ. Vers la Guerre balkanique (Բալկանյան պատերազմի մասին) ֆրանսերեն քաղաքագիտական հուշագրությունը, հոդվածներով հանդես եկել *La Turquie Modern* ամսագրում: Կյանքի վերջին շրջանում առևտրով է զբաղվել:

**Ալլա(հ)վերդիներ** - Այս գերդաստանի ամենակարևոր դեմքը եղել է **Աբրահամ ամիրա Ալլավերդին (1791-1861)**, որը համարվել է իր ժամանակի ամենահայտնի ու ամենամեծ սեղանավորներից մեկը: 1842թ. Ռումելիի հայտնի ընկերության հիմնադիրներից է եղել: 1853թ. Օսմանյան բանկի հիմնադիր հայտնի անունների մեջ էր, տնտեսության ու ֆինանսների մեծ մասնագետ: Նրա որդին՝ **Հովհաննես Ալլավերդին (1823-1915)** ֆինանսիստ է եղել և հայտնի անուն եղել երկրի տնտեսության ու առևտրի ասպարեզում իր գիտելիքներով: 1868թ. Հովհաննես Ալլահվերդին ընտրվել է սեղանավորների պետ:

Նա 1877թ. Օսմանյան Մեջլիսի առաջին ժողովի անդամ է եղել, երկրորդ նստաշրջանի փոխնախագահ ընտրվել: Նա մաս է կազմել երկրի ֆինանսական խնդիրների բարելավման հանձնաժողովների: Նրա որդի **Աբրահամ Ալլավերդին** 1889թ. Ֆրանսիայում ավարտել էր Գրինյոնի Գյուղատնտեսական բարձրագույն դպրոցը և Պոլիս վերադառնալով դասախոսել Հալքալըի գյուղատնտեսական հայտնի ագարակ-դպրոցում:

**Թնկըրյաններ.** Հոնա Գրիգորը (1701-1781). Եվդոկիայի (Տոկատ) հետ առևտրով է զբաղվել: Քանի որ կաթոլիկ է եղել, Պատրիարքարանը հնարավորինս խանգարել է նրան:

**Կարապետ (1754-1808).** Սեղանավոր է եղել:

**Սիմոն.** 1798-ին վաճառականություն և սեղանավորություն է արել:

Թնկըրյան 3 եղբայրները՝ **Հակոբը**(1755-1835), **Հովսեփը**(1763-1833) և **Գրիգորը**(1785-1834) Կապուդան փաշայի (ադմիրալի) սեղանավորներ են եղել: Բանտարկությունների զոհ են դարձել, հազիվ փրկվել են մահվանից, աքսորվել են: Վերադառնալով դարձել են Մեհմեդ փաշայի սեղանավորները:

**Արթին** (Հակոբի որդին) 1783-1866. Եղել է Հուսրեֆ Մեհմեդ փաշայի բանկիրը: Գասպար Արթինի հետ միասին եղել են Մահմուդ Բ-ի սիրելիները:

**Հովհաննես** ամիրա (Հովսեփի որդին, 1789-1868). 1842թ. Ռումելիի բանկային ընկերության հիմնադիրներից է եղել, Պետական Խորհրդի անդամ: Եղել է առևտրի նախարար Ֆուադ փաշայի սեղանավորը, անցել Ռումելիի ճակատի պատերազմը, և 1857թ. դարձել է Ֆուադ փաշայի լիակատար ներկայացուցիչը Փարիզ ճանապարհորդության ժամանակ: 1853թ. կառավարությունը Հովհաննես Էֆենդիի մասնակցությամբ կապիտալիստների միություն է կազմել՝ Աբրահամ Ալլավերդին, Հովհաննես աղա Թնկըրը, Մակսուդ Սարիմյան, Տիրան



Սեպրոն Տիրացույան.
Յովհաննես Թնկըրզյանի նկարը

Աշիքյանյան, Միրտիչ Բիլեզիկչի, Յաճի Պեխ-հարի, Համառ, Դավիթ Գյավյանի և Զարիֆի:

**Անտոն Յակոբ փաշա Թնկըրզյան (1812-1908)** Ռազմական նախարարության օտար լեզուներով գրագրության և թարգմանության վարչության տնօրեն է եղել: Վարել է նախարարական պաշտոններ՝ Փոստային նախարար, Պետական պարտուց վարչության տնօրեն: 1883թ. Օսմանյան կայսրության ծխախոտի (Ռեժի) անունով ընկերության խորհրդի որպես գլխավոր հսկիչ, փոխանվել է նրան: 1903թ. Անտոն Թնկըրզյանց ֆինանսների խորհրդի անդամ է նշանակվել:

**Չալաճյաններ (Հովիվյան, Հովյաններ)** – Ծագումով Ակնի Աղոչնես գյուղից են: 17-րդ դարում գաղթել են Պոլիս[82]: Ամիրայական սեղանավորների այս ընտանիքը 19-րդ դարի վերջերին իր կարևոր ազդեցությունն է ունեցել Պոլսի հասարակության կյանքում: Հինգ հայանի են եղել այս տոհմի մեծերը՝ **Պողոս, Մարտիրոս (1745-1796), Հաջի Հարություն[83] Չալաճյանները**: Եղբայրները Եգիպտոսի խաղիվի (փոխարքայի) ոսկերչապետերն են եղել: Այս տոհմի վերջին ամիրան՝ **Հաջի Արթին Չալաճյանը** երևելի, բասավորյալ անձ է եղել, հայանի ճարտարապետ Արշակ Չալաճյանի նախնիքը:

Սեղանավոր **Հարություն ամիրա Երկանյանն(ալյան Արթին)** իր Քուրուչեշմեի ծովափնյա ամառանոցը 1855-ին առաջարկել է որպես ֆրանսիական զինվորների համար հիվանդանոց:

**Մակարդ ամիրա Սարիմյան** (–1859). Սեղանավորների պետ է եղել, 1842թ. Ռուսնի հարկահավաքային բանկային միության անդամներից:

Ամիրաներ **Միսակյան Ալեքսանը և Միսակյան Հակոբը** *Ակնցի եղիազարի* քրոջ որդիներն են: 1827թ., երբ մահացավ Ակնցի Եղիազար Ամիրան, Մուհամմեդ Ալի փոխարքան ի հարգանս նրա, բերել տվեց նրանց Եգիպտոս: Նրանք Մսրում զբաղված էին սեղանավորությամբ և վաճառականությամբ, հիմնել էին մի հաստատություն, որը հետագայում առաջավ Մարարիայի աղեհանքերի շահագործման մենաշնորհը:

Արքայական պալատն իր սպասարկման տարբեր օղակներում ունեցել է հայ մասնագետներ: Այս մասին տեղեկանում ենք, երբ նրանց շնորհների արժանանալու մասին նյութեր ենք

82 Այս տոհմի մասին գրել է Թորոս Ազատյանն իր «*Ակն և Ակնցիք*» աշխատության մեջ, Պոլիս, 1943: Նրանք հայտնի են նաև Հովիվյաններ ազգանունով:
83 Հարություն(Հաջի Արթին) Չալաճյանը եղել է սեղանավոր Սերոբ ամիրայի (-1754) գործընկերը:





տեսնում: Այսպես օրինակ, 1899թ. Արքայական պալատի լուսարար (ճամպաջը) **Պետրոս Մարկոսյանը** ստանում է 4-րդ աստիճանի ***Nişan-ı Osmani***, և կան հայտնի են եղել արքունի հայ պաղպաղակագործապետներ, բաղնեպաններ, արքունի թարգմանիչներ և այլն, և այլն:

**Մարգմանյան Մահտեսի Սարգիս** (1807-1897). Ճարտարապետ, արքունի համամներ բաղնեպանապետ), որդի Սյունաց աշխարհից Ազնավուրյանց Մահտեսի Սողիասի, ծնված Խարբերդի Էշմե գյուղում:

19-րդ դարում պալատական կարևոր պաշտոններ վարածներից է **Հակոբ բեյ Էքսերճին**: Նա եղել է սուլթանական պալատի համար ֆրանսիական անտիկ կահույքի գնումների կատարման տնօրենը, Թուրքիայի գործերի հավատարմատարը Ֆրանսիայում: Սա նշանակում է, որ նրա միջոցով են կատարվել կարևոր նյութերի շուրջ զեկուցագրերը, ուղղակի կապ է ունեցել նախարարների հետ:

Ցուցակ Հայ ամիրաների[84]

Անուն ծննդյան, մահվան թիվը գործը ծննդավայրը և գործելու վայրը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ազարիայի Մերեմ-Գուլյան Թոմա | 1738-1818 | սեղանավոր | Պոլիս |
| 2. | Ազատյան Հաջի Պետրոս | - 1763 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 3. | Ազատյան Ալեքսանդր | - 1809 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 4. | Ազատյան Հարություն(որդին) | | | |
| 5. | Ազատյան Մարտիրոս | 1745-1775 | սեղանավոր | Պոլիս |
| 6. | Ազատյան Հովհաննես | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 7. | Ազնավուրյան Գասպար[85] | - 1806 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 8. | Ազնավուրյան Ազնավուր(որդին) | - 1832 | սեղանավոր | Պոլիս |
| 9. | Ազնավուրյան Կարապետ | 1745-1853 | սեղանավոր | Ակն, Պոլիս[86] |
| 10. | Ազնավուրյան Հովհաննես(որդին) | 1792-1864 | սեղանավոր | Պոլիս |
| 11. | Ազնավուրյան Ստեփան(Կարապետի որդին) | 1799-1890 | սեղանավոր | Պոլիս |
| 12. | Ազնավուրյան Հովսեփ(Կարապետի որդին) | 1802-1842 | սեղանավոր | Պոլիս |
| 13. | Աշիքյանյան Պետրոս | 1700 - 1789 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 14. | Աշիքյանյան Պողոս (եղբայրը) | 1763 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 15. | Աշիքյանյան Միրտիչ (Պետրոսի որդին) - | 1804 | սեղանավոր | Պոլիս |

84 Հակոբ Պարսումյանի գրքի հավելվածի 157-169 էջերում արտահայտված այս ցուցակը մեր կողմից լրացվել է մասնակի անուններով. Hagop L. Barsoumian, *The armenian amira class of Istanbul*. Yerevan, American University of Armenia, 2007:
Հայերենի ծննդյան ու մահվան թվականների համար որպես աղբյուրներ է նշում հայկական գերեզմանոցներում երևելիների գերեզմանաքարերի հայերեն և հայատառ թուրքերեն արձանագրությունները:
85 Հայ ամիրաները և նրա երեխաները իրենց բարեգործությունների շրջանակում առավոտյան են ունեցել հայկական թաղերում աղբյուրներ չխնայել: 1762թ. Սկյուտարի Սելամսըզ թաղում սեա այդպիսի մի աղբյուրի տոնդրման կապված է Գասպար ամիրա Ազնավուրյանի անվան հետ:
86 Գ.Բամպուքճյանի մոտ ծննդյան թվականը 1745թ. է: 108 տարեկանում վախճանված սեղանավորը ազդեցիկ դեր է ունեցել Պատրիարքարանի գործերում, կարևոր ծառայություններ մատուցել հայ հասարակությանը:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16. | Աբրահամ Ալլահվերդյանց | (1791-1861) | սեղանավոր | Պոլիս |
| 17. | Ալեքսանյան Հովհաննես | | սեղանավոր | Պոլիս |
| 18. | Ալլա(հ)վերդի(յան) Աբրահամ | 1791 -1861 | բանկիր | Պոլիս[87] |
| 19. | Անաստաս Ամիրա | 1831 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 20. | Անտոնյան Անտոն (Չոփինց) | 1756 – 1846 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 21. | Անտոնյան Միհրան | 1790-1860 | | Ակն, Պոլիս |
| 22. | Անտոնյան Հարություն | 1816 | սեղանավոր | Բալու, Կիպրոս |
| 23. | Աշնանյան Մկրտիչ | 19դ. | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 24. | Աշնանյան Պողոս | - 1869 Ռում-բնկ | սեղանավոր | Ակն,Պոլիս |
| 25. | Առիստակեսյան Հովհաննես | 1817 | | Պոլիս |
| 26. | Արփիարյան Փիլիպոս | 1780-1850 | սեղ. արդյունաբերող | Ակն, Պոլիս |
| 27. | Արփիարյան Մկրտիչ (որդին) | 1820 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 28. | Արփիարյան Արփիար | | | |
| 29. | Արզումանյան Արզուման | 1841 | սեղանավոր | Պոլիս |
| 30. | Ասլան Ամիրա | 1760թ. | վաճառականություն | Պոլիս |
| 31. | Աստվածատրյան Մանուկ | 1824 | | Պոլիս |
| 32. | Արթին Ամիրա Քալըջեանցի | -1776 | սեղանավոր | Պոլիս |
| 33. | Բաղդասարյան Մարտիրոս | 1834 | սեղանավո՞ր | Պոլիս |
| 34. | Բաղդասարյան Բաղդասար | 1800 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 35. | Բալթազարը Գալֆայան Արթին | 1780-ական թթ. սեղանավորների պետ | | Պոլիս |
| 36. | Բարոնակ Ամիրա (Բարոնակյան) | 1800-30թթ. | | Պոլիս |
| 37. | Բարոնակյան Հակոբ(որդին) | | | Պոլիս |
| 38. | Բեզճյանները(Բեզճօղլու)[88] | 19դ. | սեղանավորներ | Պոլիս |
| 39. | Բիլեզիկճյան Պողոս[89] | 1823 | ոսկերիչ | Ակն, Պոլիս |
| 40. | Գասպարյան Բաղդասար | 1830 | սեղանավոր | Պոլիս |
| 41. | Գևորգ ամիրա 1756-1836 | Փոխերանոցի սեղանավոր | | Պոլիս |
| 42. | Գևորգ (Հայի) | 1725-1802 | սեղանավոր | |
| 43. | Գելզեյան Հարություն(Արթին) | 1830 | սեղանավոր | Ակն, Պոլիս[90] |
| 44. | Գյուլյարյան Հակոբ | | արք.ճարտ. | Պոլիս[91] |
| 45. | Գյումնազյանցի Նահապետ | 1622-1695 | | |
| 46. | Գոնջեգյուլյան Մահտեսի Աստվածատուր | 1790 | | Պոլիս |
| 47. | Դավթյան Հովսեփ ամիրա[92] | 1830 | սեղանավոր | Պոլիս |
| 48. | Դերինյան Մարտիրոս (1807-1885) | | սեղանավորների պետ | Պոլիս |
| 49. | Դաբես Ամիրա | - 1780 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 50. | Դաբեսյան Հովհաննես (որդին) | - 1828 | սեղանավոր | Պոլիս |
| 51. | Դաբեսյան Բարոն(Դաբեսի որդին, 1779-1849) | | սեղանավոր | Պոլիս |
| 52. | Ենովք ամիրա Ակնցի (1672 -1752) - | | Արքունի սեղանավոր և վաճառականների պետ | |
| 53. | Եղիազարյան Եղիազար Ակնցի - | 1827 | սեղանավոր | Ակն,Պոլիս, Եգիպտոս |
| 54. | Երամյան Գևորգ[93] | 1847 | | Պոլիս |
| 55. | Երկանյան Հովհաննես(Ուզունյան) | 1810 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 56. | Երկանյան Հարություն(որդին) | 1799-1869 | սեղանավոր | Պոլիս[94] |
| 57. | Թարաքխանեցի Միհրան | 1800ն | | Պոլիս |
| 58. | Թնգրյանց Աբրահամ (Քարաքեահյա) | 1767-1827 | սեղանավոր | Ակն, Պոլիս[95] |
| 59. | Թնգրյանց Երամ(եղբայրը) | 1768-1853 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 60. | Թ(ը)նկրյան Հովսեփ | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 61. | Թնկրյան Հովհաննես (որդին, 1789-1868) | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 62. | Թոյասյան | | | |
| 63. | Համիդօղլու Քոլոնեց Գրիգոր[96] | 17-18դդ. | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 64. | Ժիժյան Հովհաննես | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 65. | Ժիժյան Կարապետ(զարմիկը) | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 66. | Ժիժյան Մկրտիչ | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 67. | Լաթիֆյան Հակոբ | 1750-1833 | | Ակն, Պոլիս |
| 68. | Լաթիֆյան Հովհաննես(որդին) | 1770-1859 | | Ակն, Պոլիս |
| 69. | Լինոնճյան Հովհաննես | 1800 | | Պոլիս |
| 70. | Խորասանճյան Միքայել | 1750-1825 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 71. | Խորասանճյան Պետրոս(որդին) | 1809-1860 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 72. | Խուդավերդ օղլու Նազարեթ | 1830 | սեղանավոր | Պոլիս |
| 73. | Ծերուն Ամիրա | - 1752 | փող.տնօրեն | Պոլիս |
| 74. | Հակոբ ամիրա Լաթիֆի | (1750-1833), | | Պոլիս |
| 75. | Հաճյան Պողոս | 1830 | | Պոլիս |
| 76. | Համիդօղլու Կոլոտենց Գրիգոր | - | սեղանավոր | Ակն |
| 77. | Հով(հ)յան(ց) Հարություն կամ Չալասյան- | 1758(0) | սեղանավոր փ.ա. | Պոլիս[97] |
| 78. | Հովյան Պողոս (որդին) | | սեղանավոր | Պոլիս |
| 79. | Հովյան Հովսեփ Չալան | | | Պոլիս |
| 80. | Հովյան Հարություն(Հարությունի որդին) | 1780 | սեղանավոր | Պոլիս |
| 81. | Հովյան Գաբրիել (Հարությունի որդին) | | | Պոլիս |
| 82. | Հովյան Մարտիրոս(որդին) | 1745-1796 | | Պոլիս |
| 83. | Հովյան Հովհաննես | 1750 | սեղանավոր | Պոլիս[98] |

87 Ալլահվերդյան Աբրահամ (1791-1861) սեղանավոր, Պոլիս, Հայկահավաքության Ռումելիի բանկային ընկերության հիմնադիրը և 1853թ.Օսմանյան բանկի հիմնադիրներից.

88 19-րդ դ. Կեսարահայ վաճառականների ու սեղանավորների հայտնի ընտանիք, որոնց պատկանող Սկյուտարի պալատները բարեգործական ձեռնարկումների, բարեգործական հաստատությունների են ծառայել։ Այս գերդաստանի հայտնի անուններից են եղել **Հաջի Ալեքսանյան Սոսիանց, Ալեքսան Բեզճյանց, Բեզճօղլու Հակոբը**։ Նրանք եղել են կեսարացի հայտնի վաճառական ու սեղանավոր Մկրտիչ Եսայանի (1843-1921) կնոջ պապերից։

89 Դրամահատարանի տնօրինության թեկնածու 1820թ.։

90 1842թ. Ռումելիի բանկային ընկերության անդամ, որոնք նախապես պետական գանձարանին վճարելով մի քանի նահանգների հարկերի չափով, շրջանից էին ստանում ընկերության կողմից հավաքել հարկերը։

91 1804թ. **Միհրան Խոսչիայի** հետ միասին վերականգնել է 1782թ. հրդեհին զոհ գնացած Սամաթիայի ս.Գևորգ եկեղեցին։

92 Եղել է Ռումելիի բանկային ճարտահավաք ընկերության անդամներից։

93 Նուբար բեյ Նուպարյանը 1850թ. Եգիպտոսից Պոլիս գալով Գևորգ ամիրա Երամյանի դստեր՝ Զաբելի հետ է ամուսնանում։

94 Հոր հետ միասին Պոլիս է եկել, Արքունի սեղանավոր դարձել։ 1842թ.հարկահավաքությամբ զբաղվող Անատոլիական բանկային ընկերության տնօրինությունը վարել։ Ազգասեր ու բարերար անձ է եղել։ Սուլթանի կողմից ստացել է պատվանշանակիր *Iftihar Madalyası* պատվանշան։

95 **Աբրահամ ամիրա Թնգրյանց** տպարան էր հիմնել 1824թ. Պոլսում և տպագրված գրքերը անվճար բաժանում էր գավառներում։

96 Ամենաառաջին ամիրաներից է։

97 1685թ. վերաշինել է Բուխարեստի Ս.Հրեշտակապետ եկեղեցին։

98 **Հովյան Հովհաննես**, սեղանավոր։ Սարգիս Սարաֆ Հովհաննիսյանի հայրը։ 1730-ական թթ. Պալատի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 84. | Հովյան Սարգիս | | | Պոլիս |
| 85. | Հովհաննիսյան Ակնցի Եսայիս[99] | 1672-1752 | բեզիրգյանբաշի | Պոլիս |
| 86. | Հովհաննիսյան Պետրոս | 1834 | սեղանավոր | Պոլիս |
| 87. | Ղազար (Աղավնի աղա) | -1763 | սեղանավորապետ | |
| 88. | Ճեզաիրլյան Հովհաննես | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 89. | Ճեզաիրլյան Միսակ(զարմիկը) | | սեղանավոր | Պոլիս |
| 90. | Ճեզաիրլյան Սարգիս(զարմիկը) | 1742-1815 | սեղանավոր | Պոլիս |
| 91. | Ճեզաիրլյան Մկրտիչ(որդին) | 1805-1861 | սեղանավոր | Պոլիս |
| 92. | Մամիկոնյան Հակոբ | 1807-1873 | | |
| 93. | Մանասե[100] | | | |
| 94. | Մանասյան Մինաս | 1800 | փ.սեղանավոր | Պոլիս |
| 95. | Մարգոսյան Սարգիս | 1807-1897 | ճարտ. և արք.բաղնիսպան | Պոլիս |
| 96. | Մարտիրոսյան Մարգար[101] | 19դ. | սեղանավորների պետ | Պոլիս |
| 97. | Մարտիրոսյան Մարտիրոս (որդին) | 19դ. | սեղանավոր | Պոլիս |
| 98. | Մելիքբեքյան Թովմա | (1770-1818) | սեղանավոր | Ագուլիսցի |
| 99. | Միսաքյան Պետրոս | | | Ակն, Պոլիս |
| 100. | Միսաքյան Միսակ | 1793-1856, | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 101. | Միսաքյան Գևորգ(եղբայրը) | 1830 | սեղանավոր Լիբանանի մաքսատների պետ | |
| 102. | Միսաքյան Վարդերես(որդին) | | | Պոլիս, Էդիրնե |
| 103. | Միսաքյան Հարություն | | | Պոլիս, Էդիրնե |
| 104. | Միսաքյան Եղիազար | | | Պոլիս, Էդիրնե |
| 105. | Միրիճանյան Գաբրիել | 18դ. | սեղանավոր, ոսկերիչ | Ակն, Պոլիս |
| 106. | Միրիճանյան Մկրտիչ Ճնորիկ(որդին) | 1742-1800 | պետ.սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 107. | Միրիճանյան Մուրադ(որդին) | 1793-1806 | | Պոլիս |
| 108. | Միսակ Միսաքյան | | սեղանավոր | |
| 109. | Միսաքյան Հայի Ալեքսան[102] | սեղանավորների պետ և վաճառական | | Եգիպտոս |
| 110. | Միսաքյան Հակոբ | | սեղ.և վաճառական | Եգիպտոս |
| 111. | Միրզոյան (Միրզայան) Հովհաննես | | | |
| 112. | Միրզոյան (Միրզայան) Միքայել | | | |
| 113. | Մոմճյան Առաքել - երկվորյակ | 1750-1832 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 114. | Մոմճյան Սարգիս(եղբայրը) | 1750-1818 | | Պոլիս |
| 115. | Մոմճյան Հովհաննես(որդին) | 1770-1822 | սեղանավոր | Պոլիս |

եկեղեցու խաչքարերից մեկի վրա արձանագրություն կա նրա մասին:

99 **Յաղուբ աղիրա Հովհաննիսյանը** (Հակոբ Հովհաննիսյան) 1703թ. արդեն արքունի սեղանավոր ու վաճառականապետ էր:

100 Գ.Բամպուկչյանը գրում է, որ 1789թ. Մանասե աղիրան Չենգելքյոյում ծովափնյա ամառանոց է ունեցել և հավանական է, նույնացվել է արքունի նկարիչ Մանաս Մանասի հետ:

101 **Մարգարը** 1800-ական թթ. Պոլսում սեղանավորությամբ է զբաղվել, հետո դարձել նրանց գլխավորը՝ saraflar kehcasi. **Մարտիրոսն** ստացել է Մարտիկյան (1822թ): Առևտրական հարաբերություններ է ունեցել Եվրոպայի հետ, բանկեր եղել այնտեղ: Իր գործընկերներն էին տղան և թոռը: 1851թ. Արդյունքից տուժած կորցնելով Մարտիրոսյան տունը է Բարձրագույն թերթը: Այդ թերթում բազմաթիվ առանձնաշնորհներ էր ստացել նրան:

102 Ակնցի Եղիազար Եղիազարյան Ամիրայի չորս որդիներն են, որ նրա մահից հետո ի նշան երախտագիտության Մուհամմեդ Ալի փոխարքան բերել տվեց Եգիպտոս:





| | | | | |
|---|---|---|---|---|
| 116. | Մոմճյան Աբրահամ (որդին) | | սեղանավոր | Պոլիս |
| 117. | Մոմճյան Միքայել | -1894 | սեղանավոր | Պոլիս |
| 118. | Մոմճյան Նիկողոս | 1777-1861 | | Պոլիս |
| 119. | Մովսեսյան Ղազարոս | -1763 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 120. | Մսպահետճյան Աբրահամ | 1800 | սեղանավոր, փ.տ. | Ակն, Պոլիս |
| 121. | Մուրադյան Հակոբ | 1730ն | | Ակն, Պոլիս |
| 122. | Արթին Մուրադյան (Հարություն)[103] | 1730ն | սեղանավոր | Պոլիս |
| 123. | Մուրադյան Բաղդասար | 1760ն | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 124. | Մուրադյան Գասպար | 1760ն | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 125. | Մուրադյան Փիլիպոս | -1771 | | Ակն, Պոլիս |
| 126. | Մուրադյան Հովհաննես(եղբայրը) | 1737-1783 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 127. | Մուրադյան Բարունակ | | | Ակն, Պոլիս |
| 128. | Մուշեղացի Խաչիկ | 1795 | | Ակն, Պոլիս |
| 129. | Յուսուֆյան Հակոբ[104] | 18դ. | արքունի ժամագործապետ | Պոլիս |
| 130. | Յուսուֆյան Պողոս[105] | 1768-1844 | դիվանագետ | Եգիպտոս |
| 131. | Յուսուֆյան Պետրոս | 1778-1846 | վաճառական | Պոլիս, Տրիեստ |
| 132. | Նեվրուզյան Հարություն | 1778-1834 | | Ակն, Պոլիս |
| 133. | Նեվրուզյան Բաղդասար | 1804-1855 | | Պոլիս |
| 134. | Նորատունկյան Հարություն | 1770-1843 | հացագործապետ | Սեբաստիա, Պոլիս |
| 135. | ՆորատունկյանԳրիգոր(որդին) | 1857 | | Պոլիս |
| 136. | Նշանյան Մկրտիչ | 1800ն | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 137. | Նշանյան Պողոս | 1800ն | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 138. | Շամպանջյան Ավետիս | 1807-1888 | | |
| 139. | Չայինց Վարդերես | 1722-1799 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 140. | Չայինց Եղիազար | | | Պոլիս |
| 141. | Չերազյան Փիլիպոս | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 142. | Չերազյան Մինաս(Փիլիպոսի որդին) | 1728 | սեղանավոր | Պոլիս |
| 143. | Չերազյան Մարգար (Մինասի որդին) | 1730ն | սեղանավոր | Պոլիս |
| 144. | ՉերազյանՊողոս(Մինասի որդին) | | սեղանավոր | Պոլիս |
| 145. | Չերազյան Գևորգ | 18դ. | սեղանավոր | Պոլիս |
| 146. | Չերազյան Գրիգոր (Գևորգի որդին) | 1805-10թթ | | Պոլիս |
| 147. | Չերազյան Գասպար(Գևորգի եղբայրը) | -1821 | սեղանավոր | Պոլիս |
| 148. | Չերազյան Բաղդասար(որդին) | 1787-1854 | սեղանավոր | Պոլիս |
| 149. | Չուգանյան (Հովիկյան) Սերոբ | -1754 | | |
| 150. | Չուգանյան Հայի Արթին | | սեղանավոր | Պոլիս |

103 1736-ին Հովհաննես Կոլոտը և Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շղթայակիրը սեղանավոր Արթին աղիրա (Հարություն) Մուրադյանի հետ գնում են Շեյխ-ուլ-իսլամի մոտ, Ս.Հակոբյանց վանքի պահպանության խնդրով (Գրիգոր Պատրիարքը այս խնդրով 16 օր բանտ է նստել):

104 Ամիրան 1778թ. սուլթանական հրամանով աշխատավարձի հրաման, բերատ է ստացել, որը նրա ժառանգներից է եղել: 1807թ. Արքունի ժամագործապետ **Հակոբ Յուսուֆյանի որդին Սարգիսը**, Բ.Դասեն և Ալյա Ճեմիլյան ժամացույցների համար հատուկ Թերաբիում խրախուսվել է սուլթանի կողմից գլխարկ, ակնե (ասֆյանից, այծի կաշվից) երկարաճիտք կոշիկներ և մուճակներ (բաբուշ) կրելու:

105 Պողոս աղիրա Յուսուֆյան (1768-1844) Սեղանավոր, Եգիպտոսի փոխարքա Մուհամմեդ Ալիի մերձավորագույն պաշտոնյա (բաշգեահյա), խորհրդական, ապա Արտաքին գործերի և առևտրի նախարար: Կրթական Տրիեստում, բարեպաշտ, մեկենաս: Մահացել է Կորսիկայում, թաղված Եգիպտում:

| | | | |
|---|---|---|---|
| 151. Չոպանյան Պողոս, | | ոսկերչապետ | Պոլիս |
| 152. Չոպանյան Մարտիրոս | 1745-1796 | ոսկերչապետ | Պոլիս |
| 153. Պալյան Գրիգոր | 1764-1832 | ճարտ. | Պոլիս |
| 154. Պալյան Կարապետ(որդին) | 1800-1866 | ճարտ | Պոլիս |
| 155. Պալյան Նիկողոս, որդի Կարապետի | (1826-1858) | ճարտ. | Պոլիս |
| 156. Պալյան Հակոբ, որդի Կարապետի | (1838-1873(5) | ճարտ. | Պոլիս |
| 157. Պալյան Սարգիս, որդի Կարապետի | (1835-1899) | ճարտ. | Պոլիս |
| 158. Պալյան Առաքել | - 1789 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 159. Պեզճյան Հարություն | 1771-1834 | սեղանավոր,փ.ա.[106] | Պոլիս |
| 160. Պետրոսյան Եղիազար[107] | | ֆինանսիստ | |
| 161. Պողոսյան Հակոբ | 1823 | սեղանավոր | Երզնկա, Պոլիս |
| 162. Ջրկիրյան Գրիգոր | 1817 | | Պոլիս |
| 163. Ռեթեոսյան Ստեփանոս | 1730-1817 | փողերանոցի տնօրեն | Ակն, Պոլիս |
| 164. Սարաֆյան Մանուկ | -1859 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 165. Սարաֆյան Հովհաննես | 1847 | սեղանավոր | Պոլիս |
| 166. Սարգսյանը Հակոբ,[108] | | | Իզմիր |
| 167. Սարաչյան կամ Սահակյան Գրիգոր | 1735-1820 | | Ակն, Պոլիս |
| 168. Սերվերյան Հովհաննես | 1788-1858 | արքունի ճարտարապետ | Պոլիս |
| 169. Սերոբե Էրիվանցի Մինաս[109] | 1680-1754 | վաճ., սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 170. Սիրունյան Միքայել | -1788 | | Ակն, Պոլիս |
| 171. Սիրունյան Հովհաննես(եղբայրը) | 1720-1784 | | Ակն, Պոլիս |
| 172. Սուրենյան Մուրադ | 1800-25թթ | | Պոլիս |
| 173. Տատյան Առաքել | 1753-1812 | վառոդապետ | Ակն, Պոլիս |
| 174. Տատյան Սիմոն(որդին) | 1777-1832 | վառոդապետ | Ակն, Պոլիս |
| 175. Տատյան Հովհ.(Առաքելի որդին) | 1798-1869 | վառոդապետ | Պոլիս |
| 176. Տատյան Պողոս | 1800-1864 | վառոդապետ | Պոլիս |
| 177. Տերյանց Մարգար | 1776-1841 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 178. Տեր Ավետիսյան Մարտիրոս կամ Սարաֆյան | 1740-1820 | | Պոլիս |
| 179. Տյուզյան Միքայել | 1724-1783 | փ.ա. | Պոլիս |
| 180. Տյուզյան Հովհ. (որդին) | 1749-1812 | փ.ա. | Պոլիս |
| 181. Տյուզյան Գրիգոր (որդին) | 1774-1819 | փ.ա. | Պոլիս |
| 182. Տյուզյան Սարգիս (Հովհ. որդին) | 1777-1819 | փ.ա. | Պոլիս |
| 183. Տյուզյան Կարապետ(Հովհ. որդին) | 1779-1819 | փ.ա. | Պոլիս |
| 184. Տյուզյան Միքայել(Հովհ. որդին) | 1786-1819 | փ.ա. | Պոլիս |
| 185. Տյուզյան Հակոբ(Հովհ. որդին) | 1793-1847 | փ.ա. | Պոլիս |
| 186. Տյուզյան Պողոս(Հովհ. որդին) | 1797-1871 | փ.ա. | Պոլիս |
| 187. Տյուզյան Միհրան (Սարգսի որդին) | 1817-1877 | փ.ա. | Պոլիս |

106 փ.ա.՝ փողերանոցի, դրամահատարանի տնօրեն

107 1763թ. Չոխաջը խանի դռանը բանտարկության պատճառով կախում են սադրազամ Ռագըբ փաշայի մոտիկ բարեկամ ու Աչեմ Ալիի սեղանավոր, սեղանավորների պետ («Պետրոսյան») Ղազար Ամիրային:

108 Սարգսյան Հակոբը (գմրուքչիա) հիմնել է 19-րդ դ. սկզբին Վիեննայում «**Ֆրենկ հաղթանակ»-ն (ծաղկավոր ճայք կառոր)**:

109 Սերոբե (Սերովբեդրոս) ամիրա Էրիվանցի Մինասի որդին 1715-ին գալով Պոլիս ժամանակի Մեծ վեզիրի սեղանավորն է եղել: Եղել է խասի ոսկերչապետը:





| | | | |
|---|---|---|---|
| 188. Ֆենիկ Ամիրա | 1811 | | Պոլիս |
| 189. Փափազյան Միսակ | 1850ն. | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 190. Փափազյան Հովհաննես | | | Ակն*, Պոլիս |
| 191. Փափազյան Մկրտիչ(Միսակի եղբ) | | | Ակն*, Պոլիս |
| 192. Փափազյան Մարտիրոս | | | Ակն, Պոլիս |
| 193. Փափազյան Գևորգ (Բաղչեվանօղլու) | 1807-1856 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 194. Փափազյան Պետրոս | 1780ն | | Պոլիս |
| 195. Փափազյան Մկրտիչ | 1780ն | | Պոլիս |
| 196. Փափազյան Սիմոն | 1801-35թթ. | սեղանավոր | Պոլիս |
| 197. Փափազյան Խնդիր(որդին)[110] | 1835 | սեղանավոր | Պոլիս |
| 198. Փափազյան Ճանիկ(Սիմոնի որդին) | 1776-1856 | սեղանավորապետ | Պոլիս |
| 199. Փափազյան Մանուկ (Սիմոնի որդին)[111] | 1835 | սեղանավոր | Պոլիս |
| 200. Փիրղալեմյան Պետրոս | 1790 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 201. Փիրղալեմյան Հովհաննես | 1834 | սեղանավոր | Պոլիս |
| 202. Փիրղալեմյան Խաչատուր(որդին) | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 203. Փիրղալեմյան Ստեփանոս կամ | | | |
| 204. Փիրյանց կամ Խաչատուրյան | | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 205. Փիրղալենցի Սարգիս | 1780ն | | Պոլիս |
| 206. Փշմիշյան Կարապետ(Փշմիշպաշի) | 1750-1802 | սեղանավոր | Ակն |
| 207. Փշմիշյան Միքայել (որդին) | 1785-1849 | սեղանավոր | Պոլիս |
| 208. Փշմիշյան Հովհաննես(Կարապետի որդին) | 1799-1851 | սեղանավոր | Պոլիս |
| 209. Փշմիշյան Գրիգոր(Կարապետի որդին) | 1797-1868 | սեղանավոր | Պոլիս |
| 210. Փշմիշյան Ճանիկ[112] | 1850-ական թթ. | պալատական առաջին | Ակն, Պոլիս |
| 211. Փշմիշյան Միսակ | 1850-ական թթ. | կարգի պաշտոնյաներ | Ակն, Պոլիս |
| 212. Փշմիշյան Նիկողոս(Միք.որդին*) | 1830-40թթ. | սեղանավոր | Պոլիս |
| 213. Փշմիշյան Նահան | 1830-40թթ. | սեղանավոր | Պոլիս |
| 214. Փոլոքյան Հարություն | 1842 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 215. Քարաքաշյան(ն) Աբրահամ փաշա | 1767-1827 | նախարար | Եգիպտոս |
| 216. Քարաքաշյան Երամ | 1768-1823 | սեղանավոր | Եգիպտոս |
| 217. Քյուրքչյունեանց (յան) Պետրոս | 1774-1849 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 218. Քյուրենց Գրիգոր(Քոլոյան) | 1758 | սեղանավոր | Ակն, Պոլիս |
| 219. Քյուրենց Համբարձում | | | Ակն, Պոլիս |
| 220. Քյուրենց Հովհաննես(որդին) | | | Պոլիս |
| 221. Քալյան Սերվեն Ծոնա | 1738-1818 | | |
| 222. Օդյան Պողոս | (1795-1862), | արքունի ճարտարապետ | Պոլիս |

110 Խնդիր Խնդիրյան (1853-1932). **Խնդիր ամիրա Փափազյանի** (-1864) թոռն է: 1884թ. ավարտել է Փարիզի բժշկ. համալսարանը, միջազգային համբավ է ունեցել: Եղել է ներքին հիվանդությունների մասնագետ: Իմացել շատ բժիշկներ, զբաղվել է մասնավոր պրակտիկայով, իր սեփական դարմանատունն ունեցել Պոլսում: Աշխատանքնաչման մեծ վարպետ է եղել: Նրան է պատկանել Բոսֆորս կղզու մոտի գյուղի մեջ ունեցած վարքին կղզակը, որն իր անունով է կոչվել:

111 **Մանուկ, Ճանիկ, Խնդիր** ամիրաները 1832թ. սև քաղաքային գործերի հետ կապված՝ պատժվել են:

112 **Ճանիկ ամիրան** 1856թ. Ռումելիհիսարում Ծաղկոսյան խառը նախակրթարանն է բացել, նաև Ս.Մանգուղիոս եկեղեցին վերաշինել ու բացել է տվել:



Թորգոմ Բոյաջյան. «Յալաստան» մասոնական օթյակի ղեկավարներից

Հայկական մասոնական օթյակներից հայտնի են եղել պոլսահայության «Հայկ» (Օրիոն), «Սեր» և Զմյուռնիայի օթյակները[13]:

Օթյակներից երկրորդը՝ «Սեր»-ը, հիմնադրված Պոլսում Արթին Նորատունկյանի կողմից 1866թ. մայիսի 7-ին, ընտրել էր «Գիտություն, ազատություն, աշխատություն, եղբայրություն» նշանաբանը: Պաշտոնական հիմնադրումից հետո այն վերելք է ապրել: Հայկական մասոնական այս օթյակին անդամակցել են արտասահմանում կրթություն ստացած մտավորական շատ հայ, թուրք պալատական պաշտոնյաներ: Դրանցից են ապագա Մուրադ 5-րդ սուլթանը՝ Շահզադե Մուրադը, սուլթան Աբդուլմեջիդի և սուլթան Աբդուլազիզի ամենամտերմավորներից[14], «սատաս-քարտուղար», պալատական նախարար, կոմպոզիտոր Ալի Հայդարը[17], Նամըք Քեմալը, սադրազամներ Միդհատ փաշան, Քեչեջիզադե Ֆուադ փաշան, Իբրահիմ Հաքքը փաշան, առաջին լուսավորիչ գրող Շինասին, Բեռլինում դեսպան Սադուլլահ փաշան, Թունիսցի Հայրեդդին փաշան, արքայազներ՝ Քեմալեդդինը և Նուրեդդինը: Բոլորը «Սեր» օթյակի անդամներ են եղել: Նրանց բոլորի լուսանկարները Աբդուլլահ եղբայրների ալբոմներում ենք գտնում:

1906թ. Սկրտիչ Թորասյանը Պերայում գտնվող իր հայտնի խանի բակի ս.Երրորդության եկեղեցուն է նվիրում 2 կից շենքերը: Ռեստորանի մասը կրկին հյուրանոց է դարձվում: Այնտեղ տեղի էին ունենում թուրք մասոնների կողմից թուրքական ազգային ցանցը հիմնադրելու առաջին հավաքները: Ներկա են լինում տարբեր տեղերի ու տարբեր օթյակների, ազգերի ներկայացուցիչներ: Ֆինանսական խորհրդատու Ֆերիդ Աստոն զեկուցում է Սելանիկի մասոնական երիտասարդ ու ուժանտիկ օթյակի մասին: Նա հայտարարում է, որ ժամանակն է թուրքական զուտ ազգային օթյակ հիմնելու պահը, իսկ բոլոր անհրաժեշտ միջոցներն արդեն պատրաստ են:

1906թ. օգոստոսի 22-ին ֆրանսիական հովանավորությամբ ժողով հրավիրելով՝ Նորատունկյան խանում հիմնվում է «Ռենեսանս» մասոնական օթյակը: 1908թ. հուլիսի 13-ին հիմնադրված օսմանյան մասոնական «Ռենեսանս» օթյակի 14 հիմնադիր անդամներից 12-ը 33-րդ աստիճան են ստանում[18], այդ թվում՝ Միչել Նորատունկյանը, մնացածը՝ թուրքական

13 19-րդ դարի երկրորդ կեսին Իզմիրում գործել են «Հոմեր» օթյակը, որը հիմնականում հրեաներից է բաղկացած եղել և «Մելես»-ը՝ որի հիմնականում հայեր են եղել: Սուսամբուլյան «Ռենեսանս»-ից (1906) հետո ֆրանսիական «Մեծ Արևելքի» հովանու ներքո գործող չորրորդ օթյակը եղել է «Անատոլիայի արև» (1918):

14 Երկու սուլթանների մերձավորագույն մարդկանց ներկայությունը կասկած չի հարուցում օթյակի նկատմամբ Սուլթանների լավագույն վերաբերմունք և տեղեկացվածությունը, եթե չասենք ավելին...

15 Չի բացառվում այս երկու սուլթանների եթե ոչ անդամակցությունը, ապա կապվածությունն ու համակրանքը այս օթյակի նկատմամբ:

16 Բուրգի երեք աստիճաններից բարձրագույնը՝ 30-33ն է: Այս աստիճանն ունեցող մասոնները իրավատու








[illegible]




ԱՄՆ նախագահ Հարրի Թրումենը Ararat կոչվող օթյակի գլխարկով

Մեջլիսի անդամներ: Փարիզը, ապա նաև Ժնևը դառնում են հայ և թուրք մասոնների, դաշնակների, հնչակների հակաթուրքանական կոնգրեսների ու ժողովների կենտրոն: Հայ, ինչպես և մյուս ժողովուրդների մասոնականության հակված խավերում ներշնչող հանգամանքը է եղել ոչ միայն օթյակների անդամների հզորությունը, հարստությունը, այլև հանրահայտ անունների փաստը: Այդպիսի անուններից են եղել Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ Մեծը (եղել է Գերագույն պատրիարք), Նապոլեոն Բոնապարտը, Ջուզեպպե Գարիբալդին, Արաբալը, երաժիշտներից՝ Մոցարտը, Պագանինին, Հայդնը, գրողներից՝ Գյոթեն, Վալտեր Սկոտը, Օսկար Ուայլդը, Մարկ Տվենը, Արթուր Կոնան Դոյլը, Ռեդյարդ Կիպլինգը, Ռոբերտ Բյորնսը, արդյունաբերողներ- բանկային մագնատներ՝ Հենրի Ֆորդը, Թոմաս Լիպտոնը (թեյի արքա), Ռոտշիլդները, գիտնականներից Ալֆրեդ Նոբելը, ամերիկյան նախագահների երկու երրորդը, սկսած Ջորջ Վաշինգտոնից մինչև Թեոդոր Ռուզվելտ (հիմնականում Մեծ մագիստրոսների աստիճանով): Հայտնի է ԱՄՆ նախագահ Հարրի Թրումենի դիմանկարը՝ «Արարատ» կոչվող օթյակի գլխարկով ու փնջաշանով: Անգլիայում մասոնականությունը հաշվում է 4 թագավորներ, 14 արքայազններ, ինչպես նաև Ուինսթոն Չերչիլը:

«Յըլդըզ» պալատի արտաքին հարաբերությունների բաժնին անհանգստացրել է Թուրքիայից գաղթած հայկական կուսակցությունների հակաթուրքանական գործունեությունը եվրոպական երկրներում, նրանց գործակցումը թուրք հակաթուրքանական միությունների և եվրոպական հետախուզական գործակալությունների հետ: Բ.Դռան խորհրդակցություններում արտասահմանում հայերի հակաթուրքանական գործունեությունը հաճախ է անհանգստության առիթ տվել ու քննարկումների նյութ դարձել: Յըլդըզում հատուկ մի բաժին էր ստեղծվել, որը արտասահմանում հայ կուսակցությունների, մասնավորապես նրանց հակաթուրքանական գործունեությամբ էր զբաղվում: Այս բաժնում ևս հայեր են աշխատել: 1888թ. Սադրազամ Քյամիլ փաշան հրավիրել է որոշ հայ երևելիների, Պետական խորհրդի անդամների (Արթին Տատյան, Հովհաննես Վահան, Սերվիչեն, Հովհաննես Նորատյան) խոսելու դրսում եղած որոշ հայերի կողմից անկարելի ընթացքի մասին, երկրում հայերի երաշխիքի

են դրաչելու օթյակի ներքին, ինչպես և արտաքին աշխարհում կարևոր իրադարձությունները: Համաշխարհային մասոնականությունը գլխավորում է «գերագույն պատրիարքը»: Տես նաև՝ Paul Dumont, *Fransız Masonları ve Türk Bağımsızlık Mücadelesi (1919-1923)*. Tarih ve Toplum., Ist., 1985, eylül, s. 26-32.


Տիրան Քելեկյան

մասին: Այսպիսի խորհրդակցությունները վերաճել են Փարիզ և Ժնև սուլթանական տարբեր հայ բանագնացների առաքելության: Հայտնի են Տիրան Քելեկյանի 3 ուղևորությունները Ժնև, որոնք այդպես էլ հաջողություն չունեցան: Դրանցից ակնկալվում էր դաշնակցական ու հնչակյան կուսակցություններին հաշտեցնել ու զսպել պալատի դեմ ձեռնարկվող գործողություններից, Եվրոպայում բուրք հակասուլթանական շրջանակներին հարեկից, որն ինչպես ապացուցվեց, մեծապես վտանգի տակ էր դնում կայսրության հայ հպատակների անվտանգությունը:

Ժնևում դաշնակցականների կենտրոնական միության հետ սուլթանի կողմից բանակցող Արփին Տատյան փաշան ևս նկատելի հաջողություններ չի կարողացել արձանագրել իր առաքելության առթիվ: Եվրոպայում գտնող հայ կուսակցականներն առաջարկում էին դադարեցնել վերադարձողների նկատմամբ կիրառվող հետապնդումները: Թուրքերի ու քրդերի կողմից բռնվածներին վերադարձնել տեղը, տունը, ապատել բաղբանտարկյալներին: Հակառակ դեպքում չէին կարող վստահել սուլթանի բարյացակամությանը:

Արփին Տատյան փաշայի որդուն՝ Տիրան բեյ Տատյանին 1896թ. ուղարկում են Ժնև, որպեսզի դաշնակցականների ղեկավարների հետ բանակցություններ վարի՝ վերջ տալու համար սուլթանական տերության դեմ նրանց հարձակումներին: Սուլթանի կողմից Ժնև, ներբակյան անգամ դաշնակցականների հետ ապարդյուն հանդիպման է ուղարկվում Վաղինակ Աճեմյանը: Մինչ Սուլթանը խոստանում էր 9 ամիս չանցած բարեփոխումներ կատարել երկրում, հայ կուսակցական ղեկավարները, վտանգելով կայսրության հայերի վիճակը, անհաղորդ էին մնում բանագնացների առաջարկություններին, պայքարի մեջ մտնում միմյանց (դաշնակներն ու հնչակները) հետ, դաշնակցելով հակասուլթանական տրամադրությամբ բուրք վտարանդիների հետ: Աղքիանապոլսում, դեռևս 1878թ. փետրվարին, հայկական եկեղեցում, ռուս բարձրաստիճան զինվորականության ներկայությամբ հոգեհանգիստ էր կատարվել թուրքերի հետ մարտերում զոհված ռուս զինվորների համար: Թուրքական կառավարության ուշադրությունից զերծ չէին կարող մնալ ռուսասիրության այս և նման վտանգավոր դրվագները:

1907թ. Աբդուլհամիդ Բ-ի դեմ կազմակերպված երկրորդ կոնգրեսը տեղի է ունենում Փարիզում՝ Բարոն դը Լորմեսի տանը: Դաշնակցականներն իրենց ներբին մասնակցում են Փարիզում երիտթուրքերի կոնգրեսին՝ սուլթանի դեմ:

Երկու տարի անց, 1909թ., հայկական 3-րդ մասոնական օթյակն է հիմնադրվում Խարբերդի Հյուսենիկ գյուղում «Եփրատ» անունով՝ Էդինբուրգի շոտլանդական մեծ օթյակի հովանավորությամբ, որին անդամագրվում էին բժիշկներ, վարդապետ, պրոֆեսոր, մոտ 10 անուններ:





Սալոնիկում 1909թ. հիմնադրված Թուրքիայի «Մեծ Արևելք» օթյակի զինանշանի վրա գրված էին *Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն և Առաջադիմական ուժերի միություն* բառերը:

1918թ. մայիսի 1-ին 1185 անդամից բաղկացած 4-րդ հայկական մասոնական օթյակն է հիմնադրվում Պոլսում՝ «Հայաստան» անվամբ, Էդինբուրգի Շոտլանդական Բարձր օթյակի հովանավորության ներքո: Օթյակի վարպետ ղեկավարը Թորգոմ Պոյաճյանն է եղել: Մինչ հայ երևելիներն ու մտավորականները «եղբայրություն էին» խաղում ֆրանսիական ու շոտլանդական վարագույրներով բեմում, 1910թ. հոկտեմբերին Սելանիկում տեղի ունեցող իթթիհադականների կոնգրեսում մեծամասնության կողմից ընդունվում է «Թուրքիան թուրքերի համար» նշանաբանով գաղտնի որոշումների շարքը[17]:

Թվում է, թե մասոնական օթյակների շուրջ համախմբված տարբեր ազգեր ու կրոններ ներկայացնող «եղբայրները» միասին պետք է «եղկեին խաղաղության ժայռը» հանուն Օսմանյան կայսրության ապագայի: Սակայն այս խառնարանում այնքան տարբեր երկրների, եկեղեցիների, միավորումների ու անհատների շահեր էին եփվում, որ արդյունքը բարենպաստ չէր կարող լինել:

Պոլսում եվրոպական տերությունների դեսպաններն ու հյուպատոսներն իրենց ներբին ցանում էին տարբեր կերպ միջամտել Կայսրությունում ազգային քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, եվրոպական գաղափարների հաստատման առումով: Այն հիմնականում հանդիպում էր պալատի ու հետադիմական հոգևորական դասի դիմադրությանը: Ելնելով Սասունի դեպքերից ու հենվելով Բեռլինի կոնֆերանսի 61 հոդվածի վրա, 1895թ. մայիսին հայկական Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սվազի գավառներում բարեփոխումների, դրանց տնտեսական և իրավական կառավարման համար Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի դեսպանների կողմից դրվում է ներկայացվում կառավարությանը: Նրանք պատրաստում են նաև բարեփոխումների ծրագիր, պետության ու իրենց կողմից վերահսկվող համապատասխան հանձնաժողովներով հանդերձ: Օտար դիվանագետների[18] կողմից իրենց ներքին գործերին այսկերպ միջամտելը կառավարության կողմից անընդունելի ու վտանգավոր են նկատվում: Ջևդաթ փաշան սուլթանին ուղղված հուշագրում (մեմորանդում) նկատում է, որ եվրոպական պետությունների

17 **Գրիգոր Զոհրապը** չի անդամակցել մասոնական օթյակներին: Նա «Աիրար» կուսակցության անդամ է եղել 1906թ.-1913թ. Թալեաթ բեյը մտնում է Մակեդոնիայի «Ռիզոլյա» մասոնական օթյակը:
**1911թ.** Օսմանյան պառլամենտում «Իթթիհատ վէ Թերաքքը» -ի դեմ «Հյուրիյեթ վէ Իթիլյաֆ ֆրկասը» կոնգրեսում միացյալ ճակատ է կազմվում արքայազն Սաբահեդդինի գլխավորությամբ, որի մեջ են մտնում հայերը, հույները, բուլղարները, արաբները և «Հնչակ-ի մյուսպարիկ» ոչ մի կուսակցության չպատկանող խումբը: «Իթթիհատ վէ Թերաքքը»-ի (Միություն և առաջադիմություն) կենտրոնը Սելանիկից տեղափոխվել էր Պոլիս: Նախորդ կոնգրեսին նախատակ բուրք ազգերին թուրքացնելու կայիտ կալերն 1911թ. կոնգրեսին ավելի էին սրվել: Այս հանգամանքն առիթ դարձավ, որպեսզի շատերը անդամակցեն «Հնչակ-ի մյուսպարիկ»-ին: Սաղյազադե Մեհդի փաշան կոչ է անում հաշտության բարենպաստ կետեր մտցնել եղափոխականական խմբավորումների փոխխման հարցում: Իթթիհատականներն իրենց կողմով ընտրվածներին պարտադրում էին չփոխել իրենց կուսը: Դաշնակցական երեսփոխան Վարդգես Էֆենդին իր կողքում անմիջականություն, այս խմբից մյուս խումբը փոխելը համարում է պառլամենտական մեծ թերություններից մեկը: Տես՝ Մեկյանցյան Րիֆաթ, *Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրը*, Բեյրութ, 1968:
18 Կարծում ենք օտար դիվանագետների այս նախաձեռնությունների հարցում վերջին դերը չեն խաղացել պոլսահայ բարձրաշխարհիկ շրջանակների հետ նրանց ջերմ հարաբերությունները, դեսպանատների ու հյուպատոսարանների հայազգի խորհրդականներն ու թարգմանիչները:

դեսպանությունների կողմից վիլայեթների բարեփոխման պահանջները Պոլսում բուռն ալիքի պատճառ են հանդիսանում: Սուլթանը համաձայնվում է ստորագրել նախագիծը:

Երբեմն մեծագույն զլուռերը, ճակատագրական հեղափոխությունները ժողովուրդների կյանքում առիթ են դառնում որքան էլ որ մեծ առաջընթացի, այնքան էլ՝ մեծագույն ողբերգությունների: Եվ որքան էլ որ դա ցավալի է, թվում է, թե այն անխուսափելի է գալիս: Չէ որ այդ ճանապարհն այնքան զայթակղիչ է: Այդպես եղավ նաև արևմտահայության հետ: Ֆրանսիական հեղափոխական գաղափարների ներթափանցում, կայսրության եվրոպականացում ու առաջընթացի հույսեր, ընդհանուր զարթոնքի մթնոլորտ ողջ կայսրությունում և մասնավորապես արևմտահայ կյանքում: Իսկ ողբերգություններն էին՝ կայսրության, ապա նաև թուրքականության մուտքը, որ ծվատեց Արևմտյան Հայաստանը, հայ ժողովրդին: Իրարամերժ կուսակցություններ ու միություններ, տարբեր եկեղեցիներ, դասակարգեր, ճամբակյանություն… Այս ամենը բերում է ազգային մի «հիվանդության ծայրակետի», երբ սկսում են «համարձակորեն» բարձրաձայնել սեփական ազգի խոցերի մասին՝ ավելորդ առկամառություն, այլ ազգերի նկատմամբ չափից ավելի երկրպագում, ի վնաս սեփական ժողովրդի, և անհանդուրժողականություն ազգակցի նկատմամբ: Չէին կարողանում անվերապահորեն ընդունել ամենակարևորը՝ թե *հայ ժողովրդի ուժը յուր միաբանության մեջ է*: Հենց այսպիսի ծվատված վիճակն է ժողովուրդներին մեծագույն ողբերգությունների հասցնում:

* * *

Դիվանագիտական առաքելությունները չեն սահմանափակվել տարբեր երկրների ներկայացուցչությունների մաս կազմելով ու գլխավորելով: Սուլթանի կողմից եվրոպական արքայական դեմքերին տարբեր առիթներով ներկայանալու, նվերներ, շքանշաններ հանձնելու կարևոր արարողությունների, որ անհրաժեշտ է եղել եղյթներ ունենալ, որպես կանոն, տեսնում ենք ոչ թե դեսպաններին, այլ հիմնականում նրանց հայ խորհրդականներին:

Հայազգի պաշտոնյաները անդամակցել են դիվանագիտական, մասնավորապես պատերազմական ժամանակներում տարբեր տիպի բանակցությունների ու հաշտության դաշնագրերի ստորագրմանը, միջազգային կազմակերպությունների համաժողովներում, նաև՝ միջազգային ցուցահանդեսներում ներկայացրել են Կայսրությունը, ստորագրել բազմաթիվ կարևոր համաձայնագրեր, վարել կարևորագույն բանակցություններ, ինչպես օրինակ, 1885թ.Պոլսում՝ Շվեդիայի և Նորվեգիայի դեսպանների հետ միասին, ականակիրների և շոգենավերի պատվերի շուրջ համաձայնագիրը Թուրքիայի կողմից ստորագրում է Հակոբ Գազազյանը: 1885թ. Հակոբ Գազազյանը ֆինանսների նախարար և Արթին Տադյանը Արտգործնախարարության խորհրդականի պաշտոններ են ստացել: Որպես կանոն Արթին Տադյանն է ընդունել բոլոր երկրների պատվիրակներին, թարգմանեներին: Նրա ներկայությամբ է սադրազամ Սաիդ փաշան ընդունել դեսպաններին կառավարությունում և այլն:

Հայ պետական գործիչներին, դիվանագետներին հանձնարարվում էր նաև անդամակցել ու դեկավարել, մասնավորապես, բալկանյան ժողովուրդների ու սուլթանական պալատի միջև տարբեր քաղաքական հանձնաժողովները: 1886թ. **Սահակ Աբրո Չելեպին (**1823-1900) Բ.Դռան կողմից նշանակվում է թուրք-բուլղարական հանձնաժողովի անդամ, ապա՝ հանձնաժողովի նախագահ: Չմոռանանք նաև, որ 1878թ. Բեռլինի դաշնագրով, երբ Բուլղարիան իրա-









Սահակ Աբրո

վունք ստացավ իր համար իշխան ընտրելու, Ֆրանսիան և Անգլիան որպես թեկնածու առաջարկել էին Նուպար փաշային՝ բուլղարական գահի վրա: Ռուսաստանը մերժել էր, գտնելով, որ դա սատարեց կլինի հայ ազատագրական շարժումներին: 1894թ. 3 անգամ արդեն վարչապետ եղած Նուպար Նուպարյանը Խտիվի բացակայության ժամանակ նրա պաշտոնակատարն էր: Չենք խոսում Եգիպտոսում հայ նախարարների, սպասավորների ու բարձրաստիճան պաշտոնյաների, հրամանատարների մի ողջ բանակի մասին:

1876 և 1909 թթ. Մեջլիսի հայազգի երեսփոխաններ[19], որոնք ներկայացրել են մինչև 12 տարբեր գավառներ, աչքի են ընկել իրենց բարձր կրթությամբ, կայսրության հնագույն մշակույթը ներկայացնող ժողովրդին վայել ողջ արժանապատվությամբ, երեսփոխաններից ակնկալվող մեծ հմտությամբ, իրենց գավառների շահերը լավագույնս ներկայացնելու դիվանագիտական հմտությամբ ու ողջամտությամբ: Դրանք տարբեր դասակարգեր, բնագավառներ, հասարակական, սոցիալական տարբեր խավեր ու քաղաքական համակրություններ ունեցող անձեր են եղել, պետական ծառայողներ, մտավորականներ: Ի դեպ, Մեջլիսի պատվո ճաշկերույթները սադրազամները սովորաբար ամառնական օբյակի կարևոր անդամ Թոքատլյանի՝ Պերայի կամ Թարաբիայի հյուրանոցների շքեղ ճաշարաններում էին կազմակերպվում[20]:

Օսմանյան կայսրության դիվանագիտական ապարատի եվրոպականացման առաջին շրջանում հայտնի են սուլթանական պալատի, հայ-թուրք բարեկամական հարաբերությունների բազմաթիվ իրական պատմություններ: Այսպես օրինակ, 1848թ. Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամների հեղինակությամբ հրատարակվում է «Հատընտիր պատմութիւնք վարուց Օսմանեան թագաւորաց եւ վէզիրաց» գրքույկը: Տիտղոսաթերթում նշված է, որ գիրքը տպագրվել է Փարիզում Օսմանյան կայսրության մեծ դեսպան Սուլեյման փաշայի ծախսով: Պարզվում է, որ Սուլեյման փաշան Փարիզ ուղևորվելու ճանապարհին Վենետիկում այցելում է Ս.Ղազար վանք: «Այս ուսումնական, ազնվական ու բարեսեր Դեսպանն իր սրտի զգացմունքն է արտահայտում ու խրախուսական խոսքերից հետո փափագում, որ իր ծախքով, աշխարհաբար լեզվով հրատարակվի փոքրիկ գրվածք «մեր ազգին օգտակար ու զվարճալի»,- կարդում ենք գրքի առաջաբանում: Շնորհակալությամբ ընդունելով դեսպանական բնծան, Մխիթարյանները հրատարակում են այս գիրքը, նկարազարդված իրենց աշակերտներից Մելգոմյանցի հրաշալի վիմագրություններով:

[19] Մեջլիսի հայազգի պատգամավորների անունները տես Հավելված բաժնում:

[20] Այս ճաշարաններում հանդես էին գալիս եվրոպական հրավիրյալ նվագախմբեր, մեներգիչներ ու պարուհիներ: Այս հանգամանքը լուսացնել կրակերության էր հաղորդում ու դեպի իրեն ձգում «եվրոպական» ռեստորանային մթնոլորտի ու խոհանոցի սիրահար բարձրաշխարհիկ պոլսեցիներին: Այսպես օրինակ, Պոլ Լանգի 35 հոգանոց նվագախումբը հաճախակի էր գալիս Թարաբիայում, Սուլթան փաշայում, Պերայում՝ Թոքատլյանի օրերում:

* * *

Իհարկե, թուրքական դիվանագիտական ոչ մի ներկայացուցչություն ու առաքելություն չի գործել առանց հայ անձնակազմի անդամի, դեսպանից, դեսպանորդից, թարգմանչից սկսած մինչև հյուպատոսների, քարտուղարների ու այլ պաշտոնների պարտականությամբ գործողների:

Պատկառելի հատորներ կարելի է գրել Օսմանյան կայսրության դիվանագիտական ու հյուպատոսական կորպուսի հայազգի ներկայացուցիչների մասին: Ավելին, այդ գրքերի հերոսներից առնվազը 100-ը իրենք էլ արժանի են առանձին հատորների, ու նրանց գործունեության հիման վրա կարելի է ուսումնասիրել Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության քարտեզն ու պատմությունը[21]:

Այս բացը որոշ չափով լրացվել է եգիպտահայ մրցույթը ներկայացնողների առումով, որը Կայսրության հայ երևելիների մասին եղած շարադրանքներում՝ հիմնականում կենսագրությունների համառոտ ու պարզունակ շարք է ներկայացնում:

Այնուամենայնիվ, ովքե՞ր էին հայազգի նշանավոր դիվանագետները, վարչական ասպարեզն իրենց ուսերին տարած պաշտոնյաները[22]:

* * *

19-րդ դ. առաջին կեսերից հաստատվեցին Օսմանյան կայսրության դեսպանատներ Փարիզում և Լոնդոնում (1834), Վիեննայում (1835), Բեռլինում (1837), Աթենքում (1840)[23] և հյուպատոսական ծառայություններ Լոնդոնում, Վիեննայում, Փարիզում: Թուրք ազգային դիվանագիտական կորպուսը սկսեց սովորել լեզուներ, ծանոթանալ եվրոպական դիվանագիտական մշակույթին ու օրենքներին:

Արտգործնախարարության գործունեության հաջող կազմակերպման գործում մեծ ներդրում են ունեցել հայ պաշտոնյա-դիվանագետները, տարբեր վարչությունների աշխատակիցները: Ամենամեծ հայկական անձնակազմը թարգմանությունների հետ կապված վարչություններն են ունեցել: Արտգործնախարարության քարտուղարության դիվանն իր տարբեր կարգերի քարտուղարներով, իրավաբանների ու իրավաբանական խորհրդատուների բաժինը, որ միջազգային պայմանագրերի մասնագետներով էր լրացված, կազմված են եղել հայերից: Արտգործնախարարությունում որպես քարտուղարներ հայտնի են եղել հետևյալ անձինք՝ Գարագաշ Ռուբենը, Չրաճյան Գրիգորը, Հասունի Անդրեասը, Ներսես Բեյ Ալլահվերդին, Տիգրան Չայանը և այլք: Արտգործնախարարության Օտար թղթակցության դիվանը երկար ժամանակ տնօրինել է Հմայակ Սեֆերյանը, իսկ Օտար մամուլի դիվանի ղեկավարների մեջ տեսնում ենք Նշան Սեֆերյանին, Սիմոն Փափազյանին: Դիվանատան փոխտնօրենն է եղել Միհրդատ Պապազյանը, իսկ հաշվապահական բաժնի հիմնական մասնագետը՝ Խաչիկ Փափազյանը:

Արտգործնախարարության *Իրավաբանական վարչությունում* հայ իրավաբան-խորհրդականները ճնշող մեծամասնություն են կազմել: Նրանց կողմից են կազմվել, խմբագրվել և վերջնական տեսքի բերվել արտասահմանյան երկրների հետ կնքվող բոլոր համաձայնագրերը, համաձայնեցնելով այն միջազգային ընդունված չափանիշներին: Կառավարությունում և արտգործնախարարությունում են աշխատել՝ Հրանտ բեյ Ասլան, (մինչև 1917թ), Նշան Ջիվանյանը, Պողոս Քերեստեճյանը, Էդվարդ բեյ Մասքն(1857-1908), Մարտին բեյ Սեֆերյանը, Հրանտ Նորատունկյանը և ուրիշներ, որոնց 19-րդի դարավերջին տեսնում ենք արտասահմանյան հյուպատոսարանների և դեսպանատների կարևոր պաշտոններում: Հայ գլխավոր հյուպատոսներ են ներկայացրել Օսմանյան կայսրությունը Անգլիայում, Ավստրո-Հունգարիայում, Պորտուգալիայում, Պրուսիայում, Իտալիայում, Հոլանդիայում, Ամերիկայում, Հունաստանում, Շվեդիայում, Նորվեգիայում, Իրանում, Բելգիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ռուսաստանում, Սերբիայում, Մոնտենեգրոյում, Իսպանիայում, Դանիայում:

Կարևոր բաժիններից է համարվել *Օտար մամլո դիվանը*, որը սովորաբար տնօրինել են լեզուների գիտակ հայ թարգմանիչները: Արտգործնախարարության կազմում են համարվել կայսերական պալատի առաջին և երկրորդ, երրորդ կարգի թարգմանիչները:

Մեծ թիվ են կազմել *Թղթակցության ու փաստագրերի թարգմանական* բաժնի հայ պաշտոնյաները:

**Բաղդասարյան Օհան**-Արտգործնախարարության *Հյուպատոսության վարչության* (գրասենյակի) տնօրեն: Բեռլինի դեսպանատան խորհրդական (1885): Գերմանիայից ստացել է 2-րդ աստիճանի ***Couronne de Fer:*** Արժանացել է բարձրագույն ***Ulây-ı Evvel-I*** աստիճանի (1891):

**Գարագաշյան Ռուբեն**-*Կառավարության առաջին քարտուղար*: Ստացել է 2-րդ աստիճանի ***Nişan-ı Mecidi*** (1901):

**Գույումջյան Միքայել**-Արտգործնախարարության *Արխիվի տնօրեն*, թարգմանիչ: Ավստրիայի կառավարության կողմից ստացել է 5-րդ աստիճանի ***Couronne de Fer*** (1884)[24]:

**Երամյան Ղազարոս** -Կառավարության *Թարգմանական բաժնի* տեղակալից գլխավոր քարտուղար է դարձել (1885):

**Համամճյան Սարգիս**-*Նամակների բաժնի* պետ: Իտալական կառավարության կողմից ստացել է ***Grand Couron d'Itali*** շքանշանը (1869):

**Հրանտ Ասլան բեյ**-*Կառավարության գրասենյակի* պետ (1899): Ռումինական կառավարության կողմից ստացել է *Ռումինական մեծ խաչ* (1902):

**Սեֆերյան Նշան** (1848-1906) -*Պալատի երկրորդ թարգմանիչ, Արտասահմանյան նամակագրության բաժնի պետ, ապա՝ Արտգործնախարարության քարտուղար և Պաշտոնական նամակագրության բաժնի պատասխանատու:* Իտալական կառավարության կողմից ստացել է ***Grand Couron d'Itali*** շքանշանը (1873) և 3-րդ աստիճանի ***Chevalier de Légion d'Honneur*** (1883). Ճապոնիայի կառավարության կողմից ստացել է 2-րդ աստիճանի «Արև» (*Կեոկուջիցշու սհո*, 1885) շքանշան: Կառավարության *Արտաքին կապերի քարտուղարության* տնօրեն Նշան Սեֆերյանը Օսմանյան կառավարության կողմից արժանացել է բարձրագույն ***Ulây-ı Evvel-I*** աստիճանի (1894):

21 Եգիպտահայ մրցույթը ներկայացնող հայ երևելիների մասին տես Սոնա Զեյթլյան. «Հայերուն ներդրումը վաղ միջնադարեան և արդի Եգիպտոսի պատմութեան մէջ» ուսումնասիրությունում (Մոնրեալ, 2004):

22 Եվրոպական երկրներ առաքելության մեկնող թուրք, հայ դիվանագետներն ու հյուպատոսները գնալով առաջ, որպես սովորույթ, լուսանկարվել են Աբդուլլահ եղբայրների մոտ Պերայի լուսանկարչատանը:

23 Անդ.

24 Ավստրիայի կառավարության կողմից 5-րդ աստիճանի ***Couronne de Fer*** (1884) է ստացել նաև նրա գործընկեր Վահրամ բեյը. 4-րդ աստիճանի ***Couronne de Fer*** (1901) է ստացել Արտաշես Այտընյանը: Վերջինս Իրանի Շահից ստացել է 3-րդ աստիճանի ***Şir-ü Hurşid.***

գաղափարներով տոգորված: Աբդուլ Համիդ Բ-ն սպանեց օսմանյան Սահմանադրությունն իր օրորոցում: Միդհատ փաշան աքսորվեց՝ Սահմանադրական ժողովի «ոճիրը» քավելու: Գր. Օտյանը շոգենավով գաղտնի գնում է Փարիզ, ուր և պանդխտության մեջ մասամբ գրական գործունեություն ունենում «Վահրամ» ստորագրությամբ: Աբդուլհամիդ Բ սուլթանը բազմիցս իր դեսպանների միջոցով ցանկանում էր ետ բերել նրան Պոլիս, սակայն կասկածելով՝ նա չի վերադառնում: Նա Սահմանադրության ու այդ սերնդի կարկառուն դեմքն էր: 1887թ. թաղվել է Փարիզի Պեր լա Շեզ գերեզմանատանը:



Դավութ փաշա

**Կարապետ Արթին փաշա Դավուդյանը**, (**Դավութ փաշա**, կաթոլիկ, 1816-1873) առաջին քրիստոնյան էր, որ հասել է **մարշալի** բարձր աստիճանին: Թուրքական դիվանագիտության մեջ կարևոր դեր խաղացած երևելի անձանցից է եղել: Կրթությունը ստացել է Պոլսում, ապա՝ Բեռլինում: 24 տարեկանում (1840) ծառայել է Բեռլինի թուրքական դեսպանատանը որպես քարտուղար և թարգմանիչ[27]: Եվրոպական երկրների դիվանագիտական ներկայացուցչություններում, դեսպանություններում կարևոր պաշտոններ է վարել, վայելելով մեծ հեղինակություն: 1850թ. Օսմանյան կառավարության ներկայացուցիչ է ընտրվել Վիեննայի դեսպանատանը: Եղել է Վիեննայում դեսպան: 1856թ. ավստրիական կառավարության կողմից ստացել է ***François Joseph-Commandeur***-ի 2-րդ աստիճան[28], Բավարիայից՝ 3-րդ աստիճանի ***Bavaria*** խաչ և Վյուրթեմբուրգից՝ ***Wurdenberg*** 3-րդ աստիճանի խաչ: 1859թ. Շվեդիայի թագավոր Օսկարի կողմից ստանում է առաջին աստիճանի ***Kızıl Kutup Yıldızı*** (Հյուսիսային բևեռի աստղ) շքանշան, երբ աշխատում էր որպես գրաքննության բաժնի տնօրեն և Կառավարության առաջին թարգման: 1867թ. Նապոլեոն Գ կայսեր կողմից արժանացել է ***Chevalier de l'Egion d'Honneur*** շքանշանի: Հռոմի Պապը նրան շնորհել է ***Chevalier de St. Grégoire*** ասպետության առաջին կարգի շքանշան: Օսմանյան կառավարության կողմից ստացել է ականավոր մեծ ***Nişan-ı Osmani***:

Քաղաքական անսահման գիտելիքների պաշար ունեցող այս մարդուն, կայսրության կարևորագույն տեղերում պաշտոնավարելուց հետո, Եվրոպական 5 մեծ երկրների և Օսմանյան կայսրության համատեղ կազմված հանձնաժողովը 1861թ. Լիբանանի և Սիրիայի ինքնավար մարզերի ընդհանուր կառավարիչ (կուսակալ) է նշանակում՝ ***վեզիրի*** և ***փաշայի*** տիտղոսներով: Նրան շնորհվել է *մյուշիրի* (մարշալի) կոչում:

Ազգամիջյան բախումների շրջան ապրող Լիբանանում Դավուդյանը վարել է կրոնական հակամարտությունները նվազագույնի հասցնելու, իսկ տնտեսական, առևտրական, մշակութային զարգացումն առավելագույն զարգացման հասցնելու քաղաքականություն: Իր կուսակալության շրջանում նա փորձել է Լիբանանը և Կիլիկիան որպես միացյալ քրիս-

27 **Օհան Պալասանյանը** Բեռլինում Օսմանյան դեսպանատան խորհրդական է աշխատել:

28 Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում Արթին էֆ. Չրաքյանի կողմից պատրաստված մի նկար կա՝ Դավութ փաշան իր ստացած շքանշաններով:





տոնեական կիսաանկախ պետություն հաստատել: Նա տեղացիների կողմից մեղադրվել է «հայկական պետություն հիմնելու» նպատակ ունենալու և Լիբանանը հայացնելու համար:

1859թ. տնօրինել է Գրաքննության վարչությունը: 1860թ.՝ հեռագրական վարչությունը: 1868թ. Կարապետ փաշա Դավուդյանին փոխվում է Փոստ-հեռագրական, ապա՝ Օսմանյան կայսրության հասարակական կառույցները ղեկավարող Հանրօգուտ շինությանց նախարարի պաշտոնը: 1866թ. նա մեկական շաքարի ֆաբրիկա է հիմնում Ստամբուլում և Իզմիրում: Նրա գործունեության հաջողություններից մեկն էլ կայսրության եվրոպական ու ասիական մասերն իրար կապող Ռումելիի երկաթգծի շինարարությունն է, որի նշանակությունը երկրի տնտեսական կյանքում բացառիկ եղավ: Նրա առաջին գործն է լինում հնարավորություններ ստեղծել Ռումելիի երկաթուղու շինարարությունն իրագործելու համար: Այդ նպատակով նա գնում է Փարիզ, Վիեննա, ուսումնասիրում գործը, կարևոր մասնագետների հետ շփվում[29]: 2000 կմ երկարություն ունեցող այդ երկաթգծի ստեղծման համար բարոն Հիրշի հետ միասին գտնում են «Օսմանյան ընկերության» հիմնադրման անհրաժեշտությունը: 1870թ. այն իրականացվում է: 1871թ. այս պաշտոնը փոխանցվում է Քաբուլի փաշային՝ Դավութ փաշայի չափազանց հոգնածության պատճառով: Դավուդյանները մեծ աքսորի ժամանակ առաջին աքսորվողներից են եղել:

Նա գերման հին ցեղերին նվիրված իր ուսումնասիրության համար ընտրվել է Բեռլինի Գիտությունների ակադեմիայի անդամ և Գերմանիայի կանցլերից ստացել հատուկ մրցանակ:

1871թ. հիվանդության պատճառով հանգստյան է կոչվել, Սարըզ կոզի մեկնել, ապա՝ ֆրանսիական Բեառից քաղաքը, ուր և 1873թ. կնքել է իր մահկանացուն: Երախտապարտ լիբանանցիները նրա հիշատակը հավերժացրել են՝ Բեյրութի փողոցներից մեկը նրա անունով կոչելով:

Լիբանանի վերջին հայազգի կառավարիչը, որ հաջորդել է Դավութ փաշային, եղել է այդ երկրում բազմաթիվ բարենորոգումների հեղինակ՝ **Հովհաննես փաշա Կույումճյանը** (1858-1933): Պետական խորհրդի այս անդամը ևս ունեցել է մարշալի կոչում: Կրթությունը ստացել է Վիեննայի Մխիթարյան վարժարանում և Փարիզում, Հիսուսյան ուխտին պատկանող հռչակավոր Vaugirard հաստատությունում: Պոլիս վերադառնալով կարևոր պաշտոններ է վարել Արտգործնախարարությունում: 1899-1908թթ. եղել է Իտալիայում, Հռոմում թուրքական դեսպանատան Ա քարտուղարը, գործերի հավատարմատարը: Վերադարձին ընտրվել է Պետական խորհրդի անդամ և փոխարտգործնախարար: 1912թ. երբ Գաբրիել Նորատունկյանը նշանակվել է Օսմանյան կայսրության արտգործնախարար, որոշվել է, որ Հովհաննես Կույումճյանը հրաժարվի փոխարտգործնախարարի պաշտոնից՝ թուրքական որոշ շրջանակներին չգրգռելու համար: 1894թ. Հովհաննես Կույումճյանը նշանակվել է Հռոմում օսմանյան դեսպանատան Ա քարտուղար, 1899-1908թթ. երկու անգամ՝ ժամանակավոր հավատարմատար: 1905թ. ստացել է իտալական 3-րդ աստիճանի ***Croix*** (խաչ): Այդ տարիների համար սուլթանից ստացել է 3-րդ աստիճանի ***Osmaniye*** և 4-րդ ու 2-րդ աստիճա-

29 1868թ. Փարիզ և Վիեննա պետական բանակցությունների, այցելությունների արդյունքում հաջողացրել է կնքել Ռումելիի երկաթուղու (2 հազ. կմ) կառուցման պայմանագրերը: Դրա համար ստացել է առաջին աստիճանի ***Osmaniye*** և ***Mecidiye*** շքանշանները:

հյուր ներկայացուցիչների հետ: Սուլթանի հետ Յըլդըզի պալատում նրա պաշտոնական տեսակցությունները ժամույում նշվել են ժամերի ճշտությամբ, երբեմն առավոտյան 7-ից մինչև երեկո: Հունաստանից ստացել է ***St. Sauveur*** շքանշանը: 1885թ. Սուլթան Աբդուլհամիդ Բ-ն պահանջում է, որ Տառյանը պատրաստի և ներկայացնի համակողմանի մի գնկուցագիր ճնդուցների շրջանում կայսրությանը պատկանող սեփականությունների մասին: 1885թ. Արթին Տառյանը Արտգործնախարարության խորհրդականի պաշտոն է ստացել: Նա է ընդունել, ոոպես կանոն, բոլոր դեսպաններին կառավարությունում (1886թ. ԱՄՆ դեսպան Կոքսին և այլն): Սադրազամը հաճախ հրավիրում էր նրան՝ ժամերով խորհրդակցելու, առնվազն 2-3 ժամ:

1886թ. Արթին Տառյանը 1000 լիրա նվեր է ստանում կառավարությունից, 1887թ. վեզիրի աստիճան է ստանում: 1888թ. Արտգործնախարարության կողմից Բուլղարիայում ներկայացուցիչ է նշանակվում: Նրա պատասխանատվությամբ ու մասնակցությամբ են կնքվել բազմաթիվ կարևորագույն միջազգային պայմանագրեր: 1891թ. Ավստրիա-Թուրքիա առևտրական պայմանագիր կնքելու համար երկու կողմերի պաշտոնյաները Արտգործնախարարությունում՝ Արթին Տառյանի նախագահությամբ ու Անտառների և հանքերի գլխավոր տնօրեն Պետրոս Կույումճյանի մասնակցությամբ խորհրդակցության են հրավիրվել:

1892թ. Արթին Տառյանը դառնում է Ֆինանսների ու հարկային միացված նախարարության նախագահ: 1891թ. Արթին Տառյանի գլխավորությամբ կազմվում է մի հանձնաժողով, որ քննության է առնում կայսրությունում օտար փոստերի աված անսահման վնասարարությունները և դրանց առաջն առնելու ու վերացնելու համար հատուկ լուծ է նշանակվում կառավարությունում: 1897թ. Արթին Տառյանը Պետական խորհրդի անդամ է դառնում, արժանանում փաշայության տիտղոսի ու բազմաթիվ շքանշանների, այդ թվում *Nişan-ı Osmanî. Nişan-ı Mecidî. Nişan-ı İftihar* ականավոր պատվանշանների: Վիլհելմ Ա-ից ստացել է *Couronne de Prus*: Նկարներից մեկում Արթին Տառյանը պատկերված է ժամանակի գերմանական նորձևությանը հարիր բեղերով, այտամորուքներով (բակենբարդ):

Արտաքին քաղաքականության յուրերի բաժնում հայկական պարբերականներն ամեն օր տպագրել են Արթին բեյի, որպես խորհրդականի, չափազանց սեղմ ժամանակացույցը՝ ժամ առ ժամ կառավարությունում[33], պալատում, հանդիպումներն օտար դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարների հետ[34], բանակցությունների նյութը:

Ավստրիայի արքայադուստր Ստեֆանիի Պոլիս այցելության ընթացքում Արթինի աղջիկ Եվգինե-Էժենին, պալատի տիկնանց հետ հանդիպումներում, փադիշահի կողմից նշանակվել է ֆրանսերենի թարգմանիչ և ուղեկցող: Ապա՝ Յըլդըզի հարեմում նա առաջին թարգմանիչ է նշանակվել, ստացել 2-րդ աստիճանի *Şefakat* պատվանշան:

33 Որպես կանոն նա է ընդունել բոլոր երկրների պատվիրակներին, թարգմաններին: Օրինակ՝ Արթին Տառյանը կառավարությունում 2 ժամ ընդունել է Յունանիայի, ապա Գերմանիայի դեսպանատների առաջին թարգմաններին, այնուհետև Հռոմի պապի պատվիրակին, ապա՝ 4 ու կես ժամ՝ Պետական խորհրդի նիստի է մասնակցել:

34 Արթին Տառյանը հայ երևելիների հետ եղել է օտար դեսպանատներում ստանական հավաքների պարտադիր պատվո հյուրերի թվում, որը և արձանագրվել է ժամանակի մամուլում: 1886թ. Անգլիայի Վիկտորիա թագուհու 67 ամյակի առթիվ Պոլսի անգլիական դեսպանատան պարտեզի հյուրասիրությանը հրավիրված են վերում շատ հայեր, այդ թվում **Հակոբ Գազազյանը, Արթին Տառյանը, Սարո Չերեզին, Աբրահամ փաշան, Շահբազ էֆ., Միհրան Տյուզը, Նորյան էֆ., Վահան էֆ., Սերվիչեն էֆ., Գաբրիել Նորատունկյանը, Իշխան Չայան էֆ.:** Սա սկզբում է, որն ընդունելի էր արտասահմանյան դիվանագիտական վայրերում:






Գաբրիել Նորատունկյան

**Գաբրիել Նորատունկյան** (1852-1941) - Տիվրիկցի (գ.Գասմա) հայտնի գերդաստանի զավակ է եղել[35]: Նրա նախնիներից Արթին (Հարություն) Նորատունկյան ամիրան (1770-1843) եղել է ժամանակի ամենաազդեցիկ ազգային գործիչներից: Հացագործապետ ամիրայական գերդաստանի շառավիղ է: Արթինի Բաղդասար եղբայրը՝ Էքմեքչիբաշը (հացագործապետ) Գրիգոր աղայի որդին է եղել Գաբրիելը[36]: Այս ընտանիքի անդամների մի մասը շարունակել է հացագործապետի իրենց դիրքին հարիր գործը, եղել են բանկի, փառապանի հացի մատակարաներ: Ընտանեկան խիստ կրթություն է ստացել: Գաբրիելը նախնական կրթությունը ստացել է 1869թ. «*Saint Joseph*» ֆրանսիական քոլեջում: 1870-1875թ. Փարիզում իրավական ու քաղաքական գիտելիքներ, բարձրագույն կրթություն է ստացել Սորբոնում, «Քոլեջ դը Ֆրանս» (*Collège de France*), պոլիտեխնիկական և նման գիտելիքներ տվող դպրոցներում: Այս ընթացքում, 1873թ., Փարիզի դեսպանատանը որպես դիվանագիտական կցորդ (ատտաշե) է ծառայել: 1875թ. Փարիզում Օսմանյան կայսրության դեսպան Ալի փաշայի հետ վերադառնալով Պոլիս, սկսել է աշխատել որպես իրավական խորհրդատու-թարգմանիչ՝ Արտգործնախարար Ռեշիդ փաշայի մոտ, ու արագ բարձրացել դիվանագիտական ծառայության աստիճաններով: 18 տարեկանում անդամ էր (1870թ.) Բ.Դռան Արտաքին հարաբերությունների գերատեսչության: 1878թ. Օսմանյան կայսրության ու Սերբիայի միջև հակասությունների առթիվ կազմված Հաշտեցման խորհրդի առաջին քարտուղար է նշանակվել: Միախառնայում տեղի ունեցած Եվրոպական խառը հանձնաժողովում Կայսրության երկրորդ պատգամավորն է եղել: Ապա անդամակցել է ռուս-օսմանյան սահմանները գծող (հաստատող) միջազգային հանձնաժողովին: 1881թ. Չեխիայի դեսպանատան առաջին քարտուղար է նշանակվել, 1883-1906թթ. Արտգործնախարարության իրավական խորհրդատու է աշխատել: 1886թ. Գաբրիել Նորատունկյանը ընտրվում է Պատրիարքարանի խորհրդի անդամ և կրթական հանձնաժողովի նախագահ:

Նա վարել է նաև Բ.Դռան բարձրագույն իրավագետի պաշտոնը: Եղել Օսմանյան կառավարության պատվիրակը Լահեյի (Հաագա) միջազգային ժողովում, ընտրվել Օսմանյան Միջինի (խորհրդարանի) անդամ:

1906թ. Գաբրիել Նորատունկյանը Քյամիլ փաշայի (1832-1913) կառավարության կաբինետում նշանակվում է առևտրի ու Հանրային շինությանց նախարար: Այս նախարարությունը ամենանաշանավոր ծառայություններն է ունեցել Գաբրիել Նորատունկյան էֆենդին: Ժամանակին, Մոսկվայում դեսպան Գալիպ Քեմալի Սոյլեմեզօղլուն իր հուշերում դրվատանքի շատ լուրջ խոսքերով է հիշում Նորատունկյանի նախարարական այս շրջանը, այն համա-

35 Kevork Pamukciyan, *Kapriyel Noradunkyan Efendi.* Ist., Tarih ve Toplum,1988, ocak, N 49, s.42-46.

36 Նույն տեղում տես Գաբրիել Նորատունկյանի ընտանիքի անդամների մասին տեղեկությունները, էջ 45: Այս ընտանիքի կենսագիրներից են եղել Արշակ Ալպոյաճյանը(1879-1962), Աբրահամ Այվազյանը (1846-1909) և ուրիշներ:

**Երամյան Արթահամ փաշա (Քարաքյահյա, 1833-1918) -** Պոլսեցի վեզիր, դիվանագետ, Մեջլիսի անդամ: Օսմանյան կայսրության վերջին շրջանի վեզիրներից է եղել, որն աչքի է ընկել նաև իր զարմանալի հարստությամբ: Որդին է սեղանավոր Գևորգ բեյ Երամյանի (1816-1900), եղել Մեհմեդ Ալի փաշայի ընտանիքի վստահված անձն ու սեղանավորը: Հայտնի է եղել Քարա-քյահյա անունով: Պապը՝ Երամ ամիրան (1768-1835), եղել է Կավալայում Մեհմեդ Ալի փաշայի սեղանավորը: Լինելով հարուստ ընտանիքի զավակ, Աբրահամը հրաշալի կրթություն է ստացել: Մայրենի լեզվի պես տիրապետել է օսմաներենին, արաբերենին, ֆրանսերենին: Եգիպտական արքունիքում եղել է քարտուղարության պետ, ապա խտիվ (փոխարքա) Իսմայիլ փաշայի ներկայացուցիչը՝ Ստամբուլում: Մեծ դեր է խաղացել սուլթան Աբդուլազիզի վերջին շրջանում, խտիվի, սուլթանի ու Բ.Դռան քաղաքական այրերի միջև լավագույն մրնոլորտ հաստատելու գործում, սուլթանական պալատում և կառավարությունում խտիվի շահերը ու հարաբերությունները պաշտպանելու, խնդրագիր-դիմումների դրական լուծման գործում: Հայտնի է, որ սուլթան Աբդուլազիզը սիրում էր նարդի խաղալ Աբրահամ փաշա Երամյանի հետ: Նրա նարդիի տախտը արվեստի սքանչելիք է եղել, քարերը զմրուխտից ու հակինթից են եղել, զառերը՝ ալմաստից: Աբդուլհամիդ Բ-ի օրոք եղել է ազգային փոքրամասնությունների կողմից Պետական խորհրդի անդամ, հանդիսացել առաջին կարևորության երեք անձանցից մեկը: Որդին՝ Լեոն բեյը *Rütbe-i Salise* է ստացել:

**Ալեքսանյան Տիրան (Տիրան Թենկըր Բեյ)**-1862թ. Բելգիայում Թուրքիայի գլխավոր դեսպանն է եղել, ապա՝ Պոլսում Փոստ-հեռագրական նախարարության վերահսկիչ աշխատել: 1860թ. 3-աստիճանի *Mecidiye* և բելգիական կառավարության կողմից «*Chevalier de l'Ordre Leopold*» շքանշաններն է ստացել:

**Զոհրապ Էդվարդ**-1838-41թթ. Լոնդոնում Օսմանյան կայսրության գլխավոր դեսպանն է եղել է[41]:

**Ճեզահիրյան Միրոնիչ** (1848-1906)-1883թ. Ամիրան Ավստրիայում դեսպան է նշանակվել:

**Միսաքյան Հովսեփ**– Փարիզում Գլխավոր դեսպանության գլխավոր քարտուղար (1885), Դեսպանատան ժամանակավոր ներկայացուցիչ (1886) և խորհրդական (1888): Լահեյում (Հաագա) Օսմանյան կայսրության գլխավոր դեսպան: Փարիզի դեսպանատան գլխ. քարտուղար, 1883թ. ստացել է 3-րդ աստիճանի *Chevalier de Lègion d'Honneur* (Պատվո լեգեոնի ասպետ): Օսմանյան կառավարության կողմից արժանացել է բարձրագույն *Ulây-ı Evvel* աստիճանի:

**Համամճյան Սարգիս**-Ներկայացուցիչ Ռեժիի (Ծխախոտի կայսերական ընկերություն), Ընդհանուր Պարտուց վարչության տնօրեն, դիվանագետ: Աշխատել է Հռոմում և Թեհրանում, որպես դեսպանության 2-րդ քարտուղար: Արժանացել է *Բալա* աստիճանի (1877), ստացել է Առաջին աստիճանի *Nişan-ı Mecidî* և 3-րդ աստիճանի *Nişan-ı Osmanî* (1884):

---

իրավաբանական խորհրդատու եղել: Բրյուսելի հյուպատոսարանում աշխատել է որպես երրորդ, իսկ 1906թ.՝ երկրորդ քարտուղար: 1925 թվա կանից ապրել է Փարիզում:

41 20-րդ դ. դարասկզբին այստեղ ծառայող անձնահայտնի հայը եղել է Լոնդոնի դեսպանատան առևտրական խորհրդական **Գալուստ Գյուլբենկյանը**, որը 1910թ. 2-րդ աստիճանի *Osmanîye* է ստանում: 1910թ. **Սարգիս Համամճյանը** Լոնդոնի դեսպանության քարտուղարն է եղել:





**Մարգարյան Հարություն (Արթին)**-Աշխատել է Բելգրադում, ապա Բեռլինում, որպես դեսպանատան առաջին քարտուղար: Օսմանյան կառավարությունից ստացել է 2-րդ աստիճանի ***Ulây-ı* (1894)**, 4-րդ աստիճանի ***Nişan-ı Osmanî***:

**Պաղտատյան Օհան**-Բեռլինում դեսպանատան խորհրդական (1885): Բրյուսելում նոր հիմնադրված Կոնգոյի պետության դեսպանատուն է այցելել, և ի նպաստ Թուրքիայի համաձայնագրի նախագիծ է հաստատել: Գերմանիայի կայսր Վիլհելմ Բ-ից ստացել է 2-րդ աստիճանի ***Couronne de Fer***: Նշանակվել է Արտգործնախարարության *Հպատակության վարչության* (քերթիշեր) տնօրեն: Արժանացել է ***Ulây-ı Evvel*** բարձրագույն աստիճանին (1891):

**Արամ Էֆենդի**-Բեռլինում դեսպանատան քարտուղար Գերմանական կառավարության կողմից ստացել է 4-րդ աստիճանի ***Aigle Rouge*** (Ոսկե արծիվ, 1885):

**Նորիկյան Միրոնիչ**-Վաշինգտոնում դեսպանության առաջին քարտուղար (1899), Բուխարեստի դեսպանության գլխավոր քարտուղար (1902-1911): Ստացել է 3-րդ աստիճանի Ռումինական խաչ (1902) և 3-րդ աստիճանի ***Nişan-ı Mecidî***:

**Միսաքյան Հովսեփ**-Փարիզում դեսպանի խորհրդական: Ստացել է 2-րդ աստիճանի ***Nişan-ı Mecidî*** (1886) և այլն:

Դիվանագիտական անձնակազմում որոշակի թիվ են կազմել կաթոլիկական դավանքի հետևորդ հայերը: Մեր կարծիքով սա արդյունք է զուտ այն հանգամանքի, որ կաթոլիկ հայերի մեջ հարուստ ընտանիքներն ավելի շատ էին և բնականաբար ավելի մեծ տոկոս են կազմել եվրոպական երկրներում կրթություն ստացածները: Վերջինը դիվանագիտական ծառայության համար կարևոր նկատառումներից է եղել: Եղել են նաև այնպիսիք, որոնք Պոլսի կաթոլիկ հայ պատրիարքարանի կողմից են առաջարկվել: Այսպես օրինակ, Ազարյան Արիստակես ու Անտոն եղբայրները Պապի կողմից պարգևատրվել են ***Saint Gregoire*** շքանշանով (1880): Նրանք Պոլսո կաթոլիկ պատրիարք Ստեփաննոս Պետրոս Ազարյանի եղբայրներն են, հայ հարուստ ընտանիքի զավակներ, ինչպես նաև՝ մշակույթի մարդիկ: Երկու եղբայրները 1848թ. Վիեննայի Մխիթարյանների մոտ հրատարակել են քառալեզու մեծ բառարան՝ հունարեն, խտալերեն, հայերեն, թուրքերեն լեզուներով:

Հայազգի գլխավոր հյուպատոսներ ու հյուպատոսներ են ծառայել Մասսինայում, Տուլոնում և Նիցցայում, Բրյուսելում, Բաթումում, Օդեսայում, Թիֆլիսում և Նովոռոսիյսկում, Կոստանցիայում, Յաշ, Գալաց, Տուր դը Սեվերին ռումինական քաղաքներում, Քարդաֆում, Սերբիայում, Բելգրադում, Բուդապեշտում, Սինյին (Հունգարիա), Եռանձնարդում, Նեապոլում, Բարիյում, Ջենովայում (Իտալիա), Կաստանիայում, Լահեյում (Հաագա), Անտվերպում, Դուլցինոյում, Այա-Մավրայում, Կորֆու կղզում, Լառոս կղզում, Քերմանշահում և այլուր: Ահա մի քանի անուններ, որոնց մասին մեր տեղեկությունները սահմանափակ են:

**Ազարյան Մանուկ (1850-1922) -** Անվանի պոլսահայ քաղաքական գործիչ, դիվանագետ: 1864թ. կառավարության կողմից ուղարկվել է Փարիզ, սովորելու *Sainte Barbe* գիմնազիական հաստատությունում: Վերադառնալով, նշանակված է արտգործնախարարի քարտուղար, իսկ 1873թ. բարգմանչի պաշտոն է ստանում: 1876թ. թուրք-ռուսական պատերազմի ժամանակ բալկանյան բանակներում որպես դիվանագիտական սուրհանդակ է ծառայում: 1878թ. թուրքական ռազմագերիներին Ստամբուլ բերելու համար ուղարկվում է Բուխարեստ: 1879թ. նշանակվում է Պետերբուրգի օսմանյան դեսպանատան գլխավոր քարտուղար և ծառայում

**Փափազյան Խաչիկ**-Սեղանավորների ավագ Գևորգ Փափազյանի (Բահչիվանօղլու) որդին է: Արտգործնախարարության առաջին քարտուղար, աշխատել է Կոստանցիայի Գլխավոր հյուպատոսությունում: Ստացել է 2-րդ աստիճանի *Nişan-ı Mecidi* (1899).

**Փափազյան Սիմոն**-Բուդապեշտում հյուպատոսության քարտուղար: Ավստրիական կառավարության կողմից ստացել է 3-րդ աստիճանի *Couronne de Fer* (1884): Բուլղարիայում սահմանային հանձնաժողովի քարտուղար աշխատելիս Սիմոն Փափազյանը ստացել է 4-րդ աստիճանի *Nişan-ı Mecidi* (1879).

***Մանասներ*** - Պալատական նկարիչների այս հռչակավոր գերդաստանի[46] անդամները մեծ ծառայություններ են մատուցել կայսրությանը նաև իբրև դիվանագետներ, հյուպատոսարանների պաշտոնյաներ: Դիվանագիտական առաքելություն են կատարել հիմնականում Փարիզում, Վիեննայում, հանդիսանալով պալատական նկարիչներ, որոնց գործերը տարբեր առիթներով նվիրվել են եվրոպական միապետներին: Պոլսում Մանասները պետական պաշտոնյաներ են եղել: Ալեքսին (-1888) եղել է Պոլսի կենտրոնական, 6-րդ քաղամասի Արխիվի տնօրենն ու թարգմանիչը: Անտուանը (1827-1899) ղեկավարել է Պոլսի 6-րդ թաղամասը:

**Մանաս Պիեռ**-Բրյուսելում Թուրքական ներկայացուցչության քարտուղար: Բելգիական կառավարությունից ստացել է *Chevalier de L'Ordre Leopolde* (Լեոպոլդի ասպետ աստղը, 1860): Նրա որդին Պոլսում շատ հայտնի օրենսգետ ու փաստաբան է եղել:

**Մանաս Պոլ** (Պողոս, -1888) աշխատել է հիմնականում Փարիզի դեսպանատանը որպես առաջին (կցորդ, 1855-59թթ.):

**Սեպուհ Լազ Մինաս** (Խոսրով բեյ, 1825-1887)-Կրթությունը ստացել է Վենետիկի Ռափայելյան վարժարանում և վերադարձին անցել աշխատանքի հոր՝ Հովսեփ Էֆենդիի մոտ, Փողերանոցում: 1863թ. Փարիզի թուրքական դեսպանատանը քարտուղար է աշխատել: Եղել է Բելգիայում Թուրքիայի դեսպանատան գլխավոր քարտուղարը: Նա ծառայել է նաև Բեռլինում, որպես Թուրքիայի դեսպանատան խորհրդական: 5 տարի անց Բ.Դռան, արտգործնախարարության կողմից կանչվել է Պոլիս: Նա Պոլսում ղեկավարել է Արտգործնախարարության կողմից կազմված մի հանձնաժողով, որը Իրանի ու Թուրքիայի միջև սահմանային պայմանավորվածությունները պիտի քններ:

Վիեննայում հրավիրվել է իր բարեկամ դեսպան Մանասյան Բեյի պալատ: Վերջինս շատ էր գնահատում Սեպուհ Լազ-Մինասին, իմանալով որ նա միաժամանակ մեծ նկարիչ է: Նրան շնորհվել են սուլթանական և օտար տերությունների մի շարք պատվանշաններ, տրվել են որոշակի արտոնություններ:

**Զենոբ Մանասը** (1839-1861)-Պետական այր և արքունի նկարիչ: Նա՝ Ռուբեն, Սեպուհ, Ալեկո (Ալեքսանդր) և Գասպար Մանասների հայրն է: Վիեննայում թուրքական դեսպանատան առաջին քարտուղար և թարգմանիչ է եղել (1839):

**Մանաս Ռուբեն** (1810-1875-ից հետո)-Արքունի նկարիչ և դիվանագետ: Զենոբի ավագ որդին է: Կառավարության Թարգմանական վարչության անդամ (1850): Արդյունքում սուլթանի հրամանով ուղարկվել է Փարիզ կատարելագործելու նկարչական արվեստը: Եղել

46 Նրանց արվեստին են անդրադարձել ժամանակի հայտնի մարդիկ, ճանապարհորդներ, պատմաբաններ, ինչպես Աբրա Թոփչիճին, հայազգի կաթոլիկ դավանանքով պատմաբան ու դիվանագետ Մուրադջա Դ'Օհսոնը, հայ գեղանկարչության շատ մասնագետներ:





Յոհաննեսբուրգում թուրքական դեսպան Սուլեյման փաշայի թարգմանիչը: Միևնույն գլխավոր հյուպատոս է եղել (1869) և հյուպատոս՝ Կալաչում (Ռումինիա):

Մասնակցել է 1875թ. Քաղաքապետարանի երկրորդ նկարչական ցուցահանդեսին, որ նրա գործերը կրել են «Մանասի Ռուբենս» սառուպագրությունը:

**Սեպուհ Մանաս** (1816-1889) -Արքունի նկարիչ և դիվանագետ: Զենոբի երկրորդ որդին է: Արդյունքում և Աբդուլազիզ սուլթանների նկարիչն է եղել: Սուլթանների նկարների ու մանրանկարների (աղամանդակուռ զարդատուփերի ու ծխախոտատուփերի, զարդերի վրա) հեղինակն էր, աշխատել է Տոփխանեում, խոսակական կառավարությունից «Ասպետի» աստիճան ստացել (կավալիեր, 1856): Նա 1852 թվականից Փարիզի դեսպանատանը գլխավոր թարգման է եղել, 30 տարի ծառայել այնտեղ: Ստացել է 5-րդ աստիճանի ***Nişan-ı Mecidi*** (1858), դրամական մեծ պարգևներ: Օսմանյան սուլթանների նրա նկարները որպես նվերներ ուղարկվում էին եվրոպական արքունիքներ:

**Մանաս Գասպար (-1885)**-Զենոբի որդին է: Նկարիչ, 31 տարի Վիեննայի թուրքական դեսպանատան առաջին քարտուղարն ու թարգմանիչն է եղել, ապա նույն պաշտոնով տեղափոխվել է Փարիզ:

**Մանաս Ալեքսանդր** (Ալեկո)-Զենոբի նկարիչ որդին է: Վիեննայում եղել է դեսպանատան կցորդ (1838): Վիեննայի Գեղարվեստի ակադեմիան է ավարտել:

**Մանաս Արսեն**-Հյուպատոս է եղել Անգլիայի Նյու Կասըլ քաղաքում (1911), ապա՝ Պատրասում (Հունաստան):

**Մանաս Բյուզանդ**-Հյուպատոս է եղել Վիեննայում:

**Գրիգոր Մարկոսյան (1821-1888).** Օրենսգետ[47], 9 լեզուների (անգլերեն, ֆրանսերեն, պարսկերեն, ռուսերեն...) գիտակ, եղել է Մուստաֆա Ռեշիդ փաշայի երեխաների դաստիարակը, Սահակ Աբրոյի հետ պաշտոնավարել Սպարապետի Դռանը և ավելի քան 19 տարի Սահակ Աբրոյի հետ աշխատել Արտգործնախարարության թարգմանական դիվանում: Ղրիմի պատերազմի սկզբին, երբ իշխան Մենշիկովը եկել է Պոլիս, արտգործնախարար Ռիֆաթ փաշայի օրոք, Գ.Մարկոսյանը որպես թարգմանիչ մասնակցել է բանակցություններին, այդ հանգամանքով ներկա եղել Արևելյան մեծ պատերազմի բանակցություններին: 1859թ. նա հրատարակել ֆրանսերենի բերականության թարգերենով: Ազգային երեսփոխան, Ազգային ընդհանուր ժողովի կանոնադրության հեղինակակից, *ընտրական կանոնների մշակող*: Որոշ ժամանակ Լոնդոնից Հնդկաստան մեկնող շոգենավերի գործակալ-ներկայացուցիչ է եղել, Հնդկաստանի հետ վաճառականական գործեր արել:

**Արիստարխես Ստավրոս** (1770-1822) Արքունի թարգման: Հայրը՝ Նիկողայոսը եղել է Մեծ Հայքի Չմշկածագ գյուղից, որ սերել է Հովհաննես Չմշկիկ բյուզանդական հայազգի կայսեր գերդաստանից: Ուսանել է լեզուներ, վարել բարձր պետական պաշտոններ Վալախիայում, Մոլդավիայում: 1821թ. նշանակվել է Բարձր Դռան գլխավոր թարգման: 1822-ին աքսորվել է Կապադովկիա և այնտեղ սպանվել Թուրքիայի արտգործնախարարի հրամանով: Որդին՝ Նիկողայոս Արիստարխիսը ևս բարձր պաշտոններ է զբաղեցրել Օսմանյան կայսրությու-

47 Թոխարբա Ալի փաշային ընդունել է տվել, որ հայազգիների ժառանգությունը պետք է սահմանվի միմիայն Պատրիարքարանից հաստատված ու վավերացված ճշտությամբ հանձնառու: Հնդկաստանում ծնված Հովսեփ Ղազարի հոյակապ ժառանգության երկան հանդեպ է եղել: Այս սկզբունքը ճանաչեցին Բ Դուռը, Անգլիայի դեսպանատունը:

ներ, դատական համակարգի տարբեր օղակների ու վճռաբեկ ատյանի անդամներ, դատական բժիշկներ, նախարարությունների ու վարչությունների իրավաբանական խորհրդի անդամներ, քննիչներ ու վերաքննիչ-ստուգողներ, քաղաքապետարանների, գյուղական ու նահանգային, զանազան վարչությունների ու տարբեր հանձնաժողովների ու օղակների պատասխանատուներ և այլն, և այլն: Այս մասնագետները հիմնադրում են մի շարք մասնագիտական բարձր դասակարգի միություններ, ընկերություններ (կայսրության և նեղ՝ հայկական մակարդակով), որոնց շուրջն են համախմբվում տվյալ մասնագիտության ճանաչված անունները:

1908թ. օգոստոսին հիմնադրված Օսմանյան ինժեներների ու ճարտարապետների միության անդամ են դառնում Սերովբե էֆենդին, Արամ Մարկոսյանը, Հեքիմյան և ճարտարապետ Իքինյանյա էֆենդիները:

Պետական կառավարման համակարգում հայերին վստահված պաշտոններն են եղել՝ պալատի արտասահմանյան բաժնի տնօրեն, Կառավարության առաջին կարգի պաշտոնյա, Կառավարության առաջին թարգման, գրագրության և կապերի, գնահատման, գրանցման, վերահսկման, թարգմանական, հաշվապահական դիվանների խորհրդականներ ու վերատեսուչներ, նախարարությունների, նավատորմի, արտասահմանյան բաժնի տնօրեններ, Արտգործնախարարության իրավագետ խորհրդականներ ու նրանց օգնականներ, մաքսային, ցքի, փարոսների, ծովափնյա շրջանների վարչությունների, քաղաքապետարանների ամենատարբեր բնագավառի ու վարչությունների պատասխանատուներ:

Սա չափազանց շատ էր հպատակ մի ժողովրդի համար Օսմանյան կայսրության նման բռնակալ երկրում...

Այս կամ այն ասպարեզում մասնագետների սղության պատճառով նույն անձը տեղափոխվել է երկրի տարբեր անկյուններում համապատասխան դրույթը սպասարկելու, իսկ նույն նախարարին տեսնում ենք տարբեր գերատեսչությունների ղեկավարի աթոռին, այդ նախարարությունների գծով արտասահմանում միջազգային համաժողովներին ու ցուցահանդեսներին որպես պատվիրակ, Օսմանյան կառավարության ներկայացուցիչ:

Պետական ու վարչական ասպարեզում հայազգի նախարարների ու պաշտոնյաների գործունեությանն առընթեր սուլթանական կամ կառավարական պարգևների մասին հիշելիս մի կարևոր հնարավորություն է ընձեռնվում: Այն է, տեղեկանում ենք մեզ համար քիչ հայտնի անձանց ու նրանց կատարած գործին: Երբեմն այն մեզ զարմացնում է նրանով, որ այս առիթը չօգտագործելու դեպքում դժվար թե իմանայինք հետաքրքիր մանրամասներ սուլթանական պալատի, նրա ծառայությունների շրջանակի ու այն իրականացնող մեր հայրենակիցների, նրանց զբաղված պաշտոնների, գործունեության մասին: Այլապես, պիտի սահմանափակվեինք արդեն հայտնի ամիրայական, փաշայական ու տիտղոսավոր այլ անունների կրկնությամբ: Միևնույն ժամանակ քրիստոնյաների համար «փակ» այս պալատներում ու ապարանքներում, պարզվում է, գնահատել են ծառայողական, կենցաղային բնագավառում ևս կարևոր ու հայազգի իրական մասնագետների գործը, իրենց երախտագիտությունը հայտնել տարբեր արհեստներում իրենց գերազանց դրսևորած մասնագետների համար հատուկ սահմանված ***Iftihar Madalyası, Tahlisiye Madalyası, Sanayi Madalyası, Liyakat Madalyası*** նշանների, շքանշանների տարբեր աստիճանները նրանց շնորհելով:

Քանի որ կայսրության նախարարությունները անընդհատ միավորվում կամ բաժանվում էին ըստ առանձին բնագավառների, չկրկնվելու համար, նախընտրում ենք ներկայացնել ոչ միայն դրանք, այլև հատկապես այն երևելի անձանց, որոնք ղեկավար պաշտոններ





են զբաղեցրել: Իսկ նախարարությունները, որոնք ղեկավարվել են հիմնականում հայազգի նախարարների կողմից, հետևյալներն են՝ Անտառների ու հանքերի, Փոստի ու Հեռագրատան, Հանրային շինության (հանրօգուտ, bayandırlık), Առևտրի ու Գյուղատնտեսության, Արտգործնախարարությունը, Ֆինանսների ու Հարկային, Հանրային պարտքի, Արդարադատության՝ փոխնախարարով: Սուլթանի Անձնական գանձերի և Մայր սուլթանի գանձատան նախարարությունը, մասնավորապես Աբդուլ Համիդ Բ-ի օրոք, հիմնականում վստահվել է միայն հայերին: Սուլթանի վստահելիները այս պաշտոնում եղել են՝ 1891-1897թթ. Միքայել Փորթուգալ փաշան (1842-1897), այնուհետև 10 տարի՝ 1897-1908թթ. Հովհաննես փաշա Սաքըզ(յան)ը (1836-1912): 1891թ.՝ Մկրտիչ Հեքիմյանը (1847-1927), Հակոբ Գազազյանը և ուրիշներ, ամիրաներ: Պալատում կարևոր պաշտոններ են եղել սուլթանական անշարժ գույքի վարչության, Հերեքեի ֆաբրիկայի, պալատի ճենապակու ֆաբրիկայի, Նկարչական մասի, անտառների տնօրենների պաշտոնները, որոնք երկար տարիներ հայերն են վարել:

Հիմնականում հայ պաշտոնյաներն են ղեկավարել նաև՝ Անվտանգության, Անշարժ գույքի, Պետական խորհրդի ու նրա տարբեր հանձնաժողովների տնօրինությունները, Կայսերական բժշկական ընկերությունը, դատական համակարգի երկրորդ աստիճանները, Առևտրական սենյակը, քաղաքապետարանները, զբաղեցրել են նահանգային ղեկավար պաշտոններ, եղել են պալատի և կառավարության առաջին կարգի պաշտոնյաներ:

Լիբանանի վերջին երկու հայ կառավարիչներից բացի, մինչ այդ, բարձր վալիների կողքին՝ հայ վարչարար ղեկավարներ են ծառայել (Հակոբ Քուփելյան, Կուսակալի տեղակալ-օգնականներ Հովհ. Ֆերիտ, Հովհ. Ադամյան, Լ.Այնյան, Անդրանիկ Բիլեզյան և ուրիշներ):

Հայտնի են Օսմանյան կայսրության 10 հայազգի վեզիրների, եպարքոսների, այդ թվում՝ երկու Մեծ վեզիրների ու նաև տասնյակ անունները, որոնք տարբեր նախարարություններ են ղեկավարել[18]: Այս անձանցից են՝ վեզիր ու Մեջլիսի անդամ Աբրահամ փաշա Երամյանը (Քարաքահյա, 1883-1918), վեզիր, Արտգործնախարարության խորհրդական, Պետական խորհրդի անդամ Արթին Տատյանը, վեզիր Հակոբ Գազազյան փաշան (1833-1891), վեզիր Սաքըզլը Հովհաննես փաշան (1836-1912), վեզիր Միքայել Փորթուգալյան փաշան (1842-1897): Նուպար փաշան 3 անգամ Եգիպտոսի վարչապետ է եղել:

Հանրային պարտքի վարչության հայ աշխատակազմի մասին որոշ պատկերացում կազմելու համար ներկայացնենք նրա որոշ բաժինները իրենց պատասխանատուներով հանդերձ. Կայսերական կառավարության կողմից ընդհ՝ Թենկըր Ցավեր փաշա, Լորենցիոս Արզանյան (կայսերական բանկի քարտուղար), Գևորգ Թորգոմյան (երկրագործության մասնագետ խորհրդական), Միհրան Ֆերիտ (Ընդհանուր տնօրենի քարտուղար և թարգման), Արա Արապյան (Պաշտոնյաների բաժնի փոխտնօրեն), Հանյան և Դեմիրճիպաշյան (Կենտրոնական հաշվակալության բաժնի փոխտնօրեններ), Թոմասյան էֆենդի (Ոգելից խմիչքների, մետաքսի և ձկնորսության բաժնի փոխտնօրեն), Գրիգոր Մարգարյան (Աղի բաժնի փոխտնօրեն), Նազարոս Երամյան (Թղթակցության բաժնի տնօրեն), Միհրան Երազյան (քարտուղար թարգմանիչ), Տիրան Պետրոսյան (Իրավագիտական բաժնի տնօրեն), Մ.Աբիկյան (Ա կարգի փաստաբան), Փափազյան (Վիճակագրության բաժնի փոխտնօրեն) և այսպես տարիներ շարունակ:

Այս վարչությունը մասնաճյուղեր ուներ երկրի 21 գավառներում, ուր պաշտոնյաների պատկառելի մասը հայ մասնագետներ էին:

18 Այս մասին տես Հավելվածում:

**Հանրային պարտուց**
Անտոն Թնկըր Յավեր փաշա[32]
**Սուլթանի անձնական գանձարանի նախարար**
Գրիգոր Աղաթոն[33]
Գազազյան Հակոբ փաշան(1833-1891), **վեզիր** (1884)
Փորթուգալյան Միքայել փաշա (1842-1897) **վեզիր** (1894)
Սաքըզյան Օհաննես փաշան՝ 10 տարի (1836-1912) **վեզիր** (1906)
Կույումճյան Պետրոս
Հեքիմյան Մկրտիչ[34]
**Փոստ-հեռագրական, հեռախոս (P.T.T.)**
Աղաթոն Գրիգոր
Կարապետ Արթին Դավութ փաշա, **վեզիր**, մարշալ
Հալաճյան Պետրոս
Մարտիկյան Օսկան -1891թ.
Անտոն Թնկըր Յավեր փաշա -2 անգամ 1891թ.
Սինապյան Գրիգոր
Սրանդույան Հակոբ[35]
**Ֆինանսների[36] և հարկային**
Գազազյան Հակոբ փաշա - ֆինանսների (Maliye 1991թ.), **վեզիր**
Տատյան Արթին[37]

խորհրդի և Այդն քաղաքի համբուլ հավասարության խորհրդի անդամ է եղել, ստացել Անարի *Mütemayiz*:
32 1908թ. Երիտթուրքերի միության շրջանի առաջին հիմնադիր անդամներից մեկը եղել է **Անտոն Յավեր փաշա Թնկըրը**: 35 տարիներ թուրքերեն լեզվի մշակմամբ զբաղվող Անտոն Թնկըրը մայր անվամբ *Servet ve Fünûn* օսմաներեն պարբերականում հրատարակել է 1000 էջանոց 2 մեծ հատորով բառարանի
բնդակայնությունը:
33 1860-62թթ. նրան համաձայնվել է կարգավորել Սուլթանական գանձարանի գործերի վիճակը, որը
փայլուն է կատարել:
34 **Մկրտիչ Հեքիմյան** (1847-1927) անտեսագետ: Անտեսագիտական փորձարանի հիմնադիրներից: Եղել է Սուլթանի անձնական գանձարանի տնօրեն 1870-ական թթ.:
35 **Հակոբ Սրանդույան** (1863-1913). Փարիզում հետևել է իրավագիտության: Պոլսում բազմաթիվ բրեական դատեր է վարել: Հրատարակել է հայկական մամուլում երգիծական հոդվածներ՝ «Նոթրուման» ծածկանվամբ: 10 տարի եղանակել է Փարիզ, սակայն Սահմանադրությունից հետո կառավարության հրավերով վերադարձել է, նշանակվել դատական քննիչ, ապա՝ 3 ամիս Թղթատարական և հեռագրական նախարար (1913), մինչև իր հանկարծամահությունը: Ազգային երեսփոխան և վարչ. ուրյան ատենապետ:
36 1885թ. **Միքայել Փորթուգալյանը** նշանակվել է Ֆինանսների նախարարի խորհրդական: 1884թ. Ֆինանսների նախարարության բաղկացուցիչ և արտաքին կապերի պատասխանատու **Պետրոս Քեչեճյանը** Կառավարության կողմից ստացել է 3-րդ աստիճանի *Niyan-ı Mecidî* (1884), *Ulây-ı sânî*(1888): Նա Փարիզում Լոնդոն է գնացել՝ փոխառությունների խնդրով հավաքի, Փարիզի դեսպանատանն անհրաժեշտ դիրքերով: Վերադարձին նշանակել է կադավարական Արտաքին Ֆինանսների նախարարությունում, տարբեր վարչությունների տնօրեններ ու բարձրաստիճան պաշտոնյաներ են եղել հետևյալ անձիք՝ **Միհրան Տյուզ, Հովհաննես Չամիչ, Քոլման Քեչյան, Նշան Դերկայան, Դավիթ Չրաքյան, Սեպուհ Քարփեյան, Արթին Հովհաննեսյան, Հովսեփ Յուսուֆյան, Հակոբ Պոյաճյան, Երվանդ Օսկան, Միքայել Աշճյան, Գրիգոր Օսկյան, Կղեմես վրդ. Սիրիշյան, պրոֆ. Գրիգոր Քյումուրճյան, Արթին Սարաֆյան, և ուրիշներ: Հովհաննես Սաքըզյանը** Պետական Հաշվակալական պալատի հիմնադրման ու ղեկավարության համար 1879թ. ներկայացվել է հատուկ ամսով: Փողերանոցի, ծովարանի մեխանիկական, մեքենայական խնդիրների պաշտոնյա՝ որը ևս հայեր են եղել, որոնք դրամահատարանի պետերն են եղել՝ Սիմոն Էֆենդի, Հովսեփ Պեխլիվան, Սոխիան Շաշյան: Այս մեխանիկ ինժեներների ասերին է եղել երկրի դրամահատ մեքենաների սարքավորման ողջ ծանրությունը:
37 1892թ. **Արթին Տատյանը** նշանակվում է Ֆինանսների ու հարկային միացյալ նախարարության նախագահ





**Առևտրական սենյակ**
Պետրոս Ազատյան –նախագահ (*Ulây-ı Evvel*, 1900)
**Անվտանգության ատյան (վարչություն)**
Ֆրենկյան Հակոբ -տնօրեն
**Անշարժ գույքի վարչություն**
Պոյաճյան Հովհաննես - տնօրեն (1884)
**Եկեղեցական (ֆինանսների) նախարարություն**

17-րդ դարից հայտնի է բուրսահայ ռնն **Հասան** աղա, որը մինչև 1656թ. եղել է մաքսատան տնօրեն: Հայտնի է մի այլ՝ Դյոլեկչի Հասան փաշա, որը եղել է ծովային նախարար, և Կովկասյան ճակատում հրամանատար է եղել:


Օսմանյան բանկի մեկ լիրան (օսմաներեն, ֆրանսերեն, հայերեն և հունարեն գրությամբ)

Պալատի ծառայությունների թվում առանձնանում են երկու ֆինանսական նախարարություններ: Ֆինանսների նախարարությանը զուգահեռ գոյություն է ունեցել սուլթանների անձնական գանձարանը, մայր սուլթանի գանձարանը, որոնք առանձին միավոր են հանդիսացել: Սուլթանի, զուտ անձնական գանձերի նախարարությունը տնօրինվել է առանձին պաշտոնյաների կողմից, որոնք ոչ մի առնչություն և կախվածություն չեն ունեցել կառավարության մաս կազմող ֆինանսների (եկեղեցից) նախարարության հետ: Սուլթանի անձնական գանձերի նախարարությունն իր մեջ ներառել է խոշոր չափերի անշարժ գույք, ինչպես նաև հարստության տարբեր արտահայտությունների կուտակում, միջոցներ, որոնք տնօրինվել են Սուլթանի անմիջական, անձնական որոշմամբ: Սուլթանի անձնական գանձի նախարարները սովորաբար ստացել են վեզիրի տիտղոս, փաշայություն աստիճանով (Hazineyi Hassa Nazırı): Այս նախարարության հետ սերտ կապեր են ունեցել Սուլթանի և Վալիդե (մայր) սուլթանի սեղանավորները, դրամահատարանի (փողերանոցի) տնօրինողները: Այս բարդագույն պաշտոնը սուլթանների հարստության պահպանման զբաղվածներից է եղել ու փոքրագույն մեղանչում, կասկած կամ զլացառություն՝ ունեցել են դառնաղետ հետևանքներ, ինչպես օրինակ Տյուզյան ամիրաների զրպարտության դեպքում նրանց ընտանիքի ողբամայրկանց գլխատումը[38]: Միայն 1908թ. հետո այս նախարարությունը վերացվել է, իսկ նրա միջոցները վերադարձվել են Ֆինանսների նախարարությանը:

Աբդուլ Համիդ Բ-ն իր անձնական գանձարանը վստահել է միայն հայերին[39]:

1910թ. **Արթին Աղամյանը** (Օսմանյան առևտրական սենյակից Մեջլիսի պատգամավոր) և **Միհրան** Էֆ. (Ֆինանսների նախարարության հաշվակալության վարչության տնօրեն) դառնում են անդամներ Ֆինանսների նախարարության բարեկարգումների համար դրամական միջոցների նոր կազմակերպչող հանձնաժողովի: 1914թ. **Միհրան Գարագյոզյանը** Ֆինանսների նախարարության խորհրդականներից էր:
38 Տես Տյուզյան ամիրաների կենսագրական մասում:
39 Առանձին գանձապահ- միավոր է եղել Վալիդե սուլթանների հարստությունը ևս: Այսպես օրինակ Պողոս բեյ Մաղաքյանն (1812-1873) եղել է Մայր սուլթանի գանձատան տնօրենն ու նրա սեղանավորը: Սուլթանի Անձնական գանձարանի տնօրեններ և կարևոր պաշտոնյաներ են եղել հետևյալ անձինք՝ **Արթին Ձեքի Էֆ. Հակոբ Չիֆչինյան, Արամ Հորոզյան, Մկրտիչ Հեքիմյան, Հմայակ Մեժիկյան, Արամ Աղիկ, Գևորգ Քոզաքճյան, Մկրտիչ Միրզայան, Վահրամ Յաղուբյան, Սահակ Երեմյան, Լևոն Փափազյան, Գևոր Քոքսալ, Տիգրան Չուխաջյան, Գևորգ Չուխաջյան, Հովսեփ Թագվորյան, Գրիգոր Թագվորյան** և ուրիշներ: 1898թ.



Պողոս Սաքըզ. «Թուրքաստան» բանկի հիմնադիր, սուլթանի անձնական բանկիր և գանձապետ
(Լուս. Արդոլյանի նոր.)

տակնությունը վառահիլել է Փարիզի թուրքական դեսպանատան թարգմանիչ և խորհրդական Հակոբ Կրճիկյանին, որի ղեկավարության ներքո է աշխատել: 1843թ. մեծ հաջողությամբ ավարտել է Գրինյոնի Հողագործական Գյուղատնտեսական դպրոցը:

Փարիզի թուրքական դեսպանը նրան ներկայացրել է Լուի Ֆիլիպ թագավորին, որը կանխագուշակել է, որ նա լինելու է Օսմանյան կայսրությունում գյուղատնտեսության կազմակերպման առաջամարտիկ: Գրիգորը շրջել է Ֆրանսիայի, Բելգիայի, Անգլիայի հայտնի ագարակներր, հողատարածքներր և 1847թ. վերադարձել Պոլիս: Վերադառնալով մեծ ավանդ է ունեցել Հալքալըի գյուղատնտեսական դպրոցի հիմնադրման գործում, եղել այդ հանրահայտ գյուղատնտեսական կենտրոնի ստեղծողներից: Աղաբոն ընտանիքի կողմից է, որ առաջին անգամ Թուրքիա է ներմուծվում կարտոֆիլի սերմնացան մեքենան ու այդ պատճառով սկսվում է Իտալիայից բերված կարտոֆիլի հատուկ տեսակի գիտական արտադրությունը:

1847թ. կառավարության կողմից բամբակագործության զարգացման նպատակով փոխակերպված Այիմանա ագարակի տնօրեն է նշանակվում: Նրանից առաջ տնօրեն էր եղել մի ամերիկացի, որը հաջողություն չէր ունեցել: Վեզիր Ռեշիդ փաշայի պնդմամբ այդ պաշտոնը 1848թ. ստանձնում է Գրիգոր Աղաբոնը: Որոշ ժամանակ անց, 1849թ. այս պաշտոնը փոխանցվում է Գևորգ Սրխարճյանին: Նա Թուրքիայի գյուղատնտեսությունը եվրոպական ձևով վարելու, գյուղատնտեսական տարբեր մեքենաներ օգտագործելու կողմնակից էր: Երբ տնօրենը ստանում էր 750 ղուրշ, ապա Աղաբոնին վճարվել է 4000 ղուրշ: 1849թ. Գրիգորը Ննգահրյան ամիրաների գործերի կառավարիչն է եղել: Նա գրել, թարգմանել ու հրատարակել է գյուղատնտեսության, երկրագործությանը վերաբերող գրքեր, աշխատակցել-հոդվածներով մասնագիտական պարբերականներին, հիմնել երկրագործական դպրոցներ, հաստատություններ: Գ.Աղաբոնն այդ ժամանակ արդեն ձեռնարկել էր «Թուրքիայի գյուղատնտեսությունը» աշխատությունը: Նա աշխատակցում էր ֆրանսիական երկրագործական պարբերականներին, մեծ համբավի արժանանում Ֆրանսիայում՝ որպես երկրագործության, երկրի տնտեսագիտությամբ զբաղվող մասնագետ:

1850թ. ընտրվել է Թուրքիայի Գյուղատնտեսական բարձրագույն հանձնաժողովի անդամ: 1853թ. ընտրվում է Ֆրանսիայի Պարտիզպանական ընկերության անդամ: Եղել է Թուրքիայի Գյուղատնտեսության բարձրագույն խորհրդի անդամ (1856): 1858թ. Սարդինիայի թագավորության Տորինոյի միջազգային ցուցահանդեսում որպես պատվիրակ ներկայացնում է Օսմանյան կայսրությունը և չերամապահության գծով ընտրվում միջազգային քննիչ հանձնաժողովի անդամ: Այնտեղից Սուլթանի համար նա բերում է ոսկե մեդալ, 7 մեդալներ տարբեր շերամապահների համար, 4 պատվո հիշատակություններ: Իտալական կառավարության կողմից Գր. Աղաբոնին շնորհվում է ***Sent Moris Lazar*** ասպետի աստիճան և շքանշան: Որոշ ժամանակ





մնում է Փարիզում, շարունակում ուսումնասիրել երկրագործություն ու վաճառականական հաշվակալություն, անվանվում Վաճառականական հաշվակալության ընկերության անդամ: Հաջորդ տարի, 1859թ. իտալական Տորինոյի միջազգային ցուցահանդեսում կրկին եղել է Թուրքիայի ներկայացուցիչը, այնտեղ ընտրվել Տորինոյի Գյուղատնտեսական Ակադեմիայի պատվավոր անդամ չերամապահության գծով: Անդամակցում է մասոնական Մեծ օթյակին, անձնային հավանականությամբ իր հովանավոր, մասոն Հակոբ Կրճիկյանի միջնորդությամբ:

1860թ. Ֆինանսների նախարարության Բարձրագույն դիվանի հաշվակալական գերատեսչության անդամ է դառնում, ստանալով ***Mütemayiz***: Ընտրվել է Հաշվիչ հանձնաժողովի անդամ և Ֆինանսական բարենորոգումների պալատի անդամ: 1860թ. Ալի և Ֆուադ փաշաները նրան են հանձնարարել սուլթանական գանձատան գործերի կարգավորումը:

1862թ. բռնագրավումների շրջանառությունից դուրս գալու գործերն է ղեկավարել: Այս բնագավառում մեծ հաջողությամբ լուծում է **Ընդհանուր պարտքերի փոխատվությունների** խնդիրը: Նա մեկ ամսում ներկայացնում է Օսմանյան կառավարության փոխառության տոմարակալությունը, մեծ հիացմունք պատճառելով Անգլիայի կառավարությանը: Անգլիայի Վիկտորիա թագուհու կողմից ոսկյա ժամացույց է ստանում: 1862թ. Դար-ուլ-ֆյունունի բռնագրավումների հաշվակալության բաժնի տնօրեն է նշանակվում: Նա մեծ ավանդ է ունեցել 1863թ. Ստամբուլի միջազգային ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքներում: 1863թ. 3-րդ աստիճանի ***Mecidiye*** է ստանում: 1864թ. նշանակվում է Փոստի և հեռագրական գործերի նախարար և հաջորդ տարի՝ 1865թ. Փարիզում, Փոստային հեռագրական միջազգային կոնգրեսում ներկայացնում է Թուրքիան: Մեծ դերի ու հեղինակության է արժանանում Փարիզի «Ժողովրդական տնտեսության գործնական ուսումնասիրության միջազգային ընկերության» մեջ: Փարիզից վերադարձին հաստատում է «Էսասը Ումումի» (Հանրային պարտաց) պարտքի կոնսոլիդների փրկածման գործի տնօրինությունը, ստանում սուլթանական կառավարության կողմից ***Ulâ-ı Evvel*** բարձրագույն աստիճան: 1866թ. դառնում է Օսմանյան բրիտանական (Փոստի) ընդհանուր տնօրեն: Նա հռչակվել է առաջին քրիստոնյա նախարարը (փոստային, 1866թ.):

Հեռագրական միջազգային հանձնաժողովներում մեծ վարպետությամբ ներկայացնում է Օսմանյան կայսրությունը: Միջազգային այս հանձնաժողովի հիմնական գործն էր ընդհանուր սակագների հաստատումը:

Աղաբոնը գլխավորել է Հասարակաց շինությանց նախարարությունը, այնուհետև վարել Փոստի ու Հեռագրատան նախարարի պաշտոնը: Որպես տնտեսագետ նա մեծ հեղինակություն էր վայելում արտասահմանյան միջազգային ու գիտական շրջանակներում: Անդամակցում էր եվրոպական մի շարք երկրների գիտական ընկերություններին և Ֆրանսիական կառավարության կողմից նրան շնորհվել է ***Chevalier de Légion d'Honneur*** (Պատվո լեգեոնի ասպետի) խաչ:

Պոլիս վերադարձին նա հիմնում է ազգային փոստատարությունը: Դրանից հետո ձեռնամուխ է լինում փոստային կարևորագույն, միջազգային խնդիրների լուծմանը: Մինչ այդ երկրի փոստային համակարգը սպասարկում էին արտասահմանյան ընկերությունները: Նա վերջ է հանում սեփական, թուրքական փոստային ծառայությունների հիմնադրման հարցը, անցնում գործի: Բոլոր բերի կողմերը շոշկելով, նա շատ կարճ ժամանակում ձեռնամուխ է լինում փոստային դրոշմանիշների ու բացիկների տպագրությանը (1867): Նույն, 1867թ. Փարիզի Փոստային միջազգային կոնգրեսում կարողացել է կարգավորել իր երկրի անդամութ-





Սարգիս Տեր-Աստրյան.
Պոլսի տեսարաններով փոստային բացիկներ

յան խնդիրը: Այս կարևորագույն առաքելությունը փայլուն կատարելու համար նա Սուլթան Ազիզից որպես պարգև ստանում է 5 հազար ոսկի և *Ulây*-ի աստիճան:

Մինչ նա Փարիզում էր, նիվանդ, 1868թ., մահվանից կարճ ժամանակ առաջ Նապոլեոն Գ-ից ստանում է *Légion d'Honneur* Կոմանդատորի աստիճան և ասպետի շքանշան, որպես գնահատանք հեռագրական ու թղթատարության միջազգային գործին մեծ ծառայություններ մատուցած անձի: Սուլթան Ազիզը չսպասելով, որ նա Պոլիս գա, Փարիզ է ուղարկում Գրիգոր Աղաթոնին Հասարակաց շինության նախարար նշանակելու իր հրամանագիրը, սակայն Փարիզում Աղաթոնը կնքում է մահկանացուն:

Նա Հակոբ Կրճիկյանի ու Սրիմարճյանի հետ միասին հիմնակել է շերամաբուծության կարևոր ձեռնարկներ, որ տպագրվել են 1846թ. Պոլսում, տարածվել շերամաբուծական կենտրոններում, անվճար բաժանվել, թարգմանվել հայատառ թուրքերենի:

1868թ., նրա մահվանից հետո, որպես Փոստ-հեռագրական նախարար սկսում է աշխատել **Կարապետ փաշա Գավուպյանը**[47]:

47 **Կարապետ փաշա Գավուպյանի** մասին (**Գավուդ փաշա,** կաթոլիկ, մարշալ, 1816-1873) տես՝ Օսմանյան կայսրության դեսպանների և հյուպատոսների մասին գլխում:





Նրանից հետո Սաամոսի հայ պատգամավոր **Պետրոս Հալաճյանին (1871-)** է փոխանցվում այս պաշտոնը: Ֆրանսիայում նա հետևել էր իրավագիտությանը, ավարտել այդ ֆակուլտետը: 1908թ. եղել է Սաամոսի կողմից Մեջլիսի պատգամավոր: Եղել է Հանրօգուտ շինությանց նախարար: Նրա օրոք ֆրանսիական մի ընկերության հետ համատեղ 10 հազար կմ մայրուղի (շոսե) է կառուցվում, 1910թ. Սաամոսում են բացվում շատ մերենաներ: Նա զանազան կարևոր ծառայություններ է մատուցել կայսրության համար: Մի որոշ ժամանակ էլ ֆինանսների նախարարի թեկնածու է եղել:



Պետրոս Հալաճյան

Հանրօգուտ շինությանց հայազգի նախարարներից է եղել փաստաբան **Սինապյան Գրիգորը:** Նա փոխարինել է Պետրոս Հալաճյանին: Նրա գործունեության հաջողություններից է եղել թուրք-հունական երկաթուղիների միավորումը: Գ.Սինապյանը դրան հասնելու համար ծրագրերի որոշ առաջանցիկ մշակեց, բատ որի կողմնակից էր երկարաղ ծովափնյա շրջաններով անցկացմանը: Փաստաբան Գրիգոր Սինապյանը վարել է նաև Անտառների ու հանքերի, իսկ այնուհետև՝ Փոստի ու Հեռագրատան նախարարների պաշտոնները: 1911թ. Գրիգոր Սինապյանը Անտառների ու հանքերի նախարարության խորհրդականից՝ Գյուղատնտեսության նախարար է նշանակվում:

**Հովհաննես Չամիչ (-1884)** - Հայտնի ֆինանսիստ և պետական այր: Սարգիս Հովհաննես փաշայից հետո Չամիչ Հովհաննեսն է, որ մեծ ներդրում է ունեցել երկրի ֆինանսական կյանքում: Տիրապետել է արևելյան լեզուների, որի համար պետական ծառայության է նշանակվել: 1867թ. Օսմանյան Բանկում հաշվապահական բաժնի եղել է աշխատել, ապա՝ Պետական արժեթղթերի վարչության ղեկավար: 1876թ. Պետական խորհրդի անդամ է ընտրվել: 1877թ. նշանակվել է Առևտրի և գյուղատնտեսության նախարար: 1878թ. Հովհ. Չամիչը ընտրվում է ֆինանսական բարեփոխումներ ձեռնարկող հանձնաժողովի նախագահության անդամ: 1878թ. Հանրօգուտ շինությանց նախարար է նշանակվում: Միաժամանակ, 1879թ. Հաշվակալական վարչության հիմնադիրն ու տնօրենն է եղել[48]: Կարճիկ լինելով հանդերձ եղել է հատանյանական, կարողիկական ապազգային քաղաքականության դեմ բուռն պայքարողներից:

48 Այս վարչության աշխատանքները և նրա ծառայությունը գործի բերմանը չեղել են համարյա թուրք պետական կառույցների, այդ թվում արտասահմանյան երկրների տարբեր կազմակերպությունների հետ: Եվ զարմանալի չի, որ որոշ աշխատակիցներ արժանացել են նաև օտար շքանշանների արտոնագրերի: 1893թ. Հունի պապը Պետական հաշվապահական դիվանի անդամներից **Կարապետ Գալֆայանին** *Saint Sepestros* շքանշան է շնորհել:
Առևտրի ու Հանրային շինության նախարարության իրավագետ խորհրդականի օգնականներ են եղել Հովհաննես Գալֆայանը, Պետրոս Խորասանճյանը: Հարություն Չերչյանն անդամակցել է Մասնագետների խորհրդին: Այս նախարարության դեմ բնակչությունը ներկայացրել են նաև խնդրագրեր, որոնք հիմնականում հայեր են եղել: Հայտնի մասնագետներից հիշատակելի են առաջին կարգի գծագրիչներ Տամար և Գրիգոր Էֆենդիները: Գևորգ Բալյանը թարգմանությանց դիվանի Ա քարտուղար է եղել, իսկ Խաչիկ Քյուրքճյանը՝ նախարարության գլխավոր...

**Սինափյան Միքրոիչ (1856-1922)**. Հանրօգուտ շինությանց նախարարության կարևորագույն՝ Վիճակագրական վարչության տնօրեն, ապա՝ նախարար է եղել: Գրիգոր Սինափյանի հորեղբայրներից է: Նա իր հայրենակցի, Անվտանգության նախարարության բժիշկ գնդապետ Կոմիտաս բեյ Սինապյանի հետ միասին համարվել է Աբդուլհամիդ Բ-ի «ընտիր» մարդկանցից:

1881թ. Սերվեր փաշայի և Մյունիխ բեյի հետ միասին անդամակցել է օտար ֆինանսական պատվիրակությունների հետ համատեղ գործունեության խորհրդակցություններին: Պոլսահայ մթնոլորտում լինելով հանդերձ կաթոլիկ դավանանքի հետևորդ, պայքար է մղել ազգակործան հասունյանականների դեմ, ինչպես իրենց գերդաստանի հայրենասեր պետական այրերը:

1901թ. Առևտրի ու Հանրային շինությանց նախարարության վիճակագրական բաժնի պետ Միքրոիչ Սինափյանը պարգևատրվել է *Mecidiye* շքանշանով: 1902թ. նշանակվել է Առևտրի ու Հանրօգուտ շինությանց նախարարի օգնական: Ընդունված է եղել բացառիկ նվիրվածություն ցուցաբերած պաշտոնյաներին անձամբ պատվանշաններ տալուց բացի, նրանց նվիրվածության գրավականները հանդիսացող ընտանիքի իգական անդամներին ևս շնորհների արժանացնել: Այն հիմնականում վերաբերվել է երևելի պաշտոնյաների մայրիկներին, կանանց: 1903թ. Հանրօգուտ շինությանց նախարարության խորհրդական Միքրոիչ Սինափյանի կնոջը՝ Ազատուհին և աղջկան՝ Աստղինեին, երկրորդ և երրորդ աստիճանի *Şefakat* պատվանշաններ են շնորհվել կառավարության կողմից:

Հանրօգուտ շինությանց նախարարությունը արտասահմանում ուսանած, տեխնիկական կրթություն ունեցող հայազգի մասնագետներին հնարավորինս շատ իր տարբեր վարչությունների տնօրենների պաշտոններում է նշանակել: Բնականաբար այս նշանակումներում կարևոր դեր են խաղացել հայազգի նախարարները, որոնք տարիներ շարունակ գլխավորել են Հանրօգուտ շինությանց նախարարությունը: Նրանք նախընտրել են լավագույն կրթություն ստացած հայ մասնագետներին, որոնց շնորհիվ այս նախարարությունը շատ առաջընթացներ է արձանագրել Օսմանյան կայսրության կյանքում: Այսպես օրինակ, Առևտրի ու Հանրային շինության նախարարության Կամուրջների ու ճանապարհների վարչության տնօրենի պաշտոնում հայտնի է եղել **Գևորգ Աղաճյանը**, որն արժանացել է *Rütbe-i Sâniye* (1894), 5-րդ աստիճանի *Mecidiye*, *Ulây-ı sâni* (1900) պատվանշաններին ու աստիճանին: Այս նախարարությունում մենք տեսնում ենք նաև այնպիսի հայտնի անունների, որոնք մեծագույն ներդրում են ունեցել նախևառաջ օսմաներեն լեզվի զարգացման, բազմաթիվ դասագրքերի ու բառարանների հեղինակման, հրատարակման մեջ: Այս դասագրքերով են կրթվել ու օսմաներեն սովորել, դասավանդել կայսրության դպրոցներում ու մասնագիտական վարժարաններում: Դասագրքերի մի մասը եղել է հայատառ թուրքերենով: Այդ անուններից է 1900թ. Հանրօգուտ շինությանց նախարարության թարգմանիչ, 3 տասնյակից ավել օսմաներենի տարբեր դասագրքերի հեղինակ **Միհրան Աբիկյանը**, որն արժանացել է 4-րդ աստիճանի *Osmaniye*-ի:

Նույն տարիներին նախարարության Արձանագրությանց դիվանի պետ **Ռաքըմ էֆենդին (Խնկիր Քյուրքճյան)** ստանում է *Ulây-ı sâni* աստիճան և երկար տարիներ պաշտոնավարում: Այս շրջանի հայտնի անուններից էր **Գաբրիել Սերվիչենը**, որը եղել է նույն Նախարարության Հատուկ բաժնի պետ և խորհրդական[49]: 1900թ. Հանրօգուտ շինությանց նախարարության խորհրդական, «*Sabah*» օսմաներեն թերթի արտոնատեր **Միհրան Նազգաշյանին** տրված է բարձրագույն պարգևներից Առաջին աստիճանի *Mecidiye*: 1902թ. Առևտրի ու Հանրային շինությանց նախարարության իրավախորհրդատու Հովհաննես Քարտաշյանը ստանում է *Mütemayiz*, 2-րդ աստիճանի *Ulây-ı sâni* և արծաթե *Imtiyaz*: Վիճակագրական վարչության ղեկավար **Ռոբեր Յազճյանը** ստանում է *Բալա*-ի պատվավոր աստիճան:





Պոլսից դուրս, Երուսաղեմի Հանրային շինությանց գլխավոր պաշտոնյա է աշխատել **Միքրոիչ Չրենկյանը**, որն արժանացել 4-րդ աստիճանի *Osmaniye*-ի (1894):

**Օսմանյան հանրային պարտուց վարչությունում**[50] կարևոր պաշտոններ են վարել **Գրիգոր Տրենց Մարգարյանը** (1856-1909), որը **Հովհաննես Ամիրա Մարտիրոսյանի** թոռն էր, և ուրիշ երևելի ընտանիքի անդամներ: Նա աշխատակցել է նաև «Բյուզանդիոնին» (1905):

**Հրանտ Նորատունկյան (1875-1957)**, դիվանագետ: Հարություն Նորատունկյանի (1845-1899) որդին է: 1884-86թթ. սովորել Կայսերական դպրոցում: Ավարտել է Պոլսի և Ֆրանսիայում՝ Էքս ան Պրովանսի համալսարանների իրավաբանական ֆակուլտետները: 1898-1901թթ. Արտգործնախարարության ցանցում իրավաբանական խորհրդատու է եղել: 1902-07թթ. Ռումինիայի Կալաց քաղաքի հյուպատոս է եղել: 1903թ. եղել է միաժամանակ Ռումելիի երկաթուղային ընկերության Արբիտրաժային խորհրդի քարտուղար: 1908թ. Բելգրադի դեսպանատան առաջին քարտուղար է եղել: 1912թ. Ս.Պետերբուրգի գլխավոր դեսպանատանը որպես քարտուղարության պետ է ծառայել: 1914թ. Բելգրադի հյուպատոսարանի խորհրդական և գործերի ներկայացուցիչ եղել: Առաջին համաշխարհայինի ժամանակ վերադարձել է Պոլիս, աշխատել որպես Քաղաքացիության վարչության տնօրեն: 1918թ. Վիեննայի Գլխավոր դեսպանատան քարտուղարության պետ է եղել մինչև 1928թ: Ապա զբաղվել է առևտրով: Ստացել է 4-րդ աստիճանի *Osmaniye* (1900), *Rütbe-i Sâniye* (1904), ռումինական կառավարության կողմից՝ «Ռումինական թագ» շքանշանը (1909), Սերբիայի թագավոր Պետե(ա)րի կողմից 1-ին աստիճանի *St.Sava* շքանշանով պարգևատրվել (1910): 3 ամիս անց Օսմանյան կառավարությունը նրան շնորհել է 3-րդ աստիճանի *Mecidiye* (1910), ստացել ռուսական *Romanov* մեդալը (1913):

*La Türk Moderne* ֆրանսերեն պարբերականում, որին թղթակցել է տարիներ շարունակ, հոդվածաշարով քաղաքական հուշագրություն է հրատարակել «Բալկանյան պատերազմի մասին»: 1957թ. նույն հրատարակչությունը լույս է ընծայել նրա ֆրանսերենով «Մի հետախուզանք» վեպը: Գրել է բանաստեղծություններ:

### Փոստային-հեռագրական-հեռախոսի նախարարություն (PTT)

Յուրաքանչյուր երկրի համար այս բնագավառը ռազմավարական նշանակություն ունի: Այն կարող է հանդիսանալ պետությունների անվտանգության մի քանի գրավականներից մեկը: Օսմանյան կայսրությունում այս ասպարեզը միջազգային մակարդակով սկսել է ձևավորվել միայն 19-րդ դարում, երբ օտար երկրների հետ դիվանագիտական երկկողմ հարա-

49 Գաբրիել Սերվիչենը ստացել է 3-րդ աստիճանի *Mecidiye* (1894), ֆրանսիական *Légion d'Honneur*-ի 4-րդ աստիճան (1899), ապա *Ulây-ı sâni* (1900), *Couronne de Prus* (1902):

50 Հատուկ ներկայացվում է վարչություններից մեկը, որտեղ հայ կարևոր պաշտոնյաների մասին կարծիք ունենալու համար:

բերությունները սկսել են զարգանալ, երբ ի թիվս միջազգային տարբեր կազմակերպություններում անդամակցել ձգտող կայսրությունը փորձել է որոշակի մակարդակ ապահովել, իր տեղն ունենալ եվրոպական և միջազգային ասպարեզներում:

Դիվանագիտական առաջին ներկայացուցչությունների հաստատման հետ միասին վերջիններիս կողմից ջանքեր են գործադրվել Օսմանյան կայսրության ներսում իրենց երկրներում հաստատուն դիրքեր ունեցող փոստային համակարգերը: Սա հնարավոր էր դարձնում այս բնագավառի վերահսկողությունը, ինչը կարևոր դեր կարող էր խաղալ: Այսպիսով, Ստամբուլում, երկրի ողջ տարածքում սկսեցին գործել եվրոպական տարբեր երկրների փոստեր, հեռագրական գործակալություններ:

1840թ. Պոլսում, Յենի Ջամիին կից «Չիչյիհանե Դաիրե»-ում «Փոստահանեի Ամիրե» անունով առաջին փոստը սկսեց գործել: Հատուկ մի աշխատակից՝ սոֆիահայ Եղիազարը, թղթերենքն էր բաժանում էր բոլոր լեզուներով հասցեները, որի համար 600 ղուրշ էր ստանում:

Փոստ-հեռագրական ինստիտուտը Օսմանյան կայսրությունում միաժամանակ ներկայացնում էին ավստրիական, ֆրանսիական, գերմանական, անգլիական և ռուսական գործակալությունները: Լայնորեն օգտագործվում էին ցամաքային և ծովային հնարավորությունները: Այս համակարգում իրապես արժեքավոր էին լեզուների գիտությամբ աշխատակիցները: Օտար գործակալություններն իրենց ներկայացուցչությունների անօրեններ են ընտրել սովորաբար հայերի, ինչպես օրինակ, ավստրո-անգլիական փոստային ընկերության Թուրքիայի գործակալ է եղել Թեոդոր Հյուրմյուզը (1908):

Տարբեր նահանգների ու Պոլսի տարբեր շրջանների բաժանմունքներում աշխատել են հայազգի պաշտոնյաներ[51]: Համակարգը բաժանված է եղել քաղաքային, գավառական վարչությունների, որը կենտրոնացվել է Փոստ-հեռագրական նախարարության (երբեմն վարչություն) կողմից: Երկար տարիներ սուլթանական կառավարության այս օղակը ղեկավարվել է հայ նախարարների, տարբեր աստիճանի ծառայողների կողմից: Պատմությունն արձանագրել է, թե որքան մեծ է եղել հայ նախարարների և միջազգային անկախ փոստային խորհրդաժողովներում օսմանյան պետության հայ պատվիրակների ներդրումը:

Փոստի և Հեռագրի նախարարներ են եղել հայ երևելի մտավորականներ, դիվանագետներ, եվրոպական կրթություն ստացած մասնագետներ: Նրանց շնորհիվ է, որ Օսմանյան կայսրությունը հաջողությամբ ներկայացվել է միջազգային ասպարեզում, կնքվել են կարևորագույն համաձայնագրեր, որոնք ճանապարհ են հարթել եվրոպական տերություններից այս կարևոր ասպարեզի անկախացմանը և ինքնուրույն զարգացման ուղի հարթելուն: Հայ նախարարներից հայտնի են եղել՝ **Գրիգոր Աղաթոնը, Մարշալ Կարապետ Արթին Դավութ**

51 Հայտնի է, որ 1877թ. Ռուսաստանի Թագավորությունը քաղաքում, որը Պոլսից շուրջ 30 կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում, մի փոստ է կոչվել կայսրությունում Հովհաննես Սիմոնյանի անունով: Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ Սուլեյման փաշան գրավում է այս քաղաքը, հրամայում է հայ կայսրությանանդամին, որ հեռագրով սուլթանին հայտնի գրավման մասին և որ տրվում է քաղաքի հետագա ճակատագրի մասին սուլթանական հրամանին: Սուլթանի պատասխանը լինում է «այրել, ավերել, հեռանալ»: Հովհաննես Սիմոնյանը, որ մտքի արթնությամբ հասկացավ և ընթերցում էր պատասխանը, հայտնում է «չայրել, չավերել, հեռանալ»: Հրամանը կատարվում է և քաղաքը փրկվում է: Երախտապարտ բարբարոսարարչությունները նրա անունով փողոց են կոչում: 1900թ. Նշան Թաժմխաճյանը Տրապզոնի հեռագրատան գլխավոր է եղել:





**փաշան, Պետրոս Հալաճյանը, Սինափյան Գրիգորը, Անտոն Թնկըր Յավեր փաշան, Ոսկան Մարտիկյանը, Սրաճնդյան Հակոբը**[52]: Անտոն Թնկըր Յավեր փաշան նախարարական այս պաշտոն զբաղեցրել է երկու անգամ (1891):

Տարիներ շարունակ ինչպես այլ, այնպես էլ Անկախ փոստերի միջազգային կոնգրեսներում օսմանյան պատվիրակությունները ղեկավարել, ներկայացրել են հայ նախարարներ: **Կարապետ փաշա Դավությանին** է վստահվել նախ՝ հեռագրական վարչությունը (1860), ապա՝ Փոստ-հեռագրական նախարարությունը (1868): 1864թ. Փոստի և հեռագրական գործերի նախարար է նշանակվել **Գրիգոր Աղաթոնը**: 1865թ. Փարիզում, Փոստային հեռագրական միջազգային կոնգրեսում մեծ վարպետությամբ ներկայացրել է Օսմանյան կայսրությունը: 1866թ. նա դառնում է Օսմանյան թղթատարության (Փոստի) ընդհանուր տնօրեն: Հեռագրական միջազգային համաձայնագրերում հիմնական խնդիրներից է եղել ընդհանուր սակագների հաստատումը: Փարիզից վերադարձին նա հիմնում է ազգային փոստատարությունը: Դրանից հետո ձեռնամուխ է լինում փոստային կարևորագույն, միջազգային խնդիրների լուծմանը: Նա վեր է հանում սեփական, թուրքական փոստային ծառայությունների հիմնադրման հարցը, և անցնում գործի, ձեռնամուխ լինում փոստային դրոշմանիշների ու բացիկների տպագրությանը (1867): Նույն, 1867թ. Փարիզի Փոստային միջազգային կոնգրեսում հաջողությամբ կարողացել է կարգավորել միջազգային այդ կարևոր կառույցում իր երկրի անդամության խնդիրը:

Պետական Փոստ-ճանակառատարության և հեռագրական նախարար **Անտոն Թնկըր Յավեր փաշան (1812-1908)** կարևորագույն բարեփոխումներ է կատարել այս ասպարեզում: Նրա նախարարության օրոք և նրա շնորհիվ են փայլուն անցել 1876թ. փարիզյան ու ավստրիական պաշտոնական ուղևորությունները, որի ժամանակ կնքվել են կարևորագույն համաձայնագրեր, պայմանավորվածություններ: Նրա օրոք ակտիվորեն հաստատվել է Նախարարության բյուջեն: Կարևորագույն բաժինները վստահվել են հայ մասնագետներին[53]: Անտոն Թնկըր Յավեր փաշան 1877թ. Եվրոպական փոստային ցուցահանդեսին ներկայացնելու համար Պոլսում նախապատրաստել է գեղեցիկ ու նոր դրոշմանիշների մի շարք:



Անտոն Թնկըր Յավեր փաշա
*(Լուս. Արշիվային նկ.)*

52 **Հակոբ Սրաճնդյան** (1863-1913): Փարիզում ստացել է իրավագիտություն: Պոլսում բազմաթիվ բարձրական պաշտոններ է վարել: Սահմանադրությունից հետո նշանակվել է դատական քննիչ, ապա 3 ամիս Թղթատարական և հեռագրական նախարար (1913), մինչև հանկարծական մահը: Ազգային երեսփոխան և վարչ. ուրյան ատենապետ:

53 **Օսկան Մելիքը** Փոստային խորհրդում 1870-ական թթ. եղել է Արխիվի և դրոշմանիշների պահպանության պետը: Սույն պետական Պարտուց նախարարության մեջ վերահսկող և պաշտոնյաների գրասենյակի տնօրեն մինչ այդ օրվանից 1922թ. ցրելը: **Գևորգ Սարիֆը** (Ջինջյանճյան) Օ.Մարտիկյանի նախարարության օրոք Բուլղարիայի պատերազմի ընթացքում եղել է Ռումելիի Փոստային համակարգի պատասխանատուն, ապա Կենտրոնական փոստատան վերահսկիչ, երկար տարիներ եղել է Մեծ կղզու փոստատան ընդհանուր տնօրենը և միայն 1925-ին թոշակի անցել:



Անտոն Թնկըր Դայիր փաշա
(Լուս. Արդոյանի հոր.)

1878թ. Միջազգային անկախ փոստերի փարիզյան 2-րդ կոնգրեսում Անտառի և հանքերի վարչության տնօրեն **Պետրոս Կույումճյանը** Բոլորների պալատում ներկայացրել է օսմանյան պատվիրակությունը: 1885թ. Բեռլինում հեռագիր-հեռախոս միջազգային սիմպոզիումում օսմանյան կառավարության պատվիրակ է եղել Մկրտիչ Յուզբաշյանը, որը ներկայացրել է Օսմանյան կառավարությունը 1903թ. Լոնդոնի միջազգային հեռագրական կոնգրեսում:

**Օսկան Մարտիկյանը (1848-1913)** այս նախարարության վերջին հայ նախարարն է եղել: Մինչ այդ նշանակվել է Մահմուդ Շևքեթ փաշայի կաբինետում Փոստ-հեռագրական նախարարությունում Ֆինանսների նախարարության կողմից հսկիչ: Օսկան Մարտիկյանի ներդրումն այս ասպարեզում հսկայական է: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը նա աշխատանքից դուրս չի եկել:

1914թ. Փոստ հեռագրական նախարար Օսկան Մարտիկյանը Լոնդոնում տպագրում է «Այուրչարժի Հարիջի Փոստա Փուլլարը» դրոշմանիշների շարքը: Նրա օրոք են տպագրվել փոստային դրոշմանիշների ու բացիկների հրաշալի շարքեր, որոնք ներկայացրել են նաև Արևմտյան Հայաստանի քաղաքները, նշանավոր ճարտարապետական հուշարձանները, տարբեր բնակավայրերի ընդհանուր համայնապատկերներ-լուսանկարներով բացիկները, հայտնի ուսումնական հաստատությունները (օրինակ, Բուրսայի շերամաբուծական վարժարանը, նրա հիմնադիր, հայտնի գիտնական Գևորգ Թորգոմյանի հետ և այլն), Պոլսի գեղատեսիլ վայրերը, պալատները[54]: Այս բացիկների մի մասը ազգային նկարիչներ և լուսանկարիչներ Աբդուլլահ եղբայրների գործերն են: Հայ մյուս հայտնի լուսանկարիչների գործերը ևս գտնում ենք փոստային բացիկների տեսքով: Այս դրոշմանիշների, բացիկների ճանաչողական արժեքը միջազգային շրջանակներ-

54 Օրինակ Կառլ Կարոմենոյի փոստային բացիկների հարուստ հավաքածուի պատկերների մասը հայկական թեմաներով են: Այն ներկայացնում է արևմտահայության տնտեսական, մշակութային, ավանդական կյանքը 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության հայաշատ քաղաքները կամ տարբեր քաղաքների հայկական թաղամասերը: Ներկայացված են հայկական վանքերը, եկեղեցիները, դպրոցները, գործարանները ու ֆաբրիկաները, հյուրանոցները, առևտրական տները, ճարտարապետական արժեք ներկայացնող հուշարձանները: Առանձին մի մաս ներկայացնում է օտար առաքելություններին պատկանող դպրոցները, որբանոցները, հիվանդանոցները: Հավաքածուում բացիկներ, լուսանկարված հայ ու օտար լուսանկարիչների կողմից, ներկայացնում են տեղարաններ ցարդերից, ճապաղուրծ ապառված դրերի, տարազգրյայների խմբեր: Հավաքածուն բարդ հրատարակիչ Օսման Քյոլերի շնորհիվ շրջում է տարբեր երկրներում: Այն հրատարակվել է առանձին գրքով: Բացիկների մեծ մասը օգտագործված են, այսինքն դրանք ուղարկված են եղել հայերի կողմից, գրված են հայերեն ու այլ լեզուներով: Ցուցահանդեսը 2009թ. հյուրընկալվել էր նաև Երևանում, նույն Օսման Քյոլերի ուղեկցությամբ և մեծ հետաքրքրություն առաջացրել: Այն փաստագրական և ճանաչողական մեծ արժեք ունի: Արժեքներից մեկն էլ հայկական տարբեր բնակավայրերի տարազները, կենցաղը ցուցադրող հայերի ու հայուհիների նկարներն են:





## ՀԱՅԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԲԱՑԻԿՆԵՐՈՒՄ


















Հայերեն գաղտնագրությամբ դրոշմանիշ

## ՄԵՋԼԻՍԻ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ


Օրսկան Նազըը (Գալիպոլի)


Բոշգեզենյան Հարություն (Հալեպ)


Ալեքսանդր էֆ. (Կոզան)


Արտաշ էֆ. (Սիվանիկ)


Հակոբ Պոլաճյան (Թեքիրդաղ)


Նազարեթ Դաղավարյան (Սվազ)


Հակոբ Շահինյան (Սվազ)


Դանիել Քարջյան (Էրզրում)


Մեքոն Տոնոյան (Էդիրնե)






Հակոբ Բաբիկյան (Թեքիրդաղ)


Հովսեփ Կազազյան և որդին (Դիարբեքիր)


Հովհաննես Սինապյան

Նա հեղինակն է «Ազատի», «Շառափարդ» հայատառ թուրքերեն վեպերի[61], «Նապոլեոնի պատմություն» (6հ.), «Արևելյան պատերազմների պատմություն» (2հ.) մեծարժեք հայատառ թուրքերեն պատմական երկերի: Ֆրանսերենից թարգմանել է մի շարք հայտնի վեպեր, գիտական, քաղաքական բազմաթիվ գործեր: Նա հայ կարողել առաջադեմ երևելիների հետ միասին զաղտնի պայքար է մղել նույն կարողել նկեղեցու քաղաքականության, հայակործան, ջլատիչ գործունեության դեմ:

**Գևորգ Աղաճյան** (1849-1922), պետական հայտնի գործիչ, ինժեներ, գրատերի հեղինակ: Ինժեներական բարձրագույն կրթությունը ստացել է Փարիզում: Վերադառնալով ինժեներություն է արել Հայդարփաշա-Իզմիթ երկաթուղում: 1892-1908թթ. Հասարակաց շինության նախարարության Կամուրջների կառուցման ու ճանապարհաշինության վարչության պետի տեղակալն է եղել, իսկ 1909թ. ղեկավարել է այն: 1899թ. ստրանի Անձնական գանձարանի խորհրդական-ճարտարապետ է եղել: 1901-03թթ. աշխատել է որպես Սասունի Ջրային ընկերության վարչության ղեկավար, 1904-8թթ.՝ Հայդարփաշայի նավահանգստի վերատեսուչ: 1910թ. թոշակի է անցել: Նա է կատարել Գեդիզ գետի հունի փոփոխության, Իզմիրի և Սելանիկի ջրային պաշարների բաժանման, Դեդեաղաչ-Սելանիկ երկաթուղու առաջին նախագծերը, Սելանիկ և Հայդարփաշա նավահանգիստների կառուցապատումը: Իզմիր քաղաքի գլխավոր ինժեներ եղած ժամանակ Գևորգ Աղաճյանը ստացել է 3-րդ աստիճանի *Mecidiye* (1885): 1914թ. ղեկավարել է «Էրմենի բանկասը»-ն (հայկական բանկը): Գրել է կենսաբանության (1882), աշխարհագրության (1883) հայերեն դասագրքեր, Հայ ժողովրդի պատմության մասին ֆրանսերեն աշխատություն (*Etudes historiques sur le peuple arménien*. 1909):

**Բաղաքապետարանի պաշտոնյաներ**

Քաղաքապետարանների կառուցվածքում տարբեր վարչություններ կարիք են ունեցել ճարտարապետական վարչարարության, ուստի այստեղ ևս հայ մասնագետները հայտնի են

61 «Ազատի», «Շառափարդ» հայատառ թուրքերեն վեպերը հրատարակվել են անանուն: Եկեղեցու կողմից բանադրանքի են ենթարկվել: Այս մասին տես հայատառ թուրքերեն գրականության մասին գլխում: «Ազատի»-ն լատինատառ թուրքերենով լույս է տեսել Պոլսում 1991թ.:

Արտգործնախարարության ընդհանուր քարտուղար: 1876թ. նշանակվել է Ֆիլիպեում (Վառնա) կազմակերպված Արտակարգ խորհրդի անդամ, ապա և՝ Խորհրդի նախագահ դարձել: Պետական խորհրդի անդամ է ընտրվել: Գրական, թարգմանական մեծ ժառանգություն է թողել: Թուրքերենի է թարգմանել Մաքիավելլիի «Կայսրը», Ժան-Բատիստ Սեյի «Քաղաքատնտեսությունը», Վոլտերի «Շառլ 12-րդի պատմությունը», «Պետրոս Մեծի պատմությունը», Ռըֆաթ փաշայի հետ հրատարակել են կարևոր դեմքերի մասին քաղաքական դիմանկարներ:


Հովհաննես Նուրյան փաշա

**Հովհաննես Նուրյանը** (1839-1900) եղել է Գյուղատնտեսական բանկի տնօրեններից: Նուրյանը եղել է թուրքական «Կարմիր մահիկի» միության հիմնադիրներից, նրա փոխնախագահը:

Պետական խորհրդի ֆինանսական հանձնաժողովում 1894թ. տեսնում ենք **Էլյաս (Եղիազար) Չայանին** (1840-1902), որի մայրական կողմից պապը արքունի փառղապետ Հովհաննես Տատրյանն էր (1798-1869): Իր քաղաքական կյանքը սկսել է 1876թ. Արտգործնախարարությունում ծառայելով: Եղել է պետության ամենագնահատված այրերից[69]:

Դատական հանձնաժողովում է աշխատել **Անտոն Քյոչեյանը**: 1893թ. Պետական խորհրդի նախագահի օգնական է եղել օսմաներենի հայտնի լեզվաբան ու բառարանագիր **Պետրոս Զեքի Կարապետյանը**[70] (1871-1937):

Հաշվակալական հանձնաժողովում է աշխատել Ֆինանսների նախարարության Հաշվակալության ատյանի անդամ **Գրիգոր Խոտրյանը**: Մեծ ներդրում է ունեցել այս հանձնաժողովներում ֆրանսիական իրավաբանական կրթությամբ օրենսգետ **Հրանտ Ասատուրը** (1862-1928), որը 1914 թվականին անդամակցել է Պետական խորհրդին: Նա բազմաթիվ օրենքների (առևտրական, արդարադատության, դատական հարկադիր բռնագրավման ընթացակարգերում) հեղինակ է ու այլ օրենքների մշակման հեղինակակից:

* * *

*Սահմանադրական ժողովի (Մեջլիսի)* հայազգի երեսփոխանները ներկայացրել են Կայսրության մինչև 12 տարբեր գավառներ[71]: Նրանք աչքի են ընկել իրենց բարձր կրթությամբ, կայսրության հնագույն մշակույթը ներկայացնող ժողովրդին վայել ողջ արժանապատվությամբ, երեսփոխաններից ակնկալվող մեծ հմտությամբ, իրենց գավառների շա-

69 Պետական խորհրդի անդամ **Իլյաս Չայանը** արժանացել է Առաջին աստիճանի ***Mecidiye*** և ***Osmaniye*** պատվանշանների (1901):

70 **Պետրոս Կարապետյան Զեքի (1871-1937)**. Լեզվաբան, մանկավարժ, բառարանագիր: Օսմաներեն է դասավանդել Պոլսո տարբեր դպրոցներում: Հիմնադրել է Կարապետյան աղջկանց և արական վարժարանները (1907-08): Հեղինակ է Օսմանյան գեղագրության, վայելչագրության, օսմաներենի բազմաթիվ քերականությունների, գրականության պատմության, արաբերենի և պարսկերենի քերականությունների, դասագրքերի, թարգմանությունների ժողովածուների, հայ-օսմաներեն և օսմաներեն հայերեն մեծ արժեքավոր բառարանների: Իր գործերը հիմնականում եղել են հայատառ թուրքերենով: Պետրոս Զեքի Կարապետյանը Դոլմաբահչե պալատում մասնակցել է Թուրք Լեզվական համաժողովին (1932): 1893թ. ընտրվել է Պետական խորհրդի նախագահի օգնական: Որպես Պետական խորհրդի քարտուղար, արժանացել է ***Rube-i Rábiya, Mütemayiz*** շքանշանների (1903):

71 1876թ. (Առաջին), 1908թ. Սահմանադրական ժողովների և 1914թ. Ազգային Ժողովի հայ պատգամավորների անունները տես Հավելվածում:





հերը լավագույնս ներկայացնելու հռետորական տաղանդով ու ողջամտությամբ: Դրանք տարբեր դասակարգեր, բնագավառներ, հասարակական, սոցիալական տարբեր խավեր ու քաղաքական համակրություններ ունեցող անձեր են եղել, պետական ծառայողներ, մտավորականներ: 1877թ. մարտի 19-ին պատրիարք Ներսես Վարժապետյանը մասնակցում է Դոլմաբահչեում Օսմանյան պառլամենտի բացման արարողությանը՝ 12 հայ պատգամավորների հետ միասին:

Գիտության և կրթության ասպարեզում հայ մտավորականներն իրենց նվիրել են որպես ուսումնական կարևոր հաստատություններում տարբեր առարկաների դասախոսներ, տնօրեններ, դասագրքերի հեղինակներ, Կրթության նախարարության պաշտոնյաներ, Մեջլիսի Կրթության հանձնաժողովի անդամներ, մասնակցել կրթական ծրագրերի կազմմանը ու դրանց քննարկման աշխատանքներին:

Այս բնագավառում կարևորագույն դեր խաղացողներից են եղել հայերը: Պետական ծառայողներ պատրաստող **«Մյուլքիյե» վարժարանում** դասավանդել են հետևյալ հայ պրոֆեսորները՝ Թոմաս Թերզյանը (ֆրանսերեն), Նշան Ղուկասյանը (ֆիզիկա), Դավիթ Չրաքյանը (նկարչություն, գծագրություն), Պետրի Էֆենդին (հաշվակալություն):

**Գալաթասարայի լիցեյում** դասավանդել են՝ Թոմաս Թերզյանը, Սեպուհ Թարխյանը, Սարյան Էֆենդին (ֆրանսերեն), Արթին Հովհաննիսյանը (պատմություն):

**Համալսարանում** դասավանդել են՝

**Հովսեփ Յուսուֆյանը (1852-1913)** բարձրագույն մաթեմատիկա է դասավանդել մի շարք այլ հաստատություններում ևս, կրթել հազարավոր ուսանողների: 1909թ. Բրյուսելում Տոպոգրաֆիայի միջազգային կոնգրեսում թուրքական կառավարության կողմից նշանակվել է ներկայացուցիչ:

**Հակոբ Պոյաճյանը (1854-1923)** երկրաչափության ուսուցիչ է եղել «Մյուլքիյե»-ում և Գալաթասարայի վարժարաններում: Ուսանողների կողմից Սահմանադրության հռչակումից հետո ընտրվել է պատգամավոր: Որոշ ժամանակ անց Կրթության Նախարարության Բարձրագույն խորհրդի ցմահ անդամ է ընտրվել:

**Միքայել Աշչյանը, Գրիգոր Ռսկյանը** եղել են Կրթության նախարարության գրաքննության պաշտոնյաներ:

**Գրիգոր Քյոմուրճյանը (1868-)** եղել է մաթեմատիկայի պրոֆեսոր, որը շատ արդյունավետ գործունեություն է ունեցել: Մաթեմատիկա և տոպոգրաֆիա է դասախոսել Պետական ծառայողներ պատրաստող «Մյուլքիյե» վարժարանում, որի ամենափայլուն դասախոսներից է եղել: Դասախոսել է Սելանիկի «Ֆեյզիյե» դպրոցում, Բալըքեսիրի ու Էդիրնեի դպրոցներում: 16 տարի, մինչև Սահմանադրությունը, դասախոսել և որպես տնօրեն է աշխատել Էդիրնեում: Հեղինակել է «Մառչելի երկրաչափություն» դասագիրքը, որն օգտագործվել է բոլոր ուսումնական հաստատություններում: 1908թ. Պոլիս գալով, առևտրական (կոմերցիայ) հաշվապահություն և հանրահաշիվ է դասախոսել Բարձրագույն գյուղատնտեսական դպրոցում: 1914-1933թթ. այդ դպրոցի համալսարանական բաժին է հրավիրվել, դասախոսելու առևտրական հաշվակալության և մաթեմատիկական ողջ առարկաները: Դրան զուգահեռ դասախոսել է մի շարք մասնագիտական պետական կրթական հաստատություններում: Կրթության նախարարության կողմից արժանացել է ***Liyakat Madalyası*** և ***Maarif*** մեդալների:

**Արսեն Սաֆարյան (1833-1907).** 19 տարեկանում Էդիրնեի նահանգապետարանում թարգմանչություն է կատարել: 1860-ականներին Կրթության նախարարությունում քարտուղար է աշխատել, եղել գրաքննիչ պաշտոնյա՝ Պոլսի ժամուի վարչությունում: 1874-79թթ. Մեջլիսի Կրթության հանձնաժողովի անդամ է ընտրվել: Աշխատել է նաև Յոզղաթում:



Գրիգոր Զոհրապ





## ՀԱՅԸ ԴԱՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

19-րդ դարի առաջին տասնամյակներին Օսմանյան կայսրությունն արդեն գտնվում էր քաղաքական, տնտեսական ու ֆինանսական ճգնաժամի մեջ: Երկրի տարբեր վայրերում գլուխ էին բարձրացրել նպատակ ժողովուրդները: Այս ամենը կանխելու համար 1839թ. նոյեմբերի 3-ին, սուլթանական պալատի «Գյուլհանե» կոչված պարտեզում հրապարակվեց կայսերական Հաթթը Շերիֆը (սրբազան գիր) հրովարտակը, որը հետագայում ընդհանուր անվամբ կոչվեց Թանզիմաթ: Այս հրովարտակով կառավարությունը հիմնականում Օսմանյան կայսրության նպատակ բոլոր ժողովուրդներին խոստանում էր կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովում, հարկերի արդարացի բաշխում ու գանձում, կապալային սխտեմի վերացում, զինվորական ծառայության ժամկետի կանոնավորում: Դատական գործերը, ժառանգական խնդիրները ևս պետք է օրինական լուծում գտնեին: Կաշառակերությունն ու չարաշահումները պետք է վերանային և այլն:

Հաթթը Շերիֆի նախապատրաստումն ու հռչակումը կապվում է Մուստաֆա Ռեշիդ փաշայի անվան հետ, որը և հեղինակն էր բարենորոգումների այս ծրագրի: Այս ծրագրի հռչակմամբ Օսմանյան կայսրությունը որպես իրավական պետություն, հավակնում էր ունենալ եվրոպական պետությունների վստահությունը: Այն հակված էր ապացուցելու, որ սեփական ուժերով կարգավորելու էր երկիրը և թույլ չէր տալու եվրոպական երկրներին միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Գյուլհանեի Հաթթը Շերիֆը կարծես ի մի էր բերում Սելիմ Գ-ի և Մեհմեդ Բ-ի սկսած բարենորոգումների ծրագիրը և սկիզբ էր դնում երկրի եվրոպականացմանն ուղղված շարժմանը:

Սկսենք նրանից, որ Հաթթը Շերիֆն ընդամենը կայսերական հրովարտակ էր և ոչ օրենք: Հրովարտակի հիմնական դրույթների շուրջ պատրաստվելու էին օրենքներ: Բնականաբար, այս գործին անմիջապես ձեռնամուխ եղավ մեծ վեզիր Ռեշիդ Փաշան: Պատրաստված օրենքները վավերացվելուց հետո միայն, Հաթթը Շերիֆից 11 տարի անց, 1850-51 թթ. դրանք հրապարակվեցին փոքր տպաքանակով:

1840թ. հաստատվեց քրեական օրենքը: 1843թ. բոլոր մահմեդական նպատակների համար զինվորական ծառայություն սահմանվեց, իսկ 1855թվականից՝ ոչ մահմեդական նպատակները ևս հավասար զինվորական ծառայություն պիտի կրեին: Սա երկկողմանի դժգոհություն առաջ բերեց երկրում: Քրիստոնյա զինվորները բնականաբար իրենց զենքն ուղղելու էին քրիստոնյա աշխարհի, մասնավորապես ռուսների դեմ: Իսկ Ռուսաստանը միակ ուժեղ երկիրն էր, որ շահագրգռված էր կայսրության քրիստոնյա ազգերի ազատագրմամբ, ինչպես այն եղավ Բալկաններում: Քրիստոնյա ժողովուրդները Ռուսաստանի հետ էին կապում ազատության իրենց հույսերը: Մյուս կողմից՝ մահմեդականները վախենում էին կորցնել իրենց գերիշխող դերը կայսրությունում: Այս երկկողմանի դժգոհությունը հետաձգեց օրենքի իրագործումը: Ավելին, նախկին 30-40 դուրուշ զինվորական հարկը, որով ազատվում էին բանակում ծառայելուց, տասնապատիկ աճեց: Խարաջը դարձավ 300-400 դուրուշ և քրիստոնյաները մեկուսացան զինվորական ծառայությունից:

Ըստ 1840թ. քրեական օրենսգրքի, հարկերը հավաքվելու էին պետական պաշտոնյաների կողմից, սակայն առաջվա նման գյուղացին հարկ էր տալիս թե՛ պետությանը, թե՛ հար-

կախավարին և թե կապալառուին: Փաշաներից սկսած մինչև ամենավերջին պաշտոնյան վիժեցրին բարենորոգումների իրագործումը, քանզի չէին կարող հաշտվել, որ իրավական տեսակետից կարող էր հավասարություն լինել մահմեդականի և «անհավատի» միջև:

Եվրոպական տերությունները, մասնավորապես Անգլիան և Ֆրանսիան, Ավստրիան, զգուշանալով կայսրության հպատակ քրիստոնյաների իրավունքի պաշտպանության ռուսական ձգտումներից, ստիպեցին սուլթան Աբդուլ Մեջիդին 1856թ. փետրվարի 18-ին հրովարտակ ստորագրել հպատակ քրիստոնյաների վիճակի բարելավման մասին: Դրա խմբագրման գործում մեծ դեր էին խաղացել շահագրգիռ երկրների դեսպանները: Այն հայտնի դարձավ «Հաթթը Հյումայուն» անունով: Հետագայում այս հրովարտակը պաշտոնապես ամրագրվեց Փարիզի հաշտության պայմանագրի 9-րդ հոդվածով: Ակնհայտ է, որ «Հաթթը Հյումայուն»-ի ստորագրմամբ շահագրգռված երկրներից ոչ մի կերպ չէր զբաղեցնում հպատակ ժողովուրդների վիճակի հոգածությունը: Նրանց նպատակն էր մեկուսացնել Ռուսաստանին և կայսրությունում հաստատել իրենց երկրների ազդեցությունը: Այն մասնավորեցվում էր նաև կյանքի տարբեր բնագավառների առումով ևս: Բարձրագույն Դուռը փորձում էր հանդարտեցնել իր հպատակներին և պարտատերերին[1]: Յուրաքանչյուր նոր հրովարտակ կրկնում էր նախկինի միտքը, իսկ էությունը մնում էր կրկին թղթի վրա, քանզի այդ բոլոր օրենքները թշնամաբար էին ընդունվում մոլեռանդ խավի՝ մուսուլմանական հոգևորականության և հետադեմ պաշտոնյա դասի կողմից: Այն մեծապես վախեցնում էր հիմնականում հպատակ ժողովուրդների համայնքների առաջնորդներին[2], որոնք զգուշանում էին հրովարտակների մասին իրազեկ չդարձնել իրենց հավատակիցներին, զգուշանալով թուրքերի վայրագի ցույցերից, քանզի վիճակի փոփոխության մասին որոշումները հակասում էին Ղուրանի սկզբունքներին: Հայկական ու հունական երկու համայնքների համար կարևոր է եղել միմյանց նկատմամբ ունեցած տարաձայնությունների ու միավորող երևույթների պարզ գիտակցումը: Շարիաթի դոգմաները չէին կարող հավասարություն դնել մահմեդականների ու ոչ մահմեդականների միջև: Թանզիմաթի էության ապացույցը հանդիսացող ժողովուրդների մերձեցմանն ուղղված բարենորոգումները կոչված չէին իրականացնելու ու վերացնելու մահմեդական մոլեռանդությունը:

Թուրքիայի Սահմանադրական 2 ժողովները կոչվում էին՝ **Ծերակույտ** (Մէճլիսի Այան)[3] և **Երեսփոխանական ժողով** (Մէճլիսի Մէբուսան):

Օսմանյան կայսրության վերջին երկու դարերում դատական համակարգը հետևյալն էր. Գոյություն ուներ 4 տեսակի դատարան՝

1. **Կրոնական** (Մահքեմէի շերիեէ)-կրոնական խնդիրների, ամուսնությունների ժառանգության, խնամակալության, կտակի, վաքֆի, կալվածքների, անշարժ գույքի հետ կապված հարցերի դատեր:
2. **Քաղաքային** (Մահքեմէի հուգուգ)-անհատական, սեփականության խնդիրներ, առուծախի, ավանդի, վարձակալության:

1 Ролен-Жекмен М.Г., *Армения, армяне и трактаты*, М., 1897, стр. 24; Новичев А.Д., *Турция. Краткая история*, М., 1965, стр. 83; Чихачев П.А., *Письма о Турции*, М., 1960, стр. 170.

2 1857 թվականին տպագրվել է հայ և հույն եկեղեցիների տարբերությունների ու անհամաձայնությունների մասին կրոնա-դավանաբանական ուսումնասիրության մի փորձ, թարգմանված 1830թ. հունարեն հրատարակությունից: Հեղինակն անհայտ է: Տպագրվել է Կ.Պոլսի «Անարդի» հունական տպարանում:

3 Ծերակույտի անդամ է եղել բժիշկ Սերվիչենը (Սերովբե Վիչենյանը, 1815-1897):





3. **Պատժական** (Մահքեմէի ճէզա):
4. **Առևտրական** (Մահքեմէի թիճարէթ)-վաճառականական բոլոր տեսակի խնդիրներ[4]: 1847թ. ստեղծվեցին առևտրական դատարաններ, որը ոչ մահմեդականը հավասար իրավունք ուներ վկայություններ տալու: Սա ևս հիմնականում ձևական բնույթ էր կրում: Դատարանն ուներ նախագահ և անդամներ: Փաստաբանները դատարանի մաս չէին կազմում: Դատական նախարարությունն էր վերահսկող օղակը:

**Քաղաքային և պատժական դատարանը** 3 աստիճան ուներ՝

1. **Նախադատական**
2. **Վերաքննիչ**
3. **Վճռաբեկ**

**Բարձրագույն ատյանը** (Տիվանը Ալի) կազմված էր 30 անդամներից, որից՝ 10-ը Ծերակույտից (Մէջլիսի Այան), 10-ը՝ Պետական խորհրդից և 10-ը ընտրվում էին Վճռաբեկի նախագահից և անդամներից:

**Պատերազմական ատյանը** գործել է բացառիկ դեպքերում, երբ խռովություններ են եղել, կամ՝ պատերազմական շրջանում:

Դատական և պետական իրավաբանական-խորհրդատվական զանազան ասպարեզներում մեծ պատիվ ու հարգանք են վայելել հայազգի պաշտոնյաները: Արդարադատության Մեծ խորհուրդն ունեցել է երեք հայ անդամներ՝ **Վահան** էֆ. (Հովհաննես Վահանյան), **Գասպար** բեյ և **Վարդան** բեյ:

Այս ասպարեզում ծառայած հայերից հայտնի են եղել հետևյալ անունները՝ Հովհաննես Վահանյան, Կարապետ Շահբազ, Հովհաննես Ալեքսանյան, Տիգրան Յուսուֆյան, Թովմաս Խորասանճյան, Հարություն Մոսդիչյան, Միհրան բեյ Տյուզ, Պողոս բեյ Մաքրը, Հովհաննես Թենկըր, Գրիգոր Օտյան, Պետրոս Խորասանճյան, Հարություն Տատյան, Հովհաննես Սագըզ, Սարգիս Աղաբեկյան, Բարսեղ Հալաճյան, Աբրահամ փաշա Երամյան, Սահակ Աբրո, Զարեհ Տիլբեր և ուրիշներ:

Քաղաքային, պատժական և առևտրական, մասնավորապես վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում, իրավագիտական խորհրդում[5] հաճախ ենք հանդիպում հայ մասնագետների ներկայությանը տարբեր պաշտոններում՝ սկսած դատավորներից[6]:

1880-ական թթ. Պոլսում 300 բժիշկ և նույնքան էլ փաստաբան կար:

Դատական նախարարության տարբեր բաժիններում հայեր են աշխատել: Իհարկե, մեծ նշանակություն է ունեցել իրավաբանական կրթությունը, օտար լեզուներ իմանալը, միջազգային դատական, առևտրական օրենքներին տիրապետելը[7], այս ասպարեզում հայ մասնագետների տեսական և գործնական լավագույն հեղինակությունը: Սա այս հանգամանք-

4 1847թ. որոշ առևտրական դատարաններում քրիստոնյաները ևս կարող էին վկայություններ տալ:

5 Իրավագիտական խորհրդի քարտուղար է եղել **Հովհաննես Կայսմենյանը**:

6 1873թ. «Մեքթեբի Սուլթանի» (Կայսերական դպրոց) ուսուցիչ **Վահան էֆենդին (Հովհաննես Վահանյան)** Վճռաբեկ ատյանի անդամ է ընտրվել: 1878թ. **Սահակ Աբրոն, Զարեհ Տիլբերը և Հովհաննես Նուրյանը** ընտրվել են աշխատելու կառավարական Իրավաբանական հանձնաժողովում:

7 Հայերի անունների ենք հանդիպում դատական համակարգի տարբեր բաժինների ղեկավարների, դատավորների ու դատախազների թվում (**Տիգրան Յուսուֆյան, Թադեոս Էֆենդի, Թովմաս Խորասանճյան, Թադևոս Համամճյան, Միհրան Պապոնիկյան, Գաբրիել Գաբրիելյան, Մարտիրոս Ոսկյան, Գրիգոր Քուպելյան, Հարություն Մոսդիչյան, Հովհաննես Թորոսյան** և շատ ուրիշներ):



Պոլսի համալսարանի իրավաբանական բաժնի առաջին հայ շրջանավարտները (*Լուս. Շանթ, 1911*)

կավարտվել են հայ իրավաբանների, փաստաբանների, իրավագետների կողմից՝ Պողոս Պասճայան (Տպագրական տեսչություն), Մինաս Կամսար, Լևոն Սարենյան (հայերեն լրագրերի գրաքննիչներ), Հարություն Խանդանյան (Մարդահամարի տեսչության Արտասահմանյան անցագրերի դիվանի դիվանապետ) և այլք, որոնք զբաղեցրել են առաջին քարտուղարների, թարգմանական դիվանների տեսուչների պաշտոններ:

1918թ. «Հայ իրավագիտաց միություն է հիմնվում Պոլսում: 1919-21թթ. հայ իրավագետներն ու փաստաբաններն ունեցել են Պոլսում և այլուր իրենց տպագիր մի քանի հայերեն պարբերականները.

1. *«Արդունք»*, Պոլսի երիտասարդ իրավագետների ակումբի երկամսյա հանդես: Արտոնատերն ու պատասխանատու խմբագիրն է եղել Արտաշես Չարգըլյանը:
2. *«Իրավունք»*, 1-9 համար, հրատարակիչ խմբագիրն է եղել Բենիամին Միքաելյանը, Զմյուռնիա:
3. *«Իրավունք»*, օրգան Պոլսի երիտասարդ իրավագետների ակումբի, կիսամսյա հանդես: Արտոնատերն ու պատասխանատու խմբագիրն է եղել Արտաշես Չարգըլյանը: 1-4 համար, 4 էջ, Տպ. Օ.Արզումանի:
4. *«Իրավագետ»*, (15.12.1919 Պոլիս, Օրգան հայ իրավագետների միության: Տպ. Հովակիմյան): Ամսագիր, Արտ. Լ.Կոյումճյան, պատասխանատու տնօրեն Հարություն Պըրպըրյան: 1-3 համար, 72 էջ:[12]
5. *«Օրենք»*, (1921, Կ.Պոլիս, ամսաթերթ, Օրգան հայ իրավագիտաց միության): Պատասխանատու տնօրեն՝ Աբրահամ Սաաթճյան, արտոնատեր՝ Լյութֆիկ Կոյումճյան: 1-3 համար, 48 էջ:

Օսմանյան **Հանրային պարտուց վարչությունը** (Դույունը Ումումիյե) Կայսրության պետական պարտքի (հարկային) գրասենյակն էր, որ կազմված է եղել պարտատեր երկրների և Օսմանյան պետության ներկայացուցիչներից: Նրանք են տնօրինել պետական զանձատան հետևյալ հասույթները՝ ծխախոտ, աղ, դրոշմները (բացի նամակների դրոշմանիշներից), մետաքս, ոգելից խմիչքներ, ձկնարաններ, տուրքեր: Այս վարչությունը մեծ թվով հայ աշխատակիցներ է ունեցել: Նրանց մ... մասը միջազգային առևտրի մասնագետներ ու փաստաբաններ են եղել:

12 Ամսագրի առաջին համարը լույս է տեսել 1919թ. դեկտեմբերի 15-ին: Հայ պարբերական մամուլի մատենագիտության մեջ (Եր.,1986թ.) որպես սկիզբ նշված է 1920 թվականը (տես՝ h. 1130-ը):





տարաններ են եղել: Սա այն պետական օղակներից է եղել, որ առավելագույնս կարևոր են եղել արտասահմանում կրթություն ստացած, միջազգային օրենքների և փաստաբանական գիտության մասնագետները: Հայ երիտասարդների մի պատկառելի խումբ ազգային, ինչպես նաև սեփական միջոցներով կրթություն են ստացել տարբեր երկրների բարձրագույն հաստատություններում, տարբեր լեզուներով, տվյալ երկրների օրենքներին գիտակ դառնալու պայմաններով: Այս հանգամանքը որոշիչ էր դառնում տվյալ երկրների հետ տարբեր իրավական ակտեր և պայմանագրեր կնքելու ժամանակ: Հայ պաշտոնյաների մեծ մասն աշխատել է Հանրային պարտուց վարչության թարգմանական բաժնում: Սովորաբար այս վերջին բաժինը ամբողջապես տնօրինել են հայերը: 1914թ. Օսմանյան կայսրության պարտքը՝ 130 մլն. օսմանյան ոսկի էր կազմում: Այդ թվականին կայսրության ողջ տարածքում կար ավելի քան 80 նավահանգստներ:

Հայ իրավաբաններն ու փաստաբանները նկատելի ներդրում են ունեցել նաև Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Եգիպտոսի իրավական համակարգի բարենորոգման, եվրոպականացման գործում: 1870թ. Նուբար փաշայի ղեկավարությամբ Եգիպտոսում դատական բարեկարգման հանձնաժողովը մշակեց օրենքներ, որոնցով պետք է ղեկավարվեին առևտրական, քաղաքացիական հարցերի, քրեական դատարանները, խառը դատարանները: Այս գործին մասնակցում էին օտար իրավագետներ ևս: Կահիրեում, Ալեքսանդրիայում և Մանսուրայում սկսեցին գործել 3 խառը դատարաններ: Վճռաբեկ դատարանը գտնվում էր Ալեքսանդրիայում: Դատարաններում գործածվում էր ֆրանսերեն լեզուն, իսկ անգլերենը տիրապետող դարձավ 1905 թվականից:

Այս խառը դատարանների մասին համաձայնություն ստորագրեցին Գերմանիան, Ավստրիան, Բելգիան, Դանիան, Իսպանիան, Միացյալ նահանգները, Ֆրանսիան, Անգլիան, Հունաստանը, Իտալիան, Շվեդիան, Հոլանդիան, Պորտուգալիան և Ռուսաստանը:

Խառը դատարանների բացումը կատարվել է 1875թ. հունիսի 28-ին: Մինչ այդ եգիպտական կառավարությունն իր երկրում կատարված հանցագործությունները մեղավորներին Եգիպտոսում չէր կարող պատժել: Խառը դատարաններում այքի են ընկել հետևյալ հայ իրավաբանները. Վճռաբեկ դատարանի նախագահներ՝ **Արթին Բեհլյանը, Արթին Խաչատուրը**, Առևտրական դատարանի նախագահ՝ **Խաչեր Միրայկյանը**, Առևտրական դատարանի սնանկության վերաբերյալ բաժնի կարգավորող **Կարապետ Բեհլյանը**: Վճռաբեկ ատյանի խորհրդականներ են եղել **Յուսուֆ Չրաքյանը, Ստեփան Խաչատուրը, դատավորներ՝ Յուսուֆ բեյ Ազիզը, Իսկենդեր Պոզարին, Պողոս Հակոբյանը**, և բազմաթիվ եվրոպական կրթությամբ հայ փաստաբաններ[13]:

**Փաստաբանություն.** Օսմանյան կայսրության մայրաքաղաքի վերջին շրջանի հռչակավոր փաստաբաններն էին **Վաղարշապատ Մանուկյանը, Գրիգոր Զոհրապը[14], Սիմոն Թենքրը, Պետրոս Շաշյանը, Հակոբ Մրճիկյանը, Հակոբ Սրաճայանը[15], Կարապետ Քալըսըզոն**:

13 Օսմանյան կայսրությունում եգիպտահայության ներդրման մասին համառոտ կերպով տես՝ Եգիպտոսի հայերին ու հայկական գաղութին նվիրված համապատասխան բաժնում:

14 Գրիգոր Զոհրապը՝ Պոլսից և Ազգային ազատագրական ու անկախության Օսմանյան մեջլիսի հիմնադիր անդամների կողմից Մեջլիսի պատգամավոր է ընտրվել (1906): Նա իր ժամանակի ամենաազդեցիկ դեմքերից է եղել Պոլսում:

15 Եղել է փաստ հետազրական գործի նախապար: Տես՝ նախապարությունների մասին գլխում:

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾ, ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Օսմանյան կայսրությունն իր հզորությամբ, գրաված ընդարձակ տարածքներով, հիմնականում պարտական է եղել իր բանակին: Այս բանակի չարժիչ ուժերը եղել են լավագույն վարժանք ստացած ենիչերիական զորամասերը, որ ստեղծվել են 1361-36թթ., սուլթան Մուրադ Ա Ղազիի (1359-1388) օրոք: Նրա ժամանակ օրինականացվեց արդեն մինչ այդ պարբերական արհավիրք դարձած մանկահավաքները (դևշիրմե): Քրիստոնյա հպատակների ընտանիքներից պոկվող «արյան հարկը»՝ մանկահասակ տղաներն ու պատանիները կազմեցին ենիչերիական զորագնդեր[2]: Տարբեր տարիքի այս երեխաները բռնի մահմեդականացվեցին, ծայրահեղ մոլեռանդ կրթություն և ռազմական գիտելիքներ ստացան: Այսպիսով չէր խախտվում կրոնական այն պնդումը, թե անհավատները չեն կարող մաս կազմել օսմանյան բանակի: Իհարկե, պատմությանը հայտնի են դեպքեր, երբ պատերազմական ծայրահեղ իրավիճակներում օսմանյան կառավարությունը օգտագործել է քրիստոնյաներին, այդ թվում նաև հայ ազգաբնակչությանը, որպես բանակի մի մաս: Այդպես է եղել 1600թ. Ջալալիների ապստամբության ժամանակ, երբ Սեբաստիայի կառավարիչ փաշան սեբաստահայերին մասնակից է դարձրել զինված գործողություններին: Ջալալիները հաղթելով, ծայրաստիճան դաժանությամբ վրեժխնդիր են եղել հայ ազգաբնակչությունից:

Արևմտահայ իրականության մեջ մանկաժողովները օրենքի ուժ ստացան Կոստանդնուպոլիսը գրաված Սուլթան Մեհմեդ Բ. Ֆաթիհի (1444,1451-81) ժամանակ: Այն տևեց մինչև 1750-ական թվականները: Դևշիրմեի զոհ դարձած քրիստոնյա ենիչերի պատանիները ահ ու սարսափ դարձան նախևառաջ հենց իրենց ծնող քրիստոնյա հպատակների համար, որոնց նկատմամբ անասելի դաժանություններ էին ցուցաբերում: Այս պատանիների ու երեխաների մյուս մասը պետական ծառայությունում պիտանի լինելու համար հատուկ կրթություն ստացան:

Այս ասպարեզը որպես կանոն փակ է եղել Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների համար: Սակայն մի կարևոր հանգամանք: Երբ 16-րդ դարում տղահավաքները օրենքի ուժով պաշտոնապես հաստատվեցին, քրիստոնյա ընտանիքների երեխաներն էին, որ պոկվելով հարազատ միջավայրից, խստագույն հակաքրիստոնյա կրթություն ու դաստիարակություն ստացան, բռնի մահմեդականացվեցին և հիմնական կորիզը կազմեցին կայսրության ամենամոլեռանդ ու վայրագ ուժի՝ ենիչերական զորքերի: Այդ նախկին քրիստոնյաները ուղղակի սարսափ ու փորձանք դարձան հպատակ ժողովուրդների համար: Իրենց ճանապարհին ամեն ինչ կեղեքեցին ու ամայացրին: Նրանք էին կայսրության պատերազմող հիմնական ու ամենաալայրագ ուժը և այնքան զորացան, հարստացան, որ սկսեցին մեծագույն վտանգ ներկայացնել հենց Օսմանյան կայսրության, նրա սուլթանների համար: Ահա այս բռնի մահմեդականացված երեխաների մեջ գտնվեցին այնպիսիները, որոնք

1 Այս մասին մանրամասն տես Անահիտ Աստոյան, *Հայերն Օսմանյան բանակում (14-րդ դարից մինչև 1918թ.)*, Եր., 2010: Գրքի այս գլուխը չարադրելիս վերոհիշյալ ուսումնասիրությունը մեզ համար չափազանց օգտակար է եղել: Այն համակողմանիորեն անդրադառնում է Օսմանյան բանակում հայերի ունեցած բազմակողմանի դերին:

2 Արտակ Շաքարյան, *Արյան հարկը Օսմանյան կայսրությունում*, *Դևշիրմե*, Երևան, 2006:





մեծ առաջխաղացում ապրեցին ենիչերական շրջանակներում, հսկայական հեղինակություն ու ազդեցություն ունեցան իրենց ժամանակներում: Նրանցից ավելի ուշիմները կարողացել են իրենց բացության շնորհիվ բարձրանալ օսմանյան բանակի հրամանատարական աստիճաններով, գրավել հնարավորինս բարձրագույն պաշտոններ ու մեծ հարստության տեր դառնալ, ազգակցական կապերով կապվել պալատի, սուլթանական ընտանիքների հետ: Նրանց մեջ եղան մինչև անգամ վեզիրների աստիճանի հասած պետական այրեր:

Արմատներից պոկված ու մահմեդականացված այս զինվորների մեջ բնականաբար եղել են այնպիսիները, որոնք պատանի հասակում էին ենիչերի դարձել, այսինքն նրանց հիշողության մեջ չէին կորել իրենց ազգային պատկանելության զգացումները: Պատմությունն արձանագրել է հայկական ծագում ունեցող մի քանի հզոր ենիչերիների, որոնք առանձնապես չեն էլ թաքցրել իրենց ծագումը և հնարավորինս կարողացել են տարբեր հարցերում իրենց նպաստը բերել իրենց ծնող ժողովրդին ու նրանց ինչ-ինչ հոգսերի ամոքմանը, օգտակար լինել իրենց ժողովրդին, կարևոր միջնորդություններ կատարել Բարձր Դռանը, սուլթանին՝ հայանպաստ որոշումներ կայացնելու, մարդկանց բանտից, մահապատժից փրկելու, հայկական եկեղեցիները այլ ազգերին տալու կայսերական հրովարտակների գործադրումները կանխելու, շտկելու, հայ ազգային կյանքում, ակնհայտ կամ թաքուն, բարի դեր են խաղացել, կարևոր նպաստ ունեցել:

Այդպիսի դեմքերից է եղել մեծ վեզիր Խալիլ փաշան:

**Խալիլ փաշա** (17-րդ դ.): Պետական գործիչ: Եղել է սուլթան Ահմեդ Ա-ի (1610-1623) նպարքոսը և որի համար հայերեն մի ձեռագրում, ինչպես նաև Ջևդեթի «Օսմանեան պատմության» մեջ, ասված է, թե Զեյթունից է եղել, ծագումով հայ: Մի այլ աղբյուրում նա մարաշցի հայ է, կամ՝ կեսարացի: Մանուկ հասակում բռնի խլամացվել է, տարվել Կ.Պոլիս: Երկու անգամ վեզիրություն է արել: Նա սադրազամություն է արել Մուստաֆա Ա և Օսման Բ- սուլթաններին, նշանավոր եղել իր ծառայություններով, փառավոր էջեր գրել օսմանյան բանակի պատմության մեջ: 1609թ. ծովակալ է դառնում, ծովամարտի է դուրս եկել բռնդեմ մելիտացիների և գերել 10 նավ, որի համար արժանացել է վեզիրի կոչման ու ամուսնացել սուլթան Ահմեդ Ա-ի դստեր հետ: **Վեզիրի** պաշտոն է վարել նաև Մուստաֆա Ա, Օսման Բ, Մուրադ Դ սուլթանների օրոք: Ապա դարձել է Մեծ վեզիր: 1619թ. պարսիկների դեմ կռիվներում Շահ Աբասին ստիպել է հաշտության պայմանագիր կնքել: Նրա կենսագրության հայտնի էջերից են Միհնպում խազարների արշավանքի հետ մղումը: 1620թ. կարճ ժամանակամիջոցի համար պաշտոնանկ է արվել և կրկին վերադարձել ծովակալի իր պաշտոնը: 1621թ. կռվել է լեհերի դեմ ու վերադարձել Մեծ վեզիրի պաշտոնը 1626-27թթ.:

Ըստ Վենետիկի դեսպան Ջիանի Ֆրանչեսկո Մորոզինիի, օսմանցիներն ունեցել են մանկությունից մահմեդականացված (դևշիրմեի զոհ) հայտնի մի նավապետ, որը մինչև սադրազամության է հասել: Նա և հայ վաճառականները նավարկել են սեփական, խաչ հիշեցնող և ոլխարի պատկերով դրոշներով: Իսմայիլ Համդի Դանիշմենդն իր Օսմանյան կայսրության բարձր աստիճանավորներին նվիրված գրքում գրում է, որ 1608-1621թթ. պաշտոնավարած այս անձը Հ(Խ)ալիլ փաշան է եղել: Նա քաղաքական կարևոր կապեր է հաստատել Լեհաստանի, Ավստրիայի հետ:

Հայկական ծագում է ունեցել 16-րդ դ. մալաթիացի զորավար, պետական գործիչ, եպար-

յոս (փարչապետ) **Սուլեյման փաշա Էրմենին** (1605-168(9)0): Մանկահասակ ժամանակ տարվել է Պոլիս, խլամացվել: Եղել է կայսրության կարևոր դեմքերից, հասարակ զինվորից բարձրացել մինչև Մեծ վեզիրի աստիճանի: Եղել է Իբրահիմ Ա Դելի (խենթ, 1640-48) սուլթանի թիկնապահը: Մասնակցել է Կրետեի գրավմանը և 1644թ. դարձել Մեծ վեզիր, Մեհմեդ Դ սուլթանի (1649-1687) օրոք եղել նպատբրս: Հրաժարվել է Մեծ վեզիրի պաշտոնից, երկու անգամ վարելով Մեծ վեզիրի տեղապահի պաշտոնը: 1687թ. Սուլթան Սուլեյման Բ-ի (1687-1690) գահակալության շրջանում եգիպտական, ծագումով հայ զորահրամանատարներից Մէմյուկ Սուլեյման Բեյ Պարեմ Զեյլու-ն մի քանի անգամ նահանգապետ է նշանակվել (1690-91թթ.), վարել Կարինի և Սեբաստիայի կուսակալությունները, ստացել *վեզիրի* աստիճան, իսկ 1644թ. Մեծ վեզիր է դարձել, որից շուտով հրաժարվել է, փրկելու համար իր կյանքը: Մասնակցել է Կրետեի գրավմանը: Նա այն եզակի պետական գործիչներից է եղել, որը չի թաքցրել իր հայկական ծագումը և իր անվանն ու տիտղոսին կից կրել է *Էրմենի* անունը, նույնիսկ երբ Մեծ վեզիր էր:

Եղել է Էդիրնեի (Ադրիանապոլսի) սուլթանական պալատի վերակացուն: Մինչ մահ կրել է էմիրի տիտղոս՝ *Էրմենի* Սուլեյման փաշա, անգամ Մեծ վեզիրի պաշտոնում: Կարևորագույն ծառայություններ է մատուցել Օսմանյան կայսրությանը՝ փրկելով տարբեր վտանգներից: Նրա և որդու մասին գրել է Երեմիա Քյոմուրճյանը. «Հայկազարմ մալաթիացու» որդին՝ Օսմանը, քաջ զինվոր, *սերդար է* նշանակվել 1710թ.:

Բնականաբար եղել են իրենց քաջությամբ փայլած հայկական ծագում ունեցող այլ հեղինակներ ևս, սակայն նրանց թուրքական անունները և խոհեմ զգուշությունը թույլ չեն տալիս, որ դուրս գան ասպարեզ և հիշվեն նրանց քրիստոնյա ծագման հանգամանքները, առավել և ոչ թուրք լինելու փաստը:

**Հասան փաշա Ճեզայիրլի Ղազին (18դ.)** ծագումով Ռոդոսթոյից է եղել, հայ քնտանիքի զավակ, որին ծնողները ստիպված են եղել որպես ստրուկ հանձնել Հաջի Օսման անունով մի վաճառականի, որը նրան Հասան անունն է տվել: Տղան երկար ժամանակ ապրել է Ալժիրում, որպես ստրուկ է ծառայել, սակայն իր արտակարգ ընդունակությունների շնորհիվ դարձել է խիզախ ծովագնաց ու հայտնի վաճառական: Այստեղից էլ նրա Ճեզայիրլի (ալժիրցի) մականունը: Հասան փաշան, որ ծառայել է սուլթան Աբդուլհամիդ Ա Ղազիի (1774-89) շրջանում, եղել է Մալթայի գրավման հերոսներից:



Դյոնեկլի Հասան փաշա

Հայտնի է, որ 1770թ. օսմանյան նավատորմի նախարար ռողոստահայ **Դյոնեկլի Հասան փաշան** ստանձնել է Օսմանյան կայսրության նավատորմի ադմիրալի կոչման (կապուդան դերյայը): Մինչ այդ նա եղել էր Կովկասյան ճակատի ռազմածովային նավատորմի հրամանատար: Մեծագույն ծառայությունների համար ստացել է *վեզիրություն*, ապա նաև՝ *ծովակալի* աստիճան: Նրա ծովակալության շրջանում նավատորմը, մասնավորապես ռազմածովային նավա-





տորմը ծաղկում է ապրել: Նավաշինությունը մեծ թափ է ստացել, կառուցվել են մեծ զորանոցներ, ռազմական շինություններ[3]: Նշանավոր է դարձել իր քաջագործություններով և կրել *դալի* (համառ) մականունը, որն ավելի հանդիպում է սուլթանների անունների կողքին: Նրա օրոք օսմանյան ռազմանավերում թնդանոթաձիգների 75%-ը հայ և հույն վարձկաններ են եղել:



Նեվշեհիրցի Դամադ Իբրահիմ փաշա

Օսմանյան բանակի պատմությանը մեջ դեր խաղացած հայերի, բանակի համար աշխատող զինագործ վարպետների մասին գտնում ենք մեր մատենագիտական աղբյուրներում, առանձին մասնակիցների գրառում-հիշողություններում:

Օսմանյան կայսրության հայ գեղանկարիչները ստեղծել են մեծ չափերի բազմաթիվ սքանչելի գործեր, որոնց թեմաները են օսմանյան բանակի արժանահիշատակ մարտերից տեսարաններ, հայտնի ծովամարտերի դրվագներ, զինվորական երևելի գործիչների[4] դեմքեր:

Օսմանյան կայսրության ցամաքային ու ռազմածովային ուժերում մոտ 200 բարձրաստիճան փաշաներ, բեյեր են ծառայել որպես բարգմանիչներ, խորհրդականներ, բանակի մատակարարներ: Օսմանյան բանակի պատմությունն ունեցել է հայ զորավարների, սղմիրալների (նաև դեղագործ), զինվորական բժիշկների պատկառելի թվաքանակ:

Զինվորական և պալատական ամենամեծ աստիճանը եղել է *վեզիրությունը*:

Հայկական ծագում ունեցող Մեծ վեզիրներից հայտնի է եղել **Հալիլ Ռըֆաթ փաշան**: Նա եղել է արքունի զինանոցի տնօրեն: 1834թ. ամուսնացել է փադիշահի դստեր Սալիհա Սուլթանի հետ:

Վեզիրության աստիճաններ են ունեցել նաև քաղաքացիական անձինք: Վեզիրություն են ստացել սուլթանի Անձնական գանձարանի նախարարներ **Հակոբ Գազազյան, Հովհաննես Սաքըզը, Միքայել Փորթուգալ(յան) փաշաները**:

Մարշալի ու վեզիրի աստիճան են ունեցել Լեռնալիբանանի կառավարիչներ **Կարապետ Արթին փաշա Դավուդյանը, Հովհաննես փաշա Կույումճյանը**, Պետական Խորհրդի անդամ **Աբրահամ փաշա Էրամյանը[5], Հարություն փաշա Տատյանը[6]**:

Մյուշիրի (մարշալի, մարաջախտի) կոչում ունեցող փաշաներ են եղել Լեռնալիբանանի կառավարիչներ **Կարապետ Արթին Դավուդյանը, Հովհաննես Կույումճյանը**, ողջ օսմանյան բանակի գլխավոր դեղագործ **Ֆերիդ փաշա Թերզիմանյանը** և գուցե՝ Տրապիզոնի Հանրային սպարտաց վարչության տնօրեն **Գրիգոր Շաբանյանը[7]**:

[3] Անահիտ Աստոյան, *Հայերն Օսմանյան բանակում...* էջ 11:

[4] Տես՝ Կարո Քյուրքմանի երկհատոր աշխատը Օսմանյան կայսրության հայ նկարիչների մասին՝ Garo Kürkman, *Osmanlı İmparatorluğunda Ermeni Ressamlar*, İst., 2004, 2 cilt, 988s.

[5] Աբրահամ փաշա Էրամյանն արժանացել է սուլթանական բարձրագույն շքանշանների՝ առաջաստիճանային **Osmanlye**, առաջին աստիճանի **Mecidiye**-ի:

[6] Արտադրեփնախարարության խորհրդական և Պետական Խորհրդի Քաղաքական հանձնաժողովի անդամ Հարություն Տատյանը՝ ամենաբարձր սուլթանական շնորհներ ունեցողներից է եղել՝ առաջաստիճան **Osmanlye**, առաջաստիճան **Mecidiye** և առաջաստիճան **Iftihar**:

[7] Մի քանի աղբյուրներում խոսվում է Գ. Շաբանյանին մարշալի կոչման ներկայացված լինելու մասին:

փրկելով երկիրը ծանրագույն քաղաքական, պատերազմական, ֆինանսական իրավիճակներում:

1877թ. ռուս-թուրքական պատերազմի ծանր օրերին օսմանյան կառավարությունը դիմեց քրիստոնյա հպատակներին՝ զորք տրամադրելու համար: Պոլսի Ազգային երեսփոխանական ժողովը պատրիարքի հետ միասին հիմնականում ընդդիմացան այդ պահանջին, որը սաստիկ ընդվզում առաջացրեց պալատում: Նույնիսկ օսմանյան սուլթանները զգում էին հայկական միավորումների անհավասար, ստորացված լինելու ու անարդյունք մնալու հետևանքը մղնաաղ օսմանյան բանակի շարքերում:

Միայն 1910թ. Զինվորագրության օրենքի ընդունումից հետո հայերը սկսեցին ուսանել զինվորական վարժարաններում: 1912թ. առաջին հայ զինվորական դպրոցն է հիմնադրվում Բուլղարիայում:

Կարծես թե վերացավ *բեդելի ասքերիյե* հարկը, նաև՝ *հալալակ, ռայա, գեյր* ստորացնող հասկացությունները: Բալկանյան և առաջին համաշխարհային պատերազմների ժամանակ շատ հայ զինվորներ առանձնացան իրենց հերոսությամբ և արժանացան բարձր զինվորական կոչումների: Կովկասյան ռազմաճակատի Կարին-Սարիղամիշ ճակատում նրանք գերի ընկնելու վտանգից ազատել էին Էնվեր փաշային, որը և փութացել էր հայ զինվորների մասին գովասանքի ու շնորհակալության խոսք ուղղել ժամանակի Պոլսո հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանին:

1914թ. օսմանյան բանակ զորակոչվեցին 18-45 տարեկան 100 հազար հայեր, որոնք միացան մինչ այդ բանակի շարքերում գտնվող հայ զինվորներին:

Բայց շուտով հայերի դավաճանության մասին կեղծ քարոզչության պատրվակով հայերը զինաթափվեցին, հայ սպաները մեկուսացվեցին, ձերբակալվեցին, ապա ոչնչացվեցին: Մեծ եղեռնի կազմակերպիչները անօրինակ դաժանությամբ սպանդի ենթարկեցին հայ զինվորականությանը:

Քիչ ավելի դիմացան զինվորական բժիշկները, քանզի օսմանյան բանակը նրանց կարիքը շատ ուներ: Երկար տարիներ հայազգի զինվորական բժիշկները, երկրի հինգ հիմնական բանակներում ու նրանց կից զինվորական հիվանդանոցներում կարևոր պաշտոններ էին զբաղեցնում: Նույնը նաև ռազմական նախարարին էր վերաբերվում[12]: Մեծ եղեռնի նախօրեին բոլոր այն զորամասերը, ուր թուրք զինվորական բժիշկներ էին ժամանում, հայ բժիշկներն անմիջապես մահապատժի էին ենթարկվում, անգամ իրենց պաշտոնը կատարելիս, թուրք զինվորների կյանքը փրկելու ժամանակ:

Զինվորական հայ բժիշկների սպանդին մասնակցեցին նաև թուրք զինվորական պաշտոնյա բժիշկներ, որոնք սովորել ու աշխատել էին միասին, կրթվել հայ մանկավարժների կողմից: Նման ամենահայտնի անուններից են եղել Նազըմ բեյը, Բեհաեդդին Շաքիրը և ուրիշներ: Թուրքական «երախտագիտության այս ոճը» նրանց համար ավանդական ու բնականոն էր թվում:

Օսմանյան բանակի, նախարարի պատմության մեջ եղակի չեն եղել հայ անունները: Հայերը ծառայել են նաև որպես թարգմանիչներ, հետաքրքիր էջեր գրելով իրենց ժամանակի պատերազմական, դիվանագիտական կյանքում:

12 Այս մասին տես բժիշկներին նվիրված գլխում, առանձին բժիշկների կենսագրություններում:





Հայ հպատակների դերը օսմանյան բանակում չի սահմանափակվել վերոհիշյալով: Ավելին, այն միայն երկրորդ պլանում է եղել: Պարբերաբար պատերազմական գործողություններով ապրող օսմանյան բանակն իր բոլոր կարիքները, աշխատավարձը դարեր շարունակ հոգացել է քրիստոնյա բնակչության վրա ծանրացած մի շարք հարկերից: Կարևորագույնը եղել են այն հարկերը[13], որ վճարել են քրիստոնյա ռայաները (հպատակները) բանակում, նավատորմում ծառայելու փոխարեն, բանակի համար, ի տարբերություն բանակ զորակոչվող մահմեդական բնակչության: Ամենակարևոր նման հարկը կոչվել է *ջիզյե* (գլխահարկ): Բանակին նյութական և պարենային օգնության հարկը կոչվել է *իմդադը հազարիյե*: Պատերազմական իրավիճակների ժամանակ դիշիրմեն (մանկահավաքը) անցկացվել է ըստ ռազմական պահանջի և հարկերն էլ այսպիսի պարագաներում հավելվել են: Դրանք են եղել *իմդադը սեֆերիյե* (զինվորական օգնություն), *իմդադը ջիհադիյե* (օգնություն սրբազան պատերազմի համար), *բեդահանե բեդելեսի* (նավաշինարանում չծառայելու փոխարեն, որ քրիստոնյաները ծառայում էին մինչ 1610թ. օրենքը), *քյուրեկչի բեդելիյե* (թիահարկ) հարկերը: Բնականաբար դրանց հավելվում էին շատ ծանր պարտականություններ: Այն է՝ որտեղով էլ որ անցներ օսմանյան բանակը, տեղի բնակչությունը պարտավոր էր հոգալ նրանց բոլոր կարիքները, որոնք տարբերակվում էին որպես հացատի, գիշերելու, անոթի և համապատասխան այլ տուրքեր: Դրանց չափերի հստակ սահմանված չլինելը պատճառ էր դառնում անհողի ու դաժան հարստահարության, կախյալ՝ հարկահավաքների քմահաճ վերաբերմունքից:

Հայտնի են դեպքեր, երբ այս կամ այն հարուստ հայը որևէ առիթով մեծ նվիրաբերություն է կատարել բանակի, նավատորմի օգտին: 1918թ. Օսմանյան նավատորմի հզորացման համար 3 հազար դրամ նվիրած Տիգրան Տեր-Ներսեսյանը, որ նախկինում Անվտանգության խորհրդի և Այդն քաղաքի հանրօգուտ շինությանց խորհրդի անդամ էր, ստացել է արժանի ***Mütemayiz***:

Քրիստոնյա բնակչության առանձնաշնորհյալ մի փոքրիկ մասը միայն հստակ սուլթանական հրովարտակներով ազատված էր այս հարկերից: Ազատված էին համարվում նաև հոգևորական դասը, եկեղեցին: Սակայն եկեղեցիներն ու վանքերը ոչ միայն չեն փրկվել այս հարկերից, այլև պարտքերի ծանրության տակ, երբեմն եղած-չեղածը խլպառ կորցնելու վտանգի մեջ են գտնվել[14]:

Ավելին, տարբեր մուծածին առիթներով բազմապատիկ հարկեր ու տուգանքներ են դրվել նրանց վրա, ավերվել են եկեղեցիները, վանքերը, դրանց քարերը օգտագործվել են որպես շինանյութ, թալանվել են վանքեր ու նրանց ողջ գույքը: Բանակատեղիներին հարակից հայկական գյուղերը բարբարոս հարձակումների են ենթարկվել:

Օսմանյան բանակը քրիստոնյա հպատակներին որպես իր բոլոր կարիքները հոգալու աղբյուր ծառայեցնելուց բացի, մեծապես օգտվել է նրանց տարբեր արհեստների մեջ անմրցելի նկատված լինելու հանգամանքից: Հայ արհեստավորների մի խումբ շարտ է ծառայել բանակին: Դրանք եղել են զինագործներ, ռազմամթերք պատրաստողներ[15] (ականներ, վառոդ և այլն), հարձակումների ու պաշարումների ժամանակ անհրաժեշտ տարբեր շինություններ, ամրություններ իրականացնող վարպետ-ինժեներներ ու արհեստավոր բանվորներ,

13 Տես Լևոն Վարդան, *Հարկերը...*:

14 Նույն, էջ 478:

15 Հայկական տարբեր գավառներ բանակին մատակարարել են նժույգներ ու այլ կենդանիներ:

բնդանոթաձիգներ, ռմբաձիգներ (փաղանգիներ), պայտար-դարբիններ[16], մոռլաթաղներ, դերձակներ, վաճառականներ, երաժիշտներ, որոնցից մի մասը պարտադիր ուղեկցել է բանակին և այդ պարագայում ազատվել որոշ հարկերից: Օսմանյան բանակում հայ վարձկանների առկայությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ բանակների, նավատորմի կարիքների, պարենի մատակարարները, ինչպես նաև որոշ պատերազմական գործողությունների ժամանակ նաև ռազմական շինությունների կառուցման պատասխանատուները եղել են հայ վաճառականները: Նրանք վարձակալելով հայ արհեստավորների մեծ բնգմություն, ինչ որ չափով մեղմել են նրանց ֆինանսական իրավիճակը, քանի որ այդ վարձկաններն ազատվել են որոշակի հարկերից ու այս ծառայությունը նրանց համար եղել է նյութական լրացուցիչ աղբյուր:

Փաստ է, որ օսմանյան բանակում, ենիչերիների ժամանակներից սկսած մինչև 18-րդ դ. վերջը հայերը որպես վարձկան զինվորներ ծառայել են հետևակային *(հաևա)* և բերև հեծելազորային (*ագըննի*) զնդերում, ինչպես նաև ճանապարհ բացող (*սալախորատ*) զորամասերում, շարժվելով հիմնական բանակի ուժերի առջևից: Ինչպես վերջին, այնպես էլ ականահատ (*լաղըմճևա*) գնդերում ծառայած հայերը զինված են եղել: Հայ վարձկանները պաշարման ժամանակ ծառայել են որպես խրամատներ փորող (*ենիչէ կերիկի ալաևը*) և որպես գերեզմանափոր, մեռելաթաղ խմբեր (*մեզարճի*): 1570թ. Կիպրոսի գրավման ժամանակ, ըստ վենետիկցի զորավար Անջելո Գաթիի, 243 հազարանոց թուրքական բանակում 40 հազար հայեր ծառայել են որպես «սակրավոր, ամրաշէն, ականահատ և մեքենագործ[17]...»: Սուլթան Աբդուլհամիդ Ա-ի տիրակալության շրջանում (1774-1789), երբ ծովակալ է եղել հայազգի Հասան փաշա Ճեզայիրլի Ղազին, հայերը որպես վարձկաններ ծառայել են նաև օսմանյան ռազմածովային նավատորմում: Ռազմանավերում հայերը ծառայել են որպես հրետանավորներ, դյուզակալկիրներ և այլն:

18-րդ դ. օսմանյան բնդանոթարանի (ռմբարան, *խումպարախանե*) ղեկավարը եղել է դարբին **Հաջի Գասպարը**[18]: Օսմանյան բանակին ծովամարտերում հաղթանակ բերած բազմաթիվ ռազմանավեր շինվել են հիմնականում հայ ու հույն վարպետների կողմից: Հայտնի է ծագումով փրացահայ **Գևորգ Դեմիրճիպաշյանը**, Կայսերական նավարանի նավահարդարապետը, որը կանգնած է եղել նաև բնդանոթարանի երկաթագործության գլխին: Նա կրել է «Թոպանենի բաշը» տիտղոսը և իր ձեռքի տակ ունեցել է 4000 ենիչերիներ: Դա սուլթան Մահմուդ Ա-ի (1730-1754) տիրակալության վերջին տարիներին էր, 1753թ.: Գևորգի գործը շարունակել են զավակները: Նրանց արհեստապետությունը մինչև սուլթան Աբդուլմեջիդ Խանի գահակալությունն է տևել (1839-1861): Տաղանդավոր այս մարդը ոչ միայն հոկայա-

16 Պարզվում է, որ 1922թ. Մուստաֆա Քեմալը, այցելելով դարբինների զինվորական դպրոց, զարմացել է, որ Անատոլիայում թուրքերը չեն ունեցել իրենց դարբինները: Չինրին պայտել են հայ և հույն պայտագործ-դարբինները: Եղեռնից հետո այս ասպարեզը բացահայտապես պարապ էր մնացել, իսկ ձիերը ոչ պիտանի, անորակ պայտերի պատճառով: «Արարողը ստիպված է լինում բանակում ստեղծել դարբնության արհեստը կարճ ժամանակում թուրքերին սովորեցնելու դասընթացներ», վկայակոչելով խորհրդային թուրքագետ Դ.Երեմեևի թուրքերի ծագման մասին ուսումնասիրությունը, գրում է Անահիտ Աստոյանը: Տես՝ էջ 99:

17 Տես՝ Թեոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը*, 1927թ. Ե մաս, Աշխարհագրական, Արշակ Ալպոյաճեան, Կիպրոս կղզին, էջ 219-220:

18 **Հաջի Գասպարը** 19-րդ դարում Օսմանյան կայսրությունում առաջին՝ Արամյան բաղդամ-կլինեի հիմնադիր բեյօղլուցի **Հովհաննես Գասպարյանի** հայրն է:






Եռուք Դեմիրճիպաշյան

բայլ զարգացնում է Նավարանը, այլև հանճարեղորեն ստեղծում է այժմյան խարիսխը, որը մինչ այսօր օգտագործվում է աշխարհում: Եվրոպացիները, մեծապես գնահատելով այն, անմիջապես ընդօրինակեցին Գևորգի նորաձև խարսխի կաղապարը[19]: Գևորգ Դեմիրճիպաշյանը տեղափոխվում է Խասգյուղ, որպես արքունի ռմբարանի (*խումպարախանե*) ղեկավար, որ հետո փոխվեց Երկրաչափարանի (*մյուհենդիսխանե*): Դեմիրճիպաշյան տոհմից Եռուքը զբաղվել է արքունի նավատորմի, ցամաքային զորքերի ու պալատի հացի մատակարարման գործով՝ եղել մեկը բանակի հայ մատակարարներից: Մեծ հռչակ է վայելել արքունի դարբնոցապետ **Մանուկ Դեմիրճիբաշին** (1788-1838)[20]:

Օսմանյան կայսրությունում հայկական *զինագործության* հայտնի անուններից է եղել կարենցի[21] զինագործ վարպետ **Ահնյան Սարգիսը**: Այրել է Մահմուդ Բ Ադլի (1808-1839) սուլթանի[22] սրոց և նրա համար թրեր է պատրաստել, որոնք ցուցադրվում են Պոլսի Թոփգափը պալատի, Նյու-Յորքի «Մետրոպոլիտեն» և Արենրի «Բենաքի» թանգարաններում: Գալով Վատդարանի ու նրա հայ վարպետների գործունեությանը, ապա ռազմական ասպարեզում, զինագործության ասպարեզում նրանց ունեցած մեծ ներդրումը անկարելի է մոռացության մատնել: Սկսած թուրքական վառոդի արտադրությունից մինչև զենքերի արտադրության մեջ նրանց կատարած բազմաթիվ մեծ ու փոքր գյուտերն ու նորարարությունները, արժանի են առանձին ուսումնասիրության:

**Թուրք հայտնի պատմագիր Էվլիյա Չելեպին գրում է, որ 17-րդ դարում կեսարահայերի պատրաստած ականներով էր, որ օսմանյան բանակը պայթեցնում էր հակառակորդի բերդերն ու պարիսպները[23]:**

**Զինագործության ասպարեզում մեծագույն նպաստ են ունեցել Տառյան արքունի վարպետների գերդաստանի շատ անդամներ: Սուլթանական վառոդապետը, մասնավորապես Տառյան ամիրայական գերդաստանը, զբաղվել է ոչ միայն լավագույն վառոդի ար-**

19 «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1900թ. թիվ 2: Նրա մասին տես Դեմիրճիպաշյան գերդաստանին նվիրված հատվածում:

20 Հայտնի է, որ նա քաղված է Բաղդադրաշը հայկական գերեզմանոցում:

21 Կարենցի հայ զինագործները մեծ համբավ են ունեցել իրենց արհեստակիցների շրջանում: Նրանք իրենց պատրաստած զենքերը նաև արվեստի գործեր են դարձրել:

22 Լուսանկար այս սուլթանը ցանկանալով բարեկամել իր երկրի վիճակը, մի շարք բարենորոգումներ արեց: Նա թույլ տվեց, որ բոլոր լեզուներով գրքեր ու պարբերականներ հրատարակվեն: Նա քնաջնջեց երկրի գլխին փորձանք դարձած ենիչերությունը, ստեղծել տալով կանոնավոր զինվորական ու ոստիկանական հաստատություններ: Պեզճյան ամիրայի խորհրդով նա իր կողմը գրավեց մի քանի ազդեցիկ ենիչերի պարագլուխների և ապա նրանց միջոցով ոչնչացրեց մյուսներին:

23 Հայ ժողովրդի պատմություն, հ.5, Եր., 1974, էջ 307:

տաղրությամբ, այլև հեղինակել են բազմաթիվ գյուտեր և նորամուծություններ զինվորական ասպարեզում, զինագործության մեջ, որոնք անմիջապես ներդրվել են պատերազմական գործողությունների մեջ գտնվող օսմանյան բանակում: Ինժեներական տաղանդով օժտված Տաղյանները հնարել են հրացանի փողի երկարները ծակելու և ապա մետաղի արտաքին շերտը ողորկելու մեքենաները, ֆրանսերենից թարգմանել են զինագործության վերաբերյալ գրքեր, առաջին անգամ օգտագործել և տարածել են մեքենաներ ներկելու «Դոկանա ատրճանակը»[24]:

Օսմանյան բանակի համար կարևորագույն հանգամանքներից է եղել ***բանակի մատակարարների*** խնդիրը:

**Հովհաննես բեյ Խանգատը, Աբրահամ (Ապրո) Չելեպի Ապրոյանը, Մանուկ բեյ Միրզայանը, Հաճի Օհան Եաղճյանը, Հարություն Պալագյանը, Հարություն Ալյանյանը, Գրիգոր Շարանյանը, Պողոս Իգնատիոսյանը, Արիկ Ունճյանը** կայսրության համար ճակատագրական Ղրիմի, ռուս-թուրքական և պատերազմական այլ ժամանակներում եղել են օսմանյան բանակի՝ ընդհանուր առմամբ, նաև առանձին բանակների պարենի, ընդհանուր պաշարների ապահովման, հագուստի, ռազմական կառույցների ապահովման մատակարարները: Այս մատակարարները ապահովում էին զինվորից մինչև նրա զենքը, ձին, սնունդը, հագուստը, ռազմանավն ու գոյություն ունեցող, ծագող բազմաթիվ մեծ ու փոքր խնդիրները, կարիքները:

Բանակի տարբեր հոգսերի մատակարարները, խոշոր վաճառականները երբեմն առնչված են եղել ուղեկցել այդ բանակներին, մանավանդ՝ պատերազմական իրավիճակներում: Հայտնի է, որ այդ մատակարարների մի պատկառելի մասը կազմել են հայ վաճառականները, որը համարվել է և՛ պատվավոր, և՛ խոշոր ծավալի գործարք, և՛ չափազանց վտանգավոր գործունեություն: Անհաջողության, պարտության դեպքում այն սնանկությամբ էր սպառնում, գումարած պատերազմական մահացու վտանգները: Բնականաբար, այս գործը պիտի անեին կա՛մ հրեաները, կա՛մ հույներն ու հայերը, քանզի թուրքերը հակված չէին զբաղվելու վաճառականությամբ: Ավելին, առևտրով կամ արհեստներով զբաղվելը պատերազմող, թալանով ապրող թուրք քոչվորական ավանդույթների տեր ժողովրդի համար համարվել է անարգական, ստրուկներին հատուկ զբաղմունք: Հայ վաճառականները զբաղվել են նաև պատերազմական առանձին գործողությունների, բանակի ժամանակավոր և մասնակի մատակարարությամբ: Այս սեղանավորները, վաճառականներն ապահովել են երկրի տարբեր մասերում հիմնական զորաբանակների կյանքը՝ խաղաղ ու պատերազմական պայմաններում: Մատակարարների նախընտրության մեջ դեր է խաղացել նաև տվյալ բանակի զորակայման վայրում տեղի անվանի վաճառականի գոյության հանգամանքը:

Հայտնի է 17դ. հացագործապետ **Հաջի Քյոսե Ամբակումի** (1598-1658) անունը, որը սուլթան Մեհմեդ Գ-ի (1595-1603) ժամանակից է սկսել գործել:

Բանակի հայ մատակարարների այս պաշտոնում լինելը մեծապես ազդել է շրջակա հայկական բնակավայրերի տնտեսության վրա: Մատակարարների շնորհիվ բազմաթիվ արհեստավորներ ապահովվել են աշխատանքով: Գյուղացիներից գնվել են գյուղատն-

24 Այս գերդաստանի տարբեր հայտնագործությունների մասին տես՝ Տաղյան ամիրաներին նվիրված մասում:





տեսական մթերքներ, անասուններ ու ձիեր[25]: Որոշ շրջաններում, մանավանդ գորգագործությամբ, մետաքսագործությամբ, մանուֆակտուրային արհեստանոցներով հայտնի հայաշատ վայրերում են կատարվել բանակի հագուստների պատվերները: Նույնիսկ զինվորական ուսադիրները, համազգեստի ոսկեթել կամ արծաթաթել ուսադիրները, դրանց պարանատիպ մասերը կատարվել, հյուսվել են հայ կանանց կողմից իրենց դազգահների վրա տեղական հումքից կամ ներկրվող ոսկեթելերից ու արծաթաթելերից (Կուտինայում):

Բանակի մատակարարներն իրենց պարտականությունների փայլուն կատարման, երբեմն էլ դիվանագիտական բանակցություններում մասնակցելու, դրանցում կարևոր դերակատարություն ունենալու համար սուլթանական շնորհների են արժանացել: Այսպես օրինակ, ի գնահատումն հրետանային հազարապետ-անասնաբույժ **Պողոս** Էֆենդիի գործունեության, 1910թ. Քասըմփաշայի Եմինեզեն թաղում գտնվող նրա տան վերանորոգման համար հատուկ թույլտվություն է տրվել: Հայ վաճառական-մատակարարների համար կարևորագույն հանգամանք է հանդիսացել նյութական պարգևատրությունների փոխարեն իրենց ծննդավայրերի համար հայրենանվեր գործեր կատարելու սուլթանական թույլտվությունները: Շնորհների արժանացածներից ոմանք իրենց բնակավայրերի վանքերն ու եկեղեցիները, դպրոցները վերականգնելու, նորերը կառուցելու համար պատվանշանների փոխարեն սուլթանական արտոնագրերով են վերադարձել տուն:

**Հովհաննես բեյ Խանգատը (17դ.)** եղել է Մուրադ Դ Ջենգյավերի (տագավ. 1623-40) զորաբանակի պարենի մատակարարը: Նա մասնակցել է 1638թ. Բաղդադի գրավման ճակատամարտին: Ծառայությունների համար սուլթանը նրան շնորհել է պատվանշաններ, *բեյի* տիտղոս և Կիլիկիայի հայկական Ս.Խաչ, Նաշավան, Օշնաշեն գյուղերը:

**Աբրահամ (Ապրո) Չելեպի Ապրոյանը** (-1676)՝ հայտնի վաճառականական տոհմի նահապետներից է: 1646թ. Կրետեի գրավման ժամանակ բանակի մատակարարն է եղել: Օսմանյան բանակին մատուցած իր ծառայությունների համար Իբրահիմ Ա Դելի (խենթ, 1640-48) սուլթանը նրան ողջ կայսրությունով մեկ ազատ առևտուր անելու հրովարտակ է շնորհել: Մեծ եպարքոս Քյոփրուլու Ֆազըլ Ահմեդ փաշայի վստահելի ու սիրելի անձանցից է եղել: Մեծ եպարքոսը նրան շնորհել է *չելեպի* պատվանունը:

Աբրահամ (Ապրո) Չելեպին այս շնորհներն օգտագործել է իր հայրենակիցներին օգտակար լինելու համար: Նա Կրետե կղզում հայերի համար տեղաբնակներից 1400 ոսկով գնել է Ս.Հովհաննու Կարապետ եկեղեցին՝ կալվածքներով հանդերձ: Համառ ջանքերի շնորհիվ կարողացել է օսմանյան կառավարությունից Մակեդոնիայում հայերի մշտական բնակության և այնտեղ եկեղեցի ունենալու իրավունք ստանալ: Կրետեի գրավումից հետո, ընտանիքով 1669թ. Բելգրադից տեղափոխվել է Եդիրնե, ապա՝ Պոլիս: Իր միջոցներով վերանորոգել է հրդեհից վնասված Ս.Նիկողայոս և Ս. Սարգիս եկեղեցիները: Նրա հովանավորությամբ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը ստեղծել է իր «Ստամպոլայ պատմութիւն», «Օրագրութիւն»[26]-ը: Որդին՝ Ապրոյան Մարտս Չելեպին, Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV-ից ազնվականության տիտղոս է ստացել:

25 Հայտնի է, որ Մուշում հատուկ այս նպատակի համար հայերի կողմից զարգացվել է ձիաբուծությունը:
26 Աբրահամ (Ապրո) Չելեպիի մասին երկու հայերեն և երկու թուրքերեն ձոն է գրել, որոնք տեղ են գտել «Օրագրութիւն»-ում:



Բողդանի ասպետ Մանուկ բեյ Միրզայան

**Մանուկ բեյ Միրզայան (1769-1817).** Ռուսճուքցի Միրզայան Մանուկ բեյը հայ դիվանագիտական ասպարեզի ամենահայտնի դեմքերից է եղել: 1806-12թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ զբաղվել է օսմանյան բանակի պարենավորմամբ և ռազմական նշանակության կառույցների նորոգությամբ: Եղել է օսմանյան Դանուբյան բանակի հրամանատար Մուստաֆա փաշա Բայրաքթարի խորհրդականը, օժտված՝ ռուսների հետ հաշտության բանակցությունները վարելու ճկունությամբ: Այս մեծ դիվանագետի եռանդուն ջանքերի, դիվանագիտական հմտությունների շնորհիվ են կայացել պատերազմի մի շարք հաշտության բանակցությունները, որոնց արդյունքում 1812թ. կնքվել է Բուխարեստի հաշտության պայմանագիրը: Այն ձախողել է Նապոլեոն Բոնապարտի՝ այս երկու պետություններին պատերազմի մեջ ներքաշելու ծրագրերը: Մանուկ բեյն աջակցել է Մուստաֆա փաշա Բայրաքթարին՝ տապալելու ենիչերական վարչակարգը[27]: Օսմանյան կայսրությանը մատուցած ծառայությունների համար 1808թ. սուլթանից ստացել է Մոլդովայի իշխանի՝ ***Boğdan Prensi*** և ***Bey***-ի տիտղոսներ, նշանակվել արքունի պալատի ***դրագոման*** (դիվանագիտական բանակցությունների թարգման՝ արտգործնախարարի օգնականի մակարդակով): 1808թ. Կ.Պոլիս է եկել և Բարձր Դռան պաշտոնական թարգման նշանակվել: 1812թ. կառուցել է մինչ օրս Բուխարեստի տեսարժան վայրերից մեկը հանդիսացող «Մանուկի խանը»:

Կայսերական ծովարանի ծովահրետանապետ Գևորգ Դեմիրճիպաշյանի տոհմը ավելի քան մեկ դար ծառայել է Ռազմական նախարարությանը (Սպարապետության դռռ): Նրանք զբաղվել են արքունի նավատորմի, ցամաքային զորքերի ու պալատի հացի մատակարարման գործով: **Եղիայի Դեմիրճիպաշյանը**[28], ապա նաև նրա **Սերոբի և Խոսրով Դեմիրճիպաշյան** որդիները շարունակել են այս ծառայությունը, հանդիսանալով նախարարության, բանակի ընդհանուր կարիքների մատակարարներ:

**Հաջի Օհան Եաղճյանը** Ղրիմի 1853-1856թթ. պատերազմի ժամանակ բանակի պարենավորման մատակարարն է եղել: Խարբերդցի այս վաճառականին, բանակին մատուցած իր ծառայությունների համար, Աբդուլմեջիդ Խան սուլթանը Պոլիս է կանչել և արժանացրել մե-

27 Այս մասին տես Գագագ Արթին ամիրա Պեզճյանի կենսագրության հատվածում, ինչպես նաև Մահմուդ Բ սուլթանի և Գագագ Արթին ամիրայի մասին Արա Ալիքնակի «*Ճակատագրի ճամբան*» (Ստամբուլ, 2004) կենսագրական վեպում:

28 Այս գերդաստանը թարնեաժական կապերով կապված է եղել արքունի փառղաշեռտի՝ Տատյան ամիրաների ընտանիքի հետ: **Եղիայի Դեմիրճիպաշյանը** եղել է հանրային ընծենի **Տրդատ Տատյանի** (1860-1916) անհրը:





ծարանների, պատվանշանների, պաշտոնական սրի և համազգեստի: Վերադարձին իր հետ բերել է Քեսիրիկ գյուղի եկեղեցու և վանքերի վերաշինության սուլթանական արտոնագրերը:

Սեբաստացի հայտնի վաճառական **Հարություն Պալագյանը** Ղրիմի պատերազմի ժամանակ նույնպես օսմանյան բանակի մատակարարներից է եղել:

**Հարություն Ալլահյանը** (1852-1917) եղել է օսմանյան Ռազմածովային նախարարության մատակարարը: Նա միաժամանակ վարել է Ծովային երթևեկության պետական հատուկ սպասարկության (խոպրէի ճախսուսէի) վարիչի պաշտոնը:

**Գրիգոր Շարանյանը** 1865թ. վարել է արքունի զորքերի ընդհանուր կարիքների, պարենի ու ընդհանուր պաշարների մատակարարի պաշտոնը: 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին եղել է օսմանյան բանակի ընդհանուր պետքերը հոգացող հանձնաժողովի անդամ և արժանացել է պատվանշանների, պաշտոնի բարձրացման: 1886թ. ներկայացված է եղել աղմիրալության:

**Հ. Պոյաճյանը** զբաղվել է բանակի համար արտասահմանյան գնումների խնդրով: Արքայական արսենալի զինվորական հեռագրատան և դրա համար անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու համար 1885թ. նա Լոնդոն է ուղարկվել:

**Աբիկ Ունճյանը** (1831-1905) օսմանյան Բ զորաբանակի, ապա Ռազմական նախարարության ընդհանուր պաշարների մատակարարի պաշտոններն է վարել: Իր եղբոր՝ **Մարկոս Ունճյանի** հետ միասին վարել են Էդիրնեի երկրորդ զորաբանակի, ապա՝ Ռազմական նախարարության ընդհանուր մատակարարի պաշտոնները: 1894թ. Պոլսի քաղաքապետարանի բարեգործական վարչության անդամ, առաջին կարգի վաճառական Աբիկ Ունճյանին շնորհվել է առաջին կարգի ***Osmaniye***: 1886թ. Կեդրոնական վարժարանի առաջին հոգաբարձուներից է եղել: 1885թ. հայտնի վաճառական Աբիկ Էֆենդին ռսկերեկազործների (վարչության) տնօրեն է նշանակվել:

**Պողոս Իգնատիոսյանը**, խարբերդցի հայտնի վաճառական, 19դ. 70-80թթ. զբաղվել է օսմանյան բանակի հանդերձանքի մատակարարման գործով:

**Գրիգոր Կարագյոզյանը**, որ Կարագյոզյան վաճառականական ընտանիքի շառավիղներից է եղել, վարել է Ռազմական և Ծովային նախարարությունների ընդհանուր պետքերի մատակարարի պաշտոնը:

**Նորատունկյան** գերդաստանը հայտնի է եղել որպես արքունի և օսմանյան բանակի հացի մատակարար:

1894թ. օսմանյան զորաբանակների տարբեր կարիքների մատակարարներ են եղել երևելի վաճառականներ **Հակոբ Էսայանը**, որը ստացել է ***Ulây-ı sâni*** և Պոլսի վաճառականների պետ (քեղխուդա) **Սարգիս Թաշճյանը**, որին շնորհվել է ***Mütemayiz***: Երկուսն էլ, ի թիվս այլ շնորհների, 4-րդ աստիճանի ***Mecidiye*** են ստացել:

**Զինվորական գործ**

Հայտնի փաստ է, որ Օսմանյան կայսրության կյանքի, պաշտոնական ծառայության որոշ բնագավառներ երբ չափենք փակ, գոնե մասամբ հասու չեն եղել կայսրության քրիստոնյա հպատակների համար: Դրանցից է եղել ռազմական ուսումնառության, բանակի բնագավառը: Սա չի կանգնեցրել հայ երիտասարդներին՝ բարձրագույն զինվորական կրթություն



Սինաս Յարման
*Բեյրութի Ամերիկյան համալսարանի*
*1906 թ. շրջանավարտ*

պես արգելված է եղել նաև քրիստոնյա զինվորական բժիշկների մուտքը: Միայն 1864թ. Բանկալթիի Հարբիյեում (զինվորական վարժարան) սուլթան Աբդուլազիզի հրամանով փորձնական ընդունված են 5 հայ երիտասարդներ (Գաբրիել Էքնայան, Կարապետ Բարադադյան, Սիմոն Տառոյան, Հովյան, Սինարյան): Զինվորական բժշկական վարժարանի 1866թ. շրջանավարտ Ալեքսանդր Արաղյանն, անցնելով Թրակիայի, Սիրիայի, Կրետեի ռազմաճակատների և Բեյրութի զինվորական հիվանդանոցներով, գնդապետի աստիճանով ընտրվում է կառավարության Զինվորական առողջապահության Վերատեսչի համձնաժողովի անդամ, արժանանում Առաջին աստիճանի **_Mecidiye_** և 3-րդ աստիճանի **_Osmaniye_** շքանշանների, ապա մի երկար շրջան ծառայում Քաղքամացուկում:

Հայ զինվորական բժիշկները բազմիցս հայրենասիրության, հազարասիրության են հասել: Նրանք առաջին համաշխարհային պատերազմի կեսերին, որպես անհուսալի տարր, փոխարինվեցին թուրք բժիշկներով: Հայ զինվորական բժիշկների հիմնական մասը սպանվեց թուրք բժիշկների բանակ հասնելու նախօրեին[33]:

---

33 Դեռևս 1910թ. երիտթուրքերի Սալոնիկում կայացած համագումարում որոշում էր կայացվել օսմանյան բանակի քրիստոնյա զինվորականության ուժեղացման մասին: Քրիստոնյաներից կազմված 120 բանվորական վաշտերը բողոքի անզեն են եղել և անզգաստ ջարդվել են: Օսմանյան կայսրությունում քրիստոնյա (աղանդավորական) զարդերի սկիզբը հենց այս չարքաշ բանակայիններին առաջարար ուժեղացումն է համարվում 1914թ. օգոստոսին: Ավելի քան 200 հազ. հայ զինվորականությունը թիկունքում զինաթափ է արվել ու վայրագորեն սպանվել: Անվանի բանաստեղծ, զինվորական բժիշկ Ռուբեն Սևակը եղել է Մեծ եղեռնի օրերին գազանաբար սպանված մեր բազմաթիվ երևելի մտավորականներից մեկը: Այսպիսի ճակատագիր են ունեցել օսմանյան բանակին մեծագույն ծառայություններ մատուցած հայազգի հայրենակիցները, որոնք իրենց գործի լավագույն մասնագետներն եղել՝ զինվորական բժիշկներ, զինվորական բարձրաստիճան սպաներ, խորհրդական-թարգմաններ, զինագործ և այլ արհեստավորներ, բանակի մատակարարներ, զորավարներ...

Այսպիսի ծանր ճակատագրի կողմերից են եղել պոլսահայ բժիշկներ Սարգիս Հովսեփյանն (ամուսնու՝ դիրիժոր Արա Պետրոսյանի մեծ հայրը) իր ընկերոջ՝ հետագայում փարիզաբնակ Աշշալ Պետրոսյանի հետ միասին, որոնք զինվորական բժիշկներ են եղել գնդապետի աստիճանով: Սարիղամիշում թուրքական բանակ թուրք բժիշկների ժամանումից մի քանի ժամ առաջ զգուշացվել են ու փախել դեպի ռուսական զորքերը: Մահվան դատապարտված երկու բժիշկների համար Օսմանյան կառավարության կողմից սահմանված ապրանքներում 50 հազ. օսմանյան ոսկի գլխագին է նշանակվել: Սարգիս Հովսեփյանը Գևորգ Դ Կաթողիկոսի հրամանով Թիֆլիսից բերվել ու Էջմիածնում հավաքված եղեռնից մազապուրծ տասնյակ հազարավոր հայ գաղթականներին լափող համաճարակի դեմ հաջողությամբ պայքարել է, հազարավոր կյանքեր փրկել: Մեկ ու կես տարի եղել է Էրզրումի հիվանդանոցի գլխավոր բժիշկ: Եվրոպական բժշկական կենտրոններում՝ Լեյպցիգում և Ժնևում կրթություն ստացած այս զինվորական բժիշկը, որ 1911-12թթ. վայելել է Կոմիտասի անձնական մտերմությունն ու ջերմ բարեկամությունը, այդ տարիներին եղել կոմիտասյան համերգների կազմակերպիչներից ու մասնակիցներից, Հայաստանի հետագա Տավուշի շրջանի առողջապահության նախագահն է դարձել, բազմաթիվ բժիշկների կրթել, գիտական, մանկավարժական, հասարակական նշանակալի գործունեության ունեցել, պետական բարձրագույն պարգևների արժանացել, *Լենինի ու Կարմիր դրոշի* շքանշաններով պարգևատրվել (Տես նաև՝ Անահիտ Աստոյան, *Հայերն Օսմանյան բանակում...*, էջ 68-69, 90, ինչպես նաև՝ Հայկուշ Միրզոյան, *Բազմերանգ միաձայն*, Եր., 2003, էջ 188):







**Գրիգոր Հովեյան** (1849-1926)՝ սուլթան Ազիզի օրոք ավարտել է Զինվորական բարձրագույն վարժարանը: Այն ավարտել է օգնականի, տեղակալի աստիճանով: Զինվորական վարժարանում դասավանդել է չափագիտություն: Ավարտել է Փարիզի Կամուրջների ու ճանապարհների վարժարանը, հետևել է աստղագիտության: Ջրի և հողի վրա նախահանգիստներ, բարակներ կառուցելու համար Մեքսիկայի կառավարության կողմից հրավիրվել է և կարևոր կառույցներ հեղինակել Ռիո դե Ժանեյրոյում, նաև՝ Բրազիլիայում: Լուսնի և մոլորակների մասին իր կատարած հետազոտությունների համար Ֆրանսիական կառավարությունից ստացել է ***Palm Academique*** և ***Merite Agricole*** շքանշանները:



Սարգիս Յովսեփյան
(1888-1975)

* * *

Օսմանյան բանակում զինվորական բժիշկների մասին տես՝ բժիշկներին, դեղագործներին նվիրված գլխում:

չինական արտադրությանը, ղեկավարել Եգիպտոսի Մետաղագործության դպրոցը (Յուսուֆ Քեաշեֆ, 1834-36թթ.), մեծ համբավ ու շատ հետևորդներ են ունեցել: Կաշվի, կոշիկի, օճառի արտադրությունը, լավագույնի համբավ էր վայելում տարեկան ցուցահանդեսների ժամանակ, արժանանալով ոսկե մեդալների: Հողագործության, գյուղատնտեսության ասպարեզում ավանդական կուլտուրաների կողքին հայերը երկիր բերեցին ու մշակել սկսեցին Եգիպտոսի համար տեխնիկական նոր բույսեր: Այն է՝ ափիոնը, որ 1824թ. գաղթած իզմիրահայերը սկսեցին մշակել ու արտածել, և որպես ներկող բույս՝ Բանգլադեշից բերված լեղակենին:

Ահա մի քանի երևելիների մասին, որոնք կարևոր հետք են թողել այս երկրի քաղաքական, տնտեսական կյանքում: Նրանց կենսագրության մեջ արտացոլվում է եգիպտահայ գաղութի առաջացումն ու զարգացումը, նրա ներդրումը Եգիպտոսի ճակատագրում, նրա անկախացման ճանապարհի կարևոր հանգրվանները:


Կարապետ Գալուստյան

**Աղա Կարապետ Գալուստյան (1790-1864).** 1840թ. Եգիպտոսի խեդիվ Իբրահիմ փաշան դավաճանության մեջ կասկածելով եղբորը՝ Մուհամմեդ Ալի փաշայի թոռ Աբաս Հիլմիին, աքսորում է նրան Լուքսոր: Խեդիվը վախեցել էր, որ եղբայրն իր դեմ ապստամբելու համար անգլիական հյուպատոսություն է գնացել օգնություն խնդրելու համար: Մահվան սպառնալիքով արգելվում է որևէ մեկին օգնել աքսորյալին: Միայն վանեցի Կարապետ Գալուստյանը, որ եղբոր հետ Կահիրե էր եկել ու սեղանավորությամբ էր զբաղվում, խիստ գաղտնի 5500 ոսկի է հասցնում Լուքսոր, որը դառնում է փրկարար՝ Հիլմիի համար: Երկու տարի անց Աբաս Հիլմին խեդիվ է դառնում ու իր փրկարարին է հանձնում երկրի ցորենի, աղի, ծխախոտի մատակարարման գործը: Կարապետ Գալուստյանն իր շոգենավում անգամ թնդանոթ ունենալու իրավունք է ստանում: Եղել է փողերանոցի տեսուչ, անսահման վարկ է ունեցել Ֆինանսների նախարարությունից, ստացել աղամանդազարդ պատվանշան: Նրա շնորհիվ հայերը բարյացկամ վերաբերմունքի են արժանացել այս երկրում: Կտակով իր ողջ հարստությունը նվիրաբերել է ազգին:

**Ակնցի Եղիազար, Ալեքսան և Հակոբ Եղիազարյանները** եղել են փոխարքա Մուհամմեդ Ալի փաշայի սիրելիները, նրա սեղանավորները: Գործակցել են Կարապետ աղա Գալուստյանի հետ, ստեղծել Եղիազարյան-Գալուստյան սեղանավորական հայտնի տունը: Նրանց որդիները ծառայել են կառավարությունում:

**Պողոս բեյ Յուսուֆյան** (1768-1844) կեսարահայը մանուկ հասակում կորցրել էր հորը: Պողոսը տիրապետելով հայերեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն, հունարեն, անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն լեզուների, 20 տարեկանում փոխարինել է իր Առաքել պապին՝ Զմյուռնիայում անգլիական հյուպատոսարանի առաջին թարգմանչի պաշտոնում: Այստեղ





էլ լեզուների նկատմամբ արտակարգ տաղանդ ունեցող 20-ամյա երիտասարդը ծանոթանում է անգլիացի ծովակալի հետ, ուղեկցում նրան Եգիպտոս՝ մասնակցելու ֆրանսիական գերակայությանը վերջ դնելու գործողություններին: Օսմանյան կայսրության վեզիր Քյոր Յուսուֆ փաշան ծովակալից խնդրում է իրենց մոտ թողնել այդ ուշիմ ու դիվանագետ երիտասարդին, որի կարիքն իրենք շատ են զգում: Նրան առաջարկում են Բարձր Դռան առաջին թարգմանի պաշտոնը, որը Պողոսը մերժում է, ասելով, որ այդ պաշտոնն ավանդաբար եղել է հույներինը, ու ինքը չի ցանկանում փչացնել հայ-հունական հարաբերությունները: Փոխարենը նա վեզիրից խնդրում է իրեն որպես թարգման ուղարկել Եգիպտոսի խեդիվ Խուրշիդ փաշայի մոտ: Եգիպտոսում նա կապալով վարձում է Ռոզեթի ու ապա Ալեքսանդրիայի նավահանգստի մաքսատները, որոնք մեծ եկամուտ պիտի բերեին՝ կապված Նեղոսն Ալեքսանդրիային կապող Մահմուդիյեի ջրանցքի հետ: Մաքսատները կապալով վերցնելը մեծ շահույթի աղբյուր է եղել հայ վաճառականների կամ պաշտոնյա անձանց համար: Նեղոս գետը Մահմուդիյե ջրանցքով Ալեքսանդրիային կապելուց հետո վաճառականությունը նոր թափ էր ստանալու, Կարմիր ծովի միջոցով աշխույժ առևտրի օրեցօր զարգացում էր ակնկալվում: Մասնավորապես ցորենի առևտրով զբաղվողները բազմապատկեցին իրենց շահը, և քաղաքի բնակչությունը 1818թ. 15 հազարից հասավ 110 հազարի: Պողոս բեյ Յուսուֆյանը դարձավ փոխարքայի գլխավոր թարգմանն ու խորհրդականը, ապա տասնամյակներ շարունակ՝ Առևտրի ու արտաքին գործոց նախարարը: Նա կազմեց Ֆինանսների նախարարությունը, փնտրելով երկրի համար հասույթի նոր աղբյուրներ: Նրա կարծիքով, Եգիպտոսի հարստության բանալին եվրոպական երկրների հետ արտաքին առևտրական հարաբերություններն էին: Կառուցվեցին ջրամբարներ, ոռոգման սիստեմները թույլ տվեցին հողագործական աշխատանքներում բարենորոգումների կազմակերպում, բազմապատիկ անգամ ավելացնելով մշակելի տարածքները:

Մաքսատները կապալով աշխատեցնելու այդպիսի արդյունավետ գործում նրան գործընկեր դարձավ Մուհամմեդ Ալի փոխարքան: Այսպես սկսված առևտրական լավագույն հարաբերություններն ու վստահությունը դրդեցին խեդիվին Պողոս Յուսուֆյանին դարձնել իր գլխավոր թարգմանը, առաջին կարգի խորհրդականը, պաշտոնական բանբերը, Առևտրի և արտաքին գործերի նախարար, տասնամյակներ շարունակ դասելով նրան պետական առաջին այրերի կարգում: Նա առաջին քրիստոնյան էր, որ խեդիվից նախարարական պաշտոն ստացավ: Նա մեծ հաջողությամբ իրագործում էր խեդիվի ու նաև իր պետական կարևորության ծրագրերը՝ հանուն երկրում կարգ ու կանոնի հաստատման: Նա պետական հսկողի տակ դրեց մաքսատները, հողագործական արտադրությունները, ներքին և արտաքին, ծովային առևտրի ցանցերը: Այս բոլոր ոլորտները կարևոր բարեփոխումների ենթարկվեցին: Նրա օրոք Եգիպտոս հրավիրվեցին պոլսահայ ու իզմիրահայ հայտնի վաճառականներ, սեղանավորներ, որոնք կողմնակից էին արդիական, եվրոպական առևտրական գործառույթներին: Հրավիրվածները Եգիպտոսում զարգացրին տնտեսության այնպիսի ճյուղեր, ինչպիսին էր կտավագործությունը, հաստատեցին բրնձի ու բամբակի զտման գործարաններ, գյուղատնտեսական երկրում մթերքների կայուն գներ հաստատվեցին: Փոխադրամիջոցներ հայտնվեցին Նեղոսի վրա, որոնց տերերը հիմնականում հայեր էին: Յուսուֆյանն օգտագործում էր նաև անգլիական նավատորմը: Կառուցվեցին ջրամ-

բարձեր, ռոզմամ ցանցեր, ջրանցքներ, վերանորոգվեցին հները: Երկրի մշակվող հողերի քանակն ավելացավ 30%-ով, իսկ բերքը եռապատկվեց, շահաբեր դարձնելով բամբակի երկարաթել տեսակի, ծխախոտի մշակումը: 1824թ. ըստ հատուկ ծրագրի, Հնդկաստանի Բենգալիա նահանգից (Բանգլադեշից) 40 հայ ընտանիքներ հրավիրեց, որոնք տիրապետում էին լեղակենի աճեցնելու և ներկը զտելու մասնագիտությանը: Եգիպտոսում այսպիսով զարգացավ լեղակենու (indigo) մշակումը, որը պետական եկամուտը պիտի խիստ բարձրացներ, այս գործի գաղտնիքները սովորեցնելով եգիպտահայերին: Համապատասխան



Արթին և Խոսրով Չրաքյաններ

վերահսկիչ հանձնաժողովներ ստեղծվեցին, որոնք նվազագույնի էին հասցնելու խաբեությունները ու թալանը, պետական միջոցների յուրացումները: Մեղավորները խստագույնս պատժվում էին: Պողոս Յուսուֆյանի օրոք հասարակ ժողովուրդը մի գործ սկսելուց առաջ կարող էր նախնական վարկ ստանալ, որի նպատակը տնտեսության զարգացման ու աղքատության օգտակար լինելու գործում՝ անվիճելի էր: Նույնիսկ սոցիալական ապահովության, հիվանդության դեպքերում աշխատավարձի մի մասի պահպանության նրա օրենքները այնքան մարդկային էին, որ մթնոլորտը հայասեր զգացումներով էր լցվում: Այս մարդն իր տաղանդով ու ազգակիցների օգնությամբ առևտրական հանճարեղ քաղաքականություն իրականացնելով, ապահովեց Եգիպտոսի տնտեսական անկախությունը: Նա մեծ ներդրում ունեցավ բանակի վերակազմավորման, պատերազմական և ռազմածովային վարչությունների ստեղծման գործում: Ժամանակի ֆրանսիական թերթերը գրել են, թե ոչ մի եվրոպացի դիվանագետ չէր կարող այսպիսի կարճ ժամանակում հաջողությամբ լուծել այս երկրի խնդիրները, ինչպես «այս խորագետ ու մեծահանճար հայը»:

1837թ. նրա ստեղծած Ֆինանսական վարչությունը վերանեց Առևտրի ու Արտաքին գործերի նախարարության: Եվրոպական առևտրական կարևոր կենտրոններ ուղարկվեցին մասնագետներ, որոնք պիտի ներկայացնեին եգիպտական շահերը: Դրանք հիմնականում Պողոս բեյի բարեկամներն ու ազգականներն էին, որոնց նկատմամբ վստահություն ուներ և նրանց կրթության մասին՝ լավագույն կարծիք: Տրիեստ գնաց նրա եղբայրը՝ Պետրոս Յու-





սուֆյանը (1778-1846), Իզմիր և Փարիզ՝ քրոջ ամուսինը, Մկրտիչ Նուպարյանը: Վերջինիս 3 զավակներից փաղամենիկ Կարապետ Նուպարյանը փոխարքա Մուհամմեդ Ալիի անձնական թարգմանն ու քարտուղարն էր, իսկ Նուպար փաշան՝ պետության մեծագույն պետական դեմքերից դարձավ: Առաքել բեյը՝ Սուդանի առաջին քրիստոնյա կառավարը եղավ, արժանանալով «Արդարասեր» կոչմանը: Արտաքին առևտրական ներկայացուցիչների նրա ցանցն այնպիսի լայն շրջապատի ու փորձառության հասավ, որ ամբողջովին միջազգային շուկայում Եգիպտոսի դիրքը, և եգիպտական ապրանքները սկսեցին վաճառվել առավելագույն գներով: Փոխարենը գնվում էին գործարաններին, բանակին անհրաժեշտ լայն սպառման ապրանքներ, տեխնիկա: Պողոս Յուսուֆյանի առևտրական դիվանագիտությունը երաշխիք դարձավ երկրի տնտեսական անկախության



Յակուբ Արթին փաշա Չրաքյան

հասնելու գործում: Նա կարևոր ներդրում է ունեցել նաև պատերազմական ու ծովային նախարարությունների կազմավորման գործում: Այն նշանակալի պիտի դառնար Օսմանյան կայսրությունից անկախանալու Մուհամմեդ Ալիի մեծ ծրագրերն իրականացնելու համար: Այս պատերազմում զինվորագրությանը մասնակցեցին ոչ միայն բուն եգիպտացիները, այլև տողանցի սարուկները, հայերը, հույները:

Հանրային կրթական հաստատությունների զարգացումով է ողեկցվել Պողոս բեյի գործունեության ողջ շրջանը: Նախակրթարաններ, մասնագիտական դպրոցներ տղաների ու աղջիկների համար՝ ողջ Եգիպտոսով մեկ: Հաստատվեց Հանրային Կրթության Գերագույն Խորհուրդը: Հիմնադրվեց մեկ դպրոց Փարիզում՝ Ստեփան Էֆենդի Ռեսմիի (Դեմիրճյան, 1804-1860) տնօրինությամբ: Վերջինս եղել է Մուհամմեդ Ալիի խորհրդականը, իսկ 1850-53թթ. և 1855-57թթ.՝ Եգիպտոսի Արտաքին գործերի նախարարը: Նրանք ամեն տարի պետական միջոցներով ուսանողներ էին Փարիզ ուղարկում, որոնք մասնագիտական կրթություն ստանալուց հետո վերադառնալին պիտի համալրեին պետական ծառայողների բնկը ամենատարբեր ոլորտներում: Առաջին 20 հայ ուսանողները Փարիզից վերադարձին պետական բարձր պաշտոններ ստանձնեցին: Այդ ուսանողների թվում էին՝ Արթին բեյ էլ Արմանին (Չրաքյան, 1800-1859)[6], Խոսրով բեյ էլ-Արմանին (Չրաքյան, 1808-1873)[7], Արիստակես Արթին Տյու-

6 **Արթին Չրաքյան** (1800-1859), Զինվորական նախարարության Երկրաչափական վարժարանի տնօրեն, կազմել է Տարանցիկ առևտրի վարչությունը, Մուհամմեդ Ալիի ու Իբրահիմ փաշայի անձնական քարտուղարն ու թարգմանն է եղել, իսկ Պողոս Յուսուֆյանի մահվանից հետո ստանձնել է Արտաքին գործերի և Առևտրի նախարարի պաշտոնը:

7 **Խոսրով Չրաքյան** (1808-1873), Արթինի եղբայրը: Եղել է փոխարքայի քարտուղարը, թարգմանը: Զինվորական նախարարության Երկրաչափական վարժարանի հետևակի բաժնի տնօրեն, բանակի գնդապետի աստիճան է ունեցել, Խեդիվական դարձել է Փարիզի դպրոցի փոխտնօրենը:



Աննա Տատյան
Եգիպտոսի վարչապետ Նուբար փաշայի թոռնուհին «Նուբարի կինը» դիմանկարը
Յովհաննես Տատյանի գրաւոր

տեղ, եղել Առողջապահական սպասարկությունների տնօրեն:

Նուբար փաշան առոգման ծրագիր պատրաստեց, ընդարձակելու համար մշակվող հողերը: Այս ծրագիրն այնքան հաջողություն ունեցավ, որ Բեհերա նահանգի նոր ջրանցքը 1886թ. խեդիվի հրամանով նրա անունով՝ «Նուբար կանալ» կոչվեց: 1884թ. Նուբար փաշա Նուբարյանը դառնում է Եգիպտոսի նախարարների խորհրդի նախագահ և միաժամանակ բազմաթիվ միություններ են հիմնադրվում, այդ թվում նաև հայ համայնքի շրջանակներում[12]. 1885թ. վարչապետ է դարձել: Եղել է Արդարադատության նախարար: Նա փոխնախարար Բուտրոս փաշա Ղալիին (1846-1910) հանձնարարում էր, որ «ընկերային արդարությանը (մարդու իրավունքների պաշտպանությունը) շատ լուրջ պետք է վերաբերվել, քանզի դա Եգիպտոսի ամենակարևոր հարցն է»:

Նուբար փաշան նշանակվում է Ընդհանուր դատախազության նախագահ: Նա մեծ հաջողությամբ օտար երկրների հետ ստորագրեց Խառը դատարանների ու Վերաքննիչ ատյանի հաստատման մասին օրենքը, ուր զբաղված էին հայ դատավորներ, դատարանների նախագահներ, փաստաբաններ ու խորհրդականներ: Այս դատարաններն ազատ էին երկրում 17 օտար հյուպատոսությունների վերահսկողությունից և գործում էին կառավարությունից անկախ[13]: Միջազգային մակարդակի այս հաջողությունն այնքան բարձրացրեց Նուբար փաշայի վարկն արտասահմանյան երկրներում, որ նրանք միայն Նուբարին էին տեսնում որպես Բուլղարիայի կուսակալ, որին նշանակմանը Ռուսաստանը խանգարեց: Սուլթանը ևս մերժեց, գտնելով, որ քրիստոնյային վայել չէ իսլամական պետության մեկ նահանգը կառավարել: 1878թ. 3-րդ անգամ Նուբար փաշա Նուբարյանը արտգործնախարար է դառնում:

Նույն 1878թ. երբ վարչապետ եղավ, նրա իրավասության տակ էին գտնվում Արտգործնախարարությունը և դատական նախարարությունները: Վերակազմեց Ներքին գործերի նախարարությունը, միշտ ընդուտանալով, որ այն չհանձնվի անգլիացիներին: Նա ծառայել է 6 փոխարքաների: 1884-1889թ.թ. Նուբար փաշա Նուբարյանը 2-րդ անգամ դառնում

12 Կահիրեում *ԱՄԱՄԱՏ* մարմնամարզական և սպառտական միությունը: Ջաջազիզում Հ. և Կ. Մարաշլյանները բացում են հայկական «Ռսկեպար» տպարանը: 1905թ. ճարտարապետ **Հովհաննես Ֆանիկյանը** Կահիրեում կառուցում է Պետական գույքի նախարարության շենքը: 1905թ. Ալեքսանդրիայում սկսում է լույս տեսնել «Վահան Թեքեյան և ընկ.» տպարանը, որը սկսում է տպել *ՇԻՐԱԿ* թերթը: 1905թ. Երվանդ Օտյանն ու Թաքվոր Շահբազը Ալեքսանդրիայում սկսեցին հրատարակել *ԱՐԱՐ* շաբաթաթերթը: 1905թ. Վահան Քյուրքճյանը Կահիրեում բացեց *ԼՈՒՍԱՐԵՐ* տպարանը: Հրատարակվել են նաև հայատառ թուրքերեն պարբերականներ, գրքեր: 1905թ. Կահիրեի *ՋԻԱՐԹ* թատերախումբը Արշակ Պենկլյանի բեմադրությամբ ներկայացրել է «Մեծն Ներսես»-ը հայերեն լեզվով:

13 Խառը դատարանների իրավարծումը ոչ միայն Եգիպտոսի մշտական երախտիքին արժանի երևույթ է, այլև համայն քաղաքակիրթ աշխարհի,- ասել է ժամանակին անգլիացի քաղաքական դեմք Լորդ Միլները:





է Եգիպտոսի վարչապետ: Նուբար փաշան եգիպտական կառավարության կողմից սկսում է իրականացնել Սուդանում ջուր անցկացնելու նախագիծը: Վեց փոխարքաների ծառայած ու Եգիպտոսի անկախության համար մեծագույն ծառայություններ ունեցած վարչապետը խորը հուսախաբությամբ էր հետևում Անգլիայի սարքած մեքենայություններին, մանավանդ ուղղված հայ պաշտոնյաների դեմ, առիպելով եգիպտական ողջ քաղաքականությունը ծառայեցնել Անգլիայի շահերին:

1895թ. Անգլիայի բազմաթիվ կողմից լորդ Սոլսբերին Եգիպտոսի վարչապետ Նուբար փաշա Նուբարյանին շնորհել է Ավագ հրամանատարի աստղ: 1895թ. Եգիպտոսի գերագույն պատվին՝ «Նեղոսի Մեծ Շքանշանին» արժանանալով, նա քաշվել է քաղաքական ասպարեզից: 4 տարի անց մահացել է Փարիզում: 1904թ. Նուբար փաշայի աճյունը տեղափոխվեց Ալեքսանդրիայի կենտրոնում, Գերմանական պարտեզում: 1950թ. դրոշների հետ նրա արձանը ևս հանվեց, սակայն մի քանի տարի անց այն վերականգնվեց Ալեքսանդրիայի կառավարչի հրամանով ու տեղադրվեց Մուհամմեդ Ալի թատերասրահի դիմացի հրապարակում:

1860-ականներին ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուան նրա պատվերով ֆրանսերեն է թարգմանում և հրատարակում հայ մատենագիտության արժեքավոր գործերը: Նա 1878թ. Խրիմյան Հայրիկի խնդրանքով Բեռլինի վեհաժողովի առթիվ եվրոպական տերությունների կողմից Օսմանյան կայսրության հայկական նահանգների անվտանգությունը երաշխավորող մի ծրագիր կազմեց: Իհարկե, հայկական առաջարկները այս վեհաժողովում անտեսվեցին, նույնիսկ այդ համեստ ծրագրի չափավորության սահմաններում:

Նուբար փաշան կարողացավ իր երկարատև քաղաքական գործունեության շնորհիվ շարունակել Պողոս բեյ Յուսուֆյանի գիծը: Այն է, երբ երկրի օրենքները խարսխված են լինում ոչ միայն լեզվի, կրոնի, այլ հիմնականում՝ հաստատված օրենսդրության վրա: Նա ամուսնանում է Երամյան ամիրայի Ֆուլիկ դստեր հետ: Նուբար փաշայի զարմիկ Առաքել բեյ Նուբարը 1850թ. Սուդանի նախարար է նշանակվում:

**Ճանիկ Չաքըր** (1879-), պոլսեցի, Ռոբերտ քոլեջի շրջանավարտ: 1900թ. Եգիպտոսում սկսում է աշխատել բենզին վագոնների միջազգային «Վագոն լի» ընկերությունում: Գործուղումներով շրջել է եվրոպական շատ երկրներ: 1906թ. Եգիպտոսի այդ ընկերության ընդհանուր վարիչ է նշանակվել: Իր նախաձեռնությամբ այս ընկերությունը տարածում և 1927թ. դառնում է նրա, նաև՝ ընկերության Սիրիայի, Իրանի, Իրաքի, Պաղեստինի մասնաճյուղերի ներկայացուցիչը: 1925թ. նշանակվում է Եգիպտոսի Տուրիզմի զարգացման ընկերակցության քարտուղար, որի նախագահն էր Սուլեյման փաշան: Անդամակցում է Եգիպտոսի պանդոկների վարչական խորհրդին: Նա հիմնադիրներից ու կարևոր անդամներից էր Կահիրեի միջազգային «Ռեստոֆի» ընկերակցության: Քրիստոնեական եկեղեցիների այս միության նախագահն էր Շվեդիայի նախկին դեսպան Բարոն դը Բիլդը: 1929թ. Ֆրանսիայի կողմից նրան շնորհվել է *Légion d'Honneur*, ստացել է Բելգիական թագի ասպետության աստիճան (1930), Ռումինական թագի հրամանատար (1930), Իտալիայի թագի ասպետության աստիճան (1931), Սիրիական արքունի շքանշան(1933), ստացել է նաև Բուլղարիայի քաղաքային արքունյաց ազգային մեծ խաչ(1934), շվեդական արքայական «Թղթաթոյ» աստղի ասպետական աստիճան (1935), ֆրանսիական *Chevalier de Légion d'Honneur*(1937), Լիբանանի

հանրապետության կողմից՝ «Արքունյաց ուխտ շքանշան»(1937): Հայտնի ազգային բարերարը եղել է Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) անդամներից, շնորհիվ Մովսես խանի՝ Իրանում հայ բարեգործականի մասնաճյուղի կազմակերպիչ:



Տիգրան փաշա դ'Աբրո

**Տիգրան փաշա դ'Աբրոն** (1846-1904) Պողոս Յուսուֆյանի թոռդին էր: Նա ամենաթանկարժեք մետաքսի իզմիրցի մեծ վաճառական Աբրահամ Աբրոյանների ընտանիքի անդամն էր[14], իսկ հորեղբայրը՝ Եգիպտոսի առևտրական ներկայացուցիչն էր Անտվերպենում: Նրանք երկրի համար բերում էին երկաթ, փայտ, մեքենաներ, թանկագին քարեր, գոհարեղեն և այլն: Հայրը՝ Ստեփանը, Հանրօգուտ շինությանց նախարարության ծրագրավորման վարչությունում զբաղվում էր ամբարտակների ու ջրանցքների շինարարությամբ: Տիգրանը ծնվել է Կահիրեում և ուսումը ստացել Փարիզի, Լոնդոնի, Շվեյցարիայի լավագույն ուսումնական հաստատություններում: 1868թ. վերադարձել է Եգիպտոս, դարձել Նուբար փաշայի քարտուղարը: Մեկ տարի անց՝ Եգիպտոսում Խառը դատարանների կազմության միջազգային ժողովի քարտուղար, իսկ 1873-76թթ. Դատական բարեկարգման հանձնախմբի քարտուղար է եղել: Նա հավատում էր, որ միջազգային օրենքների գործադրմամբ, դատական ճանապարհով պիտի կանոնավորվեր եգիպտական առևտուրը, ինչպես նաև օտար դիվանագետների ներդրումն ու դրանց շահագործումը, վերջ դրվեր ի վնաս երկրի կատարվող չարաշահումներին: 1873թ. ստանում է *բեյ*-ի աստիճան: Որոշ ժամանակ կազմավորել է Արտգործնախարարության վարչությունները, տնօրինել նրա արաբական և եվրոպական թարգմանության վարչությունները: 1881թ., Եգիպտոսի պատմության համար անկյունադարձային դեպքի նախօրեին նա դառնում է արտգործնախարար: Երբ 1882թ. անգլիական նավատորմը ճնշեց «Եգիպտոսը եգիպտացիների համար» նշանաբանով Ահմադ Ուրաբիի ազգային ըմբոստությունը, նա և պատերազմական նախարարի խորհրդական Էդվարդ Հանրի փաշա Զոհրապը խեդիվ Թոֆիքի կողմից ընտրվում են բանագնացներ՝ հաղթող կողմի հետ բանակցություններում Եգիպտոսի շահերը ներկայացնելու համար: Հայ բանագնացների հաջողության արդյունքում կանխվում է եգիպտական բանակի արմատական կազմալուծումը, անխախտ մնում փոխարքայությունը, շատ կյանքեր են փրկվում: Տիգրան փաշան անընդմեջ ընդդիմանալով անգլիական ճնշումներին, ասել է, որ ինքը «եգիպտական նախարար է, ոչ թե անգլիական վճարովի պաշտոնյա», չընդունելով, որ կարող էր իր պաշտոնը պահել անգլիական հյուպատոսի բարեհաճության շնորհիվ: Այս համարձակությունը նրան չի ներվել: Նա նախընտրել է հրաժարվել նախարարական աթոռից: 1885թ. Նուբար փաշայի կամքով նա մեկնում է Փարիզ, Լոնդոն՝ Եգիպտոսի ֆինանսական հարցերի լուծման համար: Ուսումնասիրելով եվրոպական մամուլի օրենքները, կարծում է, որ

14 Այս ընտանիքը սերում էր Բագրատունիների արքայական գերդաստանից:





եգիպտական ազգային մամուլի խթանումը կարող է քաղաքական զարթոնքի թթխմորի դեր կատարել: 1887թ. կրկին Նուբար փաշայի հրահանգով մեկնում է Լոնդոն, Եգիպտոսում Անգլիայի գլխավոր հյուպատոս Լորդ Կրոմերի, երկրի գործերում միջամտելու դեմ բողոք ներկայացնելու ու նրա հրաժարականը պահանջելու համար: Դա Անգլիայի շահերին դեմ էր, ուստի շատ ավելի դյուրին էր եգիպտական հանդուգն նախարարին փոխելը: Տիգրան փաշան, որ ամուսնացել էր Նուբար փաշայի դստեր հետ, պատվո դեսպան է նշանակվում Եվրոպայում, ծանոթացնելով եգիպտական արվեստը, զարկ տալով զբոսաշրջության գործին: 1891թ. նա կրկին արտգործնախարար է նշանակվել, պարգևատրվել է Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Շվեդիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, նաև՝ Անգլիայի բազմաթիվ բարձրագույն շքանշաններով: 1892թ. նոր, Աբաս Բ խեդիվը նրան **վարչապետ** է նշանակել: Նրա մասին խոսելիս սովորաբար չեն մոռացել նշել, թե՝ «Նա փրկեց Սուեզի ջրանցքը»:

1894թ. Սասունի, ապա Զեյթունի ջարդերի փաստն օգտագործելով Լորդ Կրոմերը տարածեց այն կարծիքը, թե մուսուլմանների կողմից քրիստոնյաների ջարդեր են սպասվում նաև Եգիպտոսում, և եգիպտական կառավարությանը խորհուրդ տվեց փոխել հայազգի վարչապետին: Եգիպտոսի շահերը գերադասող Տիգրան փաշան ևս դիմեց խեդիվին՝ նոր վարչապետ նշանակելու հորդորով: Նշանակվեց քրիստոնյա Նուբար փաշան: Անգլիայի ճնշման ներքո երկու հայ մեծ դիվանագետ վարչապետները հեռացան իրենց պաշտոնից, քանի որ Անգլիան սպառնում էր դուրս բերել Եգիպտոսին Սուդանից: 1894թ. Եգիպտոսի նախկին արտգործնախարար Տիգրան փաշա դ'Աբրոն օդափոխության և բուժման համար գնում է ֆրանսիական Էվիան ու 1904թ. այնտեղ էլ կնքում իր մահկանացուն: Դին բերվում ու մեծ շուքով թաղվում է Կահիրեում:

Տիգրան փաշա դ'Աբրոն մեծապես աջակցում էր օսմանյան ջարդերից Եգիպտոս ապաստանած հայ գաղթականներին: Նա գաղթականների խնդրով հանձնախումբ էր կազմել, փորձելով նրանց համար ամեն ինչ ապահովել: Նվիրել էր մի մեծ կալվածք, որի հասույթը միշտ պիտի գաղթականներին ծառայեր: Նրա և Նուբար փաշայի կիսանդրիները 1952թ. դրվել են Կահիրեի հայոց ազգային առաջնորդարանի մուտքի մոտ:

**Յակոբ (Հակոբ) փաշա Չրաքյանը** (1842-1919) Եգիպտոսին անձնվեր ծառայությամբ փայլած պետական երևելի այրերի թվում է եղել: Նա Եգիպտոսի կրթական կյանքում ունեցած իր մեծ ներդրման համար արժանացել է «Էլ Ուսթազ էլ Քաբիր» (մեծ ուսուցիչ) տիտղոսին: Նա պետական հայտնի դեմքերից սեբաստացի, 1814թ. Եգիպտոս հաստատված Արթին բեյ Չրաքյանի (1800-1859) որդին էր: Ուսումը ստացել էր Փարիզում:

Խեդիվի կարգադրությամբ 1866թ. ուղարկվել էր կրթություն ստանալու Իտալիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Անգլիայի համալսարաններում: Վերադառնալով, նա շարունակել է հոր և հորաքրոջ ամուսնու՝ Յուսուֆ (Հովսեփ) Հեքեքյանի (1807-1875) սկսած գործը: Նրանք կազմել էին Կրթական հանձնախումբ, որը վերածվել է նախարարության: Նրանք անդամներն էին Պետական վերահսկիչ հանձնախմբի, որը տնօրինում էր կրթական սիստեմն ու նրա սպասարկումն ամբողջությամբ: 1827թ. Բժշկական ուսումնական կենտրոնի հիմնադրման առթիվ նրանք թարգմանիչների մի խումբ են կազմում և 10 տարվա ընթացքում ֆրանսերենից արաբերենի են թարգմանում անհրաժեշտ 52 կտոր բժշկական կարևորագույն գրա-

կանությունն[15]: Նա և իր համախոհները կողմնակից էին աղջիկների կրթությանը: 1828թ. հիմնադրվել էր տղաների ու աղջկանց առաջին հայկական դպրոցը: 1832թ. հիմնադրված Դայակների դպրոցը Մերձավոր Արևելքի իգական պետական առաջին հաստատությունն էր: Միայն 1873թ. խտիվ Իսմայիլի երրորդ կնոջ՝ Չեշմե Աֆեթի հովանավորությամբ բացվեց *Սուֆիա* Եգիպտոսի աղջկանց առաջին դպրոցը: Կարևոր է նշել, որ եգիպտացիները իրենց աղջիկների կրթությունը տղաներին չէին վստահում և 12 տարեկանից ամուսնացնում էին: Վերնախավի ու միջին դասակարգի աղջիկների համար վարձված հատուկ ուսուցչուհին (մուալլիմա) ձեռագործ էր սովորեցնում, իսկ միջնորդը՝ (դալլալա) այն շուկա էր հանում: Ձեռագործի ու ձևագիտության դասընթացներ հաստատվեցին աղջիկների դպրոցներում: Կրթական նախարարությունը հատուկ ծրագիր էր գործի դրել, բացելով ձեռագործի ու ձևագիտության արհեստանոցներ: Նրանք հիմնեցին Արհեստների ու արվեստների դպրոց: Յուսուֆ բեյն անձամբ հիմնադրեց Պուլաքի Ճարտարագիտական դպրոցը: Մեծ դեր է խաղացել Կրթական նախարարության ենթակայության տակ գտնվող հնությունների պահպանման գործում: Նա է կազմակերպել Կենտրոնական հաշվակալական հաստատությունը և 1834թ. հիմնել Վարչագիտության և թարգմանության դպրոց: Մուհամմեդ Ալիին հաջորդած Աբաս (1848-1854) և Սաիդ (1854-1863) խտիվների օրոք փակվում են կրթական օջախները: Խտիվ Իսմայիլն իր գահակալության առաջին իսկ օրից վերահաստատում է դրանք՝ համարելով, որ դպրոցներով ու գրագիտությամբ է պայմանավորված իր երկրի առաջընթացը: Նրանց նախաձեռնությամբ հիմնվեց Կահիրեի Պետական ուսուցչանոցը, որի նպատակն էր ուսուցիչներ պատրաստելը: Հանրային կրթության մասին Յակուբ (Հակոբ) փաշայի ուսումնասիրությունը նաև կանոնագիր էր այս բնագավառի համար: Ավելին, նախկին մեթոդով անգիր ուսուցմանը փոխարինելու էր մտածելու, դատողություններ անելու, վերլուծելու, համեմատելու եվրոպական մեթոդը: Պետական առումով կրթական ծրագրերի կազմումը, դրանց իրականացումն անմիջականորեն տվեց աննախընթաց մեծ արդյունք: Նա հավաքեց ու հրատարակեց բանաստեղծների հեքիաթները, որոնք ժողովրդական նկարազարդումներով երգվելով՝ մինչ օրս պատմվում են, շեշտելով Եգիպտոսի ազգային ինքնությունը:

Մեծ է նրա ավանդը մշակութային գիտական հիմնարկների հիմնադրման առումով: *Եգիպտական համալսարանը*, որի տարեկան տեղեկագիրն ինքն էր խմբագրում: *Պետական Մատենադարանը, Հնությունների թանգարանը, Արաբական արվեստի թանգարանը, Ղպտիների թանգարանը*, որոնց մեկական սրահներ Հակոբ փաշա Չրաքյանի անունով են կոչվում, քանի որ դրանցում իր նվիրած թանկարժեք ցուցանմուշներն են պահվում:

1919թ. եգիպտահայ դիվանագետ ու լուսավորության նախարար Յակուբ Արթին Փաշա Չրաքյանի մահվան թափորն ուղեկցում էին նաև շնորհակալ եգիպտացիները, իսկ որպես հարգանքի ընծայված տուրք՝ եկեղեցում հոգեհանգստի արարողությանը ներկա են գտնվել Ֆուադ Ա թագավորի կողմից ուղարկված պալատականները:

1894-96թթ. Օսմանյան կայսրությունում արևմտահայության ջարդերից մազապուրծ գաղթական տարագրյալներին, հայ որբուհիներին պատսպարելու և դաստիարակելու համար նրա նյութական աջակցությամբ 1897թ. բացվել է Անարատ Հղության քույրերի դպրոցը: Նրա բնակարանով կազմվել է Տիկնանց խնամակալությունը՝ փաշայի գրած կանո-

15 El-Azary Sonbol. Amira, *"The Creation of a Medical Profession in Egypt During the Nineteeth Century"*, Washington, 1981, p. 117.





նադրությամբ: Նա բազմակողմանիորեն աջակցում էր ազգային վարժարաններին: Նրա քաջալերանքով է ստեղծվել «Եղիայան ուսանողական հիմնադրամը»՝ որը և չքավոր հայ ուսանողների բարձրագույն կրթության ծախսը հոգալու համար: Իսկ «Ազգային շահերի պաշտպանության հիմնադրամ»-ը օժանդակություն էր ուղարկելու ս.Էջմիածին՝ դեպի Հայաստան, Կովկաս փախած 1915թ. աղետյալներին օգնելու համար: Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով նա մաս է կազմել Պողոս Նուպար փաշայի գլխավորած Հայոց ազգային պատվիրակությանը: Նա միացել է «Եգիպտահայ նպաստամատույց մարմնին», երբ 1915թ. դեկտեմբերին 4053 մուսալեռցիներին պատսպարելու համար անհրաժեշտ եղավ Պորտ Սաիդում վրանաքաղաք ստեղծել:

**Պողոս Նուպար Փաշա Նուպարյանը (1851-1930)** Նուպար փաշայի որդին է: Կրկնել է հոր կենսագրությունը, պետական մեծ դիրքեր է նվաճել: Ֆրանսիայում կրթություն ստանալուց հետո վերադարձել է Եգիպտոս: 1878թ. Պողոս փաշա Նուպարը նշանակվել է Եգիպտոսի երկաթուղիների գլխավոր տնօրեն: Մեծապես նպաստել է նոր երկաթուղիների հաստատմանը, վարչական բարենորոգումների անցկացման գործին՝ իր ավագ պաշտոնակատար Թագվոր փաշա Հակոբյանի[16] (1827-1888) հետ սերտ համագործակցությամբ:

Պողոս Նուպարը 1896թ. մասնակցել է Երկրագործական ընկերության հիմնադրմանը, Ալեքսանդրիայի Ռամլեի տրամվայի և Մենզելեի հողերի բարելավման ու շահագործման ընկերությունների հաստատմանը: Ոռոգման ծրագրեր է կազմել Կահիրեի, Սուդանի ջրաբաշխական սիստեմների համար: Որպես ինժեներ հնարել է ինքնաշարժ արոր, որը ամենակարծր հողերն անգամ հերկում էր: Այս գյուտի համար 1900թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսում ստացել է Ոսկե մեդալ: Պողոս Նուպար փաշայի կողմից 1895թ. Եգիպտոսում տարածած տրակտորներն ու շարժական մեքենաները Միլանի 1905թ. միջազգային ցուցահանդեսում ևս մրցանակներ են ստացել: 1912թ. Գևորգ Ե կաթողիկոսի խնդրանքով, Լոնդոնում Բալկանյան պատերազմի առթիվ խորհրդաժողովներին մասնակցելու համար պատվիրակություն կազմեց, ջանալով որ հայկական 6՝ Վան, Բիթլիս, Էրզրում, Խարբերդ, Դիարբեքիր, Սվազ նահանգներում եվրոպական պետությունների երաշխավորությամբ բարենորոգչական ծրագրեր իրականացվեն: Առաջին համաշխարհային պատերազմը խանգարեց այդ ծրագրերի գոնե մասամբ իրականացմանը: 1919թ. Փարիզի խաղաղության, 1920թ. Սևրի և 1923թ. Լոզանի խորհրդաժողովներից հետո, 1924 թվականին այն ցրվեց: Ֆրանսիայի քաղաքական այրերից Ռեյմոն Պուանկարեն (1860-1934) Պողոս Նուպարի մասին իր հիացմունքն արտահայտել է հետևյալ կերպ՝ «Նա մեկն է այն սակավաթիվ անձերից, որոնք բարձրագույն բարոյականը միացնում են շատ մեծ իմացականության հետ»:

Նրա գլխավորած Հայ ընդհանուր բարեգործականը (ՀԲԸՄ) սկսեց մասնաճյուղեր հաստատել աշխարհի տարբեր անկյուններում, իր հիմքում ունենալով համահայկական ծրագիր: Այն է՝ Հայաստանի վերաշինումը, ժողովրդի տնտեսական ու կրթական զարգացումը, օգնություն գաղթականությանը: 1930թ. Փարիզում ուսանողների Հայ տան կառուցումը նրա վերջին գործերից եղավ: Մահացավ նույն տարի Փարիզում:

16 Կառուցել է Ալեքսանդրիայի Պողոս-Պետրոս եկեղեցին, վերանորոգել է Կահիրեի Ս.Աստվածածինը: Իզմիրում, Բեյրութում հիմնել է Դարոնյան աղջկանց վարժարաններ, ի հիշատակ իր վաղամեռ կորցրած 6 ամյա Դարոնի դստեր: Երևանում հիմնել է Դարոնի Հակոբյան Մայրանոց-մանկաբարձական վարժարանը:

Նուպար փաշան Պոլսում Բանկ Օտոմանի դեպքերի պատճառով Եգիպտոս գաղթած ինժեներական կրթություն ունեցողներին անմիջապես իր վարչությունում աշխատանք էր տալիս, իսկ մյուսներին տեղավորում էր Կամուրջների, նոր երկաթգծերի տուրքահանության, բեռնափոխադրության վարչություններում, պոլիտեխնիկական գրասենյակներում, ինչպես նաև նոր կազմակերպված «Մահճակալով երկաթուղային վագոնների միջազգային ընկերությունում»: Նրա գծած հատակագծով կառուցվում են Ալեքսանդրիայի եկեղեցուն կից հայկական թաղամասի «ափարթմանները» (բնակելի պարզ շենքերը), Կահիրեի Գալուստյան վարժարանի շենքը:

Եգիպտոսի հայ գաղթականները, փախած Պոլսից կամ գավառներից, զբաղվում էին արհեստներով, փոքրիկ խանութներ ու ճաշարաններ ունեին, ոսկերչությամբ, երկաթագործությամբ, կոշկակարությամբ, սափրիչությամբ, հայկական սրճարաններ ու ծաղարաններ (հրուշակարան-խանութ, սրճարան) էին բացում: Պողոս Նուպար փաշան իր ղեկավարած Հանրային շինության, ջրի, երկաթուղիների, հողագործական և այլ ընկերությունների միջոցով աշխատանք էր հայթայթում գաղթական հայրենակիցներին, շենացնելով Կահիրեին կից Հելիոպոլիսը, ապահովելով նրանց համեստ բնակարաններով: Երվանդ Օտյանն իր հուշերում[17] գրում է, որ հայերի մեջ նույնիսկ հաշիշի առևտրով զբաղվողներ կային, որոնք, չնայած ծանր պատիժներին, տուգանքներին, այնուամենայնիվ այդ անօրինական առևտրի գերին էին դարձել:

* * *

Եգիպտահայ գաղութն ունեցել է հայտնի փաստաբաններ, բժիշկներ: Կահիրեում եղել են միջին աստիճանի հայկական պանդոկներ, բարեր, որոնք անգլիացի սպաների նախընտրած սրճարան-հավաքատեղիներն են համարվել:

Եգիպտոսում որոշ արհեստներ հայերն են սկսել՝ պղնձի ու դեղին պղնձի ձուլումը՝ զանազան առարկաներ շինելու համար, ինչպես ծորակ, բանալի, օղակներ, կառքի համար անհրաժեշտ առարկաներ, գործիքներ, աշտանակներ, ճառագայթաններ, ֆեսի կաղապար և այլ իրեր: Հայկական մետաղաձուլարաններ կային եգիպտական մի քանի քաղաքներում:

Հայերը մեծ ներդրում են ունեցել Օսմանյան կայսրության տիրապետության շրջանում եգիպտական ծխախոտագործության կազմակերպման ու զարգացման մեջ: Նրանք շահագրգռված էին իրենց նկատմամբ բարեհաճ վերաբերմունք ու վստահություն ունեցող երկրում զարկ տալ գյուղատնտեսության զարգացմանը, հիմնավորել այստեղ գաղթած հայ ընտանիքների ապագան: Հայազգի բարձրաստիճան պաշտոնյաներն ու փոխարքայի պալատին մոտիկ կանգնած հայերը հնարավորինս անում էին այս երկրի բարգավաճման համար: 1900թ. Երվանդ Աղաթոնը հիմնում է Եգիպտոսի Գյուղատնտեսական միությունը: Գործին առանձնակի թափ է հաղորդել հայկական տարբեր ընկերությունների հիմնադրումը, որոնք տվյալ շրջաններում ծխախոտի դաշտեր սահմանելու համար մեծածավալ աշխատանքներ են կատարել: Եգիպտոսում հայտնի էին ծխախոտի հայկական մի քանի տներ՝ Մաթոսյան, Մելքոնյան, Սանոսյան, Փենպեճյան: Մաթոսյանները երկու խոշոր գործարաններ ունեին (Կահիրե և Թանթա), հազարից ավելի գործավորներ: Ասում են, որ նրանք օրական 1000 ոսկի մաքս էին վճարում, ինչ որ ապացույց է մեծ քանակով ծխախոտի ներմուծմանը: Նույ-

17 Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ.4, հուշագրություններ, էջ 476-485, Եր., 1962.





նիսկ ամենավերջին ֆելլահը (հողագործը) նախընտրում էր այս մակնիշի ծխախոտը: Մաթոսյան տունը հարյուրավոր հայերի ընտանիքներ է պահել, քանզի ջանում էր, որ իր պաշտոնյաները հայեր լինեին:

1914թ. Կահիրեում Գրիգոր և Կարապետ Մելքոնյան եղբայրները ծխախոտի ֆաբրիկա են հիմնում և Սուդանում իրենց 80 մասնաճյուղերում օրական 19 միլիոն ծխախոտ արտադրում: Այս ընկերությունները, որ ծխախոտագործության ճյուղի պատասխանատուներն են եղել, իրենց շուրջն են համախմբել տարբեր պատճառներով Եգիպտոս գաղթած հայկական ազգաբնակչությանը: Այս նորաստեղծ համայնքների կյանքի տարբեր կողմերի կարիքների, անհրաժեշտությունների մասին հոգ են տարել հենց ընկերությունների, ֆաբրիկաների տերերը:

1886թ. Կարապետ Մաթոսյանը Կահիրեի Մուհամմեդ Ալի հրապարակում ծխախոտի ֆաբրիկա ու վաճառատուն-ընկերություն է բացում: 1902թ. Եգիպտոսի Աստոր քաղաքում Մաթոսյանների և Սարգսյանների կողմից ծխախոտի ֆաբրիկա է հիմնադրվում, որի հայ աշխատողների 20 երեխաների համար բարեգործական դպրոց է բացվում: 1910թ. «Չամբերլեն և ընկ.» հայկական ծխախոտի ընկերությունը Բրյուսելի միջազգային ցուցահանդեսում մեծ մրցանակ է ստանում:

Արհեստների, արվեստի ասպարեզում հայկական հետքը նկատելի է այս երկրում մինչ օրս: Հայ ոսկերիչ, արծաթագործ ու փորագրիչ վարպետները լավագույնների շարքում են եղել: 1864թ. Ալեքսանդրիայի 45 հոգիանոց հայ գաղութի 8-ը՝ ոսկերիչներ են եղել: Ինչպես Պոլսում, օսմանյան սուլթանների, այնպես էլ Եգիպտոսում՝ խադիվների պալատական ոսկերչապետները հայեր են եղել: Արշակ Ալպոյաճյանն, ի թիվս ոսկերիչների, հիշում է նաև հայտնի ժամագործների, թանկագին քարեր ագուցողների, փորագրիչների անուններ[18]:

Հայերի մենաշնորհներից է եղել մասամբ նաև լուսանկարչական արվեստը: Ամենահայտնի լուսանկարիչը՝ Գ.Լեքեճյանը, որ Մաղաքիա Օրմանյան պատրիարքի քրոջ ամուսինն էր, մրցանակներ է շահել Փարիզի ու Չիկագոյի միջազգային ցուցահանդեսներում: Բազմաթիվ լուսանկարիչներ իրենց լուսանկարչատներով, գործիքների, տեխնիկայի նորարարությամբ, արժանավոր ժառանգորդներն են եղել օսմանյան կայսրությունում լուսանկարչության նահապետներ Աբդուլլահ եղբայրների, որոնք Խեդիվի հրավերով լուսանկարչական գործի սկզբնավորողներն են դարձել նաև Եգիպտոսում: Եգիպտահայ մթնոլորտում ճարտարապետների, նկարիչների, ինժեներների, գյուղատնտեսների, մտավոր շրջանակի մարդկանց թվում հիշատակվում է նաև քարտեզագետ Ավետիս Քիրիշճյանի անունը, որի 1915-1917թթ. կազմած պատերազմական քարտեզները մեծ գնահատանքի են արժանացել: Նրա անվան հետ է կապվում նաև *Սաուդյան Արաբիայի առաջին դրոշմաթղթերի պատրաստումը*: Վերոհիշյալ բոլոր ասպարեզները ներկայացնող հայերը նախևառաջ իրենց մեծագույն ներդրումն են ունեցել Եգիպտոսի կյանքում, նրա մշակույթում:

Հայազգի պետական այրերն իրենց կրթության, տաղանդի, մարդկային ու մասնագիտական լավագույն հատկությունների շնորհիվ իրենց դրոշմն են թողել այս երկրի կառավարման, օրենսդրության, զարգացման ու բարգավաճման, մշակույթի, միջազգային ասպարեզում տնտեսական հարաբերությունների հաստատման ու ճանաչման, ինչպես նաև Օսմանյան կայսրության և անգլիական գերակայության լուծը թոթափելու ու անկախության կերտ-

18 Ալպոյաճեան Արշակ, *Պատմական Միջոցով Հանրապետության Եգիպտոսի Նահանգը և հայերը*. Կահիրե, 1960.

ման ասպարեզներում: Այս մարդիկ ոչ միայն չեն շրջանցել իրենց ազգային հայկական ծագումն ու կրոնը, այլև իրենց շուրջն են հավաքել հայ ազգաբնակչությանը, աճող հայ գաղթականությանը, դարձել ազգի հայրերը, մտածել նրանց ապահովության, անվտանգության, այսօրվա ու ապագայի մասին, փորձելով ներդաշնակ, տնտեսապես բարվոք կյանք ապահովել նրանց համար եգիպտական մթնոլորտում, միշտ բարձր պահելով հայ գաղութի արժանապատվությունը: Զարմանալի չէ, որ եգիպտահայությունը համարվել է մեր գաղթօջախների մեջ նաև մշակութային արժեքներով աչքառու գաղութների մեջ առաջիններից: Հայ պետական այրերի իդեալն ու հավատամքը արդարությունն էր, օրենքների գերակայությունը: Ուստի վերջին երկու դարերի ընթացքում, երբ հայերը նրա կառավարական տարբեր աստիճանների վրա են գտնվել, այդ երկիրը ձգտել են դարձնել օրենքից բխող արդարության, բարգավաճման աղբյուր: Այսպիսով, երկիրը հենվում էր օրենքի ուժի, և ոչ թե կրոնական, լեզվական համարականության, տեր ու ծառայի հոգեբանության վրա: Այլազգի, այլակրոն, մասնավորապես քրիստոնյա փոքրամասնությունները բարոյական առողջման առարկա համարյա թե չեն դարձել, ոչ էլ՝ կրոնական ու ազգային անհանդուրժողականության թիրախ: Եգիպտոսի 1924թ. Սահմանադրությունը այս իրավիճակի արտահայտությունն է եղել:

Իզուր չէ, որ արևմտահայության մեծագույն ողբերգություններից հետո այս երկրում եղբայրաբար ընդունեցին ու ապաստան եղան հայ գաղթականությանը: Գալով արևմտահայության իրավունքների պաշտպանությանը միջազգային ատյաններում, եգիպտահայ երևելիներից Նուբար փաշա Նուբարյանն ու որդին՝ Պողոս Նուբար փաշան միջազգային ճանաչում ու հարգանք վայելող պետական առաջին այրերից էին:



Բաշիբոզուկներ (Լուս. Աբդուլլահ եղբ.)



Քրդերը և կաթոլիկ քահանան (Լուս. Սեբահ)





# ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

## ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ[1]

Հայ բժշկության պատմությունը, սկսած վաղ շրջաններից, հարուստ է հայտնի անուններով: Հայկական մատենագիտության մեջ բժշկության պատմության մասին հետաքրքիր շատ տեղեկություններ կան: Դրանց մի մասը վերաբերում է հեթանոսության շրջանից սկսած բժշկության ու առողջապահության տարածմանը Հայաստանում, այս ասպարեզում ստեղծված ավանդույթներին, առանձին բժիշկների գործունեությանը, անգամ՝ հայ թագավորների ու թագուհիների բժշկագիտության նկատմամբ տածած մեծ հետաքրքրությանը: Հայտնի են վերջիններիս կողմից ճահիճների չորացման, այդ վայրերում այգիների, մասնավորապես բուսաբանական այգիների ստեղծման մի շարք փաստեր: Դրանք ոչ միայն հրաշալի զբոսավայրեր են դարձել, այլև ծառայել են որպես դեղաբույսերի աճեցման կենտրոններ: Որպես դեղամիջոցներ են օգտագործվել հայկական բնաշխարհի համբավավոր դեղաբույսերը, հանքային ջրերը, արևը, կավը, մետաղները, հանքային ու կենդանական ծագման դեղամիջոցները: Դեռևս հեթանոսական շրջանում տաճարներին կից ապաստարաններ են հիմնադրվել, որ խնամվել են բնակչությունից տարանջատված բորոտները: Հայտնի են Սուրենաշեն ավանում Աղվիտա իշխանուհու հիմնած բորոտների ու ցավագարների անկելանոցները 260թվականին: Եկեղեցական նմանատիպ հաստատությունների գոյության մասին հիշատակվում է միայն երկու դար անց: Այս անկելանոցներին հաջորդել են Ներսես Մեծի (353-373) կողմից վանքերին կից հիմնած ցավագարների հիվանդանոց-ապաստարանները: Հայտնի է նաև Գյուտ կաթողիկոսի այս բնագավառում ունեցած գործունեության մասին: Հայկական մատենագրության վաղ շրջանի ժառանգության մեջ հետաքրքրություն են ներկայացնում Եզնիկ Կողբացու բժշկագիտական հայացքները, մարդու բուժման շրջա՛նում հարակից օգնող միջոցների մասին հիշատակությունները, որոնցից են՝ աղոթքները, ապաշխարությունը:

Հայկական ձեռագրերը հարուստ են բժշկական բնույթի ինքնուրույն և թարգմանական երկերով: Հիմնվել են բժշկության կենտրոններ, դարմանատներ: Որպես այդպիսիք են ծառայել նաև որոշ վանքեր: Ավելի ուշ, Կիլիկյան թագավորության շրջանի բժշկության, առողջապահության մասին հիշատակելիս հարկ է հիշել 13-րդ դարի կեսերին Լևոն Մեծագործի դստեր և Հեթում Ա-ի կնոջ՝ Զաբել թագուհու այս բնագավառում ունեցած ներդրման մասին: Նա, ի թիվս աշխարհաշեն ու բարեգործական մեծ գործունեության, Սիս քաղաքում կառուցել է հիվանդանոց, որին անդրադարձել է Ղևոնդ Ալիշանն իր «Յուշիկ Հայրենեաց և «Սիսուան» աշխատություններում: Հայ և օտար մի շարք պատմագիրներ ևս անդրադարձել են Կիլիկյան թագավորների հիմնած հիվանդանոցներին, բորոտների համար ստեղծված հատուկ դարմանատներին: Կիլիկյան թագավորության Ռուբինյան տիրապետության 26 ամյա Զաբել թա-

1 Այս մասին մեր կարդացած վերջին հոդվածն է՝ Կարպիս Հարությունյան, *Հայ բժշկությունը հին դարերէն մինչև 19-րդ դարու սկիզբը*: «Հասկ», Պաշտոնական ամսագիր կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, թիւ 2-3, 2007թ, Անթիլիաս, էջ 122-134: Օսմանյան կայսրությունում հայ բժշկության պատմության լավագույն ուսումնասիրություններից է ստամբուլահայ գիտնական Արսեն Յարմանի թուրքերեն ծավալուն աշխատությունը, տպագրված 2001թ. Պոլսում (Arsen Yarman, *Osmanlı Sağlık Hizmetlerinde ermeniler ve Surp Pırgiç Ermeni Hastanesi Tarihi*. Այսուհետև տես՝ Ա.Յարման.). Տես նաև՝ Ստելլա Վարդանյան, *Հայաստանի բժշկության պատմությունը*, Եր., 2000:



Դ. Գյումուշգերդան

երևելի բժիշկներ:

1877թ. հիմնադրվում է Օսմանյան Կարմիր Մահիկը, որի գանձապահ է ընտրվել Նուրյան էֆենդին, իսկ անդամակցել են Փեշտիմալճյան փաշան և Սերվիչենը: Մեկ տարվա ընթացքում հավաքվել է 70 հազար լիրա, որով 9 հիվանդանոցներ, շտապօգնության կայաններ են հիմնադրվել ու տարբեր օգնություններ են տրամադրվել: Այն ունեցել է նաև կանանց բաժանմունք: Կարմիր Մահիկի հովանավորների թվում են եղել սուլթանի զինավոր կինը, արքայադուստրեր: Հիմնական խորհրդի անդամներ են եղել արևմտահայ համայնքի երևելիներից Տիրան Քելեկյանի, Հովհաննես Կոյումճյան փաշայի, Դ.Գյումուշգերդյանի, Մանուկ Ազարյանի, Հ.Աստուրյանի կանայք: Այս միության կանոնագրի պատրաստման հեղինակներից է եղել բժիշկ Հ. Գափամաճյանը: Հայ բուժքույրերի մի ողջ սերունդ է կրթվել, երբ ֆրանսիական հյուպատոսարանին կից բացվել է հիվանդապահուհիների, բուժքույրերի վեցշաբաթյա ուսուցման դասընթացներ: Այն խթանվել է Հայկական Կարմիր խաչի[33] ու Կարմիր Մահիկի միությունների կազմակերպմամբ:

Հայ բժիշկները հավասարապես մասնակցել են և՛ կայսրության, և՛ զուտ հայկական առողջապահական, բժշկական միությունների գործունեությանը: 1885թ. Կ.Պոլսում նոր հիմնադրված Առողջապահության հանձնաժողովի անդամներ են ընտրվում Սերվիչեն և Գաբրիել Նորատունկյանը, ապա նաև՝ Հակոբ Խանդանյանը:

1912թ. Պարոնիկ Մատթեոսյանի ջանքերով հիմնադրվում է Ստամբուլի Հայ Բժիշկների միությունը, որը մեծ ներդրում է ունեցել պոլսահայ առողջապահության պատմության մեջ:

1799-1842թթ. Կ.Պոլսում գործել են 19 զինվորական հիվանդանոցներ:

1838թ. եվրոպական բժշկագիտական կենտրոնների ավանդույթներով ստեղծվող Օսմանյան կայսրության բժշկական առաջին ուսումնական հաստատությունը վերակոչվում է «Մեքթեպի Թըպպիյէ Շահանէ» (Կայսերական բժշկական վարժարան)[34]: Արդեն 1842-4թթ. ուսումնական տարում 303 մահմեդական ուսանողների կողքին վարժարանը 38[35] ոչ մահմեդական ուսանողներ է ընդունում: Վերջիններիս թիվը հետզհետե ավելանում է:

Թուրք նոր ռազմաքաղաքականության կրթական կենտրոններում ևս բնականաբար սկսում են տարածվել առաջադիմական, եվրոպական հոսքեր պարունակող գաղափարները, որոնք ցավոք սրտի վերածվում են ազգայնական խմբավորումների: «Ազատություն, եղբայրություն, հավասարություն» լոզունգը միշտ չէ, որ տեղ էր գտնում եվրոպական ու եվրոպայում ուսում առա-

33 1918 Հայաստանի Հանրապետության Պողոսյանը, դեղագործ Ռուբեն Պողոսյանը և Սարգիս Սեւյանը հիմնում են Հայկական Կարմիր խաչի մասնաճյուղը: 1918թ. հայ Կարմիր խաչն իր 40 գավառական մասնաճյուղերով ուներ 5000 անդամներ:

34 Մինչ այդ, Քուրուչեշմեյում 1805թ. բացվել էր ռուսական բժշկական դպրոց, Դիմիտրաշկո Մորոզ Բեյզադեի տնօրինությամբ:

35 Կայսերական բժշկական դպրոցում սովորել են բժիշկ, վիրաբույժի մասնագիտությունները: Նրանց սովորել են դիպլոմներ՝ օսմաներեն և ֆրանսերեն լեզուներով: Առաջին ուսանողների մեջ որպես առաջատար փայլում մասնագետներ, աչքի են ընկել Հակոբ Հովհաննեսը, Գաբրիել Հովսեփը (Իսահի):







Բժիշկ Ճամիրճյան

ցած թուրք երիտասարդների քաղաքական կողերում: 1888թ. «Իթթիհադ վէ թերաքքը» (Միություն և առաջադիմություն) ուսանողական խումբը կայսերական բժշկական դպրոցում կոչվում է՝ «Իթթիհադը Օսմանի» (Օսմանյան միություն):

Բժշկական հաստատությունները շարունակում էին քրիստոնյա ուսանողներով համալրվել, դասախոսական կազմում ունենալով նույն ազգերի մասնագետ-պրոֆեսորներ, անվանի բժիշկներ: Ռազմական բժշկություն ուսանած առաջին հայերից հիշվում է **Զեբուհյան Բարունակ Քրիկյանը (1824-1869),** որը 1847թ. սուլթանական ֆերմանով ծառայության է մեկնել Բաղդադի նահանգապետի մոտ: 1876թ. հրատարակվել են Արևմտյան Հայաստանի կարևոր քաղաքներով նրա ճանապարհորդական հուշերը «Բարունակ պէյի ճանապարհորդութիւնն ի Բարեկոն ընդ Հայաստան» խորագրով: Վերադարձին, 1852-55թթ. եղել է Մանասքրի զինվորական հիվանդանոցի բժշկապետ, ծառայել Շումենում, ընտրվել Կայսերական բժշկական միության անդամ: 1865թ. ժանտախտի համաճարակի դեմ պայքարողների առաջին շարքերում է եղել, ստացել գնդապետի (ալայ) կոչում և 3-րդ աստիճանի ***Mecidiye***: Վարել է Կ.Պոլսի Ս.Փրկիչ ազգային հիվանդանոցի տնօրինությունը, մասնակցել Ազգային Սահմանադրության կազմելու աշխատանքներին, անդամակցել Պատրիարքարանի աշխարհիկ խորհրդին:

1887թ. 9 հայ երիտասարդներ ավարտում են Կայսերական բժշկական վարժարանը: 1899թ. Կայսերական բժշկական դպրոցի դեղագործական բաժինը ավարտում են հետագայում հայտնի անուններից Խնդիր Խնդիրյանը, և էին 9 հայեր: 1901թ. Կայսերական բժշկական վարժարանի դեղագործական բաժնի շրջանավարտ են լինում գավառներից 14 և Կ.Պոլսից 15 հայեր:

1902թ. 8 երիտասարդներ ավարտում են Կայսերական բժշկական վարժարանը նաև գավառից: Չնայած, որ միայն 1841 թվականից սկսած ոչ մահմեդականներին արտոնվել է սովորել Կ.Պոլսի Կայսերական զինվորական բժշկական վարժարանում, բեև դասախոսական կազմում հիմնականում են եղել քրիստոնյաները՝ հայ, հույն, ֆրանսիացի, նաև հրեա բժիշկդասախոսները: Նրանք դաստիարակել են Օսմանյան կայսրության առողջապահական համակարգը ներկայացնողների մի քանի սերունդներ: Ավելին, Կայսերական բժշկական վարժարանը «վերաբացվել» էր 1838թ. Սուլթան Մահմուդ Բ-ի (1808-39) արքունի բժիշկ **Մանուկ Շաշյանի (1775-1858)** նախաձեռնությամբ: Վարժարանի կրթական ծրագրի հիմքում եվրոպական բժշկական հաստատությունների օրինակն էր, իսկ ուսուցչապետն էր Վիեննայի համալսարանից հրավիրված դոկտոր Բեռնարը: Մինչև 1869թ. դասավանդումն ընթացել է ֆրանսերենով: 1865թ. բացվել է կարևորությամբ երկրորդ բժշկական ուսումնական հաստատությունը՝ Քաղաքային բժշկական վարժարանը: Բժշկական այս հաստատությունների շրջանավարտ բժիշկներն ու դեղագործները ստանում էին զինվորական աստիճան, պաշտոնավարելու ուղարկվում երկրի տարբեր սահմաններում գտնվող օսմանյան բանակի զորամասեր, մասնակցում պատերազմական գործողություններին, ծառայում զինվորական հիվանդանոցներում, քաղաքային ու նահանգային առողջապահական վարչություններում: Հայազգի ավելի քան 170 բարձրաստիճան զինվորական բժիշկ սպաներ արժանացել են *փաշայի, բեյի* տիտղոս-

ների ընկերությունը մեծ հեղինակություն ուներ իր գործունեությամբ: Նրանք մասնակցում էին միջազգային գիտաժողովներին, իսկ 1921թ. Բժշկապատմաբանների փարիզյան միջազգային կոնգրեսը շնորհավորել է նրան, որպես իրեն անդամակցող կազմակերպության: Նրանց նախաձեռնությամբ հիմնադրվում են հիվանդանոցներ, ողջ Օսմանյան կայսրության տարածքով կարևորագույն բժշկական կենտրոններ, ընկերություններ, իրենց կանոնադրությամբ, ժամանակի օրգաններով, իրենց առջև դրված լրջագույն խնդիրներով հանդերձ: Հիմնական նպատակներից մեկը, որ դրված էր նրանց առջև՝ ազգի առողջության խնդիրն էր, նրան բժշկական, առողջապահական պարզագույն մշակույթին ծանոթացնելը, ժամանակի մոլություններից, ախտերից պահպանելը ու դրանց դեմ պայքարելը: Գավառական տարբեր կենտրոններում առողջապահական կառույցներում (լինի կառավարական, զինվորական, նահանգային, հայկական, միսիոներների կողմից հիմնադրված) անպայման հանդիպում ենք հայ բժիշկների, դեղագործների, հիվանդապահուհիների: Բողոքական եկեղեցու BOARD Կենտրոնական մարմնի կողմից (ի սկզբանե Անգլիայի, ապա Ամերիկյան կենտրոնի) նախ կայսրությունով մեկ սկսեցին հաստատվել կենտրոնատեղիներ, հիմնականում գավառական կենտրոններում: Այդ կենտրոնատեղիները աստիճանաբար վերաճեցին ժողովարանների, դպրոցների, որբանոցների, հրատարակչությունների, երկսեռ հիվանդանոցների[44], ուսուցիչների, հիվանդապահուհիների ու մանկաբարձուհիների ուսուցման կենտրոնների: Նրանց կողմից ոչ մի ջանք և միջոցներ չէին խնայվում Կայսրության ոչ մահմեդական ազգաբնակչությանը բողոքական, եվրոպական, ամերիկյան դարձնելու համար: Սա մշակված քաղաքականության առաջին քայլերից էր՝ Օսմանյան Կայսրությունը հետագա տարիներին իր բռի մեջ հավաքելու ուղղությամբ: Այնուամենայնիվ չպետք է զլանալ լրա անհնային գնահատելու նրանց առողջապահական, ուսումնական բարձորակ ծրագրերը, մարդասիրական կողմը, իսկ ավելի ուշ, ջարդերի, Մեծ Եղեռնի շրջանում առանձին միսիոներների անձնվեր կեցվածքը ողբերգության զոհ տարաբախտներին փրկելու, օգնելու համար: Միսիոներական, լուսավորական մշակույթի, քաղաքականության, մտածողության ապացույցներ են նաև այն բազմաթիվ առողջապահական գրքույկները, որոնք կյանքի ամենատարբեր ասիրների դեպքում պիտի օգնեին մարդկանց: Հիշենք մանուկների, երիտասարդների առողջապահության մասին հրատարակված ու անգամ դպրոցներում տարածվող մասսայական փոքրածավալ հրատարակությունները, բժշկական խորհուրդները՝ մանկական, դպրոցական, ընտանեկան հիվանդությունների, ամուսնության առթիվ[45], տարբեր հիվանդությունների մասին գիտահանրամատչելի, պարզեցված ոճով շարադրված հոդվածները, տեսրակները հայերեն և հայատառ թուրքերեն:



Բժիշկ Արգումանյան

1856թ. Արդյունքում սուլթանի հովանավորությամբ հիմնադրվում է «Կ.Պոլսի Կայսերական բժշկական միությունը»: Կես դար անց, 1906թ. Օսմանյան Կայսերական բժշկական միության հիմնադրման 50 ամյակի հանդիսության բացումը կատարում է միության նախագահ դոկ. Մարկոսյանը: Մինչ այդ ընկերության մոտ 35 հայ հանդիսացել են Կայսերական ընկերության իսկական անդամներ: Կայսերական ընկերության նախագահներ են եղել հայ անվանի բժիշկներ Սիմոնյանը, Սերվիչեն, Նորիճանը, Փեշտիմալճյանը, Խորասանճյանը (Խորասանճին)...





Բժշկական ու առողջապահական ասպարեզի ներկայացուցիչները, բացի հույժ մասնագիտական գործունեությունից համագործակցել և կապող օղակ են հանդիսացել մի շարք բարեսիրական միությունների, պետական ու հասարակական կազմակերպությունների միջև: Նաև համագործակցություն են ակնկալել աղքատախնամների, որբանոցների[46], ծերանոցների՝ պետական ու մասնավոր վերահսկման, հովանավորության աշխատանքները:

Չմոռանանք ասել, որ գիտական մի շարք կազմավորվող ընկերությունների, այդ թվում այս միության պաշտոնական լեզուն եղել է ֆրանսերենը: Ֆրանսերենով է հրատարակվել «*Gazette Medical D'Orient*»-ը: Բնականաբար հայ բազմաթիվ բժիշկներ աշխատակցել են, մաս կազմել նրա հրատարակչական գործունեությանը[47]: Այն հարուստ բովանդակային ցանկ է ունեցել: Ժամանակ առ ժամանակ կարևոր հիվանդանոցների մասին շարունակական զեկույցներ են հրատարակվել, այդ թվում Ս.Փրկիչ Հայոց Ազգային հիվանդանոցի[48]:

44 Հելեն [illegible] ամերիկյան բողոքական ներկայացուցչության շրջանակներում Մարզվանում կույր հայուհիների համար դպրոց է հիմնադրել:

45 *Բժշկական խորհուրդներ ամուսնութեան վերաբերեալ առթիւ.* Հայ բժշկական միութիւն, Կ.Պոլիս, Տպ. Մ.Սերեան, 1921. Այսպիսիք բազմաթիվ են եղել:

46 1920թ. միայն Պոլսում գործել են 23 որբանոցներ, շուրջ 4000 երեխա որբուկներով:

47 **Արսեն Յարմանի** գրքում այս պարբերականներին աշխատակցած մի շարք հայտնի հայ բժիշկների հոդվածների թեմաները սրբեն վառ ապացույց են Կայսրության առողջապահության եվրոպական տիպի վերելքին: Այդ անուններից հիշենք մի քանիսը միայն՝ բժիշկներ՝ Սիմոնյան, Սերվիչեն, Սեվյան, Փեշտիմալճը, Նորիճան, Տիգրան Անեմյան, Մատթեոսյան, Այվազյան, Ա.Չուգուրյան, Վ.Օրմանյան, Վ.Թորգոմյան, Յանկոլյան, Ս.Մեղրույան, Զարդարյան, Ա.Նաճիկյան, Խանճյան, Արգումանյան, Հակոբոֆ, Սերվիչյան, Խորասանճյան: Այս հեղինակների առատությունը, նրանց բժշկության ամենատարբեր ճյուղերի մասին ուսումնասիրությունները, թեզերը ապացույց են եվրոպական բժշկական գործելաոճի, երբ գաղափարապես զբաղվում են գիտական գործունեությամբ, միջազգային վերջին նորություններով, հայտնագործությունները մոտենում Թուրքիա: Իհարկե, բոլոր այս և մյուս անունները արտահայտվել են նաև հայերենով, հայկական ու հայատառ թուրքերեն մասնագիտական ու սովորական պարբերականներում, առանձին հրատարակություններով:

48 Կայսրության վերջին տարիների բժշկա-առողջապահական ու գիտական պատկերացում ամսագրերից է եղել Հայ բժշկական միության հայ-ֆրանսերեն պարբերական «*Դարման*»-ը Պոլսում հրատարակված Օննիկ Փափազյանի կողմից, վերջինս 1920-22թթ.:

(մարշալի) բարձր աստիճանին, եղել է ողջ օսմանյան բանակի գլխավոր ղեկավար Ֆերիդ փաշա Թերջումանյանը: Մի շարք դեղագործներ տարբեր առիթներով արժանացել են սուլթանական շնորհների, մասնագիտական մեդալների[66], անդամակցել են Օսմանյան Կայսերական բժշկական միությանը[67]: Ավելի քան 170 բարձրաստիճան հայ բժիշկներ արժանացել են *փաշայի* և *բեյի* տիտղոսների: *Փաշայի* տիտղոսի են արժանացել *մուշիրի* (մարշալին համապատասխանող) զինվորական աստիճան ունեցող սպաները: *Միրալայը* (գնդապետի համապատասխանող) ևս կարող էր ունենալ նաև *բեյի* տիտղոս: Հայ զինվորական բժիշկներն ունեցել են *բեյլերբեյի, միրլիվայի* և *միրմիրանի* զինվորական բարձր կոչումներ: Իհարկե, սա եղածի մի չնչին մասն է միայն:

Ստորև ներկայացված մի քանի բժիշկների կենսագրություններ: Նրանց գործունեության հենքի վրա, հնարավոր է պատկերացնել հայ բժշկության ավանդը Օսմանյան կայսրության առողջապահության պատմության մեջ:

Մի քանի դեղագետների ու դեղագործների մասին տեղեկությունները բերել ենք այնպես, որ նրանց կենսագրություններում ոչ միայն սովորական, այլև հետաքրքիր, նորամուծությունների, հայտնագործությունների վերաբերյալ փաստեր լինեն:

**Արքունի, կառավարական և զինվորական բժիշկներ**[68]

**Շաշյաններ:** Արքունի բժիշկների գերդաստան: Ընտանիքի նախահայրը եղել է ավագցի դեղաբույսեր վաճառող Շաշի Արթինը (1698-1784):



Պողոս Շաշյան

**Պողոս Ենովքյան Շաշյան (1744-1815).** Ծնվել է Շաշի Արթինի, որդին՝ Շաշի Այանեի Հարություն Միրասսացի Ենովքյանի: Նա վերցրել էր պապի անունը: Ուսումնառության համար մեկնել է Հռոմ, սովորել բժշկական ֆակուլտետում, շարունակելու համար հոր և պապի գործը, որոնք *ախտար* (բժիշկ) էին: 1769թ. դիպլոմ ստանալով վերադարձել է Կ.Պոլիս, դարձել բարը երևելիների ու ամիրաների բժիշկը: Ժանտախտի համաճարակի ժամանակ 34 տարեկան էր: Մեծ դեր է կատարում այդ պայքարում և Համիդ Ա (1774-1789) սուլթանի կողմից հրավիրվում է արքունիք, Կայսերական բժիշկ անվանվում: Նա առաջին արքունի հայ բժիշկն է եղել: Համիդ Ա-ի մահվանից հետո եղել է Սուլթան Սելիմ Գ-ի (1789-1807), Մուստաֆա Դ-ի (1807-1808) և Մահմուդ Բ (1808-1839) սուլթանների բժիշկը: Այսպիսով, որպես Արքունի բժիշկ 4 սուլթանների է ծառայել: Իր բարձր դիրքով շատ օգտակար է եղել Նարլը-Գափուի հայոց հիվանդանոցին:

66 1901թ. պոլսեցի դեղագործ **Պողոս Կալֆայանն** արժանացել է 4-րդ աստիճանի *Osmaniye*-ի: Նույն 1901թ. Զմյուռնիայի դեղագործ **Հակոբ** Էֆ. մի քանի այլ դեղագործների հետ միասին *Sanayi Madalyası* է ստացել:

67 1873թ. **Հայկ-Պարտնիկ Մասրկարյանը**: 1876-1877թթ., 1885-1887թթ. (3 անգամ) **Հովհան (Ժուկո) Նարինյանը**: 1877-78թթ. **Տիգրան փաշա Փեշտիմալճյանը**: 1898թ. **Միհրան Խոջասանճյանը** երկրորդ անգամ Կ.Պոլսի Բժշկական համաձայնության նախագահ և Կայսերական բժշկական միության նախագահ է ընտրվել: 1907թ. **Վահրամ Թորգոմյանը**: 1913թ. **Կարապետ Նալբանդյանը** (1909-11թթ. փոխնախագահ):

68 Ամիրայական Ենովքյանի Պոլսում ապրած տարիներին եղել է արքունի բժիշկ: Պոլսո արքունիքը Կարապետ Ա-ի հովանավորած Սամաթիայի գաղթում հայոց զինվորական-բժիշկը դասավանդել է հայերեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն լեզուներ:







Սերգոն Տիրացույան
Էմմանուել Շաշյանի դիմանկարը

**Շաշյան Մանուկ (1775-1858).** Պալատական բժիշկ Պողոս Շաշյանի ավագ որդին է ու նրա գործի ժառանգորդը: Հոր մահվանից հետո սուլթաններ Մահմուդ Բ և Աբդուլմեջիդի կողմից հրավիրվել է աշխատելու արքունիքում: Սովորել է Նեապոլի և Պադուայի բժշկական ֆակուլտետներում, դարձել հոր գործի արժանավոր շարունակողը: Հայ կաթողիկեների Բալըքլըի հիվանդանոցի գլխավոր բժիշկն է եղել: 1828թ. պատահաբար ազատվել է աքսորից, քանի որ այդ ժամանակ ոչ թե տանն էր, այլ պալատում:

1838թ. Սուլթան Մահմուդ Բ-ի օրոք, Գալաթասարայում բժշկական առաջին օգնության (վերքերի բուժման) դպրոցի վերակազմման պատճառ է հանդիսացել և Աբդուլմեջիդի ձեռքից *Iftihar Madalyası* ստացել:

Եղել է Մահմուդ Բ և Աբդուլմեջիդ Ա սուլթանների բժիշկը: Մասնակցել է 1838թ. Կ.Պոլսի առաջին բարձրագույն բժշկական դպրոցի ստեղծմանը, որտեղ կրթությունը տարվել է ֆրանսերեն լեզվով: Նախապատճառ է եղել Բալըքլըի Ս.Հակոբյան Անկելանոցի հիմնարկության հիմնադրման:



Պավլաքի Շաշյան

**Շաշյան Թովմաս (1775-).** Պալատական բժիշկ Պողոս Շաշյանի որդին է[69]: Եղել է դեղագործ:

**Շաշյան Պավլաքի (Փոլաքի, 1806-1887).** Մանուկի որդին է, Պողոսի թոռը: Բժշկական կրթությունը ստացել է Պադուայում և Փարիզում: Դիպլոմավորվելով Պադուայի համալսարանի բժշկական ֆակուլտետի կողմից, 1832թ. վերադարձել է Կ.Պոլիս, մեծ ճանաչում գտել նաև մահմեդականների շրջանում: Նրա հռչակը հասել է պալատ: *Առաջինն է Պոլսում կիրառել ախտանիշ զննությունը (աուսկուլտացիա) հիվանդագրանումը և ախտորոշումը:* Շուտով հրավիրվել է պալատ գործելու, արժանացել է *Mecidiye* պատվանշանի: Կորցրել է, 1862թ. մեկնել բուժվելու և մահացել է Նեապոլում: Նրա օսմաներենով կնիքը տես Արսեն Յարմանի գրքի սկզբում:

69 **Շաշյան Պողոս (1800-).** Թովմասի որդին է: Իրավաբան, դեղագործ: **Շաշյան Ստեփան (1846-1911).** Սերում է արքունի բժիշկների հայտնի տոհմից: Երկար տարիներ նրա վրա է եղել Փերիքյանցում մեծենայական բանկի ողջ պատասխանատվությունը:
**Շաշյան Պողոս.** Նկարիչ: Իրավաբան Շաշյան Պողոսի թոռը: Նա է նկարազարդել, ձևավորել 1873թ. Վիեննայում հրատարակված Էդհեմ Փաշայի «*Օսմանյան ճարտարապետություն*» և «*Թուրքական ժողովրդական զգեստներ*» աշխատանքը: 1891թ. Գևորգ Շաշյանը ճանապարհի վրա իր հնարած զարդանախշերով նկարների հավաքածուի ալբոմը նվիրել է Սուլթանին, ստացել *Iftihar Madalyası*.

**Սինանյան Գասպար բեյ (1814-1872).** Արքունի բժիշկ: Հայրը, Գևորգ աղան Կ.Պոլսում հայտնի արքունի դեղագործապետ է եղել: Բժիշկ չլինելով հանդերձ, մեծ համբավ է ունեցել մարդկանց բուժելով, անգամ սուլթան Մահմուդ Բ-ին է բուժել: Գասպարը 1830թ. սովորել է մահմեդական ուսանողներ ունեցող Շեհզադեբաշիի Վիրաբուժական դպրոցում: 1835թ. Սերվիչենի հետ Փարիզ է գնացել: Վերջին կուրսից գնացել են Իտալիա, սովորել Պիզայի համալսարանի բժշկական ֆակուլտետում և 1841թ. շրջանավարտի դիպլոմ ստացել: 1843թ. փայլուն ավարտել է ուսումնառության փարիզյան շրջանը: 1845թ. վերադարձել ու սկսել է ախտաբանություն և բնախոսություն դասավանդել Կ.Պոլսի Կայսերական բժշկական զինվորական վարժարանում: Սուլթան Մեջիդի կողմից *Iftihar Madalyası* է ստացել, դարձել պալատական բժիշկ: 1855թ. *միրալայի* զինվորական աստիճան է ստացել և *բեյի* տիտղոս: 1856թ. Հակոբ Դավթյանի և Սերվիչենի հետ անդամակցել է Կ.Պոլսի Կայսերական բժշկական միությանը: Որպես գանձապահ 1863թ. Գասպար Սինանյանն ընտրվել է Կայսերական բժշկական միության նախագահության անդամ, ապա՝ նախագահ: 1865թ. հնդախտի համաճարակի վերացման դեմ պայքարի ժամանակ Էդհեմ փաշայի և Սախակ Էֆենդի Ապրոյանի հետ միասին մեծ հաջողությունների են հասել: Նշանակվել է Պետական բարձրագույն խորհրդի վճռաբեկ ատյանի անդամ: Հեղինակել է գիտական ուսումնասիրություններ: Եղել է վեզիր Ալի փաշայի և Վալիդե(մայր) սուլթանի անձնական բժիշկը: Ալի փաշայի մահվանից հետո, որի բժիշկն էր, նրա ծառայությունից հրաժարվեցին: Գիտական նշանակալից աշխատանքներ է ունեցել ներքոհիշյալ բնագավառներում՝ «Ետծննդյան դիվահարությունը Պոլսում», տպագրված Կ. Պոլսում, «Պիելոնեֆրիտ» (որի զոհը դարձավ ինքը՝ բժիշկը), «Օսմանյան պատժիչ համակարգի և բանտային հիգիենայի վիճակի մասին», «Հանձնարարականներ քաղաքացիական դեղատներին», «Հրդեհների պատճառների ու դրանց կանխման հակահրդեհային սանիտարահիգիենիկ միջոցառումների մասին», «Իրավական կողմերը և առողջապահությունը», ինչպես նաև դեղագործության և առողջապահական շատ խնդիրների մասին: Հայտնի են Կ. Պոլսում միջազգային բժշկական կոնֆերանսի մասին նրա նյութերը, ինչպես նաև նրա ֆրանսերենով աշխատությունները *Gazette Medicale* պարբերականում:

Պարոնյանական ոճով գրել է «Բաբելոնի աշտարակը» կոմեդիան, ուր ծաղրում է Կ.Պոլսի բազմալեզու բժիշկներին, որոնք մեկը մյուսին չեն հասկանում:



Բժշկապետ Սերվիչեն



Սերվիչենին շնորհված Hilal-i Ahmer շքանշանը

Իրականում նա զոհ է դարձել արևմտահայ միջավայրում առաքելականների ու կաթոլիկների միջև ազգային հասունյանական շարժման խառնակչություններին:

**Սերվիչեն (Սերովբե Վիչենյան, 1815-1897).** Արքունի բժիշկ, բժշկապետ: Ֆուադ, Ալի և Ռեշիդ փաշաների անձնական բժիշկն է եղել: Մեծ վեզիր Ֆուադ փաշան նրան տված իր մի նվերի վրա մակագրել է «Իմ շատ հոգեհարազատ բարեկամիս Սեր.Վիչենին», ստորագրված՝ Ֆուադ փաշա: Դրանից հետո նրա անունը մնացել է Սերվիչեն: Անում փաշա Նաֆիլյանի հետ միասին եղել է Աբդուլ Համիդ Բ-ի անձնական բժիշկներից:

Հայրը հայտնի վաճառական է եղել, Գազազ Արթինի մերձավոր աշխատողներից: Տղային՝ Սերովբեին ուղարկել է 1834թ. Փարիզի բժշկական քոլեջում ուսանելու: 1839թ., վերջին կուրսում իր դասընկերոջ Գասպար Սինանյանի հետ միասին Իտալիա են գնում, Պիզայի բժշկական համալսարանում մեկ տարի սովորելուց հետո ավարտում, 1842թ. դիպլոմով վերադառնում Կ.Պոլիս: Փարիզյան ուսումնառության շրջանում Ֆրանսիայում Օսմանյան կայսրության գլխավոր դեսպան Ռեշիդ, Ֆուադ և Ալի փաշաները նրան ամենից շատ համարձակություն, ուժ ներշնչողներն ու հովանավոր բարեկամներն են եղել: Վերադառնալով նոր ուղղություն է տալիս բժշկության հնացած մեթոդներին, մասնավորապես՝ ախտաբանությանը: Մեծ համբավ է ունենում, նշանակվում զինվորական բժիշկ: 1846-76թթ. Կայսերական զինվորական բժշկական բարձրագույն վարժարանում նրան է հանձնվել դասական, զինվորական բժշկության ամբիոնի ղեկավարությունը: 30 տարի պատվով վարել է այդ պաշտոնը, դասավանդել բժշկական դպրոցներում, որ մեծ էր հայ բժիշկների ավանդն ու հեղինակությունը: 1848-49թթ. և 1865թ. խոլերայի համաճարակների ժամանակ նախագահել է հնդախտի դեմ պայքարող Բժշկական բարձրագույն խորհուրդը, և մեծապես նպաստել համաճարակների կանխմանը: Վարել է նաև Ռազմական նախարարության բժշկապետի պաշտոնը: Կառավարության հրամանով 1849-52թթ. առաջին անգամ ֆրանսերենով *Gazette Médicale d'Oriente* բժշկական պարբերականը հիմնադրելու, լույս ընծայելու գործը նրան է հանձնարարվել: Երկար տարիներ ղեկավարել է 1856թ. հիմնադրված Կ.Պոլսի Կայսերական բժշկական միությունը: Դրանից բացի 40 տարի վարել է Բանկալթիի Կայսերական զինվորական բժշկական բարձրագույն վարժարանի բժշկապետի պաշտոնը: 1888թ. Ֆրանսիայում Վապերոյի[71] հրատարակած աշխարհի նշանավոր մարդկանց մասին հանրագիտարանում Սերվիչեն ներկայացված է որպես խոշոր գիտնական և հասարակական գործիչ:

Երկար տարիներ ակտիվ ձայն է ունեցել Պատրիարքարանի ազգային գործերի մշակումում, եղել Ազգային Գերագույն ժողովի ուսումնական խորհրդի անդամ, անդամակցել է Երուսաղեմի Պատրիարքարանի խնդիրների կարգավորման հանձնաժողովին: Հեղինակել է բժշկագիտական աշխատանքներ, հոգեբանա-մանկավարժական: Բժշկական, սանիտարական կրթության տարածման, երեխաների առողջապահական դաստիարակության և մասնավոր զարգացման մասին գրել է երկհատորյանի «Մանկավարժություն» գործը (1844), հեղինակել «Սկզբունք բարոյականի», ֆիզիկայի, մանկավարժության, կրթության մասին գրքեր, դասագրքեր:

**Նահապետ Ռուսինյան (1819-1876).** Արևմտահայ իրականության ամենահայտնի դեմքերից է համարվում: Դասավանդել է Կ.Պոլսի բժշկական բարձրագույն դպրոցում որպես բժշկական փիլիսոփայության և բարոյագիտության պրոֆեսոր: Ժամանակի մեծագույն հարգանք վայելած մտավորականներից է եղել[72]:

**Կրճիկյան Անդրանիկ փաշա (1819-1894).** Կայսերական բժշկական համալսարանի բնագիտության դասախոս: Եղբայրն է նախասահմանադրական շրջանի ամենահայտնի դեմքե-

71 Vapereau. *Dictionnaire universel des Contemporains*, Paris, 1888, p.1661-62:
72 Ավելի քան 30 տարի բժշկական դպրոցի պրոֆեսորներից Նահապետ Ռուսինյանի Ֆրանսիայում գտնվող կինը՝ տիկ. Անժել պատասխանած իր դիմումի, Ֆրանսիայի քաղաքական ղեկավարությունից թոշակ է ստացել:



րից Հակոբ Կրճիկյանի: 1851թ. ֆիզիկայի օգնական-դասախոս է եղել Կայսերական զինվորական բժշկական վարժարանում, միաժամանակ այդեղ կրթություն ստացել: 1855-56թթ. ավարտել է Կայսերական զինվորական բժշկական վարժարանը հազարապետ-բժշկի աստիճանով, դիպլոմ ստացել և կառավարության կողմից ուղարկվել է Եվրոպա՝ բնագիտական կրթություն ստանալու և իր մասնագիտության մեջ կատարելագործվելու համար: 5 տարի մնալով Ֆրանսիայում, Իտալիայում և Անգլիայում, տիրապետել է զանազան մասնագիտությանը: Փարիզում գտնված ժամանակ թուրքական դեսպանատանը որպես զինվորական կցորդ է աշխատել: 1865թ. դասախոսել է Կայսերական բժշկանոցում և ճոխացրել նրա թանգարանն իր





Անդրանիկ փաշա Կրճիկյան

*1891 թ. Կ.Պոլսում հրատարակված բժշկագիտական գրքի համար կատարած նրա գծանկարները*





գտնված բույսերով, հասել զայմագամության (գավառապետ) աստիճանի: 1872թ. դասախոսությունների համար ֆրանսերենից թուրքերենի է թարգմանել և ֆիզիկայի դասագիրք կազմել: Հրատարակել է «Առողջապահություն, առողջ ապրելու ճանապարհ և ընդհանուր կանոններ» գիրքը: Բնագիտության երկհատոր գործը երկար տարիներ որպես դասագիրք է ծառայել կայսրության բժշկական ուսումնական հաստատություններում: Մասնակցել է Ազգային սահմանադրության մշակման աշխատանքներին: 1863թ. հետո, երբ հայկական «Ազգային Սահմանադրությունը» վավերացվում է Բարձր Դռան կողմից՝ որպես Պեշիկթաշի երեսփոխան մասնակցել է Քաղաքային Ժողովի՝ անդամի և ատենադպրի կարգավիճակով: 1865թ. այս 2 պաշտոններից էլ հրաժարվել է: 1871թ. և 1876-7թթ. ընտրվել է ազգային երեսփոխան և Քաղաքային ժողովի անդամ:

1874թ. որպես բնագիտության ուսուցիչ շարունակել է իր դասախոսությունները Քաղաքային բժշկական վարժարանում, որ 21 հայ դասախոսներ էին աշխատում: 1876թ. 3-րդ աստիճանի *Mecidiye* է ստացել, իսկ 1884թ.՝ փաշայության աստիճանով նշանակվել Բժշկական քաղաքային վարժարանի գլխավոր տնօրեն և վարել այդ պաշտոնը մինչև իր մահը[73]:

**Հովհաննես Քեաթիպյան (1821-82).** Արլիանապոլսեցի պալատական բժշկապետ: Կրթությունը ստացել է Կ.Պոլսում, ապա՝ Փարիզի բժշկական համալսարանում: 1861թ. վերադարձել է, առաջնակարգ դիրք գրավել: Մեծ համբավ է ունեցել: 1867թ. ընտրվել է Ազգային ժողովի երեսփոխան և Կայսերական բժշկական միության անդամ: Մեծ բարեգործ էր, մանավանդ աղքատներին անվճար բուժելու, նրանց ծախսերը հոգալու առումով, բարձի տակ ոսկի դնելու սովորությամբ: Հակառակ իր ցանկության, Աբդուլ Համիդ Բ սուլթանի հրամանով, մասնակցել էր սուլթանուհիներից մեկի ծննդաբերությանը և զոհ դարձել նրա հակառակորդուհիների որոգայթին: Քեաթիպյանը դավադրաբար խեղդամահ էր արվել Քրզըլ թոփրագ ապարանքում, իսկ մարմինը նետվել էր ծովեզերք[74]:

**Սանտիան փաշա Ալյանյան (1822-1902).** Փայլուն ավարտել է Գալաթասարայի զինվորական բժշկական վարժարանը: Շրջանավարտների վկայականները հանդիսավորապես հանձնվել են Սուլթան Աբդուլմեջիդի և Եգիպտոսի փոխարքա Մուհամմեդ Ալի փաշայի ներկայությամբ: Որպես լավագույն շրջանավարտ, մի քանի նորավարտ բժիշկների հետ միասին սուլթանական հրամանով ուղարկել է Վիեննա կատարելագործվելու: Ուսումն ավարտել է ակնաբուժական փայլուն թեզի պաշտպանությամբ: Վիեննայում Օսմանյան կայսրության դես-

73 Օսմանյան կայսրության տիրակալների, պալատական կարևոր դեմքերի հանդիսավոր ազատիճանավորների, բարձրաստիճան խամի, ծառայողականության շրջանում պաշտաքի տեր է խաղացել 1872 թվականից ի վեր Կ.Պոլսում հիմնված «Ֆրանսիական Մեծ Արևելք» մասոնական օթյակի «Պրոոդ» մասնաճյուղն իր բաւոն գործունեությամբ: Սալյան Մայլեն Ե-ի մասոն լինելու մասին մի հոդվածում ասված է, որ Աբդուլ Համիդ Բ-ի գահակալությանը (1876-1909) նախորդած 20 տարիների ընթացքում միայն Կ.Պոլսում 50-ից ավելի մասոնական կազմակերպություններ են հիմնվել, որոնց մի մասը բնականաբար կարճ կյանք է ունեցել, իսկ մնացածը՝ երկար տարիներ անխափան գործել են: Հոդվածագրերից մեկը Թուրքիայի երևելի մասոն անձանց պատկառելի մի ցուցակ է ներկայացնում: Թուրք տիրակալների, արքայազնների, փաշաների, փոխարքաների ու բարձրաստիճան պաշտոնյաների, փաշաների անունների կողքին գտնում ենք թուրք մտավորականների, մասնավորապես հայտնի լուսավորիչ Նամըք Քեմալի, հայտնի բանաստեղծ Մեհմեդ Էմինի, Շինասիի և ուրիշների անունները, իսկ հայերից այդ ցուցակում են արևմտահայ թատրոնի երախտավոր Հակոբ Վարդովյանի (Գյուլլի Հակոբը), և սուլթանական բժշկական հաստատության տնօրեն Անդրանիկ փաշա Կրճիկյանի անունները:

74 Աբդուլ Համիդ Բ սուլթանը հրամայել է գործը քննել, խստորեն պատժել մեղավորներին: Անարգված անբարոյականների ու պալատական բարձր բժշկապետը սպառնալից նամակ են գրում հանգուցյալի եղբորը, ստիպելով, որ հաստատի եղբոր անձնասպան լինելու փաստը, ինչը որ գրված է ժամանակի թերթերում:

պան Շերիպ էֆենդին նրան իր հետ տարել է իշխան Մետեռնիխի հյուրասիրություններին: 1848թ. վերադառնալով Կ.Պոլիս, աշխատել է Կայսերական բժշկական համալսարանի վիրահատության-վիրաբուժության բաժնում և 21 տարի ընդհանուր և արտաքին ախտաբանությամբ է դասավանդել է Կայսերական զինվորական բժշկական վարժարանում: Նշանակվել է Բեյլերբեյի զինվորական հիվանդանոցի տնօրեն: 1870թ. հազարապետի ժապավեն (աստիճան) է ստացել և *փաշայության* տիտղոս: Աշխատել է Ռազմական նախարարությունում և անդամակցել Զինվորական Կենտրոնական Մեծ ժողովի Առողջապահական բաժնին: Ստացել է **Sağ Kol Ağası** պատվո ժապավեն, ստացել տարբեր աստիճանների **Mecidiye** և **Osmaniye** շքանշաններ, արժանացել օտար տերությունների մի շարք պատվանշանների: Որպես արքունի բժիշկ-բիկնապահ, ընկերակցել է մեծ եպարքոսին: 1882թ. ռուսական ցարից ստացել է 2-րդ աստիճանի **St. Svyatoslav** շքանշան: Պոլսո պատրիարք Ներսես Վարժապետյանի և Մերլիչենի խնդրանքով աշխատել է ռուսական տերության ուշադրությունը հրավիրել հայ ազգի վրա, ջանացել Սան-Ստեֆանոյի պայմանագրում ներառել 16-րդ հոդվածը, համաձայն որի Օսմանյան կայսրության հայկական գավառների բարեկարգության խնդիրը դրվում էր Ռուսաստանի վրա: Ընտրվել է Ազգային երեսփոխան, Ազգային ընդհանուր և Քաղաքական Ժողովների ատենապետ: Մինչև 1891թ. անդամակցել է այդ ժողովներին: Նա թուրքերի կողմից ամբաստանվել է իբրև օսմանյան գահի դավաճան և շնորհազրկել է արվել: Եվ միայն 1897թ. վերագտել է նախկին շնորհները: Հրաժարվելով զինվորական ասպարեզից, կամովին աքսորվել է Եգիպտոս, եղել խտիվի ընտանեկան բժիշկը: Այստ գնացել է Ֆրանսիա և միայն Հարություն փաշա Տատյանի միջնորդությամբ է վերադարձել Կ.Պոլիս[75]:

**Սևյան Գաբրիել փաշա (1822-1900).** Օսմանյան ռազմա-ծովային նավատորմի առաջին հայ զինվորական բժիշկն է եղել: Արքունիքի սուլթանի արքունի բժիշկն է եղել: 1849թ. փայլուն կերպով ավարտել է Կայսերական զինվորական բժշկական վարժարանը: 1847թ. նշանակվել է Օրթաքեոյ թաղի բժիշկ: Դասավանդել է Կ.Պոլսի Մալթեփե զինվորական պետական բժշկական դպրոցում: Մեկ տարի անց նվիրվել է ծովային բժշկության ասպարեզին և 1850թ. չնայած հայ լինելուն, նշանակվել է «Շահաբը Բահրի», «Սարիքի Շատի» ռազմանավերի բժիշկ, մասնակցել ռազմական գործողություններին: 1852-56թթ. Սիրիա ուղարկված նավատորմի առաջին գլխավոր բժիշկն է եղել: Որպես բժշկապետ տարբեր ճակատամարտերում մասնակցել է ռազմական գործողությունների: Տույն նավարկությունից հետո ուղարկվել է Սարըզ կղզի: Մուստաֆա փաշայի կողմից նշանակվել է ցամաքային ու ծովային հիվանդանոցների բժշկապետ: 1857թ. «Ֆերիկյե» ռազմանավով Անգլիա կատարած նավարկությունից հետո ստացել է փոխգնդապետի աստիճան: Երբ այդ ռազմանավը փոթորկի ենթարկվելով ստիպված կանգ է առել խաղաղական ափին, Սևյանը գեղեցիկ ոճով խնդրագիր է ուղղել Իսպանիայի թագուհի Իզաբել Բ-ին, որը 30 կորած նավաստիներին գտնելու համար անհրաժեշտ հրամաններ է արձակել: Տաս օր չանցած գտնվել են կորած նավաբեկյալները և վերադարձել նավ: Գաբրիել փաշան այս առթիվ օսմանյան պետական բարձրագույն շահերը պաշտպանելու անվիճելի ապացույցներ է ներկայացրել իսպանական արքունիքին: Իսպանիայի թագուհի Իզաբել Բ-ի կողմից նախահանգստի վարչության

75 Հայտնի է նաև խարբերդցի ռմն պրոֆ. Սոփիան Ալպան, որը Պադուայի համալսարանում հայացի մասին իր գրառով, իտալական բժշկական համաժողովի կողմից փառաբանվել է, իսկ իտալացի ժողովրդի կողմից իր վիրաբուժական հմտության համար անվանվել է «Սան Անտոնիո»:





ղեկավարը Գաբրիել փաշային մեծապես գնահատող մի նամակ է հանձնել: 1860թ. Հայրենիքին փաշայի հետ Թունիս, ապա Ֆուադ փաշայի հետ Սիրիա է մեկնել: Վերադարձին մի շարք ռազմանավերի գլխավոր բժիշկ նշանակվելուց հետո Բժշկական կայսերական միության անդամ է ընտրվել: 1865թ. հնդախտի մեծ համաճարակի վերացմանն ուղղված իր գործունեության համար արժանացել է 4-րդ աստիճանի **Mecidiye** և **Osmaniye** շքանշանների: Պալատի հրամանով Ծովային բժշկական խորհրդի անդամ լինելով 1871թ. *Բեյի* ժապավեն ու *գնդապետի* աստիճան է ստացել: Իր ծառայությունների համար բարձրացել է մինչև *միրլիվայի* զինվորական աստիճանի և արժանացել *փաշայության* տիտղոսի: Հաջորդ տարի դարձել է Ծովային բժշկական խորհրդի տեղակալ: Գաբրիել փաշա Սևյանը 1879թ. նշանակվել է «Իզզեթին» կայսերական շոգենավի գլխավոր բժիշկ: Անդամակցել է Առողջապահական կայսերական միությանը, Կայսերական բժշկական ընկերության, Ռազմածովային նավատորմի բժշկական և Առողջապահական կայսերական խորհուրդներին, եղել Օսմանյան կայսրության «Կարմիր Մահիկ» կազմակերպության հիմնադիրներից: 1893թ. ստացել է 2-րդ աստիճանի **Osmaniye**: Հեղինակել է գիտական աշխատություններ, գրականբարգմանական, հասարակական գործունեություն ունեցել: 50 տարի Օսմանյան կայսրությանը ծառայելուց հետո 1897թ. հանգստի է կոչվել: Գաբրիել փաշա Սևյանը բնտանյոք հրաժարվում է կարոլիկ եկեղեցուց և վերադառնում առաքելական եկեղեցու գիրկը:

**Փաշայան Մկրտիչ բեյ (Փըրլանըյան, 1823-1873).** Պոլսեցի զինվորական բժիշկ: 1849թ. գերազանց ավարտել է Գալաթասարայի Կայսերական զինվորական բժշկական վարժարանը: Ծառայել է տարբեր վայրերի զինվորական հիվանդանոցներում որպես զինվորական ավա-բժիշկ: 1864թ. եղել է Բաղդադի զորաբանակի հրամանատարի տեղակալ, զինվորական հիվանդանոցի բժշկապետ: Ստացել է *գայմագամության* (փոխգնդապետին համազոր, գավառապետի աստիճան) աստիճան, 10 տարի այնտեղ ծառայելուց հետո հիվանդացել է, մահացել հայրենիքից հեռու:


Մկրտիչ Փաշայան

**Քրքիլյան Բարունակ բեյ (Ֆերուհխան, 1824-1869).** Պոլսեցի բժիշկ և գրող: 1841թ. սուլթանի հրամանով (բանզի միայն մահմեդականների համար էր) Գալաթասարայի զինվորական բժշկական դպրոցի առաջին հայ ուսանողներից է եղել: 1847թ. գերազանց ավարտել է այն և որպես բժիշկ ուղեկցել է սուլթանի համհարզ Ռագըփ բեյին՝ Բաղդադի կուսակալին ուղղված սուլթանական հրովարտակի հանձնակատարության ժամանակ[76]: 1853թ. գնդապետ է դարձել և որպես զինվորական գլխավոր բժիշկ ծառայել է Հայդարփաշայի և Մանաստրի, ապա Շումնայի զինվորական հիվանդանոցներում: 1860թ. Իզմիրում 2000 կյանք խլած անհայտ հիվանդության պատճառները գտնելու համար ուղարկվել է այնտեղ և պատվով կատարել իր առաքելությունը: Հնդախտի դեմ պայքարում իր ծառայությունների համար ստացել է 3-րդ աստիճանի **Mecidiye.** Անդամակցել է Կայսերական բժշկական ընկերությանը: Մասնակցել

76 *Բարունակ պէյ Ֆէրուհխանի ճանապարհորդութիւն ի Բաղդատ ընդ Հալապայ.* 1876թ. Արմաշի ս.Աստվածածնի վանքի տպարան:

է 1860թ. Հայ Ազգային Սահմանադրության կազմելու աշխատանքներին: Անդամակցել է Պատրիարքարանի Խորհրդի և տարբեր հանձնաժողովների աշխատանքներին:

**Հովհաննիսյան Հակոբ բեյ (1825-1859).** 1849թ. ավարտել է Գալաթասարայի Կայսերական զինվորական բժշկական վարժարանը: Կայսերական բժշկական համալսարանում 2 տարի դասախոսել է բժշկական նկարչություն, անդամազննական քսանկարչություն: Ս.Փրկիչ հիվանդանոցի առաջին գլխավոր բժշկապետն է եղել: Բարձրացել է մինչև *բեյի* աստիճանի: Ունեցել է հազարապետի աստիճան: 1848-51թթ. աքսորվել է: 1851թ. Շումնի օսմանյան բանակի բժշկապետ է նշանակվել, սակայն հիվանդացել ու 34 տարեկանում մահացել է:



Յովսէփ Բէյրան

**Բեյրան Հովսեփ Աղբաննաղյանցի (1825-66).** Սեղանավոր Մերոն Բեյրանի որդին է: 1844-50թթ. բարձրագույն բժշկական կրթություն է ստացել Փարիզում: 1850թ. վերադարձել է և զինվորական ծովային հիվանդանոցի բժիշկ նշանակվել: 1853թ. կրկին վերադարձել է Փարիզ, որ ուսումնասիրություններ է կատարել, 1854թ. Փարիզի Բժշկական Ակադեմիային կարևոր զեկույցներ ներկայացրել: *Հեղինակ է միզապարկության (գոնորեայա) բուժման մեթոդի, այդ հիվանդությունը բուժող դեղի: Հորինել է* ***«ուրետրոսկոպ»*** *բժշկական գործիքը:* 1854թ. ընտրվել է Ֆրանսիական բժշկական ակադեմիայի անդամ: 1855թ. եղել է Փարիզում թուրքական դեսպանատան բժիշկը: 1858թ. արժանացել է ***Chevalier de Légion d'Honneur*** -ի: Միաժամանակ ընտրվել է Կ.Պոլսի Կայսերական բժշկական ընկերության անդամ: 1858թ. նրա գրքերից մեկը Փարիզում Օսմանյան կայսրության դեսպան Մեհմեդ Ջեմիլ բեյը թարգմանել է թուրքերենի[77]: 1862թ. Փարիզի «Վիրաբույժների ընկերակցության» անդամ է ընտրվել: 1864թ. Փարիզի համալսարանի Բժշկական ֆակուլտետում ազատ պրոֆեսոր է դարձել: Այնքան մեծ համարում է ունեցել, որ Նապոլեոն Գ-ի հիվանդությունների ժամանակ որպես խորհրդատու է հրավիրվել և բուժել Նապոլեոն Գ-ին: Թողել է կարևոր նշանակության բժշկագիտական ուսումնասիրություններ, որ հրատարակվել են Փարիզում (1863թ.): Վիրաբուժային հիվանդությունների, միկրոբիոլոգիայի մասին երկերի հեղինակ է: Շնորհիվ նրա անձնական միջնորդության, 1858թ. Սուլթանը համաձայնել է 40 հայ երիտասարդների հովանավորել՝ ընդունվելու համար արտասահմանյան համալսարաններ: Նրանք բոլորն էլ հետագայում մեծ ծառայություն են մատուցել երկրին: Իր անունը կրող դեղախյուսեր կան՝ *opiat, elektuaire.*



Յովսէփ Նուրիճան

**Հովսեփ(Ժոզեֆ) Նուրիճան (1827-1898)** 13 տարեկանից 10 տարի սովորել է Վիեննայի Մխիթարյանների մոտ: Գնացել է Փարիզ, հետևել բժշկության: Ծախսերը հոգալու համար Փարիզում ֆրանսերենից հայերեն է թարգմանել պատմական երկեր, վեպեր: 1863թ. գիտական թեզ է պաշտպանել «Մանկա-

77 *Բազմավեպ*, Վենետիկ, ս.Ղազար, 1858, 293 էջ: Տես՝ *Հանդէս Ամսօրեայ*, Վիեննա, 1895, 88 էջ:





կան մահացությունը» թեմայով: 1864թ. վերադարձել է Կ.Պոլիս, աշխատել հայկական Ս.Փրկիչ, Ս.Հակոբ և ֆրանսիական հիվանդանոցներում: Դասախոսել է Բժշկական վարժարանում: 1876թ. Հովսեփ Նուրիճանը ընտրվել է Կայսերական բժշկական միության նախագահ: 1885թ. բժշկապետ Հովսեփ Նուրիճանը ընտրվել է Կայսերական բժշկական միության տարեկան համաժողովի նախագահ և երկրորդ անգամ՝ միության նախագահ: Հովսեփ Նուրիճանը երրորդ անգամ Կ.Պոլսի Կայսերական բժշկական միության նախագահ է ընտրվել 1887թ.: Մասնակցել է թուրքական «Կարմիր մահիկի»-ի հիմնադրման աշխատանքներին:

**Մուլյան Գրիգոր** (1830-1882). Նյարդաբույժ: Սովորել է Փարիզում, Գևորգ Եղյամյանի խնամակալությամբ: Mal de Bright–ի (Bright-ի հիվանդություն) մասին նրա ավարտական թեզը հրատարակվել է Փարիզի բժշկական հանդեսում, որպես արժեքավոր ուսումնասիրություն: Հիվանդություն, որից և ինքը մահացել է: Մինչ այդ, 1854թ. վերադարձել է Կ.Պոլիս: Հայտնի ախտաճանաչ է եղել, համարվել ժամանակի ականավոր բժիշկներից: Եղել է սուլթանական ընտանիքի բժիշկը: Հայտնի է եղել աղքատ հիվանդներին անվճար բուժելու իր բարեսրտությամբ:

**Հովհաննես Շիմշիրյան (1830-1895).** Արքունի բժշկապետ: 1861թ. ավարտել է Զինվորական բժշկական վարժարանը: Հայտնի զինվորական բժիշկ է եղել: Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ծառայել է Էրնեում, Չաթալճայում:

**Նաֆիլյան Անտոն Փաշա (1831-1912).** Արքունի բժիշկ, միզասեռ ուղիների հիվանդության մասնագետ (ուրոլոգ): Եղել է Աբդուլ Համիդ Բ-ի անձնական բժիշկը: 1854թ. հարյուրապետի աստիճանով ավարտել է Կ.Պոլսի Կայսերական զինվորական բժշկական վարժարանը: Ղրիմի պատերազմի ժամանակ ծառայել է օսմանյան բանակում, նաև՝ Կրետեյում: 1856թ. Կրետեյում տեղի ունեցած կործանիչ երկրաշարժի զոհերին իր օգնությունն է ցուցաբերել: 1858թ. կատարելագործվել է Փարիզի Բժշկական համալսարանում: 1863թ. վերադարձել ու նշանակվել է սուլթանի թիկնապահ զնդի բժիշկ: 1869թ. բժշկապետ է նշանակվել Հայդարփաշայի զինվորական հիվանդանոցում: Դասախոսել է Գյուլհանեյում: 1877թ. մեկնել է ռուս-թուրքական ռազմաճակատ: 1878թ. Արևելյան



Անտոն փաշա Նաֆիլյան

պատերազմի ժամանակ մի կողմից Հայդարփաշայի հիվանդանոցի անհամար վիրավորներին էր օգնում, իսկ մյուս կողմից՝ գեներալ Սկոբելևի դիմաց դուրս գալով փորձում էր հիվանդանոցը փրկել հարձակումներից և հնարավոր փորձանքներից: Երկար տարիներ Հայդարփաշայի, Գյումուշսույուի և Թոփհանեի հիվանդանոցների բժշկապետն ու գլխավոր բժիշկն է եղել: 1887թ. սուլթանական հրամանով Փարիզ է ուղեկցել Կայսերական զինվորական բժշկական վարժարանի թուրք ուսանողների մի մեծ խմբի՝ որ մեկնում էին Ֆրանսիա, տարբեր ճյուղերում կատարելագործվելու նպատակով: 1891թ. վերադարձել և կրկին ծառայել է Հայդարփաշայի զինվորական հիվանդանոցում, որպես բժշկապետ: Գործնական վիրաբուժություն և ուրոլոգիա (եղել է առաջին նման մասնագետը) է դասախոսել հիվանդանոց պրակտիկայի եկած ուսանողներին: Երկու անգամ ընտրվել է Կայսերական բժշկական միության անդամ:

Միաժամանակ պալատական առաջին բժիշկն է եղել և արել այն, ինչ մյուսներին չէր հաջողվում: Փրկել է Սուլթան Համիդի որդուն ծանր հիվանդությունից: Նրա միջնորդությամբ բժշկական կրթություն ստանալու համար մի խումբ երիտասարդներ են ուղարկվել Փարիզ:

1887թ. ստացել է *միրալայ, միրլիվա, ֆերիքի (1900թ. համազոր էր զինվորական լեյտենանտի աստիճանի)* աստիճաններ ու արժանացել *փաշայի* տիտղոսի: Սուլթանական հրամանագրով արժանացել է 2-րդ աստիճանի ***Mecidiye, Osmaniye*** պատվանշանների, ապա՝ առաջին աստիճանի ***Mecidiye, Osmaniye*** ստացել: Ֆրանսիական ***Chevalier de Légion d'Honneur*** էր: 1902թ. նրան շնորհվել է ***Hicaz Demiryolu Madalyası:*** 1856-1906թթ. նրա դասախոսությունները գրի է առել բժիշկ Կարապետ Յակոբյանը (1865-1936):

**Հակոբ Խանդանյան (1834-1899).** 1860թ. ավարտելով Կայսերական զինվորական բժշկական վարժարանը, պաշտոնավարել է երկրի տարբեր վայրերի զինվորական հիվանդանոցներում: Կայսերական և քաղաքային բժշկական վարժարաններում դասավանդել է դատական բժշկություն: Ֆրանսերենի փոխարեն դասախոսել է թուրքերեն լեզվով, որը մանավորապես թուրք ուսանողների համար մեծագույն աջակցություն էր: Հեղինակել է դատական բժշկության դասագրքեր՝ թուրքերեն լեզվով: Եղել է Առողջապահության բարձրագույն խորհրդի ընդհանուր քարտուղար:

1876թ. 3-րդ աստիճանի ***Mecidiye*** է ստացել, իսկ 1884թ.՝ 3-րդ աստիճանի ***Osmaniye***: 1885թ. Սերվիչենի և Գաբրիել Նորատունկյանի հետ միասին ընտրվել է նոր հիմնադրված Առողջապահության հանձնաժողովի անդամ: 1893թ. ստացել է *միրալայի* (հայրապետի) զինվորական աստիճան և *բեյի* տիտղոս: Ստացել է ***Iftihar Madalyası***: Թողել է դատական բժշկության և կիրառական քիմիայի մասին արժեքավոր աշխատություններ:



Միքայել Խորասանճյան

**Միքայել Խորասանճյան (1835-1903).** Արքունի բժիշկ: Սեղանավոր Պետրոս Խորասանճը ամիրայի որդին է, մոր կողմից՝ բժիշկ Սերվիչենի քրոջ: Սովորել է Փարիզում և փայլուն ավարտել 1859թ.: Տիրապետել է ֆրանսերեն ու հունարեն լեզուներին: Վիրաբուժական գործիքների հավաքածու է ունեցել, որը նորություն էր Կ.Պոլսի համար: 1860թ. «Թայիրի Բահրի» ռազմանավի բժիշկ է նշանակվել հազարապետի աստիճանով: 1866թ. ընտրվել է Կայսերական Բժշկական միության անդամ, իսկ 1898թ.՝ նախագահ: 1870թ. Լուսավորության և գիտության վարչության անդամ է ընտրվել: 1873-1902թթ. դասավանդել է Բժշկական ֆակուլտետում որպես ներքին հիվանդությունների դասախոս: Նա հայտնի է եղել որպես իր ժամանակի ամենահմուտ ախտորոշողը: 1894թ. Տիգրան Փեշտիմալճյանի խորհրդավոր մահվանից հետո, Աբդուլ Համիդ Բ-ն նրան է ընտրել որպես անձնական բժիշկ: Որպես արքունի բժիշկ, ուղեկցել է սուլթանին իր ուղևորությունների ժամանակ: Նա հրաժարվել է իրեն առաջարկված զինվորական կոչումներից: Աշխատել է Քաղաքապետարանի Առողջապահական վարչության Հիգիենայի հանձնաժողովի անդամ,





նաև՝ Համիդիյեի մանկական և Էյուպի զինվորական հիվանդանոցներում: 1866թ. ***Ulûy-ı Evvel*** բարձրագույն աստիճան է ստացել: 1876թ. Բժշկական միության անդամ դոկ.Միքայել Խորասանճյանը՝ 3-րդ, մի քանի տարի անց 2-րդ աստիճանի ***Mecidiye*** է ստացել: 1870թ. Գիտական ընդհանուր միության խորհրդի անդամ է դարձել: 30 տարի պրոֆեսոր է եղել Բժշկական համալսարանում, միևնույն ժամանակ աշխատել տարբեր կլինիկաներում: 1894թ. առաջին աստիճանի ***Mecidiye***, 2-րդ աստիճանի ***Osmaniye*** է ստացել: 1899թ. ստացել է ոսկե ***Liyakat Madalyası***: 1865-66թթ. Ս.Փրկիչ հիվանդանոցի բժշկապետն է եղել, սեփական միջոցներով հիմնել դեղատունը: 1903թ. Մ.Խորասանճյանի կնոջը շնորհվում է 2-րդ աստիճանի ***Şefakat:***

**Կարապետ փաշա Խրեճեդերյան (1835-1910).** Ավարտել է Կայսերական զինվորական բժշկական վարժարանը հազարապետի աստիճանով: Դասավանդել է նույն վարժարանում: Եղել է Սելանիկում տեղակայված օսմանյան բանակի բժշկապետը: Այստեղ նրա նախաձեռնությամբ ստեղծվել է բժշկական ընկերություն: Իր ծառայությունների համար բարձրացել է մինչև *միրլիվայի* զինվորական աստիճանի և արժանացել *փաշայության* տիտղոսի, ստացել 4-րդ աստիճանի ***Mecidiye*** պատվանշան:

**Հայկ-Պարոնիկ Մատթեոսյան (1836-1926).** Սովորել է Թոքատի Ամերիկյան քոլեջում: Այնից եկել է Կ.Պոլիս, սովորել ամերիկյան Ռոբերտ քոլեջում: 1863թ. ավարտել է Ամերիկայում Կոլումբիայի համալսարանը: Աշխատել է «Նյու Յորք մեդիքալ» և «Կոլումբիա մեդիքալ» քոլեջներում, ստացել է բժշկության և վիրաբուժության դոկտորի աստիճան, 1865թ. վերադարձել Կ.Պոլիս: Կանանց հիվանդությունների մասնագետ է եղել և վիրաբույժ մանկաբարձ: Նա համոզված էր, որ եվրոպացին, ամերիկացին գերմարդկային էակներ չեն, ինչպես թվում է: Տարբերությունը միայն զարգացման ու դաստիարակության է: Կրթելու պատեհությունն ունեցած հայը հավասարվել է նրանց, երբեմն էլ՝ գերազանցել: 1866-67թթ. և 1868-73թթ՝ եղել է Ս.Փրկիչ հիվանդանոցի բժշկապետ: Որպես բողոք հիվանդանոցի շենքի հակաառողջապահական վիճակի ու բուժումների՝ 6 ամսով հրաժարվել է պաշտոնից, ապա ընդունել դոկտ.Սերվիչենի կողմից կազմված հոգաբարձուների խնդրանքը, վերադարձել է և 5 տարի ևս պաշտոնավարել: *Առաջինն է Թուրքիայում կիրառել վիրաբուժության մեջ նոր մեթոդը՝ 19-րդ դարի մեծագույն գյուտը, որ կատարել էր Լիստերը*: 1873թ. ընտրվել է Կայսերական Բժշկական ընկերության անդամ, ապա՝ ընտրվել պատվո անդամ ու նախագահ: 1912թ. Պոլսում հիմնել է *«Հայ բժշկական միությունը»*, որպես աջակից ունենալով դոկտ. Գրիգոր Դավթյանին (1866-922): Աշխատակցել է ամերիկյան բժշկագիտական մամուլին: Միջազգային Առողջապահական բարձրագույն ժողովում ամերիկյան կառավարության կողմից պատվիրակ է նշանակվել և 12 տարի վարել այդ պաշտոնը: Եղել է Սուլթանի բժիշկ-խորհրդականը: 20 տարի որպես բժիշկ աշխատել է Ռոբերտ քոլեջում, ամերիկյան դեսպանատանն ու հյուպատոսարանում: Բաբը Ալիի դեպքերից հետո այս հայի մասին սուլթանական պալատ ևս արգելվել է, ի մեծ ցավ զահաժառանգի և հարեմի:

**Անտուան Հովնանյան (1836-1908)**, Պոլսեցի, կրթվել է Վենետիկի Մխիթարյան միաբանության վարժարանում: 1859թ. ավարտել է Կ.Պոլսի զինվորական բժշկական վարժարանը: Զբաղվել է վիրաբուժությամբ: 1864-68թթ. ապրել է Ամերիկայում, վերադարձել և 1872թ. հազարապետ-վիրաբույժի աստիճանով ծառայել Բոսնիայի թուրքական զորաբանակում, և այլուր: Նրա ժառանգներից Արբին Հովնանյանի մոտ է գտնվելիս եղել մի բժշկարանի ձեռագիր, գրված 1870թ. հայատառ թուրքերեն, բաղկացած 381 էջից:

Ռոժեն, Գոսլենը, Բոբենը, որոնք իրենց ստորագրակով սանի մասին ամենագովասանքի հանձնարարականներն են տվել: 1875թ. ստացել է Փարիզի համալսարանի բժշկագիտության պսակավորի (դոկտորի) վկայականը և ավարտաճառ գրել սրտի հիվանդությունների մասին: Վերադառնալով Կ.Պոլիս, կարճ ժամանակում քաղաքում ու գավառներում մեծ համբավ է շահել թե՛ որպես ճարտար բժիշկ, թե՛ որպես փիլիսոփա: Մինչև մահ եղել է Ազգային երեսփոխան: 39 տարեկանում մահանում է կույր աղիքի անհաջող վիրահատությունից: Թողել է գրական ու գիտական արժեքավոր ժառանգություն: Նրա պատկերազարդ բերականն ունեցել է 10-ից ավելի տպագրություններ: Նրա երկերից հայտնի են՝ *Սահմանադրություն և առաջին Պատրիարք Սահմանադրական, Պատկ գրքույց*, *Արաքսիա* (բանաստեղծություններ), *Չորս Օրիորդ* (չափածո թատերգություն), *Կարմիր Վարդան Հայոց* 5 արարից երգախառն ողբերգությունը: Աշխատակցել է «Մանզումէի էֆքեար», «Փունջ», «Մասիս», «Ժամանակ», «Կիլիկիա», «Ծիածան» հայերեն ու հայատառ թուրքերեն թերթերին: Հեղինակել է հայրենասիրական սրանչելի բանաստեղծություններ (Ով մեծասքանչ դու լեզու, Երգ միութեան և այլն):



Վիչեն Օրմանյան

**Օրմանյան Վիչեն (1844-1889).** Մաղաքիա Օրմանյան պատրիարքի եղբայրը: Ավարտել էր Հռոմի բժշկական «Sabenzza» համալսարանը, 1872թ. վկայվել որպես բժշկության և վիրաբուժության դոկտոր: Կատարելագործվել է Փարիզի, Լոնդոնի բժշկական կենտրոններում: Անդամակցել է Օսմանյան բժշկական միությանը, աշխատել զինվորական հիվանդանոցներում, Ս.Փրկիչ ու Ս.Հակոբ հիվանդանոցներում որպես բժշկապետ: Մեծ հռչակ է ունեցել որպես մասնագետ: Քաղաքապետարանի Առողջապահության խորհրդի անդամ Օրմանյանին շնորհվել է առաջին աստիճանի *Mecidiye*:

**Այվազյան Նշան (1844-1907).** Պոլսահայ հանրահայտ բժիշկներից է եղել: 1870թ. հաջողությամբ ավարտել է Պադուայի բժշկական համալսարանը: Պոլսում երկար տարիներ աշխատել է Պարսկաստանի դեսպանատանը, միաժամանակ Ս.Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձուներից է եղել: 1901թ. ընտրվել է Քաղաքապետարանի Առողջապահական խորհրդի անդամ, արժանացել 3-րդ աստիճանի ***Mecidiye*** և ***Osmaniye*** շքանշանների (1900թ.), 1901թ. ստացել ***Rütbe i Sâlise***:

**Թիրաքյան Հարություն խան** (1845-1919). Կեսարացի: Ավարտել է Կ.Պոլսի «Ֆրերների» ֆրանսիական վարժարանը: Սովորել է Փարիզում: Նրա գիտական փայլուն թեզն արժանացել է ֆրանսիական Ակադեմիայի մասնավոր մեդալին:

1878թ. թեզը պաշտպանելուց և դրա համար հատուկ մեդալ ստանալուց հետո վերադարձել է Կ.Պոլիս, եղել Ազգային Ժողովի երեսփոխան, Պատրիարքարանի Ուսումնական խորհրդի ատենապետ, վարել է Ս.Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձությունը: 1890թ. Գումգափուի հեղափոխական առաջին ցույցերին մասնակցելու համար բանտարկվել է Տատյանների, Արփիարի, Հակոբ Շավարշի և այլոց հետ միասին: 1899թ. համալսարանական չքավոր ուսանողներին օգնելու համար միություն է կազմել, որը հետագայում շարունակել է երկար գործել: 1897թ. անցել է Պարսկաստան և եղել Մուզաֆֆերեդդին շահի անձնական բժիշկը, նրա կանանցի բժիշկը և ի վարձատրություն 10 ամյա ծառայության, ստացել է *խանի* տիտղոս, որը ժառան-





գաբար անցնելու էր իր սերունդներին: Պարսկաստանից հետո անցել է Շվեյցարիա՝ Բազել, Փարիզ, ապա Նյու-Յորք: Հրաշալի թարգմանիչ է եղել, հմուտ եղել ոսկեդարյան գրաբարին:

Նա գրաբարի է թարգմանել Ֆենելոնի «Տելեմաք»-ը՝ մրցելով հայր Արսեն Բագրատունու թարգմանության հետ: Հրատարակել է բազմաթիվ լեզվաբանական, բանասիրական ու գիտական հոդվածներ, հին ու նոր պարսկերեն գործեր:

**Ղուկասյան Նշան (1846-1918).** Պոլսեցի քիմիկոս, դեղագործ և դասախոս: 1878թ. ավարտել է Դեղագործական վարժարանը: 1870թ. սկսած ավելի քան 40 տարի պաշտոնավարել է Կայսերական զինվորական բժշկական վարժարանում և Դեղագործական վարժարանում՝ ունենալով 20 հազար ուսանողներ, որոնցից շատերը հետագայում մեծ պաշտոններ են վարել, նշանակալի ծառայություններ մատուցելով կայսրությանը: Օսմանյան կայսրությունում քիմիայի գիտական առաջին տարածողներից է եղել ու այդ բնագավառում հեղինակել գիտական ուսումնասիրություններ, գրքեր: «Քիմիա» վերնագրով թուրքերենի է թարգմանել է ու տպագրել Ե.Լանբերտի ու Ժ.Ժոզեֆի հայտնի գրքերը: Այն որպես դասագիրք է ծառայել ուսումնական տարբեր հաստատությունների համար և մի քանի տպագրություններ ունեցել: Ազգային Ս.Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձուներից է եղել: Հեղինակ է քիմիայի մասին մի շարք կարևոր ուսումնասիրությունների: Կազմել է մի շարք դասագրքեր:

**Վահան Ղազարյան (1848-).** Կ.Պոլսի զինվորական բժշկական դպրոցի դեղագործական բաժինն է ավարտել: 37 տարի աշխատել է առողջապահական ու պետական բժշկական հաստատություններում, դասավանդել հազարավոր ուսանողների: 1914թ. հրատարակել է արժեքավոր «Տարեցոյց բժշկական եւ առողջապահական»-ի Ա տարին:

**Վահան փաշա Մանուկյան (1847-1902).** Արքունի բժիշկ: Պոլսահայ գիտնական, ճեմարանի առաջին տնօրեն Հակոբիկ Մանուկյանի (1802-1870) որդին է: 1872թ. ավարտել է Կ.Պոլսի Կայսերական զինվորական բժշկական բարձրագույն վարժարանը: Կառավարության կողմից ուղարկվել է Փարիզ՝ կատարելագործվելու համար: 1880թ. նշանակվում է Կ.Պոլսի Ախտաբանական բուժարանի ուսուցչապետ Միքայել Խորասանճյանի օգնական: Երկար տարիներ եղել է Կ.Պոլսի Կայսերական զինվորական բժշկական բարձրագույն վարժարանի առաջնակարգ պրոֆեսորներից և բարձր հասարակությունում մեծ հռչակ է վայելել: 1900թ. հասել է *միրլիվայի* աստիճանի և ստացել է *փաշայի* տիտղոս:



Ջիվան Ենանյան

**Ջիվանի Ենանյան (1848-1922).** Փարիզում կատարելագործվել է որպես քիթ, կոկորդ, ականջի բժիշկ: 35 տարի հարյուրապետի աստիճանով դասախոսել է Զինվորական բժշկական վարժարանում: Գյումուշսույի զինվորական հիվանդանոցում քիթ-կոկորդի բժիշկ է աշխատել, 1899թ. Արծաթե ***Imtiyaz*** և *Միրալայի* զինվորական աստիճան ստացել: Աշխատել է զինվորական ու այլ հիվանդանոցներում, 3-րդ, իսկ 1901թ.՝ 2-րդ աստիճանի ***Mecidiye*** ստացել:

**Ս. Հակոբյան (1851-).** Պոլսեցի նշանավոր զինվորական բժիշկ: 1874թ. ավարտելով Կայսերական բժշկական վարժարանի ֆրանսիական բաժինը և նշանակում ստանալով Դանուբյան նահանգներում, սերբական պատե-

րազմի ժամանակ 3 տարի ծառայել է որպես զինվորական բժիշկ: 36 տարի անընդմեջ գործել է Քաղըգյուղում, մեծագույն հարգանք վայելելով տարբեր ազգերի կողմից: Այս ընթացքում կատարելագործվել է Փարիզում, Վիեննայում: Գիտական բազմաթիվ հոդվածներով աշխատակցել է տարբեր պարբերականների: Հեղինակել է «Առողջապահական Գիտելիք», «Հիվանդին բարեկամ» սովար հատորները (1884):



Տիգրան Աճեմյան

**Աճեմյան Տիգրան բեյ** (1852-1913). Նշանավոր ակնաբույժ: 1873թ. ավարտել է Կ.Պոլսի զինվորական բժշկական վարժարանը հայրապետի ատիճանով: Պետական ծախսով Վիեննայում մասնագիտական կրթություն է ստացել և կատարելագործվել: 24 տարեկանում ավարտելով ուսումնառությունը, վերադարձել է Կ.Պոլիս: Վերադարձին 3 տարի աշխատել է Սելանիկի հիվանդանոցներում: Միաժամանակ ակնաբուժություն է դասավանդել Կայսերական բժշկական վարժարանում: Նրան 1899թ. շնորհվել են 3-րդ աստիճանի *Mecidiye* և *Osmaniye* շքանշանները, իսկ 1900թ.՝ *Imtiyaz* մեդալով է պարգևատրվել: Կառավարության կողմից աշխատանքի է նշանակվել Հայդարփաշայի հիվանդանոցում, 35 տարի մնացել այնտեղ: 25 տարուց ավել պաշտոնավարել է նաև Խասքեոյի կանանց հիվանդանոցում: Անցրել է մեծ թվով ուսանողներ, որոնք հիմնականում գավառներում են պաշտոնավարել: Սահմանադրության հռչակումից հետո կրկին շրջել է եվրոպական առողջապահական կենտրոններով, մասնավորապես Փարիզ, Վիեննա՝ իր գծով վերջին նորություններին հաստ լինելու համար: 1893թ. Կանացի հիվանդանոցում (Հասեքի նիսա) աշխատելիս ստանում է *միրալայի* աստիճան և *գայմագամ* (գավառապետ): 1897թ. Փարիզի «Արշիվ դը Օֆթալմոլոժի» մասնագիտական հանդեսում հրատարակել է մինչ այդ անհայտ համարված աչքի վիրահատության իր նոր մեթոդի մասին շահեկան մի ուսումնասիրություն: 1900թ. ստացել է ոսկե *Imtiyaz*: 1909թ. ընտրվել է Կայսերական բժշկական միության անդամ, ապա՝ փոխնախագահ: Թողել է ակնաբուժության մասին հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն արժեքավոր ուսումնասիրություններ: 1911թ. հանգստի է կոչվել: Անդամակցել, ապա՝ նախագահել է Հայ ազգային ժողովը:

**Տառոյան Հակոբ (Միրալայ Հակոբ բեյ, 1852-1936).** Կեսարացի զինվորական բժիշկ, քիթ-կոկորդի հիվանդությունների մասնագետ: 1880թ. ավարտել է Կ.Պոլսի Կայսերական զինվորական բժշկական վարժարանը: 10 տարի որպես բժշկապետ է ծառայել Բաղդադի, Մոսուլի, Բասրայի, Չորլուի, Թրակիայում՝ Քըրքլարէլիի զինվորական հիվանդանոցներում, ստացել *հազարապետի* կոչում: 1894թ. *Rütbe i Sâlise* է ստացել: Բալկանյան պատերազմում եղել է Ռոմելիի, Էրեգլիի, Յանյայի և Սելիմիյեի զինվորական հիվանդանոցների բժշկապետ, գերի է ընկել ու վիրավորվել Յանինայում: Կատարել է փոքր վիրահատություններ, եղել մանկաբարձ-վիրաբույժ, ներքին հիվանդությունների մասնագետ: 1911թ. ստացել է *միրալայի* (գնդապետի) կո-





չում, ապա՝ *գայմագամի* (գավառապետի) աստիճան: Նրան բազմաթիվ շքանշաններ են շնորհվել արքունիքից և բանակի ընդհանուր սպայակույտից: Առաջին համաշխարհայինին թոշակի է ուղարկվել: Տառոյանի հողարկավորությունը կատարվել է զինվորական պատիվներով:

**Մազլում Նարկիլեճյան (1853-).** Պոլսեցի դեղագործների ընտանիքի ներկայացուցիչ: 1865թ. իբրև աշակերտ մտել է Կարապետ Շաքարյանի դեղարանը: Մինչև 1875թ. աշխատել է Կոսկայում գտնվող Գ.Դերձակյանի դեղարանում, որից հետո եղել է քաղաքային բժիշկ: Հետևել է Համալսարանի դեղագործության ճյուղին: 1877թ. սուլթան Մուրադի օրոք իր մի ուսումնասիրության համար ստացել Ա կարգի մրցանակ: Հաստատվել է Լանկա, ուր 1878թ. հիմնել է սեփական դեղարան: 1909թ. այն փոխանցել իր Հակոբ որդուն, որը ևս դեղագործ էր: Մազլում Նարկիլեճյանը հաստատվել է Պոլսում: Բանկալթիի իր դեղարանով նա դառնում է մեծ եպարքոսի (վեզիր) ու նախարարների դեղագործը և ի վարձատրություն, ստանում 4-րդ աստիճանի *Mecidiye* պատվանշան: Նա իր գործընկերների կողմից ընտրվել է *Արհեստապետ* և Բժշկական միության ժողովում պաշտպանել դեղագործների շահերը: Գում-Գափու և Բերա թաղերում բացված Աղքատախնամների հիմնադիրներից է, դրանց խորհրդի անդամ, անօրեն: Դասախոսել է հիվանդապահուհիների համար նախատեսված դասընթացներին, ազգային մեծ գործունեություն է ունեցել, եղել հայկական վարժարանների, եկեղեցիների հոգաբարձու:

**Խնկիր Խնկիրյան (1853-1932).** Խնկիր ամիրա Փափազյանի (-1864) թոռն է, 1884թ. ավարտել է Փարիզի բժշկական համալսարանը: Միջազգային համբավ է ունեցել որպես ներքին հիվանդությունների մասնագետ: Ինչպես շատ բժիշկներ, զբաղվել է մասնավոր գործունեությամբ, իր սեփական դարմանատունն ունեցել Բեյօղլիում: Ախտաճանաչման մեծ վարպետ է եղել: Նրան է պատկանել Մարմարա ծովում Բուրգազ կղզու մոտի գրավ հիշեցնող փոքրիկ կղզյակը, որն իր անունով է կոչվել:

**Արթին բեյ Տևլեթյան (1857-1937).** Թոքատցի: 1881թ. ավարտել է Կ.Պոլսի Կայսերական զինվորական բժշկական վարժարանը: Եղել է վիրաբուժապետ Էդիրնեի, Մուշի, Հայդարփաշայի զինվորական հիվանդանոցներում: 53 տարի զբաղվել է բժշկությամբ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ եղել է Բ զորաբանակի վիրաբույժ-բժշկապետը: 1914 թվականից որպես բժշկապետ աշխատել է Քաղըգյուղի 1200 մահճակալ ունեցող «Նումունե-տիպար» հիվանդանոցում: Գնդապետի աստիճան է ունեցել: Նրան առաջարկվել էր Էդիրնեի նահանգի *վալի-ի* պաշտոնը, որ սակայն բերմամբ մերժել է:

**Թորգոմյան[82] Վահրամ փաշա** (1858-1942). Հանրահայտ գյուղատնտես, շերամաբուծության մեծ նախատավոր Գևորգ Թորգոմյանի ավագ եղբայրն է: Սովորել է Կայսերական բժշկական վարժարանում, հաճախել Գալաթասարայի լիցեյը: Հայտնի է, որ նա դիմել էր Կ.Պոլսի ֆրանսիական դեսպանին՝ Փարիզում բժշկական կրթություն ստանալու համար: Դեսպանի պահանջած միջնորդագիրը Պատրիարքը մերժել էր տալ, խորհուրդ տալով, որ Պոլսում շարունակի իր ուսումը, քանի որ Փարիզում նյութապես շատ կխեղճանա: Վ.Թորգոմյանի բարեկամներից՝ բելգիական հյուպատոսարանի քարտուղար Մանուկ Չիլինգիրյանի միջնորդությամբ նա փայլուն միջնորդագիր-վկայագիր է ստանում: Այն վավերացված, ստորագրված էր Պոլսում Բելգիայի հյուպատոս, իշխան Էմմանուել Վեոքամեռի և Մ.Չիլինգիրյանի կողմից: Շնորհիվ այս միջնորդագրի ֆրանսիական դեսպանն անհրաժեշտ կարգադրու-

82 Նրա մասին տես հուշերի ֆրանսերեն թարգմանությունը՝ Vahram Torkomian, *Mémoires d'un médecin stambouliote 1860-1890*, Paris, 2007.



Ներամապահության երախտավոր Գևորգ Թորգոմյանը եղբոր՝ բժիշկ, պատմաբան Վահրամ Թորգոմյանի հետ



Վահրամ Թորգոմյանը հոր, եղբոր և զավակների հետ

յուններ է կատարել և ֆրանսիական կառավարությունը Վ.Թորգոմյանին առանց առուրքերի արձանագրել է Փարիզի Բժշկական համալսարանում: 1879թ. մեկնել է Ֆրանսիա և 1884թ. ավարտել Բժշկական համալսարանը: Նրա ավարտական թեզը նվիրված է եղել հայ հին բժշկության պատմությանը: Վերադարձել է Կ.Պոլիս, աշխատել: 1889թ. ընտրվել է Բժշկական կայսերական միության փոխնախագահ: 1901թ. Կայսերական բժշկական վարժարանի ներքին հիվանդությունների դասախոս ու պալատական բժիշկ Վ.Թորգոմյանը ստանում է *փաշայի* տիտղոս: 1907թ. Կայսերական բժշկական միության ժողովում որպես նախագահի տեղակալ ընտրվում է Վահրամ Թորգոմյանը և որպես առաջին քարտուղար՝ դոկ. Խանջյանը: 1907թ. Վահրամ Թորգոմյանը խրախուսվում է ստանում կրելու իր ստացած Ֆրանսիական ակադեմիայի սպայի՝ ***Chevalier de l'Academie*** պատվանշանը: 1895թ. Վահրամ Թորգոմյանին 4-րդ աստիճանի ***Mecidiye*** է շնորհվում: Շքանշաններ է ստացել նաև ռումինական Պատմա-բժշկական համաժողովի կողմից:

Մասնակցել է բժշկական միջազգային գիտաժողովների, մասնավորապես նվիրված տուբերկուլյոզի ուսումնասիրություններին, հայկական ու օտար շրջանակներում կարդացել է անհամար զեկուցումներ, հաճախակի ելույթներ ունեցել Կ.Պոլսի բժշկական ակումբում, մասնակցել Կայսերական բժշկական միության միջոցառումներին: Կարևորագույն ուսումնասիրություններ է կատարել միջնադարյան հայ բժշկության ու բժիշկների մասին, հոդվածներ հրատարակել հիմնականում ֆրանսերենով՝ Կ.Պոլսի և Փարիզի բժշկագիտական պարբերականներում (*Revue médico-pharmaceutique, Gazette Médecal d'Orient*, փարիզյան *Bulletin de la société française d'histoire de la Médecine, Bulletin de l'Académie de Médecine de Paris, Revue des Etudes Arméniennes*, «Ֆրանսահայ տարեգիրք», Կ.Պոլսի «Հայ բուժակ», «Ամէնուն Տարեցոյցը», Վենետիկի «Բազմավեպ», Բոստոնի «Հայրենիք», և այլն ):

Հայ բժշկության պատմության մասին շուրջ 100 հոդվածներ ունի, հրատարակված Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ»-ում: Գրել է դպրոցականների առողջապահության մասին և ընդհանուր առողջապահական մի քանի գրքույկներ, կենսագրական հոդվածներ է գրել իր ժա-





մանակակից բժշկության հայ երախտավորների մասին (Սերվիչեն, Սարգիս Թաղևոսյան, Սարգիս Միքայելյան, Գիրքորյանց, Ստեփանոս Մանուկյանց, Գաբրիել փաշա ԵՒայան, Հակոբ Դավթյան, Միքայել Ռեստեն և ուրիշներ): Նա ուսումնասիրել ու կորստից փրկել է Եղիա Քյոմուրճյան Չելեպիի ձեռագրերը, 3 ընդարձակ հատորներով 1909-1932թթ. «Հանդէս Ամսօրեայ»-ում լույս ընծայել նրա «Ստամպօլոյ պատմութիւնը»՝ արժեքավոր ծանոթագրություններով հանդերձ (Վիեննա, 1913, 1932, 1938):

1923թ. գնացել է Փարիզ: Զբաղվել է հայագիտությամբ: Ունեցել է գրական ու գիտական, ազգային մեծ գործունեություն, մասնավորապես հայ գաղթական տարագրյալների, որբերի, ինչպես նաև հայկական պատվիրակությունների շրջանակներում: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը չափազանց ընդարձակ է եղել, հայկական գերեզմանատների (նաև Բուլղարիայի) դամբարանաքարերի արձանագրություններից մինչև Կ.Պոլսի պատրիարքների պատմությունը, հայ իշխանուհի Զենոբիեից մինչև Մխիթարյան միաբանության ու նրա հայրերի գործունեությունը, Բայրոն և այլն: Մեծ մասնակցություն է ունեցել 1913թ. Պոլսում հայ գրերի 1500 ամյակի և հայկական տպագրության 400 ամյակին նվիրված տոնակատարությունների նախաձեռնող հանձնախմբի աշխատանքներում: 1914թ. դեկտեմբերին Հայ բժիշկների միության կողմից Պատրիարքի նախագահությամբ Գում-Գափուում, Բերայի Արդյունաբերական դպրոցում, Էսայան դպրոցի ծառայողական բաժնում Վահրամ Թորգոմյանի, Նազարեթ Տաղավարյանի, Ռուբեն Չիլինկիրյանի (Սևակ) նախաձեռնությամբ բացվում են հիվանդապահուհիների պատրաստման դասընթացներ: Նա ղեկավարել է նաև Հայ բժիշկների միությունը: 1919թ. հունվարյան նիստին Վ.Թորգոմյանն է ներկայացրել 1914-15թթ. տարիների եռամյա զեկույց-հաշվետվությունը, որը տպագրվել է Ս.Օհանյան տպարանում հայերեն[83] լեզվով:

Առինի պատերազմում զոհված և Շիշլիի գերեզմանատանը թաղված ֆրանսիացի զինվորների մասին իր ուսումնասիրության համար արժանացել է Ֆրանսիական Ակադեմիայի ***Palme Academique*** պաշտվանշանին: Եղել է Մաղաքիա Օրմանյան պատրիարքի, Խրիմյան Հայրիկի, Զավեն պատրիարքի անձնական բժիշկը:

1929թ. Անտոն Ազնավուրյանի հետ միասին անդամակցել է Ներքին գործերի նախարարության Քաղաքապետական խորհրդին:



Տիրան փաշա Փափազյան

**Փափազյան Տիրան Փաշա (1858-1916)**. Պոլսեցի ակնաբույժ: 1882թ. ավարտել է Կայսերական զինվորական բժշկական վարժարանը: Առաջնանարար բարձրացել է զինվորական բժշկական սանդղքով, ստացել *փաշայության* աստիճան: Եղել է Հերեկեի մանածագործարանի բժիշկը: Նրա մոտ է

83 Հայ բժիշկների միությունը զբաղվել է նաև դասախոսական գործունեությամբ: Տարբեր բաժաններում հարգանքի տուրք որպես ներկայացվել են հայ բժշկության երախտավորների պատմությունը, նշվել է նրանց հոբելյանական տարեդարձերը: Այսպես օրինակ, Վահրամ Թորգոմյանը 11.12.1921 Հայ բժիշկների միության հավաքին ճառախոսել է Ամիրդովլաթ Ամասիացու մահվան 425 ամյակի առթիվ, որը տպագրվել է Զարդյան տպարանում:




Տիրան փաշա Փափազյանի դիպլոմը (1882)

աշխատել Թեվֆիկ Սալըմ փաշան: 1896թ. արժանացել է *Chevalier de Légion d'Honneur* շքանշանի: 1912թ. Բալկանյան պատերազմում ծառայել է Ռոդոստո, Քըրքլարելի քաղաքների զինվորական հիվանդանոցներում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին որպես օսմանյան 3-րդ զորաբանակի բժշկապետ ծառայել է Բաղդադի և Դամասկոսի շրջակայքի հիվանդանոցներում:[84]

**Դեվլեթյան Արթին բեյ (1858-1937).** Հարությունի տանիծանով 1884թ. ավարտել է Կայսերական Զինվորական բժշկական վարժարանը: Վիրաբուժական և գործնական գիտելիքները կատարելագործել է Ցյուրիխի, Վիեննայի, Փարիզի հիվանդանոցներում: 23 տարի վարել է Էդիրնեի զինվորական հիվանդանոցի բժշկապետի պաշտոնը: 1910թ. դարձել Հայդարփաշայի զինվորական հիվանդանոցի գլխա-

84 Պոլսահայ ակնաբուժությունը բավականին փայլուն անուններ է տվել: Այդ երախտավորների մի մասն իր նաչողություններով պարտական է եվրոպական բժշկական կենտրոններում ստացած կրթությանը: Նրանք Կ.Պոլիս վերադառնալուց հետո էլ չեն կտրել իրենց կապերն այդ հաստատությունների հետ, իսկ գիտական իրենց ուսումնասիրությունների մեծ մասը բողել են հենց իրենց բարձրագույն կրթությունն ստացած լեզուներով: Այսպես օրինակ, Պարիսի Թագավորական բժշկական համալսարանում ուսանած աչքի, քիթ-կոկորդի, ականջի հիվանդությունների հայտնի մասնագետ **Աճեան Միքիթայանն** (1881-) իր գիտական ժառանգությունը թողել է հիմնականում խաչերեն, ֆրանսերեն լեզուներով, մինչ դրանք եղել ե Պարիսի, Տոկիոյի բժշկական խորհրդաժողովներին: Նրա կարևոր ուսումնասիրություններից մեկը վերաբերում է *արհեստական աչքի կանգառման վերանորոգությանը*, աչքի սարքեր հիվանդությունների վիրաբուժական հնարավորություններին, աչքի հիվանդությունների առնչություններին քթի և հարակից խոռոչների հիվանդությունների հետ և այլն: Մյուս անուններից է մարաշցի **Սամսոն Ժամկոչյանը** (1874-): Սովորել է Բեյրութի Ամերիկյան բժշկական վարժարանում, ապա 3 տարի կատարելագործվել է Մյունխենի համալսարանում: Վիրաբուժության ու ակնաբուժության մասնագիտությունը կատարելագործել է Լոնդոնի Արքայական ակնաբուժական հաստատությունում, որ և գիտական ուսումնասիրությունները է կատարել: 1919թ. **Ավետիս Նազարյան ու Յինդ Հովհաննյան** ակնաբույժների կողմից Հալեպում բացվել է ակնաբուժական հիվանդանոց:





վոր վիրաբույժը: Բալկանյան պատերազմի ժամանակ ծառայել է 2-րդ զորաբանակում որպես բժշկապետ, իսկ Առաջին համաշխարհայինի ժամանակ եղել է Քաղքյուղի 1200 մահճակալանոց հիվանդանոցի բժշկապետը: Ունեցել է *հազարապետի* աստիճան: Սիրժել է ընդունել Էդիրնեի նահանգի *լիվայի փաշայություն* (գեներալ նահանգապետի պաշտոնը): 53 տարի զինվորական ծառայության մեջ է գտնվել: Նրա հուշարկավորությունը կատարվել է զինվորական պատիվներով:

**Ասլանյան Գրիգոր բեյ (1859-1934).** Ասլանյան տոհմը հայտնի է իր 17 երևելի բժիշկներով: Հարյուրապետի աստիճանով ավարտել է Կայսերական Զինվորական բարձրագույն բժշկական վարժարանը: 23 տարի եղել է Էդիրնեի զինվորական հիվանդանոցի բժիշկներից: 10 տարի ծառայել է Կ.Պոլսի Մալթեփեի զինվորական հիվանդանոցում, ապա՝ Եմենում: 1908թ. Սահմանադրության հռչակումից հետո հասել է *հազարապետի* աստիճանի և նշանակվել Եղրքի Նշանճի փաշաի բժիշկ: Ծառայությունը շարունակել է Ալբանիայում: Փոխգնդապետի աստիճանով բժշկապետ է եղել Բաղդադի զինվորական հիվանդանոցում: 30 տարվա զինվորական ծառայությունից հետո անցել է Բասրա և աշխատել որպես քաղաքապետարանի բժիշկ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եղել է այդ քաղաքի զինվորական հիվանդանոցի բժշկապետը: Արժանացել է 4-րդ աստիճանի ***Osmaniye*** և ***Mecidiye*** և այլ շքանշանների:

**Բաբայան Տիգրան փաշա (1859-1934).** Արքունի մանկաբարձ բժշկապետ, գինեկոլոգ, վիրաբույժ: Ծնվել է Եգիպտոսում: 1882թ. ավարտել է Կայսերական Զինվորական բժշկական վարժարանի մանկաբարձության բաժինը: Կատարելագործվել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետում և գիտական թեզ պաշտպանել: 1900թ. վերադարձել ու հրավիրվել է պալատ ծառայելու, որպես արքունի մանկաբարձ-բժշկապետ: 1904 թվականից դասախոսել է Կայսերական Զինվորական բժշկական վարժարանում: Բազմիցս գնացել է Փարիզ և Բեռլին, բժշկական աշխարհում նորագույն առաջընթացներին ու ներքիններին միշտ տեղյակ լինելու համար: 1893թ. անդամակցել է Բեռլին ծնված կառավարական պատվիրակությանը: 1899թ. նրան շնորհվել է 3-րդ աստիճանի ***Osmaniye***, 1902թ. ստացել է *միրմիրանի* աստիճան և *փաշայի* տիտղոս: 1902թ. ստացել է ***Rütbe i Sâniye***: 1903թ. Տիգրան փաշա Բաբայանի կնոջը 2-րդ աստիճանի ***Şefakat*** է շնորհվել: 1895թ. անդամակցել է Ս.Փրկիչ Ազգային Հիվանդանոցի հոգաբարձությանը: 1908թ. հիվանդության պատճառով հանգստի է կոչվել: Աղքատասեր ու բարեգործ է եղել:



Տիգրան փաշա Բաբայան

**Այլահվերդի Տիգրան (1860-1930).** Օսմանյան առողջապահության մեծ ծառայություններ մատուցած մասնագետ է եղել: Պարտիզակում զբաղվել է դեղագործությամբ: 1895թ. ավարտել է Քաղաքային ու Կայսերական զինվորական բժշկական վարժարանը: Ուշադ-

թություն է գրավել տիֆի հիվանդության մասին իր ուսումնասիրություն-թեզով: Կատարելագործվել է Բեռլինում, Վիեննայում: Անդամակցել է Արքունի բժշկական միությանը: Բանդրմայում և Էղինջիկի շրջաններում մասնակցել է խոլերայի համաճարակի դեմ պայքարին: Իր մեթոդները հաջողություն են ունեցել և պարգևատրվել է *Ulâ*-ի աստիճանով: Արժանացել է 4-րդ աստիճանի ***Mecidiye*** և ***Osmaniye*** (1902թ.), ***Liyakat Madalyası*** սուլթանական պատվանշանների: Հունական և Սերբական կառավարությունների կողմից պարգևատրվել է ***St. George* և *Sava*** շքանշաններով: Որպես ներքին հիվանդությունների մասնագետ, զինվորական ու քաղաքացիական բժշկի կարգավիճակով պաշտոնավարել է Անատոլիայի զանազան քաղաքներում, եղել Դատաստանական խորհրդի անդամ:

**Հյունքյարբեկյան Խաչիկ Լևոն** (1860-1923). Պոլսահայ նշանավոր դեղագործ, 1886թ. ավարտել է ուսումնառությունը Փարիզում: ***Santale*** ու ***Kinoforme*** դեղերի գյուտարարն է:

**Հյունքյարբեկյան Վահանը** ծառայել է Էրզրումի 2-րդ բանակի Կենտրոնական հիվանդանոցում, ունեցել է *հազարապետի* աստիճան, արժանացել ***Sol Kol Ağasi*** շքանշանի (1899):

**Լապճինյան Սամուել Խան.** 1882թ. ավարտել է Կայսերական Բժշկական վարժարանը: Աշխատել է որպես բժիշկ՝ Պարսկաստանի դեսպանատանը և 1899թ. շահի կողմից Նոյյան բայրամի առթիվ ստացել է ***Sir-u Hursid*** բարձրագույն շքանշան:



Նիկողոս Էմիրյան

**Էմիրյան Նիկողոս (1860-1910).** Ակնաբույժ, Կայսերական պալատի ակնաբույժ: Կ.Պոլսի Կայսերական Բժշկանոցից հետո սովորել է Փարիզում, աշակերտել մեծանուն ակնաբույժ Բեքքերին (Bekker) և նրա հետ աշխատել 8 տարի: Կ.Պոլիս վերադարձին կլինիկա է հիմնել, վայելել է միջազգային համբավ, կոչվել «Կույրերի Մեսիա»-ն, կատարել է աչքի առաջին յուրջ վիրահատությունները: Շիլ, կույր, hավկոր, կատարակտով աչքերը hրաշքով լավացրել է: Տաղանդավոր աղքատասեր է եղել: Անձն անոտ Փարիզ է ձևլնել, փոխարինելու արձակորդի գնացած իր hռչակավոր ուսուցչին, վարելու նրա կլինիկան, քանի որ Բեքքերը միայն նրան էր վստահում իր բոլոր hիվանդներին: Հաճախ hրավիրվում էր Եգիպտոս՝ բարձրաստիճան hիվանդներին բուժելու համար: Չքավորներին օգնողի ու պաշտպանողի համբավ է ունեցել: 1900թ. ակնաբույժը 3-րդ աստիճանի ***Osmaniye***, 1901թ.՝ ***Rütbe-i Sâlise*** է ստացել:

**Մուրադյան Նշան բեյ (1860-).** Որպես զինվորական բժիշկ, hարյուրապետի աստիճանով 25 տարի պաշտոնավարել է աֆրիկյան Տրիպոլի և Բենգազի անապատային վայրերում[85], արևադարձային ծանր կլիմայական շրջաններում՝ աշխատել ջերմախտով ու վարակիչ այլ hիվանդություններով տառապողների զինվորական hիվանդանոցներում: Միայն 1908թ. վերադարձել

85 Նույն ժամանակաշրջանում այս վայրերում շատ hայ զինվորական բժիշկներ են ծառայել: Դրանցից է եղել **Մարտին բեյ Ալթունյանը** (1862-1947): Բասրայում և Բաղդադում, Մոսուլում և Դիարբեքիրում 33 տարի անընդմեջ ծառայել են **Արտոյան Երվանդ** բեյը (1847-1934) և էլի շատ ուրիշներ:





է Կ.Պոլիս, իսկ Բալկանյան պատերազմի շրջանում ծառայել է Հալեպում, Էրզրում, Չերքեզ և այլ վայրերի զինվորական hիվանդանոցներում, ստանալով *փոխգնդապետի* աստիճան:

**Կարապետ Փաշայան (1860-ական թթ.-1915).** Երկու անգամ Աբդուլհամիդ Բ-ի շրջանում հեղափոխական գործունեության համար (1895) բանտարկվել է և երկու անգամ էլ մահվան է դատապարտվել ու 4 տարի անցկացրել զնդաններում: Ազատվել է շնորհիվ անգլիական դեսպանատան, Տիրան Քելեկյանի ու այլոց միջամտությունների: 1888թ. ավարտելով Կ.Պոլսի բժշկական վարժարանը, եղել է մի քանի շրջանների քաղաքապետական բժիշկը, ապա Շարին Գարահիսարին մոտ Լիջեսի արծաթահանքի անգլիական ընկերության բժիշկը, Պարսկաստանում՝ թագաժառանգի (գահազուրկ Մեհմեդ Ալի Շահի) խորհրդական բժիշկը, Բենտեր-Գեզ քաղաքում՝ մաքսատան, «Ռուսիա» ապահովագրական և «Կավկազ ի Մերկուր» ռուսական ընկերությունների բժիշկը: Եղել է Արտագործնախարարության բժիշկը: Բացի hայերեն աշխատություններից, hամագործակցել է ֆրանսիական ու գերմանական բժշկական ամսագրերի, hանրագիտարանային ուսումնասիրությունների հրատարակություններին: Օսմանյան խորհրդարանում եղել է Սեբաստիայի կողմից պատգամավոր (մեբուս): Աշխատել է Պարսկաստանի hակաժանտախտային ու դպրոցական առողջապահության բնագավառում, եղել միջազգային բժշկական ու առողջապահական ընկերությունների անդամ, մասնակցել բազմաթիվ գիտաժողովների: Շատ է ճանփորդել՝ ավելի քան 20 անգամ կտրելով Սև, Միջերկրական և Կասպից ծովերը, hասել է մինչև Նիժնի Նովգորոդ, շրջել ողջ Թուրքիան, Պարսկաստանը, Եգիպտոսը: Եգիպտոսում ընկերների հետ hիմնել է «Հոբիզոն» շաբաթաթերթը: Ավելի քան 16 մեծ ու միջին ծավալի տպագրված գործեր է թողել, որ Ալեքսանդրիայում իր hիմնած *Կանաչէրքու* տպարանում են հրատարակել: Պարսկական կառավարության կողմից պարգևատրվել է *խանի* տիտղոսով, ***Şir-ü Hurşid*** պատվանշանի 4-րդ և ապա՝ 2-րդ աստիճաններով, Հասարակաց կրթության առաջին կարգի ոսկե մեդալ է շնորհվել նրան: Չափազանց արժեքավոր է նրա 16 մասերից բաղկացած «Դպրոցական առողջապահությունը» գործը:

**Եղիազար Մասիս (1862-).** *Մասիս* լրագրի արտոնատեր, դատական բժիշկ: Ազգային Սահմանադրության hիմնադիրներից Կարապետ Ութիճյանի ավագ որդին է: 1882թ. ավարտել է Կայսերական բժշկական վարժարանը: Աշխատանքի է նշանակվել Էրզրումի կենտրոնական բանտում, եղել է Առողջապահական ժողովի անդամ: Կատարելագործվելու համար մեկնել է Վիեննայում, Փարիզում և 1886թ. վերադառնալով Կ.Պոլիս, աշխատել է Կեդրոնական վարժարանում որպես առողջապահության ուսուցիչ, եղել Ս.Փրկիչ hիվանդանոցի hոգաբարձության անդամ: Մեկնել է Կահիրե, սակայն hոր ծերության պատճառով կրկին վերադարձել է Կ.Պոլիս: *Արևելք*-ի խմբագրումից hետո լծվել է *Մասիսը* մեծ օրաթերթի վերածելու գործին: 1890թ. գնացել է Բեռլին՝ բժիշկ Կոխի մեթոդն ուսումնասիրելու համար և 1911թ. Փարիզում ուսումնասիրել ֆրանսիական hանրային ցերը և այդ մասին գրել *Մասիս* hայաթերթում:

**Տաղավարյան Նազարեթ (1862-1915)** Սովորել է Ֆրանսիայի երկրագործական վարժարաններում, ապա՝ Փարիզում, Սորբոնի hամալսարանի բնագիտության և բժշկական ֆակուլտետներում, ստացել բժշկագիտության դոկտորի աստիճան: Վերադառնալով Կ.Պոլիս, աշխատել է որպես Ս.Փրկիչ hիվանդանոցի տնօրեն, 1885-7թթ. հրատարակել առաջին բնա-

գիտական «*Գիտական Շարժում*», ապա նաև «*Երկրագունդ*» հանդեսները: 1905թ. աշխատել է Եգիպտոսում, իսկ 1908թ. Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո վերադարձել, Սեբաստիայի կողմից ընտրվել 1908թ. Օսմանյան Խորհրդարանի երեսփոխան, զբաղվել հողային հարցի նախագծի մշակմամբ, աշխատել Կ.Պոլսի քաղաքապետարանում: Նա իր առաջին աշխատությունը, որը բժշկության դասագիրք է ծառայել, նվիրել է իր ուսուցչին՝ Պոլ Ռենյարին: Այն պարունակում է 600 հայ-ֆրանսերեն բժշկագիտական տերմինների բառարան: Գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնցից մի քանիսը հրատարակվել են նաև հայատառ թուրքերենով[86] և որպես դասագիրք ծառայել բժշկական վարժարաններում: Նա հայտնի բնագետ է եղել, մասնակցել է միջազգային գիտաժողովների, պաշտպանելով տիեզերքի մասին գիտամատերիալիստական իր ըմբռնումները: 1899թ. Կայսերական զորամասին պատկանող 54-րդ զինվորական վաշտի բժիշկ է աշխատել և ստացել ***Iftihar Madalyası***: 1903թ. Բեյօղլուի ֆրանսիական հիվանդանոցի բժիշկ Նազարեթ Տաղավարյանին ֆրանսիական կառավարության Ժողովրդական կրթության նախարարության կողմից ***Officier des Palmes Academiques*** շքանշան է շնորհվել: 1904թ. ընտրվել է Ֆրանսիական աստղագիտական ընկերության պատվավոր անդամ:

Բացի բժշկական, բնագիտական, մանրէաբանության նվիրված, հողագործական աշխատություններից թողել է նաև արժեքավոր գործեր հայ ժողովրդի պատմության, կրոնի մասին: Տաղավարը, բազմակողմանի զարգացած այս պայծառ մտավորականը Մեծ եղեռնի նահատակներից է եղել:



Կարապետ Յակուբյան
(գործ՝ Դավ. Ֆրենքճյանի)

**Կարապետ Յակուբյան (1865-1936).** Արփանասարյանցի վիրաբույժ: 1884-1889թթ. փայլուն ավարտել է Փարիզի բժշկական համալսարանը: Հաղթելով 400 ուսանողների մրցույթում, իրավունք է ստացել աշխատելու իր սիրած պրոֆեսորի հիվանդանոցում: Հաստատվել է Պոլսում, նշանակվել Ազգային Հիվանդանոցում վիրաբուժական բաժնի պետ, ապա բժշկապետ: 1894թ. տեղափոխվել է ֆրանսիական հիվանդանոց, աշխատել 7 տարի և ֆրանսիական կառավարությունից ստացել ֆրանսիական Ակադեմիայի սպայի՝ ***Officier des Palmes Academiques*** շքանշան: 1904թ. Կ.Պոլսի բուլղարական դեսպանի կողմից հրավիրվել է և 10 տարի աշխատել բուլղարական հիվանդանոցում: 1906թ. Բուլղարիայի թագավոր Ֆերդինանդը Կ.Պոլիս այցելության ժամանակ 4-րդ աստիճանի ***Alexander*** շքանշան է շնորհում վիրաբույժ Կարապետ Յակուբյանին: Հաջորդ տարի նա ստանում է միայն բացառիկ դեպքերում տրվող բուլղարական 4-րդ աստիճանի *Merite Civile* շքանշանը:

1907թ. Սուլթան Համիդ Բ-ն տեղեկանալով, որ նա առաջինը լինելով արդեն 44 հաջող վի-

86 Արևմտահայ գիտական գրականության մեջ 19-րդ դարում առաջին անգամ ամբողջական գործ է հրատարակվել մանրէաբանության մասին: Հայերեն ու հայատառ թուրքերեն պատկերազարդ (Միքրոբիոլոժի, 1898) այս աշխատությունը կարծում ենք գրվել է Լուսավորության նախարարության պատվերով և որպես դասագիրք է ծառայել բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում:





րահատություն է կատարել *մեջքի կեսից ներքև բժշկելու նոր մեթոդով*՝ Կարապետ Յակուբյանին շնորհել է 2-րդ աստիճանի ***Mecidiye*** պատվանշան, որը հայազգի հպատակների համար այդ շրջանում հազվագյուտ երևույթ էր: Նույն տարի Կ.Պոլիս այցելած բուլղարական Ֆերդինանդ թագավորի կողմից ստանում 3-րդ աստիճանի ***Alexander*** պատվանշան, իսկ ռուսական ցարից՝ 3-րդ աստիճանի ***St.Anna*** շքանշան: Որոշ շրջան վիրաբուժապետ է եղել Կ.Պոլսի հայ կաթոլիկների Ս. Հակոբ հիվանդանոցում: 1910-11թթ. Բժշկական Կայսերական ընկերության փոխնախագահ, իսկ 1913թ.՝ նախագահ է ընտրվել: Բալկանյան պատերազմների ժամանակ վարել է թուրքական «Կարմիր Մահիկի» Գալաթիայի հիվանդանոցի վիրաբուժապետի պաշտոնը, փրկել անհամար զինվորների կյանք ու ստացել «Կարմիր մահիկի» վարչության հատուկ շնորհակալությունը:

Մասնակցել է *GAZETTE MEDICALE D'ORIENT* ֆրանսերեն բժշկական պարբերականի հրատարակությանը: Աշխատակցել է *LA TURQUIE* ֆրանսերեն օրաթերթին, ուր ամեն չորեքշաբթի բժշկական քրոնիկներ է գրել: Նա միակ հայն է եղել, որ ներկայացրել է հայ բժիշկներին Առողջապահական Բարձրագույն Ժողովում, Ազգային ժողովում Պալաթ թաղի կողմից երեսփոխան ընտրվել: 1929թ. տեղափոխվել է Փարիզ:

**Հինգլյան Անտոն բեյ (1865-1942).** Քիթ-կոկորդ-ականջի մասնագետ: Զինվորական վարժարանն ավարտել է 1887թ.: Արքունի ակնաբույժ է եղել օսմանյան պետության վերջին սուլթաններին: Սեփական դարմանատուն է ունեցել Պոլսում:

**Համբարձում Պոյաճյան (1867-1914?).** Կայսերական բժշկական վարժարանի դասախոս, Ազգային երեսփոխան, 1909թ. Օսմանյան Մեջլիսի պատգամավոր Քոզանից:

**Սահաթճյան Հովսեփ (1867-).** Կրթությունը ստացել է Լոնդոնում: Բժշկի և վիրաբույժի վկայականի դիպլոմ է ստացել 1893թ.: Գործել է Ռոդոսթոյում, Պարտիզակում (Բահչեջիկ): Աշխատակցել է հայերեն և հայատառ թուրքերեն պարբերականներին: Բազմաթիվ մասնագիտական երկերի հեղինակ է, ինչպես՝ «Մարդկային մարմինը», «Կես բժիշկ խոսակցություններ», «Մանչերու թշնամին», «Թոքախտի վրա կենսական ծանոթություններ», «Մանչերու բարեկամը»:

**Նշան Ֆիքրի Աճեմյան (1867-1944).** Պոլսեցի զինվորական բժիշկ: 1894թ. ավարտել է Կայսերական բժշկական զինվորական վարժարանը: Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ *հազարապետի* աստիճանով եղել է Սամսոնի զինվորական հիվանդանոցի բժշկապետը: Որոշ ժամանակ ծառայել է նաև Ամասիայում:

**Ավետիս Գարագաշ (1868-1934).** Սուրբչեշմեի զինվորական Ռյուշտիեն է ավարտել, ապա 1891թ. ավարտել Կայսերական բժշկական զինվորական վարժարանը: Ազատ, մասնավոր գործունեություն է ունեցել: 1908թ. մեկնել է Փարիզ, սովորել ***Sent Louis*** հիվանդանոցում, պրոֆ. Գարինի մոտ, մասնագիտացել մաշկային ու վեներական հիվանդությունների գծով: Կ.Պոլիս վերադառնալով երկար տարիներ ծառայում է այս գործին, աշխատում Բեյօղլուի մաշկա-վեներական դիսպանսերում: Մտավորական բժիշկ է եղել: Հեղինակել է բազմաթիվ հրապարակախոսական մասնագիտական հետաքրքիր ուսումնասիրություններ հայատառ թուրքերեն և հայերեն պարբերականներում: Հայատառ թուրքերեն և հայերեն առանձին հատորներ է թողել: Եղել է նաև լավ վիրաբույժ, որպես փոխ.վիրաբուժապետ ծառայել Կ.Պոլսի գերմանական հիվանդանոցում:

**Գրիգոր Աղիլյան (1870-1951).** Զինվորական բժիշկ *հազարապետի* աստիճանով: Առաջին համաշխարհայինի տարիներին ծառայել է Թեքիրդաղում, Անատոլիայում: Պոլսում սեփական մանկաբարձական կլինիկա է ունեցել: Հայտնագործողն է *Alin* դեղամիջոցի:

**Հայրապետյան Խոսրով (1871-).** Պարտիզակցի: 1895թ. ավարտել է Կ.Պոլսի Կայսերական բժշկանոցը: 2 տարի աշխատել է ծննդավայրում, ապա 5 տարով քաղաքապետական բժիշկ է նշանակվել Ֆլորինայում (Մանաստր): Նույն պաշտոնով 7 տարի ժամանակով հրավիրվել է գործելու Գալեճիք (Գաղատիա) և Պիլեճիք վայրերում: 1912թ. հաստատվել է Իզմիրում, ստանձնել քաղաքի զինվորական օգնական բժշկի պաշտոնը, ապա աշխատել Պոզանթի և Կյուլեկ Պողազ՝ իբրև *«մենզիլ և նոզրա բաշիսի»*: Շատ չանցած նույն պաշտոնով հրավիրվել է Հայդարփաշա, նշանակվել վիրավոր և տկար զորքերի առաջնահանձնաժողովի զինվորական բժիշկ: Այս ծանր շրջանում իր պաշտոնը լավագույնս կատարելու համար ստացել է պետական բարձրաստիճան անձանց գնահատականը, այդ թվում՝ Էնվեր փաշայի: Անվանվել է Հայդարփաշայի հիվանդանոցի, միաժամանակ՝ Սելիմիեի զորանոցի, և «Օրդու Սեֆերը Սեվք կոմիսիոնի» (զորահավաքի բժշկական հանձնաժողովի) զինվորական բժիշկ: Ժանտախտի համաճարակի ժամանակ հազիվ է փրկվել: Իր դարմանատունն է հաստատել Հայդարփաշա և Քադըքեոյ թաղերում: Նա միջազգային ճանաչում է ունեցել որպես կնաբույժ, մանկաբարձ, ներքին հիվանդությունների մասնագետ: 1922թ. լքել է երկիրը, հաստատվել Բուլղարիայում, այնուհետև անցել Վիեննա, ապա՝ Կորֆու:

**Ավետիս Նազգաշյան (1868 -).** 1888թ. ավարտել է ծննդավայրի՝ Այնթապի ամերիկյան քոլեջը: Սովորել է տեղի բժշկական փարժարանում: 1894թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան բժշկական փարժարանը: 1895թ. ջարդերից փախել է արտասահման, 9 ամիս մնացել Փարիզում, ապա աշխատել Լոնդոնի ու Բեռլինի հիվանդանոցներում: Վերադարձել է Այնթապ, հետո էլ հաստատվել է Կ.Պոլսում: Աշխատել է հայատառ թուրքերեն ավետարանական «Բահնիմա» պարբերականում: Հայատառ թուրքերենի է թարգմանել «Լեդի Իզաբել» վիպակը, հեղինակել հուշեր՝ «Ալյախար խաթըրլէրի[87]»:

**Արապյան Երվանդ (1870-1946).** Նշանավոր զինվորական բժշկապետ: 1897թ. ավարտել է Կայսերական զինվորական բժշկական փարժարանը, 33 տարի ծառայել երկրի սահմանային քաղաքների, արաբական մասի (Բասրա, Բաղդադ, Քերբելա, Մոսուլ, Դիարբեքիր և այլուր) զինվորական հիվանդանոցներում: 1908թ. Սահմանադրության հռչակումից հետո վերադարձել է Կ.Պոլիս, դասախոսել զինվորական բժշկական «Հայրիյե», «Քուլելի Ասքերի» և «Բիրինճի Սյուվարի Ալայը» փարժարաններում, միաժամանակ զինվորական «Հայրիյե», և մյուս հիվանդանոցներում եղել բժշկապետ Սարգիս Պերպերյանի փոխբժշկապետը: Բալկանյան պատերազմի, Առաջին համաշխարհայինի ժամանակ ծառայել է Կ.Պոլսից շատ հեռու՝ Բասրայի, Բաղդադի, Պարսկաստանի սահմանային Համադան, Դեվլեթաբադի բանակներում, ծանր վիրավորվել: Մինչև 1919թ. զինվորական ծառայություն է կատարել, գործել շուրջ 100 զինվորական վայրերում:

**Լևոն Մեխիտոնյան (1873-).** Զեյթունցի: 1895թ. ավարտել է Մարաշի Ակադեմիան, Տարսոնի *St. Paul* քոլեջը: 1905թ. փայլուն ավարտել է Բեյրութի Ամերիկյան Համալսարանի բժշկա-

87 Տես մեր Մատենագիտությունը:





կան ֆակուլտետը որպես բժիշկ և վիրաբույժ: 6 ամիս աշխատել է Մարաշի գերմանական հիվանդանոցում նշանավոր վիրաբույժ Հերլիի, իսկ Այնթապում՝ անվանի դոկտ. Շեփարդի հետ: 1909թ. խոլերայի համաճարակի ժամանակ նշանակվել է Ադանայի և շրջակայքի համաճարակագետ (կարանտին) բժիշկը: Առաջարկել են աշխատել Հալեպում, Սվազում, սակայն նախընտրել է իր հայրենակիցների հետ լինել և աշխատել Զեյթունում որպես քաղաքապետական բժիշկ:

**Մեզպուրյան Արտո (1879-1957).** Հայտնի բժիշկ Ներսես Մեզպուրյանի զավակն է: 1896-1903թթ. Փարիզում բժշկական կրթություն է ստացել: Բալկանյան և Առաջին համաշխարհային պատերազմների ժամանակ հարյուրապետի աստիճանով ծառայել է Բրուսայի և Անատոլիական այլ քաղաքների զինվորական հիվանդանոցներում: Աշխատակցել է Փարիզի *«Archives de medecine des enfants»* մանկական հիվանդությունների մասին հանդեսին և Կ.Պոլսի «*Բժիշկ*»-ին: Թողել է բժշկական կարևոր ուսումնասիրություններ, ինչպես «Հյուծախտի դեմ պայքարը և պաշտպանությունը» (1932), «Մանուկների առողջապահությունը» (1912): 1950թ. հայ բժշկագիտության պատմության համար չափազանց արժեքավոր երկ է հրատարակել: Այն է՝ «Հայ և ծագումով հայ բժիշկները», որի Ա մասն ընդգրկում է 1688-1863թթ. գործունեություն ծավալած բժիշկների կենսագրությունները:

**Սերքյան (1883-).** Ականաբույժ: 7 տարի սովորել և 5 տարի էլ պաշտոնավարել է Փարիզում, աշակերտելով մեծագույն մասնագետների: Վերադարձել է Կ.Պոլիս, աշխատել Ազգային հիվանդանոցում: Նրա մասին մեծ դրվատանքով են անդրադարձել իրենց դասախոսություններում փարիզյան մասնագետները: 1912թ. աշխատակցել է Կ.Պոլսի *Gazette Medicale d'Orient* ֆրանսերեն բժշկական պարբերականին, գրել ակնաբուժական բնագավառում *ադրենալինի* կիրառման մասին:

**Հանչեր Հրանտ (1886-1926).** Բժիշկ գյուտարար: 1913թ. ավարտել է Կ.Պոլսի Կայսերական բժշկական փարժարանը: Նույն փարժարանում նշանակվել է անդամազննության, դիահերձման դասախոս, եղել վիրաբուժապետ Ճեմիլ Փաշայի օգնականը: Որպես վիրաբույժ աշխատել է Կ.Պոլսի հիվանդանոցներում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ «Զաքիոն օղլու»-ի հիվանդանոցում վիրաբուժապետ է աշխատել: Պատերազմի երկրորդ տարին՝ Բեռլինի վիրաբուժական համաժողովում բժշկապետ Սուլեյման Նուման Փաշայի հետ եղել է Օսմանյան կայսրության պատվիրակը: Ընտրվել է Ֆրանսիական գյուտարարների և Ակադեմիայի անդամ, հնարել է ծննդաբերական ու վիրաբուժական գործիքներ, որոնցից են մանկահան (սաղմքաշիչ) *ունելիքը* (Ֆոռսեպ կորընկալող), *ոսկորի բեկորիչ, կոճքաբանակի ընդլայնիչ, բժշկական նոր ջերմաչափ*: Այս գյուտերից որոշներն ընդունելություն են գտել եվրոպական պետություններում ևս: Աշխատակցել է «*Presse Medicale*»-ին: Սատարել է Շվեյցարիայում Հայկական Օջախի հիմնադրմանը:

**Գարամանյան Խաչիկ (1888 -).** Կ.Պոլսի Ավստրիական քոլեջն է ավարտել, ապա սովորել Կայսերական բժշկական փարժարանում: 1907թ. ավարտելուց հետո կատարելագործվելու է մեկնել Վիեննա և Փարիզ: Որպես վիրաբույժ և կնախտաբույժ, աշխատել է այնտեղ, արժանացել աշխարհահռչակ պրոֆեսորներ Բասի և Պոզզիի մեծ գնահատանքներին, նրանց հիվանդանոցներում խորհրդականի (monitore) պաշտոն վարել, ապա վերադարձել է Կ.Պոլիս: Աշխատել է Կ.Պոլսի բուլղարական հիվանդանոցում և բուլղար կառավարու-

յան *Merite civil* հազվագյուտ տրվող պատվանշանի 4-րդ աստիճանը ստացել: 1909թ. Բալկանյան պատերազմի սկզբից ի վեր կայսերական կառավարության կողմից նշանակվել է ծառայելու «Կարմիր մահիկ»-ի Գառաքյոյի հիվանդանոցում, ապա Դամասկոսի ճակատում Ճեմալ փաշայի բանակում վիրաբույժ է եղել: Բժիշկ Գառնիկ Քյուրքճյանի հետ բժշկապետ է եղել Դամասկոսի դրբանոցներում և հիվանդանոցներում[88]:

**Բժշկագիտական հրատարակություններ**

Բժշկական մրցողությունը ներկայացնող բժիշկները, դասախոսները, որ մեծ աշխարհայացքի տեր կրթյալ մտավորական անձնավորություններ էին, զբաղվում էին նաև մասնագիտական ու դրան հարող գիտությունների մասին եվրոպական հեղինակների գործերի թարգմանությամբ ու հրատարակությամբ: Այդ գրքերից մի քանիսն իրենց տեսակի մեջ առաջինները են եղել կայսրության գրահրատարակչական ասպարեզում: Նման օրինակներից են Պողոս Զոհրաբյանի և Պավլոսի Շաշյանի թարգմանած և հրատարակած «Կոսմոգրաֆիա» գիրքը (1858): Գրքի մեկ օրինակը հրատարակիչները նվիրել են սուլթանին: Ավելի քան 20 տարի ծառայել է Կայսերական բժշկական դպրոցում և կառավարությունում: Շաշյան անունն արդեն ճանաչված էր և որպես օգնություն 5 հազ. ղուռշ է ստացել:

1858թ. Զմյուռնիայի Տետեյան տպարանում հայերեն տպագրվում է այդ ժամանակ եվրոպական երկրներում, Ռուսաստանում մեծ աղմուկ հանած «Մեսմերականություն–մագնետիզմ» գիրքը: Նմանատիպ գրքերը զարգացնելու էին ընթերցողների գիտելիքները, երևակայությունը, հետաքրքրություն առաջացնելով գիտության տարբեր, խորհրդավոր ճյուղերի նկատմամբ և մարդկանց մեջ ընթերցասիրություն պիտի սերմանեին: Նպատակներից ամենակարևորը՝ մարդկանց մեջ սեփական մարմնի նկատմամբ տարրական առողջապահական գիտելիքների ուսուցումն էր[89]:

Ալկոհոլի և ծխելու դեմ պայքարը մեծ ներկայանում է ինքնուրույն և թարգմանական գրքույկների հրատարակությամբ: Բժշկական պարբերականներում տարբեր լեզուներով բազմաթիվ հոդվածներով հանդես են գալիս շատ մասնագետներ: Տրվում են դասախոսություններ վարժարաններում, մարզական ու թաղային դահլիճներում: Կ.Պոլսի տարբեր թաղերում, նաև՝ արևելյան նահանգներում կազմակերպվում են ալկոհոլի դեմ պայքարի ու ծխարգելական ընկերություններ:

Ներքոհիշյալ բժշկական ու առողջապահական պարբերականները, որ հրատարակվել են հայերի կողմից կամ նրանց մասնակցությամբ (տարբեր լեզուներով), կարևոր նպաստ են ունեցել: Այն է՝

88 Օսմանյան կայսրության հայ բժիշկների, դեղագործների մասին, նրանց կենսագրություններին, ընտանիքներին կարելի է առավելագույնս ծանոթանալ մեր ժամանակակից, պոլսահայ գիտնական Արսեն Յարմանի ծավալուն ու չափազանց արժեքավոր թուրքերեն աշխատության մեջ:

89 Լրագրող, խմբագիր **Բյուզանդ Քեչյանը** (1859-1927) թարգմանել է հռահատոր մի նամականի՝ «[illegible]»: Բ.Քեչյանը 1896թ. հրատարակել է «Բյուզանդիոն» ամենօրյա թերթը, եղել «Բոզանտի Մասիս», «Թէրճիմանը Էֆքեար», «Մասիս», «Արևելք» պարբերականների քաղաքական բաժինների խմբագիր, գրել է «Ազգային Ս.Փրկիչ հիվանդանոցի պատմություն»: Առողջապահական բազմաթիվ գրքեր ու գրքույկներ են հրատարակվել հայատառ թուրքերենով: Այն է՝ ալկոհոլի, ծխելու վնասների մասին, դպրոցական տարիքի երեխաների առողջապահության, երիտասարդների[illegible] մասին և այլն:





1. 1861-75թթ. *«Կլինիկա»*, Կ.Պոլիս - ազգային, առողջապահական և ուսումնական պարբերական, խմբ. Մ.Ռուբենյան:

2. 1866-1908թթ. *«Փունջ»*, Կ.Պոլիս - քաղաքական, ազգային և առողջապահական լրագիր, շաբաթաթերթ, տնօրեն Համբարձում Այանճյան:

3. 1871թ.՝ *Ceride-i Tıbbiye* (Ճէրիտէյի թըբբիյէ, Բանբեր բժշկական) - օսմաներեն պարբերական:

4. 1885թ. *«Գանձ Արհեստից»*, Կ.Պոլիս - բժշկական, արհեստական, երկրագործական շաբաթաթերթ, տեր և տնօրեն Կ.Ճերահյան:

5. 1891թ. *«Փունջ»*, Կ.Պոլիս, - հայերեն և հայատառ թուրքերեն գիտական, առողջապահական թերթ (Տես՝ մեր Մասնագիտությունը, հ. 112): Խմբ. հրատարակիչ՝ բժիշկ Կարապետ Փաշայան:

6. 1911-14թթ. *«Բժիշկ»* - բժշկական և առողջապահական ամսաթերթ Վահան Ղազարյանի տնօրինությամբ 1911թ. Տրապիզոն, 1912-14թթ.՝ Կ.Պոլիս:

7. 13.03.1914 *«AFIYET»* (Առողջություն) - օսմաներեն պատկերազարդ ընտանեկան շաբաթաթերթ: Հրատարակիչ Միսակ Ձերիտ, գլխավոր խմբագիր՝ Ավանգարդ Սուլեյման: Տպագրվել է Կ.Պոլսի «Լույսին» տպարանում:

8. 1913-14թթ. *«Յոյս»*, Կ.Պոլիս - առողջապահական, գիտական, հակաալկոհոլական պարբերաթերթ: Օրգան Թուրքիայի հակաալկոհոլական ընկերության: Արտոնատեր Վ.Մ.Հինդլյան, պատ. խմբագիրներ՝ Վ.Թորգոմյան, Պետրոսյան:

9. 1914թ. *«Տարեցույց բժշկական եւ առողջապահական»*, Կ.Պոլիս – հեղինակ և հրատարակիչ Վահան Ղազարյան[90]:

10. 1919թ. *«Հայ բժիշկ»*, Կ.Պոլիս - բժշկական, առողջապահական, գիտական պատկերազարդ ամսաթերթ: Արտոնատեր Հրանտ Գորայան: Տնօրեն խմբագիր՝ Վահան Արթինյան: 1-10 համար: Տպ. Քեշիշյան: Ամեն համարի սկզբում՝ նախապատկ մի բժշկի նկար[91]:

11. 1920-23թթ. *«Հայ բուժակ»*, Կ.Պոլիս, 1923-25թթ.՝ Ալեքսանդրիա: Բժշկական և առողջապահական ամսաթերթ: Հիմնադիր՝ Վահան Արթինյան: Տնօրեն, խմբագիր՝ Մ. Գարակյոզյան:

12. 1920թ. *«Դարման»*, Կ.Պոլիս - բժշկա-առողջապահական և գիտական պատկերազարդ ամսաթերթ, օրգան Հայ բժիշկների միության, Օննիկ Փափազյանի տնօրինությամբ:

90 *«Տարեցույց բժշկական եւ առողջապահական»*-ը Ա տարի է միայն ունեցել: Այստեղ զետեղված են տարբեր երկրների բժշկության պատմություններ, բազմաթիվ հայ և օտար հայտնի բժիշկների կենսագրություններ, Պոլսի, Արևմտյան Հայաստանի հայ և եվրոպական միսիոներական հիվանդանոցների մասին (որ օտար բժիշկներին մատների վրա կարելի էր հաշվել և հիմնական բժշկական անձնակազմը բաղկացած է եղել հայերից), առողջապահական խորհուրդներ, բժշկագիտական հոդվածներ, որոնք ապացույց են պոլսահայ բժշկության ճգնաժամերին եվրոպական բժշկագիտությանը [illegible] տեղեկացված լինելու և համարժեք ընթանալու նրանց մտածելակերպին:

91 «Օտարաշխարհին բժիշկը» շարքը հանրամատչելի գրականություն է տպագրել: *Ժողովրդական մեր դպրոցներում* [illegible] Կ.Պ: Մ.Վարժապետեան, *Առողջին նախանձրները*, Մարզվան,1910: 1919թ. Տպագրվում է *«Հայ բժշկության պատմ գրքերը»*, ցուցանակապատած վավերական փաստերով Կ.Պոլսի Կլինիկա գրատան կողմից:

**Կարևոր տարեթվեր**

Արևմտահայ բժշկության պատմությունը հայտնի է իր նկատմամբ բազմաթիվ նորարարությունների գրանցմամբ:

**Կարապետ Հարիչի** հայ վաճառականը 19-րդ դարի սկզբին Եվրոպայից Ֆրանսիա տարավ ատամնաբույժի որոշ բուժող մի բույս: Այն հայտնի դարձավ ֆրանսիական բժշկագիտական մրցույթում: Դոկտ. Բայերը երկու տասնամյակ անց, 1822թ. նույնը ներկայացրեց Փարիզի բժշկանոցին և այն կրեց Բայերի անունը:

**«Ծաղիկ»** պատվաստանյութը ևս եկել է հայերի գյուղը, որը հին ժամանակներից ծանոթ էր մեր ժողովրդին, չինացիներին: Պատվաստուկը (վերցված հիվանդի բշտիկների հեղուկից) չամիչի մեջ դնելով երեխաներին տալիս էին, որ կուլ տան: Ավելի ուշ, Պոլսում մաշկը ճեղքելով այն պատվաստում էին: Անգլիական դեսպանի կինը՝ լեդի Մերի Մոնտեգյուն (Mary Wortley Montagu) տեսնելով այն, Կ. Պոլսի Պերայում գտնվող իր տղային պատվաստեց: Խրախուսված հաջողությունից, լեդի Մերին 1717թ., Անգլիայի իր բարեկամներին ուղղված նամակում գրեց և նկարագրեց այս փաստը: Գյուտը ներմուծվեց Անգլիա: Լեդի Մերիի օրինակին հետևեցին Ուելսի դուքսը, ապա՝ Օրլեանի դուքսը: 1769թ. Ռուսաստանի կայսրուհին այն փորձեց իր Պավել որդու վրա: Ասա՝ Մարի-Թերեզա բազմիցս է այն փորձել: Հետո՝ չինացիներն այս գյուտի հիման վրա իրենցը պատրաստեցին[92]: Այս գյուտի համար հետագայում մրցանակ ստացավ անգլիացի բժիշկ Ջեններ:



Մերի Մոնտեգյու

1886թ. դեղագործ և ջերմաչափի սպառատու **Լևոնի Գասպարյանի** պատրաստած հայերեն գերժամանակակից տեսքով մի ջերմաչափ, «Էրմենի թերմոմեթրեսի»-ն մինչև դարավերջ նույն անվամբ վաճառվել է Բահչեքափիի Գասպարյանի դեղատանը:

16.01.1924թ. փարիզյան *«Eclair»* թերթը գրել է. «Պաստորը չէր հաջողած գտնել կատաղության միկրոբը: Մահն ընդհատած էր այդ խնդրի շուրջ նրա կատարած ուսումնասիրությունները: Մեծ գիտնականի սաների համար նվիրական պարտք էր Վարպետի ընդհատված աշխատության իրագործումը: Դոկտ. Ռուի բաժնում միկրոբաբան, վիրաբույժ և Պաստորի Ալժիրիայում դասախոսող պոլսեցի որդին **Ե. Մանուկյանի** (1872-1948) երկարատև, համբերատար գիտական հետազոտությունների արդյունքում հաջողվեց գտնել «կատաղության միկրոբը», Պաստորյան հաստատությանն օժտելով փառքի այս նոր տիտղոսով: Պաստորը համոզված էր որ կատաղության հարուցչի գյուտը մեկնակետ կդառնար մի շարք կարևոր գյուտերի համար ևս: Հուսանք, որ մոտ ապագայում այն կիրականանա...»:

**Սիհրան Գասպարյան** (1868-1910). Կեսարահայ բժիշկ: Առաջին համաշխարհայինի նախօրեին գաղթեց Ամերիկա, որ հայտնի դարձավ ռենտգենաբանության մեջ նոր ուղղության, *քաղցկեղը ճառագայթով բուժելու* գործում, որի զոհը և ինքը դարձավ:

92 Հրաչյա Աճառյան, *Հայոց գիրը Օսմանյան կայսրության մեջ*, Եր., 1999, էջ 19: Տիգրան Փեշտիմալճյանը 1884թ. հայերեն հրատարակել է ընդարձակ աշխատության ծաղկախտի բուժման մասին (Իսմիրլյան, *Յարգագրական*, 1927թ., 310 էջ: Ս.Դալար, Բազմավեպ 1943, էջ 201):





**Վարազդատ Գազանճյանը**, Ամերիկա գաղթած երզնկահայ բժիշկը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայտնի է դառնում *դիմածնոտային վերականգնողական վիրաբուժության* մեջ:

1918թ. **Վահան Պերպերյան** դեղագործն իր և բոլոր մեծ դեղարաններում վաճառքի էր հանում իր պատրաստած *Տիմալոժին* ամենապարզ գինին՝ կազդուրիչ դեղերի բաղադրությամբ: Ասոր՝ «Անկարո՞ղ ես, նիհա՞ր ես, անարյուն ու ջղայի՞ն ես՝ գործածե»:




Հայկական որոշ դեղատների կնիքներ, պիտակներ

* * *

Հայ բժիշկները կարծես թե իրենց վրա էին վերցրել Օսմանյան կայսրությունում եվրոպական բժշկագիտության ասպարեզում նորարարությունների ներմուծման առաքելությունը: Այդպիսի օրինակներից է՝

1909թ. «Հելիոս» էլեկտրամագնիսական ժանյակների նկատմամբ մարդկանց ուշադրությունը հրավիրելը: Թուրքիայում դրանց վաճառքի ներկայացուցիչն էր Կարապետ Գալըճյանը Ղալաթիայում: Այն կիրառելի էր նույնիսկ նորածինների համար՝ «թե՛ զարդ է, և թե՛ առողջության ցավերն է կասեցնում»:

Սովորաբար հայերեն, հայատառ թուրքերեն հրատարակությունների, գրքերի, օրացույցների, տարեցույցների վերջին էջերը նվիրված էին լինում գովազդներին: Դրանք ամենատարբեր բնույթի կարող էին լինել՝ անգլիական ապահովագրական գործակալությունից մինչև տարբեր վաճառատների, ապրանքների, գինիների, նոր հրատարակությունների, այդ թվում՝ նոր դեղամիջոցների գովազդներ: Առողջապահական ասպարեզի գովազդները երբեմն իրենց մեջ շատ հետաքրքիր տեղեկություններ են ամփոփել: Այսպես օրինակ, հարբուխի, շնչառական օրգանների հիվանդությունների դեմ առաջարկվող *Névasilinne*-ը, որ ֆրանսիական համբավավոր դեղամիջոց էր, պարզվում է, որ առաջնակարգ դեղագործ **Լևոն Թաղյանյանի** կողմից էր պատրաստվել Բերք Բլաժում (Ֆրանսիա):

Մի շարք վաճառականներ ու առևտրական տներ մասնագիտացել էին բժշկական ասպարեզի անհրաժեշտ դեղանյութերով, տեխնիկական սարքավորումներով ապահովելու, այն եվրոպական երկրներից ներկրելու խնդրում: Տարբեր լեզուներով գովազդներից իմանում ենք, որ միայն Պոլսում կային մի քանի նման մասնագիտական վաճառատներ, պահեստներ (դեպոներ), որոնք մատակարարում էին ողջ երկրին, անգամ նրա ամենահեռավոր անկյուններում գտնվողներին[93]:

1888թ. Պ. և Հ. Քյուչուքյան եղբայրները դեղարան են բացում Բահչեքափուում, նախապես (1887թ.) արդեն դեղարաններ ունենալով Ենի Ճամիում և Պերայում, որ առաջարկվում էին դեղերի ու դեղագործական նյութերի, ատամնաբուժական և վիրաբուժական նյութերի, գործիքների, ընտրելագույն բամբակների, ֆրանսիական օծանելիքների մեծաքանակ ու փոքրաքանակ վաճառք: Այս մատակարար-դեղարանը երաշխավորում էր միայն սեփական ապրանքանիշ կրող նյութերը:

Պոլսում, 1900թ. հայտնի էին Մելիք Այլազյանի Բահչեքափը խանում գտնվող վիրաբուժական, բժշկական գործիքների վաճառատունը, Միշել Թեֆիկյանի վիրաբուժական ու ատամնաբուժական գործիքների վաճառատունը Ղալաթիայում, «Լ.Ալյանյան և Ս.Էմիրզե» ընկերության դեղերի և քիմիական արտադրանքների մեծ մթերանոցը Հասանճի խանում, «Մազլըմյան և Մինասահճյան» դեղերի մեծ վաճառատունը Բահչեքափուում: Դրանք բժշկական նյութեր, գործիքներ, ատամնաբուժական նյութեր, համբավավոր գործարանների օծանելիքներ էին մատակարարվում ոչ միայն Կ.Պոլսին ու շրջակայքին, այլև կայսրության ամենատարբեր վայրերին: Վերջինս նաև Ս.Փրկիչ Ազգային հիվանդանոցի երկարամյա հայթայթիչն էր:

Որոշ հայ բժիշկների գործունեության արդյունքում Օսմանյան կայսրության տարբեր

93 1895թ. **Կոստանդ Պեկիրճյանի** Միրգենճիյում գտնվող կոշիկի գործարանում արտասահմանյան նյութերով հատուկ կոշիկներ էին կարվում, վիրավոր, հիվանդ ու կոշտուկներով ոտքերի համար:





վայրերում, մասնավորապես՝ գավառներում, բացվել են մի շարք հիվանդանոցներ, բժշկական փարմաքաններ. Այդպիսի օրինակներից է Սելանիկում բժշկական փարմաքանի բացման խնդրում Կարապետ Իսքենդերյանի (Իսքենդեր փաշայի) ունեցած մեծ նպաստը: Բժիշկն այդ ժամանակ զորամասի բժշկապետ էր և արժանացել էր *միրլիվայի* աստիճանի ու 3-րդ աստիճանի ***Mecidiye***-ի:





Բժիշկ Տաղավարյանի և Տիգրան փաշա Բաբայանի դեղատոմսերի օրինակները

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
# ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԹԱՏՐՈՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐՀԵՍՏՆԵՐ, ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան կայսրության տարածքում պահպանվել են նախնադարյան ժամանակներից սկսած, այս տարածքում կայացած պետական միավորումների, տարբեր ժողովուրդների (խեթերի, ուրարտացիների, հիթիթների) և հետո բյուզանդական շրջանների մշակութային բազմաթիվ շերտեր: Այս հսկայական երկրի մշակույթը միաձուլումն է եղել հայկական, պարսկական, արաբական, հելլենիստական մշակույթների, ճարտարապետական հուշարձանների, որոնք սելջուկյան շրջանում հիմք են դարձել Օսմանյան կայսրության ճարտարապետության, շինարարական և կիրառական արվեստի: Ճարտարապետները կարևոր տեղ են գրավել Օսմանյան կայսրության արքունիքում: Եղել են արքունի ճարտարապետներ, որոնք կրել են ***Mimar-Ağa, Mimar-Başı, Ser-mimaran-ı Hassa, Kalfa, Usta*** մականունները: Նրանցից ոմանք չափազանց գնահատվել ու սիրվել են իրենց սուլթանների կողմից, եղել նրանց մտերիմ խորհրդականները: Այս տեսակետից հայտնի անուն է եղել սուլթան Սուլեյման Բ-ի մտերիմ ճարտարապետ, Բալաթում ծնված Գաբրիել խալֆա Փալազյանը:

Նրանցից մի աստիճան ցածր, նրանց ենթակայության տակ, առանձին մասնագիտական ուղղվածություն, տարբեր շինանյութերի (մարմար, աղյուս, քար և այլն) առումով մասնագիտություն ունեցող ճարտարապետներ են եղել ինչպես, օրինակ, ***Mermerci, Minareci, Nakkaş, Kiremitci, Taşcıbaşı*** և այլն:

Ճարտարապետների գործունեության ոլորտները հիմնականում եղել են մի քանիսը՝ արքունի ճարտարապետներ, արքայական ու պալատական կառույցների ճարտարապետներ, ազգային փոքրամասնությունների գծով ճարտարապետներ, բանակային շինությունների, Ստամբուլ քաղաքի ճարտարապետներ և ճարտարապետներ, որոնք զբաղվել են գործավարների խնդրով: 1734 թվականից «Արքունի ճարտարապետների օգնական» մասնագիտական կրթության դասավանդումներ են սկսվել: 1831թ. հիմնադրվել է Ճարտարապետների միությունը՝ ***Ebniyeyi Hassa Müdürlük***, որը մասնաճյուղեր է ունեցել նահանգային կարևոր կենտրոններում:

Օսմանյան կայսրության ճարտարապետական մշակույթի ամենացցուն անունը դա Միմար Սինանի անունն է: Ճարտարապետական այլ անունների մասին հանրագիտարանային նյութերը շատ սուղ են: **Միմար Հոճա Սինանը (1490-1588)** արքունի մեծ ճարտարապետ էր, ծագումով կեսարացի, որ երկար տարիներ ենիչերական զորքերում էր անցկացրել:

Օսմանյան ճարտարապետության գագաթը համարվող Մեծն Սինանը սուլթան Սելիմի տիրակալության շրջանում (1512-1520թթ.) եղել է դևշիրմեի զոհերից, բռնի մահմեդականացված հայ պատանի, հավանաբար Սինոն անունով, որն իր ողջ ստեղծագործական, չափազանց հարուստ կյանքը նվիրել է Օսմանյան կայսրության շենացմանը[1]: Ենիչերական

1 **Միմար Սինանը**, որ բազրկի(?) փառքերից է և նրա անունով են կոչված Կեսարիայի ակադեմիան ու շատ





զորքերում 1524թ. մասնակցել է Բաղկանյան և 1534թ.՝ Բաղդադի պատերազմներին: Քաջության ու շինարարական իր գիտելիքներով աչքի ընկած զինվոր Սինանը 1512թ. բերվել է Պոլիս և էր մեծյանի պալատում զբաղվել շինություններով, իր տրամադրության տակ ունենալով շատ գործավորներ, զբաղվել է աղոթատեղիների, խաների, աղբյուրների կառուցմամբ: Որպես Օսմանյան կայսրության գլխավոր ճարտարապետ, 1538թ.-ից հաջորդել է Աջեմ Ալիին: Ծառայել է 4 սուլթանների, այդ թվում՝ սուլթան Սուլեյման Ա Կանունիին (1520-1566), սուլթան Սելիմ Բ-ին (1566-1574): Արաբերին, պարսկերին, թուրքերեն լեզուներին հմուտ, խիստ քաջ ու համրաց, երկրաչափական գիտությունների հմուտ, գրասեր ու բարի անձ է եղել: Նրա 40 աշակերտները դարձել են հայտնի ճարտարապետներ, ծառայելով օսմանցի և այլ միապետների: Ապրել է 99 տարի: Նրա հայկական ծագման մասին առաջին անգամ 1573 թվականի փաստաթուղթ հրատարակեց Ահմեդ Ռեֆիկը «*Türk Tarihi Encümeni Mecmuası*»-ամսագրում[2]:


Կոնիայի «Ինջե մինարեի» մեդրեսեն (ճարտ. Կալուտ, XIII դ.)

ու շատ կարևոր հաստատությունները, պալատներ ու պետական, փառավոր [illegible], որը մոտ 500 մեծ ու փոքր, կարևոր շինությունների ճարտարապետն էր, իր ժամանակին դիմել է սուլթանին մի նամակով, որ փրկի իր հայրենի գյուղի ավերումից, բռնագաղթից: Նամակը գտնվել, ինչ գյուղը հայկական էր: Թեև մահմեդականացված ու թրքացված այս դեմքի հայկական ծագումը փաստվեց: Որպես Սինանի հայրանուն հիշված է Աբդուլմեննան անունը: Այն տրվում էր հավատափոխ մարդկանց կամ մահմեդականացված երեխաների, որպես հայրական անուն:

2 *Türk Tarihi Encümeni Mecmuası*, Ա., 5-րդ համար, 1930թ. մարտ և 1931թ. մարտ, էջ 10: Այս օսմաներենով փաստաթուղթը գրվել է 1573 թվականին, երբ Սինանը 82 տարեկան է եղել: Սուլթան Սելիմ Բ-ն 1571թ. օգոստոսին գրավել էր Կիպրոսը: Գերիշխված նույն բնակչության [illegible] մի քանի [illegible], այդ թվում Կեսարիայի ու [illegible] Կիպրոս: Սինանը խնդրում իր 3 [illegible] Սուլթանին, որն էլ հրամայում է օգնել: Ըստ այս փաստաթղթի, Աղ դաղի(Էրջիյաս) [illegible] Կեսարիայի մի քանի գյուղերում (անունները տրված են, որոնք հայտնի են եղել որպես հայկական գյուղեր): Ըստ նույն աղբյուրի, Երուսաղեմում կա մի ձեռագիր, որի 1540թ. գրված հիշատակարանից պարզվում է, որ այդ ձեռագիրը (ձ.251) [illegible] Սինան Չելեբին, [illegible] Երուսաղեմ, սբ.Հակոբ վանք, ի հիշատակ [illegible] և Շահրիար Չելեբիի, Սինան Չելեբիի, իր նախնիների հոգու [illegible] համար: [illegible] Սինանը, որ 99 տարի է ապրել ու ծառայել մի քանի սուլթանների, իր փառքի [illegible] էր Օսմանյան կայսրության [illegible] Սուլեյման Հիասքանչի օրոք: Իր կայսրության [illegible] Հայաստանից մինչև Եգիպտոս, Հյուսիսային Աֆրիկա ու [illegible] Վիեննա տարածված այս [illegible] մզկիթներ ու [illegible] կամուրջներ [illegible] իր երկիրը կառուցելու, [illegible] հուշարձաններով զարդարելու համար: Նրա նախընտրած ճարտարապետը՝ Միմար Սինանը,

րկի» մզկիթը, 1251թ.՝ Կոնիայի Լառանդա դռանը կից մզկիթը (1260) և «Նալընջի մեջիդի» մզկիթը Սեբաստիայում (Սվազ): Իր տաղանդի համար նրան համեմատել են մեծն Սինանի հետ: Կարծում ենք որոշ աղբյուրներում հիշատակվող «վարպետ Գալոյան, Գալուս»-ը նույն Գալուկն է, որը 1229թ. կառուցել է նաև Սվազի «Գյոք մեդրեսե»-ն:

3. **Խուրշահ իբն Մուղիք Ալալարցի**[10], 1228-29թթ. Տիվրիկում Ահմադ շահի համար կառուցել է Մեծ մզկիթը և հիվանդանոց:
4. **Խոսրով**, 1247թ. կառուցել է Մալաթիայի մզկիթը սելջուկյան Քայխոսրով սուլթանի հրամանով:
5. **Թագվոր, որդի Սոխիանի** (13-րդ դ.), կառուցել է Մալաթիայի մեդրեսեն:
6. **Աշոտ (13-14 րդ դ.)**, կառուցել է քարվանսարա Իգդիրի հարավում, դեպի Ձոր, Քալեղալ լեռան ուղղությամբ[11]:
7. **Յակուբ շահ** (15-րդ դ.), 1490թ. վերակառուցել է Քիլիի պալատը (ապարանք) և կառուցել Բայեզիդ Բ. Վելի սուլթանի (1481-1512) մզկիթը Ստամբուլում:
8. **Քոջա Միմար Սինան (1490-1588)**
9. **Եղիազար խալֆա**, 1414-24թթ. Չելեբի Մեհմեդ Ա-ի պատվերով կառուցել է Բուրսայի հռչակավոր «Եշիլ ճամի» և «Եշիլ թյուրբե»-ն (Կանաչ մզկիթը և Կանաչ դամբարանը):
10. **Գրիգոր խալֆա Բալյուրդցի**, 1595-1603թթ. սուլթան Մեհմեդ Գ-ի ամենահայտնի արքունի ճարտարապետներից էր:
11. **Քուդաշահ** (16-րդ դ.), ավելի հայտնի է եղել որպես քարտաշ վարպետ:
12. **Առաքել խալֆա (-1673) և որդին՝ Գաբրիելը**[12], Կեսարիայի Մունջուսուն գյուղից են եղել, որոնք տեղափոխվել են Պոլիս:
13. **Զաքարիա խալֆա (17դ.)**
14. **Աստվածատուր խալֆա Պոլսեցի**, Ստամբուլում գործել է 1600-1630թթ., տիկինեցի էր, արքունի հայտնի ճարտարապետ: Եղել է Սադրազամ Թիրյակի Հասան փաշայի և շատ երևելիների բարեկամը: Օսման Բ-ի (1618-22) կառավարման շրջանում պալատում մեծ հեղինակություն է ունեցել: Մասնակցել է 1610-17թթ. Սուլթան Ահմեդ մզկիթի կառուցմանը: Կարողացել է մեծ դեր խաղալ 1628թ. Պալաթի Ս.Հրեշտակապետաց եկեղեցու վերականգնման համար սուլթանական ֆերման ստանալու խնդրում: 1608թ. մեծապես օգնել է Թեքիրդաղում հայ գաղթականներին: Հայկական աղբյուրները նրա մասին հիշում են որպես մեծ բարեգործի[13]:
15. **Դաղուճենի կամ Դուլգուճենի խալֆա (-1772)**, արքունի ճարտարապետ: Միմար Սինանի հաջորդներից մեկի՝ Սարըօղլու Դուլգուճեցի գերդաստանից: Կեսարիայից Պոլիս գալով, Երեմիա Չելեբիի համար որոշ գրքեր հայերենից թուրքերեն է թարգմանել, որոնցից մեկը հայտնի «Սաղմոսներ»-ն էր:
16. **Վարդան խալֆա**, հիշատակվում է, որ Պոլսում գործել է 1683թ.:

M. Yevadian, Lyon, 2010. տիտղոսաթերթի վրա:

10 Անդ, էջ 31, Սեդիֆ արաբական անունը ամփոփաբար տրվել է քրիստոնյաներին:

11 Des serviteurs fidèles... p 34.

12 Գեորգ Փամուքչյանն իր կենսագրականների հատորում հոր և որդու համար որպես մահվան տարեթիվ նշում է նույն 1673 թվականը: Տես՝ Pamukciyan Kevork, Cilt 4-*Biyografileriyle Ermeniler*, Aras Yayıncılık, İstanbul, 2003. Առաքելի որդի Գաբրիելը, որ թաղված է Բալըքլըի հայկական գերեզմանոցում, 1674թ. Կեսարիայի Մունջուսուն գյուղի Ս.Հրեշտակապետաց եկեղեցուն է նվիրել Պալաթի Ս.Հրեշտակապետաց եկեղեցու «Հայսմավուրքի» ձեռագիր կրկնօրինակը:

13 Տես՝ Ս.Փրկիչ Ազգային հիվանդանոցի տարեցույցը, 1901թ.





17. **Միմար Խաչատուր (17-րդ դ.)**
18. **Տիրատուր խալֆա (17-րդ դ.)**, 1648թ. Վարագա Ս.Խաչ եկեղեցին է կառուցել, որը նույն տարի երկրաշարժից քանդվել է:
19. **Ակնցի Հաջի Արբին (Հարություն)**, 1650թ. Եփրատի վրա առաջին քարե կամուրջն է կառուցել:
20. **Սանփանոս կամ Փանոս (18-րդ դ.)**, Ուրֆայում 5 մզկիթ է կառուցել: Եղել է Համալօղլու Ահմեդ փաշայի բարեկամը:
21. **Դավիթ կամ Դավուդ, Քոջա (մեծ) ժամանակով (1580-1660)**, մեծ հեղինակություն ու հռչակ է ունեցել: Պետական ծառայություն է կատարել: Ծնվել է Կովկասում, Թարակ գյուղում:
22. **Գրիգոր Չելեբին** Քոջա Դավիթի որդին է, ճարտարապետ: Ավարտել է հոր կառուցած Հոճա խանը, որը 1660թ. հրդեհի զոհ էր դարձել:
23. **Զաքարիա խալֆա (17-րդ դ.)**, գործել է Պոլսում, 1654թ. Անկարայի Ս.Աստվածածին եկեղեցուն մի ձեռագիր և 1671թ.՝ Քանդիլլիի Ս.Կարապետ եկեղեցուն մի Ավետարան է նվիրել:
24. **Խաչեր խալֆա**, Մուսա խալֆայի հետ 1627թ. վերակառուցել է Պալաթի Ս.Հրեշտակապետ եկեղեցին: Երուսաղեմի Ս.Հրեշտակապետ եկեղեցու բակում գեղեցիկ մի շենք է ունեցել, որը հետագայում վերակառուցվել է (1730թ.):
25. **Վարդան խալֆա (17-րդ դ.)**, գործել է Պոլսում:
26. **Մուսա խալֆա**, 1627թ. վերակառուցել է Պալաթի Ս.Հրեշտակապետ եկեղեցին՝ Խաչեր խալֆայի հետ միասին: Նրանք երկուսով բազմաթիվ հանրային շենքեր են կառուցել:
27. **Փալագյան Գաբրիել (-1720-ից հետո)**. Բալուից 1670թ. Պոլիս են տեղափոխվել: Եղել է սուլթան Սուլեյման Բ-ի (1687-1690) արքունի ճարտարապետը:
28. **Շահին խալֆա**, հոգևորական չինելով հանդերձ, 1690-92թթ. եղել է պատրիարքական արոռակալ: Երուսաղեմի պատրիարքը նրան անվանել է «խալֆա և պատրիարք»: Հայտնի է, որ կառուցել է բաղնիքներ:
29. **Շիրին խալֆա**, արքունի շինությունների պետ, գործել է 1730-1738թթ., մեծ համբավ է վայելել:
30. **Թասնենց Արզուման խալֆա (17-րդ դ. )** Պոլսում հայտնի ճարտարապետ է եղել:
31. **Խըդըր խալֆա**, պոլսահայ արքունի ճարտարապետներից, սիրելին Ալպազա և Բայրամ փաշաների: Գործել է 1623-1659թթ.:
32. **Խոդավերդի խալֆա**, եղել է 1649թ. Պոլսից ցամաքով Երուսաղեմ գնացող ուխտավորների թվում, հիշում է Երեմիա Չելեպին:
33. **Արզուման խալֆա**, 1669-70թթ. սուլթանի հանձնարարությամբ վարել է Կիրիթ կղզու շինարարական բարեկարգման ու զարգացման պատասխանատուի պաշտոնը:
34. **Գաբրիել խալֆա Փալագյան**, սուլթան Սուլեյման Բ-ի բարեկամ, արքունի ճարտարապետ: Գործել է 1670-ական թթ., եղել է Աղաթոնների հայ ամիրայական գերդաստանի նախահայրը: Որդին՝ Փալագյան Բարոնը, Յալովայում մի ագարակ է հիմնել:
35. **Կարապետ խալֆա Թաշճը**, 18-րդ դ. 2-րդ կեսին Ստամբուլում գործունեություն ունեցած կեսարացի ճարտարապետ:
36. **Արապօղլու Հաճի Միքիտոն խալֆա (-1742)**, ծնունդով Կեսարիայի Դարսիյակ գյուղից էր, արքունի ճարտարապետ: 1716թ. Հովհաննես Կոլոտ և Գրիգոր Շղթայակիր պատ-

ըիարքների ֆիրմանները ստանալու առիթով գնացել և Էջմիածնում ուղեկցել է նրանց: Գործել է սուլթան Ահմեդ Գ և սուլթան Մահմուդ Ա-ի ժամանակներում: Մեծ հռչակ ունեցող արքունի ճարտարապետ էր: 1773թ. կառուցել է Պոլսի Սուլթան Ահմեդ մզկիթը և Սամաթիայի Հեքիմօղլու Ալի փաշա մզկիթի շադրվանը, մեդրեսեն, գրադարանը: Երբ հույներն ուզեցել են վերցնել Ս.Հակոբյանց վանքը Երուսաղեմում, նա և Հովհաննես Կոլոտ պատրիարքը ընդդիմացել են, որի համար երկուսն էլ բանտարկվել են: 6 շաբաթ անց սադրազամ Գյուրջու Մեհմեդ փաշային փոխարինած նորանշանակ Էսսեյիդ Մեհմեդ փաշան անիրավությունը վերացնում է, նրանց բանտից ազատում:

37. **Սարգիս խալֆա (-մահ՝ 1740 կամ 1737թ.),** արքունի ճարտարապետ: Գործել է 1719-1733թթ., կառուցել է Նևշեհիրի Դամադ Իբրահիմ փաշայի շքեղ մզկիթը: Միխառն Արապօղլու արքունի ճարտարապետի հետ միասին վերականգնել է 1718թ. Պատրիարքարանի հրդեհի զոհ գնացած եկեղեցին: 1727թ. Սկյուտարի Ս.Կարապետ եկեղեցին է վերակառուցել: 1730թ., 72 օրում, Մելխառն խալֆայի հետ միասին վերաշինել է 1729թ. Պալաթի հրդեհից կործանված Ս.Հրեշտակապետը՝ շատ ավելի գեղեցիկ ու մեծ: Այս նպատակի համար 160 դրոշ են հավաքել և 1000-ն էլ պարտքով վերցրել, վճարել 4 տարի: 1731թ. հրդեհված Պալաթիայի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին խալֆան վերակառուցել է հենց հաջորդ տարի:
38. **Զամբյուլ խալֆան** ծնունդով Կեսարիայի Նիրզե գյուղից է եղել: Նրա բոլոր՝ Հովսեփ արքեպիսկոպոսը, 1751թ. եղել է Եվդոկիայի առաջնորդ:
39. **Կյուզունեցի խալֆա**[14] (-1712) 17-րդ դարում գործունեություն ունեցած կեսարացի արքունի ճարտարապետ է եղել: Հովանավորել է որոշ երկրի հայերին բարեգործությունները:
40. **Աղամ խալֆա ( մահ՝ 1761թ.)**
41. **Ավագ խալֆա Կեսարացի (18-րդ դ.),** 1766թ. վերաշինել է երկրաշարժից քանդված Պոլսի վառոդարանը (Այա Իրինի): 1778թ. կառուցել է Էդիրնեի պալատը:
42. **Պողի խալֆա**[15](- 1725)
43. **Պողի Ռեսուլ (17-րդ դ.),** գործել է Ստամբուլում: Նրա մասին հիշվում է Երեմիա Քյոմուրճյանի 1653թ. մի գրության մեջ:
44. **Պողի Պալյան խալֆա (- 1725),** որոշ աղբյուրների համաձայն՝ Պալյան արքունի ճարտարապետների գերդաստանի նախապետն է: Ծագումով՝ Գարամանի Պելեն գյուղից է, որ Պոլիս է եկել, 1683թ. ամուսնացել է հայազգի արքունի ճարտարապետի դստեր հետ, ժառանգել ընտանիքի գործը:
45. **Մինաս խալֆա (-1730),** Պողի Պալյանի որդին, արքունի ճարտարապետ:
46. **Մակար Պալյան,** Մինաս Պալյանի որդին, արքունի ճարտարապետ: Նուրը Օսմանիե մզկիթի կառուցողը 1754թ.:
47. **Պողի խալֆա (Միրաներճի, -1803),** արքունի ճարտարապետ, ծագումով Կեսարիայի Դերեվանք գյուղից: Արքունի ճարտարապետներ Սենեքերիմ Պալյանի և Գրիգոր Պալյան ամիրայի հայրն է:

14 Այս ճարտարապետի անունը հիշում է Գ.Բամպուկճյանը (հ.4, էջ 212):
15 Գործերը հայտնի չեն: Նրա մասին հիշատակված է Երեմիայի մի «Ռուզնամե»-ում, Երեմիայի պատրիարք Մինաս Համդեցու արքեպիսկոպոսի 1700թ. մայիսի 14-ին Բեյոգլուից Վալիդե Սուլթանի հետ մի գրության օրվա մասին գրության մեջ, որ հիշվում է, որ Մայր Սուլթանը բակն է շնորհել նաև արքունի ճարտարապետ Պողի խալֆային:





48. **Սենեքերիմ Պալյան (-1835),** Միրաներճի Պողի խալֆայի որդին է, արքունի ճարտարապետ:
49. **Մինաս խալֆա,** արքունի ճարտարապետ, Գրիգոր Ամիրա Պալյանի աները: 1782թ. կեսարացի Հակոբ ամիրա Գյուլպալյանի հետ վերաշինել է 1804թ. հրդեհի զոհ դարձած Սամաթիայի Ս.Գևորգ պատրիարքանիստ եկեղեցին:
50. **Գրիգոր Պալյան (1764-1831),** Միրաներճի Պողի Խալֆայի որդին, արքունի ճարտարապետ:
51. **Կարապետ Պալյան (1800-1866),** Գրիգորի որդին, արքունի ճարտարապետ:
52. **Նիկողոս Պալյան (1826-1858),** Կարապետի որդին, արքունի ճարտարապետ:
53. **Սարգիս Պալյան (1835-1899),** Կարապետի որդին, արքունի ճարտարապետ:
54. **Հակոբ Պալյան (1838-1875),** Կարապետի որդին, արքունի ճարտարապետ:
55. **Պողի Պալյան խալֆա (1835-1911),** քանդակագործ, ճարտարապետ: Ծնվել է Կեսարիայի Թալաս գյուղում:
56. **Սարգիս խալֆա (Միրաներճի, -1796),** ճարտարապետ: Հայրը՝ Թորոսը, քահանա է եղել:
57. **Գալուստ խալֆա Միրաներճի (-1779),** ճարտարապետ: Կեսարիայի Դերեվանք գյուղից:
58. **Կյուրեղ խալֆա (-1806)**
59. **Գևորգ խալֆա**[16] **Սեֆերօղլու** (19-րդ դ. առաջին կես), արքունի ճարտարապետ:
60. **Հակոբ ամիրա Գյուլպալյան**[17], արքունի ճարտարապետ: Գործել է 1790-1808թթ.:
61. **Հակոբ Եղիազար(յան) Ադրիանապոլսեցի**[18] **(1738-1803),** արքունի ճարտարապետ, 1778թ բարոկկո ոճով կառուցել է Բեյլերբեյի Ռաբիա Գյուլնուշ Սուլթան Ջամին (Իսկելե ջամին, մզկիթը), մեդրեսեն, բաղնիքը ու համալիրի այլ շինությունները: Նա օսմանյան ճարտարապետության պատմության մեջ հիշվում է Ստամբուլի մզկիթների ճարտարապետների շարքում:
62. **Սերվերյան Հովհաննես ամիրա (Գևորգյան, 1786-1858),** Գրիգոր Պալյանի (1786 -1858) փեսան: Արքունի ճարտարապետ:
63. **Սերվերյան Հարություն (1822-1889),** արքունի ճարտարապետ:
64. **Սերվերյան Գրիգոր (-1864),** ճարտարապետ:
65. **Զյուրեկյան Տիգրան** (19-րդ դ.), արքունի ճարտարապետ:
66. **Օսյան Պողոս ամիրա (1795-1862),** արքունի ճարտարապետ:
67. **Միհրան խալֆա Աստվածատուրյան (-1857)**
68. **Կիրակոս Օսյան (1804-1866),** արքունի ճարտարապետ Բալուի Հավավ գյուղից:
69. **Սարգիս Մարգմանյան Մահտեսի (1807-1897),** ճարտարապետ և արքունի համամբաշի (բաղնեպանապետ), որդին Սյունյաց աշխարհից Ազնավուրյանց Մահտեսի Սուքիասի, ծնված Խարբերդի Էչնե գյուղում:

16 Նա է ավարտին հասցրել Գրիգոր Պալյանի կողմից դեռևս 1826թ. նախագծած «Տերսանե Քոշկի Քյոշկը»-ն: Այս հրաշալի կառույցի վերաշինման համար նա և նրա 40 գործակիցները Ֆինանսների նախարարությունից դրամական պարգևի են արժանացել: 1841թ կառուցել նաև Հայդարփաշայի զորանոցը:
17 Մինաս խալֆայի հետ միասին 1804թ. վերակառուցել է 1782թ. հրդեհի զոհ դարձած Սամաթիայի Ս.Գևորգ եկեղեցին:
18 Նրա անունը հիշվում է 1800թ. Բեյլերբեյի Հակոբ ամիրայի տանը տեղի ունեցած մի խնջույքի, Պատրիարքարանի մի ժողովի հիշատակության ժամանակ, **Բարթուղիմեոս Կապուտիկյան** (1749-1809) արքեպիսկոպոսի Էջմիածնի կաթողիկոս ընտրվելու առիթով: Նրա գործերից են Ռաբիա Սուլթանի կամ Իսկելե մզկիթը, մեդրեսեն: Նա այդ կառույցի նաև գլխավոր, բաղնիքի ճարտարապետն է եղել:

**70. Սենիքերիմ խալֆա Կարապետյան (1817–1892),** արքունի ճարտարապետ: 1863-73թթ. կառուցել է Այա-Սոֆիան շրջապատող պատերը:

**71. Երանոս ուստա Խարբերդցի (-1840),** վերակառուցել է Աքնի Ս.Աստվածածին եկեղեցին:

**72. Տեվլեթ (19-րդ դ.),** ճարտարապետ: 1801թ. նորոգել է Քարթալի եկեղեցին, Պեզճյան ամիրայի առաջարկով[19] և Տյուզյանների ծախսով դպրոց ու աղբյուր է շինել:

**73. Նշան Խալֆա,** Պալաթի եկեղեցու ճարտարապետը:

**74. Գրիգոր Ներսեսյան (1827-1890)**

**75. Ներսես Ներսեսյան (1856-1890)[20],** Գրիգորի զավակը:

**76. Պետրոս Նեմցե (1830-1893),** բալուցի արքունի ճարտարապետ: Հակոբ Պալյանի աշակերտներից է: 1870թ. Հակոբ Պալյանի միջոցներով Օրթաքեոյի թատրոնի շենքի, Սամաթիայի այրված, 1866թ. վերականգնված Ս.Գևորգ եկեղեցու ճարտարապետն է: Մասնակցել է Բեյլերբեյի և Չրաղան պալատների նախագծման ու կառուցման աշխատանքներին: Իզմիրում կառուցել է ֆրանսիական հոգևոր դպրոց:

**77. Գրիգոր խալֆա Մելիտոսյան** (1845-1914)[21]

**78. Գևորգ Ազնավուրյան (1849-1922),** պետական ճարտարապետ, էջիպտոլոգ: Կրթությունը ստացել է Փարիզում: Եղել է Հայդարփաշա-Իզմիթ երկաթուղու առաջին խճեններ ճարտարապետը: 1892-1899թթ.՝ սուլթանի Անձնական գանձարանի խորհրդական, Համբողոսի շինությունների նախարարության Կամուրջների և ճայրուղիների բաժնի տնօրեն: 1901-03թթ. Ստամբուլի ջրային տնտեսության տնօրենն է եղել: 1904-08թթ.՝ Հայդարփաշայի նավահանգստի կոմիսեր: 1910-ին հանգստյան է կոչվել:

**79. Հովսեփ Ազնավուր (1854-1932)[22]**

**80. Կարապետ խալֆա Սիմիոնյան,** 1882թ. նորոգի շինում է 1881թ. այրված Ռոդոսչուքի Ս.Փրկիչ հայկական եկեղեցին:

**81. Բիլեզիկճյան Արթին[23](19-րդ դ.)**

**82. Սահրադ խալֆա (19-րդ դ.),** 1843թ.կառուցել է Վանի Նարեկ գյուղի ս.Աստվածածնի զանգակատունը:

**83. Միհրան Թենքըրյան,** արքունի ճարտարապետ, կառուցել է Բերայի «Արևելյան կլոբի» եռևում գտնվող «Նոր թատրոնը»: 1884թ. բացվել է Յըլըզի պալատի մոտ նրա կառուցած Օրհանիյե մզկիթը:

**84. Գարբիել Միրոշյան (1857-1909),** արքունի ճարտարապետ և արքունի նկարիչ: Կառուցել է Ֆևզիյե մզկիթը Իզմիրում:

19 Գ.Բամպուկճյանը հիշատակում է **Դեվլեթյան Հովհաննես** անունով 18-19դդ. մի նկարչի, որը հայկական եկեղեցիներում յուղաներկ աշխատանքներ է կատարել (հ.4, էջ 211):

20 Հայազգի ճարտարապետներն իրենց կնիքն են թողել նորաստեղծ շատ հայկական գաղթավայրերում: **Արզումանի խալֆան** 1669-70թթ. Կրետեում շինել է սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին՝ առաջինը Հունաստանում:
Հռոմից հրավիրված **Աչիբաուն** հայազգի ճարտարապետը 1675թ. կազմում է Մակեդոնիա-Տրանսիլվանիայում հայերի կողմից հիմնադրված «Արմենոպոլիս» գյուղի պլանը, հատակագիծը: Այս գյուղը հայտնի է նաև Գեռլա անվամբ: Այստեղի իշխան Միխայել Աբաֆի Ա-ն հայ վաճառականներին բազմ հնարավորություններ է ընձեռնել, հատատուել նրանց ունեցվածքի ապահովությունը:

21 Նորոգել է 1913թ. Գումգափուի այրված Պատրիարքարանը, Ս.Փրկիչ Ազգային հիվանդանոցում կառուցել է Գյուլբենկյան պավիլյոնը:

22 Կառուցել է Ֆրանսիական թատրոնը: Մանրամասն տես հետագա էջերում, նրան նվիրված մասում:

23 1840թ.Պոլսի Բեյազիդ Մեյդանում Թանզիմաթին նվիրված մի հուշարձանի ծրագրի հեղինակն է:





**85. Պրոֆ. Լևոն Կյուրեղյան (1869-1950)[24],** ճարտարապետ, գիտնական:

**86. Ազնավուրյան Հովհաննես (1870-1940)[25],** կառուցել է Օսմանյան բանակի գլխավոր շտաբի շենքը:

**87. Պետրոս խալֆա Ազարյան (-1905),** Միհրան Ազարյանի հայրն է: Տներ է կառուցել Իզմիրում, Պարտիզակում, Ստամբուլում:

**88. Միհրան Ազարյան (1876-1952),** կառուցել է Իզմիրի ժամացույցի աշտարակը, Մեծ կղզու նավահանգիստը 1914-15թթ.:

**89. Սարգիս Էլյաս Լոլ,** 19դ. վերջին գործել է Մադրիդում[26]:

**90. Կարապոլյան Կարապետ խալֆա (19-20դդ.)** էվերեկցի:

**91. Էդհեմ Նուրիջան,** Սիրքեճիյում Արամ և Սարգիս Քնանյանների խանի ճարտարապետն է: Սիրքեճիյում գտնվող Մյուզեի Օսմանի (Գեղարվեստից դպրոցի) շենքը կառուցել է ճարտարապետ **Միշել Նուրիջանը**:

**92. Ստեփան Համամճյան** – կառուցել է բազմաթիվ հայտնի խաներ քաղաքի կենտրոնական թաղերում:

* * *

Պոլսահայ ճարտարապետության փառքերից է համարվում Պալյանների արքունի ճարտարապետների գերդաստանը, որի շնորհիվ Ստամբուլը հարստացավ խոշոր չափերի շինություններով, լինեին դրանք եվրոպական ոճի պալատներ, զինվորական շենքեր, կայարաններ թե նավահանգիստներ: Արքունի այս ամիրայական գերդաստանի գործունեությանը նվիրված լավագույն ուսումնասիրությունը մեր ժամանակակից պոլսահայ նշանավոր գիտնական Բարսեղ Թուղլաճ(յան)ի աշխատասիրությունն է[27]:

**Պալյանները (18-20-րդ դդ.)** արքունի ճարտարապետների փառավոր գերդաստան է: 7 սերունդ ճարտարապետներ են եղել: Շուրջ երեք դար շարունակ, Պալյաններից 9-ը վարել են արքունի ու պետական շինարարության գլխավոր ճարտարապետների բարձր պաշտոնը, ծառայելով 6 սուլթանների, իրենց հուշակերտները թողնելով ոչ միայն օսմանյան մայրաքաղաքում, այլև ողջ կայսրության տարածքում, պետական, ու բազմաթիվ հասարակական կառույցներով շեն պահելով ու զարգացնելով նաև հայկական ճարտարապետության ավանդույթները, դառնալով եվրոպական ճարտարապետական ոճերի, իրենց կառույցներում, մասնավորապես բարոկկոյի, ամպիրի ներբին և արտաքին արտահայտության զարգացնողը, ներմուծողն ու սկզբնավորողը, խոշոր չափերի կառույցների (զորանոցներ, ֆաբրիկաներ) հեղինակները: Պալյանները նշանավոր ու հին ծագում ունեցող գերդաստան են[28]: Առաջիններից հիշվում է **Պալի խալֆա Պալյանը (-1725),** Մարաշի և Սսի միջև գտնվող

24 1904թ. «Բանկ Օտոմանի»-ի տնօրեն Պանդելլին ճարտարապետ պրոֆ. **Լևոն Կյուրեղյանին** պատվիրում է Գրանդշատոյու պողոտայում իր համար բնակարան կառուցել:

25 Sba 1901թ. Ս.Փրկիչ Ազգային հիվանդանոցի Տարեգրքը:

26 Cumhuriyet, 2 ekim 2009. 2010 թ. Մադրիդում նրա անունով փողոց է անվանակոչվել:

27 Pars Tuğlacı. *Osmanlı Mimarlığında Batılaşma Dönemi ve Balyan ailesi.* Ist. 1981.

28 Պալյան գերդաստանի մասին բազմաթիվ ստույգ տվյալներ գոյություն ունեն: Դեռևս Սեն Մարտենն իր «Հայոց պատմության» մեջ նշում է, որ 15-րդ դարի երկրորդ կեսին, Մարաշի ու Սսի միջև գտնվող նրանց հիմնադրած Պալի գյուղին նրանք տվել են իրենց գերդաստանի անունը:

փորություն վայելող որոշ հայեր, քսու զրպարտության զոհ դառնալով[32], աքսորվել է Կեսարիա, որ իր ծախսով սրբավայր է կառուցել: Այնտեղ Գազազ Արթինի օգնությամբ կառուցել է Ս.Խաչ եկեղեցին: Կեսարիայից իր ծանոթ մի ամիրայի միջոցով սուլթանին պաստառ է (թաստամա) ուղարկում, որը շատ դուր է գալիս սուլթանի քիմքին: Գազազ Արթին ամիրան իր եռանդուն միջնորդությամբ նպաստում է, որ աքսորից ետ կանչեն Գրիգորին, որն այսպիսով վերադառնում է իր նախկին դիրքին ու փառքին: «Գիտեի, որ մի շերտ պաստառ օգտագործելով մուկ են բռնում, սակայն մտքովս բնավ չէր անցնում, որ մարդ էլ կազատվի դրանով», - կատակել էր սուլթանը: Վերադառնալով պալատ, կրկին շահում է սուլթանի մտերմությունն ու վստահությունը: Նրա նախագծով են կառուցվել Սարայ Բուրնուի հին պալատը (1875-ին այրված), Պեշիկթաշի պալատը, որի տեղը կառուցվեցին Չրաղանի և Դոլմաբահչեի ապարանքները[33], Բեյլերբեյի, ու Բոսֆորի երկու եզերքների պալատները, Արնավուտքեոյի Վալիդե Սուլթանի պալատը, Հալիչում գտնվող ֆինանսների պալատը, Թոփխանեի մզկիթը, Սելիմիեի և Դավութ փաշայի զորանոցները, փողերանոցը, Դեֆթերդարի սուլթանանիստը, սուլթան Մահմուդի ջրամբարը, զինվորական վարժարանները, Ըհլամուրի ապարանքը, Նուսրեթիյե մզկիթը Թոփխանեյում, Բեյազեդի Հրդեհի հին աշտարակը: Նա իր եղբոր՝ Սենեքերիմի հետ, դամբարաններ կառուցելու արտոնություն է ունեցել: Պետությանն իր մատուցած ծառայությունների համար արժանացել է բազմաթիվ շնորհների՝ զերծ է եղել բոլոր այն տուրքերից, որոնց ենթակա են եղել ոչ մահմեդականները:


«Բեյազեդ Սերասկեր» հրդեհի աշտարակը (ճարտ. Սենեքերիմ ամիրա Պալյան)

**Սենեքերիմ ամիրա Պալյան (- 1835),** Պալի Պալյանի երրորդ որդին է: Արքունի այս ճարտարապետի անվան հետ կապված հայտնի քիչ գործ է հիշվում: Ամենահայտնին «Բեյազեդ Սերասկեր» հրդեհի 85 մետրանոց աշտարակն է (1828թ.), որ գտնվում է Ստամբուլի համալսարանի այգում:

**Կարապետ ամիրա (1800-1866),** Գրիգորի որդին է, արքունի ճարտարապետներ Նիկողոսի, Հակոբի, Սարգիսի և Սիմոնի հայրը: Երբ հայրը՝ Գրիգոր խալֆան, վախճանվեց, ենիչերիները փորձեցին ձեռք գցել այս պաշտոնը, սակայն սուլթան Մահմուդ Բ-ն նրան և նրա փեսային՝ Հովհաննես Ամիրա Սերվերյանին, «արքայական

32 Միաժամանակ 1821թ. Սարըֆ կոչի են աքսորվել սեղանավորների պետ Ապլաժըրթլը Կարապետը, ձեռնարկատեր Իսկյուդարլը Միքայելը: Մինչ այդ աքսորվել էր **Պեզճյան Գազազ Արթին** ամիրան: 1825թ. Անկարա էր աքսորվել վաստակաշատ **Միհրան ամիրա Տատյանը**:

33 Ստամբուլահայ ժամանակակից հայտնի գիտնական, բառարանագիր, օսմանյան ու հայկական մշակույթների մասին մի շարք կարևորագույն աշխատությունների հեղինակ **Բարս Թուղլաջը (Բարսեղ Թուղլաճյանը)** Պալյան արքունի ճարտարապետների գերդաստանին նվիրված իր աշխատության մեջ ներկայացնում է այս գերդաստանի ու նրանց ստեղծած կառույցների պատմությունը: Գրիգոր ամիրայի մասին բաժնում 20 հայտնի կառույցների մասին է խոսվում, որոնց մի մասը մինչ օրս կանգուն են (Pars Tuğlacı, *Osmanlı Mimarlığına Batılaşma Dönemi ve Balyan ailesi*, Ist. 19814 s.9-48.)





ճարտարապետներ» նշանակեց: Կարապետ Պալյանի հետագա գործունեությունն իր որդի Նիկողոսի հետ՝ մեծ համբավ բերեց նրանց: Երեք սուլթանների է ծառայել՝ Մահմուդ Բ, Աբդուլմեջիդ, Աբդուլազիզ: 26-ից ավել խոշոր գործեր են հայտնի՝ Չրաղանի նախկին պալատը (1843), սուլթան Մահմուդի և սուլթան Մեջիդի դամբարանները, Էյուբի զույգ պալատները, Դոլմաբահչեի կայսերական պալատը, Բեյլերբեյի պալատը, որ ենիչերիներն այրեցին, Վալիդե Սուլթանի ապարանքը, Այա Ստեֆանի ապարանքը, Ցիրըգի հին ապարանքը, Ցեչիրանի պալատը, Մաքրըգյուղի գործարանը, Բաքըրքեոյի մանածագործարանը, Զեյթինբուռնուի երկաթի գործարանը, Իզմիթի Հյունքյար Քասրը Հյումայունու կայսերական պալատը, որը որպես թանգարան է ծառայել, Իզմիթի չոխայի և լարերի (ճոպան կապերի) ֆաբրիկաները, Բաքըրքեոյի ամբարտակը, Բանկալթըի զինվորական վարժարանը, Մեջիդի հին, այսօրվա Ակադեմիայի շենքը, Օրթաքեոյի մզկիթը, Պեշիկթաշի եկեղեցին: Պողոս Տատյան ամիրայի հետ նորոգել է Ս.Հակոբի եկեղեցին, կառուցելով շրջակա շենքերը: Սուլթան Աբդուլմեջիդը պարգևատրել է 180 պետական կառույցների իր հեղինակով և յուրաքանչյուրի ավարտից հետո 5000 ոսկի նվեր տվել նրան: Այցելել է Անգլի-ամերիկաները, ձգտելով լավագույնս ճանաչել հայկական ճարտարապետությունն ու օգուտ քաղել հայկական ճարտարապետական ձևերից: Զավակները՝ Հակոբը, Նիկողայոսը, Սարգիսը և Սիմոնը, հրաշալի կրթություն են ստացել Եվրոպայում, եղել են արքունի ճարտարապետներ:


Կայսերական ապարանք Թարաբիայում

Պալյանների կերտածը նշանավոր է նաև այն առումով, որ հեղինակել է բազմաթիվ պետական նշանակության խոշոր կառույցներ՝ զորանոցներ, զինվորական


Կայսերական ապարանք «Ըհլամուր» (Պեշիկթաշի և Նշանթաշի միջև)

## Պալյանների կառուցած ապարանքները Պոլսում և այլ քաղաքներում















## Տեսարաններ «Դոլմաբահչե» պալատից















«Դոլմաբահչե» պալատի բյուրեղապակե աստիճանները



«Դոլմաբահչե» պալատի մարմարե լողասենյակը



Օրթաքյոյի մզկիթը









Ապարանք Բեյքոզում

կառույցներ ու հիվանդանոցներ, պետական կառավարման շենքեր, ուսումնական կրթական հաստատություններ, ֆաբրիկաներ և այլն: 1850թ. Կարապետ խալֆա Պալյանը կառուցում է Ցամաքային հինգերորդական պետական վարժարանը, որի բացման արարողությանը սուլթանի կողմից հատուկ շնորհի է արժանանում: Հովհաննես ամիրա Սերվերյանի հետ միասին կառուցել են Յեդիքուլեի Ս.Փրկիչ ազգային հայկական հայանի հիվանդանոցը (1832): Մյուս հայտնի գործերից են Պեշիկթաշի հայկական եկեղեցին (1838)[34], Սկյուտարի ճեմարանը, Բանդրմայի Ս.Սարգիս եկեղեցին: 1859-ին Եալովայի իր հասույթաբեր կալվածքները կտակում է ազգին, հօգուտ նոր սերնդի զարգացման: 9 զավակ է ունեցել, որոնք կրթվել են հիմնականում Եվրոպայում: Նրա՝ արքունի ճարտարապետի տիտղոսը ժառանգել է Նիկողոս որդին: Պատրիարքարանի Հոգևոր և Գերագույն ժողովների կազմակերպիչ ու անդամ էր: Ընդհանրապես, այսպիսի պատվական գերդաստանների զավակները հաճախ բարեկամանում էին միմյանց հետ իրենց ամուսնություններով, նորանոր տաղանդավոր զավակներ պարգևելով ազգին[35]:

1886թ. Կահիրեում Արդարադատության պալատի կառուցումը Նուպար փաշան հանձնարարում է ճարտարապետ Կարապետ Պալյանին:

1895թ. Դոլմաբահչեի մուտքի պարտեզում, Կարապետ ու Նիկողոս Պալյանների կառուցած Ժամացույցի աշտարակում մեծ շուքով տեղադրվում է Եվրոպայից բերված ժամացույցը:

Հերեքեի մանածագործական ֆաբրիկան, որ հիմնել էր Կարապետ Պալյանը, իր մեջ ներառում էր բամբակի, բրդի ու մետաքսե կտորեղենների մանածագործական բուն մասը և կարող բաժինները, գորգագործական արտադրամասը: Կտորեղենի ու գորգերի գունազարդման և նախշազարդման գործը Պալյան արվեստագետների կողմից հատուկ ծրագրված բնույթ ուներ: Մինչ այս ֆաբրիկայում աշխատանքի անցնելը, մասնավորապես գավառներից եկած հայ աղջիկները ու կանայք, անցնում էին ուսումնառության պարտադիր շրջան:

34 Պեշիկթաշի Սբ.Աստվածածին խոշորակերտ եկեղեցին յուրօրինակներից է Կ.Պոլսի եկեղեցիներից: Եվրոպական ճաշակով ու իր շքեղությամբ նման է արքայական եկեղեցու: Դոլմաբահչեի պալատի շինարարությունից ավելացած քարերը սուլթանը թույլ է տվել իր հայազգի ճարտարապետներին օգտագործել՝ կառուցելու համար պալատին մոտիկ, Պեշիկթաշ հայկական թաղամասի այս եկեղեցին, որը դրսից շատ անշուք ու փոքրիկ է՝ անմիջապես պատի ետևը:

35 Կարապետ ամիրայի թոռը՝ Սարգիսը, ամուսնացել էր Տատյան Առաքել ամիրայի Մարթայի դստեր հետ, որը հայտնի դաշնակահարուհու համբավ է ունեցել, ամուսնու հետ հիմնադրել են «Մայր Արաքսի» երգչախումբը:



«Դոլմաբահչե» պալատի թատրոնը
(փորագրանկարը Ա.Ժոզրենի)

Գալով կարող արտադրամասին, ապա ասրի «Զինգեր» կարի մեքենաները եվրոպական վերջին նորույթն էր, որ ամիրաները բերել էին տալիս իրենց ֆաբրիկայի համար: Այս ֆաբրիկայի արտադրանքը վաճառելու համար մասնագիտացված խանութ ունեին, «Հերեքեի ֆաբրիկայի մանուֆակտուրա» ֆրանսերեն ու օսմաներեն ազդագրով: Ապակե մեծ ու ճաշակով ցուցափեղկի ետևում, եվրոպական կոստյումներով ու «բիքեռնիկ» փողկապներով աշխատակիցները կարիերի մեծ ընտրություն առաջարկող նմուշներ էին ցուցադրում: Աբդուլլահ եղբայրների լուսանկարչական ալբոմում պահպանվել են այս խանութի և ֆաբրիկայի տարբեր բաժինների լուսանկարները:

**Նիկողոս (1826-1858),** մասնագիտական կրթությունը ստացել է Իտալիայում և Ֆրանսիայում, ուր ուղարկվել էր 17 տարեկանից: 2 տարի սովորել է ***St.Barb*** դպրոցի ճարտարապետական դասընթացներում: Նրա գործերը նոր հռչակ են բերել Պալյան գերդաստանին: Եվրոպական վերածննդի դպրոցի այս երկրպագուն Թուրքիա ներմուծեց եվրոպական ճաշակով հսկա շինությունները: Նա կարևորագույն մի գործի սկիզբ դրեց: Այն է՝ իր ազգակիցներից պատրաստել ճարտարապետության ու շինարարության հետ առնչվող ամենատարբեր արհեստավորներ: Եվրոպայից բերած նրա քանդակագործները, հյուսները ու դարբինները՝ մի առանձին տարածքում հայ երիտասարդներին էին փոխանցում եվրոպական առաջադիմությամբ շաղախված արհեստները ու արվեստները: Նույն այդ փայլում թունդ ազգասեր Նիկողոս ամիրան ճարտարապետության հիմունքներ էր դասավանդում նրանց: Հետզհետե վեր բարձրացող հոյակապ շինությունները նրան սիրելի են դարձնում օսմանյան պալատին ու նրա տիրակալներին: Աբդուլմեջիդը նրան չի զլանում պարգևել սուլթանական բազմաթիվ շնորհներ: Գործերից են (իր հետ գործակցելով)՝ Յանգըն Քեոշքը(Հրդեհի աշտարակը) Բեյազիդում, գլուխգործոցը Չրաղան պալատի նախակազմը (կառուցել են Սարգիսը և Հակոբը), Թոփհանեի աշտարակը, Օրթագյուղի և Չրաղանի մզկիթները, Դոլմաբահչեի ընդունելության սրահը, պալատակը, Ըխլամուրի, Գյոք-Սուի և Բեյքոզի ապարանքները, Գալաթասարայի լիցեյը, Գանտիլլիի սուլթանական պալատները: Սրանցից ամենահոյակապի՝ Դոլմաբահչեի կառուցումը 18 տարի է տևել: Եվրոպայից տարբեր մասնագետներ է բերել, որոնք հայ արհեստավորների մասնագիտացրել են տարբեր ճյուղերում: Շատ երիտասարդ է մահանում: Սուլթան Աբդուլմեջիդը, լսելով նրա մահվան գույժը, փղձկալով ի նշան մեծ վշտի հրամայում է 3 գիշեր դադարեցնել պալատի լուսավորությունը:





1852թ. Նիկողոս Պալյան ճարտարապետը Գումգափուի Ուսումնասիրաց ընկերության համար մի գրադարան է հիմնադրել Փարուչչու խանում և մոտ 1000 կտոր գիրք նվիրել:

1910թ. 5 ժամվա ընթացքում այրվում է Նիկողոս Պալյանի կառուցած Չրաղանի հրաշակերտ պալատը, որ պառլամենտում էր նստում: Հրդեհվում է վառարանից թռած կրակից:

Նիկողոս Պալյանի որդին՝ **Լևոն Պալյանը** ևս արքունի ճարտարապետ է եղել: Կրթությունը ստացել է Փարիզի Գեղարվեստից դպրոցում: Օսմանյան պալատում ծառայած վերջին ճարտարապետն է եղել:

**Սարգիս Պալյանը (1835-1899)** բարձրագույն կրթությունը ստացել է Ֆրանսիայում, «Սեն Բարբ», «Էքոլ Սանթրալ» և Գեղարվեստի վարժարանների արհեստների ու արվեստի, մեխանիկայի բաժիններում: 1855թ. վերադարձել է ծննդավայր: 1864 թվականից եղբոր՝ Հակոբի հետ միասին եղել են Աբդուլազիզ սուլթանի արքունի ճարտարապետները: Գործերից են՝ Բեյլերբեյի, Չրաղանի նոր պալատները, Գանտիլլիի, Աջիլե Սուլթանի, Բալթա-լիմանի ծովափնյա ապարանքները, Գալենտերի, Քյաղըթհանեի, Այազ-Աղայի, Բեյքոզի, Թոքաթի, Թոփ Գափուի, Ալեմդաղի, Իզմիրի կայսերական, Բալմանի, Հեքիմբաշիի ապարակները և Յըլդըզի ապարանքները[36], Յուսուֆ Իզզեդին փաշայի Զինջիրլիկույուի որսորդական դղյակը և այլն: Սելիմիյե, Համիդիյե, Փերթևնիյալ Վալիդե Սուլթանի մզկիթները Աքսարայում և Սարայ-Բուրնուի ռազմամթերանոցը, Մերջիմ դաիրեսին, պատերազմական ու ծովային նախարարությունների շենքերը, Մաչքայի Քըշլան և Միլահխանեն (զինանոցը), Պեշիքթաշի «Ագարեթլեր» կոչված 80 համանման տների շարքը և Մաքրուհյաց վարժարանը: Իր ձեռակերտն է համարվում Բոսֆորի եվրոպական ափի մոտ տեղադրված Գուրուչեշմեի արհեստական կղզյակը[37], որը նրա գիտական երևակայության սքանչելի իրականացումներից է: Ֆրանսիայի Էժենի կայսրուհու 1868թ. այցելության առթիվ 3 շաբաթվա ընթացքում կառուցվել է Բեյքոզի Թոքաթ պալատը (Թիֆրյան): Հիացած թագուհուց երկու եղբայրները ստացել են թանկարժեք նվերներ: 1859թ. Սելանիկում սուլթան Աբդուլմեջիդի համար մեկ գիշերվա մեջ շինել է «5 շինար» մարմարե աղբյուրը: Պեշիկթաշի Սբ.Աստվածածնայի եկեղեցու դիմաց՝ ի հիշատակ իր կնոջ, իր



Սարգիս Պալյան
(գործ Պետրոս Արապյանի)

36 Յըլդըզ պալատի Արաբական սալոնը:
37 1900թ. Սարգիս Պալյանի Քուրուչեշմեի արհեստական կղզյակը Ծովային նախարարությունը գնեց:


Ապարանք Բեյքոզում, որ կառուցվել է Ֆրանսիայի Էժենի թագուհու այցելության առթիվ

ծախսով կառուցել է Մաքրուհյաց ազգային վարժարանը, որն այսօր լքյալ վիճակում է:

1883թ. «Պալյան» հոմաց աղջկանց վարժարանն իր դասերը սկսել է արքունի ճարտարապետ Սարգիս Պալյանի տան հյուրերի բաժնում:

1886թ. Սարգիս Պալյանի կողմից կառուցվում են Յըլդըզի Չադըր քյոշքը, Չալըյալի քյոշքը և ատաղձագործական արհեստանոցը: 1895թ. Քոչարբաշում Սարգիս Պալյանը կառուցում է Աբրահամ փաշայի ամառանոցը: 1906թ. Սարգիս Պալյանի կողմից վերակառուցվում է Գալաթասարայի կայսերական զինվորական դպրոցը, որ հրդեհից վնասվել էր:

Նրա մասին ասվում է, որ ավելի շատ գիտությունների մեծ սիրահար է եղել, քան ճշմարիտ ճարտարապետ: Տաղանդավոր ինժեներ-մեխանիկ էր: Իր հնարած զանազան հաստոցների համար ստացել է բազմաթիվ վկայականներ[38]: 1878թ. հիմնել է «Շիրքեթի Նաֆիայի Օսմանի» շինարարական ընկերությունը: Նրան երկաթուղիներ կառուցելու 35 տարվա իրավունք է տրվել: Երկու եղբայրների ղեկավարության ներքո 6000 արհեստավորներ են աշխատել: Նրա արվեստով հիացած ազդած օտար վեհապետների կողմից պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով: Բավարիայի և Ավստրիայի միապետի կողմից ստացել է 2-րդ աստիճանի *Couronne de Fer* շքանշան, գերմանական Վիլհելմ Բ կայսեր կողմից՝ *Couronne de Prus*, ռուսական ցարի կողմից՝ *St. Svyatoslav* ու օսմանյան սուլթանների կողմից՝ *Liyakat Madalyası* և *Imtiyaz*. Աբդուլհամիդ Բ-ի կողմից 1874թ.՝ 2-րդ աստիճանի *Osmaniye*, իսկ 1894թ. Պարսկաստանի շահի կողմից *Şir-ü Hurşid* է ստացել:

Նրա տունը ֆրանսիական երևելի սալոնների նման հյուրընկալել է պոլսահայ մտավորականությանը, հայ երևելիներին, արվեստասերներին ու արվեստագետներին, Պոլսի բարձրաշխարհիկ հասարակությանը: Նրա տան ու հավաքույթների մթնոլորտը բազմաթիվ արվեստի գործերի, երաժշտական ստեղծագործությունների ներշնչման վայր է հանդիսացել: Երբ 1898թ. Գերմանիայի թագավոր Վիլհելմ Բ-ն Վիկտորիա-Ավգուս-


Սարգիս Պալյանի կնիքը

38 Լոնդոնի միջազգային ցուցահանդեսում նրա «պտտվող շոգենիքենան» արժանացել է մրցանակի: Այս և նույն գլանի նրա կատարելագործած «Չպայթող շոգեկաթսան» 1862թ. անգլիական կառավարության կողմից վկայականներ են ստացել ու լայնորեն կիրառվում են: Կարծում եմ, որ սա խոսանցի մեջ ծանոթ շոգեկաթսան է:






Փերթևնիալ սուլթանուհու մզկիթը Աքսարայում






Ապարանք Յըլդըզում


Սարգիս Պալյանի Կ.Պոլսում կառուցած ապարանքները

տա թագուհու հետ Պոլիս է այցելում, հյուրընկալվում է արքունի ճարտարապետ Սարգիս Պալյանի Հերեքի ապարանքում: Արևելյան այս շրջագայության ժամանակ Վիլհելմ Բ-ն Երուսաղեմում թագուհու հետ միասին այցելում է հայկական Ս.Հակոբյանց վանք: Սարգիս Պալյանը հյուրընկալել է մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն նրա մի քանի այցելությունների ժամանակ:

Սարգիս Պալյանին շնորհվել է *Ulay* (1867) և *Bala* (1872) բարձրագույն աստիճանները: 1872-1874թթ. Եվրոպական մամուլը հիացմունքով է գրել նրա մասին: "*Le Mond Illustré*" ֆրանսիական պատկերազարդ հանդեսը տպագրել է նրա նկարը ու մեծ գնահատանքով գրել նրա մասին: Լավ դաշնակահար է եղել, գեղարվեստի սիրահար ու մեկենաս: Գրել է «Մայր Արաքսի» համար երաժշտություն, նաև «Քրիստափոր Կոլումբոս» օպերան: Մեծ ընդունելություններով պատվել է մեծանուն ծովանկարիչ Այվազովսկուն, նրա Պոլիս կատարած մի քանի այցելությունների ընթացքում, ընդունելով նրան Բեբեկի իր պալատանման բնակարանում, ուղեկցել սուլթանական պալատ՝ ընդունելության: Սարգիս Պալյանը, որ գեղեցիկի մեծ սիրահար է եղել, մյուս ամիրաների նման իր տան կահույքի մի մասը եվրոպական ոճերի վերջին նորաձևության իրերից է կազմել: Նրանց կառուցած պալատների ու ապարանքների կահավորումը նմանվել է ու ֆրանսիական պալատներից ոչ պակաս նորաձև է եղել: Վերսալյան շքեղությանը չզիջող արվեստի գործերով զարդարված դահլիճները՝ թանկարժեք բյուրեղապակե ջահերով, նկարներով ու գորգերով պատված, հիացմունք են առաջացնում մինչ օրս: Թանկարժեք տարբեր կտորեղեններ՝ վարագույրների, կահույքի երեսապատման, բարձերի ու ամենատարբեր ծածկոցների տեսքով, պալատների շռայլ շքեղության կարևոր մասն են կազմել: Կարևորագույն հանգամանք է, որ Եվրոպայից ներմուծվող շատ ու շատ իրեր Պոլսի վարպետները փորձել են կրկնօրինակել մասնագիտացված արհեստանոցներում, որոնց մի մասը հենց Պալյաններն էին կազմակերպել և աշխատեցնում: Բազմաթիվ արվեստներ ու արհեստներ նոր, եվրոպական ու նրան նմանվող դիմագիծ ստացան, որ Պալյանների կողմից հրավիրված մասնագետները ոչ միայն պալատների ու ապարանքների համար էին աշխատում, այլև սովորեցնում էին իրենց վարպետության գաղտնիքները նոր ստեղծված արհեստանոցներում: Հեռատես խնամատարությամբ ձեռնարկված մի ծրագիր, որը Ստամբուլի համար մինչ օրս ապահովել է լավագույն արհեստավորների քաղաքներից մեկը լինելու համբավը: Գեղեցիկ ու ճաշակով թանկարժեք իրերը դարձան կայսրության քաղաքային ու բարձրաշխարհիկ խավի կենցաղի մի կարևոր մասը:

Հայ համայնքային գործերում Սարգիս Պալյանը զիջել է իր ցեղի նախորդներին: Մի ամբաստանության պատճառով աքսորված է եղել 15 տարի դեգերել Եվրոպայում, ապա վերադարձել, շնորհիվ Գազազյան Հակոբ փաշայի բարեխոսության: Նա այդպես էլ չի կարողացել գանձել կառավարությունից իրեն պարտք եղած միլիոնները և մեկուսացած, համարյա թշվառ մահ է ունեցել Քուրուչեշմեի՝ ծովի վրա իր ստեղծած արհեստական կղզյակի վրա, իրեն նվիրելով գիտությանը: Աշխատել է գյուտերի, մեքենագիտության վրա, ունենալով կանոնավոր աշխատանոց, բնագիտական ու քիմիական փորձանոցներ՝ հագեցված ժամանակի կատարյալ գործիքներով՝ երբ նրանց՝ Պալյան գերդաստանի գլուխգործոցները, Պոլսի փառքն ու պարծանքը կազմող հոյակերտները մայրաքաղաքը ճաշակի ու արվեստի նորությամբ էին փառավորել... Նրա մահվամբ լրանում է Պալյան գերդաստանի ավելի քան





300-ամյա անօրինակ նվիրումն ու ներդրումը Պոլսո ճարտարապետության, համայն ճարտարապետական մշակույթին:

**Հակոբ բեյը (1838-1875),** Կարապետ ամիրայի 5-րդ որդին է, վաղամեռիկ Նիկողոսի եղբայրը: Թաղված է Փարիզի Պեռ Լաշեզում: Կրթությունը ստացել է նախ՝ եղբոր հիմնած արհեստանոցի վարպետների մոտ, իսկ 1855թ. ավարտել է Փարիզի *Saint Barbe* հաստատությունը: Աշակերտել է եվրոպական հայտնի ճարտարապետներին, սովորել Վենետիկում: Եղբոր՝ Նիկողոսի մահվան պատճառով վերադարձել է Կ.Պոլիս: Հոր մահվանից հետո, 1866թ. եղբոր՝ Սարգիսի հետ միասին վարել են արքունի ճարտարապետի պաշտոնը: Ինքն է հիմնականում հեղինակել ճարտարապետական կառույցների դժվարագույն մասը՝ հատակագծերը: Բացի ճարտարապետությունից, գեղեցիկ արվեստներով, թատրոնով է զբաղվել, հովանավորել բազմաթիվ մտավորականների: Մեկենասի իր համբավն ու նրա տան շքեղ սրահներում կազմակերպված եվրոպական տիպի սալոնների պատմական երեկույթներն ու հավաքները՝ շատ ու շատ արվեստագետների համար ներշնչանքի առիթ ու աղբյուր են հանդիսացել: Նրա հարկի տակ են հավաքվել 1870-ականների՝ ժամանակի ամենահայտնի գրողներ, արտիստներ, մտավորականներ, վայելել նրա բարեկամությունը, ստացել նյութական շռայլ օգնություններ, այդ թվում Տիգրան Չուխաջյանը[39], Պետրոս Ադամյանը, Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը, Նշան Պեշիկթաշլյանը, Թովմաս Թերզյանը, Խորեն Նար-Պեյը, Ծերենցն ու ուրիշներ: Հակոբ Պալյանը 1861-62թթ. «Արևելյան թատրոնի» հիմնադիրներից է եղել, վերաշինել Բեբեկի «Արևելյան թատրոնը»: Նա 1870թ. ճարտարապետ Պետրոս Նեմցեին 1500 (մի այլ տեղ՝ 80 հազ. դուրշ) ոսկի է տվել՝ վերաշինելու համար Օրթագյուղի «Հայկական բարեսիրաց թատրոնը»: 1871թ. Թ.Թերզյանը տպագրել է «Արշակ Բ» օպերայի հայերեն ու իտալերեն տեքստերը, այն ձոնելով Պալյան Հակոբ էֆենդիին: Մասնակցել է Պատրիարքարանի գործերին, մի քանի անգամ Ազգային ժողովի երեսփոխան է ընտրվել: Նա երազել է Պոլսում ֆրանսիականի նմանությամբ Հայ Ակադեմիա հիմնել[40]: Պատրաստել է իր ընտրած առաջին ակադեմիականների ցանկը: Նրա գործերը հիմնականում Սարգիսի հետ են եղել՝ Բեյլերբեյի պալատը, Բեյքոզի Թորաք դղյակը, Սկյուտարում Վալիդե Սուլթանի դղյակը, Եղիա-



[39] **Տիգրան Չուխաջյանը** վաղամեռիկ Հակոբ Պալյանին է ձոնել իր հայրենասիրական «Արշակ Բ» օպերան, որի նախերգանքը կատարվել է Հակոբ Պալյանի ապարանքում 1868թ.:

[40] Պատմում են, որ նա յուրահատուկ հավելավճար է տվել իր այն հայ գործակիցներին, որոնք իր հետ խոսելիս օտար բառեր չեն օգտագործել: Ն.Ռուսինյանի հետ կազմել են արևմտահայերենում բազմաթիվ առօրյա, մասնագիտական խոսակցության մեջ գործածական թուրքերեն բառերի հայերեն նորաբանությունները (Տես՝ Թեոդիկ, *Ամենուն Տարեցույցը*, 1921, 262էջ):



Աստրանց Ֆրըգում

տոսի փոխարքայի (խադիվի) պալատը, Չրաղանի նոր պալատը, Աքսարայում Պերթևնիյալ Վալիդե Սուլթանի մզկիթը և դամբարանը, Ալի փաշայի դղյակը: Կնոջ մահը նրան վշտակրությամբ Եվրոպա է նետել և Փարիզում էլ գտել է իր մահկանացուն: Փարիզից Նախապես Ռոսինյանին է ուղարկել Ֆրանսիայի Ազգային ժողովի ներքին կանոնագիրը, որի հիման վրա մեր Ազգային Սահմանադրությունն է կազմվել: Էժենի բացումին, Պոլիս եկած ժամանակ հիանալով Բեյլերբեյի պալատի գեղեցկությամբ, անձամբ ***Chevalier de Légion d'Honneur*** ժապավենով պատվել է Հակոբ Պալյանին:

**Պալյան Պալի** (1835-1911), հայտնի քանդակագործ և ճարտարապետ էր: Կեսարիայի Թալաս գյուղից: 13 տարեկանում եկել էր Պոլիս, հայ քանդակագործի մոտ աշակերտել 2 տարի, ապա վերադարձել ծննդավայր: Ինքնակրթությամբ և անձնական աշխատանքով հիմնել է արհեստանոց, վերադարձել Պոլիս, համարում ունեցել, ծանոթացել Պալյանների համարյա բոլոր ձեռնարկներին: Սուլթան Ազիզի կողմից գնահատվել, ու պալատական ճարտարապետի պաշտոն է ստացել, բազմաթիվ շնորհների արժանացել: Էժենի բացումին հիանալով Չրաղան պալատի արտաքին ոճով կառուցված նշանավոր բաղնիքով, ցանկացել է հրավիրել հեղինակին՝ Պալի Պալյանին, գալ Փարիզ, համանմանը իր համար կառուցելու համար: Սակայն 70-ական թվականների պատերազմն արգելք հանդիսացավ, ու ճարտարապետը մնաց Պոլսում: Սուլթան Համիդի օրոք շատ կարևոր կոթողներ է կառուցել, սակայն համեստաբար դրանք չի ստորագրել: 1896թ. ջարդերի ժամանակ անվտանգության համար նրան թիկնապահներ են հատկացրել, սակայն խուժանի միջից բղավել են՝ «Սա մեծ վարպետը, մեր հայրը կանչեք, հանդարտ կեցե՛ք ու զինքը բարևե՛ք»: Նրա անձի նկատմամբ հարգանքը ջարդից փրկել է Պեշիկթաշ թաղի հայերին, որտեղ ապրում էր: 1896թ. նա Բուլղարիա է տեղափոխվել 2 տարով, տեսնելու փախստական որդուն: Վերադառնալով, մենակյացի կյանք է վարել: Նրա գործերից են սուլթան Համիդի սենակապետ Օսման բեյի շիրիմը սուլթան Մահմուդի դամբարանի գավիթում, Դոլմաբահչե պալատի հասարակաց պարտեզի Ժամացույցի աշտարակը, բազմաթիվ գործեր պալատներում, Ներսես պատրիարք Վարժապետյանի շիրիմը Գումգափու Մայր եկեղեցում: Որդին՝ Կարո Պալյանը, եղել է հայտնի ճարտարապետ, գործել հիմնականում Եգիպտոսում: Դոլմաբահչեի շինարարության ժամանակ, որպես օգնական ճարտարապետ, հայտնի է **Պետրոս Նեմցեի (1830-1893)** անունը: Պալատի այն սրահը, որը ծառայել է տոների ժամանակ շնորհավորանքներ ըն-





դունելու համար, առաստաղը նկարազարդել է Գարբիս Խալֆան, իսկ ներսի զարդանախշերը՝ Պետրոս Սրապյանը: Պատերի նկարազարդ ծաղկազարդումները կատարել են Հաջի Միքոնիչը, Հովհաննես Անձնյանը, Դավիթ Թրյանցը: Այս պալատի ամեն մի քարը, զարդը, Այվազովսկու շուրջ 20 կտավները, առարկաները (պարզ կամ բյուրեղապակե), կամ կահույքի մեծ մասը՝ հայկականությամբ է շնչում: Դրանցից մի քանիսի վրա կամ մի քանի տեղ կարելի է հանդիպել հայկական տառերի, որպես հիշատակ այս չնաշխարհիկ պալատի հայ շինարարների կատարած անձնվեր գործի:

* * *

19-րդ դարում արքունի ճարտարապետներ են եղել Հարություն և Պողոս Էֆենդիները, որոնք 1889թ. պարգևատրվել են 5-րդ աստիճանի ***Mecidiye***-ով: 1899թ. Արքունի ճարտարապետ **Հովսեփ Թազվորյանին** շնորհվում է ***Rütbe-i Sâlise***, իսկ 1900թ. շնորհվում է ***Ulây-ı sâni*** 2-րդ աստիճան: Նրա որդին՝ Անդրանիկ Էֆենդին, ստանում է ***Rütbe-i Sâniye*** առաջին աստիճանի ժապավեն:

Բացի Պալյան գերդաստանից, Օսմանյան կայսրության տարածքի շատ մզկիթներ կառուցվել են արքունի կամ ուղղակի հայտնի հայ այլ ճարտարապետների կողմից[41]:

**Պողոս Օտյան ամիրա (1795-1862).** սերել են Բալաթից: Աշխատել է Գրիգոր խալֆա Պալյանի հետ ( 1764-1831), հաշվակալություն է արել: Վերջինիս մահվանից հետո, Պեզճյան Հարություն ամիրայի ջանքերի շնորհիվ հաջողվում է Կարապետ Պալյան ու Հովհաննես Սերվերյան ամիրաների հետ միասին Պողոս Օտյանին ևս դարձնել արքունի ճարտարապետ: Ազգանվեր մեծ գործեր է արել և 20 տարի անդամակցել Պատրիարքարանի Գերագույն Ժողովին:

**Ազնավուր Հովսեփ (1854-1935),** ճարտարապետ: Սուլթան Սերասքերի այցելության ժամանակ գնահատել է Դավիթ Ազնավուրին և ֆերման է շնորհել, ըստ որի նրանց արտոնվում էր հավաքել Սերասքերի և շրջակայքի տուրքերը: Հետագա Ազնավուրները եղել են եկեղեցականներ, արքունի սեղանավորներ, փաստաբաններ, ոսկերիչներ: Կարապետ ամիրա Ազնավուրյանը, որ Պեզճյան ամիրայի ժամանակակիցն է եղել, արքունի սեղանավոր էր և մեծ դեր է ունեցել հայ առաքելական-հայ կաթոլիկ ծանր հարաբերություններում, աքսորվել Քիոս կղզի: Եղել է կաթոլիկ: Որդին՝ փաստաբան Մկրտիչ Ազնավուրը, ազգային երեսփոխան է եղել: Մաղաքիա Օրմանյանի ու մյուսների հետ վերադարձել է հայ եկեղեցու գիրկը: Եղել է մասոն ու հիմնադրել Պոլսի «Սեր» օթյակը, որը գտնվում էր ֆրանսիական

41 1805թ. բացվեց **Հովսեփ (Օսեփ) խալֆայի** կառուցած Սկյուտարի Սելիմիյե մզկիթը:
1883թ. Ջիցլի պալատի մոտ գտնվող Օսմանիյե մզկիթը ճարտարապետ **Միհրան Թոնկըլյանի** կողմից կառուցվել և նշանավորվել բացառիկ շքեղ ճարտարապետությամբ:
1886թ. սկսում է գործել Յըլդըզ (Համիդիե) մզկիթը, Յըլդըզի պալատի մոտ, կառուցված արքունական գլխավոր ճարտարապետ Սարգիս Պալյանի և երկրորդ ճարտարապետ **Տիգրան Չըլըքերյանի** կողմից: Կառավարական, ապա՝ նաև արքունի ճարտարապետ Տիգրան Չըլըքերյանն արժանացել է բազմաթիվ նշանակալի պարգևների՝ 4-րդ աստիճանի ***Mecidiye*** (1886), ***Sanayi Madalyası*** (1887), 4-րդ աստիճանի ***Osmaniye*** (1894), ***Rütbe-i Sâniye*** (1898), ***Mütemayiz*** -ի աստիճան (1901):
1894թ. Պոլսի Շահզադե մզկիթի ճարտարապետ **Օննիկ Էֆենդին** շնորհվում է 4-րդ աստիճանի ***Mecidiye***.
1894թ. Իզմիրում Յեկիթլի մզկիթը կառուցվում է ճարտարապետ **Գարբիս Մելքոնյանի** կողմից
1904թ. Բալըքեսիրի մզկիթի ճարտարապետ **Սարգիս ազայինի** շնորհվում է ***Sanayi Madalyası***.
1909թ. խնձեներ ճարտարապետ **Հրանտ Մանուկյանը** Պոլսի Էյուպ Սուլթան մզկիթում կառուցել է Դավի Էդհեմ փաշայի գեղեցիկ դամբարանը՝ բարոկկո և մավրիտանական խառը ոճով:

«Մեծ Արևելք»-ի հովանու ներքո: Եղբայրը՝ Սերովբե Ազնավուրը անդամակցել է Լոնդոնի «Զորյըն» անգլիական օթյակին, որը գործում էր Պոլսում՝ Անգլիայի «Մեծ օթյակի» հովանու տակ[42]: Ազնվուրյան ոսկերիչների ճյուղն այնքան հայտնի է եղել, որ մինչ օրս ոսկերչական շրջանակներում նրանց ձեռակերտները հիշվում են իբրև «Ազնավուրի գործ» (ազնավուր իշխ):

Հովսեփը ծնվել է Լոնդոնում 1854թ., իսկ 1867թ. տեղափոխվել Պոլիս: Կրթությունը ստացել է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում և Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում: Հայրը փորձել է նրան մղել դեպի երկրագործություն, ինժեներական գործ, փաստաբանություն, սակայն ի վերջո նա նախընտրել է ճարտարապետությունը: Դեռևս ուսանող շրջանում Հռոմի «Տիբերիուս» ընկերության ամառանոցային դղյակի նրա նախագիծն առաջին մրցանակ է շահել և արժանացել «Վալադիե» մեդալի: Ապարանքի հետ միասին Հռոմում կառուցել է նաև հանդիսասրահներ, կամրջային շենքերի շարք: Պոլիս վերադարձին «Տիբերիուս» ընկերությունն ի պատիվ նրա հրաժեշտի մեծ խնջույք է կազմակերպել: Հրաժեշտի խոսք է ասել նշանավոր բանկիր Գրանբին: Ունեցել է համաստարապես նաև մարմնամարզական հաջողություններ: 1876թ. Հռոմում իտալական մարմնամարզական ընդհանուր մրցումներում 2000 մասնակիցների մեջ առաջին մրցանակ է շահել բոլոր ձևերում: Այս առթիվ Վիկտոր Էմմանուել կայսրը նրան անձամբ նվիրել է արծաթե երկու աշտանակ ու ժամացույց:

1883թ. Բեյօղլուի Արևելյան թատրոնի տեղը ճարտարապետ Հովսեփ Ազնավուրի կառուցած Ֆրանսիական «Օլիմպ» (ապա՝ Նոր թատրոն) թատրոնի բացումը նշանավորվել է շքեղ պարահանդեսով, իսկ դրա հատույթը Գիտության նախարար Մուստաֆա Նուրի փաշայի կողմից հանձնվել է Բերայի հայկական ազգային վարժարանների կարիքներին:

Հովսեփ Ազնավուրը կառուցել է Զենների բողոքական երկաթե եկեղեցին[43], 1884թ. Ջիբալիում գտնվող Ռեժիի ծխախոտի ընկերության մեծ ֆաբրիկան, Սանասարյան Խանը (այսօր՝ Անվտանգության վարչությունն է), Կյուլբենկյան խանը (այսօր՝ Էմինօնյուի քաղաքապետարան), Թոփալյան խանը, որը հրդեհի զոհ է դարձել, Քարդրջը-օղլու խանը, Պազար Ալմանը (գերմանական վաճառատուն), արքայադուստր Ռուքիյե հանըմի, Նիմեթ հանըմի և արքայազն Սաիդ Հալիմ փաշայի, Հալիմե Հանըմի, Զեյնեփի և Կոչինոյի բնակելի շենքերը, Մուհամմեդ Ալիի կնոջ դղյակները, Նուարեք բեյ խանը, Սուլթանհամամ խանը, Բերայի անգլիական երկսեռ վարժարանները, Թոփալյան խանը, Թոքաթլյան շենքը, Հակոբ փաշա Գազազյանի, Վահան էֆենդիի, Պողոս բեյ Յուսուֆյանի, արքայադուստր Էմինե Հալիմի դամբարանները, բազմաթիվ մեծ ու փոքր ապարանքներ, դամբարաններ, առանձնատներ, շենքեր՝ Կահիրեում:

1891թ. Բերայում (Թեփեբաշը) ճարտարապետ Հովսեփ Ազնավուրը կառուցել է Քաղաքապետարանի դրամայի ու կոմեդիայի թատրոնն իր գրասանքի սրահով:

Վառնայի պետական օպերայի թատրոնի շենքը 1895թ. կառուցել է Հովսեփ Ազնավուրը:

1896թ. Հովսեփ Ազնավուրը Իշխանաց կղզիներից մեկում՝ Հեյբելիյում, կառուցել է Վիլա-յի քյոշքը (ապարանքը) եգիպտական խեդիվ Աբաս Հիլմի փաշայի համար: 1906թ. կառուցել է Եգիպտոսի թագաժառանգ խեդիվ Աբաս Հիլմի փաշայի ապարանքը Չուբուքլույում, իսկ 1910թ. Բերայում, Ջադդեի Քեբիրի վրա՝ Եգիպտոսի շենքը, Աբաս Հիլմի փաշայի հարկաբաժինը, հյուրերի տունը: Նուպար փաշայի միջնորդությամբ[44] մի շարք կառույցներ է հեղինակել Եգիպտոսում: 1918թ. Հովսեփ Ազնավուրը Կահիրեում կառուցում է Ահմեդ Մազլում փաշայի առանձնատունը, արքայազն Մուհամմեդ Ալիի կնոջ դղյակը:

Նա Օսմանյան ճարտարապետների միության առաջին նախագահն էր (1913թ.): Եղել է Սահմանադրական ռամկավար կուսակցության հիմնադիրներից, Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) անդամ, ազգային երևելի այր: Առաջին համաշխարհայինից հետո տեղափոխվել է Կահիրե, ուր և ապրել է մինչև կյանքի վերջը: Նրա կարապի երգը 1.5 միլիոն նահատակների հիշատակի կոթողի նախագիծն էր, որ ապագայում պիտի կառուցվեր Հայաստանում...[45]

**Հովհաննես Ազնավուրյան**, ճարտարապետ Սպարապետության Դռան (Ռազմական նախարարության): Զինվորական շինարարության ասպարեզում է աշխատել: Մի շարք կարևոր պաշտոններ է վարել: 1885թ. Արքայական զինանոցի (արսենալի) ճարտարապետ Հովհաննես Ազնավուրյանը ***Mütemayiz*** շքանշանին արժանացել է առաջին աստիճանի ***Ulây-ı Evvel***: 1886թ. զինվորական գծով կառավարական ճարտարապետ Հովհաննես Ազնավուրյանը՝ 3-րդ աստիճանի ***Mecidiye*** է ստացել:

1899թ. Սուլթանի հրամանով զինվորական շենքերի ճարտարապետ Թոփգափու պալատի Բաղդադ քյոշկի (ապարանքի) դիմաց ապահովությունը պահպանելու համար կառուցում է այնպիսի պալատ, որի բացմանը ոչխարներ են մորթում, առանձնահատուկ հանդես կազմակերպում:

**Սարգիս Բալեմեճյան**ը եղել է Քաղաքապետարանի ճարտարապետների ղեկավար: Նա է ղեկավարել Այնթապի Ս.Աստվածածին եկեղեցու վերանորոգումը 1876թ.:

Կառավարության կից տարբեր վարչություններ[46], սուլթանական պալատի որոշ օտարներ ճարտարապետի հատուկներ են ունեցել, որ իրենց գործունեությամբ աչքի են ընկել շատ հայ ճարտարապետներ: **Միհրան Ազարյանը** եղել է սուլթանի Անձնական գանձարանի շինարարությունների տեսչին ճարտարապետ և 1885թ. պարգևատրվել 4-րդ աստիճանի ***Mecidiye*** շքանշանով: Բազմաթիվ պետական, հասարակական շինություններ կառուցվել են հայ ճարտարապետների կողմից: 1913-16թթ. կառուցված Պոլսի Ֆաթիհի քաղաքապետարանի հեղինակն է ճարտարապետ **Երվանդ Թերզյանը**: 1913թ. ինժեներ ճարտարապետ **Հրանտ Մանավյանն** ընտրվում է Մաքրիգյուղի քաղաքապետարանի ղեկավար:

42 Այս մասին տես Պարսամյան եղբայրների «*Կյանք և Արվեստ*» 1935թ. տարեգրքում:
43 1898թ. սեպտեմբերի 6-ին կատարվում է Զենների բողոքական եկեղեցու բացումը: Այն կարիք էր քանդել ու կրկին հավաքել, տեղափոխել:
44 1910թ. Ալեքսանդրիայի Միսիրյան թաղապետական պալատը կառուցվում է ճարտարապետ **Գևորգ Մինասիճյանի** կողմից: Նա կառուցում է նաև Միսիրյան երկրագործական բանկապատը: Կահիրեի Արդենի պալատը բանկապատը կառուցում է ճարտարապետ **Հրանտ Մարաշլյանը**:
45 1898թ. Հովսեփ Ազնավուրին շնորհվում է 3-րդ աստիճանի ***Mecidiye***, իսկ 1901թ. 2-րդ աստիճանի նույն շքանշանից: **1905թ.** Համբույմա շինության ճարտարապետ Հովսեփ էֆենդին արժանանում է 2-րդ աստիճանի ***Osmaniye***-ի:
46 1901թ. Կայսերական շինարարական գործերի ու ամբարտ գործի պետական ծառայությունում Հովհաննես էֆենդին արժանացել է ***Rütbe-i Rabiya*** շքանշանի:

* * *

Ըստ Պատրիարքարանի տվյալների, 1904թ. Օսմանյան պետությունում կային կանգուն և գործող 1958 հայկական եկեղեցիներ և 228 վանքեր, չհաշված հարյուրավոր պատմական հուշարձանները, որոնք ավերակ կամ անգործածելի էին դարձել: 1985թվականին հաշվվում էր 29 եկեղեցի և ոչ մի վանք:

Օսմանյան կայսրությունում ճարտարապետական մշակույթի մասին խոսելիս բավարար չի կանգ առնել միայն հայ ճարտարապետական գերդաստանների ու նրանց գործունեության վրա: Կայսրության տարբեր կողմերում, Պոլսում և այլուր հանդիպում ենք բազմաթիվ հուշակերտ կառույցների, որոնք կամ կառուցվել են հայերի կողմից, կամ նրանց պատվիրատուները հայեր են եղել: Սա վերաբերում է մասնավոր ու հասարակական շինություններին, որոնք զարդարել են նաև տվյալ վայրի ճարտարապետական տեսքը: Հուշակերտների մի շարք է զարդարում Ստամբուլը ի դեմս Բոսֆորի ափին ձգված ապարանքների, որոնց մի մասը մինչև այսօր էլ կանգուն են: Իհարկե, այսօր դրանք այլևս հայերի չեն պատկանում: Այսպես օրինակ, Ենիգյոյի Թնկըրօղլուների երբեմնի ապարանքն այսօր վերածվել է հանրապետության նախագահի նստավայրերից մեկի: Իսթինյեի նշանավոր մի հայի ապարանք այսօր վերածվել է Սեւծովյան տնտեսական համագործակցության կենտրոնական գրասենյակի: Ենիգյոյի Սկրտիչ Ճեզաիրլյան ամիրայի ապարանքը վաղուց ի վեր Ավստրիական հյուպատոսարանի է վերածվել: Ենիգյոյում հայկական չքնաղ ապարանքներ այսօր էլ պահպանվել են, ինչպես չայճր Սանփանի և որիշ այլ ապարանքներ, որոնք հայերը կորցրին, երբ «հարստության մասին օրենքը» եկավ: Բոյաջըգերի Ազարյանների բանահարկ հսկա ապարանքն այսօր վերածվել է Սաբընջը Համրի համալսարանի, իսկ հայտնի ճարտարապետ Սարգիս Պալյանի Քարուչեշմեյում ստեղծած արհեստական կղզյակ-տունը՝ մահվանից հետո նախ ամուսնի պահեստ է դարձել, իսկ 1957թ. այն գնել են Գալաթասարայի սպորտային ակումբի պատասխանատուները և վերածել «Գալաթասարայ» ակումբի կենտրոնատեղի: Այս ապարանքների տերերը եղել են երևելի, հարուստ հայեր, պալատական ու կառավարության պաշտոնյաներ: Առնավուտ գյուղի «Կարմիր» ապարանքը կառուցվել է 1830թ. սուլթան Մահմուդի հայ պատրոհիզպանի կողմից: Նույն վայրում հայ դրամատերի մի այլ ապարանք է եղել, որտեղ նաև դրամահատարան է գործել ու շենքն ունեցել է ցրով աշխատող վերելակ՝ այդ շրջանի համար կարևոր շինարարական նորույթուն[47]:

1891թ. Միքրենիի Մյուզեի Օսմանի (Գեղարվեստից դպրոցի) շենքը կառուցել է ճարտարապետ **Միշել Նուրիճանը**: Օսման Համդի բեյի ջանքերով, Այա-Սոֆիայի մոտ, Միշել(Միքայել) Նուրիճանը 1892թ. կառուցել է Ստամբուլի այսօրվա Հնագիտական շքեղ թանգարանը, որ այսօր գտնվում են թանգարանի հիմնադիրներ Օսման Համդի բեյի և արձանագործ-պրոֆեսոր Երվանդ Օսկանի ջանքերով հայտնաբերված հնագիտական մեծարժեք հուշարձանները՝ հույն-հռոմեական շրջանի բազմավորական գերեզմանները: Այդ բաժինը կոչվեց դամբարանների բաժին:

Հայ ճարտարապետները կառուցել են նաև գավառներում, որոնք հիմնականում պետական պատվերներ են եղել՝ հանրային, զինվորական կառույցներ: **Սարգիս Էլյաս Լոյե** հալեպցի ճարտարապետն է կառուցել Մարդինի զորանոցի շենքը 19-րդ դ. վերջին: Այսօր այն

47 Այս և նման ապարանքների լուսանկարները կարող եք տեսնել Արսեն Յարմանի գրքի 33 էջում:





վերափոխվել է թանգարանի և ծառայում է որպես Մարդինի ընտանիքին պատկանող արվեստի գործերի պատկերասրահ[48]:

19-րդ դարում ճարտարապետական որոշ կառույցներ հանձնարարվում են օտար, հիմնականում ֆրանսիացի, իտալացի ճարտարապետների: Օտար դեսպանատների, հյուպատոսարանների՝ սուլթանական պալատի հետ ունեցած լավ հարաբերությունների շնորհիվ, նրանց միջնորդությամբ, պալատների, ապարանքների ձևավորումը, կահավորումը[49] սկսում են հանձնել օտար մասնագետներին: Վերջիններիս համար սա ևս մի ճանապարհ էր պալատի հետ ջերմ հարաբերություններ ունենալու, ազդեցության ոլորտներն ընդարձակելու համար: Սակայն հայ ճարտարապետների հաշվին այնքան ակնհայտ էր, որ հենց այդ դիվանագիտական ներկայացուցչությունները իրենց հասարակական շինությունները հանձնարարել են հայ ճարտարապետներին ու ինժեներներին: Սուլթանական կառավարությունը զինվորական կառույցների ճարտարապետների ընտրության մեջ գերադասել է հայ մասնագետներին[50]: Հայկական Պատրիարքարանն ունեցել է իր պաշտոնական ճարտարապետը[51], թեև նրա շուրջն էր համախմբված ողջ հայ մտավոր, գործարար սերուցքը, այդ թվում նաև ճարտարապետները: 1894թ. Իզմիրի ֆրանսիական հոգևոր դպրոցը կառուցվել է ճարտարապետ **Պետրոս Նեմցեի (Նեմցեյան)** կողմից, որը Հակոբ Պալյանի աշակերտից էր, մասնակցած Չրաղան, Դոլմաբահչե պալատների, Օրթաքեոյի թաղամասի շինարարությունների աշխատանքներին:

Զարմանալի չպետք է համարել այն փաստը, որ մասնավանդ հայաշատ գավառներում, կաթոլիկ եկեղեցիներին, ավետարանական քարոզիչներին պատկանող դպրոցների, ժողովարանների, հիվանդանոցների կառուցման համար ընտրվել են ոչ միայն հայ ճարտարապետներ[52]: Սա նաև հոգեբանական պատճառներ ունի: Այն է, երբ Պոլսից դուրս կաթոլիկական որևէ ձեռնարկ էր լինում, որպես կանոն, այն հանդիպում էր առաքելական եկեղեցում ամփոփված ու հավատարիմ հավատացյալների կողմից դիմադրությանը: Երբ կաթոլիկների դեպքում, կառուցվում էր «սառած տուն», և ճարտարապետը ֆրանսիացի էր լինում, ապա նրանք կարող էին իրենց ապահովված զգալ տեղի իշխանությունների, առնվազն ու հովանավոր ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցիչների կողմից: Օտար, եվրոպացի ճարտարապետի գոյությունը կարծես գրավական էր ձեռնարկված շինության հաջողության համար: Հայ կաթոլիկների ու բողոքականների եկեղեցիները, ժողովարանները կառուցվում էին հիմնականում կաթոլիկ կամ բողոքական ճարտարապետների կողմից[53]:

Կայսրությունում մշակույթի զարգացման նախադրյալներից պետք է համարել տարբեր տեսակի դպրոցների առկայությունը: Դրանց հիմնադիրները եղել են ժամանակի երևելի, հարուստ, զարգացած անձնավորություններ, գեղարվեստի սիրահարներ, եվրոպական մշակույ-

48 *Cumhuriyet*, 2 ekim 2009.

49 1894թ. պալատի կահավորման հարցերով փաստական **Հովհաննես Ծաղճյանը** *Sanayi Madalyası* է ստանում:

50 1889թ. Ծովակալու պալատի շուրջը զինվորական զորանոցներ կառույց-հանձն **Աբրահամ Ալյանյանը** ստանում է *Sanayi Madalyası*.

51 1900 թթ. Պատրիարքարանի ճարտարապետն է եղել **Գրիգոր Մեխտարյանը (1845-1914)**: Նա է հեղինակը նաև Ս.Փրկիչ Ազգային հիվանդանոցի Կյուլպենկյան պավիլիոնի:

52 Մարդինի և Հալեպի կաթոլիկ եկեղեցին կառուցել է **Սարգիս Էլյաս Լոյե** ճարտարապետը:

53 1921թ. ճարտարապետ **Սանփան Իզմիրլյանը** կառուցում է Պոլսի Կեսարիացիների հայ բողոքական ժողովարանը: 1913թ. Պեյօղլուի Ս.Կիրակոս եկեղեցու զանգակատունը կառուցում է ճարտարապետ **Նախիր Կեչիյանը**:

քից բացի դրանք ունեցել են նաև մշակութային նշանակություն: Խաներում կենտրոնացել են հրատարակչություններ ու տպարաններ, գրասենյակներ՝ նրանց սպասարկող ճաշարաններով ու կենցաղային տարբեր ծառայություններով: Խաներում եղել են սրահներ, որոնք հավաքատեղիներ, ժողովատեղիներ են ծառայել ազգային որևէ միջոցառման համար, ինչպես



Ազարյան խան (Կոյկոյայ պողոտա)



Սեպուհյան խան (Էմինոնյու)

պատրիարքական ընտրություններից առաջ ամիրաներն, օրինակ, հավաքվել են Վալիդե խանում: Եղել են ազատ սենյակներ, որոնք որպես իջևանատներ են ծառայել, վարձով տրվել և այլն: Գ.Բամպուկճյանի մի հոդվածից[60] իմանում ենք, որ խաները ծառայել են որպես դպրոց, անգրագետ երիտասարդներին գրել-կարդալ սովորեցնող վայրեր, երեխաներին արհեստներ սովորեցնող, ինչպես նաև զինարություններ, երաժշտության դասավանդող «վարժարաններ»: Հայտնի **Ֆիզիկս Պողոս** Մելիքշահյանը (1788-1855) Չուքուր խանում արհեստներ սովորող երեխաներին դասեր է տվել: **Զենճի Պողոս Սարկավագը** (1746-1826) Զինճիրլի խանում դպրոց է բացել ու հոգևոր երաժշտության դասավանդել: Այստեղ է սովորել նոտագիր, երաժշտագետ Համբարձում Լիմոնճյանը (1768-1839):

60 K.Pamukciyan, *1868'de Mevcut Istanbul Hanları*.Tarih ve Toplum, 19944 1284 s.5-9. Ստամբուլի խաների մասին Մեհմեդ Սաղլըքըն Ֆիրդևսի կողմից 2009թ. լույս է տեսել 300 էջանոց ուսումնասիրություն: Այստեղ գտնում ենք լուսանկարներ, տեղեկություններ հայապատկան խաների ու դրանց տերերի մասին: Այն հրատարակվել է Առևտրական գրասենյակի կողմից: Հայկական մի քանի խաների մեկնաբանությունը տես՝ Սարը Փրկիչ, Անտարեր Հայոց Հիմնադրամի, Ստամբուլ, 2011, N 739-740, 15-23.







Խաները որոշակի տեղ են ունեցել պոլսահայության կյանքում: Առաջին անգամ, 1868թ. Մ.Մամուլ վարժապետ Կյուրումճյանի իր «Համառոտ աշխարհագրութիւն չափահաս տղայոց համար» դասագրքի հավելվածում 196 խաների ցանկ է հրատարակել: Խաների ցանկեր են հրատարակվել 1887թ. Հովհան Փալագաշյանի (1860-1951) «Տեղագրութիւն Կոստանդնուպոլսոյ եւ շրջակայից»(1887), «Խանացանկ» գրքում (1912), որ դրանց թիվը 266-ի է հասցնում: 1895թ. հայատառ թուրքերեն «Իդաէլի Սալնամէ» տարեցույցում Պոլսում՝ 243, իսկ միայն Ղալաթիայում՝ 101 խան է հաշվվում: 1906թ. Եղիբուլեի Ս.Փրկիչ հիվանդանոցի տարեցույցում տպագրված խաների թիվը 159 է, իսկ Ղալաթիայում՝ 89 է նշվում: 1912թ. տպագրված «Գանձանակ»-ում (խաների ցուցակ) Պոլսի և շրջակա խաների թիվը 552 է դառնում: Այս շենքերից շատերն այսօր էլ կանգուն են ու պահպանել են իրենց նախկին տեսքը, ինչպես օրինակ Գավաֆյան, Գարագաշօղլու խաները Ղալաթիայում,Քոթուլյան, Սերյան, Տիգրանյան խաները Սուլթանհամամում, Սեպուհյան խանը Չարճաքըղլար Յոքուշում, Սանասարյան խանը Միմար Քեմալեդդին պողոտայում,Ֆենդըքլյան խանը Չիչեքփազարում, Միմոնյան խանը Քարա Մուստաֆա փաշա պողոտայում և այլն: Այս խաները վարձակալել են օտար ընկերություններն իրենց Պոլսի ներկայացուցչությունների համար, ապահովագրական, ճանապարհային տարբեր գործակալություններ: Այստեղ գտնվել են սեղանավորների, փաստաբանների, փաստաբանների, ճարտարապետների, բժիշկների գրասենյակներ:



Ազարյան խան (Բեյօղլու)

Խաները ծառայել են նաև որպես հավաքատեղիներ ազգի երևելիների համար, որ կարևոր հարցեր են քննարկել[61]:

## Հյուրանոցներ

Ճարտարապետական կառույցների մեջ մի առանձնակի էջ է հայ ճարտարապետների, գործարարների կողմից իրականացված հյուրանոցային շինարարությունը, դրանց շահագործումը: Եվրոպական կրթությունը և եվրոպական կենցաղի, հյուրանոցային գործունեության խախտեկյալ քննել ողջակի ակնհայտ է, երբ ծանոթանում ես Օսմանյան կայսրության մեծ քաղաքների կյանքի այս բնագավառին: Հյուրանոցներ են կառուցվել նաև Իզմիր-

61 1800թ. Հովհան Անիսայի վկայությամբ Վալիդե խանում գտնվող սրահներից մեկում հայ ամիրաները և էսնաֆները պետք էր հավաք են կազմակերպել կարգավիճակային (պատրիարքական) ընտրության համար:

ճաց կղզիներում, սկզբնական շրջանում՝ նաև փայտե շենքեր: Արփին խալֆա Մանարյանը 1883թ. կառուցել է Քնալը կղզու Ակացիաների փողոցի h. 59 փայտե հյուրանոցը: Միաժամանակ, նրա հարևանությամբ, ճարտարապետ Կարապետ Սաֆարյանն իր համար ապարանք է կառուցել: Իշխանաց կղզիների ամառանոցային փայտե, հետագայում նաև քարե շենքերն ու փարթամ բուսականության մեջ փայլփլող փոքրիկ ապարանքները[62], կղզիների նախահանգստային կառույցները, հյուրանոցները մեծապես կապված են հայ ճարտարապետական ու շինարարական արվեստի, մտքի հետ: Եվ դա բնական է, քանզի այս կղզիները տարվա մի որոշակի մասը հեղեղված են եղել Պոլսի հայ բնակչությամբ: Կղզիների արտաքին տեսքը շատ է հիշեցնում Ֆրանսիայի հարավի ծովափնյա մասը:



Աբրահամ փաշա Երամյանի հյուրանոցը (Բեյօղլու)

1896թ. Մեծ կղզում Մարտին Հակոբյանը, ում [illegible] հարուստ հույնից գնելով նրա հռահարկ ամառանոցը, կառուցում է «Օթել իլ դե Պրենս»-ը, հետագայում՝ 1918թ. «Բելլե Օթել»-ը: Նույնիսկ հյուրանոցների անվանումը՝ տալիս է ֆրանսիական ազդեցության: Հայերը գնում են կղզու ապարանքները, ձգտելով հայաշատ դարձնել մասնավորապես Քնալը և Մեծ կղզիները[63]: 1890թ. Քնալը կղզում բացվում է Գալուստ Ներսիսյանի «Օթել Բելվյու»-ն, որը կառուցել էր ճարտարապետ Արամ Թահչյանը: 1899թ. սեղանավորների ավագ Հարություն Թաշճյանը Քնալը կղզու Ակացիաների պողոտայում բացում է «Օթել Պորթի»-ն Շահարյանի տնօրինությամբ: Նույն Ակացիաների պողոտայի «Թոսքյան» հյուրանոցը Արտաշես Ձեռնյանի և Պապազյանի կողմից բացվում է որպես պանսիոն՝ կրկին տալով եվրոպական մտածողության և նորաձև կենցաղին: 1905թ. Քնալըյում կառուցվում և 1912թ. սկսում է գործել Գալուստ Ներսիսյանի «Մեծ Բելվյու Օթելը»:

1912թ. Պոլսի «Գրանդ Օթելի» տեր Հարություն Շահալը Քնալը կղզում բացում է «Պանդոկ»-ը, պարտեզներով շքեղ հյուրանոցը:

1901թ. Մեծ կղզում «Յախտ կլուբ»-ի բացումն է կատարվում, զայմագամ Գարբիս Նուբառնինյանի ներկայությամբ: Բացվում է նաև «Ջալոնո» հյուրանոցը: 1902թ. Մեծ կղզում բացվում է «Օթել Իմպերիալը»: Մեծ կղզու՝ 1914-15թթ. կառուցված նավահանգստի ճարտարապետն էր Միհրան Ազարյանը (1876-1952): 1904թ. Մեծ կղզում Շեյխ [illegible]

62 Հայ կինեմիաներ կղզիներում կառուցելիս ապարանքները հանձնապաշտ են նաև օտար ճարտարապետների: Այսպես օրինակ, Սեֆերօղլուի (Ազարյան) Մեծ կղզու փայտաշեն հսկայական ամառանոցը նախագծել է ճարտարապետ Յոսիֆ Աշխոր, իսկ կառուցել է Յոսեփ Միձոսյան:

63 1910թ. Քնալըկղզում շոգենավի նախահանգիստ են կառուցում ճարտարապետներ **Լևոն Նաֆիլյանն** ու **Հրանտ Նալբանդյանը**: 1913թ. Պեյինլիադա նավահանգիստը կառուցում է ճարտարապետ **Հրանտ Նալբանդյանը**:





ապարանքը գնելով, Վարդան Վարդանյանն այն «Օթել Սավոյա»-ի է վերածում:

Իշխանաց կղզիներում կառուցվել են նաև հայկական, հունական եկեղեցիներ, որոնք հիմնականում պահպանվել են: 1896թ. հայտնի բժիշկ Խնդիր Խնդիրյանը Մեծ կղզում կառուցում է եկեղեցի, որը թիակների ընդամենը մի հարյուր հարվածի չափով էր հեռու հայտնի բժշկի սեփական փոքրիկ կղզուց:

Նման, փայտե գեղեցիկ կառույցներ, որոնց մի մասն այսօր էլ պահպանել են իրենց հմայքը: Սա իրենից օսմանյան շրջանի 19-րդ դարի ճարտարապետության մի կենդանի թանգարան է ներկայացնում, որ այսօր ֆիլմեր են նկարահանվում:

Գալով քաղաքային հյուրանոցային ճարտարապետական հուշարձաններին, ապա Ստամբուլը, նրա տարբեր թաղամասերը հարուստ են եղել դրանցով: 1890թ. Բերայում սկսում է գործել Թոքաթլյանի «Սպլենդիտ» ռեստորանը, որի մի մասը սրճարան էր: 1905թ. Բոսֆորի Թարաբիա հարուստ շրջանում կառուցվում է Թոքաթլյանի «Սումեր-Փալաս» հյուրանոցը[64]: 1906թ. Թոքաթլյան հաստատությունն ընդարձակում է իր գործը՝ ծաղարան, ճաշարան, գարեջրատուն «Բերա», դ'Ալեի առևտրատուն (պասաժ), ճաշարան-սրճարաններ Բախչեքափուի և Մեծ կղզու նավամատույցներում: Թոքաթլյան ռեստորանները, սրճարանները դառնում են հասարակության ընտրանու հավաքատեղիները: Այնտեղ էին կազմակերպվում պալատի հյուրերի, Մեջլիսի պատգամավորների հատուկ հյուրասիրությունները: Այնտեղ սիրում էին հավաքվել մտավորականները, բարձրաշխարհիկ հասարակությունը: Առաջարկվում էր նախանձելի սպասարկության հավաքույթների, հանդիսությունների, հարսանիքների, պարահանդեսների համար: Եվրոպական ու արևելյան խոհանոցը, արևելյան ու եվրոպական նվագախմբերը[65], հրավիրյալ ֆրանսիացի ջութակահարների ու թավջութակահարների մասնակցությամբ երեկոները Թոքաթլյան խանի գրավիչ առանձնահատկություններից էին:

1895թ. Սիրքեջիում բացվում է «Պզդիկյան» օթելը, իսկ 1898թ. սկսում է գործել Թոփիկ Ներկարարյանի «Օթել Թուրքիա»-ն:

1906թ. Ներսես Փափազյանը «Օթել Օտոման» է բացում Ղալաթիայում: 1909թ. Ղալաթիայում ազգապարծի տեր և տիկին Սերովբե-Ներսես Փափազյանների բացած «Անկարա» և «Օսմանիյե» (Յոքսեք Քալդըրըմ, 1912թ.) հայկական մեծ հյուրանոցները հայտնի դարձան իրենց եվրոպական կահավորմամբ, հեռախոսի, ճաշարանի, ընթերցասրահ (փաբ), գարեջրատան, սափրիչ սրահի, սրճարանի ծառայություններով:

1914թ. Բերայում, Անգլիական դեսպանատան դիմաց, Մաքսուս Սրապյանը բացում է «Սրապը Օթելը»:

Հայ գործարարների ու ճարտարապետների համագործակցությունը երկրում զարկ է տալիս հյուրանոցային գործին: Պոլսում, Իշխանաց կղզիներում, Անատոլիայի քաղաքներում և Սիրիայում բացվում են հյուրանոցներ, որոնց մի մասն իր ճարտարապետությամբ, կահավորմամբ, եվրոպական տեխնիկական նորագույն առաջընթացի սպասարկման սարքաների և մի շարք ծառայությունների մատուցմամբ, փոխին կարող էր բավարարել օտարերկր-

64 Մինչև 2 տարի առաջ այն դիմակայում էր Թարաբիա ծովափնյերին: Այսօր նրա տեղում նոր կառույց է բարձրանում: Թոքաթլյանի մյուս հայտնի հնաճարտից կառույցը այսօր էլ կա: Այն Բերայում է, որի մի մասը Ս. Երրորդություն եկեղեցու տարածքում է, իսկ խաները ծառայում են կից «Չիչեկ չուկայի» առևտրականներին:
Յոքսեք Քալդըրըմ՝ Ս.Ն.Փափազյանը բացում է «Օսմանիյե» հյուրանոցը:

65 Եվրոպական երաժշտության նվագախմբի ղեկավար է հիշվում Պ.Գ.Ուզունյանը:



Հովհաննես Մյուհենդիսյան



1862 թ. Լոնդոնի միջազգային ցուցահանդեսում ներկայացված սուլթան Աբդուլմեջիդի 20 դրոշմանոց թղթադրամի կաղապարը



Սուլթան Աբդուլմեջիդի կնիքը

Նրա շնորհիվ են Թուրքիա մուտք գործել գալվանիպլաստիկայի, արհեստական ցինկոգրաֆիայի նորույթները: Նրա տպարանում էին տպվում Պատրիարքարանի գործերը, թերթեր, գրքեր, որոնք տարածվում էին ողջ Կովկասում: Նա նաև ձուլածո տառեր էր վաճառում տպարաններին: Տպագրում էր պետական, մաքսային տոմսեր, տոմարներ: Վերջիններիս տպագրության պատվիրատուն այդ տարիներին Պոլսի մաքսատան տնօրեն Ճեզայիրլյան Մկրտիչ աղան էր: Այս բարի, տաղանդավոր ու ազնիվ հայը ևս գերծ չմնաց իր նախանձ շրջապատի դավերից: Մյուհենդիսյանը խաբվում է, զոհ գնում ապիկար փառամոլների ոտնձգություններին, մեծ կորուստներ ունենում, գրավի տակ դնում տպարանը, իսկ տառերը առանց նրա գիտության վաճառում են: Այնուամենայնիվ նա ուժ է գտնում, շարունակում ստեղծագործել: *Նախիշ* նրբագեղ տառերն է ձուլում և երբ նրանցով տպագրված օսմաներեն մի բանաստեղծության օրինակ մատուցում է Սադրազամ փաշային ու պալատական ավագանուն.

-Շատ գոհ եմ այսպիսի փառավոր հիշատակի համար,- հիացած Մյուհենդիսյանին է դիմում Սադրազամ փաշան,- ազգովին պետք է շնորհակալ լինենք Ձեզ:

Մյուհենդիսյանի տպագրական ձեռակերտներից են դրոշմադրերը (*փարագայի սահիֆե*), որոնց նմանը ո՛չ Ֆրանսիայում և ո՛չ էլ մի այլ տեղ կարելի էր գտնել: 80 տարեկանում ձեռնամուխ է լինում ձեռագրի տեսքով *րըգգա* տառերի ստեղծմանը, որն ավարտում է մահվանից քիչ առաջ, 1891թ.: Դրանք նրա գործունեության գլուխգործոցն են համարվել: 1890թ. նրա ստեղծած տառատեսակներով աղոթք ներկայացվում է սուլթանին, որի համար Մյուհենդիսյանն արժանանում է 3-րդ կարգի ***Mecidiye*** պատվանշանի, ստանում է ***Sanayi Nefise Madalyasi*** և Գեղարվեստից շքանշան: Նրան անվանել են **«Թուրքական Գուտենբերգ»**:





Հարկ է ընդգծել ***քարտեզագիտության*** բնագավառը, որը տպագրական մշակույթի մաս է կազմել: Բազմաթիվ արժեքավոր քարտեզներ են հրատարակել Մխիթարյան միաբանները: Պոլսում ևս զբաղվել են այս գործով: Գրիգոր Մարգարյանը բարձր դասարանցիների համար տպում է «Պատկերազարդ և քարտեզավոր Օսմանյան պատմություն» (1912): Առաքել Պիպերճյանը և գծագրող Հ.Փափազյանը Ղալաթիայի Քարանա օղլու տպարանում տպագրում են «Ընդարձակ քարտեզ Օսմանյան պետության» (1913): Պոլսում տպագրվում է Միսաս Քասաբյանի պատրաստած Նիկոմեդիայի (Իզմիթ) հայերեն քարտեզը, որ շրջանակային նշանները ցույց են տալիս հայաշատ վայրերը:







Մկրտիչ Գալատալիի կազմած քարտեզները

Հայ տպարանատերերից ոմանց գործունեությունը դուրս է եկել հայկական սահմաններից: Բազմաթիվ հայկական տպարաններում են տպագրվել թուրք հեղինակների օսմաներեն, հայատառ թուրքերեն երկերը, թարգմանությունները, ինչպես նաև հայ արտոնատերերի, պատասխանատու խմբագիրների կամ հայ տպարանատերերի օսմաներեն, ինչպես նաև ֆրանսերեն կամ հայերեն, հունարեն, օսմաներեն, քառալեզու[13] հանդեսյալ պարբերականները, օտարալեզու գրքեր: Հայ տպագրիչների մի մասը Պոլսի Կայսերական զինվորական վարժարանում (Հարբիյե) սկսել է դասավանդել նաև տպագրական գործ, մանրանկարչական լիտոգրաֆիա[14]:

Տպարանատեր Խաչիկ Թոփալյանը Գերմանիայում և Անգլիայում մասնագիտական երկար պրակտիկաներից հետո վերադառնալով Պոլիս, 1910թ. արաբական տառերով առաջին *լինոտիպ հրատարակությունն* է սկսում Բանկալթիում:

Ստեղծվել է օսմաներեն լեզվի ուսուցման դասագրքերի, բառարանների աննախընթաց առատություն (հայերեն, հայատառ թուրքերեն, օսմաներեն բացատրական տեքստերով):

13 *İmeron, Hermes, İdkis, Hayat-ı Ticari* Perde հանդեսները, քառալեզու՝ հայերեն, հունարեն, թուրքերեն և ֆրանսերեն թերթերը հրատարակվել են Միքայել Էֆենդիի կողմից:

14 Հարբիյեում լիտոգրաֆիա (վիմագրություն) դասավանդող վարպետ Երվանդ Թերզյանը 1902թ. արժանանում է 4-րդ կարգի ***Mecidiye*** պատվանշանի:

նության ընտրանին՝ ատլասից, փաստաթղթից, փաստավավերական խավից, պալատական պաշտոնյայից մինչև կայսրության արտասահմանյան երկրներում ներկայացնող դիվանագիտական հաստատությունների հայ աշխատակիցները, որոնք չափազանց մեծ թիվ են կազմել և հիմնականում վարել են թարգմանիչների, գրասենյակի ղեկավարների, առաջին քարտուղարների պաշտոններ, այդ թվում նաև տարբեր նախարարությունների, դատական և իրավական, բանկային ու առևտրական ասպարեզում ղեկավար պաշտոններ վարող հայ մասնագետները: Գրահրատարակիչներից հայ Հակոբ Պոյաճյանը անձնաշատ է օսմաներեն տպագրել: Նա համագործակցել է պետական մեծ պաշտոնյա (կառավարիչ, փաշի), բառարանագիր, բառերի մեկնաս ու բառերի համար թարգմանություններ (Մոլիեր) կատարած Ահմեդ Վեֆիկ փաշայի հետ: Նա աշխատել է 19-րդ դարի վերջին, օգտագործելով տպագրական ամենավերջին տեխնիկական հնարավորությունները: 1890թ. նա է առաջինը տպագրել Ջեյմս Ռեդհաուզի «Օսմաներեն-անգլերեն» բառարանը: Նա եղել է Խորհրդակցական համաժողովի (Էնջյումենի Դանիշ)-ի 30 բրակից անդամներից մեկը:

Շամսեդդին Սամիի հայտնի բառարանը ևս հայ հրատարակիչ է տպագրել՝ Միհրան Նազգաշյանը: Լրագրող, հրատարակիչ Միհրան Նազգաշյանը (1850-1944), որ առավելագույնս ծառայել է թուրքական քաղաքակրթությանը, 1879թ. հրատարակում էր ***Tercimanı Şarkı*** (Արևելքի թարգման), որը հետո վերածում է թուրքական առաջին մեծ օրաթերթի՝ ***Sabah***-ին: Թուրքական թերթերի հայազգի տնօրենները կամ արտոնատերերը, հաճախ, ի թիվս շքանշանների, ստացել են նաև պետական պաշտոնյաների աստիճաններ[20]:

1883թ. Միհրան Նազգաշյանը գնում է թուրքերեն ***Sabah*** օրաթերթը, որի արտոնատերն է եղել: Տիրան Քելեկյանը նշանակվում է խմբագիր, ապա՝ խմբագրապետ[21]: 1894թ. ***Sabah***-ի

20 1884թ. արտոնատեր Միհրան Նազգաշյանը՝ 2-րդ աստիճանի պետական պաշտոնյայի աստիճան է ստանում, ապա ***Liyakat Madalyası*** (վաստակի համար) և 2-րդ աստիճանի ***Osmaniye*** թուրք տպագրությանը մատուցած ծառայությունների համար (1899): ***Vakit*** թերթի արտոնատեր Շահինօղլուն 2-րդ աստիճանի ***Mecidiye*** է ստանում (1883): ***Tarik***-ի արտոնատեր Զեկիզ Շահինօղլուն Ռումինիայի թագավոր Կարոլ կողմից Առաջին կարգի «Ռումինիական մեծ խաչ» է ստանում (1887): ***Ticaret Gazetesi***-ի տնօրեն Միհրան Շիրինյանը ստանում է ***Rütbe-i Sâlise*** (1887): Տպարանատեր Կարապետ Քեչեչյանին շնորհվում է ***Rabia*** աստիճան (1894):

21 1899թ. ***Sabah***-ի խմբագիրներից Գասպիկ Միսաքյանին շնորհվում է ***Rütbe-i Sâlise***, Այվազյան Էֆենդիին՝ 4-րդ աստիճանի ***Mecidiye***, ավագ գրաշարներ Դարեհ Էֆենդիին՝ 4-րդ աստիճանի ***Osmaniye***, Խոսրով Էֆենդիին՝ 4-րդ աստիճանի ***Mecidiye***, իսկ Արամ, Ռուբեն Էֆենդիներին՝ ***Sanayi Nefise*** մեդալներ:
**Տիրան Քելեկյանը** (1862-1915 Չանղըրը) եղել է հայտնի բանաստեղծ, խմբագիր, մանկավարժ, Արքունի գանձարանի քարտուղար, ազգային գործիչ: Ուսանել է Պոլսում, Մարսելում հետևել է առևտրական գաղտնիքներին և Ֆրանսիայի Գիտությունների Ակադեմիայի դասախոսություններին: 1883թ. հրատարակել է հայատառ թուրքերեն ***Ճիհան*** շաբաթաթերթը: Խմբագրել, աշխատակցել է հայատառ թուրքերեն ***Մանզումէի Էֆքեար, Ճէրիտէի Շարգիյէ***, թուրքական ***Saadet, Yeni Fikr, Tarik, ,*** անգլիական և ֆրանսիական ***Daili Mail, Daili Grafic, Nineteenth Century, Contemporary Review, Egyptienne Graphic, Journal du Caire, Presse Assoye*** պարբերականներին: 1883թվականից ***Sabah***-ի խմբագիր:
1901թ. ***Sabah***-ի աշխատակիցներ Օննիկ, Միսաք, Այվազյան, Դարեհ և Խոսրով Էֆենդիներին շնորհվել է մեդալներ ***Rütbe-i Sâlise***: Կահիրեում եղած ժամանակ Տիրան Քելեկյանը սկսում է հրատարակել անգլերեն ***Egyptian Graphic, Bourse Egyptienne*** ամսագրերը (1902): Տիրան Քելեկյանը, վերադառնալով Եգիպտոսից, ***Sabah***-ի գլխավոր խմբագիր է դառնում (1908): Աբդուլ Համիդ Բ կայսրը նրան որպես բանագնաց 3 անգամ ուղարկել է Ժնև՝ հայ դաշնակցականների հետ համաձայնության հասնելու համար, որը չի կայացել: Գրել է հայատառ թուրքերեն գեղարվեստական և ստվարագիտական երկեր, հեղինակել «Ընդհանուր քաղաքական պատմություն» գործը, կատարել թարգմանություններ ֆրանսերենից: Կազմել է թուրքերեն-ֆրանսերեն ներգրավված բառարան: Պոլսի համալսարանում դասախոսել է թուրքերի քաղաքական պատմություն: Մեծ դեր է կատարել թուրք հասարակական առաջադիմական կյանքի առնչման գործում: Աքսորվել և սպանվել է Ալիս գետի մոտ:







արտոնատեր Միհրան Նազգաշյանը ստանում է ***Ulây-ı sâni, Rabia*** աստիճաններ, 3-րդ աստիճանի ***Mecidiye***: ***Sabah***-ի հետ է կապված նաև հայտնի գրող, հրապարակախոս Միսաք Գոչունյանի անունը (Քասիմ)[22]:

1886թ. Միքայել Փորթուգալ[23] փաշան ընտրվել է Թուրքիայի տպարանների մասին օրինաստեղծ խմբի անդամ: Այն պետք է նպաստեր կայսրությունում տարբեր լեզուներով հրատարակչական գործին:

22 Միսաք Գոչունյան (Քասիմ, 1863-1913) օսմանյան լրագրության մեծ հրատարակիչներից է եղել: Երբ Կարապետ Փանոսյանը կարգած ատացավ, ***Մանզումէի Էֆքեար*** հայատառ թուրքերեն օրաթերթը հանձնեց նրան, որը թերթի 500 օրինակ տպաքանակը հասցրեց 3500: Երբ մամուլի պաշտոնապես այն փակվեց, նա եղավ ***Sabah***-ի վարիչը (1894), շարունակելով թղթակցել հայերեն և հայատառ թուրքերեն պարբերականներին: Գրել է «Մեղավոր պեր հոգևորը» հայատառ թուրքերեն բանաստեղծություն, վեպեր, աշխարհագրական փոխանցել Նորգին, հեղինակել բազմաթիվ ընդարձակ վեպեր:

23 Պաշտոնական տպագրության տնօրենության ժամանակ մաքսային հարկերի ու մաքսատան օրենքների պատրաստման համար Միքայել Փորթուգալ փաշան պարգևատրվում է 2-րդ աստիճանի ***Osmaniye***, իսկ Պարսկաստանի կառավարության կողմից՝ ***Şir-ü Hurşid*** շքանշաններով: Նա «Ջիրայր» բանկի հիմնադիրներից էր ու Արքունի անձնական գանձարանի նախագահ: Պետական պաշտոնյաների պատրաստման վարժարանում դասախոսություններ կարդաց: Նրան չի խանգարում եղիչի մասին 1905թ. ուսանողական թերթերում հրատարակել Վենետիկում:

տպագրվում էր «Ասըր» տպարանում (1898).

25. ***İSTANBUL*** թերթի գլխավոր խմբագիր Մանուկ Բաժմճիյանն արժանացել է ***Rütbe-i Sâlise***-ի (1899).

26. ***LİSAN ÜL HAL*** թերթը տպագրվել է Բեյրութում (1899): Արտոնատեր Հալիլ Սարգիս էֆենդին ***Mecidiye*** շքանշանի է արժանացել:

27. ***GEVEZE*** (1908թ. զավեշտաթերթը սկսում է հրատարակվել Գրիգոր Ֆախիկի կողմից «Ասըր» տպարանում).

28. ***KARAKUŞ EZOP*** զավեշտաթերթը շաբաթը 2 անգամ սկսում է հրատարակել «Թյութբիկե» գրավաճառանոցի տեր Միհրան էֆենդին «Ջիհան» տպարանում (22.09.1908).

29. ***İKAYET*** շաբաթաթերթը Արթին Պողոսյանի արտոնատիրությամբ և Մ. Ռաֆֆի գլխավոր խմբագրությամբ հրատարակվել է «Ջիհան» տպարանում (1909).

30. ***ANADOLU ÇANTASI*** շաբաթաթերթը լույս է տեսել Մարգար Մարգարյանի և Աստուր Մատթեոսյանի կողմից (1909).

31. ***YENİ GEVEZE*** երկօրյա երգիծաթերթը հիմնում է Գրիգոր Ֆախիկը և տպագրում Կարապետ Քեշիշյանի տպարանում (1910).

32. ***AZAD*** թերթը տպագրվել է «Մանզումէի Էֆքեար» հայատառ թուրքերեն օրաթերթի տպարանում (1910).

33. ***PERDE*** շաբաթաթերթը հիմնադրել է Գրիգոր Ֆախիկը: Ա.Սամիի տնօրինությամբ տպագրվել է «Ասըր» տպարանում (1911).

34. ***AHALİ*** օրաթերթը հրատարակվել է Հովհաննես Ֆերիտի կողմից: Գլխավոր խմբագիր՝ Մեվլյանզադե Ռըֆաթ: Տպագրվում էր «Մանզումէի Էֆքեար» հայատառ թուրքերեն օրաթերթի տպարանում (1911).

35. ***KADER*** օրաթերթը հրատարակվել է Մեսրոպի կողմից Պոլսում հայերեն և օսմաներեն լեզուներով (6.01.1912) .

36. ***AFFIYET*** առողջապահական պատկերազարդ ընտանեկան շաբաթաթերթը հրատարակել է Միսակ Ֆերիտը[30] Պոլսի «Լույսին» տպարանում, Ավանզադե Սուլեյմանի խմբագրապետությամբ (9.10.1913).

37. ***GUZEL PRENSES*** եռօրյա ամսագիրը Միսակ Ֆերիտը սկսում է տպագրել Ղալաթիայում, «Լույսին» տպարանում: Տպաքանակը՝ 12 000 (26.11.1913).

38. ***MUSAVVER MAHASİ*** կիսամսյա հանդեսը Ձերի Սավանը հրատարակել է Իզմիրի «Քեշիշյան» տպարանում (1914).

39. ***SAADET, YENİ FİKİR, TARİK, NECAT-I MİLLET***, և այլն

Սկզբ մյուսի հետևից սկսում են բացվել տպարաններ, տառաձուլարաններ, թղթի ու տպագրական նյութերի վաճառատներ, կազմատներ, որոնցից ոմանք ուղղակի նախատեսված են եղել բարձր խավի, հարուստ հաճախորդների, առանձնահատուկ իրադարձությունների առթիվ կատարվող շքեղ պատվերների[31] նկատառումով:

30 1905թ. Սամոսի փաշայության խորհրդական Միսակ Ֆերիտ բեյը նշանակվել է Սամոսի փաշայության պետի օգնական:

31 1890թ. «Լևոն Գարագաշյան և որդ.» ընկերության «Օսմանեան կազմատուն»-ն իրենից ներկայացնում է տարբեր կենդանիների կաշվե կազմերի, կոկորդիլոսի կաշվով պատված իրերի՝ տարբեր գույներով, տպագրական շքեղ ու ոսկեզօծ կազմեր պատրաստող արհեստանոց: 4-րդ աստիճանի ***Mecidiye*** և ***Sanayi Nefise Madalyası*** շքանշաններով են պարգևատրվել Բարձր Դռանը հարող պետության գործոն














Կարապետ Փանոսեան






Տիրան Կէլէկեան






Հայկական որոշ տպարաններ հիմնականում օսմաներենով[32] տպագրել են բուրք հեղինակների գործերը: Թուրքական թերթերի հայազգի տնօրենները կամ արտոնատերերը հաճախ, ի թիվս շքանշանների, ստացել են նաև պետական պաշտոնյաների աստիճաններ[33]:

Նրանց անվան հետ է կապվում ոչ միայն գրքերի, պարբերականների հրատարակությունը, այլև բուն տպագրական գործի զարգացումը, օսմաներեն տպագրական մայր տառերի ստեղծումը, ձուլումը, թղթադրամների, դրոշմանիշների, փոստային և այլ բացիկների, ազդագրերի, քարտեզների և այլնի տպագրությունը: Կառավարությունն իր ուշադրության մեջ չի անտեսում նաև հայատառ թուրքերեն պարբերականները, այն ստեղծողներին: Նրանք ևս արժանանում են պարգևատրությունների, շքանշանների՝ ի նշան կայսրության ժողովուրդներին մատուցած ծառայության գնահատության [34]:

---

տպագրիչ փորագրողները: Տպարաններից հայտնի են եղել Մ.Դանաղյանի տառաձուլարանը՝ Պոլսի Օրուն բաժրոր ճամում (1890), Հ.Մատթեոսեան թղթավաճառի տպագրության, լիտոգրաֆիայի լույս տեսած (1890) «Անդիկյան» խանում, ինչպես նաև Նշանեւ Փափազյան տպարան-բողի վաճառատունը Սուլթան համամում (1886):

32 Միհրան Այտնի «Զիհան» գրատունը հրատարակել է Սամիփաշազադե Սեզաիի, Համիթ Զիյա Ուշաքլըգիլի, Միհմեր Ռաուֆի, Սուլեյման Նազիֆի և այլոց գործերը: Տպագրել է արևմտերեն վերաբերող գրքեր, կանոնագրեր:

33 Տպարանատեր Միհրան Նազգաշյանը՝ 2-րդ աստիճանի պետական պաշտոնյայի աստիճան է ստանում (Իփինջի սընըֆ մանսըփըր, 1884թ.): *TICARET GAZETESİ*-ի տնօրեն Միհրան Շիրինյանը ստացել է ***Rütbe-i Sâlise*** (1887): ***SERVET & MALÛMAT*** պարբերականների տնխնիկական աշխատակիցներ Հարություն և Արշակ Էֆենդիները 1898թ. արժանանում են մասնագետների համար նախատեսված ***Sanayi Nefise Madalyası***, իսկ 1900թ. այդ թերթերի տպագրիչ Խաչիկ Գևորգյանը՝ 4-րդ աստիճանի ***Mecidiye***. ***SERVET*** և ***İRTIKA*** թերթերի հրատարակիչներ Հարություն և Անտոն Էֆենդիները՝ 1899թ. ստանում են ***İftihar Madalyası***, խմբագիրներից Կարապետ Թոփճույանին շնորհվում է ***Rütbe-i Sâlise***: Հոդվածագիրխմբագիրներից Մանուկ Էֆենդիին, որ նաև ֆրանսերեն, թուրքերեն, արաբերեն թերթերի հեղինակ էր շնորհվել է ***Mütemayiz*** աստիճան, իսկ 1903թ.՝ ***Ulây-i Evvel***.

34 «Մանզումեի Էֆքիար» թերթի պատասխանատուներ Աբիսան Քոչարյրդդյանին, Միսակ Գույումջյանին, Օննիկ և Խաչիկ Էֆենդիներին, գլխավոր արտոնատեր Դավիթ Էֆենդիին շնորհվել է ***Rütbe-i Sâlise*** (1901).





Արևմտահայ իրականությունում վաճառականապետ (բազիրկան բաշը) Ագուլեցի Գրիգոր Անուշյանը (1760-1830) առաջանիկ երգիծաբաններից մեկն է համարվում:

Օսմաներեն առաջին երգիծաթերթերը հրատարակվել են հույն հրատարակիչ Թեոդոր Քասաբի կողմից 1870-72թթ.՝ ***DİYOJEN*** (Դիոգենես) և նրա փակումից հետո՝ ***ÇINGIRLI TATAR*** (29 համար միայն): 4 էջանոց ***DİYOJEN***-ը 183 համար հրատարակել է օսմաներեն, ֆրանսերեն, հայերեն, հունարեն: Նրան աշխատակցել են հայտնի Նամըք Քեմալը, Ալի Բեյը, Էբուզզիյա Թևֆիքը և այլոք: Երբ ***DİYOJEN***-ում քննաձեր 3, ապա մյուս համարյա ամեն մի էջում ծաղրանկար կա: ***HAYAL*** օսմաներենով երգիծաթերթը լույս է տեսել նույն Թեոդոր Քասապի կողմից (1873-77)[35]: Երգիծաթերթերին համ ու հոտ են տվել ժամանակի հայտնի ծաղրանկարիչ Նշան Պերպերյանի շարժերը (Իսպանիայի Ֆիլիպ Բ թագավորի որդու՝ Դոն Կառլոսի, եվրոպական քաղաքական հայտնի դեմքերի, Պոլսի երևելիների զինանկար-ծաղրանկարները՝ փոքր մարմինների վրա մեծ գլուխներով):

Օսմանյան կայսրության շրջանում Պոլսում շուրջ 400 անուն օտարալեզու պարբերականներ են հրատարակվել հայերի մեծ մասնակցությամբ, 187-ը՝ Անատոլիայում[36], և շուրջ 120 անուն հայատառ թուրքերեն պարբերականներ՝ սկսած 1840 թվականից:

* * *

Ֆրանսերեն լեզվով պարբերականների հրատարակիչների և գլխավոր խմբագիրների, արտոնատերերի գերակշռող մասը հայեր են եղել:

1. ***LE MUKBIR*** հրատարակվել է Ֆիլիպ Շահինօղլուի կողմից, թուրքերեն նույնանուն ***MUHBIR***-ից 4 օր անց (4.01.1867).
2. ***ILYAN*** շաբաթաթերթը տպագրվել է Հովսեփ Ազնավուրի կողմից (1886).
3. ***GAZETTE ECONOMIQUE FINANCIERE*** ֆինանսական շաբաթաթերթը հրատարակում է Կարապետ Գասպարյանը Պոլսում (1886): 1887թ. Գրիգոր Չաղըճյանին իրավունք են տալիս շարունակելու ***Gazette Economique Financière***-ի հրատարակությունը.
4. ***FHARE DU BOSPHORE*** թերթի գլխավոր խմբագիր է եղել Հովհաննես Անձյանը (1887): Նա Հռոմի պապի կողմից ստացել է մեծ ***Saint Gregoire*** շքանշան:
5. ***PERA*** օրաթերթը լույս է տեսել Պոլսում Զարեհ Յուսուֆյանի կողմից (1898).
6. ***LALANGUE*** շաբաթաթերթը Մեհմեդ Հալիմի և Գրիգոր Ֆահրի տնօրինությամբ տպագրվել է «Աստղ» տպարանում (1898):
7. ***İSTANBOL*** (1899): Թերթի գլխավոր խմբագիր Մանուկ Բեսիմճյանն արժանացել է ***Rütbe-i Sâlise*** և 4-րդ աստիճանի ***Osmaniye*** շքանշանի (1904):
8. ***LA REFORM*** թերթը Իզմիրում հրատարակվել է Ստեփան Ռսկանյանի կողմից: Նրա մահվանից հետո արտոնատեր է դարձել եղբայրը՝ Արտաշես (1901):
9. ***LA PATRIE*** շաբաթաթերթը հրատարակել է Հովհաննես Միսաքյանը (4.10.1908):
10. ***L'ECLAIR*** 15 օրյա գավիշտաթերթը հրատարակել է Կարապետ Էֆենդին (1908):
11. ***LE LIBÉRAL*** թերթը հրատարակվել է Ա.Թորգոմ(յան)ի տնօրինությամբ (1909):
12. ***KANAKULUM*** թերթը հրատարակել է Կարապետ Գալֆայանը (1.10.1910):

---

35 Թեոդոր Քասապը (1835-1905) մինչ այդ, 1870-73թթ. հրատարակել է ***DİYOJEN*** թերթը:
36 Տես՝ Աբեան Յարման... էջ 60.

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱՆՎԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ ԵՎ ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆԵՐ



Տիրան Քելեկյան



Մկրտիչ Փորթուգալյան



Զարմայր քհն. Կեզտյան



Վահան Քյուրքճյան



Սայրո Սահակ (Սայրոյան)



Նշան Գալֆայան



Յակոբ Խոտշավերդյան



Յակակում Պեկյան



Պոլեն Չարդարյան





13. **INTRANSIGEANT** թերթը հիմնել է Տիգրան Հանդանյանը (1910): Տպագրվել է Քրիստոֆ Մեֆոն տպարանում:
14. ***LA TURQUIE*** (1910-ական թթ.):
15. ***L'INDICATEUR GENERAL DES TRANSPORTS EN TURQUIE*** թերթը հրատարակել է Լևոն Բեգյանը (1911):
16. ***REVUE D' ORIENTE*** 15 օրյա հանդեսը հրատարակել է Վիչեն Ազնավուրը (1913).
17. ***LA VÉRITÉ*** թերթը հրատարակել է Հակոբ Թոփչյանը (1.10.1918):
18. ***RENAISSANCE*** օրաթերթը հրատարակել է Տիգրան Չայանը: Տպագրվել է Դ.Հակոբյանի «Անահիտյան» տպարանում (9.12.1918):
19. ***L'INFORMATIONE D' ORIENTE*** շաբաթաթերթը տպել է Երվանդ Էֆենդին (27.12.1918).
20. ***LE PEROTE*** թերթը հրատարակել է Գաբրիել Թըրզոնյանը, Կալմանովիչի տպարանում (1919).
21. ***LUNDI*** շաբաթաթերթը հրատարակվել է Սիմոն Խորենի կողմից Ֆ.Ճարյան տպարանում (11.06.1919):
22. ***INTRANSIGEANT, JEUN TURC*** և այլն:

Անգլերեն, ֆրանսերեն պարբերականներում հայտնի են եղել նաև հայտնի լրագրողներ: Այս առայարեզում հայտնի անուններից է եղել Արդալ Համիդի հարենի թարգման Նազգաշյան Եվգինեի դուստրը՝ Միրեյը[17]:

Մի շարք պարբերականներ հրատարակվել են թուրքերեն-հայերեն-հունարեն, նաև՝ թուրքերեն-ֆրանսերեն, խառնորեն լեզուներով, որոնք արդյունք են եղել երեք-չորս ազգության հրատարակիչների ընդհանուր շահերի և ողղվածության համատեղ գործունեության:

1. ***L'ILANE*** թուրքերեն, հայերեն, հունարեն և ֆրանսերեն շաբաթաթերթը Գարեգին Պոյաճյանը հրատարակել է Պոլսում (1907).
2. ***L'OVRE–İŞ*** թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն թերթը հրատարակել է Վահան Հարփուրլույանը «Կալպակս» տպարանում (1908).
3. ***KOUİL DARİ*** թուրքերեն, հայերեն, հունարեն և ֆրանսերեն թերթը հրատարակվել է Միհրան Խաչերեճյանի որդու կողմից (1908 հուլիս).
4. ***KÜÇÜK İLANAT GAZETESİ*** 1908թ. թուրքերեն, հայերեն, հունարեն և ֆրանսերեն թերթը հրատարակել է հայ խմբագիրների հետ Մահմուդ Նեդիմը (1908).
5. ***NECATI MİLLET*** օսմաներեն-հայերեն թերթը տպագրվում է Աստուր Տեր Մատթեոսյանի արտոնատիրությամբ: Ընթացքն է եղել՝ «Օսմանեան հայրենիքին քաղաքական, ընկերական և տնտեսական կենսական շահերուն» (20.09.1908).
6. ***İMERİON*** հայերեն, հունարեն, թուրքերեն և ֆրանսերեն թերթը հրատարակվել է Միքիայի Էֆենդիի կողմից (1910).
7. ***HERMES*** հայերեն, հունարեն, թուրքերեն և ֆրանսերեն թերթը հրատարակվել է Միքիայի Էֆենդիի կողմից (1910).

---

[17] Muammer Göçmen, *Yabancı Basın Nasıl Takip Edilirdi?* Tarih ve Toplum, Ist. 1994, 128, s.18-24.
Միրեյ (Յաղութ Նազգաշյան -1941) եղել է ֆրանսախոսիր լրագրող: Աշխատակցել է Կ.Պոլսի «Լևանտ Հերալդ» անգլերեն, «Ստամբուլ» ֆրանսերեն և Փարիզի «Անոլ» պարբերականներին: 1920թ. տեղափոխվել է Համաստան:

ներից հետո և առաջին անգամ լինելով արաբական տառերով *չինովնիկ հրապարակություն* է սկսում Բանկալըքյում։

**Ճանիկ Արամյանը** (1820-1879) իզմիրցի հռչակավոր վիմագրող, փորագրիչ, գրաձուլող, տառատեղծ, տպագրիչ և տպարանատեր, արխեոլոգ, գրող, բառարանագիր է եղել։ Տիրապետել է ֆրանսերենին, ապրել նաև Ֆրանսիայում, ծրագրվել է գրաշարությամբ, դերձակությամբ, աշակերտել փարիզյան նշանավոր տպագրիչներին։ Նրա հնարած տառատեսակների թիվը 73 է։ Փարիզում, Վալոնի տպարանում հայերեն գրքեր տպագրելով, իրավունք է ստանում նրանց վրա դրոշմել «Արամյան տպագրություն» բառերը։ 1860թ. Փարիզում իր անունով տպարան է հիմնել։ Տպագրել է մեծածախս, նկարազարդ գրքեր, ալբոմներ։ 1865թ. վերադարձել է Կ.Պոլիս, 80 ոսկի աշխատավարձով վերատեսուչ աշխատել Արքունի տպարանում։ Եվրոպական տեխնիկայով նրա տպագրած գործերը հիացրել են իրենց հայերեն, օսմաներեն գեղածոր տառերով և ժամանակի ամենավայելուչ տպագրություններն են համարվել։ Ազգային մեծ, անձնվեր գործունեություն է ունեցել։

**Արշակ Հակոբ Պոյաճյանը** (1837-1889) Ղրիմի պատերազմի ժամանակ որպես թարգմանիչ է ծառայել, ապա՝ առևտրական գործերով Ղրիմ է տեղափոխվել։ Մեկնել է Անգլիա, աշխատել, ծանոթացել տպագրության անգլիական դպրոցին։ Վերադառնալով Կ.Պոլիս, տպարան է հիմնադրել։ 1859թ. նրան է հանձնարարվել Արքունի տպարանի բարենորոգման գործը, որ պատվով է կատարել։ 1860-ական թթ. Կիլիկիայում ուսում ու երկրագործություն տարածելու նպատակով ընկերակցել է Գրիգոր Օտյանին, Գրիգոր Աղաթոնին ու այլ հայտնի ազգայիններին։ Երբ Գրիգոր Աղաթոնը նշանակվում է Հեռագրական վարչության տեսուչ, պաշտոնական տպագրությունները հանձնում է Հակոբ Պոյաճյանին։ *Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հրամանագրով (Իրադե) նրան է հանձնվում բանակային տպագրության գործը*։ Բողոքական հայերի «ազգապետ» է ընտրվել (1889)։

**Գևորգ Զարդարյան** (1834-1888) տպարանատեր և հրատարակիչը 1870թ. հիմնել է տպարան, ապա՝ կազմատուն, ծխախոտի թղթի գործարան, ստվարաթղթի գործարան։ Նա է հնարել բազմալեզվյա պատի օրացույցը, որ հրատարակել է մինչև իր մահը։ 1873թ. սկսել է տպագրել փոքրածավալ «Ժողովրդական Տարեցույց»-ներ։ Այն դադարեցրել է (1880), որպեսզի չվնասի ս.Փրկիչ Ազգային հայ հիվանդանոցի օրացույցներին։ Զբաղվել է վիմագրական գունավոր վիմագրական արվեստով։ *24 կտորից բաղկացած Օսմանյան պետության մեծածավալ քարտեզն իր վարպետության ապացույց կարող է համարվել։* Վիմագիր ձևով հրատարակել է 31 ձայնագրյալ տետր դաշնամուրի ու ջութակի համար՝ Նոթաճը Հաջը Էմինի հետ միասին։

**Պետրոս Ճեզվեճյանը** (1839-1882) որպես մամլագործ վարպետ պաշտոնավարել է Արքունի տպարանում։ Իր սեփական տպարանում ի թիվս գրքերի, պարբերականների, թատրոնի համար մեծ ու փոքր ազդագրեր է տպագրել, զանազան նման գործեր կատարել։

**Սերվիչեն** (Չաքըրյան, 1862-1924) նախապես զբաղվել է փորագրությամբ, 1880թ. հիմնադրել է տպարան, զբաղվել կառավարական և պաշտոնական գործերի բազմալեզվյա տպագրությամբ։ Օսմանյան կառավարությունից ստացել է ***Bala*** պատվավոր աստիճանը։

**Քիրազճը Մարգարը** (1789-1845) պոլսահայ գրավաճառների նահապետն է համարվում։ Նա 1805թ. Կոսկա թաղամասում, Աբրահամ Ամիրայի տպարանի մոտ հիմնում է «Մարգար-





յան գրախանութ»-ը, որն առաջին գրախանութն էր։ Այս գրախանութը բացվեց նաև Մերջան չարշըսը և Եղիզլը խան հատվածներում։ Նրա գրատունը ժամադրավայր է եղել ուսուցչականների, գրականության մարդկանց համար, որ հավաքվել են, վիճաբանել օրվա խնդիրների շուրջ։ Նա է մղել է որոշ ամիրաների՝ հովանավորելու համար մեծաքանակ գրքերի մի շարք հրատարակություններ։ Մահվանից հետո իր գրքերը գնել են ու վաճառել Փարիզի Ազգային մատենադարանին։ Նրա որդին՝ **Հարություն Մարգարյանը**, չի սահմանափակվել հին գրքեր վաճառելով։ Նա նոր ոգի է մտցրել գրավաճառության գործում։ Հեղինակների հետ պայմանավորվելով, նա իր միջոցներով տպագրել է գրքեր, զգուշանալով որպես հրատարակիչ ներկայանալուց։ Հիմնադրել է «Եղբարք Գրավաճառութեան» ընկերությունը։ Գիշերային ու կիրակնօրյա դասեր է կազմակերպել՝ հիմնականում պանդուխտների, մեծահասակների համար։ Նրա *գյուտն է* հայկական այբուբենով հաղդագույն թաշկինակը, որ պատվիրել էր Մանչեստրում։ Թաշկինակի չորս անկյուններում հրեշտակներ էին, իսկ կենտրոնում՝ մեծադիր տառերը, բվանշաններ և «Կարդալ սորվեցեք, զիրար սիրեցեք» գրությունը։ Հարություն աղա Մարգարյանի կողմից այն ձրիաբար տրվում էր խանութից գիրք գնած գավառացի հայերին։ Տպագրել է տվել խաղաթղթեր, որոնց վրա եղել են հատվածներ հայոց պատմությունից՝ շարադրված Արմենակ Հայկունու կողմից։ Տպագրել է տվել նաև պատի փոքրադիր օրացույցներ, որոնց ամեն մի թերթին Եզովպոսի առակներից երկտող է տպագրված եղել։ Նրա նշանաբաններից են եղել՝ «Հայ մարդուն՝ հայ աղջիկ», «Երբ ուսուցիչներ կարդալ կրթան՝ գիտցեք, որ ազգը լուսավորված է», «Երբ ամեն հայ գրել-կարդալ գիտնայ, ինքնին կուգա ազատությունը» և այլն։ 1870թ. տպարան է բացել։ Նրա որդին՝ Վահրամը, տպագրել է թուրքախոս երեխաների համար զվարճալի զրուցարան-դասագրքեր, ինչպես նաև *թուրք ուսանողների հայերեն ուսուցանելու դասագրքեր*։ 1879թ. տպագրել է 50 նշանավոր հայ ազգայինների մեծադիր, վիմագիր խմբանկարը, կորստից փրկելով նրանցից մի մասի հիշատակը։

**Կարապետ Քեչիշյանը** (1850-1910) եղել է օսմանյան զինվորական և քաղաքական վարժարանների (Հարբիյե) գրավաճառ-տպագրիչը։ Հրատարակել է թուրքերեն և հայատառ թուրքերեն անհամար էժան դասագրքեր, հանդեսներ։ 1898թ. Չիկագոյի միջազգային ցուցահանդեսում ստացել է «Ոսկե մեդալ», Ճապոնիայի կայսրից (Միկադոյից)՝ «Ծագող Արեգակի պատվանշան»-ը, Սերբիայի թագավորից՝ «Թակովայի Ա աստիճան», Օսմանյան կառավարությունից՝ ***Osmaniye*** և ***Mecidiye*** շքանշանները, «Արհեստի շքադրամ» (***Sanayi Nefise Madalyası***)։ Ունեցել է ***Ulây-ı Evvel*** բարձր աստիճանը, եղել է Նյու-Յորքի բարեգործական ընկերության պատվավոր անդամ։ Օսմանյան թերթերով ու գրքերով ասպարեզը ողողած այս անձի գործը շարունակել են նրա զավակները՝ «Կ. Քեչիշյան Որդիք ընկերություն» անվամբ։

**Հարություն Սվաճյանը** (1831-1874) սկսում է հրատարակել *ՄԵՂՈՒ* առաջին պատկերազարդ երգիծաթերթը (1855), որը մեծ հաջողություն է արձանագրել պարբերական մամուլի պատմության մեջ։

**Հովհաննես Աշճյանը** (1857-1914) պոլսահայ հայտնի գրավաճառ, հրատարակիչներից է եղել։

**Ճիվելեկյան Տիգրանը** (1848-1907) տնօրենել է Վարդան փաշայի (Հովսեփ Վարդանյանի) «*Մէրճիմաճը Էֆքեար*» հայատառ թուրքերեն թերթի վարչությունը (1877-1885), 1885թ. ստացել է «*Ճէրիտէի Շարգիյէ*» հայատառ թուրքերեն օրաթերթի հրատարակման արտո-

նությունը, որը և հրատարակել է մինչև մահ: 1881թ. հիմնադրած իր տպարանը հայերեն և հայատառ թուրքերեն բազմաթիվ գրքեր ու ժամոց է տպագրել: Արժանացել է 4-րդ աստիճանի ***Osmaniye*** և ***Mecidiye*** շքանշանների:

Բացի Պոլսից, հայերը մեծ ավանդ են ունեցել Օսմանյան կայսրության մեծ քաղաքների, գավառների տպագրական գործի հիմնադրման ու զարգացման մեջ[44]:

Իզմիրում 1676 թվականից սկսել է հայկական տպարան գործել: Այնտեղ է տպագրվել «Գիրք Մաշտոցայ վարդապետի»-ն: Իզմիրում 1762թ. հրատարակվել է մի «Խզնիկ»: Իզմիրում հայերեն, հայատառ թուրքերեն տպագրությունները կատարվել են նաև օտար, բողոքական միսիոներական Հ.Հալլոքի, ապա Գ.Կրիֆֆիթի տպարաններում: 1838 թվականից Գուլեմիոս Կրիֆֆիթը առատորեն կրոնական գրքեր է հրատարակել, այդ թվում՝ հայատառ թուրքերեն:

**Հարություն Տետևյանը** (1832-1868) Վենետիկից, Վիեննայից ու Պոլսի Մյուհենդիսյան տպարանից տառեր բերելով 1851թ. Իզմիրում սեփական տպարան է հիմնել: Փարիզ գնալով, բերել է տպագրական մամուլ, նոր տառեր է ձուլել տվել: Նա հրատարակել է «*Արշալույս Արարատյան*» թերթը 1853-1856թթ.: Նա թարգմանել, տպագրել է եվրոպական դասականներին, իսկ թերթոններն ավարտից հետո գրքեր են դարձել: Նա տպագրել է Օսմանյան պատմության պատկերները որպես փորագրանկարներ (գրավյուրաներ): Նրա քաջալերմամբ Մատթեոս Մամուրյանը, Գրիգոր Չիլինկիրյանը, Մսերյանը, Նուպարյանն ու այլ մտավորականներ բազմաթիվ թարգմանություններ են կատարել, որոնք տպագրվել են «Տետևյան» տպարանում հայերեն և հայատառ թուրքերեն լեզուներով, հնարավորություն ընձեռնելով, որ այն կարդան նաև թուրքախոս այլ ազգեր: Թուրք մտավորականներին նա պատվիրել է կատարել փոխադրություններ, հեղինակել համանման սեփական պիեսներ և կամ՝ եղածը վերածել օսմաներենի, թատրոնի համար նյութեր պատրաստել: Այսպիսով, նա Իզմիրում ընթերցասիրության բոցը վառողներից է եղել: Նրա վաղաժամ մահվանից հետո գործը շարունակեցին եղբայրները (մինչև 1893թ.):

Տպագրական մշակույթի կարևոր մի բնագավառ է եղել քարտեզների հրատարակությունը[45]:

44 Հայերը, որ էլ որ լինեին զարմանալի հակում են ունեցել դեպի գրահրատարակչությունը, գրավաճառությունը, և այն տարածվել է նաև օտարալեզու գրքերի ու գրականության վրա: Այսպես օրինակ, 1828թ. Վիեննայի Մխիթարյան միաբանությունից Արիստակես Ազարյանը գերմաներեն գրքեր հրատարակելու ու վաճառելու իրավունք ձեռք բերեց՝ ի նպաստ Մխիթարյան միաբանության: Վիեննայում բացվեց Մխիթարյան գրախանութ (Mechitharisten-Buch handlung, Sortimentshandlung): Այն 1869թ. հանձնվեց H.Kirsch-ին, միաբանությունը թողնելով միայն իր կողմից տպագրված գրքերի վաճառքը: Ազարյանն ուզում էր իր բարձր գաղափարն իրականացնել և Ավստրիայում տարածել բարեպաշտական գրքեր, ի մի բերել գերմանական գրված ուժերը: Այս սրտանց նա հիմնեց «Կաթոլիկե բարեպաշտ գրքեր տարածողը ընկերություն»: Անդամակցության պայմանն էր՝ տարեկան 6 ֆլորին, որի փոխարեն տարեկան 6 գիրք էին ստանում, յուրաքանչյուրը՝ 20 թերթից: Միությունը գործեց մինչև 1849 թվականը: Նրան անդամագրված էին Ֆրանցիսկ Իոսիֆ Ա և Ֆերդինանդ կայսրերը: 1848թ. աշխատանքարարությունը վնասեց նաև այս միությունը, որը 1866թ. վերակենդանանալով, վերածվեց «*Pilger*» թերթի: 25 տարվա ընթացքում լույս ընծայվեց 127 գիրք, բաժանվեց 600 հազար ընտանիք տպաքանակով գիրք:

45 Գիտնական, թարգմանիչ **Գրիգոր Մազլումյանը** (1852-1922) տպագրում է «*Համառոտ քննական աշխարհագրութիւն Ռուսոյ գաւառի եւ նոր ազգաց*» աշխարհագրությունը՝ քարտեզներով հանդերձ (1909), «*Պատկերազարդ եւ քարտիսավոր Օսմանեան պետութեան ի սկզբան բաժինք ու բաղկացուցիչներ եւ իւրաքանչիւր հայ վարժարանաց*» (1912): Պոլսում, 1914թ. քարտեզագիր **Գևորգ Մազլումի**, նկարիչ **Արա Փիլիկյանի** ու տպագրիչ **Ս. Նշանեանի** կողմից տպագրվում է «*Հին Հայաստանն ու շրջակա երկրները*» քարտեզը





Կալլիգրաֆ (գեղագիր) և նկարիչ **Պետրոս Քաջունին** «Մոնոգրամների ալբոմ» է հրատարակում Տրապիզոնի «Խամալ Հարբը» տպարանում (1900):

**Կարապետ Ուտուճյանը** (1823-1904) հայատառ թուրքերենով 1876-77թթ. հրատարակել է «*Ռուզնամէի Մասիս*» հայատառ թուրքերեն պարբերականը: **Ուտուճյան Սեդրակ Խաչատուրը** Պոլսում 1882-1908թթ. հրատարակել է «*Բիրակն*» հանդեսը: 1900թ. **Մկրտիչ Ուտուճյանը** ցինկոգրաֆիայի և կլիշեի արհեստանոց-տպարան է բացել Սուլթան Համամում: 1913թ. փորագրիչ, ցինկոգրաֆ **Գրիգոր Ուտուճյանը** հրատարակում է Լյուդովիկոս XIV, Լյուդովիկոս XV-ի ոճով հայկական և ֆրանսիական, նաև՝ տառերի մոդեռն մոնոգրամների շքեղ մի ալբոմ, ներկայացնելով հայկական տպագրության բարձր որակի, վարպետության ու առաջընթացի ևս մի ապացույց:

Նույն, 1913թ. **Գրիգոր Կույումճյանն** իր տպարանում հրատարակում է հայկական տառերի «Ալբոմ Մենագրոց» (մոնոգրամների, ֆրանսերեն շարքերով): Մոնոգրամների կոլորիտը, տպագրական բարձր որակը, լուսանկարիչների վարպետությունը և գեղանկարչական ճաշակը այսօր էլ զարմանք են պատճառում, երբ նայում ես տարբեր ժամանակաշրջանների մարդկանց այցեքարտերին, գրասենյակների, միությունների, առևտրական ու արդյունաբերական կազմակերպությունների, խանութների, տարբեր ժամանցային, ժամանակի պրակտիկայով վիրտուոզների կողմից պատվիրված խորհրդանիշերով թղթերին, այցեքարտերին ու ադրեսներին, փոստային բացիկներին, լուսանկարների տակ կամ հակառակ կողմում տպագրված նույն այդ խորհրդանիշերով ու տարբեր լեզուներով հասցեների տպագրությունը, որոնք



Գասնիկ Երեցյան. գեղագրության օրինակներ:
Ներքևում՝ Աբդուլ Համիդ Բ սուլթանի կնիքը
(Սադաֆ՝ փայտի վրա)

երբեմն ոսկեզօծ, փայլուն, ոռոցիկ մակերեսով տպագրությունների հրաշալի ու մեծածավալ օրինակներ են ներկայացնում:

Հայկական տպարաններ են եղել Արմաշում, Վանում, Մուշում, Բուրսայում, Այդինում, Ադաբազարում, Կոնիայում, Իզմիրում, Սամսոնում, Կարինում, Երզնկայում, Եդիրնեում, Խարբերդում, Ամասիայում, Մարզվանում, Այնթապում և այլուր[46]: Դրանք հայատառ թուրքերեն, օսմաներեն պարբերականներն էին, որոնցից օգտվում, որոնց բովանդակում էին նաև թուրք պաշտոնյաները, մտավորական խավը: Նրանք թուրք կրթական և մտավորական կյանքի զարգացմանը թանկագին ծառայություն են մատուցել՝ հրատարակելով թուրքերեն լրագրեր, դպրոցական դասագրքեր (հայատառ թուրքերեն և օսմաներեն), նաև՝ հայերենով թուրքերենի դասագրքեր: Այս դասագրքերը նախատեսված են եղել հայկական, թուրքական դպրոցներում և մասնագիտական, բարձրագույն պետական ուսումնական հաստատություններում օսմաներեն լեզվի ուսուցման համար[47]: Այնպիսի տպավորություն է, թե չի եղել կյանքի մի անկյուն, որը չտեսներ իր տպագիր օրգանը: Նույնիսկ Գրիգոր Գալուստյանի և Մ.Սարյանի կողմից կիսամսյա պատկերազարդ ամսագիր է հրատարակվել նորահարսերի համար՝ «*ԱՌԱՒՕՏ*» (1919-20թթ. Պոլիս), որը 1920թ. կեսերից անվանափոխվել է «*Հայ պարմանուհի*»-ի:

Այս տպարանների, հրատարակչական տների արտադրանքը, գլխավոր ու պատասխանատու խմբագիրները աննշան բացառությամբ եղել են հայեր, պալատին մոտ կանգնած, մեծ համարում ունեցող մտավորականներ: Հայտնի է, որ նրանցից ոմանք սուլթանի, Բարձր Դռան կարգադրությամբ դիվանագիտական ուղևորություններ են կատարել, հիմնականում՝ Ժնև, Վիեննա, Փարիզ:

Սուլթանական պալատում, կառավարությունից (Ներքին գործերի նախարարությունից) անկախ գործում էր մի վարչություն, որը զբաղվում էր երկրում ազգային փոքրամասնությունների հետ քաղաքական հարաբերությունների կարգավորման խնդրով: Ահա նրանց կարգադրությամբ են որոշ հայ մտավորականներ (ինչպես, օրինակ, Տիրան Քելեկյանը) ուղարկվել Եվրոպա, հայկական կուսակցությունների ու օսմանյան կառավարության միջև հաշտության միջնորդներ դառնալու առաքելությամբ: Փաստն այն է, որ այս բանակցությունները հաջողությամբ չեն ավարտվել: Այս բանագնացները եղել են կայսրության ճանաչված դեմքերից, հասարակական բարձրագույն դիրքեր են գրավել:[48]

Հայերեն և հայատառ թուրքերեն հրատարակություններ են տպագրվել ոչ հայկական «Շիրքեթի Խայրիե» շոգենավային ընկերության տպարանում, «Ճեմիյէթի Իլմիէ Օսմա-

46 «Անդրանիկ» գավառական շաբաթաթերթը հիմնվել է Սեբաստիայում 1909թ. հունվար 24-ին: Տեր և տնօրեն՝ Հայկ Վարդանյան: Նշանակալից է, որ շաբաթաթերթի հ.67-ում (20-24.5.1910թ.) Վրույր (Ե.Խաչիկյան) հոդված է գրել Մեհմեդ Էմինի մասին «Բանաստեղծ կուսակցին, Մեհմեդ Էմին Պէյ» վերնագրով: Այնուհետև, 26-6.1910թ., հ.75 և 4.12.1910թ. տպագրվել են Մ.Էմինի հայատառ թուրքերենով մի քանի բանաստեղծությունները: «Հորիզոն»-ի առաջին համարում տպագրվել է Մեհմեդ Էմինի «Երկրագործություն» բանաստեղծությունը Վահան Մալեզյանի թարգմանությամբ (Սեբաստիա, 1910թ. հոկտեմբեր, խմբագիր՝ Կարապետ Պապազյան, նահատակ: Թերթը դադարել է 1914թ. ընդհանուր զորակոչի պատճառով):

47 1880թ. օսմանիստ, բազմաթիվ օսմաներեն դասագրքերի հեղինակ **Հովհաննես Աբիկյանը** Օսմանյան նախարարության տպարանի տնօրեն է նշանակվել: Նա հեղինակն է օսմաներենի շուրջ 3 տասնյակ դասագրքերի՝ հայերեն և հայատառ թուրքերեն լեզուների միջնորդությամբ: Ֆրանսերեն-թուրքերեն տեխնիկական, գիտական տերմինների բառարան է հրատարակել Մեհմեդ Ծաքիրի և Միշել Ասլանի համահեղինակությամբ Արամյան տպարանում (1883):

48 **Մատթևոսյան Հակոբ** (1833-1906), տպարանատեր՝ անդամ օսմանյան պառլամենտի:





















նի» (Օսմանյան գիտական ընկերության), «Ախթէր» պարսկերեն թերթի, միսիոնարական առաջին տպարանի՝ «Ա.Պ. Չերչիլի», «Սբ. Բենեդիկտոսի» (հիմնադրված Վիկին անունով կաթոլիկ կրոնավորի կողմից, որը պիտի նպաստեր կայսրությունում կաթոլիկության տարածմանը), ազգությամբ հրեա Ն. դե Կաստրոյի, բողոքական միսիոներ Գ.Ջոնսոնի, Հենրի Գայոյի, «Լէվանթ Հէրալտ» անգլերեն և ֆրանսերեն օրաթերթի, բուլղարական Ամա Ալըր Ճամը խանում գտնվող տպարանում, ֆրանսիական «Լա Թուրքի» թերթի, իտալական «Անրաան Ձելիչի» տպարաններում: Բոլոր այս վայրերում, բնականաբար, հայ աշխատակիցներ, տպագրիչներ են եղել:

Այս տարիներին են սկսում կազմավորվել արտասահմանում սովորող կամ գաղթած հայ երիտասարդաց ու կուսակցական միությունները[49]: Օսմանյան կայսրություն են գալիս բար-[illegible], հայտնի լրագրողներ, քաղաքական հայտնի գործիչներ: Նրանց մի մասը անտարբեր չի եղել ի տես Օսմանյան կայսրությունում փոքրամասնությունների նկատմամբ վարվող դաժան քաղաքականության: Ոմանք ազատ մարդու իրենց պարտքն են համարել չլռել, գալ և իրենց աչքերով տեսնել այն ամենը, ինչի մասին խոսում են, քննարկում և կամ գրելու են[50]:

Հիշենք մի բնագավառ ևս: 1908 թվականը համարվում է Օսմանյան ստենոգրաֆիայի՝ թուրքական սղագրության սկիզբ, հանձինս նրա հիմնադիր Հրանտ Սուրենյանի, դատական քարտուղար Ա.Սուրենյանի որդու[51]:

49 1887թ. Ջենևում առաջին անեքիկահայ՝ «Դիպլոմատիկական երիտասարդաց միություն»-ն է հիմնվում: Ավելի ուշ, Մեծ Եղեռնից հետո, Հրաչյա Տեր Ներսիսյանը Փարիզում, Եգիպտահայ ազգային միությունը կես «Եր Սոլել» (արև) տպարանն է հիմնում: Լոնդոնում հաջողությամբ է գործել «Հայ լրատվական բյուրո» (1918), որը ղեկավարել է հայտնի արևելագետ-հայագետ, Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, ազգային, հասարակական գործիչ վանեցի Արշակ Սաֆրաստյանը: 1918թ. Հալեպում Հովսեփ Անձյանը (Ժողովուրդ Այնթապի) *Մարաթ* տպարանն է հիմնել, իսկ Սեդրակ Գերենյանը՝ *Հայ ձայն* տպարանը:

50 1906թ. նոյեմբերին Պոլիս է այցելել ֆրանսիական պառլամենտի անդամ և *Պրո Արմենիա* (1900) ֆրանսալեզու թերթի հիմնադիր ու գլխավոր խմբագիր, բանաստեղծ Pier Quillard-ը:

51 Սղագրությունը հայտնի էր դեռևս հին հույներին: Սղագրությունն (ստենոգրաֆիա) իր այսօրվա ընկալմամբ ստեղծել է Սեմուել Թեյլորը (1786):







**Լրագրողական մշակույթ[52]**

Ֆրանսիացիներն ասում են, որ լրագրությունն է ամենայնի առաջնորդը և որ նաև՝ լրագրողների առջև բաց են բոլոր ասպարեզները, ներքևից վերև ամեն բոլոր աստիճաններով հանդերձ:

1880թ. Պոլսում Հայ հրատարակիչների միություն է հիմնադրվում: Ավելի ուշ, 1906թ. կազմակերպվում է «Օսմանյան տպարանների աշխատակիցների միությունը» Գարեգին Կոզիկյանի հիմնադրությամբ, նրա խանում, տպագրում իր կանոնադրությունը:

1910թ. «Հայոց հրատարակչական ընկերությունը» 62 հոդվածներով իր կանոնադրությունն է տպագրում Պոլսում, Ա.Շահեի տպարանում: Ընկերության խորհրդի անդամներն էին Գրիգոր Զոհրապը, Դոմինոն, Փայլակը, Ա.Հալաճյանը, դոկ. Վահան Թորգոմյանը:

1909թ. հրատարակվում են հայկական բազմաթիվ ընկերությունների, միությունների կանոնագրեր, որոնցից տեղեկանում ենք մի շարք կազմակերպությունների մասին: Այն է՝ «Օսմանյան հայ որսորդների ակումբ», «Ոչ խմողների զինվորագրության միություն», «Անատոլի օսմանյան երկաթուղու հայ պաշտոնյաների ազգօգուտ միություն ի Հայդար փաշա», «Հայ տիկնանց միություն», «Պոլսում Վիեննայի Մխիթարյան աշակերտական միություն» և այլն, և այլն: 1847թ. Օրթաքեոյում հաստատվում է «Վերծանության ընկերությունը», որի նպատակն էր ընթերցանության տարածումը ժողովրդի մեջ: Հետագայում ողջ կայսրությամբ մեկ տարածվել են այս նպատակին ծառայող հասարակական կազմակերպություններ, առեղծվել են հայերեն ընթերցարաններ՝ մեծ քաղաքներից մինչև ամենահեռավոր պարագայի գյուղերը:

Հայատառ թուրքերեն մամուլը ծառայել է իր ժամանակի բոլոր թուրքալեզու ժողովուրդներին, եղել նրանց կյանքի արտահայտիչը Պոլսում, գավառներում: 1840-1920թթ. ընկած ժամանակաշրջանում[53] հաշվվում է ավելի քան 120 անուն պարբերական: Այս ոլորտի ներկայացուցիչների մեջ բազմաթիվ պայծառ անուններ կան, որոնք աչքի են ընկել իրենց մասնագիտական, կազմակերպչական տաղանդով, եղել են ժամանակի լուսավորության շղթաբաշխն առաջ տանողներից, տիրապետել լեզուների, հիանալի կրթություն ունեցել, ժամանակի նվաճողական տեխնիկական վերջին նորույթները ներկրել կայսրություն, իրենց ասպարեզներում գործել ոչ սարերայնորեն, եղել են ազգային, հասարակական նպատակաուղղ գործիչներ, լուսավորիչներ:

1877թ. հիմնադրվում է Պոլսի «Ազգային մատենադարան հայոց» ընկերությունը Խորեն Նար Պեյի, Հովհաննես Հյուրմուզյան-Ենիհիքյանի, Ռուբեն Հալաճյանի և Հ.Արշակի կողմից: Նրանց 27 հոդվածներից բաղկացած կանոնագիրը տպագրվել է մարտի 9-ին Արամյան տպարանում: Նպատակն էր՝ օգնել հաստատելու Ազգային մատենադարանը, կառուցել պատմական ու հնագիտական ուսումնասիրություններ:

Լրագրողական մշակույթի ներկայացուցիչներից ոմանք պատմության հայտնի են եղել որպես նվիրյալ մենողորդի ներկման ծայրահեղ ջատագովներ: Նրանք ջանացել են

52 Հայատառ հայկական մամուլը մեծ հնարավորություն էր առաջացրել օտար արևելագետների, հայագետների շրջանակում: Այսպես, օրինակ, հայտնի հայագետ Լանգլուայի խնդրանքով Թադեոս Մինասյանցը «Փարիզ» թերթում հրատարակում է «Ծոցակ հայ լրագրաց և հանդեսից» (1863թ. h. 96):

53 Տես՝ Ստեփանյան Հ.Ա. Հայատառ թուրքերէն գրքերի և հայատառ թուրքերէն պարբերական մամուլի մատենագիտություն, Ստամբուլ, 2005թ. 652 էջ (թուրքերեն):

իրենց գործունեությամբ հեղափոխական ալիք բարձրացնել կայսրությունում, քանզի ըստ նրանց, միայն ֆրանսիական հեղափոխական գաղափարները կարող էին փրկել երկիրը, հետևաբար նաև՝ իրենց Հայրենիքը: Այդ անունների մեջ գտնում ենք անհատների, որոնք ըստ արժանվույն գնահատվել են եվրոպական մտավոր շրջանակների կողմից, հիացմունքի արժանացել իրենց մտքի ու գրչի համար:

**Տիգրան Երկաթ** (1870-1899). Գրող, լրագրող, հասարակական գործիչ: Պապը՝ Պողոս ամիրա Պիլեզիկճյանն է եղել: Սովորել է Փարիզի Արքայի վարժարանում: Պոլսում թուրք մտավորականների շրջանում ջանացել է նրանց կառավարության դեմ հանել՝ տապալելու համար սուլթանական ռեժիմը: 1896թ. ջարդերից հետո լքել խզել է իր կապերը թուրքերի հետ: Տիրապետել է ֆրանսերենին, անգլերենին, Արևելքի մասին հոդվածներ է գրել լոնդոնյան կենտրոնական թերթերում՝ պաշտպանելով հայերի, հույների դատը (իր դայակը հելլենուհի է եղել): Նույնը արել է ֆրանսերենով՝ փարիզյան *«Nouvel Revue»*, *«International»*, *«Figaro»*, *«Gaulois»* պարբերականների համար: Նրա մասին ֆրանսիացի ակադեմիական Մ.Պառեսը գրում է, որ ...«սա մի անձնկարագրելի հմայքի տեր պոետ է», իսկ թուրքական քաղաքականության մասին «Թուրքիան կարո՞ղ է ապրել» հոդվածաշարի համար Հյուգոն խոստովանել է Ժան Ֆինոյին, որ այդպիսի խորախոհուն տողեր շատ-շատ Սալզբերին միայն կարող էր գրել: Նա արժանացել է իր ժամանակի եվրոպական թերթերի, լրագրողական աշխարհի ու մտավորականության հարգանքին ու հիացմանը: Նա մերժել է Յըլդըզ պալատի ճաշի հրավերը, ակնարկելով հույների հաշտողական պաշտոնները, համարելով այն գահաժառանգի զինակից անգործության, ճավատորմի միտումնավոր չեզոքացման հետևանք: Նա իր ողջ կյանքն ու գործը նվիրել է Եվրոպայի համամիտ շրջանակների ուշադրությունը հայկական դատի վրա սևեռելու կարևոր խնդրին...

* * *

Հայկական պարբերականների ընդարձակ բաժիններ են հատկացրել ազգագրերին, հայտարարություններին, հիմնականում տպագրելով գովազդային պատկերներ, տարբեր լեզուներով տեքստային մասեր: ***ILAN*** (հայտարարություն) բառալեզու՝ թուրքերեն, հունարեն, հայերեն, ֆրանսերեն շաբաթաթերթը Գարեգին Պոյաճյանի կողմից սկսել է տպագրվել Պոլսում 1908թ.:

Բացի պարբերականներից, սկսվում է հրատարակվել գովազդային մասնագիտական մամուլ, որն արդյունք էր նման գործակալությունների զարգացող գործունեության: 1909թ. Հ. Մասսմյանը ստեղծում է «Ազդերի ընդհանուր ընկերություն» Թանկարը քաղում: Հայկական առաջին գովազդային մասնագիտական պարբերականը բոլոր լեզուներով ազդագրային ծանուցումներ էր ընդունում հրատարակության համար: Պողոս Մինիկյանը 1911թ. Բերայում, Պեջիկյան տպարանում սկսում է հրատարակել «Ամսօրեա Տեղեկատու»-թերթը:

Հատուկ գովազդային գործակալություններ էին հիմնադրվում այս, նաև՝ բաժանորդագրությունների կազմակերպման, հրատարակչական հարցերի կենտրոնացման համար: 1913թ. սկսել է գործել «Թաշճիլճյան և Կոշկակարյան» ճամուլի գործակալությունը, ամեն տեսակ լրագրերի, գրքերի բաժանորդագրության ու հրատարակչական գործերի կազմակերպման համար:





## ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ


Քերովբե Լիմոնճյան


Պետրոս Կարապետյան (Զեքի)


Հովհաննես Մյուհենդիսյան


Գրիգոր Զոհրապ


Բաբկեն Կյուլեսերյան


Թովմաս Թերզյան


Յակոբ Պարոնյան


Հրանտ Ասատուր


Խորեն Նար Բեյ


Գրիգոր Չիլինկիրյան


Ստեփան Կոպտիկյան

* * *

Հայկական տպագրական մշակույթը արևմտահայության հաղթական դիմքերից է եղել: Տպագրական գործին ու նրա երախտավորներին են նվիրված եղել բազմաթիվ հրատարակություններ, իսկ հոբելյանական տարեդարձերը վերածվել են տոնախմբությունների, որը դուրս է եկել գրատահայության շրջանակներից: Հայ գրերի գյուտի 1500 ամյակի ու տպագրության 400 ամյակի հանդիսությունները երկրի հայաշատ նահանգներում, մեծ քաղաքներում, վաներում մեծ տոնախմբությունների են վերածվել: Պոլսի «Լեշկի» թատրոնում, որը դրսից ու ներսից օսմանյան դրոշներով է զարդարված եղել, 1913թ. հոկտեմբերի 13-ին մեծ բազմություն է հավաքվել՝ օտար երկրների դիվանագետներ, թուրք մտավորական ու պետական այրեր՝ Մեհմեդ Էմին Յուրդաքուլ, Էբուզիյա Թևֆիկ, Աբդուլլահ Ջևդեթ Քարլըդաղ, Սուլեյման Նազիֆ, Շահաբեդդին Սուլեյման, Համդուլլահ Սուբհի Թանրըյովեր, սադրազամ Թալեաթ փաշա և շատ ուրիշներ: Ելույթ է ունեցել Կոմիտասի 150 հոգիանոց «Գուսան» երգչախումբը: Պոլսի հայ ոսկերիչների կողմից Զ.Յաղությանը այս առթիվ պատրիարքարանին է նվիրել ոսկուց, եգիպտական հարթայուների նմանությամբ, ադամանդազարդ հայկական այբուբեն: Ելույթներ են ունեցել հայ երևելի դեմքերից՝ Կայսերական բժշկական միության նախագահ Վահրամ Թորգոմյանը, Գրիգոր Զոհրապը: Այս առթիվ տպագրվել է Հարություն Մինասյանի «Հիմն Մեսրոպեան» քայլերգը: Հանդիսություններ են եղել Թրքատում, Խարբերդում ու Մեզիրեյում: Պոլսում տոնակատարություններ են կազմակերպվել Հայոց պատրիարքարանում, Կեռնիկ փաշայում, Բերայի «Փթի Շան» թատրոնում, Թաքսիմի պարտեզում, Քաղըքեղյում: Հոկտեմբերին Կոմիտասի երգչախմբի, Արմենակ Շահմուրադյանի ելույթները ուղեկցվել են Ռոդոստոյում Օսմանյան կայսրության հյուպատոս Գևորգ Այանյանի խոսքով: Ներկա են եղել Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, Փոստ-հեռագրատան նախարար Օսկան Մարդիկյանը, Գյուղատնտեսության ու առևտրի նախարար Սուլեյման Էլ-Բուստանին, փոխարտգործնախարար Էնվեր բեյը, Շեյխ-ուլ-իսլամ Բեհա բեյը, Ֆինանսների նախարար Ռեշիդ Սաֆֆեթը, գրող Նալի բեյը, Մեջլիսի անդամ Էքրեմ բեյը, Կադաստրի նախագահ Մահմուդ Էսադը, Մաքսատան պետ Սըրրը բեյը, «*Sabah*» օսմաներենով թերթի արտոնատեր Տիրան Քելեկյանը, հոբելյանական հանձնաժողովի նախագահ Վահրամ Թորգոմյանը, լեզվաբան Ստեփան Կուրտիկյանը, ֆրանսիական հյուպատոսարանի առաջին թարգման Մ. լը Դյուն: Հանդիսությունը նախագահել է Ռուբեն Զարդարյանը:





## ՀԱՅ ԹԱՏՐՈՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(19-րդ դարի կեսերից -20-րդ դարի սկիզբը)[1]

Հայատառ թուրքերեն գրականության մի խոշոր հատված իրենից ներկայացնում է թարգմանություններ՝ կատարված թատրոնի համար: Այդպիսի ստեղծագործությունների թիվը հասնում է մոտ 500-ի[2]:

Ինարկե, դրանց մեծ մասը չի հրատարակվել, սակայն այդ պիեսները ներկայացվել են ավելի քան հարյուր անգամներ: Այնուամենայնիվ, հրատարակված չլինելով հանդերձ, թատրոնի համար գրականությունը նշանակալի դեր է խաղացել Օսմանյան կայսրության ժողովուրդների հոգևոր զարգացման գործում: Այդ բեմադրություններից շատերն ավելի կարևոր են եղել, քան հրատարակված որոշ ստեղծագործություններ: Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ կայսրությունում անգրագետների ու թուրքերեն կարդալ չիմացողների թիվը հսկայական է եղել, իսկ զարգացած ու օսմաներենին տիրապետողների թիվը՝ շատ սահմանափակ: Դրանք բոլորը միասին դիտել և հասկացել են բեմում հնչող թուրքերենը: Այս առթիվ արժե հիշատակել թուրք նոր գրականության հիմնադիրներից Նամըք Քեմալի այն արտահայտությունը, թե՝ «Թատրոնը զվարճություն է, սակայն զվարճություններից ամենաօգտակարը»[3]:

Հայատառ թուրքերեն ներկայացումների աշխարհագրական շրջանակը շատ ընդարձակ է: Այս պիեսները խաղացվել են Մխիթարյան միաբանության Վենետիկի Ս.Ղազար կղզու Մուրադ-Ռաֆայելյան և Պոլսի վարժարանների բեմերում[4], դպրոցական ավարտական շրջանի տոնախմբությունների ժամանակ, Զմյուռնիայում, Տրապիզոնում, Էրզրումում, Արևմտյան Հայաստանի այլ քաղաքներում ու գավառներում, լեհահայ գաղութավայրի քաղաքներում (հայ դպրոցների բեմերում), Ռուսաստանի հայաշատ քաղաքներում, Քիշինևում, Թիֆլիսում, Բաքվում (վերջին երկու քաղաքներում՝ հայատառ ադրբեջաներեն) և շատ ու շատ այլ քաղաքներում: Մխիթարյաններն առաջինն էին, որ իրականացրին նկարազարդ տեքստերի, կոմիքսների թարգմանությունները ֆրանսերենից և իտալերենից:

Պոլսահայ կյանքում թատրոնը մուտք է գործել 1820-ականներին: Սկզբում դրանք թատերական ներկայացումներ էին հարուստ, առաջադեմ եվրոպասեր ու արվեստների հովանավոր ամիրաների ապարանքներում, մասնավորապես Բոսֆորի ափի Պեճըլյանների, Տյուզ-

1 Քանի որ մեր ուսումնասիրությունը նվիրված է Օսմանյան կայսրության կյանքում հայերի ներդրմանը, մենք թատրոնին նվիրված մասում հիմնականում կանդրադառնանք հայկական թատերախմբերի թուրքերեն լեզվով (հայատառ թուրքերենով գրված) ներկայացումներին, քանզի դրանք քաղաքներում և գավառներում տրվել են կայսրության թուրքախոս հայ շրջանակների և մնացած բոլոր թուրքախոս ժողովուրդների համար:

2 Շուրջ 2060-ամյա հայ թատրոնի պատմության մասին գրքույթում ունենք հրաշալի ուսումնասիրություններ: Այս գլխի շարադրման համար մեծապես օգտակար են հանդիսացել հետևյալ ուսումնասիրությունները՝ Գ.Ստեփանյան, *Ուրվագիծ արևմտահայ թատրոնի*, եռահատոր ֆունդամենտալ ուսումնասիրություն, Եր., 1962, 1969, 1975. Այսուհետ տես՝ Գ.Ստեփանյան, *Ուրվագիծ...*: Նույն հեղինակի «*Թուրքական աղբյուրները թուրք թատրոնի զարգացման գործում հայերի դերի մասին*» գրքույկը, Երևան, 1983, ինչպես նաև արևմտահայ բեմի առանձին երախտավորների մասին նույն հեղինակի հրատարակած մենագրությունները: Միայն ըստ Մեթին Անդի ցուցակի, հայկական թատերախմբերի կողմից թուրքերեն լեզվով խաղացվել են 366 պիեսներ: Տես՝ Metin And, *Tanzimat...*, s. 454-462.

3 Türk Dili, Ist., 1966, cilt XV, s. 178, 699, (Celal Mukaddemesi, 1885).

4 Մխիթարյանների դպրոցական թատրոնի մասին տես՝ Գ.Ստեփանյան, *Ուրվագիծ...* h. Ա, Եր., 1962, էջ 93-115:




«Օսմանյան թատրոնի» օսմաներեն և լատինատառ ազդագիր





հայտնի թատրոնը, որն իր ավանդն ունի Պոլսի թատերական կյանքում, 1870թ. այրվել է: «Ֆրանսիական նոր թատրոնը» նույն բախտին է արժանացել: Քաղաքապետարանի կողմից մեկ գիշերվա մեջ քարուքանդ է արվել Կեսիկ փաշայի հայտնի թատրոնը՝ «անզգույշ» արտահայտությունների պատճառով:

Հայկական թատերախմբերի աշխատանքային լեզուն այս շրջանում եղել է հայատառ թուրքերենը: Կ.Պոլսում, այդ տարիներին հրատարակվում էին 40 անունից ավել հայատառ թուրքերեն պարբերականներ, որոնք թուրք առաջադեմ մտավորականության շրջանում որոշակի թվով բաժանորդներ ու ընթերցողներ են ունեցել: Նրանցից շատերը համագործակցել ու թղթակցել են այդ պարբերականներին: Հայատառ թուրքերենը մեծ մասսայականություն էր վայելում կայսրության բազմախոս բոլոր ժողովուրդների, այդ թվում՝ թուրքերի շրջանում և գործնական մեծ նշանակություն ուներ: Ուստի հայատառ թուրքերենի օգտագործումը թատրոնում՝ որևէ բարդություն և հակազդեցություն չէր առաջացնում, անկախ հեղինակի կամ թարգմանչի ազգային պատկանելությունից: Հարկ է խոստովանել, որ Հակոբ Վարդովյանի թատրոնում թուրքերեն ներկայացված ոչ բոլոր պիեսներն են առնչվում հայատառ թուրքերեն գրականության, մասնավորապես թարգմանությունների հետ: Դրանք թուրք հեղինակների ինքնուրույն գործերն են կամ նրանց կողմից կատարված թարգմանությունները, փոխադրությունները, տեղայնացումները:

Ինչպե՞ս է կայացել թուրք հեղինակների ու հայ թատրոնի համագործակցությունը: Ի սկզբանե հայ թատրոնները գործել են սեփական ուժերով: Սակայն այլ է եղել «Օսմանյան թատրոնի» դեպքում: Մեկ թատերաշրջանի ընթացքում բեմադրվել են մոտ 170 տարբեր ներկայացումներ: Բնականաբար այդպիսի ընդարձակ խաղացանկի համար անհրաժեշտ էր ունենալ դրամատուրգների, սցենարիստների, թարգմանիչների մի ամբողջ բանակ: Ահա այս նպատակով էլ Հ. Վարդովյանը թատրոն է ներգրավել ոչ միայն հայ, այլև թուրք մտավորականությանը: Հ.Վարդովյանի «Օսմանյան թատրոնի» հետ համագործակցության շրջանը թուրք երիտասարդների մի կարևոր հատվածի համար ճակատագրական նշանակություն է ունեցել: Հետագայում նրանք լրջորեն տարվել են գրականությամբ, հատկապես թատերական դրամատուրգիայով: Դրան մեծապես նպաստել է այն հանգամանքը, որ Հ.Վարդովյանը ոչ մի ծախսի առջև երբեք կանգ չի առել, եթե այն վերաբերվել է թատրոնին: Հայկական թատերախմբերի հետ համագործակցած թուրք մտավորականների ցանկն իրենից ներկայացնում է թուրք նոր գրականության դասականների, լրագրողների համարյա լրիվ ցուցակը: Այն է՝ Նամըք Քեմալ, Ահմեդ Միդհատ, Շամսեդդին Սամի, Էբուզզիյա Թևֆիք, Ռեջաիզադե Էքրեմ, Ալի Հայդար, Հասան Բեդրեդդին, Աբդուլհակ Համիդ և շատերը: Բացի նյութական կողմից[11], թատրոնը թուրք լրագրողներին գրավել է նրանով, որ հենց թատրոնի միջոցով է հնարավոր եղել արտահայտել իրենց ամենամեծ երազանքները և թուրք առաջադեմ մտավորականության տրամադրությունները:

Ընդհանրապես ովքե՞ր են եղել 19-րդ դարի թուրք լրագրողները: Թուրք և թուրքացած ընտանիքների երիտասարդներ, հարուստ խավի ժառանգներ, որոնք տարբեր նպատակներ-

"Tarih ve Toplum", 1987, ocak, s.14-18; Alpay Kabacalı, *"Milli Şef" Döneminin Örtülü Sansürü*, "Tarih ve Toplum", 1987, ocak, s. 19-21.

11 Օրինակ, Էբուզզիյա Թևֆիքը յուրաքանչյուր ներկայացումից ստացել է 30 ոսկի, իսկ Նամըք Քեմալն իր «Հայրենիք կամ Սիլիստրա» պիեսի համար մեկ շաբաթվա ընթացքում վաստակել է 250 ոսկի, որն այդ ժամանակների համար զգալի գումար է եղել: Տես՝ Metin And, *Tanzimat*... s. 273.

Դրամատուրգիայի ասպարեզում հաջողության հասած և հեղինակություն վաստակած թուրք լուսավորիչներն իրենց արդեն ամրապնդված դիրքերից սկսեցին որոշումներ կայացնել, հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումների հետ կապված հարցեր լուծել: Այն է՝ խաղացանկի (հայերեն ու թուրքերեն) ընտրություն, թարգմանության որակի հարցեր, գրական նոր ուժերի ներգրավման խնդիրներ, թատերախմբերի քաղաքական համակրությունների վերահսկում: Սուլթան Աբդուլազիզին տապալելու, նրա հաջորդին՝ Մուրադին սուլթան դարձնելու և երկիրը սահմանադրական միապետություն հռչակելու կոչերը, որ արդյունք էին նաև թուրք լուսավորիչների, առաջադեմ ժուռնալիստների և բնականաբար՝ հայկական թատերախմբերի հետ նրանց համագործակցության, չէին կարող անարձագանք մնալ պալատի կողմից: 1873թ. ապրիլին, Նամըք Քեմալի «Հայրենիք կամ Սիլիստրա» պիեսի բուռն հաջողությունից հետո, գիշերը ձերբակալվում և աքսորվում է Նամըք Քեմալը: Շուտով նույն ճակատագրին են արժանանում թատրոնին կապված մյուս թուրք գրողներից Ահմեդ Միդհատը, Էբուզզիյա Թեֆֆիկը՝ աքսորվելով Հռոդոս: Քայքայվում է գրական օջախը, իսկ Վարդովյանի խաղացանկից դուրս են գալիս նրանց ստեղծագործությունները: Սուլթան Աբդուլազիզի մահվանից հետո Սուլթան Մուրադի գահակալության կարճ ժամանակահատվածում (1876թ. մայիսի 30-ից մինչև օգոստոսի 31-ը) աքսորավայրերից վերադառնում են ազատախոհ գրողները և կրկին շրջապատում Վարդովյանին:

Նոր թուրքական գրականության գործիչներին ամենից ավելի մտահոգող և օրակարգային խնդիրներից էր ժամանակի պահանջները բավարարող գրական նոր թուրքերենի ձևավորման հարցը: Չնայած իրենց գործադրած ճիգերին՝ արաբիզմներով, ծերծերան ոճերով հագեցված

Շիլլերի «Սեր և խարդավանք» (1875), Դյումայի «Անտոնի» (1875), Շեքսպիրի «Օթելլո»: ***Մուալլիմ Նաջի*** (1850-1893)-Էմիլ Զոլայի «Թերեզա Ռաքեն»:
*Ահմեդ Նեջիփ*-«Ենիչերական պատերազմ», «Ստեղծագործություն և հաջողություն», «Գող որդու խոստովանանքը»:
*Ալի Հայդար*-«Արզու», «Փերիների արկածները», «Բամբակ աղջիկ»: *Հասան Մեհմեդի* -«Նմանակում»՝ *Մոնտեսքյոյի* հետ միասին:
*Ահմեդ Ռաշիդը* (1870-1945) հունարենից թարգմանել է «Հերակլեսը», «Օլիմպիական թուլ»: 1870-ական թվականներին թարգմանել է Ռասին, Վիրգիլիոս, Հոմերոս:
*Աբդուլհակ Համիդ* (1852-1937)-«Անտոնի»-ի փոխադրությունը՝ Հյուգոյի Յանքինի ազդեցությամբ, իսկ Կոռնեյի «Սիդ»-ի հիման վրա գրել է «Նեսթերինը»:
*Համդի Բեյը*-Էմիլ Լաբիշի և Մարկ Միշելի «Երկու փախստականը» (1886):
*Մուստաֆա Ռեշիդ*-Ժյուլ Սանդոյի «Հարսանիքի ճանապարհի (երևակայությունը՞) երազանքը» (1887):
*Ալի Բեյ*-«Շատախոս սափրիչը», «Հյուրերին դուրս ուղեկցողը», ինչպես նաև մեծ թվով թարգմանություններ, տեղայնացումներ է կատարել, ինչպես օրինակ՝ Մոլիերի «Սկապենի արկածները»: «Ժորժ Դանդեն»-ը դարձել է «Թոսուն աղա»: Հ.Վարդովյանի հետ միասին գրել է «Թայյար զադեն»: 1872 և 1874 թթ. այն 32 էջով հրատարակվել է Ենգիճեդիդյանների տպարանում:
*Աբդուլհալիմ Մեմդուհի (Սիմա Փաշայի)* Ռասինի «Էսթեր», Մոլիերի «Տարտյուֆը», որոնք լույս են տեսել հիմնականում նրա «Նամէ ի Անալ» գրքույկում: Պատմական գործերից, ինչպիսիք են Շ.Լըբ-Կարեի «Անգլիական պատմությունը», «Կալիգուլա»-ի թարգմանությունները, հրատարակվել են նրա մահվանից հետո:
*Սամի Փաշազադե Սեզայի* (1859-1936)-Մոլյերի ճամարտությամբ գրել է իր «Փոքրիկ պատմությունները», «Լուկրեցիա Բորջա» (1875):
*Ահմեդ Ալիֆեց*-Բոմարշեի դը Մոնքեպենի «Սեվիլ Բոռս»-ը (1891):
*Մեհմեդ Մուրադը* 1883թ. թարգմանել է հայտնի թուրքերենի Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», որը պետք է բեմադրվեր Վարդովյանի թատրոնում:
*Ռաշիդի Էֆենդի Յանյացի* (1823-1959)-Անդերսենի «Հեքիաթները», Վիրգիլիուսի «Հովվական բանաստեղծությունները», Էմիլ Լյուդվիգի «Նապոլեոն ատադածինը»:





նրանց հեղինակած թուրքական ներկայացումները միշտ չէ որ հասկանալի էին հանդիսատեսներին: Այս հանգամանքը հաճախ մամուլի հեգնանքին էր շարժում: Թուրք գրողներից կազմված հանձնախումբը անհնգ կերպ ձգտում էր, որ Հ.Վարդովյանի թատերախումբը յուրացնեն նպաստի թուրքական ազգային դրամատուրգիայի զարգացմանը: Թատրոնի



Օսմանյան կայսրությունում առաջին օպերետներից՝ «Լեբլեբիջի Հոր-Հոր աղա»-ն ներկայացնող հայկական թատերախումբը

հետ կապված բոլոր տեսակի հարցերը դառնում էին մամուլի քննարկման առարկա՝ լինի այն հայկական, թուրքական, թե ֆրանսիական, անգլիական, հունական և այլն: Մամուլի էջերում վեր էին բարձրացվում թատրոնի դերի ու նշանակության, հասարակական բարքերի ու հարաբերությունների վրա թատրոնի ունեցած դրական ու բացասական ազդեցությունների, բեմական արվեստի զարգացման, կայուն թատերախմբեր պահելու, դերասանական նոր սերունդներ պատրաստելու, բեմական ուրույն խաղաոճ, լեզու, դրամատուրգիայի խնդիրների հետ կապված մասնագիտական և հասարակական լուրջ հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Դա՝ նաև բեմի ու հանդիսատեսի, հեղինակի ու դերասանի փոխհարաբերությունների հետ կապված հարցադրումներ էին: Ժամանակի մամուլը հավաստիացնում էր ազգային օպերայի զարգացման անհրաժեշտությունը և հորդորում միջոցներ չխնայել դրա համար: Հայերը որպես կանոն հաճախել են օպերային բոլոր խմբերի (հիմնականում Իտալիայից եկած իտալական և եվրոպական թատերախմբերի) ներկայացումներին: Հայկական ընտանիքներում ընդունված էր իրենց զավակներին երաժշտական կրթության տալ խաղացիների մոտ: Չեյրոնիայում «Վասպուրական» թատրոնին կից ստեղծել էին օպերային խումբ, որը թարգմանաբար ներկայացնում էր իտալական խմբի ծրագրերի ժողովրդականություն վայելող հատվածները: Մամուլն առաջարկում էր խոստումնալից երիտասարդներ ուղարկել Եվրոպա՝ երաժշտական կրթություն ստանալու համար: Գալով Չեյրոնիայի «Վասպուրական» թատրոնի 1863-64թթ. խաղաշրջանին, ապա 5 ամիսների ընթացքում 45 պիես է բեմադրվել, որոնց մի մասը՝ թուրքերեն: Ազգային ողբերգություններից հետո ամենից շատ ծափահարվել են թուրքերեն երգախառն կատակերգությունները:

Պոլսահայ մամուլում առատորեն հրատարակվող հոդվածների առաջադրած պահանջկոտության և շահագրգռվածության մթնոլորտը միաժամանակ նպաստում էր Վարդովյանի թատերախմբի մասնագիտական վարպետության աճին, որն ավելի բարձր էր, քան Օսմանյան սահմանադրության տարիներին:

Այն փաստը, որ դերասան-դերասանուհիները, ամբողջը հայեր էին՝ թուրք հեղինակները



Ազնիվ Հրաչյա (Լուս. Կոմի Սեբահ)

բացառություն են որպես կրոնական ֆանատիզմի արդյունք:

Հայտնի է, որ թուրք կինը այնպես էլ բեմ չբարձրացավ ընդհուպ մինչև հանրապետական կարգերի հաստատումը, 1923 թվականը: Ի վերջո, հայերեն ներկայացումների համար Վարդովյանին տրված բացառիկ կարծես փոխհատուցում էր թուրքական թատրոնի սկզբնավորման ու զարգացման գործում նրա ունեցած մեծ ավանդի համար[17]: Ճշմարտություն, որը միշտ էլ մեծապես գնահատվել է թուրք բանաստեղծների և թուրքական թատրոնի պատմաբանների կողմից: Իրենց հիշողություններում հայերի դերին են անդրադարձել Մուհսին Էրթուղրուլը, Նազըմ Հիքմեթը, Վասֆի Ռըզա Զոբուն և այլք: Թուրք դերասան և բեմադրիչ Վասֆի Ռըզա Զոբուն նշում է, որ նախապականակն տիպի թուրքական թատրոնի հիմնադիրը եղել է Հակոբ Վարդովյանը: Իր հուշերում Վասֆի Ռըզա Զոբուն հիացական էջեր է նվիրել Մարտիրոս Մնակյանին, Քնար Սվաճյանին, Ռոբենին, Աղավնի և պիտանասիմա էլիզ Պինենեճյաններին[18]: Նրանց ներկայացումները տարբեր բազմախոս ժողովուրդների՝ թուրքերի, հայերի, հույների, հրեաների, բուլղարների և այլոց հոգևոր մերձեցման գործոն են հանդիսացել:

Թուրք թատերագետները, դերասանները, այդ թվում Ռեֆիկ Ահմեդը, Սեֆին Անըր արդարացիորեն նշում են, որ եթե չլինեին հայ դերասանապետերի թատերախմբերը[19], նրանց կողմից նյութական վարձատրությամբ թուրք հեղինակներին տրվող առատ պատվերները, ապա դժվար թե ստեղծվեր թուրքական դրամատուրգիան:

Եվ եթե չլիներ Գյուլլու Հակոբը, ամենայն հավանականությամբ չէին լինի Նամըք Քեմալի, Ահմեդ Միդհատի, Ալի Բեյի կամ Շամսեդդին Սամիի նման դրամատուրգները[20]:

17 Հակոբ Վարդովյանի վաստակն այնքան մեծ է եղել, որ ամեն կերպ նրան թուրքացնելու փորձեր են կատարվել, ինչպես ժամանակին փորձարկվել են արդյունավետ մի քանի այլ տրված հայ աշուղների կենսագրության հետ: Ansiklopedik Sözlük, İst., 1967, N 11, s. 813-814-ում գրված է, որ 1884 թվականից Արդոլ Հակոբ Բ-ի պետական թատրոնի տնօրենը է եղել, ժամանակակիցները ընդունել և Յակոբ Էֆենդի անվամբ ճանաչել: Գևորգի Սանթփաչյանն իր Ծոփաշխէ...-ում հերքում է այս փաստը, նույնիսկ Վարդովյանի կողմից առերես իսլամի ընդունելը հավաստի չհամարելով:
18 Vasfi Rıza Zobu, O Günden Bu Güne, Ankara, 1977, s. 27-29.
19 1876թ. յոթը Սուլթանին Պոլիս իր այցելության ժամանակ գնում է Կեռնել փաշայի Օսմանյան թատրոնը, դիտում Վարդովյանի խմբի ներկայացումը և ապշած մնում բարձր մակարդակից:
20 Metin And, Tanzimat..., c. 2. s. 449: Երեք հայտնի Ահմեդներ՝ Վեֆիկ փաշա, Միդհաթ էֆենդի ու Ջևդեթ էֆենդի տված են, կարդացած են, գրած հայատառ թրքերեն,- գրում է «Նոր օր»-ը 1945թ. 22 սեպտեմբերին:







Պետրոս Ադամյան. Իւղանկար

Չմոռանանք հիշել, որ Հակոբ Վարդովյանի թատերախմբում բացի համագործակցող թուրք մտավորականներից (դերասաններից սկսած մինչև պարզ զրոյցներ, ինչպես Պետերբուրգում Բարձր Դռան դեսպան Շաքիր Փաշան, Արևելում թուրք նախարար Ալիահ Էֆենդին և ուրիշներ) որպես ուսմունք տեսնում ենք ֆրանսիացի Մ.Մենադիեյին (M.Ménadier): Այս հանգամանքը բացի Հակոբ Վարդովյանի մեծագույն զբաղվածությունը բաժանելու հանգամանքից, որը ֆիզիկապես անգամ անհնարին է թվում, տրամաբանական մի այլ բացատրություն ևս ունի, որը մեր կարծիքով շատ ավելի կարևոր է, քան ֆիզիկականը: Այն է, հարյուրավոր ֆրանսերենից թարգմանված գործեր, որ ներկայացվել են հայերեն, թուրքերեն լեզուներով պետք է հարազատ մնային ֆրանսիական ծրնողությանը: Նույնիսկ բոլոր այն պիեսները, որոնք փոխադրել, ադապտացվել ու թուրքացվել են որպես ներկայացումներ, նախևառաջ ճիշտ ընկալվելու պայմանով պահանջ են ունեցել: Եվ որքան էլ որ թատրոնի շուրջ համախմբված մարդիկ հիանալի տիրապետել են ֆրանսերենին, այդ ֆրանսիայում, այնուամենայնիվ ֆրանսիացի ռեժիսորի կարիք պետք է զգացվեր: Կարծում ենք, որ այս հանգամանքը պետք է որ չափազանց ազդած լինի եվրոպական պիեսների հնարավորինս հարազատ բեմադրման գործընթացում: Ավելին, նրա միջոցով հաղորդակից են եղել ֆրանսիական թատրոնի ավանդույթներին, զարգացումներին ու նորություններին: Եվ ոչ միայն ֆրանսիական, այլև իտալական օպերային ու ֆրանսիական հանրահայտ օպերետների բեմադրման մեծ հաջողությունը կարծում ենք որոշ չափով պայմանավորված է եղել նման համագործակցությամբ: Իսկ ներկայացվել են «Գեղջկական ասպետություն», «Աիդա», «Պալիաչո» օպերաները, Օֆենբախի տասնյակ օպերետները և այլն:

Թուրքական թատրոնի պատմաբան Աղոփ Թալասյան, որ տարիներ շարունակ Պոլսում

Նույնիսկ զավեշտով հայկական բեկորները սպասարկում էին թուրք հեղինակների երկերը: Այսպես օրինակ, Սերաստիայի «Անդրանիկ» գավառական շարաթաթերթի տնօրեն Հայկ Վարդանյանը 1910-11թթ. պարբերաբար հրատարակել է այդ շրջանում Սերաստիայի վալի, բանաստեղծ Մեհմեդ Էմինի գործերը՝ «Բանաստեղծ կուսակալին», Մեհմեդ Էմին Պէյ» խորագրի ներքո. «Անդրանիկ», 1910, h.67 (մայիս 20), h.75 (հուլիս 26) և այլն: Այս մասին տես նաև՝ Առաքել Ն. Պատրիկ, Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան. Պէյրութ, 1974, 396 էջ:



Սիրանույշը Համլետի դերում

հետևել է թատրոնի զարգացմանը, հիացմունքով է գրում հայ թատերախմբերի, հայ դերասան-դերասանուհիների, դերասանուհիների մասին: Նա այնքան էր ոգևորված հայ դերասանուհիների արվեստով, որ առանձին հատվածներ է նվիրել իր գրքում նրանց նկարագրելու համար: Էլպիսնուհի Գարագաշյանին համարել է թուրքական բեմի Ռեժանը: Այս աշխույժ, կրակոտ օպերետային աստղը մեծ վարպետությամբ խաղացել դրամատիկ առաջնակարգ դերեր, արտասուքներ է քամել հանդիսականների աչքերից, իր անունն անմահացնելով թուրքական թատրոնի պատմության էջերում: Նա նույնպիսի հաջողությամբ կարող էր գրավել փարիզյան «Folies Dramatiques», «Beuffes-Parisiens», «Variété» թատրոնները: Նրա քույրը, Եվգինե Գարագաշյանը, որն անմոռաց է եղել կատակերգական դերերում, իրական օսմանյան բեմի մադամ Կոք էր, իր քնքույշ ձայնով:

Մարի-Նվարդին Թալասոն համարել է ամենաբնական խաղին տիրապետող դերասանուհի: Ավելին, ամենայն հավանականությամբ նա ներկա է գտնվել դերասանուհու ճակատագրական վերջին ներկայացմանը, ուր Մարգարիտ Գոթիեի ողբը իրական տանջանքների արտահայտություն է եղել ու հերոսուհու մահը միախառնվել է բեմում դերասանուհու ողբերգական մահվան հետ:

Հիացմունքի տողեր են նվիրված եղել տիկնայք Հեքիմյանին, Աճեմյանին, որոնց թուրք թատրոնի մասին ուսումնասիրության հեղինակը մտավորական ու դերասանական մեծ արժեք է վերագրել: Նա հիացել է Սիրանույշ և Աստղիկ քույրերի ոչ միայն արտակարգ տաղանդով, այլև քանդակային գեղեցկությամբ:

Թալասոն Գյուլի Հակոբին վերաբերվում է ոչ միայն որպես հզոր դերասանապետի, այլև մեծարժեք դերասանի, որին ժողովուրդը սիրել է, պաշտել ու լեգենդի վերածել:

Տաղանդավոր դերասան, արժեքավոր նկարիչ ու տաղանդավոր բանաստեղծ Պետրոս Ադամյանին համարում է օսմանյան բեմի ամենամեծ դրամատիկ աստղը: Նա «Արևելքի Մունե-Սյուլլին է, որ կարողացել է մնալ իր յուրաքանչյուր հերոսի մաշկի տակ»: Նրա հաղթարշավները Ռուսաստանում, շեքսպիրյան խաղացանկը նրան ժամանակի ամենանշանավոր





ողբերգակներից է դարձրել: Իտալացի մեծանուն դերասան Էռնեստո Ռոսսին, որ ուղեկցել է նրա մահվան թափորը, Ադամյանին համարել է իր հանդիպած արտասահմանյան ամենամեծ ոգի ունեցող դերասանը և որի մահը մեծագույն կորուստ էր թուրքական թատրոնի համար[21]:

**Լուսավորական շարժում, լուսավորիչներ, անգրագիտության վերացում, եվրոպական քաղաքակրթության ներթափանցում, ազատախոհական գաղափարներ, նոր գրական լեզվի ու գրականության, դրամատուրգիայի զարգացում, դերասաններ և այլն:** Ահա թե ինչ է տվել հայ թատրոնը թուրք ժողովրդին: Հանուն այս գաղափարների են գործել վերոհիշյալ թուրք մտավորականները, որոնք գրել, թարգմանել, փոխադրել են եվրոպական դասականներին և ոչ միայն դասականներին: Սակայն՝ օսմանյան պայմաններում, պալատական բարձր խավին հատուկ ծեքծեքուն ոճով լինելու փաստն ինքնին նվազագույնի է հասցրել այն մեծ աշխատանքի արդյունքը, որը կոչված էր լուսավորելու թուրք ժողովրդին, սնելու նոր գաղափարներով, նոր գրականությամբ, նոր ժանրերով, վերացնելու անգրագիտությունը: Թուրքական նորածիլ դրամատուրգների գործերից հնարավոր է եղել չափել, միայն թատրոնի համար պատրաստվածները: Հետո միայն հնարավոր է եղել դրանք ներկայացնել բեմում, նախապես այն հայատառ թուրքերենով ունենալով ձեռքին: Մնացած դեպքերում նրանք գրել են այնպես, ինչպես կարողացել են և սովոր են եղել, չկարողանալով հաղթահարել խոսակցական լեզվով ստեղծագործելու արգելքը: Իրենց ստեղծման ժամանակին այս գործերը թատրոնից դուրս լիարժեքորեն չեն ծառայել ժողովրդին: Տասնյակ տարիներ անց, հանրապետական շրջանում միայն դրանք թարգմանվել, վերածվել են ժամանակակից թուրքերենի և յառաջատար հրապարակ եկել՝ առաջին անգամ ծառայելով իրենց ժողովրդի լայն խավերին, դառնալով թուրք ժողովրդի իրական սեփականությունը: Դեպի թուրք և թուրքախոս հայ իրականություն ներխուժող այդ վիթխարի գրականությունը կոչված էր նպաստելու երկրի ընդհանուր ու մտավոր զարգացմանը: Այս հանգամանքը դուրս է բերել հայատառ թուրքերեն գրականությունը հայկական շրջանակներից և այն ստացել է արևելագիտական նշանակություն: Թուրքերեն դյուրամարս լեզվով գրականություն հրամցնելը ժողովրդին՝ միշտ էլ թուրք լուսավորիչների նպատակների ու երազանքների կարևոր մի մասն է կազմել: Ընդհա-



«Օսմանյան թատրոն»-ի ազդագիր

21 Thalasso Adolphe, *Théâtre Turc*... էջ 383:

նարար անհնար էր թարգմանել Վոլտեր, Հյուգո, Շատոբրիան զուտ խոսակցական լեզվով: Ուստի հասկանալի է թարգմանիչների գործադրած ջանքերը՝ բարձրաճաշակ դեպի գրական թուրքերեն, եվրոպական փոխառյալ բառապաշարի և նոր ստեղծված բառացանկի շնորհիվ ստեղծել բոլորին հասկանալի թուրքերեն ոսկե միջինը: Համրագումարում հայատառ թուրքերեն բոլոր հրատարակությունները, անկախ բացառություններով՝ ինչպես իրենց ժամանակին, այսօր էլ հասու են թուրքերեն խոսող բոլոր ազգերին ու ժողովուրդներին: Սա թուրք մշակույթի մի առաջընթաց ևս, որի մեջ դժվար է անտեսել ու չարժևորել հայ գրահրատարակիչների ու թարգմանիչ-բառաստեղծների մեծ ծառայությունը: Թուրք բանասեր Թուրգութ Քութը 68 անուն հայատառ թուրքերեն թարգմանություններ է թվարկում, նրանք նշելով, որ այն թարգմանվել է նաև օսմաներեն, հայ թարգմանիչների[22] կողմից:

Հայատառ թուրքերենով թարգմանվել և բեմականացվել են արևմտաեվրոպական բեմերում և թատերախմբերում հայտնի համարյա բոլոր մելոդրամները: Վարդովյանի հայատառ թուրքերեն խաղացանկը լրիվ չէր լինի, եթե չհիշատակեինք Օֆենբախի օպերետները, որոնք Վարդովյանի թատրոնից հետո բեմադրվել են նաև Տիգրան Չուխաջյանի, Սերովբե Բենկլյանի և այլ հայ թատերախմբերում:

Տարբեր հրատարակչությունների կողմից տպագրվել և վերահրատարակվել են թատրոնի համար կատարված թարգմանություն-պիեսները: Դրանցից ոմանք, օպերային և օպերետային լիբրետոները՝ լույս են տեսել «Թատերական պատմություններ», «Արտայակ» և այլ մատենաշարերով[23]: Պահպանված բազմաթիվ ազդագրերի մի մասը երկլեզվյա են, հատլեզու, գեղեցիկ ձևավորումներով, երբեմն համառոտ բովանդակության ներկայացումներով: Բեմադրվել են նաև հայատառ թուրքերեն պարբերականներում հրատարակված թերթոնները, մասնավորապես «Ճէրիտէի Հավադիս»-ում տպագրված մի շարք եվրոպական հեղինակների գործեր:

Ինչպես հայտնի է, Տիգրան Չուխաջյանի (1836-1898) երեք օպերետների լիբրետոները գրված են հայատառ թուրքերենով[24]: 1924թ. առանձին գրքով հրատարակվել է Թագվոր Նալյանի և Տ.Չուխաջյանի «Լէբլէբիճի Հօր Հօր աղա» երեք գործողությամբ օպերետի լիբրետոն Կ.Պոլսում: Առանց հեղինակի անվան հրատարակվել է Կ.Պոլսում «Մասնատիների» չորս գործողությամբ օպերայի լիբրետոն, որը Նալյանի թատրոնում է բեմադրվել: Այս թատրոնում օպերաների բեմադրությունից առաջ վաճառվում էին օրվա ներկայացվող օպերաների

22 Turgut Kut, *Ermeni Harfleriyle Türkçe Telif ve Tercüme Romanlar, Victor Hugo'nun Mağdurin Hikayesinin Basılmış Nüshası*, İst., 1985, s. 195-214.

23 Հայատառ թուրքերեն օպերաների մասին տես՝ Mahmut Şakiroğlu, *„M.Cevdet İnançalp"*, Tarih ve Toplum, İst., 1985, kasim, s. 21-27. Հոդվածը նվիրված է նաև Վենետիկի միխիթարյանների «Աբրահամյանի» գործունեության, նրանց բառարանագիտության, հայ-թուրք գրական հարաբերություններին և հայերի տարբեր բնագավառներում ունեցած ծառայություններին: Տես նաև՝ A.Tietze, *„Nuovi dati sui primordi dell opera in Turchia"* Il veltro XXIII-2/4 (1979), s. 363-368.

24 1895թ. Կ.Պոլսի *„MALUMAT"* ամսագրի հատուկ պատվերով գրված և հունիսի 24-ին առաջին անգամ լույս տեսած Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ին նվիրված Տիգրան Չուխաջյանի կայսերական հայտնի „Marş-ı Âli" («Մեծ քայլերգ»-ի) բառերը գրված են օսմաներեն և բարձրաոճ թուրքերեն: Այն հետագայում արտատպվել է թուրքական գիտական անթոլոգիաներում, որն իր յուրահատուկ ձևով վերահրատարակվել է թուրքական լավագույն քայլերգերը՝ «Մեծ քայլերգ» շարքում: Այս շարքում է վերահրատարակվել նաև 1909թ. լույս տեսած Ահարոն Սարդյանի Սուլթան Մեհմեդ Ե-ին նվիրված «Կայսերական քայլերգը»: Այս մասին տես՝ „Tarih ve Toplum", İst., 1987, N 46, 1988, N 49. Քայլերգերը գտնվում են Cem Behar-ի հավաքածուում:







Ս. Մնակյանն իր թատերախմբի հետ (Արշակ Էլմաս, Գրիգոր Չոբանյան, Երվանդ Թոսյան, Վահան Ետիինյան, Սարտիրոս Մնակյան, Ազնիվ Մնակյան, Նվարդ Ալեքսանյան)

երկլեզվյա ծրագրերը, հայերեն և հայատառ թուրքերեն բովանդակությունները:

Չուխաջյանն իր վերջին, «Զեմիրե» կախարդական բեմայով օպերան 1891թ. ներկայացրել է «Կոնկորդիա» ձմեռային թատրոնում, ֆրանսիացի Մ.Բեննատի թատերախմբի կողմից, 1894թ.՝ Մ.Ֆերանձինիի իտալական օպերային խմբի կողմից Ֆրանսիական նոր թատրոնում, շքեղ դեկորացիաներով ու հագուստներով: Ա.Թալասոն գրում է, որ այս առթիվ պարզ մեներգերը փոխարինվել էին բարձրաոճ դուետներով, իսկ նվագախումբը կատարել է իր ծրագրի լավագույն համարները: Ժամանակի թատերագիտական խոսքը տարբեր լեզուներով հիացական հոդվածներ է տպագրել մամուլում, հիմնականում՝ հայալեզու և ֆրանսալեզու: Նրանք երկինք են հասցրել Չուխաջյանի տաղանդավոր, երջանկության թերև հով տարածող գործը, երբ հիվանդ արվեստագետը լքված ու աղքատության մեջ, թատրոնի խաբեբա տնօրենների կողմից գողված[25] Իզմիրում իր մահկանացուն էր կնքում: Ինչևէ, շնորհիվ նրա հետ համագործակցող ֆրանսիացի բանաստեղծ և հրապարակախոս Պիեռ Անմեղյանի, նրա գործերը թարգմանվել էին ֆրանսերեն, որը բոլորովին նորովի հմայք էր հաղորդել այս օպերետներին: Թուրքական դրամատիկ և երաժշտական թատրոնի ասպարեզում ունեցած Չուխաջյանի ազդեցությունը շատերին է զբաղեցրել: Նույն Ա.Թալասոն պնդում է, որ ժամանակի թուրքական երաժշտական թատրոնը հենց չուխաճյանական գործերի վրա է կայացել[26], սկսած «Արիֆից» մինչև «Զեմիրե»:

Ընդհանրացնելով մեր խոսքն ասենք, որ հայատառ թուրքերենի օգտագործմամբ բեմադրված մոտ հինգ հարյուր պիեսները հետագայում ժառանգել են մյուս հայկական, ապա նաև թուրքական թատերախմբերը՝ հազարավոր հանդիսականների ներկայացնելով արդեն սիրված ու մեծ ընդունելություն գտած ամենատարբեր ժանրերի բեմադրությունները: Դժվարանում ենք ասել, թե որոնք են հրատարակվել, սակայն դա այնքան էլ էական չի եղել: Այս թարգմանությունները ձեռքից ձեռք և թատերախմբից թատերախումբ են անցել հիմնականում հայատառ թուրքերեն ձեռագրերի տեսքով, որն ամենևին էլ չի նսեմացնում նրանց կատարած մեծագույն ծառայությունը մշակութային և հասարակական կյանքում, ինչպես նաև նրանցում հայ և թուրք թարգմանիչների ունեցած ավանդը:

25 Ադոլֆ Թալասոն այդ ժամանակների համար հիշում է տնօրեններից ոմն Սամուելի:

26 Ա.Թալասո, նշված աշխատություն, էջ 380:

մից թուրքերեն ներկայացումների թիվը հասնում է 500-ի: Սրանք իրենցից ներկայացնում են դասական դրամատուրգիայի նմուշներ, եվրոպական լեզուներից կատարված թարգմանություններ, փոխադրություններ, արևելյան տիպի տեղայնացումներ, հայ և թուրք հեղինակների ինքնուրույն ստեղծագործություններ, ինչպես նաև համատեղ գրված պիեսներ:

Թատրոնում աշխատանքային լեզուն հանդիսացել է հայատառ թուրքերենը, անկախ հեղինակի կամ թարգմանչի ազգային պատկանելությունից: Թատրոնի այս առանձնահատուկ կողմը մինչև 1912 թվականը թուրքական միջավայրում առանձնակի բարդությունների և հակազդեցությունների չի հանդիպել: Այս շրջանի թուրքական կյանքում հայատառ թուրքերենը բոլորին հասու և հասկանալի հաղորդակցության բնական միջոց է եղել:

Հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումներն ինչ որ չափով պայմանավորված են եղել թուրք հեղինակների հետ համագործակցությամբ: Այս անունների թվարկման ժամանակ գտնում ենք թուրք նոր, դասական գրականության բոլոր դեմքերին՝ Նամըք Քեմալ, Ահմեդ Միդհատ, Շամսեդդին Սամի, Էբուզզիյա Թեֆիկ, Աքիֆ Բեյ, Մեհմեդ Ռիֆաթ, Ռեջայիզադե Մահմուդ Էքրեմ, Հասան Վահիդ, Ահմեդ Վեֆիկ Փաշա, Յուսուֆ Քյամիլ Փաշա, Շաքիր Բեդրեթթին փաշա, Հասան Բեդրեթթին փաշա, Ռըֆաթ բեյ, Մուալլիմ Նաջի, Ահմեդ Նեջիբ, Ալի Հայդար, Հասան Բեդրեթթին, Մանասթըրլը Մահմուդ, Ահմեդ Ռաշիդ, Աբդուլհակ Համիդ, Համդի Բեյ, Մուստաֆա Ռեշիդ, Ալի Բեյ, Մուստաֆա Էֆ., Աբդուլհամիդ Զիաէթին (Զիյա Փաշան) Սամի Փաշազադե Սեզայի, Ահմեդ Ագիգ, Մեհմեդ Մուրադ: Շնորհիվ այն հանգամանքի, որ ժամանակին Հակոբ Վարդովյանի, Մարտիրոս Մնակյանի, Թովմաս Ֆասուլաճյանի և հայ թատրոնի մյուս դերասանապետների կողմից նրանք ներքաշվել էին գրականության, մասնավորապես դրամատուրգիայի ասպարեզ, թատրոնի հմայող միջավայր (որպես հեղինակներ և թարգմանիչներ), հետագայում շատերն իրենց նվիրեցին գրականության ասպարեզին: Թուրքական թատրոնի ու գրականության պատմության համար առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում 30-ի հասնող ինքնուրույն երկերն ու մոտ 60 անուն թարգմանությունները, որոնք կատարվել են թուրք լուսավորիչ, նոր գրականության դասականների կողմից հայ թատերախմբերի հետ համագործակցության արդյունքում: Ուստի թուրքական նոր գրականության, մասնավորապես դրամատուրգիայի իրական ուսումնասիրությունը հնարավոր է միմիայն թատրոնի գործունեության հետ նրա համատեղ ուսումնասիրմամբ: Այն բույլ կտա խուսափել նյութի շուրջ միակողմանի, անտրամաբանական եզրակացություններ և արժեվորումներ կատարելուց: Բացի նյութական վարձատրություն ունենալու կարևոր խթանից, թատրոնը դեպի իրեն է ձգել է նրանով, որ **հնարավոր է դարձրել թատրոնի, բեմի միջոցով քարոզել թուրք առաջադեմ մտավորականության հուզող բազմաթիվ նվիրական գաղափարներ: Այն է՝ լուսավորական շարժման, ազգային ինքնագիտակցության զարգացման, կանանց ազատագրման, թուրք նոր լեզվի ու գրականության ձևավորման և այլ գաղափարներ ու ծրագրեր:**

Հայատառ թուրքերեն պիեսների մեջ մեծ թիվ են կազմել իրենց ժամանակին եվրոպական բեմահարթակներում հայտնի և ժողովրդականություն վայելած գրական հայտնի ստեղծագործությունները: Նույն շարքում են որոշակի գեղարվեստական և գաղափարական արժեք ունեցող գործեր, բազմաթիվ դասական պիեսներ, որոնք վերցվել են Թուրքիա հյուրախաղերով հանդես եկած ֆրանսիական, իտալական թատերախմբերի և օպերային խմբերի խա-





ղացանկից: Հանդիսականների լայն շրջանակների ճաշակին հագուրդ տալու համար այս խաղացանկի անքակտելի մասն են կազմել մելոդրամները, երաժշտական ներկայացումները, օպերետները, զավեշտները:

Մամուլի էջերում բարձրացվել են հասարակական և մշակութային հնչեղություն ունեցող լուրջ խնդիրներ՝ կապված թատրոնի և դրամատուրգիական հարցերի հետ: Թատերագիտական բնույթի հրապարակումներից բացի ժամանակի մամուլում պարբերաբար լայնորեն քննարկման առարկա են դարձել թատրոններում բեմադրված յուրաքանչյուր պիես, յուրաքանչյուր ներկայացում: Թատրոնի պատմության համար այս հոդվածներն ու քննարկումները մեծագույն հետաքրքրություն են ներկայացնում, քանի դրանց օգնությամբ կարելի է վերականգնել, հասկանալ և գնահատել հանդիսականների տարբեր խավերի վերաբերմունքն ու գնահատականը: Այս հոդվածները թույլ են տալիս ողջ խորությամբ ըմբռնելու ժողովրդի սկզբունքային մոտեցումը հասարակական քաղաքական տարբեր խնդիրներին, լուսավորական, մշակութային շարժմանը:

Վերոհիշյալներից ավելի ժողովրդականություն են վայելել հայատառ թուրքերեն բերբերն ու համդեսները, նաև՝ բոլորին հասկանալի լեզվով լինելու պատճառով: Թատրոնը ամենօրյա հրապարակման նյութ է հանդիսացել, որ տպագրվել է բերբերի «Թատերական կյանք» խորագրերի ներքո՝ ապացույց այն բանի, որ թատրոնը վաղուց մաս էր կազմել ժողովրդի կենցաղի, մտել ընտանիքներից ու պալատներից ներս: Այն զուգակցվել է թատերական գործերի հրատարակություններով և մարդկանց մղել կարդալու նույն այդ պիեսի հեղինակի մնացած գործերը ևս: Այս հանգամանքը մի քիչ ավելի է նպաստել, որ հայատառ թուրքերեն գեղարվեստական գրականությունն ավելի մեծ ժողովրդականության վայելի: Իսկ այն հանգամանքը, որ թատրոնի հետ կապված մոտ հարյուրավոր մեծ ու փոքր հայատառ թուրքերեն ստեղծագործություններից միայն մի փոքր մասն է տպագրվել, իսկ մնացածը ձեռագիր վիճակում են մնացել ու ձեռքից-ձեռք, թատրոնից-թատրոն փոխանցվել՝ բոլորովին էլ չի նսեմացնում նրանց կատարած հասարակական, մշակութային, լուսավորական դերն ու մեծ ավանդը: Թատրոնը Պոլսի ու նաև մեծ քաղաքների կյանքի մի մասն էր դարձել:

Ցավոք սրտի և՛ մշակութային վերելքը, և՛ եղբայրության գաղափարներով բոցավառված ժողովրդական հույսերը ի չիք են դարձել նույն այս շարժման թուրք առաջնեկների՝ երիտթուրքերի ծրագրած խորշագույն ոճրագործության, Մեծ եղեռնի պատճառով:

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ



Տիգրան Չուխաջյան

Հայ ժողովրդի երաժշտական ավանդույթները շարունակվել են նաև Օսմանյան կայսրության տիրապետության շրջանում: Հայերեն ու հայատառ թուրքերեն ձեռագիր տաղարանները հարուստ նյութ են ընձեռում ուսումնասիրողներին:

Օսմանյան կայսրության երաժշտական կյանքի զարգացման հիմքին են հանդիսացել հայ աշուղական, դասական ստեղծագործողների ժառանգությունը, թատրոնի (օպերետներ, օպերաներ), երաժշտական «դպրոցների», երգչախմբերի, փողային, լարային, ազգային, ապա նաև սիմֆոնիկ նվագախմբերի հիմնադրումն ու դրանց բուռն գործունեությունը ոչ միայն արևմտահայ մթնոլորտում:

Աշուղական գրականությանը, բանահյուսությանն են վերաբերում հայատառ թուրքերեն ձեռագրերի գերակշռող մասը: Հայ աշուղական, գուսանական արվեստի արմատները դարերի խորքից են գալիս, երբ դեռ չէր էլ կազմավորվել թուրքական պետությունը: Վաղ և միջնադարյան հայ գուսանական, աշուղական գրականության ուսումնասիրությանն են նվիրվել գիտական բազմաթիվ հրատարակություններ, անթոլոգիաներ, որոնք թույլ են տալիս հետևելու մեզ հետաքրքրող այս գրականության զարգացման ընթացքը, համադրելու և ճիշտ ըմբռնելու հայատառ թուրքերեն տաղերն իրենց տարբերակներով: Բանասեր Գ.Լևոնյանը հաշվում է ավելի քան 400 աշուղներ, որոնք 17-19 դարերում ստեղծագործել են միաժամանակ հայերեն և հայատառ թուրքերեն լեզուներով[1]:

Գիտական գրականության մեջ ընդունված է եղել զանազանել աշուղների երկու տիպ: Առաջինները հանպատրաստից են հորինել ու կատարել իրենց երգերը որևէ գործիքի նվագակցությամբ և կոչվել են «մեյդան շուարասը»: Երկրորդները՝ որոնք նախապես գրավոր ունեցել կամ պատրաստել են իրենց տաղերը՝ «քալեմ շուարասը» են կոչվել[2]: Այնուամենայնիվ դժվար է զանազանել այս աշուղներին, քանզի երկրորդները ևս շատ հաճախ հանպատրաստից էլ են կատարել:

Ձեռագրերը, ուր ամփոփված են բազմաթիվ հայատառ թուրքերեն չափածո ստեղծագործություններ, հնարավորություն են տալիս նաև պատկերացում կազմելու թուրքական չափածո գրականության մասին և հետևել դասական ու ժողովրդական գրականության զարգացմանը: Թուրքական դասական, դիվանային գրականությունը, ընդօրինակելով արաբա-պարսկական միստիկ բովանդակությամբ հագեցված ծեքծեքուն, վերամբարձ ոճը՝ ստեղծվել

1 Մատենադարանում պահվող ավելի քան 180 ձեռագրեր պարունակում են հայատառ թուրքերեն տաղեր, արևելյան բանահյուսության նմուշներ: Տես Գ.Լևոնյան, *Հայ աշուղները և նրանց արվեստը*, Եր., 1944, էջ 34:

2 Ալպոյաճեան Ա., *Պատմություն հայ Կեսարիո*, Կահիրե, 1937, էջ 1554; Ahmed Kabaklı, *Türk Edebiyat*, Ankara, 1967, s. 139, 633.





ու զարգացել է պալատներում, միշտ հեռու, օտար մնալով ժողովրդին: Այս բանաստեղծներից միայն մի քանիսն են, որ վայելել են ժողովրդի իրական սերը: Նրանք դուրս են եկել զուտ դասական ավանդույթներով ստեղծագործող պալատական երգչի սահմաններից, երգել են երկրային սեր, ժողովրդի հոգսերն ու ուրախությունները: Թուրքական իրականության մեջ, պալատական թուրք երգիչների կողքին ստեղծագործել են շատ սիրված ու գնահատված հայազգի երգիչներ: Դրանցից են սուլթան Աբդուլմեջիդի պալատական երգիչ Քեշիշօղլին, Սուլթան Մահմուդի երգիչ Ուլֆեթին և ուրիշներ:

Հայատառ թուրքերեն ձեռագիր տաղարաններում հանդիպում ենք անունների, որոնք թուրքական գրականության պատմության մեջ համարվում են դասական գրականության ներկայացուցիչներ: Նրանց մի քանիսի լեզուն, հայկական մտածողության առկայությունը, բովանդակությունը, տաղաչափական կառուցվածքը թույլ են տալիս ենթադրելու դրանց հեղինակների հայ լինելու հանգամանքը: Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ աշուղների մեծ մասը ավանդաբար կրել են պատվական անուններ: Երկրորդ՝ նույն անունը կարող էին կրել մի քանի աշուղներ, և երրորդ՝ որ նույն աշուղը կարող էր ունենալ մի քանի անուններ: Այսպես օրինակ, 19-րդ դարի աշուղ Ջամալին մրցույթներում հաղթելով, ի թիվս այլ աշուղների, նաև հայտնի Թյոմնարիին, ստացել է Քեշիշօղլի մականունը, որը փոխել է Ջամալին: Կ.Պոլսում մտերմանալով մի թուրք բեյի հետ՝ ներկայացվել է Սուլթան Մահմուդ Բ-ին, հանպատրաստից նրան ձոնել է մի տաղ: Առատ պարգևի հետ միասին սուլթանից ստացել է նոր մականուն՝ Շավքի[3]:

Թուրք հայտնի գիտնական Ֆուադ Քյոփրուլուն իր աշխատություններում անդրադարձել է երեք հայ աշուղների, որոնք գրել են հայատառ թուրքերեն: Դրանք են՝ Մեխիփ Էրմենին, Սարգիս Ջերին (Նուրյան), Միրզա խանը: Ֆ.Քյոփրուլուն դրվատանքով է հիշատակում 18-րդ դարի մի այլ աշուղի, ոմն Վարդանի, որն անհամեմատ ավելի տաղանդավոր է եղել, քան վերը հիշատակվածները[4]: Իզզեթ Ուլվին, Ահմեդ Ռասիմը թվում են Ստամբուլի բազմաթիվ հայ աշուղների, որոնք միաժամանակ թուրքերեն են ստեղծագործել: Յուսուֆ Նաբիի մի նամակից իմանում ենք 16-րդ դարի երկու հայ աշուղների մասին՝ Վարդան և Մեջնուն[5]:

Ահա 18-19-րդ դարերում ստեղծագործած մի քանի անուններ՝ վերցված հայատառ թուրքերեն տաղարաններից. Պահարի, Սեռաէի, Մեկզունի, Ակեահի, Մերշուֆի, Ջանիֆի, Ճէհուի, Շոխի, Էօսր, Շագիրի, Թանգիրի, Ապիտի, Ֆասը, Նեպատի, Հաշիմի, Գարունի, Մակզունի, Մեհարի, Կեմիերի, Սարհօշ օղլու, Մեճնունի, Տեհրի, Իրֆանի, Րավգիա, Նեվնի, Լիսնեյի, Նեֆիսի, Նիհատի, Վեհպի, Ճիտայի, Նազիր[6], Աբրահամ, Կարաջ օղլան, Դալլաք Մուրադ, Տօնի, Միսկին, Բուրջի, Պետրջի օղլի, Օվչի Նավասի, Մաման, Դամբար օղլի, Քեշիշ, Ալավերդի, Մահմուդ, Հարություն Սալմաստեցի և այլն[7]: Հայատառ թուրքերեն տաղերը

3 Ալպոյաճեան Ա., *Պատմություն հայ Կեսարիո*, Կահիրե, 1937, էջ 1556: Որոշ ժամանակ առաջ ենք ունեցել թուրքական հետազոտության 4-րդ ծրագրով հետևելու «Թուրքերեն լեզու և գրականության» հավաքածուին, ուր մեզ հետաքրքրող հայազգի որոշ աշուղներ ներկայացվել են որպես թուրք ստեղծագործողներ, իսկ լատինատառ թուրքերենի վերածված նրանց տաղերը՝ թուրքական գրականության նմուշներ:

4 Fuad Köprülü, *Türk Edebiyatının Ermeni Edebiyat Üzerindeki Tesirleri*, Edebiyat Fakültesi Araştırmaları, Ankara, 1966, s. 239-269.

5 Անիրյան Խ., *Հայ միջնադարի պոեզիայի ինքնատիպության հարցի շուրջ*, Եր., «Սովետական գրականություն» ամսագիր, 1972, N 3:

6 ՄՄ, ձեռ. 6438:

7 ՄՄ, ձեռ. 9003:

Նրանով են ստեղծագործել և հայկական խազեր են օգտագործել շատ հայտնի թուրք երաժիշտներ (Յուսուֆ փաշա, Ազիզ դեդե, Արիֆ բեյ, Սալիմ, Էմին, Բաբա Ռաշիդ էֆենդիները, Արդաքարի Նասիր Դեդե, Քյոսքերլյան Օսման Դեդե, Կանունջի օղլին, Ալի Ուֆքի, Մուստաֆա Նեզիհ բեյ և ուրիշ շատ նրա աշակերտներ, հետևորդներ): Լիմոնճյանի աշակերտներից են եղել եգիպտական խմբերի պալատական սիրված երգիչներից **Թամպուրի Ալեքսանը (1815-1864), Նեյզան Ջենոր Լիմոնճյանը (1810-1865), Աստիկ Համանյանը (1832-1909), Պապա Գրիգոր Բեքարյանը**: Վերջինս եղել է Խոմայիլ և Թոֆիկ եգիպտական փոխարքաների պալատական երաժշտապետը, նվագախմբերի, երգչախմբերի հիմնադիրը: Լիմոնճյանը ներկայացվել է Սուլթան Սելիմ Գ-ին, ներկայացրել իր խազերը և սուլթանի հրամանով 18-րդ դարի թուրք դասական հեղինակների գործերը խազերով ձայնագրել, որը 6 տետր է կազմել[25]: Հայկական խազեր են օգտագործվել նաև թուրքական մզրխեններում:

Մինչ օրս Պոլսո եկեղեցիներում հոգևոր երաժշտությունը դպրաց դասը կատարում է լիմոնճյանական խազերով:

**Արիս Հովհաննեսյանը (Շալճյան, Տիրացու, 1812-1878).** Կարճ ժամանակ աշակերտել է Բաբա Համբարձումին Մայր եկեղեցում, ապա՝ ինքը ևս դասավանդել: Այստեղ հայկական ձայնագրության միակ տարածողն է դարձել իր աշակերտների հետ միասին: Նա դասախոսել է տարբեր քաղերի վարժարաններում, տարածելով հայկական նոտագրությունը, որը հենց նրա շնորհիվ էլ մոռացության չմատնվեց: 1846թ. վաղուց ապես Պոլիս ամիրա Տատյանի միջնորդությամբ նրա այդ վաստակը գնահատվել է և սուլթան Աբդուլմեջիդը նրան պատվանշանի է արժանացրել: Իր աշխատասիրությունների հիմնական նյութը եղել է շարականների հայկական նոտագրությունը: Նրա աշակերտն ու համախոհն է եղել Գաբրիել Երանյանը: Մեր կարծիքով, մեզ հասած թուրքական ժողովրդական մեղեդիների ու հարյուրի մոտ հեղինակների ստեղծագործությունների ձեռագրերը հայկական ու եվրոպական նոտագրությամբ՝ նաև նրանն են պատկանում:



Հովհաննես Սյունեցիսյանի կողմից ստեղծված լիմոնճյանական խազերի կաղապարներ

1857-58թթ. **Գաբրիել Երանյանի** օգնությամբ (որը կատարելապես յուրացրել էր նաև եվրոպական նոտագրությունը) հրատարակել է միմյանից *«Քնար Արևելյան»* ամսաթերթը: Վերջում նրանց է միացել **Նիկողոս Թաշճյանը**: Սատաշինիների երաժշտականամսաթերթական էր: Արևելյան՝ արաբական, պարսկական, թուրքական, ինչպես նաև հայկական երգերն ու եղանակները եվրոպական նոտագրությամբ էին ներկայացված, իրենց վրա հրավիրելով օտար մասնագետների ու երաժշտասերների ուշադրությունը, արժանանալով նրանց դրվատական վերաբերմունքին: Ամսաթերթի ծախսերն անձնական միջոցներից հոգում էր Արիս Հովհաննեսյանը: Նա հավատարիմ մնաց լիմոնճյանական հայկական նոտագրությանը և չէր ցանկանում ընդունել եվրոպականի միջնորդությունն ու կիրառումը: Արիս Հովհաննեսյանը 1861-63թթ. հրատարակված *«Քնար Հայկական»* կիսամսյա թերթին ևս իր նյութական օգնությունն է տրամադրել: Իսկ այն հրատարակել են իր աշակերտները, երաժշ-

25 4 տետրերը կորել են, իսկ 2-ը՝ հուսով ենք գանվում են Պոլսի քաղաքապետարանի գրադարանում:





տության ուսուցիչներ Գաբրիել Երանյանն ու Նիկողոս Թաշճյանը: Այս ամսաթերթում հրատարակված ժամանակակից կոմպոզիտորների ու բանաստեղծների ստեղծագործությունների մեջ հանդիպում էին երգեր, որոնց խոսքերի կամ երաժշտության հեղինակների մեջ տեսնում ենք ֆրանսիական, իտալական անուններ, որոնք համատեղ են ստեղծագործել հայ հեղինակների հետ: Այս պարբերականը երաժշտագիտական մեծ ծառայություն ունի հայկական, եվրոպական երաժշտությունը ծանոթացնելու, ժամանակակից բազմազգ հեղինակների ստեղծագործությունները հրատարակելու և մասսայականացնելու, դպրոցների, թատերական ներկայացումների համար երաժշտություն գրելու ավանդույթի սկզբնավորումը խրախուսելու գործում:

Օսմանյան կայսրությունում երաժշտական մշակույթի զարգացման մյուս երախտավորը՝ **Գաբրիել Երանյանը (1827-1862)** դասախոսել է տարբեր վարժարաններում: Եվրոպական նոտագրությունը սովորել է ինքնազարգացմամբ և ժամանակի զարգացած մտավորականներից նկարիչ, երաժշտագետ, իտալական դասական երաժշտության գիտակ, Իտալիայում կրթություն ստացած Մարգար Քյուրքճյանի (ծածկանունը՝ Րէսմի[26]) օգնությամբ, որը և որոշակի դերակատարություն է ունեցել *«Քնար Հայկական»*-ի հրատարակության գործում: Գաբրիել Երանյանը 1857-58թթ. իր ուսուցիչ Արիս Հովհաննիսյանի հետ միասին հրատարակել է *«Քնար Արևելյան»* ամսագիրը, որի եկեղեցական մասն էր մշակել Արիս Հովհաննիսյանը: Գաբրիել Երանյանը եղել է շատ ավելի հակված եվրոպական նոտագրությանը: Այս ամսագրի նպատակն էր արևելյան և ազգային երգերը եվրոպական նոտագրությամբ նոտագրել և արևմտյան երկրներին ներկայացնել[27]: Ամսագիրը մեկ տարվա կյանք է ունեցել:





«Օսմանեան երաժշտութիւն» ամսագրի քառալեզու կազմը

Հայ ձայնագիտները եվրոպականին մերձեցնելու ջանքերը պատճառ են դառնում, որ 1861թ. կիսամսաթերթը հրատարակի իր աշակերտ Նիկողոս Թաշճյանի հետ, որին նյութական աջակցություն է ցույց տվել հայտնի մտավորական Տիրացու Արիստակեսը: Հանդես 2 թերթից էր: Բովանդակում էր ազգային երգեր, պարեղանակներ եվրոպական նոտագրությամբ, որին երկու խմբագիրներն էլ հմուտ էին: Երաժշտական պարբերականների հաջողության երախտավորներից են եղել

26 Այս ծածկանվամբ երգեր, եղանակներ կան հայկական տաղարաններում, Մատենադարանի հայերեն ու հայատառ թուրքերեն մի քանի ձեռագրերում: Իր աշակերտներից հայտնի է ծովանկարիչ **Ռուբեն Բեհզադը**:

27 Տես՝ Արիստակես քհնյ. Հիսարլեանի «Պատմութիւն Հայ Ձայնագրութեան» աշխատությունը:

նաև Սիմեոն Մինեճյանը, Ռեթեոս Փափազյանը, Եղիա Տնտեսյանը, Ստեփան Գափազյանը, Համբարձում Չերչյանը, Պետրոս Մաղաքյանը, Գաբրիել Խանճյանը: Վերոհիշյալները, Գաբրիել Երանյանն իր աշակերտի հետ բազմաթիվ անվճար դասախոսություններ են կարդացել հայկական համայնքի բոլոր վարժարաններում, որոնց ծանուցումները տպագրվել են իրենց և հայկական մյուս պարբերականում: 1862թ. հունվարի 1-ից *«Քնար Հայկական»*-ի հրատարակության խմբագրությանը մասնակցում է նաև Տիգրան Չուխաջյանը: Սակայն այս պարբերականը 6 ամիս անց դադարում է, հրատարակելով միայն 12 համար:

Սահմանադրական մրցույթը Օսմանյան կայսրությունում զարկ էր տվել նաև ստեղծագործական նոր տրամադրությունների: Երգեր էին հյուսվում, ստեղծվում երաժշտական գործեր: Դաշնամուրը մուտք էր գործել հայկական սալոններ: Ունևոր ընտանիքներում երաժշտության մասնավոր հայ, խոսալացի ուսուցիչներ էին հրավիրվում:

1862թ. մարտին, օգնելու համար *«Քնար Հայկական»*-ի հրատարակությանը, ստեղծվում է «Երաժշտական ընկերություն», նպատակ ունենալով նաև տարածել եվրոպական երաժշտական ճաշակը, կատարողական արվեստը, երաժիշտների նոր սերունդ աճեցնել: Այս ընկերությանն անդամակցում էին երևելի անձինք՝ Գրիգոր Աղաթոն, Գրիգոր Օտյան, Հովհաննես Մյուհենտիսյան, Հովսեփ Քեռչյան, Նահապետ Ռուսինյան, Նեվրուզյան և այլք: Այս ընկերության շնորհիվ «Քնար Հայկական»-ը վերսկսում է հրատարակվել 1862թ. ապրիլի 30-ին: 4-րդ համարի շապիկին որպես «Քնար Հայկական»-ի գործընկերներ, գրված են լինում Տիգրան Չուխաջյանի և Կ.Ֆ.Ֆոսբինիի անունները: Գ.Երանյանը Ն.Թաշճյանի և Ե.Տնտեսյանի հետ փորձ է արել հայ հոգևոր երգերը ձայնագրել եվրոպական նոտաներով: 1862թ. հոկտեմբերի 13-ին Երանյանը մահանում է: Կազմակերպվում է բարեգործական ներկայացում ի նպաստ Երանյանի և փակման վտանգի տակ գտնվող *«Քնար Հայկականի»*: 1863թ. օգոստոսին *«Քնար Հայկականը»* Նիկողոս Թաշճյանի կողմից որպես կիսամյա (6 ամիսը մեկ) հանդես սկսում է վերահրատարակվել, սակայն երկար կյանք չի ունենում:

**Նիկողոս Թաշճյան** (1841-1885) երաժշտագետ մասնագիտականը շատ ավելի առաջ անցավ իր ուսուցչից՝ Գ.Երանյանից: Նա ևս դասախոսել է Պոլսո շատ վարժարաններում, սովորեցնելով հայ հոգևոր-եկեղեցական, դպրոցական երգեր, արևելյան ու արևմտյան երաժշտություն, կրթել բազմաթիվ սաներ: 1861թ. սեպտեմբերին Գ.Երանյանի հետ հրատարակել է *«Քնար Հայկական»*-ը, որը դադարել է 1863թ.: 1863-64թթ. Վարդան Փափազյանի և Տիգրան Չուխաջյանի հետ միասին հրատարակել են վիմատիպ *«Օսմանեան Երաժշտութիւն»* ամսօրյա հանդեսը, որը 1 տարվա կյանք է ունեցել և 10 համարներ: Նրա շապիկը եղել է հայերեն, հունարեն, օսմաներեն, ֆրանսերեն: Նրա բաժանորդների թվում են եղել Եգիպտոսի խտիվ Իսմայիլ փաշան, Թուրքիայի և Եգիպտոսի ավագանիները, Նուպար փաշան, Արթահատ փաշան:

*«Քնար Հայկական»*, *«Նուագ Օսմանեան»*, *«Օսմանեան երաժշտութիւն»* (օսմաներեն, հայերեն, ֆրանսերեն, հունարեն տիտղոսաթերթով) վիմագիր տպագրությամբ պարբերականները աննախընթաց նորություններ էին Օսմանյան կայսրության մշակութային, երաժշտական կյանքում: Նրանք մեծ ընդունելություն գտան հայկական և օսմանյան միջավայրում: Այստեղ տպագրվել են և՛ հոգևոր, և՛ թուրքական ու հայկական երգեր, նաև՝ հայ և օտար կոմպոզիտորների փոքր ստեղծագործություններ, երգեր, քայլերգեր, վալս, պոլկա (Չուխաջյանից): Գ.Երանյանի մահվանից հետո *«Քնար Հայկական»*-ը կարճ ժամանակ շարունակեցին խմբագրել





Տ.Չուխաջյանը և Ն.Թաշճյանը: 1869թ. Թաշճյանը սկսում է իր դասախոսությունները Սկյուտարի, Սամաթիայի վարժարաններում: 1871թ. Գևորգ Դ կաթողիկոսի հրավերով մեկնում է Էջմիածին, դասախոսելու Գևորգյան ճեմարանում: Այստեղ 1874թ. տպագրում է «Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան» 54 էջանոց գրքույկը, որին հաջորդում է 1875թ. իր եղբոր, Հոկոբին Թաշճյանի հետ միասին հրատարակած *«Նուագք Օսմանեան»* կիսամյա վիմատիպ թերթը: Նրա առաքելությունն էր դաշնամուրի և այլ գործիքների համար դաշնավորել արևելյան երաժշտության բնորոշ նմուշները: «Ձայնագրեալ Երգեցողութիւնք Ս.Պատարագի և Ձայնագրեալ Շարական» 1000 մեծածավալ էջերից բաղկացած աշխատանքը հեղինակի գլուխգործոցն էր և որի համար Կաթողիկոսից գնահատության կոնդակ է ստացել: Վերադառնալով Պոլիս, ստանձնում է Գումգափուի Մայր եկեղեցու երաժշտապետի պաշտոնը: Շատ փոփոխում երգեր է հորինել, նաև՝ տոնական, պատրիարքին ձոնված, որոնք տարածված են եղել, երբեմն էլ տարբեր բառերով երգվել: 1885թ. վերադառնում է Մայր վարժարան իր պաշտոնին, սակայն կյանք հիշատակի հետ կապված այս միջավայրում հանկարծամահ է լինում հուզմունքից:



Լևոն Խանճյանի կողմից հրատարակված նոտա (1915)

1879-80թթ. **Եղիա Տնտեսյանը** հրատարակում է *«Նուագք Հայկականք»*-ի 14 համար: Դրանք իրենցից ներկայացրել են «երաժշտական տետրեր», ազգային (նաև հոգևոր), եվրոպական, ասիական եղանակներ՝ եվրոպական նոտագրությամբ:

Երաժշտագետ **Խանճյան Լևոնը (1860-1947)** 1890-ական թթ. հրատարակել է *«Աշըգաի Միզիկ»* օսմաներեն առաջին երաժշտական պարբերականներից մեկը: Նա 1896-1905թթ. բարձրագույն մասնագիտական կրթություն էր ստացել Բոխարեստի Երաժշտանոցում և վերադառնալով Պոլիս, զբաղվել է խմբավարությամբ և ուսուցչությամբ: Հանդես է եկել համերգներով ոչ միայն հայկական միջավայրում: Պոլսում հիմնել է առաջին թուրքական երաժշտական միություններից մեկը: 1908 թ. եղել է *«Շարք մուզիքի ճէմիյէթի»* (Արևելյան երաժշտական միության) նախագահը: Նրա ստեղծագործություններից պահվում են Երևանի Մատենադարանի ձեռագիր ժողովածուներում, որոնց մի մասը նոտագրված է:

**Արամ Խանճյանը (1866-1916)** հայտնի է եղել որպես արևելյան և հայ եկեղեցական երաժշտության գիտակ: Նա հայտնի է եղել նաև որպես *նեյ* նվագելու վարպետ:

Երաժշտական հայտոյի մեզ ծանոթ հանդեսը 1908թ. Ա.Բժշկյանի հրատարակված *«Քնար*



Սեզրեի Հայկական ջոկքի նվագախումբը

այդեն հայտնի դեմքեր են եղել: Հրավիրյալ երաժիշտների հետ համատեղ երույթներում ժամանակի դասականների հետ մեկտեղ հնչել են հայ կոմպոզիտորների ու նրանց մշակմամբ ազգային գործեր: Երաժշտական այս բանն մրցույթի մաս են կազմել երաժշտական ստեղծագործությունների տպագրությունները երկրում և արտասահմանում, երաժշտական գործիքների ներմուծումը, արտադրությունը:

1880թ. **Անտոն Երկանյանը** նոտաները դյուրությամբ կազմելու տպագրական գյուտի համար հեղինակային իրավունք (պատենտ) է ստանում:

Թուրքական մշակույթի տեսաբանները Զիլճյաններին համարում են ծնծղայագործության առաջնեկ վարպետները, այս արհեստի զարգացման երախտավորները, որոնց արմատները գալիս են սեծովյան ափերից 15-րդ դդ. Սամաթիա գաղթած ընտանիքից: Ընտանիքի ուշ շրջանի նախապետներից Քերովբեն (1828-1910) արհեստի մեջ մեծ վարպետ եղած լինելու համար հրավիրվել է պալատ ծառայության, եղել «Ղազանճըբաշը» (պղինձներ պատրաստող վարպետների պետ): Հաջողակությամբ անմրցելի և եվրոպական ցուցահանդեսներում առաջնություններ շահած ծնծղայի պատրաստության գերդաստանի մեծերից է եղել: Ծնծղայի պատրաստման գաղտնիքի որոշ նրբություններ գերեզման տարան ինքն ու իր ընտանիքի ժառանգները:

Միջազգային ցուցահանդեսներում բազմաթիվ մրցանակներ շահած ու համաշխարհային հռչակ ձեռք բերած Զիլճյան ընտանիքի ծնծղաները 1623թ.-ից դարձել էին յուրատեսակ այցեքարտ (բրենդ) Թուրքիայի համար ու մինչ օրս էլ ծնծղայագործ 400- ամյա գերդաստանի անունը կրող ծնծղաները լավագույն դասկի արտահայտիչներ են թե՛ դասական և թե՛ այլ նվագախմբերի համար: 97 ամյա Քերովբեին փոխարինել է որդին, Ավետիսը, որն էլ ավելի է ընդարձակել Թոփգափուի քաղաքային պալատի նոտում հիմնադրված հայրական գործը, պահելով իրենց արհեստի հաջողության բաղադրատոմսի գաղտնիքը, փոխանցելով այն հորից որդու:

Պոլսահայ արվեստների ու արհեստների մեջ կան այնպիսիները, որ հայտնի մնացին ոչ միայն Օսմանյան կայսրության տարածքում ու նրա մշակույթի պատմության մեջ, այլ իրենց բացառիկությամբ դուրս եկան նրա սահմաններից, դարձան միջազգային արժեքներ, անմահացնելով իրենց ստեղծողների, մշակների անունները: Այդպիսին է եղել ծնծղա պատրաստելու արհեստ-արվեստը, որը միջազգային ասպարեզում մնացել է որպես անկրկնելի «Զիլճյան ծնծղա»: Զիլճյանները Պոլսի Սամաթիա թաղում հաստատված արհեստավոր գերդաստան են եղել, որոնք 1623 թվականից իրենց տան պարտեզ-գործարանում ավելի քան երեք դար սերնդե-սերունդ ծնծղա են պատրաստել: Նրանց ծնծղաները աչքի են ընկել իրենց








ուժեղ և մաքուր հնչողությամբ, իրենց երկարակեցությամբ: Ծնծղաների բաղադրությունն ու պատրաստման եղանակի գաղտնիքը մնացին որպես այս հայտնի գերդաստանի ընտանեկան գաղտնիք: Նրանց գործարանից ժամեր շարունակ լսվող մուրճերի միալար հարվածները ընդհատվում էին, երբ ծնծղաներից արձակվող պատասխան ձայները չէին բավարարում վարպետներին: Չնայած օրերի ու ժամերի չարքաշ աշխատանքին, ծնծղաները հալվում ու կրկին ձուլվում էին, մինչև ստացվեր իսկական «Զիլճյան ծնծղա»:

Սկզբում նրանք իրենց պարտեզի 3 քառակուսի մետր մեծության դարբնոցում շաբաթը 10-15 զույգ ծնծղա են պատրաստել: Քերովբե Զիլճյանը Սամաթիայում երկու տուն գնելով ընդարձակում է իրենց արհեստանոցը, Թոփգափուից փոխադրելով Սամաթիա: Չնայած մեկ տարի առաջ, 1867թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսում ունեցած մեծ հաջողությանն ու ստացած մրցանակին, ծնծղաների արտադրությունը ծանր վիճակում է եղել: Հայտնի է, որ Սուլթան Աբդուլազիզն այս ընտանիքի դժվարագույն ժամանակներում անհն կերպ օգնել է, որպեսզի ազատվեն պարտքերից (1868) և շարունակեն արտադրությունը: Զիլճյանների ֆաբրիկայի պաշտոնական գրությունների, թղթերի գլխամասի շքեղ նկարազարդ խորհրդանիշերն իրենցից ներկայացնում էին տարբեր տարիների միջազգային ցուցահանդեսների ժամանակ ստացած ոսկյա ու բարձրագույն մրցանակ-մեդալները ծնծղաների հետ միա-



Քերովբե Զիլճյանի ընտանիքը



Քերովբե Զիլճյան



Տիրան Զիլճյան, Քերովբե Զիլճյանի ավագ որդին



Լևոն Զիլճյան, Քերովբե Զիլճյանի կրտսեր որդին

սին, ֆրանսերեն ու այլ լեզուներով: Այդ մրցանակները նրանք ստացել են Լոնդոնում (1851, 1862, 1980), Փարիզում (1867), Վիեննայում (1873), Բոստոնում (1883), Բոլոնիայում (1888, 1907 Գրան պրի), Չիկագոյում (1893), Բեռլինում՝ 1921թ. Գերմանական երաժշտական ասոցիացիայի Պատվո դիպլոմին և այլն: Այս ծնծղաները արժանանալով բարձրագույն գնահատականների, չքանչանների, իրենց վրա են բևեռել հայտնի նվագախմբերի ղեկավարների, երաժշտական կառույցների բացառիկ վերաբերմունքը: Քերովբե Զիլճյանը եղել է վերջին մոհիկանն իր համբավավոր գրեղաստանի[40], ով մեծ համբավ բերեց իր ապրած երկրին՝ Թուրքիային: Միջազգային երաժշտական ասպարեզում այս հաջողությունների անմրցելիության շնորհիվ «Զիլճյան ծնծղաները» նախընտրելի են հանդիսանում մինչև մեր օրերը[41], թեև նրանց այսօրյա արտադրողներն արդեն մասամբ Զիլճյանները չեն:

Նրանք հաճախորդներ են ունեցել աշխարհի տարբեր կողմերում, եվրոպական լավագույն օպերային ու ֆիլհարմոնիկ նվագախմբերը նախընտրել են միջազգային ցուցահանդեսներում մասնագիտական մեծ հռչակի տիրացած զիլճյանական ծնծղաները[42]: Այս փառավոր գերդաստանի ծնծղաներն են սկսել օգտագործել Փարիզի օպերան, գերմանական ու եվրոպական, ռուսական հայտնի նվագախմբերը, ջազային հայտնի խմբերը: Մասնագետների կարծիքով այս ծնծղաները նման են եղել պատվական այն գինիներին, որոնք տարիներ անց ավելի ազնիվ ու սքանչելի ձայնային երանգներ են ձեռք բերել: Քերովբեի մահվանից հետո նրա որդիներ Լևոնը և Տիրանը շարունակել են գործը, իսկ թոռը՝ Ավետիսը (1889-1979) գաղթել է ԱՄՆ, մինչ մահը ծնծղաներ շինել ու իր գործը փոխանցել որդուն՝ Արմանդին: Մյուս որդին՝ հայտնի ջազմեն Ռոբերտը շարունակել է այս գործը, նոր «*Sabian Firma*» ֆաբրիկա հիմնելով Կանադայի Նյու Բռունսվիկ քաղաքում: Թուրքիայում պապական գործը շարունակող

40 Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին նրա թոռնուհին զարդեց Անգլիայի միայնակ նահանգներ: Ծնծղաների արտադրության գաղտնիքը փոխանցվեց այդպես:

41 Հոգեբույժ **Հարություն Մինասյանի** Երևանում հիմնադրած բժշկագիտական ժամանակի թանգարանում ցուցադրվում է միջին մեծության մի «Զիլճյան» ծնծղա: Այն օգտագործվել է հոգեբուժական պրակտիկայում, չար ուժերը հիվանդից վանելու համար:

42 Commentant Oscar, *La musique, les musiciens et les instruments de musique*, Paris, 1869, p. 570-573, 714; Cezimihal M.R. *Türk Askeri Mızıkları Tarihi*, İst. 1955, s.240-241.





վերջին Զիլճյանը եղել է Քերովբեի թոռը՝ Մայք Զիլճյանը (1906-1978):

Եմիչերիները ունեցել են երաժշտական հատուկ կորպուս: Ծնծղաները կարևոր մաս են կազմել թուրքական բանակի զինվորական նվագախմբերի: Օսմանյան բանակի զինվորական նվագախմբերը հիմնականում կազմված են եղել 16 տեսակի թմբուկներից, փողային ու հարվածային գործիքներից, այդ թվում տարբեր չափերի ծնծղաներից:

Թուրք դասական երաժշտության հիմնադիր, կոմպոզիտոր, երաժշտագետ, դիրիժոր **Տիգրան Չուխաջյանի (1837-1898)** անունը կապվում է թուրքական օպերայի, կոմիկական օպերաների (օպերետների), բալետգերի ստեղծման պատմության հետ: Հայրը՝ Գևորգը, եղել է սուլթան Աբդուլմեջիդի արքունի ժամագործավետը, որը երգող ժամացույցներ է հնարել: Թուրք երաժշտագետները Տիգրան Չուխաջյանին համարում են արևմտյան երաժշտության հիմնադիր: Պոլսում դաշնամուր է սովորել իտալացի Մանձոնիի մոտ: 1862-66թթ. Միլանում բազմաթիվ մասնավոր երաժշտական դասեր է հետևել[43], գտնվել Վերդիի երաժշտության ազդեցության տակ: Նա հեղինակ է Խասքեոյի թատրոնի, «Արևելյան թատրոն»-ի մի քանի ողբերգությունների համար գրված երաժշտության: 1862թ. Նաումի թատրոնում ներկայացվելիք Թ. Թերզյանի «Սանդուխտ» ողբերգության համար գրել է «Կենաց երգը»: Նա է հիմնադիրը դասական բալետգային երաժշտության: Հեղինակել է կայսերական քայլերգեր: Երաժշտություն է գրել Ռ.Սևանջյանի «Վարդան Մամիկոնյան» և Պետրոս Դուրյանի «Վարդ և Շուշան» պիեսների համար: Երբ «Արևելյան թատրոն»-ում կատարվում էին հատվածներ նրա ստեղծագործություններից, քայլերգեր, փոքր կտավի գործեր, ապա Չուխաջյանն ինքն էր կանգնում դիրիժորական կառույցին ու ղեկավարում նվագախումբը, երգչախումբը[44]: Իր նվագախմբով հանդես է եկել նաև պետական, թուրք ազգային տոների ժամանակ, Զինվորական նախարարությունում և այլուր: 1862թ. «Հայ երաժշտական ընկերության» նվիրյալ գործիչներից է եղել: Անդամակցել է նրա տպագիր օրգանի՝ «Քնար Հայկական»-ի էջերում հրատարակվող երգերի քննությամբ զբաղվող հանձնաժողովին: Նա նույնիսկ բանաստեղծություններ է գրել



Տիգրան Չուխաջյանի կիսանդրին
*(Գործ Երվանդ Օսկանի)*

43 Նուպար Աֆրիկյանը Տ.Չուխաջյանին նվիրված իր հոդվածում անհիմն փաստ է համարում Միլանի կոնսերվատորիայում նրա սովորելը: Տես՝ Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը*, 1926թ., էջ 454-463: Միևնույն ժամանակ երաժշտագիտական գրականության մեջ նույնիսկ նշված է նրա՝ Միլանում հայտնի Չ.Պոնտիկելլիի մոտ աշակերտելու հանգամանքը: Միլանում էլ նա սկսել է գրել սուլթան Աբդուլազիզին նվիրված «Պոլոնեզ-մարշ»-ը: Այն տպագրվել է Միլանում:

44 1877թ. դեկտեմբերի 18-27-ը Տ.Չուխաջյանի ու Տ.Գալֆայանի երաժշտական ղեկավարությամբ Հայ դրամատիկ օպերային թատրոնը Կահիրեում ներկայացրել է «Փարիզի հնավաճառ», «Քանի՞ փոքրաղջիկ», «Թագավորը զվարճանում է» հայերենով ներկայացումները:




եվրոպական հայտնի մեղեդիների հիման վրա: 1863թ. Վ.Փափազյանի հետ հրատարակել են «Օսմանեան երաժշտութիւն» (ընտիր եղանակներ ջութակի ու երգելու համար) ամսօրյա հանդեսը պրակներով (տիտղոսաթերթը թուրքերեն, հայերեն, ֆրանսերեն, հունարեն լեզուներով):

1865թ. Միլանից վերադարձին Թ. Թերզյանի «Արշակ Բ»-ի հիման վրա գրում է առաջին հայկական, հայրենասիրական օպերան, որն իր ազգային բովանդակության պատճառով չի ներկայացվել և այս՝ գրաքննության պատճառով անվանվել է «Օլիմպիա»: Նախերգանքը կատարվել էր մշակույթի գործիչների հովանավոր գեղարվեստասեր ճարտարապետ Հակոբ Պալյանի տան սրահում, որին և ձոնել է օպերան: 1869թ. իտալական մի խմբի կողմից Նաումի թատրոնում խաղերենով ներկայացվել է օպերան «Օլիմպիա» անվամբ: Հայերենով այն չի ներկայացվել[45]: Որպես դրամատիկական պիես այն ներկայացրել են Արևելյան թատրոնը, տարբեր թատերախմբեր: Դրա փոխարեն նրա օպերետները, որոնց լիբրետոն եղել է հիմնականում թուրքերեն (հայատառ թուրքերեն, ապա թարգմանվել նաև մյուս լեզուների) մեծ ժողովրդականություն են վայելել, ամենուր երգել դրանց երգերը: Չուխաջյանի աննախընթաց հաջողությունը շատերին է ոգևորել, բեմ հանելով նոր դերասանների ու նոր գործեր: «Արիֆի խորամանկությունը» գրվել է իտալացի կոմպոզիտոր Ալտոբելլոյի աջակցությամբ: Այն ֆրանսիացի կոմպոզիտոր Բուալդիեոյի (1775-1834) «Գյուղի նոր իշխանը» երկի հիման վրա թուրքական բեմի համար ադապտացված Գոգոլի «Ռևիզորի» մի տարբերակն է: Դրա պրեմիերան 1872թ. երկարատև ու տքնաջան փորձերից հետո է եղել, որի արդյունքում խումբը «տողերից չգոռալ, այլ երգել կամ արտասանել»: «Ռևիզորի» թուրքականացված փոխադրությունը բեմադրվել է Հովհաննես Աճեմյանի կողմից 1872թ. Կեդիկ փաշայի «Օսմանյան թատրոն»-ում, 30-40 հոգիանոց խմբով: Պրիմադոննան՝ տալանտ Շագիկ Քոլյոլյանն է եղել, Հովհաննես Աճեմյանի կինը: Հակոբ Վարդովյանը կատարել է գլխավոր դերերգերից մեկը: Նույնի հայերեն ներկայացման բեմադրությունը եղել է Թովմաս Ֆասուլաճյանինը: 1883թ. սոպրանոյի կամ բարիտոնի համար գրված «Ավե Մարիա»-ն տպվել է Փարիզում, Լևոն Համբարձումյանի հրատա-

45 Միայն 1945թ. նոյեմբերին Երևանի օպերային թատրոնը ներկայացնում է հայ առաջին օպերային ստեղծագործությունը, «Արշակ Երկրորդ» օպերան, Թ.Թերզյանի լիբրետոն փոխարինելով թատրոնի գլխավոր բեմադրիչ **Արմեն Գուլակյանի** լիբրետոյով:











րակչությունում: Գրել է բայերգեր, նվիրված սուլթաններին (Աբդուլազիզ, Աբդուլ Համիդ Բ): Գրել է Իշխանաց կոմիններին նվիրված գործեր՝ («Քենալի (Պոլսի) պոլկա» 1871թ., Ակիֆիե մարշ): Հրատարակել է բալետային երաժշտության առանձին մասեր, ինչպես օրինակ «Էբուզիար» և «Զեմիրե» օպերաներում՝ «Արաբական մեծ բալետ»-ը (դաշնամուրի համար): Դրանք հիմնականում դաշնամուրի համար են, և տպագրվել են հիմնականում ֆրանսերեն տիտղոսաթերթերով: Նա է ղեկավարել Օսմանյան թատրոնում բեմադրված օպերա-օպերետները, օրինակ՝ «Ժիրոֆլե-Ժիրոֆլյա»-ն (1875): Մշակել ու գործիքավորել է ժամանակի բոլոր կոմպոզիտորների գործերը, ինչպես 1876թ. Հաջի Արիֆ բեյի երգերը, որը նոտագրել է Լևոն Խանճյանը, իսկ դաշնամուրի համար մշակել է Չուխաջյանը: Հետաքրքիր է, որ սրա նոտաները անգամ ֆրանսերենով են տպագրվել Պոլսի Զարդարյան տպարանում:

Ժամանակի բոլոր օսմաներեն, ֆրանսերեն, հայերեն ու հայատառ թուրքերեն մամուլը հիացմունքով է արձանագրել թուրքական առաջին օպերետի ներկայացման փաստը: Նամըք Քեմալը «*Ibret*» թերթում հիացական տողեր է նվիրել պատմական այս իրադարձությանը: Տ.Չուխաջյանի հիացողներից Եղիազար (Գարեգին) Մելքոնյանը 1500 ոսկի է տրամադրել օպերետային խումբ կազմավորելու, 3 նոր օպերետներ (տարեկան մեկ) ներկայացնելու համար: Դրանք էին «Քյոսե Քեհյան» (1874), «Լեբլեբիջի Հոր-Հոր Աղան» (1876): Երրորդ օպերետի համար ծախսերը չեն բավարարել:

Թուրք դասական երաժշտության հիմնադիր կոմպոզիտոր, երաժշտագետ, դիրիժոր Տիգրան Չուխաջյանի գործերը կատարում էին նաև իտալական օպերային խմբերը: Հունական թատերախմբերն այն ներկայացնում էին Հունաստանում, Եգիպտոսում, Ռումինիայում, Բելգիայում, Անգլիայում: Ժամանակի մամուլը առատորեն հիացական կարծիքներ է հրատարակել այս ներկայացումների մասին: 1895թ. Չուխաջյանի «Զեմիրե» իտալական




«Ֆրանճինի» խմբի կողմից ներկայացվում է Փարիզի «Օպերա-բուֆում»: Տիգրան Չուխաջյանը 1862թ. հրատարակել է «Քնար Արևելյան» պարբերականը, 1866թ. հիմնադրել է Օսմանյան Օպերային Միությունը: 1874թ. 30 երիտասարդ երաժիշտ ուսանողների հետ ձեռնարկում է թուրքական առաջին օպերային թատրոն հիմնադրելու աշխատանքներին, Բեյօղլուի Հաչոպուլո շուկայի Արամի համերգային սրահում, որը կարճ ժամանակ ծառայել էր որպես թատրոն: Թատերական կյանքի այս բուռն շրջանում հայ ճարտարապետների կողմից կառուցվում էին թատրոնի շենքեր՝ ոչ միայն հայկական թատերախմբերի համար[46]:

Օսմանյան օպերային կոմպանիան Տիգրան Չուխաջյանի ու Տիգրան Գալեմճյանի ղեկավարությամբ համախմբելով տեղացի և օտար ուժերը, 1875թ. Բեյազիտում (քաղ Պոլսում) 800 տեղանոց համերգային դահլիճ են ստեղծում: Եվ այն՝ շնորհիվ արվեստի հովանավորի կողմից 1500 ոսկի նվիրատվության: Եռաշաբթ օրյակներով գեղեցիկ ու նոր դահլիճում 1876թ. շռնդալից հաջողությամբ բեմադրվում է «Լեբլեբիճի Հոր Հոր աղան»[47]: Մինչ այդ, 1874թ. այն ներկայացվել էր Ռամազանի տոների սկզբին ու սիրվել բոլորի կողմից[48]:

35 երաժիշտներից ու 40 դերասան-երգիչներից կազմված Չուխաջյանի թատերախմբի անդամներ էին ժամանակի արդեն հայտնի փորձառու, դերասան-դերասանուհիներ՝ Թագվոր Նալյանը (բարիտոն), Տիգրան Գալեմճյանը, Մարտիրոս Մնակյանը (բարիտոն), Սերովբե Պենկլյանը (բաս), Հովհաննես Աճեմյանը (առաջին տենոր), Շավիկ Քոյլույանը (սոպրանո), Ալֆիկ Հրաչյան, Չախրառոճյանը և ուրիշներ: Դեկորները պատրաստել էր Մելոյն, բեմի հարդարանքը Թագվոր Նալյանինն էր, իսկ զգեստները՝ Հովհաննես Հանչերյանի գործերն էին:

Տիգրան Չուխաջյանը 2 գործողությամբ օպերային երաժշտություն է գրում թուրք առաջին լուսավորիչ գրող Շինասիի «Պոետի ամուսնությունը» պիեսի համար (1874): Չնայած, որ այս պիեսը իր մակարդակով չի բավարարել հայ պրոֆեսիոնալ թատրոնների դերասանապետերին ու այն բեմ է բարձրացել միայն սիրողական մի խմբի ջանքերով: Նույն այս պիեսի բեմադրով 1874թ. Չուխաջյանը գրել է 3 գործողությամբ և 1 արարով կոմիկական օպերա՝ «Դեղոցական զվարճությունները»: 1874թ. գրել է «Դեղոցական ոստղերը» կոմիկա-

46 1891թ. Բերայում, Թեփեբաշիյում ճարտարապետ **Հովսեփ Եզնուոյանը** կառուցել է Քաղաքապետարանի դրամայի ու կոմեդիայի թատրոնը:

47 «Լեբլեբիճի Հոր Հոր աղան» մի քանի անգամ նկարահանվել է: Այն առաջին թուրքական ֆիլմերից է համարվում: Առաջին անգամ՝ 1924թ., ապա՝ 1933թ.: Հետագա տարիներին ևս ֆիլմեր են ստեղծվել: **Թագվոր Նալյանի** (1843-1876) վերևասոնն ֆիլմում տեղայնացվել է: Բնականաբար, հերոսների անունները փոխված էին Խուրշիդի, Ֆաթինեի, Գամզեի և այլնի: Հայտնի է, որ 1923թ. ֆիլմում գլխավոր դերերից մեկը՝ Չոլլաթ Համդիի դերը կատարել է ժամանակի հայտնի հայ հրատարակիչ, «Կավթուշ» երգիծական պարբերականի հիմնադիր, դերասան **Երվանդ Թոլայանը**:

48 Համանման թատերախմբի կողմից այն ներկայացվել է Աթենքում, Իզմիրում, Եգիպտոսում, Ռումինիայում:





կան օպերան: Չուխաջյանը մի գեղեցիկ քայլերգ է գրել Նամըք Քեմալի «Հայրենիք կամ Սիլիստրա» հայրենասիրական դրամայի համար, որ պատվիրվել էր Հակոբ Վարդովյանի թատրոնում ներկայացվելու համար: Այս դրաման բազմիցս ներկայացվել է, ունենալով շռնդալից հաջողություն, անկախ դրամայով նրա լուսավորիչ-հեղինակին, որը նաև սուլթանի կողմից աքսորվել է դրա համար իր հայ դերասանուհուց: Ազատախոհ գաղափարների համար աքսորված թուրք լուսավորիչ գրողների, այդ թվում Նամըք Քեմալի Սուլթանի վերադարձին, նույն շաբաթվա ընթացքում 7 թատրոններում միաժամանակ այս ներկայացումը բեմ է բարձրացել, հույսով ու նաև նյութական մեծ վարձատրություն բերելով Նամըք Քեմալին: Բնականաբար, չուխաջյանական երաժշտությունն իր տաղանդով, հմայքով նպաստել է պիեսի մեծ հաջողությանը: 1878թ. Ս.Պենկլյանի օպերետային խմբի հետ որպես իր ստեղծագործությունների դիրիժոր, մեկնել է հյուրախաղերի Էդիրնե, որ և ռուսական դեսպան Իգնատևը նրան է հանձնել Ալեքսանդր 2-րդ ռուսական ցարի ***St.Svyatoslav*** շքանշանը: Ավելի ուշ, Պոլսում, իր ստեղծագործություններով մասնակցել է մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին նվիրված երեկույթին: Արժանացել է Աբդուլհամիդ Բ-ի շնորհներին, ֆրանսիացի ու իտալացի միապետների շքանշանների: 1882-3թթ. Սկյուտարի Ճեմարանում երաժշտություն է դասավանդել: 1885թ. Սերովբե Պենկլյանի 68 հոգանոց օպերետային խումբը մեծ հաջողությամբ հյուրախաղերով հանդես է եկել Եգիպտոսում, Հունաստանում, Ռումինիայում, բալկանյան մյուս երկրներում՝ տարածելով չուխաջյանական երաժշտությունը: Եգիպտոսում, խադիվ Թևֆիկ փաշայի հովանավորությամբ «Լեբլեբիճի Հոր Հոր աղան» 66 անգամ ներկայացվել է ու երկու անգամ էլ ֆիլմ է նկարահանվել: Գերմանական «Յոզիֆի Ալեո Ալման» թատերախմբի կողմից «Լեբլեբիճի Հոր Հոր աղան» ներկայացվում է Գերմանիայում: Այս՝ օպերետը ներկայացվել է Լոնդոնում (1909), Թիֆլիսում (1912), Փարիզում (1938) և Երևանում՝ 1952թ.: Այս ստեղծագործությունը մինչև օրս չի




Տիգրան Չուխաջյան «Ողբերգ»՝ գրված Կ.Պոլսո պատրիարք Ներսես Վարժապետյանի հիշատակին

իջնում բեմերից ու նրա հիման վրա շարունակվում են ֆիլմեր նկարահանվել: Չուխաջյանի ստեղծագործությունները շարունակվում են տպագրվել Լեյպցիգում, Պոլսում, Միլանում:

Տ. Չուխաջյանը «Ինդիանա» կոմիկական օպերայի հետ զուգահեռ «Ալեքսինազ» երաժշտական դրաման է հորինել: Չուխաջյանի «Զեմիրե» կոմիկական օպերայի դաշնամուրային պարտիտուրան տպագրվել է Պոլսի Մ.Հովսեփյան տպարանում և ձոնվել հեղինակի աշակերտ, սուլթանի քարտուղար Նաժմ բեյին: Այս օպերան, որ ստեղծվել էր 1890թ., առաջին անգամ 1891թ. ներկայացվել է Բերայի «Կոնկորդիա» թատրոնի դահլիճում օր. Բեննատիի թատերախմբի կողմից, ապա՝ ներկայացվել է ֆրանսիական համայնքի ջանքերով՝ Ֆրանսիական թատրոնում:

Տիգրան Չուխաջյանը նվագախմբով իր ստեղծագործություններից հանդես է գալիս Բեյօղլիի գերմանական կլուբ «Տևտոնյան» ակումբում: Սուլթանի կողմից Տիգրան Չուխաջյանն արժանացել է 4-րդ աստիճանի ***Mecidiye***-ի:

1894թ. Պոլսի ֆրանսիական թատրոնում «Զեմիրեն» ներկայացվել է իտալական, իսկ 1895թ. Փարիզի «Օպերա Բուֆ»-ում՝ Ֆրանձինիի իտալական թատերախմբի կողմից: Հաջորդ տարի Փարիզի «Սալանժեր» տաղավարում հայտնի մեներգիչ Այգերը ղեկավարել է Չուխաջյանի «Օլիմպիա» օպերայի նախերգանքը և «Արևելյան ֆանտազիան»: Աբդուլհամիդ Բ-ին «Մեծ քայլերգ» և Օսմանյան նավատորմին ձոնված հայտնի քայլերգերի հեղինակը Փարիզից վերադարձին մեկնում է Իզմիր, քաղցկեղով հիվանդ, խորը հուսահատության ու աղքատության մեջ կնքում իր մահկանացուն 61 տարեկան հասակում:

Տիգրան Չուխաջյանի ժառանգությունը կազմված է օպերաներից, օպերետներից, բալետային և ներկայացումների համար գրված երաժշտությունից, դաշնամուրային տարբեր ժանրանվագներից, հոգևոր երգերից, պատարագից, քայլերգերից, երգերից, վալսերից, պոլկաներից, տարբեր ժանրերի այլ ստեղծագործություններից, որոնց թիվն անցնում է 50-ը:

Կ.Պոլսո պատրիարք Ներսես Բ Վարժապետյանի (1837-1884) մահվան առթիվ Չուխաջյանը գրել է «Մարշ Ֆյունեբր» (Թաղման), որը ստեղծելիս, ասում են, իր ձեռքի տակ է ունեցել Վերդիի «Օթելլո»-ն:



Դեպի էֆենդի (Կոզմի Դերեյան), դաշնակահար

Չուխաջյանի բաղձանքը հնչել է հենց այդ մահերգական քայլերգը: Իզմիրի հայկական գերեզմանատանը նրա գերեզմանին տեղադրված կիսանդրին Գեղարվեստի առաջին դպրոցի արձանագործության բաժնի հիմնադիր, թուրքական քանդակագործության երախտավոր Երվանդ Օսկանի գործն է եղել: Չուխաջյանի ավանդն անուրանալի է օսմանյան երաժշտական մշակույթի ձևավորման ու զարգացման, մասնավորապես արևմտաեվրոպական երաժշտական ավանդույթների կայացման ներմուծման-հիմնադրման գործում: Այսօր նրա գերեզմանի տեղն անհայտ է: Նրա մահվանից հետո տաղանդավոր մանկավարժի հուշակն աճյունի ապագ է տարածվել:







«Հայ գուսան» երգչախումբը Կոմիտասի հետ (1912)

* * *

**Ստեփան Սուրենյանը** (1853-1899) եղել է երգահան, դաշնակահար: Ամիրաներից մեկի հովանավորությամբ մեկնել է Փարիզ, կատարելագործելու իր կրթությունը: Աշակերտել է մեծագույն վարպետների, հիացնելով ու մեծ ապագա գուշակել տալով Փարիզի Երաժշտանոցի իր պրոֆեսորներին: 15 տարի փարիզյան հաջողություններից հետո վերադարձել է Պոլիս, ստեղծագործել: Գրել է «Հայոց միացյալ ընկերության քայլերգը», Ռոբերտ քոլեջի 25-ամյակին նվիրված մի քայլերգ, երգչախմբային գործեր, վալսեր, գրական գործունեություն է ունեցել: Նրա գլուխգործոցն է եղել «Հայր մեր»:

Հոգևոր, դասական երաժշտության ավանդույթներն Օսմանյան կայսրությունում զարգացել են եկեղեցական երգչախմբերի, դպրաց դասերի գոյության շնորհիվ: Իսկ դրանք կազմակերպվել են հայկական եկեղեցիներին կից: Համարյա ամեն մի թաղի եկեղեցի ունեցել է իր երգչախումբը: Դրանք ղեկավարվել են ոչ միայն հոգևորական երաժիշտների, այլև այդ մասնագիտությունների տեր մարդկանց կողմից: Այսպես օրինակ, 1719թ. Գումգափուի և Մարիամ Աստվածածնի եկեղեցում հիմնադրված եկեղեցին ղեկավարվել է պալատական ժամագործապետ (սաաթճը բաշը) Յոսուֆ Չելեբիի (Տիրացու Հովսեփ) կողմից: Նույն թվականին Սկյուտարի Ս.Խաչ եկեղեցում հիմնադրվել է միացյալ երգչախումբ[49]:

**Ստեփան Էլմասը** (1864-1937) զմյուռնիացի հայտնի դաշնակահար-կոմպոզիտոր: Երաժշտական կրթություն էր ստացել Վեյմարում (Գերմանիա): Աշակերտել է Ֆրանց Լիստին, Անտոն Դորին և Ֆրանց Կրենինին (Վիեննայում): Եվրոպական բազմաթիվ

[49] Այսօր Ստամբուլում գործում են 19 երգչախմբեր: Դրանք մասնակցում են ազգային ու հոգևոր տոներին, ծառայում որպես դպրաց դասի երգչախմբեր: Դրանցից ոմանց համար որպես հիմնադրման ու վերստեղծման տարեթվեր նշվում են երեք, չորս, անգամ հինգ թվականներ: Այսպես օրինակ, Սամաթիայի դպրաց դասի երգչախմբի համար 1461թ. (Կ.Պոլսի հայկական Պատրիարքական Աթոռի հիմնադրման տարին է), 1703, 1924 թվականներն են գրված: Սբ. Կարապետ դպրաց դասի երգչախմբի համար՝ 1590, 1888, 1908, 1914, 1958 թվականները: Գողթան դպրաց դասի երգչախմբի համար՝ 1608, 1719 և 1924 թվականները: Թարգմանչաց դպրաց դասի երգչախմբի համար՝ 1665, 1903, 1940 թվականները: Սկյուտարի Միացյալ դպրաց դասի երգչախմբի համար՝ 1680, 1710, 1830, 1914 թվականները:



Էդգար Մանաս

քաղաքներում նրա տված համերգներն ուղեկցվել են մեծ հաջողությամբ: Հայտնի է եղել նաև որպես կոմպոզիտոր, բողենյով կոնցերտոներ, սոնատներ, օպերա: Այս գործերի մեծ մասը Իզմիրի 1922թ. հայանի հրդեհի ժամանակ այրվել են, իսկ արվեստագետը՝ կորցրել է լսողությունը: Կյանքի վերջին շրջանն անցկացրել է Ժնևում:

Թուրքական երաժշտագիտության մեջ դասական երաժշտության երախտավորներից է համարվում կոմպոզիտոր, երաժշտագետ, երգչախմբի ղեկավար, կամերային երաժշտության հիմնադիր, պրոֆեսոր **Էդգար Մանասը (1875-1964)**: Պոլսեցի է եղել: Կատարողության առաջին դասերը Հայկական վարչության առաջին թարգման Ալեքսանդր Մանասի որդին կրթություն էր ստացել Վենետիկի Մուրադ Ռաֆայելյան վարժարանում, այդ շրջանում աշակերտել դաշնակահար Տրիվելինինին, և արդեն հորինել հոգևոր ստեղծագործություն: Կարճ ժամանակ Պոլիս մնալուց հետո վերադարձել է Իտալիա, Պադուայում Լ.Բոթացցոյի մոտ հարմոնիա, կոնտրպունկտ սովորել: 1905թ. վերադարձից դարձել է ֆրանսիական ժամանակակից դասականների երաժշտության մասնայականացողը: Էդգար Մանասը 1905թ. իր ղեկավարած «Գալլիա» երգչախմբով համերգ է տալիս Պոլսի ֆրանսիական միությունում և ֆրանսիական երաժշտության մասնայականացման համար Ֆրանսիայի կառավարությունից ստանում է *Palmes Académiques.* Դրանով հանդերձ գտնվել է Կոմիտասի մեծ ազդեցության ներքո, բուռն ստեղծագործական շրջան ապրել, երգչախմբեր, կամերային նվագախմբեր ղեկավարել, դասավանդել[50]: Նրա գործերը կատարվել են Սիմանյան, ապա՝ շուրջ 160 հոգանոց նվագախմբերի կողմից, հրատարակվել Լեյպցիգում, Փարիզում: 1911թ. Էդգար Մանասի «Քնար» նվագախումբը և Կոմիտաս վարդապետի 300 հոգանոց երկսեռ երգչախումբը Բերայի «Փթի Շան» թատրոնում համերգ են տալիս ի նպաստ Ս.Փրկիչ Ազգային հայոց հիվանդանոցի: Նա գործիքավորել և մշակել է Թուրքիայի հիմնը՝ «Իսթիքլալ մարշը» (1933)[51]: 1923 թվականից Պոլսի Կոնսերվատորիայի նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու դիրիժորն է եղել: Նա Տիգրան Չուխաջյանի արվեստի շարունակողը, օսմանյան երաժշտությունը առաջին անգամ եվրոպական ոճով, սիմֆոնիկ երաժշտությամբ ներկայացնողներից է եղել, դաշնավորելով, գործիքավորելով ու մշակելով բազմաթիվ թուրքական ստեղծագործություններ:

50 1924թ. 75 հոգանոց կանացի երգչախումբը մեծ հաջողությամբ ներկայացրել է Սեն-Սանս, Մեյերբեր, Ֆ.Մենդելսոն, Գլյուկ, Ռ.Շուման, Ֆ.Շոպեն,
51 Nalbandoğlu M. *Kuvay-ı Milliye Destanı İstiklâl Marşımızın Tarihi*. İst. S.176-178.







# ԱՐՀԵՍՏՆԵՐ



Կեսարիայի հայկական եկեղեցու փայտաշարը սալիկներից, Գր. Լուսավորչի, Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի, Տրդատ թագավորի և նրա քրոջ՝ Խոսրովադուխտի պատկերներով, պատրաստված Քութահիայում (1718-1719)

Երբ առևտուր, դիվանագիտական ծառայությունը որոշ հայերի մենաշնորհն էր, ապա հայերի մեծ մասը արհեստներով էր զբաղվում: Սա պատահական հանգամանք չի, քանի որ, ինչպես նշում է բուլղար գիտնական Ն.Թոդորովը, մինչև 18-րդ դարի վերջը «տիրապետող ժողովուրդը գտնվում էր արտադրող ուժերի ընդհանուր զարգացման շրջանակներից դուրս և այս հանգամանքն իր դրոշմն է թողել Օսմանյան կայսրության ողջ սոցիալ-քաղաքական կյանքի վրա»[1]: Հայերը կարևոր տեղ էին զբաղեցնում արհեստների ու արվեստների մեջ: Նրանք մահուդագործներ էին, մետաքսագործներ, ոսկերիչներ, շաքարագործներ, դաջեգործներ, բրդագործներ, ճենապակատարայի մանր փանաքականներ, զուլպայագործներ, ժամագործներ, դերձակներ, մորթեգործներ, դարբիններ և այլն, - գրում է պոլսահայ բանասեր Հայրություն Մրմրյանը[2]: Յուրաքանչյուր արհեստ ներկայանում էր իր արհեստանոցով՝ էսնաֆով: Հայ Պոլիսը հիմնականում կազմված է եղել հայ արհեստավորներից: Պոլսահայ բանասեր Հայրություն Մրմրյանի կազմած 65 էսնաֆների (արհեստագործների) ցուցակին դեռ պետք է հավելվեն շականերում, խաներում զբաղված 2 տասնյակից ավել անուն-արհեստավորները: Այն է՝ հացթուխները, գինեգործները, փորագրիչները, քարանագործները, քոլհակները, որոնք բոլոր, մետաքս ու գործվածք էին մշակում, գլխարկագործները, փականագործները, ճեպարարները: Հարկ է հավելել նաև գրավաճառներին, զրագիրներին, վարսավիրներին, բաղնեպաններին, ղեղագործներին, բժիշկներին, խոհարարներին, հնավաճառներին, կոշկակարներին, ներկարարներին, արդուկողներին, պանդոկատերերին, կլայեկողներին, բրուտներին, ոսկեկար, արծաթակար դերձակներին և այլոց[3]:

19-րդ դարից արհեստակցական միությունները իրենցից ուժ, հնարավորություններ ու հեղինակություն էին ներկայացնում ու ավելի ակտիվորեն լծվեցին ազգային ինքնավարության գործերին: Իսկ երբ դրանց էլ հավելենք կապիտալիստական հարաբերությունների սկզբնական ու հետագա զարգացման շրջանում երկրում մեկ հայկական ամենատարբեր ֆաբրիկաների, գործարանների, գործարանների, գործարանների, առևտրական նոր տիպի գործունեության հիմնադր-

1 Тодоров Н., *Балканский город XV-XIX веков*, М., 1976, с. 410.
2 Մրմրեան Հ., *Թուրքահայոց հին վաճառականութիւնը և վաճառականները*, Կ.Պոլիս, 1910, էջ 17:
3 Ալպոյաճեան Ա., *Պատմական*..., էջ 337-338 և էջ 554-555 (տես Հակոբյան Վ.Ա., «*Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դդ.*, Եր., հ. 2, 1956), ինչպես նաև Մատենադարան, ձեռ. 10069, էջ 61ա: Տես նաև՝ Աբրահամյան Վ.Ա., *Արհեստները Հայաստանում*, Եր., 1956, էջ 252:



Հայկական արձանագրությամբ խճանկար (Երուսաղեմ)

ման երևույթը, եվրոպական երկրներից բերված տեխնիկական ամենավերջին նորույթի հատուցներով ու նորամուծություններով համեղեծ, գյուղատնտեսության տարբեր ճյուղերում եվրոպականացման հեղափոխական զարգացումը, ապա այն պատկերացում կտա ողջ երկրի տարբեր ոլորտներում զբաղվածության, ավելի ճիշտ այս ասպարեզներն իրենց ձեռքերում կենտրոնացրած հայ բնակչության[4] և գործարար խավի մասին:

Վերջին տարիներին Թուրքիայում հայ գիտնականների կողմից լույս աշխարհ են գալիս հանրագիտարանային արժեքի չքնաղ հրատարակություններ, նվիրված Օսմանյան կայսրության տարբեր ասպարեզներում հայերի ունեցած ներդրմանը, դրանց պատմությանն ու դերին[5]: Այս հրատարակությունների կարևորությունը կայանում է նաև նրանում, որ ուսումնասիրված այս ոլորտներն այսուհետ զերծ կմնան թուրքացման, փաստական նյութի նոուզա խեղաթյուրումների վտանգից:

Հայաշատ նահանգները, ապրելով ծանր տնտեսական, քաղաքական իրավիճակում, այնուամենայնիվ շարունակում էին կազմակերպել ոխտագնացություններ, ավանդական, կրոնական տոներ: Տարբեր նահանգներ, տարբեր ոգևորությամբ են կազմակերպել նմանատիպ տոնախմբությունները: Այսպիսի պատճառներից են հանդիսացել նաև տարեկան տոնավաճառները, որոնք մի կողմից էլ առիթ էին հանդիսանում վերհիշելու ու պահպանելու ժողովրդական ավանդույթները: Այսպես օրինակ, Ամասիայի ամենամյա տոնավաճառների ժամանակ կենդանիների, գյուղատնտեսական ապրանքների ցուցահանդես-վաճառքների հաղ-

4 Սիրեկան Հ., *Թուրքահայոց հին վաճառականութիւնը եւ վաճառականները*, Կ.Պոլիս, 1910, 156 էջ:
5 Բոլորին են հայտնի **Բարս Թուղլաճի (Բարսեղ Թուղլաճեան)** հրաշալի մեծադրությամբ-արժեքավոր պատմական ճարտարապետներ Պալյան գերդաստանի, կոստյումների գործիքների, Իշխանաց հայ կոզմերի, պոլսահայ նշանավոր գերդաստանների մասին և վերջապես արևմտահայության 2004թ. հրատարակված եռահատոր կոթողային հանրագիտարանը: Մինչ այդ՝ հայտնի էր հայազգի կոլոնել փաստաբան գիտնական **Չարքի** (Չարքչյան) գիրքը (1953թ.), որը Օսմանյան կայսրության մեջ հայ երևելի անձանց ունեցած ներդրման մասին է: Այն ավելի պետական, ռազմական կառավարման ոլորտում հայազգի պաշտոնյաների մասին է: Այս մասին է նաև Հրաչյա Անասյանի մի հոդվածը: Տես՝ Çark Y.G., *Türk Devleti Hizmetinde Ermeniler 1453-1953*, İst., 1953, 302 s. Հրաչյա Անասյան, *Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ*, Երևան, 1999: Մյուս գիտնականը **Կարո Քյուրքմանն** է իր արծաթագործության, դրնձագործության, Անատոլիայի, ստանդիների կշռի ու չափի գործիքների, կայսրության հայ նկարիչների, հայկական մեծահամբավ մի ոլորտի՝ Կուտինայի ճենապակու, կճիքների, դրոշմների մասին տպագրած ու տպագրվելիք ծավալուն, չքնաղ, գարմանալի աշխատություններով: Տես՝ Garo Kürkman, *Osmanlı İmparatorluğunda Ermeni Ressamlar*, İst., 2004, 2 cilt, 988s. Garo Kürkman, *Anadolu Ağırlık ve Ölçüleri*, İst.; Garo Kürkman, *Gümüş Damgaları*, İst.; Garo Kürkman, *Osmanlılarda Ölçü ve Tartılar*, İst. **Արսեն Յարմանի** Օսմանյան կայսրության առողջապահության մեջ հայերի մասնակցությունը, Ս.Փրկիչ հայազգային հիվանդանոցի մասին խոսք աշխատությունը առիթն օգտագործվել է առաջին անգամ բազմիցս մակարդակով, փաստաթղթային ու ճկարագրային նյութի հիման վրա ժամանակակից բազմերկրամասնական ներկայացնելու հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած տրամադրական շրջանից մինչ օրս: Տես՝ Yarman Arsen, *Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve Surp Pırgiç Ermeni Hastanesi Tarihi*, İst., 2001, 865 s.







Յովհաննես Մկրտչի զինանշան տեսարանով ափսեն և ճկարի կճիքը (Քյոթահիա, 1719)

թողնելով մրցանակներ ու դրամական պարգևներ են ստացել կազմակերպիչներից: Ցուցահանդեսն ուղեկցվել է ժողովրդական խաղերով՝ Օրթա օյունի, Կարագյոզի ստվերային տիկնիկների թատրոնով ու մեդդահների (հեքիաթասաց-աշուղների) երգերով, ձիարշավով, ըմբշամարտով: Թատերականացված ներկայացումները, խեղկատակները, լարախաղացները, շրջիկ երաժիշտները, անգամ գնչուները ու մանրավաճառներն առանձին աշխույժ տրամադրություն են առեղծել մասնակիցների մոտ:

Ընդհանրապես, որևէ հայկական բնակավայրի մասին պատկերացում կազմելու համար, պետք է կարդալ ունենալ տեղի բնակչության զբաղվածության ընդհանուր պատկերը: Այն մեծապես պայմանավորված է եղել ոչ միայն այդ շրջանի բնական հնարավորություններով և աշխարհագրական դիրքով, այլև պատմական արևմտահայաստանի այդ շրջանին բնորոշ ժողովրդական ավանդույթներով, որոնց հիմնական զբաղմունքն արտահայտող արհեստներով: Իսկ այն արտահայտված է եղել ամենատարբեր բնագավառներ ներկայացնող բազմաթիվ արհեստավորներով, որոնց հանրագումարն էլ հենց որոշել է տվյալ բնակավայրի դեմքը: Բնականաբար, մի արհեստավորը կարող էր փնտրված լինել ու ծառայել միանգամից մի քանի բնակավայրերի, երև մի մյուս, նույն արհեստն ունեցող վարպետ չի եղել: Մոտավոր պատկերացում կազմելու համար բավարկենք այն ներկայացնող մարդկանց ու այդ արհեստները՝ նազմանի (լաչակագործ), գլայճի (կլայեկող), զինագործ և չիլինկիր (դարբիններ), էքմեքճի (հացագործ), բենեքճի (թիթեղագործ, որոնք նաև ոստայնի խըմբավորներ էին պատրաստում), բերգի(դերձակ), ապաճի (գյուղական պարողասարի հագուստ կարողներ), բյուճճար (մանրավաճառ) և բրդեղենի, մետաքսեղենի, բամբակյա կտորեղենի, հագուստների վաճառականներ, բոհաչիյե և խասավարճի (արտասով նորույթների, գյուղական գիտույքների, կենցաղային նորաձև առարկաների, ապարի և այլնի հայթհայթիչներ), բոխաճի (շերամաբուծական շրջաններում շերամի հնդաբույծներ), իփեկճի (մետաքսագործ), բոռնճի կամ մաքիխոտ (մերենական մասեր պատրաստող), լեղ-ճաիճի (սխեռի աղանդեր պատրաստող), կոշիկի կաղապարներ պատրաստող, հալլաճ (բամբակ ու բուրդ գզողներ), տարաքճի (գլխու սանրներ պատրաստող), հելվաճի (բահիճից, յուղից ու շաքարից հալվա պատրաստողներ), շեքերճի (շաքարեղեն պատրաստողներ), բերայճի (կոշկակարվաճառ), պահպ (նպարավաճառ), չեոքեքճի (խմորեղեն պատրաստող փռապաններ), պալդաբաճճի (պատսպման համար աղիքների պատրաստության գործարան ունեցողներ), ունճի (ալյուրավաճառ, բեփ, գարի, ընդեղեններ վաճառող), դեչիրմենճի (ջրաղացպան), սեբենճի (ձիով աղաղացի ջրաղացքարը պտտեցնող), դեռբենճի (մետաղ ձուլողներ), բոյաճի (սրճարանատեր), մեյխանեճի (գինետուն ունեցող), համամճի (բաղնեպան), խանճի



Հայկական արձանագրությամբ կիրառական առարկաներ (Քյութահիա, 1529)



(պանդոկատեր), դասապ (մսագործ), կույումճի (ոսկերիչ), դոքումճի (տարբեր արկղներ, տուփեր պատրաստող), գոնտուրաճի (եվրոպական տիպի կոշկակարներ), ճամճի (ապակեփակողներ, որի աշխատանքը ներածվում էր), մանավ (պտղի, բանջարեղեն վաճառողներ), մարանգոզ (ատաղձագործ), մոքաֆ (այծի մազից թելեր մանող ու դրանցով ձիու առարկաներ գործող), նալբանդ (պայտար), չիլինկիր (դարբին), չանդճի (զանգակագործ), նախըշճի (անեղնագործողներ), ոսդաճի (պարանագործ), չարուխչի (տրեխագործ), չոքալճի (գուլպայավաճառ, նաև են ղազգահների վրա գուլպա գործողներ), բաղչիվան (պարտիզպան), պենեճի (դմնաղիր), պեյլիկեր (սափրիչ, ատամնաբույժ), պըչագճի (դանակագործ), պոյաճի (ներկարար), սարրաֆ (դրամափոխ), սափճի (թի, բահ, բրիչ ու այլ գործիքներ պատրաստող), սեմերճի (փալան, համետ պատրաստող), սոլաճի (փականագործ), քաշճի (պառաշար), պատանաճի քիրեճի (ծեփագործ), նաղաշ (ներման պատերը նկարազարդող), քերեստեճի (ատաղձավաճառ), քիրեմիտճի (աղյուս, կղմինդր սարքող), քյուրեճի (կրագործ), դեմիրճի (ձուլող), դյուզգեր (հյուսն), տոպաչճի (ցրվածաններում ջրի հոսանքը փոխող), տաբախճի (ոչխարի, այծի, արջառի կաշիներից կոշիկի ներքանի գունավոր կաշիներ սարքող), քեռաչեճի (կոշիկի ներքանի երեսի կաշին մշակող, վաճառող), քեչեճի (թաղիքագործ), քոլաճի (շապիկներ ու օձիքներ օսլայող), տոնղուխճի (ատաղձագործ, որը մասնագիտացած էր դերձակների, ներկարարների, մանածագործների, արդուկողների, մորթեգործների և այլոց), երխպագործ (հատուկ գործիքով ոսկե, արծաթե ու մետաղե թելերով դաջվածով, բանակի զինվորական ուսադիրներ ու շքանշաններ, պալատականների ծիսական հագուստներ ու եկեղեցական փառազգեստներ, սփռոցներ, զգեստների զարդեր և նման այլ բաներ պատրաստողներ) և այլն:

Վերոհիշյալ ցուցակը հայկական բազմաթիվ ազգանունների համար բացատրական, ծագումնաբանական նյութ կարող է հանդիսանալ: Այս ցանկը ներկայացնողները որոշ լրացումներով կամ կրճատումներով ներկայացնում էին հայկական բնակավայրերի համար պարտադիր զբաղմունքները[6]:

6 1875թ. Վենետիկում տպագրված Հ.Մանուել Քաջունու «Արուեստագործութիւն» գիրքը վերաբերում է տարբեր արհեստների ու արվեստների զարգացմանը, դրանց կենցաղում կիրառելի դարձնելուն: Այստեղ ընդգրկված են փայտի, ապակեգործության, թղթագործության, հայելու, խեցեգործության, ներկագործության, գազի, լուսավորության, քիմիական տարբեր նյութերի օգտագործման, զինեգործության, ալկոհոլի, եթերի, աղի, մաքուր օդի, պահածոգործության, տափաններ ձու ու օճառ պատրաստելու, բանար, մետաքս, կերամ, ջնարակելու բնագավառներն ու դրանց զարգացումները, կիրառելի շարժաբանությունը, պատրաստման, բանջարեղենների, մսի ու այլ ուտեստների թարմ պահելու ձևերը: Տրվել են բժշկական խորհուրդներ՝ սկսած կենցաղայինից, կերպասի բծերը հանելու եղանակներից մինչև մանր գիտելիքներ, անգամ՝ դիակները զմռսելու կերպերը, սառն կալոտիկի, օդը թարմ մաքրելու, վնասատու կենդանիների դեմ պայքարելու միջոցները, սառույցի, սառնարանի մասին





* * *

Օսմանյան կայսրությունում տարբեր արտադրությունների հիմնադրման, եվրոպական փորձի ու օրինակների կիրառմամբ դրանց վերսկսման ու նոր ճյուղերի զարգացման, ապա նաև այս արտադրությունների հիման վրա երկրի առևտրական կյանքում ներածման ու արտահանման ասպարեզում հայերի (մասնագետների, ֆաբրիկանտների տերերի, ուղղակի արտադրողների ու առևտրականների) մեծ դերը կասկած չի հարուցում[7]: Նրանք իրենց ավանդն ունեն ծխախոտագործության, ցորենի, բրնձի, խաղողի, կաղինի, խոզակաղինի, աֆիոնի, անասնապահության, հանքագործության (պղինձ, կապար և այլն), էսկիշեհիրի ճենապակի քարերն արտադրության, կենդանաբուծության, շերամապահության ու մետաքսագործության, բամբակի, թիֆթիկի և ընդհանրապես բրդի ու բամբակագործության, գորգագործության, տրիկոտաժի, սննդի արդյունաբերության, բրնձի զտման, հախճապակու և այլևայլ բնագավառներում: Հիմնականում հայերի անվան հետ են կապված որոշ ճյուղեր: Դրանցից է հախճապակու մշակույթը:



Որոշ վարկածների համաձայն **հախճապակին** ծնունդ է առել Միջագետքում: Բաբելոնում և Նինվեյում հախճապակե սալիկներ են գտնվել 2-րդ դարում: Հույն մատենագիրներից մեկը խոսում է Բաբելոնի պալատի հախճապակե զարդերի մասին: Հախճապակին եվրոպա է մուտք գործել խաչակրաց արշավանքների ժամանակ: Զարգացման հիմնական միջավայրը Պարսկաստանն է եղել: Սելջուկյան առաջին շրջանի նման շինություններից է Կոնիայի Սըրչալի մեդրեսեն, որը 1243թ. շինել է Բեդրեդդինը, ապա Կոնիայի իշխան Էմիր Ջելալեդդինի շինած Կարաթայ մեդրեսեն[8]:

Քյոթահիայում այս արհեստը հայտնի է եղել դարեր շարունակ, հիթիթների շրջանից ի վեր: Չափազանց հաստատ բանգարանային նյութ կա դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակից: Դրանք տարբեր գունավորումներով կենցաղային առարկաներ են, կճեպներ, զարդեր, դրամներ: Բյուզանդական շրջանի հախճապակե նյութերը շատ նուրբ ու գեղեցիկ են[9]: 14-15-րդ դդ. սելջուկյան և օսմանյան շրջանում այն դուրս տեսք ու գունավորում է ստանում, կախված օգտագործման շրջանակներից: Չինական ազդեցությունն անհերքելի է մասնավորապես մզկիթների, դամբարանների կենցաղային իրերի պատրաստման մեջ, իսկ 16-րդ դարից նաև պալատական ճարտարապետության մեջ:

գիտելիքներ: Տես՝ ՄՄ ձեռ.123-ը (նոր հավաքածու, 1867թ) «Արուեստագործութիւն» գրքի հայատառ թուրքերեն թարգմանությունն է, կատարված վարնայի Հայոտրյան քահանայի կողմից: Այն վերաբերում է հիմնականում ծառերի, տնկիների մշակման ու դրանց հիվանդությունների բուժմանը:

7 Նշխարագործության երախտավորներից կարելի է համարել Կեսարիայի գործարանատեր ու կայսեր փոխառական Արզրումանյան Մարտիրոսին (1865-1920), որը գործի բերումով անմահացրությամբ զարգացման ռեկտորներից է եղել:

8 Ն.Պողոսի Ա.Փրկիչ Ազգային Հիվանդանոցի 1948թ. Տարեցույց:

9 Սոսարիայի Հնագիտական թանգարանի հավաքածուն հախճապակե անտիկայի ...ներից ու բաղկացածներից է:



Դեռևս Ֆաթիհ սուլթանի օրոք այս արհեստին նոր փայլ է տրվում, այն ձևավորվելով մուտք-մանական դասական զարդանախշերով (ռումի), չինականին նմանվող ծաղիկներով (հաթայի): Զորեղ պալատի ճենապակու ֆաբրիկայում 120 և ավելի տարիներ առաջ արտադրված բազմաթիվ թանգարանային նմուշներ՝ ձևավորված տարբեր չափսերի ու նշանակության ափսեներ, ծաղկամաններ, փոքրիկ իրեր, զարդատուփեր այսօր նույն, վերականգնված ֆաբրիկայի կողմից կրկնօրինակվում են: Այն Վանի ու «Ազնավուր» արծաթե սրանչելի իրերի հետ միասին վաճառում է որպես թանկարժեք հուշանվերներ, որոնք ստորագրված են եղել հայ վարպետների՝ Այվազի, Մարտիրոսի[10] և ուրիշների կողմից: Երկրի տնտեսության համար կարևոր այս ապարեգում օգտագործվող հումքի կարևոր մի մասը, երկարի օքսիդով հարուստ կավի մի տեսակը «հայկական կավ» է կոչվել: Բրուտագործների կողմից իրերի մի մասի հատուկ ձևով (երկաթի օքսիդի առատ օգտագործմամբ) պատրաստելու եղանակն անվանվել է «հայկական բանալի» (Էրմենի բիլի): Այս բնագավառում հայտնի անուններ են եղել Գևորգը, Դավիթ Հովհաննիսյանը, Արթին Մինասյանը, Հաջի Կարապետ Մինասյանը և շատ ուրիշներ:

16-րդ դարը օսմանյան գեղարվեստի պատմության համար կարևոր շրջաններից է: Սուլթան Սելիմ Ա-ն, 1514թ. պարսից Շահ Իսմայիլի դեմ հաղթանակ տանելով մտնում է բազմաթիվ արհեստավորներով, արվեստագետներով ընակեցված մշակութային կարևոր կենտրոն համարվող Թավրիզը: Դրանք որպես գերիներ բերվել են Ստամբուլ: Շնորհիվ գաղթական այս մասնագետների, երկիրը շատով լցվելու էր նրանց պատրաստած համբավավոր երփներանգ նախշապատկերներով՝ երկրաչափական ու բուսական նոխ ձևերով ու գծագրություններով, ոճավորված գեղեցիկ ծաղիկներով, տերևներով, չինական լոտոսով, «Սազ» կոչված ոճավորված խոշոր բույսերով: Տիրապետող գույներն էին դեղինն ու կանաչը, զույգ կապույտները, մանուշակագույնն ու դարչնագույնը, սևն ու սպիտակը: Այդ շրջանի նախշապակու օգտագործմամբ հայտնի հուշարձաններից են Մուրադ Գ-ի նախճապակեզարդ դամբարանը (1583), Սելիմ Ա-ի դամբարանը (ծածկվել է 1520թ.) և Սելիմ Ա-ի մզկիթը, Շահզադեի դամբարանը (1543), Միհրիմա Գանիտի Իբրահիմ փաշայի մզկիթը (1551), Սուլթան Ահմեդ Ա-ի կառուցած Թոփղափուի պալատի որոշ մասերը (1608): 16-րդ դարում գույներն ավելի են ճոխանում՝ վառ կանաչ, լոլիկի կարմիր, սպիտակի վրա տարբեր բուսաձևեր, կոկոններ, կակաչներ ու տերևներ են հավելվում: Թավրիզյան այս ազդեցության արդյունքն էին Կա-

10 Portakal Sanat ve Kültür Evi, *Osmanlı Sanat Eserleri Heykel, Tablo ve Hat*. Ist., 1998, N 60-63.







թաբեքիրում, Պրուսայում, Իզնիքում, Կուտինայում (Քյոթահիա) բացված գործարանները: 18-րդ դարում Քյոթահիան դառնում է բրուտագործության, նախճապակեգործության հիմնական ու այս արհեստին, արվեստին տոն տվող գլխավոր կենտրոնը:

Հայ բրուտագործների ու նրանց խանութների մասին հիշատակել է նաև թուրք հայտնի ճառնաագիր Էվլիյա Չելեբին, իր հայտնի «Սեյահաթնամեյում»: 1630-ականներին Հալեպում 250 բրուտագործների խանութներ է հիշում: Էվլիյա Չելեբին իր ճանապարհորդությունները ներկայացնելիս անդրադառնալով այս բնագավառին, նշում է, որ Իզնիքի ու Քյոթահիայի գործերը միմյանց նման էին և եղած գործարաններն էլ քրիստոնեական թաղերում էին գործում: Նա ներկա է տեսել Քյոթահիայի հայկական 3 թաղերն իրենց 3 եկեղեցիներով: Այս առնչությամբ հույների միասին չի խոսվում, մինչդեռ հայերի մասին հիշատակությունները շատ-շատ են: Նույն և Երեմիա Քյոմուրճյանի վկայությամբ Կուտինայի, Իզնիքի հայ բրուտների վառարաններում կենցաղային ամենատարբեր իրերն այնպիսի որակ և գեղեցկություն են տեսել, որ դրանք գնվել են մոտ 13 ոսկու արժեքով, ներ ուղարկվել վեզիրներին, սուլթաններին: Սուլթան Մեհմեդ Բ Ֆաթիհի ժամանակաշրջանում (1444, 1451-81թթ) բրուտագործությունը նոր որակ է ստանում, երբ միաձուլվում են բյուզանդական, չինական ու արևելյան ոճերը, վերածում ծաղկազարդ դասական մահմեդական օրինակների: Այդ շրջանում աչքին հայ վարպետներից հայտնի անուններ են եղել Քյոթահիացի Աբրահամ կամ Բաբա Նազարը, Մելքոն, Կարապետ, Մարտիրոս, Ոսկան Աղամ, Գևորգ վարպետները, Դավիթ Հովհաննիսյանը, Արթին Մինասյանը, Հաջի Կարապետ Մինասյանն ու ուրիշներ[11]: Հայ վարպետների արհեստանոց-խանութները աչքի են ընկել իրենց նեղ մասնագիտական տարբերակումներով: 18-րդ դարում այստեղ 50 հայկական խաներ են եղել, որոնց մի մասը «ֆինջաններ» (սուրճի բաժակներ) էին պատրաստում[12], իսկ մյուս մասում՝ դերձակներ



11 1914թ. կեսարացի **Տիգրան խան Քելեկյանը**, իր ժամանակին հնագիտության ճանաչված մասնագետներից» է եղել: Լոնդոնի «Բեռլինգ Քենսինգտոն» թանգարանում նա ցուցադրել է պարսկական հնագույն խեցեղենի հազվագյուտ հավաքածու, որը 200 000 անգլ. ոսկի է գնահատվել: Եղել է Պարսկաստանի պատվո հյուպատոս Նյու Յորքում: Չինական միջազգային ցուցահանդեսին ներկա է գտնվել պարսկական կոմիտեի նախագահ: Այս տիտղոսները նրան շնորհվել էր Շահի կողմից: Մարգինանում հիմնել է Քելեկյան որբանոցը, հայ բարեգործական միության նվիրել է խոշոր միջոցներ: Հայտնի է, որ Կոմիտասի ծանր տարեկան նկարը Թերլեմեզյանը նկարել է 1912թ. երբ նրանք Տիգրան խան Քելեկյանի հետ միասին հանգստանում էին Քյոթահիայի ամառանոցում:

12 Այս նկարի շարք վերջին տարիներին լույս են տեսել մի շարք թուրք, եվրոպացի հետազոտողների ուսումնասիրություններ: Դրանցից բովանդակություններից է պլասահայ հայտնի գիտնական Կարո Քյոթթեանի



էին: Միայն սուրճի բաժակներ պատրաստող վարպետների ցուցակը 22 հայ վարպետներ ու նրանց բնտանիքների անուններն են գլխավորում: Հայկական շրջանակներին միավոած իրերում առկա են մարդկային պատկերները, հայերեն, հայատառ թուրքերեն արձանագրությունները, ավետարանական պատկերներ: Երեսապատման սալիկները, պատմական բովանդակության նկարազարդումներով ու արձանագրություններով մեզ են հասել տարբեր վանքերից, եկեղեցիներից: 1719թ. Երուսաղեմի Ս.Հակոբյանց վանքի սալիկներում տեսնում ենք բյուզանդական պատմությունից վերցված նկարազարդումներ: 1764թ. Քյոթահիայի հայոնի խեցեգործ «խալֆա»-ների 69 և վարպետների 34 անուններ են հայտնի: 1766թ. հայտնի են խալֆաների 20 և վարպետների 37 անուններ, որոնք արտադրել են հիմնականում սուրճի և թեյի բաժակներ, նուրբ բաժակներ, անցքերով զարդարված ժանյակավոր ափսեներ աղանդերի, մրգերի համար, շերբեթի, օշարակի բաժակներ, ափսեներ, մեծ ու փոքր սափորներ: Նկարազարդողների մեծ մասը եղել են կանայք, որոնք արհեստանոցում սեղանների շուրջ նստած միմյանց են փոխանցել զանազան վող, ծաղկազարդվող կամ նվիրատվության կամ այլ առիթներով արձանագրվող իրերը, որից հետո դրանք վառարաններն են դրվել: Այս իրերի, վարպետների թողած կճիք-ձեռագրերի, օսմաներենով, հայերենով արձանագրությունների շնորհիվ կարող ենք նույնիսկ բաղդատել տարբեր արհեստանոցներից դուրս եկած իրերը: Այս առթիվ մեզ համար պարզվում է, թե ինչպիսի մեծ ընգրկում է ունեցել այս բնագավառը և ինչպիսի տարածում է ունեցել հատուկ, մասնավոր, առանձին պատվերների քաղաքականությունն այստեղ: Ամենից հաճախ հանդիպող վարպետների կամ արհեստանոցների ինքնության մասին գրությունները, ստորագրությունները եղել են օսմաներենով: Օրինակ՝ «Այվազ» բառը բոլորից ավելի օսմաներենով է, որ պահպանվել է: Իհարկե, տարբերվում են հայկական այն արտադրանքները, որոնք զուտ մասնավոր շրջանակների, պալատի համար են նախատեսված եղել: Դրանց մեջ կան բրոնզով կամ արծաթով շրջափակված, զոռնոցված շքեղ իրեր: 18-րդ դ. վարպետներից հռչակ են վայելել Գևորգը, Աբրահամ վարդապետը (1719թ. հեղինակային արձանագրությամբ), Թորոսը (1722թ. թվագրված իր), Ոսկան Կարապետը և ուրիշներ: 19-րդ դարում «ֆայանսի» այս ֆաբրիկաները մեծ հռչակ են վայելել: Թանգարանային արժեքի իրերի հեղինակների անուններից արժե հիշել հայտնի վարպետներից Արթին Մինասյանի, Դավիթ Հովհաննիսյանի, Հաջի Կարապետի, Ստեփան Վարդանյանի, Վահրամ Վարդանյանի անունները: Այս բնագավառն իր մեծ համբավով պարտական է եղել ձեռքի աշխատանքների տարեկան ու արտասահմանյան, միջազգային բազմաթիվ ցուցահանդեսներում այս ճյուղի ներկայացմանը: Մասնավոր տեղական ցուցահանդեսները ավանդական բնույթ են կրել և նվիրված են եղել տարբեր տոների, առիթների, ոխտագնացությունների: Ցուցահանդես-վաճառքների ժամանակ տոկրու-

գործը: Garo Kürkman, *Toprak, Ateş, Sır. Kütahya çini ve seramikleri*, Ist. 2005. Կ.Քյուրքմանը Քյոթահիայի արվեստի մասին թուրքերեն և անգլերեն պատկառելի ուսումնասիրություն է հրատարակել 2009թ. Ստամբուլում:







Դ.Միրիջանյանի հավաքածու

բար մրցանակներ էլ են տրվել, որոնք ոգևորելով ավել, նյութական միջոցների նոր ներդրումների առիթ են հանդիսացել: Դա էլ իրենց հերթին զարգացման խթաններից է եղել:

Այսօր էլ, երբ Քյոթահիայում պեղում են հայկական բաղերը, հին հնոցների փլատակներ են գտնում, պատմական արժեք ներկայացնող նախճապակե իրեր: Մինչ Առաջին համաշխարհային պատերազմն այստեղ բազմաթիվ արհեստանոցներ գոյություն ունեին: Դրանց արտադրանքը ոչ միայն սպառվում էր Օսմանյան կայսրության մեջ, հայկական եկեղեցիների, մասնավոր կառույցների, պալատների, դամբարանների ու այլ շինությունների կարիքների համար, այլև տարվում էր հարակից երկրներ, մասնավորապես հայկական գաղթօջախներ, ուր հայերն իրենց նոր բնակավայրերում սեփական եկեղեցիներ էին կառուցում: Նրանք մասնավոր պատվերներ էին տալիս, իրենց անհրաժեշտ գույներով ու նաև զարդանախշերն ու պատկերները նախապես որոշելով: Այստեղ արհեստն ու արվեստը համարայլ էին: Կուտինայի արտադրություններ են Երուսաղեմի հայոց պատրիարքարանի եկեղեցու կապույտ-սպիտակ ու ավետարանական տեսարաններով աշխատված սալիկները, որոնք 1791 թվականին են արտադրվել: Կեսարիայի ս.Կարապետ վանքի ս.Հրեշտակապետ եկեղեցու 3 սեղանները, ներքին պատերն ու սյուները 1797թ. գործեր են ու այսպես շատ ու շատ հայկական եկեղեցիներ ճոխացվել են Քյոթահիայի, Իզնիքի սալիկների շնորհիվ: Ֆրանսիական Սևրի թանգարանում կրոնական տեսարաններ ներկայացնող նախճապակե 2 սալիկներ կան, որոնցից մեկը հայերեն հետևյալ արձանագրությունն ունի. «Ողջույն Մարիամի Եղիսաբեթի ...բողարգի միջայ»: Երկու սալիկներն էլ 19-րդ դարի գործեր են: Ս.Էջմիածնի թանգարանի 1778թ. կապույտ ծաղկանկարներով, հավանաբար ջրի կամ գինու փոքր սրվակի վրայի արձանագրությունը հայատառ թուրքերեն է՝ «Աստված ողորմի. Փանոս իշլէիսիր սաղլըքլան կոլ անըսըն: Ղարապ ինմեի պոնտոան թվին 1200 (արաբատառ) սէնէ ջօնվար 1» (Աստված ողորմի. Փանոսի արած գործն է. Ողջությամբ հիշատակվի նրա ձեռքը. դարիբը թող խմի այստեղից. 1 հունվար 1778թ.):

Արվեստի այս ճյուղի հետագա բուռն զարգացմանը 1756 թվականից սկսած խանգարեց չինական ու իտալական նախճապակու մուտքը Թուրքիա: Նրանցով սկսեցին զարդարել Թոփգափուի և սուլթանական բարձաստիճան պալատականների ապարանքները: Դատելով Պոլսի մարստոան հայատառ թուրքերեն 2 սակացույցների ներկրվող իրերի ապրանքացուցակներից, եվրոպական գեղարվեստական այս ապակին որոշակի տոկոս է կազմել կայսրությունում պահանջարկ ունեցող ապրանքների ցանկում[13]: Այսօր թուրքական մի շարք վայրերում մեծ բախով փորձում են շարունակել քյոթահիական, իզնիքյան նախճապակու

13 Տես՝ ՄՄ, ձեռ. 8015 և 8016.



19-րդ դ.



18-րդ դ., Քոթահիա

Պալատի պատվերով կատարված ոսկեթել և արծաթաթել ձեռագործ հագուստներ

փանափորվել, կազմակերպվել ու նույնիսկ դասավանդվել են ոչ միայն մասնագետների, դիզայնագետների, նաև՝ միսիոներական կազմակերպությունների կողմից: Տարբեր շրջանների ասեղնագործությունը տարբեր է եղել: Տարբեր են եղել նաև ասեղնագործության հիմքը կազմող զարդանախշերը՝ ծաղիկներ, փնջիկներ, մրգեր, խաղողաողկույզներ, կենդանիներ: Ասեղնագործական դպրոցի լավագույն նմուշներ են համարվել Ուռհայի (Եդեսիայի) ձեռագործուհիների աշխատանքները[19]: Այստեղ շնորհալի ասեղնագործուհիների արհեստանոց էր բացել ամերիկյան բարեգործական առաքելության ղեկավար օր. Քորինա Շաթըքը: Տեղի վերմակաձև առաքելության բացած գործագործական ֆաբրիկայի արտադրանքի հետ միասին այս գեղեցիկ ասեղնագործությունները մեծ պահանջարկ են վայելել Ամերիկայում, Անգլիայում և եվրոպական այլ երկրներում, որ դրանք տարվում էին ցուցահանդես-վաճառքների կամ ուղղակի վաճառքի համար: Ուռհայի դպրոցն աչքի է ընկել կիլիկյան մշակույթին, մասնավորապես մանրանկարչությանը բնորոշ նրբությամբ, գույների ներդաշնակությամբ: Դրանք ասեղնագործել են բավականին նուրբ «մանուսա» կոչվող բամբակե մեղմ դեղնավուն երանգի կտորի վրա, որի հումքը (կտորը, թելերը) բերվում էր Անգլիայից և մշակվում տեղական արհեստանոցներում: Զարդերը ասեղնագործվում էին արհեստանոցի նկարիչների կողմից արված գծանկարների հիման վրա, գունավոր մետաքսե, մանավանդ ոսկե ու արծաթե թելերով: Կատարելապես տիրապետելով զարդոնիքներին, ձեռագործուհիները կարողանում էին ստանալ ինչպես հարթ, այնպես էլ ուռուցիկ մակերեսներ, լույսը կոտրող մետաղաթելերին տալով մակերեսի առկայծող, թրթռուն նրբին երևէջներ: Աղջկանց վարժարաններում ասեղնագործության հատուկ դասաժամեր են եղել և տրվել են համապատասխան վկայականներ: Դրանք շքեղ, հայերեն, ֆրանսերեն լեզուներով գեղեցիկ ձևավորված փաստաթղթեր, արտոնագրեր են եղել: Հանդիպել ենք մասնագիտական նման ուղղվածություն ունեցող օրիորդաց վարժարանների ցուցանակ-ազդագրերի ֆոնի վրա տարբերվող խմբակային լուսանկարների: Այստեղ մասնագիտություն ստացած վարժուհիները դասավանդելու են ուղարկվել հայաշատ նահանգների տարբեր դպրոցներ: Բացառիկ նման դպրոցներ, արհեստանոցներ են բացվել, որոնք գործել են հիմնականում գավառական օրիորդների համար, տալով նրանց սեփական աշխատանքով ապրելու, ընտանիք պահելու հնարա-

19 Հասմիկ Հարությունյան, *Ուռհայի (Եդեսիա) ասեղնագործության դպրոցը*, Հայաստանի հայրենակցական միությունների խորհրդի «Բնօրրան» հանդես, Եր., թիվ 3-4, 1996թ. էջ 104-105:







վորություն: Այսպիսի արհեստանոցներ են բացվել նաև բոլոր մեծ քաղաքներում, մանավանդ հագուստեղենի վաճառատներին, կարի արհեստանոցներին ու ֆաբրիկաներին կից: 1872թ. հայկական պարբերականներից մի քանիսի հայտարարությունների բաժնում գրվել է, որ առաջիկա վիճակախաղության տոմսերի վաճառքից գոյացած գումարով պիտի շինվի դպրոց, որ արհեստներ պիտի սովորեցնի: Գավառը վերակենդանացնելու, արտադրական նոր հնարավորություններ ստեղծելու շարժումը դարձել էր ազգի երևելիների ու պատրիարքարանի կարևոր հոգսերից:



Արիկ Ունճյան

1886թ. Բերայում սկսում է գործել աղջկանց արհեստների դպրոցը: 1906թ. Նոյեմի Աստղը Կեռիկեաշայի Աստղույան դեղարանում միաժամանակ կար ու ձևի, ձեռագործի արհեստանոց է բացում և սկսում ուսուցանել: 1919թ. հրատարակվել է «Հայ գեղարվեստական միության կանոնագիրը»:

Ասեղնագործության մի առանձին ճյուղ է եղել զուտ ոսկեթել ու արծաթաթել ձեռագործներ պատրաստելը: Ոսկեթելերն ու արծաթաթելերը բերվում էին հիմնականում Անգլիայից, Ռուսաստանից: Այս գործը որոշ ժամանակ եղել է գավառներում անգլիական, ֆրանսիական, ռուսական հյուպատոսների մենաշնորհը: Ի դեմս հայ գեղջկուհիների ունենալով անհամեմատ էժան աշխատուժ, քան իրենց երկրներում էր, այս ճարպիկ դիվանագետները ասեղնագործության այս ճյուղը կարողացել էին դարձնել իրենց համար անչափ հասութաբեր զբաղմունք: Մանավանդ Քյոթահիայում, ամենաաղքատ տանն անգամ եղել են այս ոսկեթելերից պատառիկ հյուսվածքներ գործող դազգահներ: Դրանց մի մասը օգտագործվել է բանակում զինվորական համազգեստների, ուսադիրների և պալատական հագուստների համար: Հայ վաճառականները փորձել են իրենց ձեռքը հավաքել այս գործը, որն ավելի լավ պայմաններ պիտի խոստանար այս բնագավառում տքնող գործավոր-գործավորուհիներին: Այս շրջանում մեծ թիվ են կազմել հայկական կողմի պատվերները, որոնք բացի զուտ առևտրական նպատակներից, ուղղված են եղել գեղեցկացնելու, հարստացնելու հայկական եկեղեցիները, նրա ծիսական մասը (վարագույրներ, սփռոցներ, շուրջառներ, բազեր, բաշկինակներ, սյուժետային գոբելեններ և այլն), նաև՝ բարձրաստիճան հոգևորականության հագուստներն իրենց ոսկեթել, մարգարտաշար, արծաթաթել գործերով[20]: Փորձ է արվել ի մի բերելու այս բնագավառի հայկական ուժերը: Հայտնի վաճառական Արիկ էֆենդի Ունճյանը ոսկեթելագործների տնօրեն է նշանակվել:



Ոսկեթել ասեղնագործ ծածկոց սպասքի համար, 19-րդ դ.

20 Այսպիսի հրաշալի աշխատանքներ կարելի է տեսնել Պոլսի Հայոց պատրիարքարանի վերջին տարիներին հիմնադրված թանգարանում: Ցուցադրվող 10 և ավել կիրակոսներ լշոտ պատրիարքական, եպիսկոպոսական շուրջառներն իսկական արվեստի հիասքանչ գործեր են:



Մետաքսե գորգ գործող հայուհիներ

Հայտնի են Էրզրումի, Վանի և հայաշատ մի քանի գավառների ասեղնագործության հրաշալի օրինակներ: Որոշ հաստատություններ մեծ հռչակավորություն են վայելել, ինչպես վերոհիշյալ Էրզրումի, Վանի դպրոցները: Նրանց ձեռքի աշխատանքները պատվիրատու վաճառականների կողմից պարբերաբար տարվել են եվրոպական երկրներ, ինչպես օրինակ տարեկան մի քանի հազար կտոր Վանի վարպետուհիների արժանի գործերը:

1865թ. Պոլսում հիմնված Գրիգոր Խանճյանի վաճառատունը զբաղվել է Պոլսում և այլուր ասեղնագործության ոլորտում զբաղվածներին հատուկ հյուսվածքեղենի համար թելեր, քողեր, կարի համար ամեն տեսակի պարագաներ մատակարարելով: Նա ներկայացուցիչն է եղել նաև «Մեր» նորահնար յուղաներկի, որ օգտագործվում էր կերպասեղենի արտադրության մեջ և լվացվում էր: 1868թ. Գրիգոր Խանճեանի «Լիոն Պոռտէ» ասեղնագործության և մետաքսի հայտնի վաճառատունն ուներ իր ապրանքանիշը՝ ասեղնագործ առյուծ: Նման վաճառատներ են բացվել Պոլսի տարբեր թաղամասերում, երկրի տարբեր քաղաքներում: 1870թ. «Օննիկ և ընկ.» ֆաբրիկան սկսել է վաճառել վերջին նորաձևության հագուստներ, ժանյակներ, ձեռագործի ամենատարբեր թելեր (զինվորականների ուսադիրների պատրաստման համար և այլն): Ֆաբրիկան իր հաճախորդներին առաջարկել է ոսկեզօծ թելերով աշխատող և ձեռագործի լավագույն մասնագետների ծառայություններ: 1875թ. Մ.Նատոյանը Պոլսում հիմնել է յագմայի, նուրբ բատիստի, մանուֆակտուրային առևտրական տունը, որը մեծ հաջողություն է ունեցել, նաև՝ մահմեդական կանանց շրջանում: 1910թ. Պոլսում, Սեփոն Ջիվանը բացել է մետաքսե ու ոսկեթել գործերի ևս մի ֆաբրիկա, որը կրկին մեծ համբավ է ունեցել: 1868թ. հիմնադրված «Ստեփան Մարտիկեան և որդիք» վաճառատունը Բերայի իրենց գործարաններում արտադրված սփռոցների, սեղանի ծածկոցների, անձեռոցների, շղարշների, ոսկեթել ու մետաքսե ասեղնագործությունների, զանազան այլ ասեղնագործությունների մեծածախ ու փոքրածախ վաճառքով է զբաղվել, միաժամանակ ընդունել նաև օժիտներ պատրաստելու պատվերներ: Արկադի Խումարյանի «Ասեղնագործ-ոսկեթել ժանյակների» ֆաբրիկան մեծ հաջողություն է ունեցել:

Ձեռագործի արվեստն իր արմատներով կապված էր նաև հայերի մյուս հիմնական զբաղմունքի՝ **գորգագործության** հետ, որի հայկական ավանդույթների, տեսակների ու Օսմանյան կայսրությունում աշխարհագրական տարածման, տարբեր գավառներում նրանց առնչման տարբեր յուրահատկությունների մասին բազմաթիվ հայ ու օտար մասնագետների աշխատություններ են նվիրվել: Այս ոլորտը առնչվող մտքի ու ոսկե ձեռքերի, սույն արվեստը համադրող անհրաժեշտ բոլոր բաղկացուցիչների միավորումն է, որը մշակույթների պատմության մեջ հայտնի է «հայկական գորգարվեստ» անվանմամբ: Գորգագործության բնագավառում իր







մեջ ներառում է մի քանի այլ ճյուղեր: Հայերեն ու հայատառ թուրքերեն ձեռագրերում մեծ թիվ են կազմում ամենատարբեր ծագման նյութերից ներկեր, թանաք պատրաստելու մասին ձեռագրերը: Դրանց համար ծառայել են և՝ բուսական, և՝ կենդանական, և՝ հանքային նյութերը, որոնք լայնորեն օգտագործվել են գորգագործության մեջ: Ի թիվս արհեստների ու արվեստների այլ բնագավառների, նրանք աշխարհով մեկ հաստատել են արվեստի մակարդակի բարձրացած տնայնագործական այս մշակույթը:



Մի պատկեր Չերչքի գորգագործարանից
(Լուս. Արդոյանի երք.)

Կայսրության տարբեր գավառներում գորգարվեստն իր յուրօրինակ արտահայտություններն է ունեցել: Այն զարգացել է ոչ թե տարերայնորեն, այլ ավանդաբար փոխանցվել է սերունդ-սերունդ, ծնունդ տալով հատուկ շրջանների, հատուկ գյուղերի, հատուկ գերդաստանների մասին հիշատակությունների, պատմության: Այն եղել է առևտրի հիմնական մաս ու օտար երկրներ տարվել, մեծ ճանաչում բերելով այն առնչող ժողովրդին: Վերջին դարերում վաճառականական այս «նյութի» պահանջարկը նույնիսկ արտասահմանում այնքան մեծ է եղել, որ Արևմտահայաստանում հարուստ հայերը, հետո արդեն՝ հայ նոր կազմավորվող բուրժուազիայի ներկայացուցիչները, գորգագործության ուսուցման հատուկ վարժարաններ են հիմնել: Գորգագործության զարգացումը 19-րդ դարում պայմանավորված է եղել նաև մանածագործական ֆաբրիկաների առնչմամբ, թեև հիմնականում թելեր ստանալու՝ զզելու, մանելու և ներկելու պրոցեսները կատարվել են հենց նույն գորգագործների ընտանիքներում: Գորգագործական տարբեր ֆաբրիկաներում և արհեստանոցներում եղել են մասնագետներ (տղամարդ կամ կին), որոնք մասնագիտացել են դիմանկարային գորգագործության մեջ: Մարիամ Սեբաստացին, որ գորգի վրա անհնարինական կերպով ասեղնագործել էր Վիկտորիա թագուհու պատկերը, հրավիրվել է դասավանդելու որպես ուսուցչուհի Լոնդոնի Գեղարվեստից վարժարանում:

Ստեղծված գորգագործական միություններն ու տարբեր վիլայեթներում նրանց բաժանմունքները կոչված էին կենտրոնացնելու այս բնա-



Գորգի վրա գրված է՝ «Յարգիր ծերը, որ ծերանաս, երբ ծերանաս՝ նրա հարգը կիմանաս»:
(Դ.Միրիջանյանի հավաքածու)



գավառը, դպրոցներ առնեծելու, օգնելու, որպեսզի այն զարգանար, ծավալվեր[21]: Եվ դա ոչ միայն հայաշատ գավառներում: Հազարավոր հայ կանայք ու բնտանիքներ զբաղված են եղել գորգագործությամբ, իսկ հայ վաճառականները (նաև՝ դիվանագիտական, հյուպատոսական օտար անձնակազմերի ճարպիկ ու գործարար դեկավարները) դրանք հասցրել են աշխարհի տարբեր ծայրերը, որ մինչ այսօր դրանք մեծ համարում ունեն մասնագետների ու գորգի սիրահարների, գորգավաճառների շրջանում:

Ամբողջ կալվածքներ են զբաղված եղել գորգագործությամբ: Պոլսում հայտնի է եղել Գափուճյանների գորգի դպրոցը: Մետաքսե գորգերի արտադրության մեջ հայտնի անուններից է եղել Զարեհի դպրոցը: Զարեհ Գումգափու թաղում 12-15 տարեկան աղջիկներ էր աշխատեցնում: Երբ նրանք 15 տարեկան էին դառնում, թողնում էին դպրոցգործարանը, գնում այլ գործարաններ, շարունակելու իրենց արհեստը: Մինչդեռ մանկական նուրբ ձեռքերով ու մատներով օժտված պատանեկուհիների գործածներն ի տարբերություն արդեն վարժ ձեռքերի, այն առավելությունն ունեին, որ գորգերն ավելի խիտ էին գործված լինում: Այս կարևոր հանգամանքը ակնհայտորեն ուշադրության էր գրավում, մետաքսե այդ գորգերը դարձնելով փնտրված ու առավելագույնս արժեքավոր:

Գևորգ Ճաշյանը մետաքսե գորգերի համար նախատեսված գունավոր զարդանախշերով իր առեղծած նկարների հավաքածոյի արժեքի նկատմամբ ...? — no

Գևորգ Ճաշյանը մետաքսե գորգերի համար նախատեսված գունավոր զարդանախշերով իր առեղծած նկարների հավաքածոյի արժանիքների համար ստացավ Iftihar ...



մար տրվող ***Sânive*** մեդալների, տարբեր շնորհների[23]:

Հայտնի հայ մի շարք գորգավաճառների անուններ են մնացել՝ շաղախված արվեստի այս ճյուղի զարգացման հետ: Դրանցից է եղել Թոփալյան Հայկազունը (1864-), որը զբաղվել է Թուրքիայի, պարսկական և հնդկական գորգերի առևտրով: 1893թ. Չիկագոյի միջազգային ցուցահանդեսում եղել է Պարսկաստանի կայսերական պատվիրակն ու ընդհանուր տնօրենը: Այս հայտնի վաճառականը, որ պալատներ է զարդարել իր գորգերով, արժանացել է բազում պարգևների: Պարսկական արքունիքը նրան շնորհել է ***Şir-ü Hurşid*** պատվանշանները: Օսմանյան կառավարությունից ստացել է ***Mecidiye***, Վենետիկյայից՝ ***Post del Lisive d'Or*** շքանշանները: Ամերիկայի նախագահ Ռուզվելտին է նվիրել 50 հազ. $ արժողության մետաքսահյուս, ոսկեզարդահյուս պարսկական 6, 5x4մ մեծությամբ աշխարհում անհամաչափ գորգերից մեկը: Ավելի ուշ, նմանատիպ մի գորգ է նվիրել Չիկագոյի թանգարանին: Նյու Յորքի մոտ ունեցել է մարմարե շքեղ մի պալատ, որ կառուցել է պարսկական հյուպատոսի պաշտոնը: Եղել է Մորգանի մտերմավոր բարեկամներից: Հայ գորգի տարածման եռախառավորներից է համարվում:

Հայկական տաղանդի, վարպետության արտահայտություններից է Թոքաթում նուրբ մուսլինի վրա (հետագայում նաև այլուր, բամբակե նուրբ այլ տեսակի կտորների վրա) դաջելու արվեստը, որը և ծնեց մինչ օրս այդպես հայտնի կանացի գլխաշորը՝ յազմա: 1790-ական թթ. Պոլսի Գումկաննար թաղում մի հայ հնարեց **նազմա** կոչված գլխաշորը: Դա բամբակե, մեկ արշին մեծությամբ բարակ կտոր է, որի վրա նկարված են գույնզգույն ծաղիկներ կամ զարդեր: Դաջում էին փայտե մի քանի տեսակ կաղապարների օգնությամբ: Այս «նազման», նախապես ծառայում էր աղքատիկ կանանց իբրև գլխաշոր: Յազման թեև բարակ, սակայն դիմացկուն կտորից է, տարբեր գույների, իսկ դաջված զարդանախշերի ներկերը դիմացկուն են արևի, լվացքի դեպքում: Այս գյուտը տարածվեց հայերի շրջանում, նրանց դարձնելով դրա արտադրողներից, արտահանողներից: Ավելի վաղ, Թոքաթը, որ հայ յազմագործության հայտնի վայրերից է եղել, դեռևս 15-րդ դարից հայտնի էր իր բամբակե գործվածքներով, դրանց համար հատուկ ներկատներով, անգույնի նուրբ բույրի մշակմամբ, վերմակագործությամբ, գույների պատրաստմամբ, առվոսական և ճերմակ նուրբ կտորից գլխակագործությամբ, դերձակությամբ[24]: Բեյրութի, Իզմիրի, Կահիրեի, Իսքենդերունի շուկաներում հայերը դրանց վա-

23 Այսպես օրինակ, 1899թ. Քըլըճեցիների Բաբանց աղա Մանչյանի կնոջը, աղջկան և ուղեկից Կարապետ աղայի աղջկան գորգագործության մեջ վարպետության համար մեկական ***Sânive Nefise Madalyası*** է շնորհվել: Այսպիսի օրինակները շատ են: 1905թ. Էդիրնեում արհեստների ցուցահանդեսին մասնակցում են նաև հայերը՝ Հայ աղջկանց դպրոցի, ֆրանսիական ս.Հեղնե դպրոցի հայ ուսուցչուհիներ, գորգեր, ձեռագործներ, ձեռնոցներ:

24 Arsen Yarman, s. 44,

ճաքով էին զբաղվում: Մինչև վերջին տարիներին յազմա արտադրող ֆաբրիկաներից շատերը պատկանում էին հայերին, իսկ յազմաների արտադրությունը արվեստի աստիճանի են հասցրել[25]: Որքան էլ որ թուրք ուսումնասիրողները[26] պնդում են, որ այն ի սկզբանե տարածված է եղել մասնավորապես Թուրքիայում, և այն օգտագործել են առաջի պեկիները, իսկ ժամանակակից կանանց համար օգտագործվողները պատրաստվել են միայն մահմեդականների կողմից բացարձակապես չի համապատասխանում իրականությանը:

Զմյուռնիահայ Հակոբ Աճեմ Սարգսյանը 19-րդ դ. սկզբին Վիեննայում հնարել է «*Ֆրենկ յազմասի*»-ն (ծաղկավոր նուրբ կտոր):

**Ոսկերչությունը և արծաթագործությունը**[27] եղել է հայերի մենաշնորհներից: Օսմանյան կայսրության տարածքում արծաթագործության, ոսկերչության լավագույն վարպետները դարեր ի վեր համարվել են հայերը: Այս ասպարեզին նվիրված ուսումնասիրությունները դրա վառ ապացույցն են հանդիսանում: Այդ են փաստում Թուրքիայի թանգարաններում, հնավաճառների շուկաներում և անհատական հավաքածուներում ներկայացված ու ցուցադրվող արվեստի անգնահատելի նմուշները: Դրանք կենցաղում օգտագործվող ամենատարբերազան, պայտերի ու ապարանջանների մաս կազմող իրերից, մինչև անհատական օգտագործման, շքեղության առարկաներ են, զարդեր և այլն: Հովսեփ Թորաճի, Կարո Քյուրքմանի և այլոց ուսումնասիրություններում[28] մանրամասնորեն ներկայացված են հարյուրավոր անուններից բաղկացած ոսկերիչների ցուցակներ, տարբեր գավառներում ստեղծագործած արհեստավոր-արվեստագետների անուններ, կնիքներ, որոնք մնացել են ոչ միայն ուսումնասիրողների աշխատություններում, այլ նաև մինչև օրս հանդիպող և հնդիճակներին փոքր բերող ստեղծագործություններից մեծ մասի վրա են դրոշմված: Ոսկերիչներով հարուստ վայրերից են եղել Կեսարիան, Մալաթիան, Վանը, Տրապիզոնը, Երզնկան, Խարբերդը, Պոլիսը, Հալեպը, Իզմիրը, Իզմիթը, Դիարբեքիրը, Բիթլիսը, Սվազը, Եգիպտոսը և այլն, և այլն: Ոսկերիչներից ամենահայտ անունները հիմնականում Կեսարիայի ծագում ունեն՝ Հակոբ Շահինի (1671), Կարապետ Մալխաս (1691) և ուրիշներ:

Բազմադարյան այս արվեստը, որը մի քանի արհեստների միաձույլ միասնություն է հանդիսանում, հայերի համբավը տարածել է ողջ աշխարհում: Դեռևս 1534թ. Կանունի Սուլթան Սուլեյման Ա-ն Վանից ու շրջակայքից բազմաթիվ հայ արհեստավորների, մասնավորապես վարպետ ոսկերիչների, բռնագաղթել է տվել Պոլիս (Սամաթիա): Դրանց թվում հայտնի են եղել Բահա Ջհնու Քաղաքյանը, արծաթագործ Գասպարը: Վարպետ արհեստավորների Պոլիս բերելը շարունակվել է անընդհատ, մյուս սուլթանների կողմից ևս: Օսմանյան կայսրությունում «Կույումճու չարշըսը»-ն (ոսկու շուկա) իր դարերի հրապարակի մեծ մասը հայազգի ոսկերիչներին է պատկանել ոչ միայն Պոլսում, այլ ողջ կայսրության տարածքում: Բոլոր գավառների քաղաքներում հայ ոսկերիչները և արծաթագործները գերադասելի են եղել իրենց

25 1907թ. Թոփալի յազմայի գործարանում հնչակյան բանվորների միությունը, «Համադրիչանակը» ակումբ, գրադարան, ընթերցարան է կազմակերպվում:
26 Reylan Kaya, *Türk yazmacılık sanatı*; Reşad Ekrem Koç, *İstanbul Tulumbacıları*.
27 Այս մասին տես՝ Յովսէփ Թօրաճ. *Հայ արծաթագործ վարպետներ* (Ժ. և այլք.): Լոս Անջելես 2005: Վ.Շահտուրեան, *Ոսկերչի քրքնահայ ոսկերչության պատմությունը*. «Շողակաթ» ամսագիր 1974-76 թթ., Իստանբուլ: Garo Kürkman. *Osmanlı Gümüş Damgaları*, İst. 1996.
28 Garo Kürkman. *Ottoman Silver marcs*, Ist. 1996.





ազնիվ նկարագրով ու նուրբ արվեստով: Սուլթանական պալատում հայազգի արքունի ոսկերիչները միմյանց են հաջորդել, իրենց ձեռքում պահելով ու ղեկավարելով երկրի դրամահատարանը, որը միայն վերջին հարյուրամյակում է մասամբ թրքացման անցել, դարեր շարունակ ի դրև հանելով հայ ոսկերիչների նկարչական, փորագրական ու քանդակագործական տաղանդը[29]: Էվլիյա Չելեբին 1600թթ. իր «Ուղեգրության» մեջ հիշում է երկու հայ ոսկերիչների՝ Ոսկանիանցի Խաչատուրին և Այրքին: Հայ ոսկերիչները արվեստի այս համակենտ ճյուղը դարձրել են մեր ժողովրդի ստեղծագործ էության փառքերից, ժառանգաբար փոխանցել, դարձրել ընտանեկան գործ, էական դեր խաղալով Օսմանյան կայսրության տնտեսական ու մշակութային կյանքում: Ոսկերչության ասպարեզ ոտք դնող պատանիները խստագույն զոհում են ենթարկվել ու տաղանդավորներն են միայն բռնել այս պատվավոր ուղին: Զարմանալի չէ, որ Պոլսի «Քույումջու չարշըսի» պատմական փակ շուկայում գտնվող Չուխաճը, Զինճիրլի, Խալըճըլար, Վալիդեհանը, օդալար և այլ խաներ գրեթե ամբողջությամբ կենտրոնացած են եղել հայ ոսկերիչների, վարպետների ձեռքում:

1790թ. արծաթագործների էսնաֆների մեջ 103-ից 50-ը հայերն են եղել:

1872թ. մի ցուցակ ընդգրկում է պատրիարքարանին տուրք տվող հայկական բոլոր թաղերի ոսկերիչներին: Իսկ այդ թաղերը ներկայացնում են համարյա ողջ հայ Պոլիսը՝ Գումգափու, Ենիգափու, Թոփգափու, Սամաթիա, Պեշիկթաշ, Ենիքեոյ, Խասքեոյ, Քարաքեոյ, Քաղըքեոյ, Օրթաքեոյ, Պալաթ, Բերա, Քանդիլլի, Քուրուչեշմե, Քարագյումրուկ, Քազգանճըլը, Էյուպ: Այդ ոսկերիչների թիվը շուրջ 200 էր[30]:



Երուսաղեմի Ս. Յակոբյան վանքի արծաթապատ դուռը
(*գործ վարպետ Յակոբի, 1731*)

29 Այս բնագավառում հայտնի անուններ են եղել մինչև Միրզիբեն և Հակոբը: Արքունի ոսկերիչներ Տյուզյան ամիրայական գերդաստանի կողքին իրենց արվեստով փայլել են Պոլսի և տարբեր գավառների (մասնավորապես Վանի) ոսկերիչները, արծաթագործները, ինչպես Վիչեն Աղաոպյանը (1807-1871), Միքայել Թևանյանը (1835-1901), Քերովբե Թութունջյանը (1858-1929) ու շատ ուրիշներ: Հայկական արծաթագործության մասին մի աշխատանք է գրել և Պոլսում տպագրել 20-րդ դարասկզբի սփյուռքահայ հայտնի արծաթագործ Արփա Բերբերյանը:
30 Garo Kürkman. *Osmanlı Gümüş Damgaları*, İst. 1996, Համառոտված:



Սուլթանական բարձրագույն պատվանշաններ՝ Համեդանը Ալի Օսմանի, Մեջիդիե, Օսմանիե
*(Hamedan-ı Ali Osman Madalyası, Mecidiye, Osmaniye)*

է ունեցել ոսկու շուկայում որպես գնդապետական փորձագետ: Պատրաստել է հին, նշխարական ձեռագրերի թանկարժեք կազմեր, պատյաններ, զարմացնելով փարիզյան արվեստագետ շրջանակներին իր մեծ վարպետությամբ: Գերմանական կայսեր երկու այցելությունների ժամանակ Աբդուլ Համիդ Բ-ի նրան նվիրված մեդալները, թանկարժեք ակնոցներն ու զարդերը Քերովբե Թոփալյանի ձեռակերտներն են եղել:

Հայ ոսկերիչները և արծաթագործները մեծ համարում են ունեցել սուլթանական պալատում, ծառայել սուլթաններին ու նրանց ընտանիքներին, եվրոպական արքունիքների ու օտար բարձրաստիճան հյուրերի համար նախատեսված նվերների պատվերների առյուծի բաժինը կատարել են հենց հայ ոսկերիչներն ու պալատական ոսկերչապետերը: Նրանց անուններն ու նրանց մասին իմանում ենք նաև հայ վարպետներին սուլթանական շքանշաններ ու շնորհներ տալու մասին լուրերից: Ահա մի քանի նման տեղեկություններ[33]:

Տյուզյան արքունի ոսկերչապետերի, դրամահատարանի տնօրենների գերդաստանի անդամները ևս բազմաթիվ շնորհների են արժանացել իրենց բացառիկ տաղանդի, ազնվության ու նվիրվածության համար: Միայն թե 1819թ. այս ընտանիքի անդամները զոհ դարձան գրպարտության և կորցրին ոչ միայն իրենց ունեցվածքը, այլև կյանքը, դառնալով այս երկրի հերթական հայ նահատակները: Երբ անմեղությունը պարզվել է, արդեն ուշ էր...

1858, 1868, 1871 և այլ թվականների մի քանի հարյուր էջերից բաղկացած հաշվեմատյաններից կատարված քաղվածքներ, լուսանկարներ: Ներկայացված եղեր ձեռագիր հաշվեգրանցումները, որանց թերթերի վրայի թվերը գրված են օսմաներեն, իսկ շարադրանքը՝ հայատառ թուրքերեն լեզվով: Այն հայ վարպետների, ոսկերչապետերի պալատական արվեստանոցում ունեցած համարում միանձնյա, կարևոր գեղարվեստական ապացույցներից է:

33 1893թ. պոլսեցի ոսկերիչ Կարապետ Գալֆայանցյանը ստանում է ***Sanayi Nefise Madalyası***. 1894թ. պալատական ոսկերչապետ Լևոն Նշչապազյանը ստանում է 4-րդ աստիճանի ***Mecidiye***. 1888թ. արքունի ոսկերչապետ Կարապետ Բալյանը ստանում է 2-րդ աստիճանի ***Mecidiye***. 1888թ. Կեսարիացի ոսկերիչ Հակոբ Կույումջյանը ստանում է 4-րդ աստիճանի ***Osmaniye***. 1888թ. պալատի ոսկերչապետ Յակոբ Նշչապազյանի որդի Էդիս եսայիին շնորհվում է ***Şefakat*** պատվանշանը, իսկ 1886թ. շնորհվել է 4-րդ աստիճանի ***Mecidiye***: Երկու տարի անց ***Sanayi Madalyası*** պատվանշան է շնորհվել պոլսեցի ոսկերչի որդի Էդիս Նշչապազյանին (1888): Նույն թվականին արքունի ոսկերչապետ Կարապետ Բալյանին Գերմանիայի կայսեր կողմից շքանշան է տրվում: Այս առթիվ տրված սուլթանի հրամանով շքանշանը կարող էր դրվել նրա արվեստանոցի վրա: 1901թ. Իզմիրից ատաղձագործ Արթին Քասապյանը, Անկյուրացից ոսկերիչների գլխավոր Անտոն Թիգերդյանը և փաստական Քոնյալըլյանը ***Sanayi Nefise Madalyası*** են ստանում: Հաջորդ տարի, 1902թ. ոսկերիչ Հաանփիկ Ուեննիին 4-րդ աստիճանի ***Mecidiye*** է շնորհվում: 1906թ. ոսկերիչ Արթին Քյոհեյանը արժանանում է 4-րդ աստիճանի ***Osmaniye*** պատվանշանի:







Վանի արծաթագործության օրինակներ

1910թ. սուլթան Մեհմեդ Ե Ռեշադի էդիրնե կատարած շրջագայության ժամանակ հայ արծաթագործ Աստուրը նրան է նվիրել 12 տարի առաջ իր պատրաստած Սելիմիյե մզկիթի արծաթե շքեղ մանրակերտը: Սուլթանը հիացմունքով է գնահատել այս ձեռակերտը:

Հայ գոհարավաճառ-ոսկերիչները օսմանյան կայսրությունում առանձնահատուկ կշիռ են ունեցել իրենց որակյալ ապրանքով, անձեռակերտ աշխատանք-գլուխգործոցներով: Հայ ոսկերիչների արվեստը գնահատվել է նաև շնորհիվ այն բանի, որ նրանք դուրս են եկել արևելյան ճաշակի արտահայտություններ լինելուց և հանդիսացել են եվրոպական ճաշակի, ոճի ու ավանդույթների օրինակներ: Չենք շեշտում հայկական եկեղեցիների համար կատարված գործերի՝ եկեղեցական ծիսակատարությունների, բարձրաստիճան հոգևորականների, եկեղեցու սպասավորների ու եկեղեցիների համար անհրաժեշտ, նրանց մաս կազմող հարյուրից ավելի անհնատարրեր իրերի մասին: Դրանք հայկական ոսկերչության ու արծաթագործության ավանդույթների արտահայտություններ լինելով հանդերձ, հարուստ նյութ են ընձեռում ուսումնասիրողների համար: Մեծ մասը զարդարված են եղել քանդակներով ու ընդելուզված թանկագին և կիսաթանկարժեք քարերով[34]: Որոշների վրա գտնվող արձանագրությունների մեծ մասը պատմական արժեք է ներկայացնում: Մասնագիտական գրականության մեջ և մեզ հասած իրերի վրա եղած տարբեր լեզուներով կնիքներն ու առանձին դրոշմները հատակեցնում են ոսկերչության տարբեր բնագավառներում իրենց նպաստը բերած արհեստավոր-արվեստագետների անունները, գործը:[35]

Ոսկերիչ, արծաթագործ արվեստագետների ոչ հաստատ պատվերներով կատարված ձեռակերտներն իրենցից ներկայացնում են փիրուզենի արվեստի սիրահարների գործեր: Այս ոճը սուլթանական կարելի է համարել եվրոպական արվեստի կենտրոններում սովորած, կատարելագործված կամ ուղղակի հայրենի թանգարաններում շրջած հայ արվեստագետների համար: Նրանց աշխատանքները մաս են կազմել Օսմանյան կայսրության սահմաններից դուրս փառավոր իրերի:

Վանեցի ոսկերիչների ու արծաթագործների համբավը դուրս էր եկել Օսմանյան կայսրության սահմաններից: Նրանք 19-րդ դարի կեսերից սկսած աշխատել են եվրոպական պատվերների շրջանակներում: Դրանք եղել են շքեղության, արդուզարդի, կենցաղային տարբեր

34 1913թ. հայ գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանի ու հայկական տպագրության 400 ամյակի հանդիսությունների առթիվ Պոլսի հայ ոսկերիչների կողմից Ձ.Յարությանը Հայոց պատրիարքարանին է նվիրում հոբելյանական հուշարձանների նմանությամբ, ալյումինապատ հայկական այբուբենով ոսկյա մի կուշանակը:

35 Garo Kürkman, *Anadolu Ağırlık ve Ölçüleri*. İst.; *Osmanlı Gümüş Damgaları*. İst., 2003.



Սուլթանի կողմից Աբգար Միխայլյանին տրամադրված ցարին նվիրված թամբ, ընդելուզված սադափով, զմրուխտով, շափյուղայով, հակինթե քարերով (գործ պոլսահայ վարպետի)

իրեր, որոնք աչքի են ընկել իրենց նրբագեղությամբ, հատուկ զարդանախշերով, սևադայի լայն օգտագործմամբ, Պոլսի ու այլ քաղաքների տեսարանների փորագրություններով: Դրանք տարբեր չափերի գեղեցիկ կտրատած արծաթե երեկոյան կանացի ձեռքի պայուսակներ են եղել, կենցաղային իրեր, սպասք փորագրված, արձանագրություններով: Արդուզարդի, դեղերի, կանացի պայուսակների մեջ տեղավորվող ամենատարբեր տուփիկներ, սափորից մինչև աղամաններով զարդարված, էմալապատ: Ամեն տարի միայն վանեցի վարպետները եվրոպական տնտեսություններից եկած պատվերներով պատրաստել ու վաճառել են 4 հազար ծխախոտատուփ, որոնք էլ՝ արվեստի գործեր: Հազարավոր զարդեր, ծխամորճեր, տարբեր չափերի ու գործածության տուփեր, սեղանի սպասք՝ դանակ, գդալներ, պատառաքաղներ, մատանիներ, գավաթներ, բաժակներ, ծամածալներ, թեյի բաժակներ, թանաքամաններ, գրիչներ, գրենական պիտույքներ, ափսեներ, բազմաթիվ շքեղ մատուցարաններ, թեյ ու սուրճի բաժակակալներ, սափորներ, եկեղեցական, ծիսական սպասք ու առարկաներ, բաղնիքի թասեր, աշխարհիկ տոնական, հարսանեկան ու նաև եկեղեցական հագուստների տարբեր մասեր, գոտիներ և այլն և այլն: Այս իրերն ամեն տարի վաճառվում էին եվրոպական քաղաքներում, Ամերիկայում, Աֆրիկայում, և այլուր: Արվեստի այս գործերից լավագույնները այսօր էլ գտնվում են Դոլմաբահչեի թանգարանային նմուշների շարքում, *Քափալը չարշըի* (Ստամբուլի փակ շուկայի) ու հնավաճառների բազմաթիվ խանութների հավաքածուներում, չափազանց մեծ գներով վաճառվում հիմնականում ձեռքի, արծաթե աշխատանքների սիրահար օտարներին, մաս կազմում ստամբուլյան աճուրդների[36]: Մեծ մասի վրա կարելի է գտնել հայատառ արձանագրություններ, հայ վարպետների կնքադրոշմներ: 19-րդ դարում Վանում 120 ոսկերչի խանութ-արհեստանոցներ են եղել: Դրանց կողքին ստեղծագործել են նաև շրջիկ ոսկերիչ-վարպետներ: Վանի արծաթագործությունն, օրինակ, հայտնի է

36 Portakal Sanat ve Kültür Evi, *Osmanlı Sanat Eserleri Heykel, Tablo ve Hat*. Ist., 1998, N 96; 2008, N59, 61, 70.







Ոսկե զարդանախշերով ձիու մետաքսահյուս թամբ (Մեհմեդ Դ-ի շրջան)

եղել «սևադա, սևապատման» հատուկ եղանակով: Արծաթագործությունն ու ոսկերչությունը սևադայի տեխնիկայի օգտագործմամբ հայտնի է եղել դեռևս եգիպտացիներին, հռոմեական ժամանակներում, Բյուզանդիայում: Սևադայապատ է Ստամբուլի ս.Սոֆիայի տաճարի հաղորդատուփի խաչանը: Նման տեխնիկան Իտալիայում սկսել է օգտագործվել 9-րդ դարից: 13-րդ դարից սկսյալ այն հայտնի է եղել Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայում: «Սևադա»-ի եղանակը արևմտահայ ոսկերիչներից, մասնավորապես վասպուրականցիներից է անցել, տարածվել արաբական հարևան երկրներում, իսկ աղավաղված «սևադա» բառը դարձել է՝ «սավաթ»: 19-րդ դարում «սևադա»-ի օգտագործումը տարածվեց նաև Կարինի, Սեբաստիայի, Աղանայի, Իզմիրի, Իզմիթի, Պոլսի, Բաղեշի, Տիգրանակերտի, Կոնիայի, Թավրիզի ոսկերիչ-արծաթագործների շրջանում և վերից այլոց: Սևադայի պատրաստման ամենահայտնի եղանակը համաձուլվածքի ճշգրիտ եղանակն էր՝ 1 մաս մաքուր արծաթ, 2 մաս պղինձ, 3 մաս կապար: Այն հալեցվում և դրան ավելացվում էր ծծումբ, բորակ, սառեցվում: Այն փոշի էր դարձվում և լցվում փորագրված մակերեսների խորության մեջ: Ապա՝ 5 մաս բորակ, 2 մաս աղ, 1 մաս կավիճ էր լցվում պատրաստվող, շիկացած առարկայի մեջ՝ սևադայի փոշու վրա, առաջացնելով հարթ մակերես:



Մուրադ Դ-ի շրջան

Արևելյան տարբեր վիլայեթներում աշխատող, ստեղծագործող ոսկերիչները տարբերվել են միմյանցից, ունեցել ակնհայտ առանձնահատկություններ: Հայկական ոսկերչությունը շնորհիվ մի քանի անունների ոչ միայն դուրս է եկել միջազգային շրջանակ ու մինչ օրս պահել է իր արժեքը, այլև հայտնի է դարձել իր գործունեության, պատրաստման եղանակներով, առանձնահատուկ ոճերով: Այսպես, օրինակ, *Ագնավոր* անունով մի հայ ստեղծել է հայտնի մի ոճ, որը միջազգային շրջանակներում հայտնի է «Ագնավորի գործ» անվանմամբ: Այն իրականացվում էր մետաղե ճախարակի վրա անցկացված արծաթե իրը արագորեն պտտելով ու փորագրական գրչով առարկայի վրա զուգահեռականներ, ուղիղ կամ ալիքավոր գծեր փորագրելով:

Ոսկերչության ասպարեզը ևս ունեցել է իր դասագրքերը, որով առաջնորդվել են[37]: Հայ վարպետները նաև նոր, մեծ ճշգրտություն պահանջող

37 Երևանի Մատենադարանի 1851-78թթ. ստեղծված հայատառ թուրքերեն 9694 ձեռագիրն իր տեսակի մեջ եզակիներից է: Այն կոչվում է «Արուեստաբանութիւն» (ճիճա) և նվիրված է ոսկերչությանը: Սա Պողար Քամիր Էսաջիկ Կյաճոյան վարպետի ձեռնարկն է, մի մանրամասն դասագիրք-ուղեցույց է ոսկերիչների, արծաթագործների համար: Կազմված է 312 թերթից, տարբեր բաժիններ ունի: Բաժիններից մեկը ծանոթացնում է եվրոպական վարպետների գործին, տեխնիկային: Ձեռագիրն ունի տերմինների բառարան: Ներկայացված են այս բնագավառում խոստումնալից, թանկագին քարերի գործածության

գործիքների հնարիչներ ու պատրաստողներ են եղել, որի համար կոչվել են «հնգարիֆենտ»:

1882թ. ոսկերիչներից Միհրան Մանգնեջյանը, Պետրոս Գրիգորյանը և Միհրան Չենրյանը թանկարժեք քարերը դյուրությամբ ազուցելու համար գյուտարարի բերար են ստացել: Այն իր տեսակի մեջ նման է եղել հեղինակային իրավունքի:

Ոսկերչական առարկաներն ունեցել են իրենց հատուկ ժամանգեա-գնահատողները, որոնց մեջ ևս հայերն առանձնացել են իրենց խոր գիտելիքներով, ժամանակցելով նաև որպես աճուրդների կազմակերպիչներ, խորհրդականներ:

**Իսքենդեր Արապյանը** 1909թ. դրամահատարանի համար շատ կարևոր, եզրերը խարտոցյալ, շփման կամ ժանտաջրով մաշող ոսկեդրամի պակասը չեշտող մի փոքրիկ կշեռք էր հայտնագործել (թինկ), որի համար պետությունից վարձատրվել է ու գյուտն էլ՝ մենաշնորհվել է: 1887թ. ոսկերիչ Աբրահամ Բյուրտոմյան հիմնելով ոսկի մաքրելու իր արհեստանոցը, սկսեց նաև պլատինե, ոսկե ու արծաթե իրեր մաքրել:



Մենելիք Բ թագավորի թագը
(Գործ Տիգրան Պերճյանի)

Մուստաֆա Գ, Աբդուլհամիդ Ա սուլթանների օրոք հայ ոսկերիչներ հիմնականում զբաղված են եղել եվրոպական արքունիքների տերերի (անգլիական, ֆրանսիական, ավստրոհունգարական թագուհիներին և թագավորներին), երեկի օտար հյուրերի համար զարդեր հեղինակելով: Որպես կանոն դրանք մեծագույն հիացում են առաջացրել, հայ ոսկերիչներին դասելով ֆրանսիացի ու անգլիացի արծաթագործ-ոսկերիչներից հետո՝ լավագույնների շարքում:

Կեսարացի ոսկերիչ Միրռիչ Գալֆայանը (1837-1908) շարունակելով մանրանկարիչ, փորագրիչների ընտանեկան գործը, Սարգիս աղիա Պալյանի օգնությամբ Վիեննայում և Փարիզում կատարելագործում է իր արվեստը: 1888թ. 3 ամսյա աշխատանքից հետո ոսկե ծխախոտատուփ է նվիրում Աբդուլ Համիդ Բ սուլթանին: Ծխախոտատուփի մի կողմում դրվագված է եղել օսմանյան զինանշանը, իսկ մյուս կողմում՝ խոշորացույցով միայն տեսանելի՝ Պոլսի տեսարանները: Սուլթանի բարձր գնահատությանն են արժանացել ոսկերչի մի քանի հայտնի գործեր ևս: Այն է՝ «Առյուծի բերանը պատռող Սամսոնը», «Տարվա չորս եղանակները», «Վագրն ու առյուծը» և այլ ստեղծագործություններ, որոնց համար 1888թ. Գալֆայանը սուլթանից շքանշան է ստանում: Ոսկերիչ Մազլումյանն իր երկու ադամանդակուռ ոսկե ժամացույցների համար, որ պատրաստել էր Սուլթան Համիդ Բ-ի գահակալության տարեդարձի առթիվ, շքանշանի է արժանանում: Նա Պիոս Ժ Հռոմի պապի 50-ամյակին առթիվ նվեր ուղարկված թանաքամանի հեղինակն է: Այն գտնվում է Վատիկանի թանգարանում: Անգլիայի Էդուարդ Է թագավորի համար պատրաստած արծաթեկազմ ալբոմի համար ոսկերիչը ստացել է *Medaille d'or hors concours*: Այսօր թուրքական Մեջլիսի թանգարանի մի անկյունում է գտնվում Մազլումյանի գլուխգործոցը՝ թուրքերեն տառերը արծաթե շրջանակով:

գաղտնիքները, ինչպես նաև բացատրություններ են տրվում նրանց հատկությունների մասին: Չեռագրի մի մասը ներկայացնում է հայատառ թուրքերեն տեքստի համառոտ տարբերակը:









Եթովպիայի Մենելիք Բ թագավորը

1906թ. Պոլսի հայտնի ոսկերիչներից Սարգիս Գալեմքերյանը հայկական միության անունից սուլթան Աբդուլ Համիդ Բ-ին է նվիրում արծաթե երախակալով (կոթով) թուր և մեծ հավանության արժանանում:

Հայ ոսկերիչների հետ սերտ համագործակցել մի քնագավառ է եղել սրագործների, դաշույնների ու դրանց պատյանների, երախակալների պատրաստողների խումբը: Թանկարժեք քարերով ընդելուզված, տարբեր տիպի փորագրություններով ու ֆիլիգրան աշխատանքով ճոխացված այս իրերը արվեստի գործեր են դարձել, որոնց մի մասի պատվերները բարձրաստիճան օտար հյուրերի համար է վերապահված եղել: Հայ հայտնի սրագործ վարպետներից մեզ են հասել Գրիգոր Զարիֆյանի (Այտմար Գրիգորի) ու նրա Հարություն որդու, Հաճի Արշակի ու նրա եղբոր, Վահրամ Թաճիրյանի անունները:



Եթովպիայի Մենելիք թագավորի դստեր՝ Սարիի դիմանկարը
(գործ Կասապյան Քրիստափորյանի, 1906)

Զինագործության մեջ հայտնի անուններից է եղել Անենյան Սարգիսը: Զինագործ այս վարպետն ապրել է Սուլթան Անենի (1808-1839) օրոք: Նրա համար թրեր է պատրաստել, որոնք ցուցադրվում են Պոլսի Թոփ Գափու պալատի, Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» և Աթենքի «Բենաքի» թանգարաններում[38]:

Հենց Սուլթան Աբդուլհամիդ Բ-ի օրոք, 1882թ. հատուկ հրովարտակներով հաստատվում է կայսրության զինանշանի մշակված պաշտոնական տեսքը: Այն կազմված էր 37 սիմվոլիկ մասերից: Ինչից էլ որ պատրաստվեր այս խորհրդանշանը՝ դրոշի վրա, մարմարի վրա, նկարված, ոսկու կամ արծաթի վրա, թանկարժեք քարերով ընդելուզված, կամ ոսկեթել հյուսվածքով ու գորգի վրա՝ այսուհետ այն միշտ նույն մասերից պիտի բաղկանար ու համաչափությամբ միանման լիներ: Այս հրովարտակը հասկանալի է դառնում, երբ խրար կողք ևս դնում կամ համե-

38 Nedret Bayraktar, *Sultan II Abdülhamid'e Gelen 25. Cülûs Hediyeleri Defteri*. TT, 1985, Eylül, s.12-19. Աբդուլհամիդ Բ սուլթանի գահակալության 25-րդ տարեդարձի առթիվ ստացած, Թոփ Գափու պալատում և այլուր պահվող նվերների ցուցակում գտնում ենք Հայոց պատրիարքի (Սալաթահեցիներ հրապարակի և հուշապալ արծաթե մանրակերտը), կարգին հայ համայնքի (մետաքսի վրա ասեղնագործված օսմանյան զինանշան), հայտնի փաստաբան Աբին Ռենջյանի (ոսկե ծաղկազարդ սկահակ), գրահրատարակիչ Կարապետ Քեչիշյանի (գիտության մասին 60 կտոր գիրք), Գարբիս էֆենդիի Շոռատոնյան, ջերմայինի և խոհանոցային ունեցող ափսեների տեսքով ժամացույց), Երկրորդ բանակի մատակարար Արթին էֆենդիի և նրա կնոջ՝ Զարեհի (2 ասեղնագործ բարձեր) կողմից նվիրաբերված ընծաները: Եզնայտոնի խանիշից, (անուններ առանց նշելու) պետական հայտնի պաշտոնյաներից ստացված բազմաթիվ ընծաներ՝ արծաթից տարբեր առարկաներ, Ձյույքի ճենապակու ֆաբրիկայի սրտաարկղը, Կասինայից հավանաբար, կամ գորգեր՝ որոնք ընդհանրապես հայ արհեստավորների ստեղծագործություններից կարող էին լինել: Հայտնի է, որ նշյալ ցուցակում նվիրատուների (անունով) նշված պաշտոնների մեծ մասը հիմնականում հայերն են զբաղեցրել:









Ագնավորի գործ

ժառում տարբեր սուլթանների օրոք Օսմանյան կայսրության զինանշանները: Բոլորն էլ մեկը մյուսից տարբեր են, անկախ ինչ նյութերից են պատրաստված եղել: Արքունի հայ ոսկերչարվեստից շատերը տարբեր սուլթանների օրոք զինանշաններ են փորագրել ոչ միայն դրամների, զարդերի, շքանշանների վրա, այլև՝ կենցաղային, նվերների համար նախատեսված, տարբեր նյութերից պատրաստված զանազան իրերի վրա: Ամենահայտնի գործերը կապվում են Պողոս Տյուզյանի (1797-1871) անվան հետ: Սելիմ Գ սուլթանը (1789-1807) իր դեսպան Աբդուլռահիմ Մուհիբբիի միջոցով Նապոլեոնին է նվիրել Տյուզյանների պատրաստած մի քանի գեղեցկագույն առարկաներ:

Աբդուլմեջիդ սուլթանի ոսկերչապետ Քյուչուկյան Հակոբը (1820-1893) որոշ ժամանակ անց եղել է նաև վարչապետ Ալի փաշայի սեղանավորը, «Կրեդի Ժեներալ Օտոման բանկ»-ի հիմնադիրներից, բացել է Բերայի հանրահայտ «Ատլաս» կինոթատրոնը: 1872թ. արքունի ոսկերչապետ Հակոբ Քյուչուկյանին (Քյուչեկզադե) 3-րդ աստիճանի ***Mecidiye*** և ***Ulây-ı Evvel*** բարձրագույն աստիճան է շնորհվում: 1875-81թթ. ճգնաժամի ժամանակ օսմանյան կառավարության ֆինանսները փրկելու համար մեծ վնասով գնել էր ողջ արժեթղթերը: Ունեցել է ապարանքներ, խաներ:

Սուլթան Աբդուլմեջիդի (1839-1861) և մայր-թագուհու ոսկերիչներից հայտնի են եղել Միքայել Գուրյանը, Թորոսյանը, Մարտիր Ղազարոսյանը: Ոսկերիչներից ոմանք այնքան մոտ են եղել իրենց սուլթանների, մայր-սուլթանների հետ, որ համարվել են նրանց բարեկամ-խորհրդականները:

1855թ. Նասրեդդին շահը հատուկ հրովարտակով արգելում է հայերի բռնագաղթը, որով սկիզբ է դնում իր երկրում արհեստավորների, առևտրականների զարգացման ու զարթոնքի շրջանին: Շահական թանգարանում ոսկերչական իրերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավել հայ վարպետների գործերը: Շահը միշտ դիմել է պոլսահայ ոսկերիչների, գոհարագործների ծառայությանը: Ալենցի Կարապետ Արիֆյանը (1868-) հայտնի է եղել ոչ միայն եվրոպական շրջանակներում, այլ նաև Պարսկաստանում: Մուզաֆֆերդինի շահի համար նրա պատրաստած զինանշանը անչափ դուր է եկել և Շահն անձամբ շնորհակալական նամակ ու մեդալ է ուղարկում տաղանդավոր վարպետին:

Հայտնի է, որ սուլթանական պալատական ոսկերիչ Բարսյան Էֆենդին հաճախ է պատվերներ ստացել շահի կողմից ու նրա համար: Հենց նրանից է տարբեր առիթներով շահը գոհա-





րեղեններ գնել: Շահի ոսկերիչներից հայտնի է եղել Ծերուն Մասեհյանը (Մուսա Էդ-օլ Սարդան), որը շեքսպիրյան գործերի հայտնի թարգմանիչ, դիվանագետ Հովսեփ Մասեհյանի հայրն էր: Հայտնի է նրա հեղինակած 34 կիլոգրամանոց ոսկե երկրագունդը: Մյուս շահական հայտնի հայ ոսկերիչը Իբրահիմ Չերկերբաշյան է եղել (1811-):

1896թ. Եթովպիայի թագավոր Մենելիք Բ-ն պոլսեցի ոսկերիչ Տիգրան Հերեյանին է պատվիրել իր հայտնի, մի քանի աստիճաններ ունեցող թագը: Այս միապետը հաճախ էր այցելում Պոլիս, երբ նրա թոռնուհին սովորում էր Պոլսի հայկական վարժարանում:

Բացի սուլթանական ու բարձր փաշայական երևելիներից, հայ ամիրաներն ու երևելիները ևս ունեցել են իրենց անձնական կամ նախընտրած ոսկերիչ-արծաթագործ վարպետները: Ներկիկենի Միհրան աղան ու նրա աշակերտ Ներկիկենի Եղիազար աղան են պատրաստել Պեզճյան ամիրայական գերդաստանի զարդերը, նվերները և եկեղեցական ոսկե ու արծաթե հուշանվերները:

1806թ. Պոլսի 18 ամենահայտնի ոսկերիչ արծաթագործներից 17-ը հայեր են եղել: Մինչ այդ այս տեղերը զբաղեցրել են հույն վարպետները: Հայ վարպետների մոտ արևելյան ճաշակին փոխարինելու էր եկել Լյուդովիկոս ԺԶ-ի ժամանակի ֆրանսիական ճաշակի և նորաձևության ազդեցությունը:

Օսմանյան շրջանում հայ ոսկերիչների գործերը կրում էին ժամանակի սուլթանների կնիքը (օր. սուլթան Սելիմի շրջան, սուլթան Աբդուլազիզի շրջան և այսպես շարունակ) և արձանագրություններ՝ օսմաներեն, հայերեն, լատիներեն, ռուսերեն, վրացերեն լեզուներով:

Ոսկերչության, արծաթագործության բնագավառի շարունակությունը պետք է համարել պալատի համար նախատեսված կենցաղային առարկաների պատրաստումը: Ոսկերիչ-փորագրիչների շրջանում հայտնի Պապա (կամ Ռեսսա) Աղամը (-1873) պատրաստում էր կայսերական պալատների, նոր ապարանքների ոսկեզօծ, արծաթե բռնակները՝ ձուլման եղանակով: Դոլմաբահչե պալատի ձուլածո բոլոր գործերը Ռեսսա Աղամի գործերն են: 1850-ական թթ. Սիմոնյան ընտանիքն է պատրաստել պալատի համար պղնձե ու արույրե կարասները, տապակները: Ստեփան Գալաճյանի գործարանի կենցաղային զանազան առարկաների, արձանների, սուրճի, թեյի արծաթե բաժակակալների, ոսկե դրամների կշեռքների արտադրանքը հայտնի է մինչ այսօր:

Պալատի հայ արհեստավորների մի մասը 19-րդ դ. վերջին



Սուլթան Աբդուլմեջիդի շրջան



Սուլթան Աբդուլմեջիդի շրջան



Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի շրջան



Պոլսահայ ոսկերչության նմուշներ

տասնամյակներից սկսած սովորաբար կրել են վերափոխված Օսմանյան ազգանունը: Որպես առիթ հայտնի է հետևյալ դեպքը: Հայտնի է, որ ժամանակի, աշխարհի 2 ամենամեծ ջահերից մեկը պարսից շահը նվիրել է ռուսական պալատին և երկրորդը՝ 4 տոննա կշռող բյուրեղապակյա ջահը՝ սուլթանական Դոլմաբահչեին, որի ամենամեծ սրահներից մեկի զարդն է մինչ այսօր: Ոչ մի մասնագետ հանձն չի առնել կախելու այդ ջահը և բոլոր փորձերն ավարտվել են անհաջողությամբ: Գաբրիել Օսմանյանն նույն խնդրով իրեն դիմած սուլթանից խնդրում է 4 օր՝ մտածելու համար և գործն ավարտում է հաջողությամբ: Ջահը մինչ օրս տեղաշարժ չի ունեցել: Հիացած սուլթանը նրա ամսավճարին ցմահ ավելացնում է 1 մեճիդիե և առաջարկում, որպեսզի պալատական հայ վարպետներն այդուհետ գրվեն **Օսմանլըյան**:

Հայ ոսկերչավարպետներն ու ոսկերիչները զարդարել են նաև 1517թվականից Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող եգիպտական արքունիքը: 1613-15թթ. հիշվում է եգիպտացի կուսակալի ոսկերչապետ, ազգությամբ հայ դիարբեքիրցի Խոճա Իբրահիմչաբը: Սիմեոն Լեհացի պատմիչը նրա մասին գրում է 1615թ. Եգիպտոսի իր ճանապարհորդական նոթերի մեջ:

Արհեստների, արվեստի ասպարեզում հայկական հետքը նկատելի է այս երկրում մինչ օրս: Հայ ոսկերիչ, արծաթագործ ու փորագրիչ վարպետները լավագույնների շարքում են եղել: Ինչպես Պոլսում, օսմանյան սուլթանների, այնպես էլ Եգիպտոսում, պալատական ոսկերչապետները եղել են հայեր: Եգիպտահայ գաղութի արագ ընդարձակմանը զուգահեռ հայ ոսկերիչների թիվը ևս մեծացել է, լավագույն համբավ ունենալով երկրում ու պալատում:

Մոհամմեդ Ալիի ու Իբրահիմ փաշայի արքունիքում են ծառայել Բարսեղ Ճևահիրճյանն իր որդիների՝ Ստեփանի և Եղիայի հետ: Փոխարքա Սաիդի պալատում՝ Մկրտիչ Ճևահիրճյանը: Խեդիվ Աբասի ժամանակ՝ Հովհաննես Նախնուխը: Հայտնի է 18-րդ դարում Ամասիացի Մանուկօղլու Կարապետը, որը հայտնի գայմագամ Թահիր փաշայի և Յանինայի նշանավոր Ալի փաշայի ոսկերիչն է եղել (1755):

19-րդ դարի հայտնի ոսկերիչներից հիշատակության են արժանի Թորոս Գարամանյանը, Զենոբ Ներկիզենյանը, Գ.Երկանյանը, Լևոն Խնդամյանը, Կ. Արիֆյան, ավելի ուշ՝ Օննիկ Ակբասանյանը (20-րդ դ.) ու ուրիշներ: 1932թ. Կահիրեում կազմվել է Հայ ոսկերչաց Կրթասիրաց Միությունը: Նրանց նպատակն է եղել հայ ուշիմ երիտասարդների բազմակողմանի մասնագիտացումն այս ասպարեզում:

**Ժամագործ ոսկերիչներ**

Ոսկերչության արվեստին զուգահեռ հայերը յուրացրել են ժամագործության արհեստը ևս, հայտնի դարձել այս բնագավառում իրենց կատարած գյուտերով, նորամուծություններով: Արքայական ժամագործապետների մի ողջ շարք է հայտնի:

**Հովսեփ (Յուսուֆ) Չելեպին (1680-1750)** արքայական ժամագործապետի (սաաթճը բաշը) Յուսուֆյան գերդաստանի նախապետն է եղել: Հայտնի է նաև, որ նա 1719թ. ղեկավարել է Գումգափիի Ս.Աստվածածին եկեղեցու երգչախումբը:

**Հակոբ Յուսուֆյանը,** որպես արքունի ժամագործապետ, 1778թ. սուլթանից աշխատավարձ ստանալու հրաման, բացառիկ բերաթ է ստացել: Նա և իր եղբայրը՝ Սարգիսը, 1807թ. Կառավարության և Աղա Քափուի համար սարքած ժամացույցների համար ի վարձատրություն՝ հատուկ «բերաթով» սամույրե գլխարկ և մուճակներ կրելու իրավունք են ստացել:





Սուլթան Աբդուլմեջիդի պալատում արքունի ժամագործապետ է եղել նաև հայտնի կոմպոզիտոր Տիգրան Չուխաջյանի հայրը՝ **Գևորգ Չուխաջյանը**, որը երգող ժամացույցների հնարիչ (զանգի ժամանակ մեղեդի է նվագել) ու լավագույն վարպետ է համարվել:

Ժամագործները ևս անմասն չեն մնացել սուլթանական հիացումներից ու շնորհներից: 1884թ. արքունի ժամագործապետ է դարձել **Մարտիրոս Երամյանը**, որը շատ շուտով (1884) իր լավագույն ծառայության համար արժանացել է 5-րդ աստիճանի ***Mecidiye*** շքանշանի: Արքունի ժամագործապետ **Միհրան Էֆենդին** 1889թ. ևս արժանացել է 5-րդ աստիճանի ***Mecidiye*** շքանշանի:

Կեսարացի ժամագործ **Մկրտիչ Գալֆայանը** (1837-1910) հնարել է 10 տարին մեկ լարվող մեծ ժամացույց[39]:

Նրանք Օսմանյան կայսրությունում ներկայացրել են սեփական և եվրոպական ոսկերչական ու ժամագործական նշանավոր հաստատությունները, որոշակի դեր խաղալով այս բնագավառի մասսայականացմանը, բարձրաշխարհիկ շրջանակներում շքեղ ժամացույցների նորաձևության տարածմանը: 1870թ. «Փալճյան-Ճեզվեճյան և Արապյան ընկ.»-ը վաճառում էր «Փալճյան» ապրանքանիշով ժամացույցներ: Օսմանյան կայսրությունում և Միջին Արևելքում[40] *«Longines»* հանրահայտ ֆիրմայի ժամացույցների ներկայացուցիչն է եղել 1875թ. հիմնադրված «Ճեզվեճյան և Որդիք» (գոհարավաճառ, ոսկերիչ, ժամագործ) հաստատությունը: «Գ.Արապյան» ոսկերչական և ժամագործական հաստատությունը (մինչև վերջերս) հանդիսացել է Թուրքիայում *«Omega»*-ի ներկայացուցչությունը: «Կյումուշկերդանյան» հաստատությունը վաճառում էր իրենց արտադրած և իրենց անունը կրող ժամացույցներ: «Գ.Սերգիսօֆ» հաստատությունը հայտնի դարձավ իր չափազանց որակյալ *«K.Serkisoff»* ժամացույցներով, մասնավորապես՝ գրպանի արծաթե, ոսկյա շղթայով ժամացույցներով, որոնք ժամանակի ամենաառաջնային ու շքեղության արտահայտություն համարվող իրերից էին և որոնք մինչ օրս գնահատվում են դրանց սիրահարների ու մասնագետների կողմից: *«A.Z.»* կնքադրոշմով ժամացույցները պատկանել են Ակոբ Զիլբերյան ոսկերչա-ժամագործական հաստատությանը:

Մարուլյան հաստատությանն են պատկանել ***«Recta»*** ժամացույցները: «Երվանդ և Շահեն Պերճակյան Եղբայրք» հաստատությունը վաճառել է ***«Yunghans»*** պատի ժամացույցները: Արքունի ոսկերիչ-գոհարավաճառ Պապազյանի հաստատությունը արտադրել և վաճառել է «Hamidiye» ժամացույցները:

Դոլմաբահչե պալատի մուտքին կից մի փոքրիկ ապարանք ծառայում է որպես թանգարանային ֆոնդի ժամացույցների ցուցասրահ: Այնտեղ պալատում գործածված եվրոպական հայտնի վարպետ ժամագործների սքանչելի ու շքեղ գործերի կողքին ցուցադրվում են օսմանյան շրջանի ժամացույցներ, որոնց մեջ կան նաև երգող, եվրոպական արվեստի ու տեխնիկայի այդ նմուշներին շատ չզիջող գեղարվեստի նմուշ հանդիսացող ժամացույցներ,

39 1926թ. փարիզաբնակ Ս.Այվազյանը հնարում է 15 տարի առանց լարելու գործող էլեկտրական ժամացույց:

40 Առևտրական տան այս հիմնադրի թոռը, **Նաժիփ Ճեզվեճյանը**, որ ժամագործություն էր ուսանել Շվեյցարիայում, շարունակել է ընտանիքի գործը, եղել Թուրքիայում *Longines* ժամացույցների ու նաև «Imhof» սեղանի զարթուցիչների ներկայացուցիչ: Տես Վ.Շաստորյան, *Օսմանցիք բրդուհայ ոսկերչության պատմություն*, էջ 19:



Սուլթան Աբդուլմեջիդի շքշան



Սուլթան Աբդուլազիզի շքշան

որոնք հայ վարպետների գործեր են:

Այս բնագավառն իր շարունակությունն է ունեցել Թուրքիայի հանրապետական շրջանում ևս[41]:

* * *

Պալատական ծառայության մի բնագավառ ևս հայտնի է եղել հայ մասնագետներով: Դա արքունի բաղնեպաններն են եղել՝ *համամբաշիները*: Նրանց գործունեությունը չի սահմանափակվել միայն պալատական բաղնիքների, շատրվանների տեխնիկական բարդ մասի հսկողությամբ: Նրանք հիմնականում տնօրինել են նաև Ստամբուլի բաղնիքները: Ժողովրդական ավանդույթի մաս կազմող լողանալու արարողությունը վերածվել էր ծիսակատարության նման մի զբաղմունքի, թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց համար, իր ամենատարբեր մանրամասներով: Աշխարհին հայտնի թուրքական բաղնիքների համբավը հենց այս ժամանակների արտահայտությունն է: Բաղնիքը հասարակական, գործնական հավաքատեղիների նշանակություն էր ձեռք բերել, ուր բազմաթիվ կենցաղային ու առօրյա, գործնական հարցեր էին լուծվում, ինչպես օրինակ՝ ամուսնություններից առաջ հարսնատեսության կազմակերպումը և այլն:

Հայտնի են նաև մի քանի այլ բնագավառի մասնագետներ, որոնք պալատում իրենց ասպարեզների գործերն են տնօրինել: Այդ մասնագետներն են եղել պալատների յուսարարները, պաղպաղակագործները, կահագործները, դերձակները[42] և այլոք, որոնց մասին տեղեկանում ենք նաև նրանց հերթական շնորհներ ստանալու առիթներով:

* * *

Օսմանյան կայսրության ընդարձակ տարածքները, հրաշալի անտառների գոյությունը պայմանավորում էր կենցաղում հայտնի մի շարք արհեստների գոյությունն ու զարգացումը: Դրանցից էր ատաղձագործությունը, կահագործությունը: Եվրոպական երկրների հետ մեր-

41 Եվրոպական հանրահայտ ժամագործական «Arlon», «Vacheron-Constantin», «Hislon», «International», «Orator», «Movado», «Nacar», «Revue», «Bulova», «Autron», «Minerva», «Valon», «Lip», «Zelma», «Alpina» առևտրական տների ներկայացուցիչները եղել են հայ ոսկերիչ-ժամագործները:

42 1883թ. Կայսերական պալատի գլխավոր պաղպաղակագործ Կարապետ աղան 3-րդ աստիճանի *Mecidiye* է ստացել: 1889թ. արքունի կահագործ Ներսես Նազարյանը 4-րդ աստիճանի *Mecidiye* է ստացել: 1894թ. պալատական դերձակ Գևորգ աղային *Sanayi Nefise Madalyası* է շնորհվել:





ձեցման արդյունքում այն յուրովի զարգացում ապրեց: Պալատների ու հարուստների համար ծառայող այս արհեստի մի ամբողջ ճյուղ սկսեց իր յուրովի վերընթացի ճանապարհը: Ավանդական կահագործությունը այլևս չէր բավարարում ժամանակի պահանջները: Նոր տեսակի ապրանքների բազմազանությունը թույլ էր տալիս, որ պալատները, և ոչ միայն պալատները, այլև քաղաքային կենցաղը համալրվեր եվրոպական ոճի կարասիներով՝ այնպիսի, ինչպիսիք արտասահմանից բերում էին վաճառականները: Այնպիսիք, ինչպիսիք եվրոպացի ընտանիքներում էին օգտագործում: Արևմտահայ հարուստ խավը արևելյան ավանդական կահույքի հետ մեկտեղ իրենց տները զարդարում էին եվրոպական կահույքով ու կենցաղային շքեղ իրերով:





Արծաթե ոսկեզօծ հայելիներ

19-րդ դարում, Սուլթան Աբդուլազիզի օրոք, **Քեհնաճյան Որդիկ** բեյը հնարեց թուրքական փայտաքանդակները և հիմնադրեց ատաղձագործական մեծ արհեստանոց: Հին տիպի արհեստանոցները վերածվում էին նոր պահանջներին հարմարվելու համար: Այս ամենը երևում էր նոր հյուրանոցներում ու ամենատարբեր զբոսասենյակներում, այս մասին կարդում էին, այն ցուցադրվում էր թատրոնի բեմում, իր գեղեցկությամբ ու նրբաճաշակությամբ դառնում էր համընդհանուր պահանջարկ: Մաքսատան ցուցակներն ուսումնասիրելիս պարզվում է, որ ներմուծվող տարբեր տեսակի թանկարժեք փայտանյութը հիմնականում ծառայում էր երաժշտական և այլ գործիքների, թանկարժեք կահույքի, պալատների գեղարվեստական կառուցապատման ու ներքին հարդարման տարբեր աշխատանքների համար: Բացի ատաղձագործական երկույթ ունեցող արհեստանոցներից, սկսեցին բազմանալ կենցաղում անհրաժեշտ իրերը պատրաստող արհեստանոց-ֆաբրիկաները: Նրանք նույնիսկ սկսեցին հայտնի դառնալ, գրավել պալատի ուշադրությունը, պարգևատրվել արհեստների մեջ հաջողության հասնելու համար նախատեսված հատուկ մեդալներով: Պոլսեցի Նշան Աննոս Ռուստամ 1892թ. ստանում է *Sanayi Madalyası:* Պոլսահայ Տիգրան Մոսկոֆյանը (-1926) անվանի արկղարարի (քացանի բաշը) համբավ է ունեցել, եղել այդ ասպարեզի տնօրինողներից:

Պալատական ճարտարապետներ Պալյանների ընտանիքի անդամներն իրենց կառուցած շինությունների համար հատուկ ատաղձագործական արհեստանոցներ են բացել, որտեղ հյուսնի մասնագիտություն էին սովորեցնում տեղի ու գավառից եկած շնորհալի վարպետներին: Այս վարպետների, դարբինների ու մնացած արհեստավորների կենցաղային առօրյայի կարիքների համար ստեղծված գործերը վերածել են արվեստի գործերի, ինչպես

օրինակ իրչեցների կրակը հանգցնելու ջրհանները[43]: Հայտնի է արքունի հրշեջ խմբի ջրհաններ պատրաստող սամաթիացի վարպետ Նիկողոսի անունը:

Մասնավորապես Սարգիս Պալյանի օրոք այս արհեստանոցներում եվրոպական ատաղձագործություն սովորեցնելու համար երկար ժամանակով հրավիրվում էին եվրոպացի վարպետներ, որոնք իրենց արհեստի գաղտնիքները էին փոխանցում այս արհեստանոցներում աշխատողներին: Նրանք կահավորում կամ լրացնում էին բոլոր այն աշխատանքները, որոնք չէին սահմանափակվում միայն դրսից կարասիների ներմուծմամբ: Այս արհեստանոցների համար բերվում էր հնարավոր բոլոր գործիքները, դազգահները, անհրաժեշտ նյութերը: Հայ վաճառականները հիմնադրում էին մեծ խանութ-ցեխոններ, իսկ կահագործները համագործակցելով ճանոՖակտուրային գործ կատարողների, փայտի վրա գեղարվեստական աշխատանք կատարողների հետ, Ստամբուլում և մեծ քաղաքներում կյանքի էին կոչում ատաղձագործական արհեստը, այն բարձրացնելով արվեստի աստիճանի:

Դարասկզբին Գյուռուշլույում, Պեշիկթաշում կային մի քանի շատ հայտնի փայտամշակման ֆաբրիկաններ: Ատաղձագործության և կահագործության մեծ գործարաններում (Միհրան Մուրադյանի, Ռուբեն Պապիկեանի և որդի) և վաճառատներում պատրաստում և ներկայացնում էին ամենապարզից մինչև ամենաշքեղ, եվրոպականից չտարբերվող կահույք, տեղական ու արտասահմանյան պատատապատոմաք:

1901թ. Պոլսում հիմնադրվել է «Արարագարի ատաղձագործաց ընկերությունը»:

Պարզվում է, որ այս արհեստը այնքան էր իր անհրաժեշտության ու նոր ձևի մեջ հետաքրքրության կենտրոնում եղել, որ նույնիսկ որոշ պալատականներ զերծ չեն մնացել իրենց ձեռքով իրեր սարքելու գայթակղությունից: Յըլըզի և Թոփքափըի, Դոլմաբահչեի, Բեյլերբեյի պալատների բազմաթիվ սենյակներում կան իրեր, որոնք հայտնի են նրանով, որ ստեղծվել են սուլթանական արհեստանոցներում: Այդ իրերից ոմանք սուլթանները են հեղինակել: Իհարկե, հիմնականում խոսքը վերաբերում է Աբդուլհամիդ Բ կայսերը, որը կահույք շինելու առանձնակի հակում է ունեցել: Դրանք տարբեր տեսակի իրեր են եղել, նաև՝ արևելյան ոճի, սադափով, մետաղներով զարդարված, մետաքսե ու շքեղ կտորեղենով պատված բազմոցներ, օրոցներ: Յըլըզի պալատին կից հիմնադրված արքայական ատաղձագործական ընդարձակ արհեստանոցը զինված է եղել բոլոր անհրաժեշտ գործիքներով ու արտասահմանից բերված դազգահներով: Այստեղ աշխատել են հրավիրյալ գերմանացի, հույն վարպետներ, ֆրանսիացի դերձակներ, իսկ Թոփքափըի պալատի զինանոցի սրահներից մեկում պահվում են Աբդուլհամիդ Բ սուլթան-հյուսնի գործիքները[44]:

43 Արքունի հրշեջների (թուլումպաճիների) խմբի ջրհանները, որոնցից մի քանիսը թանգարանային արժեքի գործեր են եղել, պատրաստվել է սամաթիացի Նիկողոս վարպետի կողմից: Նրա տեխնիկական հնարավորությունները առավել կարևոր էին դարձնում այս գործիքը: Սա չափազանց կարևոր էր ոչ միայն հերոսական հրշեջ խմբերի (թուլումբաջիների) աշխատանքի համար, այլև ողջ Պոլսի համար, որի փայտաշեն բաղերի գլխին միշտ կախված էր հրդեհի վտանգը: Այս քաղաքի ժամանակ առ ժամանակ հրո ճարակ դառնալը այնքան ավերիչ ու սարսափելի աղետբերություններ էր հանգեցնում, որ ժամանակագիրները որոշ դեպքեր ու դեմքեր նկարագրելիս այն որևէ տարվա հրդեհի հիշողության շրջանակում էին պատմում և հենց այդ հրդեհներով էին կողմնորոշում իրենց տարեգրությունների թվականները: Պահպանվել են հայատառ թուրքերենով մի շարք պատմական երգեր, ժամանակագրություններ Պոլսի հրդեհների մասին:

44 Feryal Irez. *Tamirhane-i Hümayun ya da Abdülhamidi'in Marangozluğu*. Tarih ve Toplum, 1986, sayi 34, s.9-12.







Եվփիմեոս Օսկանյան, Ս.Աստվածամայր



Ռաֆայել Մանաս. «Կինը և երեխան»



Ռաֆայել Մանաս. «Նստող կինը»

Թուրքական սուլթանները սկսել են նկարվել, հագնվել եվրոպական ձևով, նաև՝ զինվորական համազգեստ, հակառակ մոլեռանդ ու պահպանողական խավի ընդդեմ «եվրոպացի» հորջորջումներին: Ահա այսպիսի սուլթանների ու փաշաների են առատորեն նկարել հայ նկարիչները, ու նաև տարածել այն եվրոպական երկրներում: Հայտնի են Սելիմ Գ, Մահմուդ Բ Սուլթանների դիմանկարները, որ կատարել է պալատական նկարիչ Բարսեղը[9], իսկ նրա եղբայր Էսային հայտնի է եղել որպես պալատական որմնանկարների ծաղկազարդող: Սուլթանների և տարբեր ազգերի ու զբաղմունքի տեր մարդկանց փոքրագրանկարներով հայտնի է եղել Պողոս (Հոճա) Թարիկյանը (1820-), որն իր ստացված նկարները ցրանկերներով զանազանել է:

Հայտնի են եղել ձեռագրեր, հրատարակվում էին գրքեր՝ արհեստների, դրանց տիրապետողների մասին: Այս հրատարակություններում կարելի էր գտնել նաև տարբեր ներկեր, յուղեր (կենդանական, բուսական, օրգանական հիմքի վրա) պատրաստելու ձևեր, ոսկեգործության, արծաթագործության մեջ անհրաժեշտ տարբեր հնարքների բացատրություններ, մանրամասն «դեղատոմսեր»:

18-րդ հարյուրամյակից սկսած արքունի նկարիչների պաշտոնն անցնում է հայազգի **Մանասների** ընտանիքին: Երբ մինչ այս շրջանը մուսուլմանական ավանդույթով դիմանկարներն արգելված էին և հիմնականում զարդանախշության արվեստն էր գերակայում, ապա Օսմանյան կայսրությունում եվրոպական արժեքների ներթափանցման հետ զուգահեռ կյանքի տարբեր բնագավառներ աստիճանական ներդաշնակում են սկսում ապրել: Գեղա-

9 **Բարսեղը** հայտնի է որպես 1733թ. Գալաթիայի Ս.Լուսավորիչ եկեղեցու Սարգիս Խոջաբաշի կողմից վերաշինման ժամանակ ներքին նկարազարդումների հեղինակ:







Ռաֆայել Մանաս. «Չալմայով երիտասարդը»



Ռաֆայել Մանաս. «Արքայազն Սելիմ Գ»

նկարչությունը դրանցից մեկն էր: Ֆրանսիացի, անգլիացի, իտալացի, հայ նկարիչները այդ ներդաշնակման հեղինակներն ու կրողներն էին: Վերածննդյան նկարչական մշակույթի արդյունքները աստիճանաբար տարածվելով Օսմանյան կայսրությունում, մուտք են գործում նաև սուլթանական պալատ, դառնում պալատական կենցաղի ու արարողակարգային ծեսերից մեկը: Սուլթաններն ու փաշաները ոչ միայն սկսում են հովանավորել արվեստները, գեղարվեստի նմուշներով զարդարել իրենց պալատները, այլև իրենք ու իրենց ընտանիքի անդամներն են դառնում այդ կտավների բնորդները:

Մանաս արքունի նկարիչների գերդաստանը 17-19-րդ դարերում է ստեղծագործել: 200 տարի նրանք եղել են սուլթանական արքունի նկարիչներ, որոնց շնորհիվ պահպանվել են շատ սուլթանների պատկերներ: Դրանք Թոփ-Գափուի ու Դոլմաբահչեի, ինչպես նաև այլ պատկերասրահների, մասնավոր հավաքածուների զարդն են կազմում:

Մանաս արքունի նկարիչների գերդաստանի նախահայրն է եղել ժամանակի պայծառ տաղանդով օժտված Ռաֆայելը (տիրացու): Այս տոհմի մեծերից է եղել կեսարահայ Բարսեղ Մանասը, Սելիմ Գ սուլթանի պալատական նկարիչը: Նա նկարել է նաև Մահմուդ Ա-ի դիմանկարը (ըստ Ղ. Խնճիկյանի): Այս ընտանիքի գործունեությամբ է սկսվում Օսմանյան կայսրությունում դիմանկարների արվեստի զարգացումը: Փադիշահների դիմանկարներն ու մանրանկարները զարդարում էին պալատները, կարևորագույն հաստատությունները: Սովորույթ ուժ է դառնում սուլթանական դիմանկարները՝ կտավի կամ կիրառական իրերի, զարդերի տեսքով պատվիրել ոչ միայն պալատի համար, այլև արտասահմանում նոր ձևա-



Ռաֆայել Մանաս. «Աղեղով կինը»



Ռաֆայել Մանաս. «Լողարանում»

վրձինը օսմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների համար: Արքեններին միջոցով օտար միապետներին, արքունիքներին նվիրելու նպատակով դրանք ուղարկվում էին արտասահմանյան երկրներ: Այս նպատակով կատարված սուլթանների բազմաթիվ դիմանկարներ կատարվել են որպես մանրանկարներ փղոսկրի, էմալի, տարբեր մետաղների, զարդերի, անձնական ու կենցաղային իրերի վրա: Հայ նկարիչները նկարազարդել են սուլթանական ալբոմները: Մանասների հայտնի նկարչական գերդաստանն ունեցել է մի շարք հայտնի անուններ կայսրության նաև դիվանագիտական ծառայության ասպարեզում, մասնավորապես արտասահմանյան ներկայացուցչություններում: Ահա այս գերդաստանի մի քանի ականավոր անդամների մասին:

*Ռաֆայել(ի)* (տիրացու[10] Ռաֆայել, (1715-1780): Հայկական եկեղեցում ծառայելու համար ունեցել է նաև «տիրացու» (Չելեբի) մականունը: Ռաֆայելն իր ուսումը առացել էր Իտալիայում: Հայազգի հայտնի պատմաբան Մուրադջա Դ'Օհսոնը Օսմանյան կայսրության մասին ֆրանսերենով իր կոթողային աշխատության մեջ գրում է, որ «նա եղել է իր արվեստակից եղբայրներից ավելի տաղանդավոր, ուստի և համարվել է իր դարի Ռաֆայելը, Արևելքի Ռաֆայելը»:[11] Մուրադջա Դ'Օհսոնը զարմանքով հատկանշում է, որ Օսմանյան կայսրու-

10 Տիրացու, Չելեբի մականունները օգտագործվել են հիմնականում գրավոր, գիտության մարդկանց համար: Տես՝ Հովհաննես Սարգիս փաշայի դուստր, արվեստի պատմաբան Արմենակ Սարգսյանի գրքում:

11 D' Ohsson M., *Tableau Général de l'Empire Ottoman*, Paris, 1790, v. 2, p. 243. Տես նաև՝ Սանթրոսյան Գ. Խ., *Նկարիչ Մանասները*: Բանբեր ԳԱ հասարակական գիտությունների, Եր., 1963, h. 12, էջ 77-82: Սարգսյան Ա., *Մանասներ՝ 18-19-րդ դարերի հայ նկարիչների գերդաստանը*. (Ընդարձակ տարեգրություն







նում տիրապետող բարք ազգը (նույնիսկ քրիստոնյա ժողովուրդները), մի կողմից չունենալով գեղարվեստի նկատմամբ ճաշակ ու վերաբերմունք և նկարվելու սովորույթ, մյուս կողմից էլ՝ իսլամի արգելքով մարդկանց նկարելը մեղք էր համարում: Նման միջավայրում արվեստների, մասնավորապես գեղանկարչության զարգացումը դժվարագույն գործ էր: Հայերը, հայերը այս արվեստում ունեցած իրենց տաղանդը ներդնում էին հիմնականում նկարազարդելու համար եկեղեցիներ, պալատներ, ապարանքներ, հարուստ տներ...

Ռաֆայելը Ահմեդ Գ Ղազիի (1703-30), Մահմուդ Ա Ղազիի (1730-54), Օսման Գ (1754-57), Մուստաֆա Գ (1757-74) սուլթանների արքունի նկարիչն է եղել: Նրա արվեստանոցը գտնվել է Պալաթ թաղում: Նա նկարել է սուլթաններին, (հայտնի է Սելիմ Գ-ի հոր՝ Մուստաֆա Գ-ի հետ մանրանկարը): Նրա 4 գեղագիր գրվածքներով նկարները, բոլորի վրա հատուկ տեխնիկայով յուղանկարները գտնվում են Թոփ-Գափու թանգարանում, նրա գրադարանի սրահներից մեկում: Նա տարբեր տեխնիկաների վարպետ վերարտադրող է եղել: «Մայր ու աղջիկ բաղնիքում» բոլորի վրա զուգահեռ հայտնի նկարը թվագրված է 1745թ.: Պալատական գրադա-

Մ.Փիլիպ: ազգային հիմնադրամի, Կ.Պոլիս, 1933թ., էջ 52-57: Ղազարյան Մ., *Հայ կերպարվեստը 17-18դդ.*, Եր., 1974, էջ 137: Տես Սանթրոսյան Արմեն, *Պալատական Ռաֆայել Մանաս* (Օրացույց քարտ, Եր., 1983, նկարներ 25): Տես՝ Sakisian A., *Pages d'Art Arménien*, Paris, 1940, p. 97-101. Tuğlacı Pars, *Osmanlı Mimarlığında Batılılaşma Dönemi ve Balyan ailesi*, İstanbul, 1981; 18-րդ դարի երկրորդ կեսին Կ.Պոլիս այցելած իտալացի ճանապարհորդ աբբա Թոդերինին և նրա տասը տարվա այցելության (1781-1786) Վերադառնալով հայրենիք, Վենետիկում 1787թ. իտալերենով լույս ընծայեց թուրքական գրականությանը նվիրված Delle' Abate Giambatista Toderini, "*Letteratura Turchesca*" աշխատությունը, որը երեք տարի անց Փարիզում հրատարակվեց ֆրանսերենով, որ գրում է Մանասների ընտանիքի մասին: Նա անձամբ ծանոթ է եղել Ռաֆայել Մանասի որդու հետ, այցելել է նրա արվեստանոցը. (L'Abbe M.Toderini, *La literature des turcs*, Paris, 1789, p. 60-61); Bülent Aksoy. *Rahip Toderini ve Eseri Üzüne*, „Tarih ve Toplum", 1987, N 454, s. 42-44. 1995թ. Փարիզում կայացած աճուրդում վաճառքի էր հանվել սուլթան Աբդուլ Համիդի բանակից մեկի թանկարժեք հավաքածուի մի մասը, որի կատալոգում ի թիվս արժեքավոր շատ գործերի, կային Մանաս ընտանիքի երկու ներկայացուցիչների փոքր չափսի երկու թե չորս աշխատանքները, այդ թվում էմալի վրա կատարված սուլթանների մանրանկարներ, ադամանդներով ընդելուզված կիրառական զարդ-զարդեր: Մանասների և մասնավորապես Ռաֆայել Մանասի մասին գրել են նաև բազմաթիվ արվեստաբաններ Ռուբեն Մահիքը, Գյուլնել Ռենդան և ուրիշներ: Այժմ հետևյալ են նաև նրա մասին հոդվածները թուրքական հանրագիտարաններում: Տես նաև՝ Garo Kürkman, *Osmanlı...* ..., արժեքավոր աղյուսակներ:



Զենոբ Սանասի դիմանկարը (Գործ մինիատյուրի նկարիչ Ջոն Սասարի)



Զենոբ Սանասի 1838 թ. գրած հայատառ թուրքերեն մի նամակը



Ալեքսանդր Մանասի դիմանկարը (Գործ Ջոն Մանասի)

բանի Լևնիին վերագրվող «Միլլիինճաթ» ձեռագրին կից են Մահմուդ Ա, Օսման Գ, Մուստաֆա Գ, Աբդուլհամիդ Ա սուլթանների Ռաֆայելի (Մանասի) մանրանկարները: Կոպենհագենի «Դավիր» հավաքածուի մեջ կա Մուստաֆա Գ-ի դիմանկարը: Նրա կտավներում երիտասարդ կանայք, տղամարդիկ ողջ հասակով մեկ են նկարված: Նրա նկարներից հայտնի են «Նստածիկ կինը», «Մայրը և երեխան», «Ննջող կինը», «Սելիմ Գ արքայազնը» և այլն:

Ահա մի համառոտ շար կենսագրությանց Մանասների ընտանիքի[12]:

*Մե(ի)ման Մանաս* 18-րդ դ.: Ռաֆայելի որդին: Աբբա Թոդերինին, որ 1781-86թթ. Պոլսում բարեկամացել էր Ռաֆայել Մանասի հետ, այցելել նրա Պալաթ թաղի արվեստանոցը, այնտեղ տեսել է նրա որդու՝ Միմասի վրձնին պատկանող Մուրադ Ա, Օսման Գ, Մուստաֆա Գ և Աբդուլհամիդ Ա սուլթանների յուղանկար դիմանկարները:



Ալեքսանդր Մանաս. «Ախոռակ»

*Բարսեղ* 18-րդ դ.: Ըստ Արշակ Ալպոյաճյանի և Երուսաղեմի պատրիարքարանի ճառընտրում 1742թ. գրության, Գամզարոտ թաղի Ս.Աստվածածնի եկեղեցու հոգաբարձու Բարսեղ Մանասի մասին ասված է, որ նա 1760-ականներին արքունի նկարիչ է եղել:

*Ջենոբ* Մանասը (19-րդ դ.) 1830թ. նկարել է Մահմուդ Բ-ին: Մանասները ոչ միայն ապրել են Իտալիայում, Ֆրանսիայում, այլև հետագայում այնտեղ մասնակցել են տարբեր ցուցահանդեսների, արժանացել լավագույն գնահատականների ու մրցանակների: 1840թ. Վիեննայում եղել է առաջին քարտուղար և թարգմանիչ: Հենց Վիեննայի Միխիթարյան միաբանության հավաքածույում էլ գտնվում է 98x69 չափի նրա եզակի մի յուղանկարը: Այն Սուլթան Օսմանից մինչև Սուլթան Մահմուդ Բ 30 սուլթանների դիմանկարներն են: Այն նույն ոճով է արված, ինչպիսիք են Թոփ-Գափու պալատի սուլթանների սրահում գտնվող երկու նույն չափի նկարները, որոնք անստորա-

12 Կարծում ենք, որ Մանասների արքայական նկարիչների գերդաստանի ոչ բոլոր նկարիչ անդամների մասին մենք փաստեր ու հավաստի տեղեկություններ ունենք: Նույն անունը կրկնվում է մի քանի անգամ, որը մեզ շփոթության մեջ է բերում: Այսպես օրինակ՝ Թոփգափուի պալատի Սուլթանների սրահում է գտնվում սուլթան Սելիմ Գ-ի նկարը՝ Ռաֆայել Մանասի կամ նրա զարմի հեղինակությամբ՝ 1773թ. և 1800թ.: Կարծում ենք, որ բացառված չի այս շրջանում նույն ընտանիքի մի այլ Ռաֆայելի գոյությունը:





գիր են: Դրանցից մեկը, 205x155 չափի, Օրհանից մինչև Աբդուլմեջիդ 31 սուլթանները, մեր կարծիքով բացարձակապես նույն ոճով է, նույն դիմանկարներն են, նույնպիսի հագուստներով ու դեմքերով, միայն կրկնակի չափի: 1866-67թթ. այս կտավը մեր կարծիքով չի բացառվում, որ Ջենոբ Մանասի[13] վրձնին է պատկանում: Մահմուդ Բ-ն նրան արժանացրել է կայսրության մեծագույն պարգևին՝ «**Tasvir-i Hümayun**» շքանշանին (հավանական է 1830թ.):

*Ալեքսանդր (Ալեկո)* 19-րդ դ., Ջենոբի 4 որդիներից: 1838թ. Վիեննայում ավարտել է գեղարվեստի իր ուսումնառությունը: Այնտեղ ծառայել է Օսմանյան կայսրության դեսպանատանը, որպես դիվանագիտական կցորդ[14]:



Գասպար Մանաս



Գասպար Մանաս. «Ինքնանկար»

*Գասպար* 19-րդ դ., Ջենոբի 2-րդ որդին: Հոր նման 31 տարի ծառայել է որպես առաջին քարտուղար և թարգմանիչ Փարիզի, Վիեննայի դեսպանատներում: Նրանից երկու դիմանկարներ են ներկայացված Կարո Քյուրքճյանի հեղինակած նկարիչների շքեղ ալբոմում:



Ժոզեֆ Մանաս

*Ժոզեֆ* (Հովսեփ, 1835-1916). 1884թ. Աբդուլհամիդ Բ-ի հրամանով Հովսեփ Մանասը մի քանի անգամ գնում է պալատ մի քանի պատվերներ կատարելու համար: Հովհաննես Սեվադյանի հանդեսից հետո սուլթանն այցելում է նրա արվեստանոցը, նայում գործերը ու շքանշան խոստանում: Նա դառնում է սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի պալատական նկարիչը: Վերջինիս հրամանով 1899թ. նկարել է Ստամբուլ այցելած Վիլհելմ Բ գերմանական կայսեր կնոջը, Վիկտորիա թագուհուն, Ֆուադ փաշային: Մանաս գերդաստանի վերջին պալատական հայ նկարիչն է եղել: Հայտնի են նրա Աբդուլազիզի, Աբդուլմեջիդի, Մուրադ Ե սուլթանների դիմանկարները, ծովային տեսարաններ Պոլսից: Նրա արվեստանոցը գտնվել է Բեյօղլուում: Նա, իր նախորդներից

13 Կարո Քյուրքճյանի ալբոմում, Ջենոբ Մանասին նվիրված մասում նրա հայրանունը բաց թողված է, նշված է՝ ստորագրված Մխիթարյան միաբանության աբբահոր, գրված վիեննական դեսպանատնից 1838թ.: Չափազանց հետաքրքիր են Քյուրքճյանի կարծիքները մանավանդ Ռաֆայել Մանասի ծննդյան, գործունեության շրջանակները, տարեթվերը ճշգրտելու առումով:

14 Կարո Քյուրքճյանի ալբոմում նրա պատանի շրջանի դիմանկարն է և մի գրառումներ:



Ժոզեֆ Մանաս. «Քըզ քուլեսի» («Աղջկա կղզին»)



Ժոզեֆ Մանաս. Սուլթան Աբդուլմեջիդի դիմանկարը



Ժոզեֆ Մանաս. Սուլթան Մուրադ Ե-ի դիմանկարը



Ժոզեֆ Մանաս. Սուլթան Աբդուլազիզի դիմանկարը

Սեպուհ Մանասի ու նրա եղբոր՝ Մանուկ Մանասի պես հեղինակել է (Վենսան Աբդուլլահի հետ) սուլթանական ամենահայտնի ադամանդակուռ շքանշանները, անգլիական, ֆրանսիական միապետներին ու առանձին հայտնի անձանց նվիրվելիք պատվանշաններն ու կիրառական իրերը, տարբեր թանկարժեք քարերով ագուցված ոսկե տուփիկները:

*Ռուբեն (1810-1875)*, եղել է նաև դիմանկարիչ: Փարիզում գլխավոր հյուպատոսության ավագ թարգման 1847թ.: 1869թ. Միլանի հյուպատոս, մասնակցել է 1875թ. համաշխարհային ցուցահանդեսին: Հայտնի նկարներից է սուլթան Աբդուլմեջիդի ողջ հասակով կանգնած նկարը: Հեղինակ է սուլթանների մանրանկարների: 1869թ. Ռուբեն Մանասը սուլթան Աբդուլմեջիդի մանրանկարը նկարել է Միլանում Օսմանյան Կայսրության հյուպատոսության պատվերով: Փարիզի և եվրոպական երկրներում թուրքական դեսպանատների համար նկարել է սուլթանների դիմանկարներ, ստեղծագործել: 1850թ. Աբդուլմեջիդի ավագ դստերը՝ Ֆաթմա սուլթանին է նկարել: 1899թ. Աբդուլհամիդ Բ-ի հրամանով նկարել է Ստամբուլ այցելած գերմանիայի







Ռուբեն Մանաս



Ռուբեն Մանասը ընտանիքի հետ



Ռուբեն Մանաս. Սուլթան Աբդուլմեջիդի ավագ դստեր՝ Ֆաթմա արքայադստեր դիմանկարը (1850)



Սեպուհ Մանաս

կայսր Վիլհելմ Բ-ին: Գառնիկ Ստեփանյանի կարծիքով 1852 թվականին լույս տեսած Հովսեփ Վարդանյանի երկրորդ վեպը՝ «Պօշպօղազ պիր ատէմ» (Շատախոսը), նկարազարդել է պալատական նկարիչ, հայ կաթոլիկ ընտանիքի ներկայացուցիչ Ռուբեն Մանասը[13]:

*Սեպուհ (1816-1889)*, եղել է նաև դիմանկարիչ: Ուսանել է Իտալիայում: Փարիզում, 1854թ. որպես դեսպանատան քարտուղարության անօրեն ծառայության ժամանակ սուլթան Աբդուլազիզ և Աբդուլմեջիդի շրջանի համար ստեղծել է «*Tasvir-i Hümayun*» շքանշանը, որը Աբդուլմեջիդը շատ է հավանել ու 9000 դուկ պարգևատրել հեղինակին: Փարիզից հետո անցնում է Տուրին, որտեղ իտալական թագավորության կողմից պարգևատրվել է «Կավալիեր»(ասպետ) շքանշանով (1856): 1858թ. մայիսին սուլթանի պատկերը տանում է հանձնելու Շվեդիայի թագուհուն և գնահատվում շքանշանով: 1859թ. Ֆուադ փաշայի առաջարկությամբ և Հակոբ Կրճիկյանի խնդրով, որն այդ ժամանակ Փարիզի դեսպանատանը դեսպանի պաշտոնակատար էր և հանդիսանում էր Ֆուադ փաշայի վստահված անձը, Սեպուհ Մանասը փոխադրվում է Փարիզ: Նա 30 տարի պետական ծառայության է կատարում որպես դեսպանության առաջին քարտուղար: Հայտնի նկարներից է Սուլթան Աբդուլմեջիդի դիմանկարը: Սեպուհ Մանասի հեղինակած սուլթանների դիմանկարների մեջ անկրկնելի հմայքն ու մեծ փարթամության ապացույցներն ակնբախ են: Բարձրարժեք արվեստի իրեր են համարվել նրա՝ սուլթան Աբդուլմեջիդի դիմանկարներով ադամանդակուռ զարդերը, ցուռավոր էմալով և ոսկու վրա ագուցված թանկարժեք քարերով զարդատուփերը, հայ երևելիների դի-



Ռուբեն Մանաս. Սուլթան Աբդուլմեջիդը

13 Նույն, էջ 56:



Սուլթան Աբդուլազիզ



Սեպուհ Մանաս. Սուլթան Մահմուդ Գ-ի դիմանկարը





Սեպուհ Մանաս. Սուլթան Աբդուլմեջիդի դիմանկարով զարդատուփեր (փղոսկրի վրա)







Ձենոբ Մանաս. Սուլթանական տոհմածառ՝ Օսմանից մինչև Մահմուդ Բ

մանկարները: 1886թ. ժանրանկարիչ Սեպուհ Մանասին հանձնվեց արքայական պալատի լուսանկարչատունը: 1889թ. արքունի նկարիչ Սեպուհ Մանասը կայսերական զինվորական վարժարանում սկսում է նկարչության դասավանդել:

*Պոլ* (Փարիզում դեսպանատան կցորդ 1856-60թթ.), *Պիեռ* (Բրյուսելում), *Ալեքսանդր և Գասպար* (Վիեննայում) Մանասները նկարչությանը զուգահեռ մինչև 3 տասնամյակ ծառայել են որպես դիվանագետներ: *Բյուզանդ* Մանասը ևս երկար տարիներ ծառայել է Վիեննայում որպես հյուպատոս:

Մանասների արքայական նկարիչների գործի ժառանգորդների մեջ շարունակվել է հայ նկարիչների հաղթարշավը: Նրանք անպայման եվրոպական մայրաքաղաքների Գեղար-



Սուլթանական տոհմածառ՝ Օրհանից մինչև Աբդուլմեջիդ (անստորագիր)

վետից Ակադեմիաների փայլուն շրջանավարտներ են եղել, տասնամյակներ շարունակ փայլել եվրոպական բարձր հասարակությունում, վայելելով նաև տաղանդավոր նկարիչների համբավ:

Երբեմն հայ նկարիչները եվրոպական քաղաքներում սովորելու ժամանակ բախտ են ունեցել երևելի մարդկանց նկարել: Հիմնականում այս նկարիչները վայելել են տեղի թուրքական դիվանագիտական ներկայացուցչությունների հովանավորությունն ու հոգածությունը և այս առիթով էլ հանդիպել իրենց երևելի պատվիրատուներին: Որպես օրինակ կարելի է հիշել Փարիզի թուրքական դեսպանատանը նկարիչ Գևորգին (ազգանունը հայտնի չէ), որը նկարել է Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Դյուկ դը Մալակոֆին և 25 հազ. ղրուշ ստացել:





Արքունի նկարիչ **Հովհաննես Ումեդ Բեհզադը** (1809-1874), աստվածաշնչյան թեմաներով չքնաղ կտավների հեղինակ է: Դրանք նկարիչը ստորագրել է հայերեն լեզվով՝ «Ումէտ Պ.»: Ամենայն հավանականությամբ դրանք տեղ են գտել հայկական եկեղեցիներում, կատարվել պատրիարքարանի պատվերով կամ՝ պատրիարքարանի համար: Նա հայտնի է եղել նաև հրաշալի ծովանկարներ, ռազմանավեր պատկերող իր կտավներով: Այս կտավները, որ ամենայն հավանականությամբ սուլթանական պալատի պատվերով են կատարվել, նկարիչը ստորագրել է օսմաներենով «Հ.Ումետ»:



Հովհաննես Ումեդ Բեհզադ
*Մուստաֆա Ռեշիդ փաշայի դիմանկարը*

Հայտնի անուն է եղել նկարիչ, արձանագործ, դեկորատոր **Պալիրճյան Մաթևոսը** (1837-1919): Աշխատել է, ուսանել եվրոպացի ճանաչված վարպետների մոտ: 1858թ. նկարազարդել է Իզմիրի Հյունքյար Քասրը (պալատը), ապա՝ աշխատել Դոլմաբահչե, Չրաղան և այլ պալատներում: 1900թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսում պատրաստել է թուրքական և պարսկական տաղավարները, որոնք մեծ հաջողություն են ունեցել: Սուլթան Ազիզի պատվերով բազմաթիվ կտավներ է հեղինակել, որոնք նվիրաբերվել են եվրոպական թագավորական տներին, առանձին երևելիների և այսօր գտնվում են աշխարհի թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում: Կաթողիկոս Խրիմյան հայրիկի հրավերով Էջմիածնում նկարազարդել է Մայր տաճարը: Վերադարձել է Եգիպտոս: Փարիզում հրատարակվել է նրա նկարների ալբոմը: Կահիրեի Մարմինա հայկական գերեզմանոցում մի շարք հուշարձաններ է հեղինակել: Բազմաթիվ մրցանակների է ստացել:





Հովհաննես Ումեդ Բեհզադ
*Խաչից իջեցումը*

Մանրանկարիչ և ճարտարապետ **Ստեփան Սարաջյանը** (1870-1937) և հայտնի նկարիչ **Աբրահամ Սարաջյանը** (1821-1876) մեծ ճանաչում են ունեցել աստվածաշնչյան թեմաներով կատարված կտավների շնորհիվ: Այս նկարիչ-



Հովհաննես Ումեդ Բեհզադ
*Ծովամարտ*



Հովհաննես Ումեդ Բեհզադ
*Տրաֆալգարի ծովամարտը*







Կարապետ Շաղ Արամյան
*Տիկինը*



Կարապետ Շաղ Արամյան
*Բնորդուհի*

ները պատվերներ են ստացել Պոլսի երևելի հայ, թուրք ընտանիքների կողմից:

Արքայական նկարիչներից մյուս հայազգի անունը դա **Կարապետ Շաղ Արամյանն** է (1872-1947): Վենետիկի Մուրադ Ռափայելյան վարժարանից հետո կատարելագործվել է Վենետիկի Գեղարվեստի ակադեմիայում, աշակերտել է Անտոնիո Պաոլետիի և Պիետրայի նման մեծ վարպետների: Վերադառնալով Կ.Պոլիս, աշխատել է Երրորդ սուլթանական պալատի նախճապակու պատրաստության արհեստանոցում: Մեծ ճանաչում է վայելել դիվանագիտական շրջանակներում, նշանակվել պալատական նկարիչ, սակայն չդիմանալով ճնշումներին՝ վերադարձել է Փարիզ, արժանացել մեծ ճանաչման: 1897թ. Փարիզում առաջին իր ցուցահանդեսն է ներկայացրել: Բարեկամական հարաբերությունների մեջ լինելով Անատոլ Ֆրանսի, Մոպասանի և շատ հայտնի արվեստագետների հետ, այս հեղինակների [illegible] ստեղծելով, շուրջ 150 գրքեր է նկարազարդել, աշխատել հայտնի *L'Illustration* և *Le Monde Illustré* պարբերականների հրատարակչություններում: Պալատական նկարչի իր գործունեության շրջանից հայտնի են նրա՝ Ֆարիի, Աբդուլմեջիդ, Մահմուդ Բ, Սելիմ Գ սուլթանների ու Դոլմաբահչեի պալատի ծովահայաց պատկերների, զորանոցների, Պոլսի արքայական վայրերի, ապարանքների տեսարանների, ուղեկցողների և այլ ֆոնի վրա նկարազարդված նախճապակե ափսեների շարքը (1894թ.), ջրամաններ ու կիրառական այլ առարկաներ (Յըլդըզ Ֆաբրիկայի կնիքով), յուղաներկ ու ջրաներկ կտավներ հարեմական կյանքի դրվագների պատկերմամբ, կանանցի մերկ մարմինների հրաշալի պատկերներ:

Փարիզի Գեղարվեստից ակադեմիայի շրջանավարտներ, նկարիչներ **Պիեռ Հովյանը** և **Սարգիս Տիրանյանը**, որ տարբեր տեղեր ցուցահանդեսներում իրենց մասնակցությամբ արդեն հայտնի էին դարձել՝ 5-րդ աստիճանի ***Mecidiye*** շքանշան են ստանում: Սարգիս Տիրան-



Հովհաննես Օնիկ Բյուրքճյան
*Սուլթան Մուրադ Ե*



Հովհաննես Օնիկ Բյուրքճյան
*Ղազի Ահմեդ Մուխթար փաշա*

յանը Արդուլյան եղբայրների սալոնում ցուցադրում է իր «Կախարդուհին» հայտնի կտավը:

Արքայական նկարիչներ են եղել նաև Աբդուլյան եղբայրները, որոնք Օսմանյան կայսրության մշակույթի պատմության մեջ են մտել նախևառաջ որպես արքայական լուսանկարիչներ, եղել կայսրության լուսանկարչության ռահվիրաները[16]:

Օսմանյան կայսրության շրջանում ստեղծագործած հայ գեղանկարիչները որքան էլ որ մեծ ծառայություններ են մատուցել կայսրությանը, անպայման իրենց պարտքն են մատուցել ազգային մրցույթում, արևմտահայ կյանքում թողնելով իրենց հիշատակը, նպաստը:

Նկարիչների մասին պատմելիս չպետք է մոռացության մատնել մի հանգամանք ևս: Այն վերաբերում է մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու օսմանյան սուլթանների մայրաքաղաք կատարած 4 այցելություններին[17], նրա թողած ժառանգությանը, որ զարդարում է

16 Նրանց մասին տես լուսանկարչության մասին պատմող մասում:

17 Այվազովսկին առաջին անգամ այցելել է Պոլիս՝ 1845թ., երկրորդ անգամ՝ 1857թ., երրորդ անգամ՝ 1874թ. և վերջին՝ 1890թ. մայիսին Փարիզից մեկ շաբաթով այցելել է Պոլիս: Առաջին անգամ նա տես մեծ իշխան Կոնստանտինի ու նրա կնոջ հետ միասին հյուրընկալվել է Բեյլերբեյի ապարանքում, ընդունվել սուլթան Աբդուլմեջիդի կողմից: Իշխան Կոնստանտինը և Այվազովսկին այցելել են Թուրքիայի Հայոց պատրիարք Սամուել Չախալյանին: Այվազովսկուն շնորհվել է 4-րդ աստիճանի ***Mecidiye*** շքանշան սուլթան Աբդուլմեջիդի կողմից: Երկրորդ անգամ մեծ նկարիչը եղբոր՝ ապագա արքեպիսկոպոս Գաբրիել Այվազովսկու հետ միասին են եղել Պոլսում: 1874թ. սուլթան Աբդուլազիզի հրավերով Այվազովսկին հյուրընկալվել է արքունի ճարտարապետ Սարգիս Պալյանի Քուրուչեշմեի արհեստական կղզում տանը, որ և գրավոր է սուլթանական պալատի համար մեկ տասնյակից ավել արվեստի գործեր: 1874թ. Հովհաննես Այվազովսկուն արքունի ճարտարապետ Սարգիս Պալյանի և ... բարեկամության բարգմանի ... ընդունել է սուլթանը և շնորհել 2-րդ աստիճանի ***Nişan-ı Osmani*** շքանշան: Վերջին այցելության ժամանակ նրան ընդունել է Աբդուլհամիդ Բ սուլթանը, որին Այվազովսկին 2 կտավ է նվիրել: 1889թ. Այվազովսկին Պոլիս փոխադրվածն է ուղարկել 5 նկար:
Ի նպաստ հայկական միությունների, դպրոցների, հիվանդանոցների և առանձին դեպքերի կազմակերպվել են աճուրդներ: 1885թ. Այվազովսկու մի ծովանկարը դրվում է Ղալաթիայում (Քյոչեօղլու





ժամանակավորապես Դոլմաբահչե պալատի գեղանկարչական մեծարժեք հավաքածուն: Այվազովսկուն է պատկանում Մուրադ Ե-ի դիմանկարը կատարված 1876թ.[18]:





Դոցա
(Գործ Հովհաննես Օնիկ Բյուրքճյանի)

Ենիչերի հրամանատար

Օսմանյան կայսրության հայ նկարիչների մասին մեր ժամանակի պրպտահայ անվանի գիտնական Կարո Քյոսըրմանի հրատարակած երկհատոր աշխատությունը ցնցող տպավորություն են գործում: Կրելով եվրոպական վերածննդի լավագույն ավանդույթները, իտալական ու ֆրանսիական անվանի արվեստագետների մոտ ուսանած, գեղանկարչական բարձունքների մակարդակի կտավներ ստեղծած լավագույն հայ նկարիչների անունը անցնում է 400-ը: Դրանցից առնվազը 100-ը միջազգային մակարդակի վարպետներ են, իսկ գործերը վեր՝ ամեն երևակայությունից: Այնպես որ նույնիսկ անունների թվարկումը մեզ շատ քիչ բան կասի: Պետք է տեսնել այդ նկարները: Սակայն ամենացավալին այն է, որ դրանց մի կարևոր մասի ստեղծագործությունները ոչ միայն արտացոլված չեն հայ գեղանկարչության պատմության մեջ, նրանց գործերը չեն գտնվում Հայաստանում ու ցրված են տարբեր մասնավոր հավաքածուներում, այլև այդ տաղանդավոր վարպետներից ոմանց անունն անգամ մեզ ծանոթ չէ:

Օսմանյան կայսրության եվրոպականացման ճանապարհին կարևոր հանգրվաններ են հանդիսացել միջազգային ցուցահանդեսները: 1867թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսի թուրքական տաղավարի բացմանը մասնակցել է սուլթան Աբդուլազիզն իր շքախմբով: 1873թ. Պոլսի «Մերքերի Սանայի» (Արհեստների դպրոցում) ցուցասրահում բացվել է Աբրահամ Քյոչեօղլուի, Ռուբեն Մանասի, Աբրահամ Սաքայանի, Նեկտար Սերփոսյան-Թաշչյանի[19] նկարների ցուցահանդեսը:



Պետրոս Ադամյան

Ցուցահանդեսներին մասնակցել են երկրի կյանքի տարբեր ոլորտները ներկայացնող մասնագետներ: Առանձնակի ուշադրությամբ ներկայացվել են արվեստի գործեր: Այս մասին կարելի

խան 12) հայկական ազգային ընկերությունում: 1914թ. Կովկասեանից ի նպաստ հայոց միացյալ ընկերությունների անձեռնմխելի ֆոնդի, վիճակախաղությամբ վաճառվում են Հովհաննես Այվազովսկու նվիրած 2՝ «Փոթորիկ», «Կապուտակ ռշխարներ» նկարները: 4 հազար տոմսակ՝ կես ռուբ. ռակի գնով: Այն ծառայելու էր գյուղական երկու հայ նախակրթարանների բացմանը:

18 Մեծ ծովանկարիչը եղել է Պետրոս Ադամյանի արվեստի հիացողներից: Հանդիպել են երկու անգամ՝ 1883թ. Մոսկվայում և 1887թ. ամռանը Թեոդոսիայում: ԳԱԹ-ի ֆոնդերում (ԱՖ) պահվում է Հովհաննես Այվազովսկու այցեքարտը՝ ուղղված Ադամյանին, հայերեն գրությամբ. «Կխնդրեմ երամամ աճեից այսօրվա թատրոնին 5 պլեք ինձ ղրկեն»:

19 Հայտնի է նրա հեղինակած Աբդուլազիզ սուլթանի դիմանկարը:



Կարապետ Ճաղ Նշանյան. Նամակ



Հ. Սեթեր. Դիմանկար

է գտնել տարբեր տարիների համաշխարհային ցուցահանդեսների հրատարակված նյութերի շարքում: Օսմանյան կայսրության հայ նկարիչներն իրենց մասնակցությունն են բերել 1851թ. Լոնդոնի, 1855թ. Փարիզի, 1862թ. Լոնդոնի, 1863թ. Ստամբուլի (կազմակերպված Աբդուլազիզ սուլթանի կողմից), 1867թ. Փարիզի[20], 1873թ. Վիեննայի, 1893 թ. Չիկագոյի, 1900թ. Փարիզի, 1908թ. Մյունխենի, 1901թ.1902թ.[21] և 1903թ. Ստամբուլի գեղանկարչության ու քանդակի ցուցահանդեսներում, սալոնային ցուցադրություններում: Բոլոր այս իրադարձությունները արտահայտվել են առանձին հրապարակումներով: Ինչ վերաբերում է ստամբուլյան վերնիսաժներին, ապա այն որպես կանոն ֆրանսերենով է հրապարակվել[22]:

20 1867թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսում Աբդուլազիզ սուլթանին (10 օր է մնացել Փարիզում, կան բազմաթիվ փաստաթղթեր) ուղեկցող պատվիրակության մեջ է եղել: Ուղեկցող խմբում էր Վալիդե (Մայր) Սուլթանի ճարտարապետ, նկարիչ Պետրոս Թեկլյանի բոռ **Հրաչյա Տեր Ներսեսյանը**: Սուլթան Աբդուլազիզը շրախմբով մասնակցում է օսմանյան պավիլիոնի բացմանը: Թուրքական տաղավարում եղել է ֆրանսիացի Պարզիեն ճարտարապետի կողմից կառուցված ծղոտե, քարից, սրճարան: Այս ցուցահանդեսում մեծ հաջողություն է ունեցել Արևելյան երաժշտական ցուցահանդեսը: Զիլջյանների ծնծղաներն իրենց վրա մեծ ուշադրություն գրավելով «Զիլջի Զեմի» մեդալի են արժանացել: Այս ցուցահանդեսին կրկին նկարչուհի **Վերգինե Սերվիչենը** մասնակցել է «Սուրբ մատուցող չորրորդներ» նկարով, **Պետրոս Սրապյանը** «Խաչից իջեցումը» նկարչական կտավով:

21 1902թ.Գեղարվեստի ցուցահանդեսի բացմանը (սալոնի 1-ին) ներկա է եղել ողջ դիվանագիտական անձնակազմը, հյուրեր կառավարությունից, պալատից: Արձանների բաժնում ցուցադրվել է նաև **Երվանդ Օսկանի** հեղինակած կիսանդրին:

22 Ստամբուլյան վերնիսաժներում հայտնի դարձած անուններից են եղել **Միհրան Հովսեփյանը** (1857-1921), որը բնանկարի ու դիմանկարի վարպետ է եղել, **Անեա. Նվարդ Եսայանյան** քույրերը, **Վիչեն Եսայանյանը** (1866-1930), **Արամ Բաբջայանը** (1874-1859), արձանագործ **Երվանդ Օսկանը** (1855-1914), որի գործերը կարող եք տեսնել Պոլսի տարբեր անկյուններում, **Մկրտիչ Ջիվանյանը** (1848-1906), որի հեղինակած Պոլսի ու նրա ծովեզերքների բնապատկերները դիտողին ուղղակի գամում են կտավին: Նա երևի այսօր ամենամեծերից







Վերջիններս հայտնի են որպես «Սալոն A, B, C, D» և այլն[23]: Թուրք նկարիչների ցուցահանդեսները կրել են ամենամյա բնույթ[24]: Դրանցից ոմանք ունեցել են բովանդակային որոշակի ուղղվածություն, ինչպես օրինակ 1917-18թթ. ցուցահանդեսը պատերազմական թեմաներով, մարտանկարներին է նվիրված եղել: 1922թ. ցուցահանդեսին մասնակցել են շուրջ 6 տասնյակ արվեստագետներ, ներկայացնելով առավելագույնս 258 գործ: Արվեստագետների ցանկում, ինչպես և Գեղարվեստի դպրոցի սաների ցանկերում, պատկառելի թիվ են կազմել հայ արվեստագետներն ու ուսանողները, որոնց որոշակի մասը այդ ցուցահանդեսների մրցանակների տեր է դարձել[25]:



Օսկան Էֆենդի
*1876 թ. Ակադեմիայի նկարչական*
*Յակոբ Սահինյան*

Հայ նկարիչները, գեղագիրները (կալիգրաֆները) աշխատանքի լայն ասպարեզ են ունեցել: Նրանք նաև դասավանդել են: Նկարչություն է դասավանդվել նաև զինվորական դպրոցներում: 1793թ. Խասքեոյում բացվել է աշխարհիկ ուսանողների համար առաջին նկարչական դպրոցը՝ Mühendishane-i Berr-i Hümayun-ը: Նկարչություն էր դասավանդվում նաև պետական ծառայողների պատրաստման և մասնագիտական այլ դպրոցներում[26]: 1876թ. Օսման Համդի բեյի (1842-)[27] հոր սադրազամության շրջանում հիմնադրվում է Գեղարվեստի

նկարիչներից է, որի գործերը կարելի է գտնել ստամբուլյան թանգարաններում, անհատներում ու հնավաճառների խանութներում և այլն:

23 Այս մասին տես նաև Կարո Քյուրքմանի հրատարակած հայ նկարիչների սերտի ներածական բաժնում, Garo Kürkman, *Osmanlı...*, s.55-74.

24 Պոլսում հիմնադրված Թուրք նկարիչների միության առաջին ցուցահանդեսը բացվում է Գալաթասարայի ՅՈՒՄԿԱ-ում: Նկարները նախապես բնորոշել են ժյուրիի կողմից: Լավագույններից ընտրված Վիչեն Եսայանյանը Լուսավորության նախարարության կողմից արժանանում է այսպես *Sanayi Nefise* մեդալի:

25 Հայ նկարիչներն արտասահմանում իրենց ուսումնառության կամ տարբեր երկրներում աշխատանքի տարիներին այնքան մեծ համբավ են ձեռք բերում, որ տեղի բարձր հասարակությունը նրանց սկսում է պատվիրներ տալ:

26 Hendese-i Mülkiye (Արքունիքի Ա-ի օրոք բացված) և Istanbul Galatasaray Sultanisi (Աբդուլազիզ սուլթանի օրոք) ուսումնական հաստատություններում նկարչություն էր դասավանդվում: Այստեղ դասավանդում էին ֆրանսիացի, իտալացի, հայ, թուրք մասնագետներ: **Սարգսյան Արթինաը** (1821-1876) 17 տարեկանում Փարիզ է ուղարկվել, կատարելագործելու նկարչական տաղանդը:
**Հովսեփյան Միհրանը** (1857-) նկարչության և գծագրության դասեր է տվել մի շարք վարժարաններում, և մասնավոր դասեր՝ իշխանական ընտանիքների զավակներին: 1894թ. Պոլսի պետական ծառայողների պատրաստման դպրոցի ցրանքերի ատաղձ **Կամիր Չյանյանը** ստանում է *Sanayi Madalyası*, իսկ 1901թ. 4-րդ աստիճանի *Mecidiye*.

27 եղել է թուրքական թանգարանային գործի, հնագիտության կազմակերպիչներից, երախտավորներից: Կրթությունը ստացել է Փարիզի Գեղարվեստից Ակադեմիայում: 1867թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսում եղել է թուրքական տաղավարի պատասխանատուն, իսկ 1881թ. Müze-i Hümayün և Sanayi-i Nefise Mektebi տնօրինությունները է վարել: Արձանագործության բաժինը վառահել է Հոտի Աբրահամյան շրջանավարտ, Փարիզում կատարելագործված հայտնի քանդակագործ Երվանդ Օսկանին: Օսման Համդին, Հիլմի Փաշան և Երվանդ Օսկանը այն երեք կարևոր սյուներն են, որոնք Պոլսում գեղարվեստի զարգացման հիմնական կազմակերպիչները են եղել 19-րդ դարում: Օրաքիալքում կրթություն ստացած Համդի փաշան և Երվանդ Օսկանն են այն երկու ամենակարևոր երախտավորները, որ հիմնադրեցին Ստամբուլի Հնագիտական շքեղագույն թանգարանը, որի շենքը Օսմանյան թանգարանն է կոչվում:





Դ. Սոսլյան
Տեր և տիկ. ասպետ Սեսսիլաստար
և Նեկտար Յուսֆ

դպրոցը, որը ղեկավարել է Գիյոմերը, սակայն դպրոցի բացումը հետաձգվել է ռուս-թուրքական պատերազմի պատճառով: 1891թ. Միրբեհի գտնվող «Մյուզեի Օսմանի»-ն (Գեղարվեստից դպրոցի շենքը) կառուցում է ճարտարապետ Միշել Նոպիճանը:

Այս դպրոցին հետևել են առևտրական դպրոցը, որ ևս նկարչություն էին ուսանում: Կարևոր է նշել արտասահմանում կրթություն ստացած հայ արվեստագետ ուսուցիչների ավանդն այս բնագավառում: Չափազանց կարևոր, գուցե ամենակարևոր հանգամանքը հանդիսացել է այն, որ մշակույթի, մտավորականության շրջանակներում, կայսրության տարբեր ազգերի սերուցքը ներկայացնողները համագործակցել[28] են միմյանց հետ, միասին մտածել, գործել իրենց բոլորի երկրի ապագայի, նրա զարգացման համար, մտածել իրենց երկրի հեղինակությունը «նոր բացվող Եվրոպայի» առջև արժանապատվորեն ներկայացնելու մասին: Այս համագործակցությունն է պայմանավորել կայսրության ընդհանուր զարթոնքի շրջանի մեծ հաջողությունը: Այս համագործակցություն-բարեկամությունը երբեմն այնքան բնական է արտահայտվել, որ մեկ ու կես դար անց դժվարանում ենք այն պատկերացնել:

Կայսերական գեղարվեստի դպրոցն ուներ ճարտարապետության[29], քանդակի, փորագրության, յուղանկարի, ածխանկարի, ջրաներկի, գրաֆիկայի, բաժիններ, որը դասախոսում էին Փարիզի, Իտալիայի Գեղարվեստի Ակադեմիաների հայազգի շրջանավարտ մասնագետները: Դպրոցի կարևորագույն ավանդույթն էր շնորհալիների ամենամյա ցուցահանդեսները, որոնք կոչված էին խրախուսելու մշակույթը, հասարակության ուշադրությունը բևեռելու կայսրությունում նոր ձևավորվող այս ասպարեզի վրա, կանաչ ճանապարհ հարթելու տաղանդավոր ուսանողների համար, նրանց գործը հայտնի դարձնելով լսելի դարձնել նրանց անունները, ապագայի ճանաչված արվեստագետներին ներկայացնելով նաև բարձր հասարա-

28 **Շաշյան Գևորգ** արքունի բժիշկներ Շաշյանների գերդաստանից է եղել: Նա կրտսերան Շաշյան Պետրոս բեյի է: Նա է նկարազարդել, ձևավորել 1873թ Վիեննայում հրատարակված Էդհեմ Փաշայի «*Օսմանյան ճարտարապետությունը*» և «*Թուրքական ժողովրդական տարազները*» ալբոմները: 1891թ. **Գևորգ Շաշյանը** մեդալի վրա իր հնարած գունավոր զարդանախշերով նկարների համար արժանացել է սուլթանին, և ստացել ***Nişan-ı Iftihar***.

29 1901թ. Գեղարվեստի դպրոցի ճարտարապետության բաժնի շրջանավարտներ **Միհրան Ազարյանը** և **Հրանտ Յաղուպյանը** ճանաչվում են մրցույթների շնորհակալության մեջ: **Կարապետ Գյումուշգերդյանը** պատրաստում է պալատի մի դահլիճ ձևավորածը: Նկարչական բաժինն ավարտում են 4 հայ երիտասարդներ, որոնք բոլորն էլ դիպլոմներ են ստանում:









Կարապետ Եաղ Արամյան
Սուլթանների դիմանկարներով
և Ստամբուլի տեսարաններով
գեղարվեստական ափսեներ









Մարտիրոս Սարգսյան
Ծաղկաման և մրգաման



Սարգ Փափազյան. Վիկտոր Հյուգո

կորյանը: Սա նաև հնարավորություն էր ստեղծում աշխատանքը, պատվերները առանձնացնելու համար, ինչպես նաև ուղեգիր արտասահմանյան փարպեռնների մոտ կատարելագործման մեկնելու համար:

Նրանք հանդիպացել են նաև երկրում թանգարանների, առանձին հայտնի հավաքածուների հիմնադիրներին ու առաջնեկները:[30]

Մինչ օրս նրանց գործերը Պոլսի թանգարանների լավագույն նմուշներից են, զարդարվում են մասնավոր հավաքածուների հետ: Այդ հայտնի ու սիրված անուններից է Մկրտիչ Ջիվանյանը (1848-1906), որը լավագույն ծովանկարիչներից ու Ստամբուլը ներկայացնողներից կարելի է համարել: Նա եվրոպացի արվեստագետների հետ միասին որպես դեկորատոր նկարազարդել է Չրաղանի պալատը, ապա



Տիգրան Միսաքյան. Փոթորիկ





Մկրտիչ Ջիվանյան

Թեքիրդաղի, Սամաթիայի, հանրային «Սորքարի» և Ղալաթիայի «Աֆրիկա» թատրոնները: Թատրոններում, մասնավորապես Գյուլի Հակոբի «Օսմանյան թատրոնում» հեղինակել է վարագույրներ, դեկորացիաներ: Հրավիրվել է նաև թուրք, հայ, հույն երևելի հարուստների ապարանքները զարդարելու: Հովհաննես Այվազովսկու ազդեցության տակ է գտնվել: Երբ մեծ ծովանկարիչը ստամբուլյան 1874թ. իր այցելության ժամանակ մեկ ամիս հյուրընկալվեց Սարգիս Պալյան ամիրայի տանը, այդ ընթացքում Ջիվանյանը ծանոթանում է Այվազովսկու հետ: 1876-79թթ. աշխատել է նաև Իտալիայում: 7 տարի ապրել է Օդեսայում, 4 տարի Պետերբուրգում: 1905թ. վերադարձել է Պոլիս, մեկ տարի անց մահացել: Նա թողել է նաև իր ժամանակակիցների դիմանկարներ. այդ թվում արևմտահայ մտավորականների (Տիգրան Չոխաջյանի և այլոց): Մկրտիչ Ջիվանյանը, Կարապետ Յագմանյանը, Վիչեն Ալյանյանը (1865-1935), Հովհաննես Այվազովսկին[31] և ուրիշ հայեր մինչ օրս ստամբուլյան աճուրդներում ամենաթանկ գնահատված նկարիչներից են[32]:

Հայ նկարիչները, գեղագիրները (կալիգրաֆները) աշխատանքի լայն ասպարեզ են ունեցել: Նրանք դասավանդել են, հեղինակել բազմաթիվ լուսանկարչական ու նկարչական ցուցահանդեսներ, կազմել տարաբնույթ ալբոմներ, նվիրված Օսմանյան կայսրության ամենատարբեր կողմերին, ազգերին, արհեստներին, տարազներին, տարբեր ազգերի, դասակարգերի ու տարբեր գրադմների մարդկանց, Օսմանյան կայսրության ընդարձակ տարածքի առանձին քաղաքներին, գյուղերին, պատմական վայրերին: Հրատարակվել են առանձին



Մկրտիչ Ջիվանյան.
*Էսմա սուլթանի պալատները*



Մկրտիչ Ջիվանյան.
*Փոթորիկ*

30 1900թ. Գյուղատնտեսության նախարարության միջնակարգ մասնագիտական բաժնի ղեկավար **Արտաշես Մարտիկյանը** նշանակվում է Եմիշչերիների թանգարանի տնօրեն: Հայտնի է աղբյուրների սպասավոր **Մարգար Աշչյանը** (1776-1834), որը նաև հնագիտությամբ է զբաղվել:

31 Portakal Sanat ve Kültür Evi, *Osmanlı Sanat Eserleri Heykel*, Tablo ve Hat. Ist., 1998, N 59.
32 Նույն, Ist., 1998, N 33-36; 2008, N 311a, b.











Ռաֆիք Չրաճյան
Նեղուցի ափին. Անադոլուհիսար, Ռումելի Հիսար



Գևորգ Ճաչյան
Նավերը փոթորկի մեջ. Գիշեր. Լուսնկա



Գ. Նազարյան. Ֆեներբահչեի փարոսը



Սարք Փափազյան. Աղջ քողերի







Տեվֆիկ Էքսերճյան
Սուլթան



Գառնիկ Էքսերճյան
Գուշակը

յուն է դասավանդել **Երվանդ Օսկանը** (1855-1914): Նրա հայրը Փողերանոցում դրամահատարանի գլխավոր վարպետ է եղել: Երվանդն իր ուսումը առացել էր Հռոմի Արքայական Գեղարվեստի դպրոցում: 1877թ. իր դասընկեր Ժոզեֆ Ազնավուրի հետ փայլուն ավարտել են այն, աշակերտելով հայտնի Էնրիկո Բեկկատինին, Ջիրոլամո Մազինինին: Փարիզում կատարելագործվել են իրենց արվեստը և վերադառնալով Թանգարանների տնօրեն Օ.Համդի բեյի կողմից հրավիրվել Գեղարվեստի դպրոց: 1882թ, երբ հիմնադրվեց Ակադեմիան, նա մինչև իր մահը 30 տարի շարունակ տնօրինել է Գեղարվեստի դպրոցը, շարունակելով նաև քանդակագործության դասավանդելը:

ճարտարապետներից **Լևոն Չարխչյանի և Սահակ Աղայանի** գործերը: 1905թ.Գեղարվեստի դպրոցի սաներին բաժանվել են ավարտական 16 հայեր: 1904թ. Կայսերական Գեղարվեստի դպրոցի նկարչի հարցերի տնօրեն Երվանդ Օսկանին շնորհվում է 3-րդ աստիճանի *Mecidiye*: Քանդակի բաժնից **Երվանդ, Արմենակ, Հրանտ, Կարապետ** Էֆենդիների գործերը մրցանակներ են ստանում: Փորագրության բաժնից մրցանակակիր են դառնում **Աշխարհի Պայանյանի** գործերը: 1903թ. Կայսերական Գեղարվեստի դպրոցի քանդակագործության բաժնին են ավարտում **Արմենակ և Կարապետ Գյուլբենկյանները, Հայկ Բաշնալյանը**: Ճարտարապետի բաժնից **Օնիկ Միսաքյանը**, սև ճատուրի, ամբողջության բաժնից **Սահակ Լի. Միսաք Նշանյանը, Արսեն, Աշխարհ** Էֆենդիները: 1907թ. նկարիչներ Օնիկ Միսաքյանը ստանում է *Sanayi Madalyası*, իսկ **Սերոբյանը** ցուցահանդես է բացում Թաքսիմ Դատարի (Կառավարության) կից:



Երվանդ Օսկան





Երվանդ Օսկան
Դիմանկար



Երվանդ Օսկան
Օսման Համդի բեյի կինը՝
Նաիլե հանըմը

1906թ. Բերայում, Բոն Մարշեի դիմաց հ.349 տանը հիմնադրվում է Հայ գեղարվեստից Ակադեմիան: Գծագրության, նկարչության բոլոր ճյուղերը կարճ ժամանակում կարող էին սովորել փարիզյան հատուկ մեթոդով: Հնարավորություն էր ընձեռնվում դյուրությամբ ստվորել որոշակի առարկաներ: Մասնավոր օրեր էին առանձնացված օրիորդաց դասավանդության համար: Հիմնադիր տնօրենն էր նկարիչ Արամ Ս.Թաքաջյանը, վկայված Փարիզի Գեղարվեստի Ակադեմիայից:

1919թ. Հայ գեղարվեստասիրաց միությունը հրատարակում է 16 հոդվածից իր կանոնադրությունը, հուսալով միավորել այս շրջանակի երկրում մնացած հայ արվեստագետներին ու այն ծանոթացնել օտարներին:

Նույն այս արվեստագետներն էլ հանդիսացել են նաև երկրում թանգարանների, առանձին հայտնի հավաքածուների հիմնադիրներն ու մշակույթի ժողովրդականացման առաջնեկները[38]:

**Կլեման Սիրիլյան վրդ.** (1824-1878). Կրթությունը ստացել էր Վիեննայում: Մասնավոր հետաքրքրություն է ունեցել հին դրամների նկատմամբ և հեղինակել է այդ մասին շատ հետաքրքիր աշխատություն[39]: Սուլթան Աբդուլազիզի կողմից նշանակվել է Ստամբուլի թանգարանի երկրորդ տնօրեն, զբաղվել թանգարանի համար նմուշներ հայթհայթելով:

Անիում հնագիտական իրերի թանգարան է ստեղծվել: Մինչ այդ դրանք ցուցադրվում էին, տարվում Էրմիտաժ: Ամառվա ընթացքում 2000 այցելու էր ունենում թանգարանը: Թանգարանի նյութերը սկսել էին հավաքել 1892 թվականից:

Օսմանյան կայսրություն, նաև Եգիպտոս, հայերի շնորհիվ են մուտք գործել ժամանակի տեխնիկական բազմաթիվ նորարարություններ: Այդպիսի օրինակների թվում է ցինկոգրաֆի մուտքը, որը հեղափոխական նշանակություն ունեցավ լուսանկարչության, տպագրական ասպարեզում:

38 1883թ. **Երվանդ Օսկանը** դարձավ Հնագիտական թանգարանի հիմնադիր երկու տնօրեններից մեկը (Ասարը Աթիքա Մյուզեսի), սկսեց արձանագործության դասընթացի իր կողմերը՝ նաև իր ջանքերով հիմնադրված Գեղարվեստի դպրոցում: 1883թ. Օսման Համդի բեյի հետ միասին հրատարակել են Նեմրութ լեռան դամբարանային հուշարձանների մասին ֆրանսերեն ուսումնասիրություն:

39 Այս մասին տես՝ Գ.Գալեմքերյան, *Ռուբինյան դրամների դասակարգման պատմությունից*, Վիեննա, 1892, էջ 3:







Հ. Սոնփեան
Դիմանկար

Գեղարվեստի զարգացման համար խթան են հանդիսացել հրատարակչական տները, որոնք նկարազարդ գրքերի, այբուբենի հրատարակությամբ են կազմակերպել: Անուրանալի է նաև գրավաճառների[40] ու նկարավաճառների ավանդը: 19-րդ դարում հատուկ նկարավաճառներ չեն եղել: Դրանց փոխարինել են նկարների համար շրջանակ պատրաստող վաճառականները: Հայտնի է Բեյօղլու Թունելում շրջանակագործ վարպետ Սարգիս Ֆրբերճյանի (1852-1915) անունը, որն իր պատրաստած շրջանակների վրա սեփական կնիքն է դրել: Նա Գերմանիա, Ավստրիա փախցրել է հանել Օսմանյան կայսրության արտիստների ու սիրող նկարիչների գործերը, մեծ հարստության տեր դարձել: Նրա նկարով, իր արհեստանոցի առջև, թողարկվել է 1900-1915թթ. փոստային բացիկ: Իսկ արդեն 1881թ. Պոլսում Ույման-Գրոմբախի խանութում ցուցադրվում են Վան Դեյկի, Ռեմբրանդի, Բրյոգելի, Ժերոմի, Ֆրից Զյոմենի (1828-1905), Էրսան Սիյիֆ Լոնգրենի (1815-1875), Գ.Գրյոսյի, Հենրի Գիյոմ Շլեսինգերի (1814-1893) ու Այվազովսկու նկարները: Այս շրջանում ցուցահանդեսները կազմակերպվել են մի քանի սրահներում, որոնցից հայտնիներից է եղել Աբդուլլահ եղբայրների նկարչական սալոնը[41]: Այսօրյա աճուրդային անցուդարձերում կարելի է գտնել այնպիսի հայտնի վարպետների արևելյան թեմաներով կտավներ, առամբերյան անտարաններով փորագրանկարներ, արձաններ, ինչպիսիք են Էժեն Դելակրուան (1798-1863), Անտուան Մելինգը (1763-1831), Լեոպոլդ Ֆիշինգը, Ամադեո Պրեզիոզին (1816-1882)[42] և ուրիշներ:



Գրչեցների ցույան գործիք նկարազարդ պատկերով (1800)

Մեր օրերի պոլսահայ նշանավոր արվեստաբան Կարո Քյուրքճյանը Օսմանյան կայսրության հայ նկարիչներին նվիրված իր երկհատորյա աշխատության առաջաբանում առանձնացնում է փորագրանկարիչներին, ջրանկարի վարպետներին, կանգ առնում նկարչական և տպագրական (մասնավորապես գունավոր) ճենկերի գունային տարբեր երանգների առաջման տեխնիկաներին, անդրադառնալով ժամանակի մի քանի հանրահայտ անունների: **Իզմիրցի Պողոս(Հաճա) Թաթիկյանը** գունավոր փորագրանկարչության ակունքներում կանգնած ամենահայտնի անուններից է եղել, որ ստեղծագործել է սկսել 1840-ական թվականներին: Նրա ստեղծագործությունների թվում են օսմանյան բոլոր սուլթանների դիմանկարները, սկսած Օսման Ա-ից: Նրա գործերը փանաքյել են Հովհաննես Մյուհենդիսյ-

40 Գրավաճառներին մեծ անդրադարձել են տպագրական գործին նվիրված գլխում:

41 1883թ. Փարիզի Գեղարվեստից ակադեմիայի շրջանավարտներ նկարիչներ **Պիեռ Հովյանը և Սարգիս Տիրանյանը**, որ տարբեր ցուցահանդեսներում իրենց մասնակցությամբ արդեն հայտնի էին դարձել, 5-րդ աստիճանի ***Mecidiye*** շքանշան են ստանում: 1886թ.Փարիզում գտնվող նկարիչ Սարգիս Տիրանյանը «Թանկ Օսմանի» միջոցով Լուսավորության նախարարության որոշմամբ ստանում էր 300 ֆրանկ թոշակ:

42 Portakal Sanat ve Kültür Evi, *Osmanlı Sanat Eserleri Heykel, Tablo ve Hat*. Ist., 2008, N 290-296 և այլն:

յանի տպարանում: Թուրքական անհնաբազմազան բնանկարով գործերն իր շրջանի Պոլսի բազմազան կյանքի, ճարտարապետական հուշարձանների, բնության պատկերների հիասքանչ նմուշներ են: Թուրքական փորագրանկարների Հ.Մ.Բլակմենի հայտնի հավաքածուի զարդն են կազմում նրա 160 գործերը: Դրանք հիմնականում 25x20 չափսի են եղել:



Արմենակ Յաուֆյան
*Մայր և որդի*

Օսմանյան կայսրության հայ գեղանկարիչների, փորագրանկարիչների[43], արձանագործների, գեղագիտների[44], ազդագրերի նկարիչների, ծաղրանկարիչների, ջրաներկի վարպետների, գրքերի ու դրանց կազմի, տիտղոսաթերթերի նկարազարդողների, պարբերականների համար փորագրանկարիչների, դրամների ու մեդալների փորագրողների, կիրառական առարկաների[45] ու զարդերի նկարիչ-ձևավորողների[46] թիվն անցնում է մի քանի հարյուրից: Մեր պատմության համար արժեքավոր են առանձնապես այն գործերը, որոնք ներկայացնում են պատմական դեպքեր, դեմքեր, վայրեր, ճարտարապետական հուշարձաններ ու պալատներ, մզկիթներ, տարբեր զբաղմունքի, արհեստների մարդկանց դիմանկարներ ու գործիքներ, կայսրության բազմազգ բնակիչների նկարներ իրենց տարազներով, տարբեր պատերազմական բեմանկարով կտավներ, նաև ծովանկարների ու պատմական այլ դեպքեր նկարագրող կտավներ, կիրառական առարկաներ, թալք ապբանների ու պալատական, պետական այրերի նկարներ, օտար միսիոներների, արքունիքի անդամների, հայտնի մարդկանց նկարներ[47]: Հայերիս համար չափազանց կարևոր են արևմտահայության հայտնի դեմքերի նկարները, եկեղեցական գեղանկարչության ու մանրանկարչության հիասքանչ օրինակները, գլուխգործոցներ[48]:

43 **Քերովբե Թաղամանյանը Օղլու** (ծն.1858) ճնաչի գործերն են Սուլթան Համիդի կողմից Պոլսո այցելության ժամանակ Գերմանիայի կայսեր նվիրած մեդալները, թանկարժեք անոթների զարդերն ու տառերը: Փարիզում անձնախառնից հաջողություն են ունեցել ոսկու վրա փորագրված, ընդելուզված եկեղեցական ու օսմանյան տառերով նրա կատարած զարդաթիթեղները, անձնակնիքա փորագրանկարները:

44 Գեղագիտության ասպարեզի ամենահայտնի անուններից է եղել **Խաչիկ Փափազյանը** (ծն.1847 Խոսրովա): Հրատարակել է ասեղնագործության և փորագրությունների համար ալբոմ, տարբեր լեզուների տառերի, ծածկագրերի (մոնոգրամների) գեղազարդված օրինակների ալբոմներ, որոնք ժամանակին գործածվում էին հանրաբար: Ուսուցման գործից առաջ է թանկարժեք ձեռագիր, ի գոհունակություն իրեն ուղղված գնահատի ձոնի:

45 Հերեքեի արքայական ֆաբրիկայում մեծապես գնահատվել են հայ նկարիչ-վարպետների գործը: 1902թ. ֆաբրիկայի նկարիչ **Բաժման** Եֆենդիին շնորհվում է 3-րդ աստիճանի *Osmaniye*:

46 **Սահակ Պեզիրճյանը** (Սեփոն, 1837-1919) եղել է կայսերական պալատի դեկորատոր: Աշակերտել է եվրոպական նշանավոր վարպետների, ժամանակատեղել ծանրաճկարողության ասպարեզում: 19 տարեկանում մեծ հաջողությամբ նկարազարդել է Իզմիրի պալատը, գեղազարդել Քյաղըթհանեի (Քաղցր ջրերի), Սուլթան Ազիզի, Չըրաղանի ու այլ պալատներ, ճշանակվել արքայական պալատի «դեկորատոր»: Նրա տաղանդի հիացողներից է եղել նաև Աբդուլմեջիդ առանձնացյալ իր այցելությունների ժամանակ: Պոլսո այցելության ժամանակ նրանով հիացել է նաև Ֆրանսիայի Էժենի թագուհին: Հեղինակ է շատ կտավների, որոնք կատարել է իր հովանավոր սուլթան Աբդուլազիզի պատվերով: Վերջինիս մահվանից հետո գնացել է Եգիպտոս, լավ ընդունելության գանկ խոսով Խեդիվյան փաշայի կողմից, վայելել նրա բարեկամությունը, ապա գնացել է Լոնդոն, աշխատել Վիկտորիա թագուհու դստեր, Քրիստինայի հովանավորության ներքո: 1900թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսում կատարել է Օսմանյան կայսրության տաղավարի մի կարևոր մասը, հիացում պատճառելով բոլորին: Այստեղ էլ հրատարակել է զարդանկարչության մասին մեծանակի արժանացած իր ալբոմը, որի առաջաբանը գրել էր մեցենատակաշխության ժյուրիի նախագահ Ժորժենը: 1902թ. կաթողիկոսական հրամանով զարդանկարել է ս.Էջմիածնի Մայր-տաճարը, Իզմիրի Հայոց եկեղեցին, Կահիրեում հիմնել հայկական դպրոց:







Օսման Էմիր Յոմիսաննես
*Տրդատ թագավորի մկրտությունը*

* * *

Պալատական հայ նկարիչների 19-րդ դարի կեսերին փոխարինել են պալատական հայ լուսանկարիչները, պատմությանը թողնելով բազմաթիվ վավերագրեր ու փաստական նյութ՝ այս անգամ նաև նկարչության, արձանագործության ու կիրառական արվեստի նմուշների, զենքերի ու զարդերի լուսանկարչական արտահայտմամբ:

Բերայում, Պոլսի ամենաեվրոպական հատվածում կենտրոնացված են եղել հայկական լուսանկարչատները, տպարանները, դեղատները, բժշկական մասնավոր ընդունարանները, փաստաբանական ու ապահովագրական գրասենյակներ, ոսկերիչներ, տարբեր արվեստա-

47 Սուլթանների ու պետական այրերի բազմաթիվ դիմանկարներ են թողել **Ենովքանդ Ալլահվերդին** (19-20դդ սկիզբ), **Օննիկ Քյուրքճյանը** (19-20 սկիզբ), ծովանկարների նկարիչը **Հովհաննես Ունեց Շենբաքը (1809-1874)**, Հայտնի է **Տիրան Քյուրքճյան** նկարիչը (19-20դդ սկիզբ), որը նկարազարդել է երիցների քահանաների դրսի տեսարաններով:

48 Տես **Մկրտիչ Տիրացույանի (1837-1904), Միքայել Մելքոնյանի (18-19դդ սկիզբ), Միքայել Չիվանյանի (1848-1906), Պետրոս Շաշյանի** (19դ) մեծարժեք բնանկարներն ու նատյուրմորտները, **Միհրան Մարտիկյանի** (-1907), **Երվանդ Օսկանի** (1855-1914) քանդակներն ու փորագրանկարները: **Կարո Քյուրքճյանի** հարուստ ու մեծարժեք ալբոմում:



Վիչեն Ասլանյան. *Բեթհովեն*

գինետների ու արհեստավորների խանութներ, փոքրիկ ֆաբրիկաներ, ամենատարբեր խանութներ, մասնավորապես պերճանքի, բանկ, եվրոպական հաստատությունների ու կերպարվեստի հայտնի վաճառատներ, ծաղկարաններ, ճաշարաններ, Թոքաթլյան պանդոկը:

Հայկական լուսանկարչատներն այնքանի համբավավոր անուններ են ունեցել, որ Պոլիս այցելող հայտնի մարդիկ, արքայական ու իշխանական տոհմերի ներկայացուցիչներ, օտար դիվանագետներ, պարտք են համարել անպայման լուսանկարվել այստեղ: Ինչպես, ամենահայտնի լուսանկարչատունը, որը նախակարապետն է եղել Օսմանյան կայսրությունում այս արվեստի՝ դա արքայական նկարիչներ Աբդուլլահ եղբայրների արվեստանոցն է եղել, ապա նաև՝ լուսանկարչատունը:

Սեղանավոր Միքայել Աբդուլլահյանի (1809-1882) որդիները՝ Աբդուլլահ եղբայրները՝ Վիչենը (-1900), Հովսեփը (-1902), Գևորգը (1839-1918) եղել են Օրթագյուղցի: Հայրը՝ Միքայել Աբդուլլահյանը (1809-1882) եղել է սեղանավոր: Նրանք նախնառաջ եղել են մանրանկարիչներ, և հետո միայն զբաղվել լուսանկարչությամբ: Սովորել են Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում, աշակերտել Ղևոնդ Ալիշանին, Պոլիս վերադարձին նվիրվել լուսանկարչությանը, որն իր զարգացման սկզբնական փուլում էր գտնվում: Վիչեն Աբդուլլահը նախապես, 1856թ. որպես ռետուշ անող օգնական նկարիչ աշխատել է գերմանացի քիմիկոս Ռաբախի Բայեզիդում բացած արհեստանոցում: Նկարել է սուլթաններ Աբդուլմեջիդին և Աբդուլազիզին, հայտնի բարձրաստիճան զինվորականների: Երբ նրանք արդեն լուսանկարչությամբ էին զբաղվում, Բեյօղլիում 1858թ. հաստատել են իրենց արվեստանոցը, ճանաչում ձեռք բերել: Մայրաքաղաք այցելող թագավորներն ու թագուհիները, իշխանազունները, հայտնի մարդիկ, զբոսաշրջիկները որպես կանոն նրանց են պատվիրել իրենց լուսանկարները: Հայտնի է, որ Պոլսում եղել է ռմն ֆրանսիացի լուսանկարիչ, որը սակայն հաջողություն չի ունեցել, մանավանդ երբ նրա կատարած սուլթանական լուսանկարը գոհունակություն չի առաջացրել միապետի մոտ:



Վիչեն Ասլանյան. *Շեյխ*

1860-ականներից Բերայում Դերեն անունով լուսանկարչին հանձնարարում են նկարել սուլթան Ազիզին: Սուլթանը չի հավանում նկարում իր կեցվածքը, դեմքի արտահայտությունը: Եպարքոս Ֆուադ փաշայի միջնորդությամբ 1863թ. Գևորգ Աբդուլլահը հրավիրվում է Խանի-







մոտ սպասում և 2-3 դիրքերով մեծ հաջողությամբ լուսանկարում սուլթան Աբդուլազիզին (սուլթանի վերջին լուսանկարն է), Ավգուստոս Բագոսին ուղարկելու համար: Նկարները կիսադեմով (պրոֆիլ) են արված, քանի որ նախատեսված էին դրանից նաև մեդալ պատրաստել: Եպարքոսն իր միջնորդության մեջ պնդում է, ասելով, որ իրենց երկրում ֆրանսիացիներից շատ ավելի հաջող ու հայտնի հայ նկարիչներ կան, որոնք եվրոպայում արդեն հայտնի են իրենց գործերով:



Աբրահամ Սաքայան

Կայսերական լուսանկարիչ Աբդուլլահ եղբայրներն են առաջնեկը Օսմանյան կայսրության լուսանկարչական արվեստի զարգացման: Նրանց են հետևել բազմաթիվ հայազգի լուսանկարիչներ, որոնց արվեստանոցները հիմնականում Պոլսի կենտրոնական թաղերում են գտնվել:

Նկարիչ ու լուսանկարիչ եղբայրները 1861թ. սուլթան Աբդուլազիզի կողմից պալատական լուսանկարիչներ են դարձել: 1868թ. Անգլիայի արքայազն Էդուարդը նկարվել է նրանց մոտ: Արքայազնը առաջարկել է, որ գնան և Անգլիայում ևս բացեն իրենց արվեստանոցը, սակայն եղբայրները մերժել են: 1887թ. Վիչեն Աբդուլլահը սուլթանի նկարները առանց հրամանի վաճառելու համար զրկվում է պալատ այցելությունից: 1891թ. նրանք կայսրության տարբեր ազգերի ներկայացուցիչների նկարները իրենց հագուստներով տպագրում են «Servet-i Fünün» թերթում, որ թուրքական տարազներից մեկի տակ գրված է լինում «հայկական», որը և մեծ աղմուկ է առաջացնում: Աբդուլլահ եղբայրներով է սկսվում Թուրքիայում լուսանկարչության պատմությունը: Նրանք



Աբրահամ Սաքայան. *Հարությունը*



Անդրանիկ Ալպաճյանի
*Սուլթան Մուրադ Ե, Դրամին Ալին փաշա, Մեհմեդ Ռուշդի փաշա և Միդհատ փաշա*



Ռուբեն Սևորյան
*Շեյխ Շամիլը և որդին՝ Ջեմալեդդինը*

են եղել հիմնական առեղծողները քաղաքական փոստային բացիկների, ունենալով բովանդակային տարբեր շարքեր, սկսած Թուրքիայի քաղաքներից, գյուղերից, հուշարձաններից, մինչև հագուստները, տարազները, հայտնի մարդիկ ու տարբեր արհեստի պատկանող մարդկանց լուսանկարային սերիաները: Աբդուլլահ եղբայրների ստեղծագործությունները, նրանց ալբոմները դառնում են այցեքարտերից մեկը ապատասխանում կայսրությունը հավուր պատշաճի ներկայացնելու, ծանոթացնելու համար: Աբդուլլահների ալբոմները պետական գանձարանի միջոցներով են հրատարակվել: Կայսերական գրադարանում գտնվող նրանց 153 տարբեր կրոնական ծիսական առարկաների, ընդհանուր 612 գործերի պատճենները 4 օրինակով բազմացնելու և ԱՄՆ ուղարկելու համար Վարուժների փաշայան գանձարանից 11.628 ղուշ է տրամադրվում: 1894թ. Անգլիական գրադարաններին նվիրելու համար Աբդուլլահ եղբայրների տարբեր նկարներ կրկնօրինակելու համար շուրջ 20 հազ. ղուշ է ծախսվում Ներքին գործերի նախարարության բյուջեից:

1888թ. Աբդուլհամիդ Բ-ն նորոգում է արքայական լուսանկարիչներ Աբդուլլահ եղբայրների տիտղոսը, որ արվել էր սուլթան Աբդուլազիզի կողմից: 1890թ. Աբդուլլահ եղբայրները հրատարակում են իրենց ալբոմ-կատալոգը Էրզրումյա ատլասանում: 1890թ. Անգլիայի Գալիայի արքայազն Էդուարդի 20 հոգիանոց Պոլիս եկած խումբը, կնոջ Ալեքսանդրայի, բոլորն անխտիր նկարվել են Աբդուլլահ եղբայրների լուսանկարչատանը:

Հայտնի են 1891թ. Պոլսի նավահանգստում կանգնած «Մեսուդիյե» բրիգանտինայի նկարները՝ արտաքինից ու ներսից, կատարված Աբդուլլահների կողմից: 1891թ. Աբդուլլահ եղբայրները Պոլիս եկած ճապոնական երկու նավերի ու այլ նկարներից կազմված մի նոր ալբոմ են նվիրել Սուլթանին:

1899թ. պալատական լուսանկարիչներ Աբդուլլահ եղբայրների 1200 օսմանյան լիրա պարտքի դիմաց նրանց լուսանկարչատների գործիքները, եղած-չեղածը անցնում է «Սեբահ և Ժոայե»





լուսանկարչատանը: 1904թ. Աբդուլլահ եղբայրների նոր լուսանկարչատունը սկսել է գործել Բերայի և Մարմարա լանջին եկեղեցու մոտի կողքի, հայկական շենքում (ճարտարապետ Ալֆոնսի կառուցած):

Նրանց գործերից բազմաթիվ փոստային բացիկներ, դրոշմանիշներ են տպագրվել և մի շարք սուլթանական շնորհներ են ստացել: Որպես պալատական լուսանկարիչներ, նրանք արժանացել են կայսրության 8 շքանշանների ու 3 մեդալների[49]: Նրանք մեծ թվով ուսանողների են սովորեցրել իրենց արհեստը: Նրանց հեղինակած առանձին նկարներ, հիմնականում սուլթանների և բարձրաստիճան այրերի՝ վաճառվել են որպես հուշանվերներ:



Անդրանիկ Ալպաճյանի
*Սուլթաններ՝ Մահմուդ Բ, Աբդուլհամիդ Բ, Մեհմեդ Ռեշադ Ե, Մեհմեդ Վահիդեդդին Զ*

1866թ. Պոլսում լույս է տեսել Տեր Թորոսյան Սարգսի հեղինակած «Լուսանկարչական հանդես»[50]: Սա ազդանշան էր այն երևույթի, որ լուսանկարչությունը սկսում էր իր հաղթարշավը Օսմանյան կայսրության տարածքում:

1886թ. փոխարքա Թեվֆիկ փաշան ցանկանալով Եգիպտոսում զարգացնել ու Կահիրեում լուսանկարչական մասնաճյուղ բացել, հրավիրում է արքայական լուսանկարիչներ Աբդուլլահ եղբայրներից Գևորգին և Հովսեփին: Եղբայրները մեծ սիրով ընդունվում են Խոդիվի ու նրա կնոջ կողմից: Հովսեփը հիվանդանում է և Պոլիս է վերադառնում, իր փոխարեն ուղարկելով Աբրահամին: Նրանք Կահիրեում լուսանկարչատուն են բացում: 1895թ. Կահիրեում Աբդուլլահ եղբայրների լուսանկարչատունը 9 տարի գոյատևելուց հետո փակվում է: 1896թ. Աբդուլլահ եղբայրները Եգիպտոսից վերադառնում են Պոլիս[51]: Պահպանվել է Աբդուլլահների փայլփ-

49 **Աբդուլլահ եղբայրների** արվեստը գնահատվել է նաև Եվրոպայում, օտար միապետների կողմից: 1899թ. **Հովսեփ Աբդուլլահ** լուսանկարիչը Չեռնոգորիայի (Չե. Մոնտենեգրո) իշխանի կողմից պարգևատրվել է 3-րդ աստիճանի «Danilo» բարձրագույն շքանշանով:

50 Օսմանյան շրջանի լուսանկարչությանը նվիրված Էնգին Չիզգենի գրքի հրատարակության առթիվ կազմակերպվել է Բոսֆորյանի մի հոդված, որ որ տառադված են Թուրքիայում այս ասպարեզի հայազգի երախտավորներից մի քանիսի կատարած հաշվետու լուսանկարները: Տես „Tarih ve Toplum", 1987, İst., aralık, s. 27-29.

51 Աբդուլլահ եղբայրների եգիպտական շրջանը հայտնի է նաև նրանց դասընթացած լուսանկարիչների միջոցով: «Արդյունքը զարմանալիորեն լուսանկարչական արվեստի զարգացումը Եգիպտոսում, խոլ նրանցից ոմանք՝ նաև հարևան երկրներում: 70 տարի շարունակ Եգիպտոսի պալատական նկարիչների պաշտոնը զբաղեցրել են Անկեփ Բ կայսեր կողմից Եգիպտոսից 1905թ. հրավիրված սփյուռքահայերից **Պոլսեցյան ընտանիքի լուսանկարիչները՝ Բեզրոն, Հայկազուն և Թանին**: Նրանք են եղել լուսանկարչության առաջամարտիկներն այս երկրում, դարձել նրա պատմության տարիների հայելին: Նրանք են ներկայացրել



Վերժին Սերվիչեն
*Մոր ժառանգը յերջեկրոնին*

յան արվեստանոցի հասցեով լուսանկար, որը ապացուցում է եղբայրների Փարիզում ևս լուսանկարչական արվեստանոց ունենալու փաստը: Թվականները մեզ անհայտ են[51]:

Գևորգը մեծ մասնակցություն է ցուցաբերել ազգային գործերում, անդամակցել մի քանի ազգային կարևոր ընկերությունների, հոդվածներ հրատարակել տեղի եվրոպական ու արտասահմանյան պարբերականներում Արևմտյան Հայաստանի հարստահարությունների մասին: Անդամակցել է մի քանի կարևոր ազգային ընկերությունների: Գերմաներենից համառոտ կերպով հայերենի է թարգմանել ու 1874թ. հրատարակել Սրվանձի «Հայաստանի բնեագիր արձանագրությունների» մասին երկը, իսկ



Մելինե Վանյան
*Սոսանոյը, Ալինե, Ռաֆայել*

այս երկրում լուսանկարչական հայտնի Kodak, Gevaert, Agfa առևտրական անունը, մեկերի նրանց արտադրանքը Հաբեշյանում:

52 Այս և Աբդուլլահ եղբայրների, Սեբահի, Ձերյանի լուսանկարների մեջ օրինակները վերաբերյալ պատմում է հայ լուսանկարչության մասին հրաշալի պատմի հեղինակ Վահան Քոչարը:











Կարապետ Ցալճմեյան
*Ղափլիքալի հովիտը, Ալյեդ Ճանը, Պոլիս*







Աբդուլահ (Աբդուլլահյան) եղբայրները՝
Վիչեն, Գևորգ, Հովսեփ

100 ոսկի հատույց նվիրել հեղինակին՝ որպես նրա բազմամյա տքնաջան աշխատանքի վարձատրություն: Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ֆրանսերեն բազմաթիվ քաղաքական հոդվածներ է տպագրել, Պոլիս գտնվող եվրոպական թղթակիցներին պարզելով Հայաստանի թշվառ վիճակը, մղում տալու համար գավառների բարենորոգման գործին «առանց մտքեն անցնելու, որ այս ամեն ջանքերն ու զոհողությունները պիտի հանգեին Բեռլինի 61-րդ հոդվածին...»[53]: Գրել է «Ի միություն Հայոց» երգը, որ պոլսահայ ուսանողությունը սիրում էր երգել հանդիսավոր օրերին: 1885թ. Ժոզեֆ Աբդուլյանը գրում է իր հայտնի «Մոռացման մի վայրկեան» պոլկա-մազուրկան: 1918թ. ապրիլին մահանում է Օսմանյան կայսրության լուսանկարչության հիմնադիրներից Գևորգ Աբդուլյանը:

Աբդուլյան եղբայրներին, որպես արքունական լուսանկարիչների, հետագայում հաջորդել է Հակոբ Գավրյանի և Պասկալ Սեբահի «Սեբահ և Ժոայիե»-ն (1857)՝ Բերայի մեծ փողոցում: 1888թ. նրանք արժանանում են 3-րդ աստիճանի *Mecidiye*-ի: 1908թ. Պասկալ Սեբահը տարիքն առնելով, իր լուսանկարչատունը փոխանցում է Հակոբ Իսկենդերին և Պերփոխանյանին: 1914թ. Բերայում «Սեբահ և Ժոայիե» լուսանկարչատնից առանձնանում է Պերփոխանյանը և Հակոբ Իսկենդերը մենակ է առաջ տանում գործերը:

Հայ լուսանկարիչները հեղինակել են բազմաթիվ լուսանկարչական ու նկարչական ցուցահանդեսներ, կազմել տարաբնույթ ալբոմներ, նվիրված Օսմանյան կայսրության կյանքի ամենատարբեր կողմերին, ազգերին, արհեստներին, տարազներին, տարբեր դասակարգերի ու տարբեր զբաղմունքների մարդկանց, Օսմանյան կայսրության ընդարձակ տարածքի առանձին քաղաքներին, գյուղերին, պատմական վայրերին ու բնությանը նվիրված ալբոմների, առանձին անհատների դիմանկարներով, նույնիսկ առանձին հաստատությունների, շենքերի, պալատների և այլնի լուսանկարներով[54]: Նրանք նաև մասնակցել են միջազգա-

53 Թեոդիկ «Ամենուն տարեցույցը», 1912թ., էջ 256-7:

54 1902թ. «Ֆեբյուս» լուսանկարչատունը, Ռոմանոս Պապազյանի, արտադրությունների և ապրանքների լուսանկարներով պատկերազարդված ալբոմը նվիրում է Աբդուլ Համիդ Բ սուլթանին: Նույն տարին «Ֆեբյուս» լուսանկարչատունը, Պոլսի տեսարժան վայրերի, պատմական, ճարտարապետական նկարների ալբոմ է նվիրում Շահին: Արշակ Սուսանյանի մասին, մի շարք առաջնակարգ ալբոմներ, հասարակական տարբեր վայրեր զարդարված են հայ լուսանկարիչների կատարած մեծ, մեծ ու կես դար առաջվա





ԱԲԴՈՒԼԼԱՀ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ





Էդհեմ փաշա





Գազի Օսման փաշա






Աֆրիկուհի



Պոլսի Մխիթարյան վարժարանի 1889 թ. խմբանկար



Պողոս Ֆեբրոս Թարքուլյան

ցին ցուցահանդեսներին[55]: Նրանց լուսանկարչական շարքերը ծառայել են նաև փոստային բացիկների, ղրոշմաթղթերի[56] առեղծման ու տպագրության ժամանակ: Միայն թե դրանց հայ հեղինակները կայսերական կամ կառավարական շնորհների, շքանշանների փոխարեն երբեմն զրկվել են իրենց կյանքից...

1884թ. բացվում է Գարագաշյան լուսանկարչատունը Բերայի մեծ փողոցի վրա, որ երեխաների լուսանկարները վարպետանական կերպով էին պատրաստվում:

Պողոս Թարքուլյանի «Ֆեբյուս»-ը 1890-ական թթ. ամենահայտնի լուսանկարչատներից է եղել: Այնտեղ նաև բացիկներ էին փաճառվում, իսկ տերը՝ արժանացել է 3-րդ աստիճանի *Mecidiye* շքանշանի (1898) և *Sâniye Nefise* մեդալի (1900):



Պողոս Ֆեբրոս Թարքուլյան
*Սուլթան Մեհմեդ Ե-ի որդու՝ արքայազն Աբդին Մեջիդաղդինի նկարը*

1900թ. «Ֆեբյուս» լուսանկարչական ստուդիան Պողոս Թարքուլյանի, Գրիգոր Տեր-Արսենի և Ալեքսանդր Քաղճյանի կողմից հաստատվել է Բերայի իրենց լուսանկարչական գործիքների խանութի վերին հարկում:

Բերայում գործում էին «Սիմոն» (1886), «Պառնաս» (1890), «Ռոման» (1890), Սիերան Դորմենյանի «Լ. Էպլը» (1890)[57], Մ.Վիրանյանի (1890), «Նադիր» (1896)[58], «Սեզար» (1898), Ա.Հ. Քզըլյան (1898), Մկրտիչ Կարոյան[59] լուսանկարչատները:

Աչիլ Սամանճի և Կիլինց եղբայրների Բերայի «Ապոլլոն» լուսանկարչատունը (1885) նաև զբաղվել է Եվրոպայից բերված լուսանկարչական գործիքների վաճառքով: Լուսանկարչական գործիքների վաճառքով էին զբաղվում մի շարք այլ լուսանկարիչներ և անգամ դեղավաճառներ[60]:

բաղաքի սպասմական լուսանկարներով:

55 Եվրոպայի ամենահայտնի լուսանկարիչը **Պ.Լերեճյանն** էր, որ Սարաքիս Օրմանյան սրահներում բյուր անուցին էր, մրցանակներ է շահել Փարիզի ու Չիկագոյի միջազգային ցուցահանդեսներում:

56 1914թ. լինելիան տպագրության շարքի 10 փաստագ երկու դրոշմաթղթերի մասին առև փոստային նախարարության մասում:

57 Հայտնի է 1911թ. Բերայում Բյուզանդ Քյուրքճյանի «Էպլը»:

58 «Նադիր»-ը արտահանվել է մի քանի կարևոր մեդալների:

59 Ժան(ո)ն Կարո (Մկրտիչ Հովհաննես) Կարոյանը հնարել է իր անունը կրող լուսանկարչական գործիքը *կարոգրաֆ*:

60 1868թ. Վենսան Գասսայյանի դեղավաճառատնում վաճառվում էին նաև լուսանկարչական առարկաներ. ընկեր օծանելիքներ, կոնյակ, բժշկական գինիներ ու հանքային ջրեր, բերումներ էին պատվերներ զավառներից, արտասահմանից:











Արտոնագիր տրված «Ֆեբյուս» լուսանկարչատանը

Գարագաշ եղբայրները 1894թ. 3 լուսանկարչատուն և լուսանկարչական ապարատների վաճառատուն ունեին Բերայի մեծ փողոցի վրա: Նրանք զինվորական դպրոցի և կայսերական ծովային նախարարության մատակարարներն էին, անհրաժեշտ քիմիական նյութեր, գործիքներ և լուսանկարչական սև «սենյակ» էին վաճառում նրանց:

Սկյուտարի հայտնի լուսանկարչատներն էին՝ Արշակ Սեւոլֆճեանի (1890), Թադևոս Չիլաբյանի և Տիրան Հեքիմյանի «Չամլըճա» (1902), Կարապետ Ամիրայանի Բայեզետից Սկյուտար տեղափոխված լուսանկարչատունը (1905), «Սիմոն» (1911), և տասնյակ այլ լուսանկարչատներ:

Դալաթիայում գործողների թվում էր Մկրտիչ Չոպանյանի «Չոպանյան եղբայր» լուսանկարչատունը (1884):

Մահմուդփաշայում գործում էին «Էլ Շարք» (1857), Կարապետ Բաղդասարյանի (1869), Բյուզանդ Քյուրքչյանի «Գևոր»-ը (1910), Չոպանյան եղբայրների լուսանկարչատները (1909) և Մկրտիչ Չոպանյանի նկարչական արվեստանոցը: Վերջինս Վենետիկի Գեղարվեստի բարձրագույն ակադեմիայի շրջանավարտներից է եղել:

Հայ լուսանկարիչները թեև հիմնականում Բերայում էին կենտրոնացած, Զարդ-ի Կերիր կենտրոնական փողոցի վրա, Պոլսի մյուս թաղերում, սակայն արվեստի այս ճյուղը շնորհիվ նրանց, արագորեն սկսեց տարածվել և այս ասպարեզը զարգացավ արդեն ոչ միայն կենտրոնական քաղաքներում, այլ նաև գավառներում, այլուր: Հայրերից ավել լուսանկարչատներ էին գործում կայսրության ողջ տարածքում[61]:

Այնթապում Հովհաննես Հալաճյանի (1884), 1889թ. Մարզվանի «Անատոլիա» քոլեջում հիմնված Դիլդիլյան եղբայրների լուսանկարչատունը 1902թ. արդեն հայտնի էր ողջ Մարզ-

61 **Արա Գյուլեր**. «Դարի լուսանկարիչ» կոչում ստացած պոլսահայ անվանի լուսանկարչի հանրահայտ անձանց լուսանկարների ու բազմաթիվ այլ թեմաներին աշխատանքը պատկերապար հրատարակվում են միջազգային: Նախկինում նաև թղթակցել կինոյի ասպարեզում ներդրում ունեցած այս արվեստագետի արվեստանոցթանգարանն այսօր էլ գտնվում է Բեյօղլու թաղամասի կենտրոնում, Գալաթասարայի փարթամ մոտ, Գյուլերի հայրական շենքում, արվեստագետների սիրելի «Արա» սրճարանի վերին հարկերում:











Սկազցի Յակոբ Շահինեան
(Լուս. Յ. Ս. Սոմբրոց)




«Սիմոն» լուսանկարչատան ազդագիրը

վանին, իսկ 1913թ. նրանք լուսանկարչատներ են հիմնում նաև Սամսունում, Կոնիայում: Կահիրեում հայտնի է եղել Լեբենյանի (1894) լուսանկարչատունը: Առաջին հայկական լուսանկարչատները էին սկսում գործել Հալեպում՝ Կ.Մարյանի (1896), Էնքարաբյան եղբայրների (1896) և Հ.Պէկեյանի լուսանկարչատները Սմիրնում (1890), Ռոդոստոյում Մ. Դադիկօղլյանի (1900), Երզնկայում Տեր Ղազարյանի (1906), Արփին Սոնփանյանի լուսանկարչատունը Կեսարիա-Թալասում(1906): Կիպրոսում Հակոբ Յերեմյանն լուսանկարչատուն է բացում 1908թ. և այլն[62]:

Հատկանշական են 1902թ. Ռոմանիայում հայազգի Կ.Չերբեզի կողմից լուսանկարչության սիրահարների միության հիմնելը, իսկ 1906թ. Էրզրումում կովկասահայ կինոռեժիսորների կողմից՝ կինոթատրոն բացելու փաստերը: Արվեստի այս ճյուղի վարպետների ու նրանց ավանդույթների հայ շարունակողների այսօր էլ կարելի է հանդիպել նախկին կայսրության տարածքներում:

62 Օսմանյան կայսրության լուսանկարչության մասին բավականին արժեքավոր աշխատություն է հրատարակվել մի քանի տարի առաջ Ստամբուլում, որ գերակշռող թիվ են կազմում հայազգի արվեստագետները:





## ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ, ՍՊՈՐՏ[1]




19-րդ դարի սկզբին արևմտահայ մրնոլորտում շատ ավելի հաճախ ենք սկսում հանդիպել սպորտի մասին հիշատակությունների: Որ ավանդական մարզաձևերը ժողովրդական տոնախմբությունների, տարբեր առիթներով հավաքների ու դաշտահանդեսների, շրջիկ թատրոն-կրկեսների մաս են կազմել՝ անհերքելի է: 1846թ. Կ.Պոլսի Բերա կենտրոնական թաղամասում ռնն Հովհաննես Գասպարյան առաջին լարախաղացությունն է ցուցադրել, որի նախակարապետները են եղել տարոնահայերը:

Եվրոպական առումով սպորտի մասին Օսմանյան կայսրությունում կարելի է խոսել 18-րդ դարի վերջերից և 19-րդ դարի սկզբներից: 20-րդ դարի սկզբից կարելի է խոսել նաև պրոֆեսիոնալ մարզաձևերի, մասնավորապես ֆուտբոլի մասին: Այս ժամանակ է, որ սկզբնավորվում են բազային մարզական ակումբները, առաջին մարզիչները են հանդես գալիս, առաջին մրցումները հայկական, հայ-հունական բաղերի ու ակումբների միջև: Սրանց առաջամարտիկները եվրոպական, անգլիական երկրներում եղած, այնտեղի ուսումնական հաստատություններում սովորած, մարզական կյանքին ծանոթ կամ մասնակիցներ են, որոնք վերադարձին իրենց ունեցած ոգևորությունը, փորձը, վարպետությունը ներդրել են մարմնամարզության տարբեր ձևերի, ֆուտբոլային ակումբների, ձիավարժության դպրոցների, առագաստանավերի մրցույթների[2] կազմակերպման մեջ: Դիվանագիտական ներկայացուցչությունների անձնակազմը, հյուպատոսների կամ արդեն Պոլսում ապրող օտարները շարունակել են իրենց մարզական ավանդույթները նաև Պոլսում[3]: Պոլսում

1 Մեր ուսումնասիրությունը պատրաստ էր, երբ ծանոթացանք Հայկ Դեմոյանի «Հայկական սպորտը և մարմնամարզությունը Օսմանյան կայսրությունում» պատմ-մենագրությանը (Երևան, 2009): Այն հետաքրքիր փաստական, լուսանկարչական նյութ է պարունակում:

2 1910թ. ի նպաստ Օսմանյան նավատորմի կազմակերպված է առագաստանավերի մրցույթ, որ հաղթում է Պետո Սարաճեալյանը:

3 Ստամբուլի ֆուտբոլային լիգան հիմնադրվել է 1901թ. անգլիացիներ Ջեյմս Լաֆոնտենի և Հորացիոս Արմիթաժի նախաձեռնությամբ: Սոնեծվել են բավական առաջին հայտնի ֆուտբոլային ակումբները: Կ.Պոլսում սպորտի հիմնադիրներից է եղել Սոուլիդոնում մարմնամարզական կրթություն ստացած իրեցիազգական Շաքիմ Սրոբ Թարթանը (1874-1957), որը օսմանյան բանակի սպա է եղել: Շնորհիվ նրա, ֆիզկուլտուրան մտցվել է դպրոցական, ռազմական ճեղբանների դասացուցակներում: Նրան «մեր աշխատանքից» է համարել Շավարշ Քրիսյանը: Վերջինս մի կարճ ընթացք Քրիսյանի օրինակով օսմանցիներն ընթրել մարզաբերը է լույս ընծայել: Թարթանյան սպորտային կազմակերպություններից հայտնի են եղել «Օսմանյան ուժի ընկերակցությունը», առնչված ազգայնական նոր զարգացումներից:



Մեզրեում կապուցինյան հայրերի ս. Ժոզեֆ դպրոցի աշակերտները մարմնամարզության դասին

ու այլ քաղաքներում հայ ու օտարակերտ մամուլը մինչ այդ արդեն ճախապայմաններ էին ստեղծել իրենց էջերում ծանոթացնելով սպորտ կոչված զբաղմունքի տարբեր տեսակների, նրա առողջապահական օգտակարության ու զվարճանքի տեսակ լինելու մասին: Մարմնամարզական իրական դաստիարակության օջախներ էին դարձել ժամանակակից երկրում արդեն տարածված բողոքական միսիոներների դպրոցները, որ տարբեր ազգերի երեխաներ ամերիկյան կրթական ծրագրերով շարժվելով հանդերձ, տոքը տալով ուսուցման օտար համակարգերին, մեծապույն կարևորությամբ ներկայացնում էին նաև մարմնամարզությունը, ֆիզկուլտուրան: Դրանք մաս էին կազմում դպրոցների դասացուցակների, առանձին սպորտային հրապարակներ հատկացնելով մասսայական զբաղմունքների համար, չմոռանալով նաև անհատական ձևերի տարածումը: Հայտնի են եղել «Ռոբերտ» քոլեջի մարզական խմբերը, ֆուտբոլային թիմը: Մանավանդ պատանիների ու երիտասարդների շրջանում սպորտը նմանակելու երևույթ էր դառնում: Գուցե այդ է պատճառը, որ անատոլիական բոլոր այն շրջաններում, որ միսիոներական հաստատություններ են եղել, դիվանագիտական ներկայացուցչություններ, նրանց սպորտային կյանքն ուղեկցվել է հարակից վայրերի հայկական, հունական, թուրքական սպորտային նման ակումբների հիմնադրմամբ, որոնք վերածել են պարբերական մրցումների, զարկ տալով երկրում մարմնակրթական մշակույթին:

Հայկական պարբերականները որոշակի ճյուղ են ընձեռնում Օսմանյան կայսրությունում սպորտի սկզբնավորման ու զարգացման ուսումնասիրության համար: Մեծ մասամբ այն կապվում է դպրոցական կյանքը լուսաբանող նյութերի հետ: Որոշ պարբերականներ ունեցել են «դպրոցական կյանք» ներախորագրով բաժիններ, որ խնդրո առարկա են եղել հայկական դպրոցների հետ կապված ամենատարբեր հարցեր: Հենց այս բաժիններում էլ գտնում ենք մեզ հետաքրքրող նյութերը: Նյութերի մյուս տեսակը՝ դրանք հայտարարությունները են եղել, որոնք ծանուցել են այս կամ այն քաղի մարմնամարզական ակումբների կուլբների կամ ֆուտբոլային թիմերի հանդիպումների մասին: Հայկական և հունական ակումբներն այս ոլորտի առաջնեկներն են եղել: Դրանք հիմնադրվել ու գոյություն են ունեցել Պոլսի համարյա բոլոր հայկական ու հունական թաղերում, երբեմն անկախ, երբեմն էլ այս կամ այն վարժարանին կից: Մարզական, մասնավորապես ֆուտբոլային խմբերը մեծ ժողովրդականություն էին վայելում ինչպես Պոլսում, այնպես էլ մյուս քաղաքներում:

1888թ. կարողիկ հայ համայնքի կազմակերպած մեծ պարահանդեսի հասույթը սրահիմնադրմներից Զեյա Գոքալփի և Էմինի փաշայի կողմից: Արագորեն նա տարածվել է ողջ երկրով մեկ, ունենալով շուրջ 700 մասնաճյուղեր:









[illegible] հայկական դպրոցի ֆուտբոլի խումբը

մադրվում է ի նպաստ «Հակոբյան ձիավարժական դպրոցին» և աղքատախնամ հիվանդանոցին: Կաթոլիկ համայնքի հիմնական բարերարներն ամիրայական դասի ներկայացուցիչներն են եղել, որոնք մեծ մասամբ եվրոպական երկրների կյանքին ու կենցաղին ծանոթ լինելով, ձիավարժությունը որպես ընդօրինակելի, ընտրյալ սպորտաձև են ընդունել, ամեն կերպ աջակցել նրա գոյությանը: Չմոռանանք, որ Մուշի շրջանը հայտնի է եղել ձիարուծությամբ: Այն գոյություն ուներ պատերազմների ժամանակ թուրքական բանակին ձիերով ապահովելու նպատակով: Ձիավարժության նկատմամբ հետաքրքրությունը դուրս է եկել պոլսահայ մտնողորտի շրջանակներից, ընդհանուր հետաքրքրության ու նմանակելու առարկա դարձել: Եվ պատահական չէ, որ այս պարահանդեսը տեղի է ունեցել ֆինանսների նախարար Մահմուդ Ջելալեդդին փաշայի բարձր հովանավորությամբ:

Մարմնամարզական և մասնավորապես ֆուտբոլային խմբերը ակնկալում էին նաև հասուկ մարզահագուստների պահանջ: 1908թ. Բերայում, ղեպի թունել տանող ճանապարհին գործող «Մինևրա» կերպասեղենի վաճառատուն-կարի արհեստանոցը Օ.Չզգուրյանի և Արշակ Թորոսյանի տնօրինությամբ, իր վրա է վերցնում հայ մարմնամարզիկների հագուստները կարելու հոգսը: Մինչ այդ նրանք 1904-5թթ. Մարսելի միջազգային ցուցահանդեսում «Ոսկի մեդալ» և «Առաջին մրցանակ» էին շահել:

Մի շարք հայտնի խմբեր, մասնավորապես թաղային սպորտային, ֆուտբոլային խմբեր և ակումբներ պարբերաբար հանդիպումներ, մրցումներ են ունեցել մյուս թաղերի հայկական, նաև թուրքական, հունական ու այլ ազգային ակումբների հետ, որով զարկ է տրվել սպորտի զարգացմանը[4]: Այս խնդրին նպաստել է շատ կարևոր մի հանգամանք: 19-րդ դարում լուսավորական, եվրոպականացման շարժմամբ երկիրը արդիականացնելու, վերափոխելու ձգտումներով աղեցուն բոլոր կառավարական և մտավորական խավը սպորտի մեջ տեսել է եվրոպական, ամերիկյան հասարակական արժեքներին ներգրավելու ուղիներից մեկը: Նրանք բոլոր երիտասարդությանը պիտի փորձեին կրթել, մարզել, հասցնել միջազգային մրցումների հրապարակներ[5] և բոլոր երիտասարդը մինչ զինվորագրվելը ֆիզիկապես լավագույն վիճակի մեջ պետք է լիներ: Այս նպատակին է ծառայել հրավիրյալ օտար մասնագետների աշխատանքը: Նրանք ստեղծել են մարմնամարզական կազմակերպություններ, որոնք արագորեն տարածվել են երկրով մեկ, անգամ պարբերական հրատարակել: Մինչ այդ նրանք

4 Sevan Ataoğlu, *Istanbul Ermenilerinin Spor Tarihi*. Tarih ve Toplum. 2000. cilt 34, sayi 202, s.17-20.

5 Ստեղծվել են թուրքական առաջին հայտնի ֆուտբոլային ակումբները՝ «Գալաթասարայ» (1905), «Ֆեներբախչե» (1907): Անհանայտնի մարզադաշտերից է եղել «Union Club Ittihad Spor»-ը, որ անցկացվել են քաղաքային մրցումներ, «օլիմպիական խաղեր»:

պետք է ունենային սեփական հրապարակներ-մարզադաշտերը: Ահա այդ մի քանի մարզադաշտերն էլ չափազանց օգտակար են եղել Պոլսում միջթաղային, միջհամայնքային, միջդպրոցական մրցումների, վարժանքների համար: Թուրքական շրջանակներում այն սկզբում ոչ միայն խանդավառություն չի առաջացրել: Որոշ վայրերում խավար շրջանակների կողմից այս շարժումը նույնիսկ հետապնդվել է: Ազգի երևելիները, կրթյալ խավը սկսել է գործել նաև այս կարևոր ուղղությամբ, քանզի ազգային կազմակերպությունների, ազգի երևելիների համար ամենակարևոր խնդիրներից է եղել երիտասարդության կրթության հարցը, որի համար զոհողությունները անսահման են եղել: Կրթությանը այս դեպքում հավելվել է նաև մարմինը կրթելու, առողջ սերունդ պատրաստելու նպատակը: Այս հարցը չափազանց առօրեական է եղել: Ժամանակի մամուլից, գրական գործերից ակնհայտ է, որ մակաբույծ երիտասարդների մի խավ, փորձելով իրեն եվրոպական հովեր տալ, պոլսահայ կյանքի առանց այդ էլ դժվարին վիճակը խաթարել են իրենց անգործությամբ, ծուլություններով: Առողջապահական հոդվածները, ինքնուրույն և թարգմանական գրքույկները[6], դպրոցներում կազմակերպվող (նաև աղջկանց վարժարաններում) հայտնի մարդկանց (բժիշկներ, գրողներ, երաժշտագետներ), տարբեր հեղինակավոր անձանց հետ հանդիպումները միտված են եղել զերծ պահելու աճող սերնդին բազմաթիվ վնասակար գայթակղություններից, եվրոպական «որոգայթներից»: Մարմնակրթական շարժումը, սպորտով զբաղվելը դրա դեմ պայքարի լավագույն հնարավորությունն է նկատվել: Հովանավորներ, բարերարներ, բարեգործական հավաքույթներ... Մարմնամարզական, սպորտային բնագավառը նաև կոչված էր հոգեբանորեն լրացնելու երիտասարդության հատուկ փառասիրական զգացումները: Այն է՝ մյուսներին հաղթելու, հերոսական կեցվածք ընդունելու, թաղում, դպրոցում աշխուժացման հրաշալի մի ջիղ ներդնելով ի դեմս մարմնակրթության, ինչպես ընդունված է եղել անվանելու այս շարժումը: Տարիներ անց, 1911թ. հիմնադրված «Մարմնամարզ» պարբերականը դուրս է եկել վերոհիշյալ հանգամանքների սահմաններից և ավելի քաղաքականացված ուղի է բռնել: Այն է, հայությանն ուղղված իր կոչում նա ակնկալում է, որ ֆիզիկական դաստիարակությունը մեծ դեր է խաղալու եվրոպական ազգերի դաստիարակությանը հավասարվելու, քաջության, ինքնավստա-



Իզմիրի «Հայ որսորդների ակումբ»-ի ֆուտբոլի խումբը (1912)

6 *Համառօտ մարմնամարզութիւն ի պէտս վարժարանաց և առանց դաստիարակի առանձինն ուսանողաց*, թարգմ. Կ.Յ.Փ., Կ.Պոլիս, 1879: Երկեր. *Մարմնամարզութեան առանց գործիքի*, թարգմ. Վ.Մարգարեան, Կ.Պոլիս, 1879: L.G.Kumlien, *Անձնական մարմնամարզը*, թարգմ. Եզնիկ Քաջունի, Կ.Պոլիս, 1912: Շավարշ Քրիսեան, Յովհաննես Հինդլեան, *Ֆութ-պոլը և իր կանոնները մասամբ. հայ Ֆութ-պոլիստներ*, Կ.Պոլիս, 1913:





հության, պայքարից չվախենալու զգացում դաստիարակելու, հանուն ազգի պայքարելու կամ ոչնչանալու զգացումով օժտելու, անտարբերությունը թոթափելու, ներշնչելու գինետուններից ու անառականոցներից հեռանալու կորով: Այս ամենին պետք է օժանդակեր հայկական օլիմպիական ավանդական խաղերի կազմակերպումը: Պոլսի տեղի ունենալիք եզրափակիչ մրցմանը պիտի մասնակցեին նախամրցային հաղթող խմբերն ու առանձին մարզիկներ:

Չմոռանանք ասել, որ հայերեն ու հայատառ համարյա բոլոր պարբերականներն այս տասնամյակներում եթե անգամ չեն ունեցել «Մարզական կյանք», «Դպրոցական» ենթախորագրերը, այնուամենայնիվ արձագանքել են մարզական կյանքի նորույթներին, տպագրել հերթական խաղերի ժամանակացույցը և սպորտին վերաբերող հոդվածներ:



«Տորք» ֆուտբոլի խումբը

Պոլիսը եղել է Օսմանյան կայսրության մարմնակրթության, սպորտի դարբնոցը: 1853թ. Պատրիարքարանի սահմանած Ուսումնական խորհուրդը, ի թիվս բազմաթիվ այլ կարևոր խնդիրների, ընդգրկել է պատանիների մարմնակրթական ուսուցման կարևորությունը: Այն օտար դպրոցների օրինակով, պետք է որ ներառվեր հայկական վարժարանների ուսումնական ծրագրերում: Մինչդեռ մարմնակրթական օղակները դուրս են եկել զուտ վարժարանական շրջանակներից, դարձել թաղային, քաղաքային, միջհամայնքային կարևորության միավորումներ: Մեկը մյուսի օրինակով ստեղծվել են ակումբներ, ապա նաև՝ ֆուտբոլային թիմեր: Քաղաքի, որպես մարզադաշտ ծառայող տարածքներում ժամանակ առ ժամանակ տարբեր մարզաձևերից մրցումներ են կազմակերպվել: Հայտնի է, որ այս ընթացքում 9-ամյա մաքրիքեոյցի Հարությունը քաղաքի ոստիկանական զորքերին մարզանքի փորձեր է ցուցադրել, դրանց ղեկավար Ռաբիկ փաշայի հրամանով ու փոխարենը՝ շքեղ ոսկի ժամացույց նվեր ստացել փաշայի տիկնոջից:

1907թ. Սիր Սիրյանի կողմից հիմնադրվում է «Րաֆֆի» մարմնամարզական ակումբը Սկյուտարում: Այն կոչվել է առաջադիմական միություն, որի նպատակն էր երիտասարդների ֆիզիկական դաստիարակությունը: Ղեկավարել է ակումբը Կարապետ Դոլլերյանը: Տարբեր մասնաճյուղերի կողմից շքեղ մարզահանդեսների և օլիմպիադաների կազմակերպումը սկսում էր սովորույթի ուժ ձեռք բերել քաղաքի տարբեր թաղերի երիտասարդական ակումբների համար: Մրցումներին երբեմն ելույթ էր ունենում «Րաֆֆի» արդիական նվագախումբը: Պահպանված ազդագրերի և թերթերի նյութերը մանրամասն պատկերացում են տալիս, թե ո՞ր ձևից, ո՞վ և ի՞նչ պայմաններում է հաղթել: Այնպես որ, սպորտային կյանքը, մարզական դաստիարակությունը Պոլսում, հայ համայնքում, միջհամայնքային կյանքում կարևոր

ծրագիր էր ծառայելու հայկական դպրոցների սպառտական կազմակերպություններին: Այն «օրգանն էր ազգային ֆիզիկական կրթության և առողջ կյանքի սիրահարների»: Կարճ ժամանակ անց նրա արտոնատերն է դառնում Շավարշ Քրիսյանը: 10 համար որպես ամսաթերթ լույս ընծայված, մարզական կյանքը հայրենասիրական գաղափարներով ղեկավարող պարբերականը վերածվել է կիսաամսաթերթի, որը վկայում է նրա ունեցած հաջողության մասին: Նույն անվանմամբ այդ օրերին Մարզիֆոնում հիմնադրվում է մարմնամարզական ակումբ: Օսմանյան կայսրությունում սպորտի զարգացման նախաձեռնողներից Շավարշ Քրիսյանը համակողմանիորեն էր մոտեցել այս խնդրին: Արտոնատեր Շավարշ Քրիսյանը և պատասխանատու տնօրեն Կ. Ոսնճյանը որպես օրինակ ունենալով ֆրանսիական *La Culture Phisique* պարբերականը, «Մարմնամարզում» սկսել են հրապարակել ազգային ֆիզիկական կրթության և առողջ կյանքի



Սամաթիայի «Վահագն» մարմնամարզական ակումբը

սիրահարների այս պատկերազարդ ամսաթերթը, որը հետագայում կիսամսյա հանդեսի է վերածվել: Պարբերականը տպագրվել է Գ. Պաղտասարյան, ապա Օ.Արզումանի տպարաններում: Նա իր շուրջն էր համախմբել Օսմանյան կայսրությունում նոր զարգացող սպորտի համակիրներին, սպորտսմեններին, դրանց հովանավորներին: Նրա առաջին համարի շապիկին Շավարշ Քրիսյանի 1908թ. նկարն է եղել: Մյուս համարների շապիկներին եղել են Պոլսի հայտնի սպորտսմենների, ըմբիշների նկարները: Երբեմն պարբերականը որպես բաշխելիք նվիրվել է հայաշատ նահանգների դպրոցներին, որբանոցներին, խթանելով սպորտի զարգացումը: 1912թ. Ալեքսանդրիա գնացած Շավարշ Քրիսյանը հիմնում է 40 անդամներ ունեցող «Կամք» մարմնամարզական միությունը և կրկին վերադառնում Պոլիս: Կահիրեի Գալուստյան դպրոցը ֆուտբոլի թիմ և մարմնամարզական միություն է ստեղծում: Շավարշ Քրիսյանը զոհ է գնացել Մեծ եղեռնին:

«Մարմնամարզ»-ը, որ հաճախ էր հանդես եկել նոր ակումբների, ֆուտբոլի հայկական լիգայի մրցաշարերի կազմակերպմամբ, հին խմբերի վերակազմման գործով զաղարեց: Նա թղթակից համակիրների բանակ էր ունեցել հայաշատ նահանգներում, հարակից երկրներում: Նրան փոխարինելու է գալիս Հայ մարմնակրթական ընդհանուր միության պաշտոնաթերթ «Հայ սկաուտ»-ը:

Օլիմպիական առաջին խաղերի կազմակերպմանն ընդառաջ «Մարմնամարզ»-ի խմբագրության հրավերով ի մի են հավաքվել մարմնամարզական բոլոր միությունների, ակումբների, խմբերի ներկայացուցիչները: Ընտրված կազմակերպիչ մարմնի աշխատանքի շնորհիվ այս խաղերին իրենց մասնակցությունն են բերել Պոլսի բոլոր ակումբները: Ըստ պայմա-





նավորվածության, պետք է մասնակցեին նաև Զմյուռնիայի «Հայ որսորդաց ակումբի» անդամները: Համաճարակային արգելափակման (կարանտին) պատճառով զմյուռնիացիները չեն կարողացել իրենց մասնակցությունը բերել օլիմպիադային:

1911թ. մայիսի 1-ին, Պոլսում, Քադըքեոյի «Union club» մարզադաշտում տեղի է ունենում Առաջին հայկական օլիմպիադան: Մասնակցում է «Քնար» նվագախումբը: Օլիմպիադան ընդգրկում էր հետևյալ մարզաձևերը՝ 100 մ վազք, 250մ և 500մ վազք, 1 մղոն, հեծանվավազք, գնդակը ցանցի մեջ գցելու, վազք՝ արգելքներով, բոլիչ բարձրություն, սկավառակի նետում, գնդի նետում, թռիչք երկարություն: Հաղթողները ոսկե և արծաթե մեդալների են արժանանում:

Օլիմպիադան զարկ էր տալիս նոր ակումբների, մարզական միությունների ստեղծմանը և անկասկած բացառիկ նշանակություն է ունեցել երիտասարդ արևմտահայերի կյանքում: Սամաթիայում մարմնամարզական «Վահագն» ակումբ է կազմակերպվում: «Արտավազդ» սպորտային ակումբ է հիմնվում Քուրուչեշմեյում: 1912թ. «Արծիվ», «Արտավազդ», «Ահարոնյան», «Սասուն», ֆուտբոլի խմբերը Պոլսում մրցումներ էին անցկացնում արդեն որպես ճանաչված թիմեր: Սկյուտարի «Բերպերյան» վարժարանում Ա.Նիկողոսյանի ղեկավարությամբ ֆուտբոլի խումբ է կազմվում: Պոլսի համարյա բոլոր հայկական թաղերում մարզական ակումբները իրենց մեջ ընդգրկել են նաև ֆուտբոլային թիմեր: Ահա դրանք՝ Ահարոնյան (Պեշիկթաշ), Արաքս, Մարմնամարզական և Էսայան (Բերա), Արարատ (Նշանթաշ), Արծիվ, Կիլիկիա և Տորք (Գումգափու), Արտավազդ (Գուրուչեշմե), Պորփի (Գընալը կղզի), Ժողովրդային (Մաքրիգյոյ), Մասյաց (Շիշլի), Մխիթարյան (Գատըգյոյ), Նոր դպրոց (Բանկալթը), Սանթրալ (Ղալաթիա), Սասուն (Պալաթ), Րաֆֆի (Սկյուտար) և այլն: Այս թիմերը մասնակցել են համաօսմանյան մրցումներին: Երբեմն հայ մարզիկները խաղացել են նաև հունական խմբերում:

Հայկական երկրորդ օլիմպիադան տեղի է ունենում 1912թ. հունիսի 3-ին, «Քնար» նվագախմբի ուղեկցությամբ: Տպագրվել են օլիմպիական խաղերի անցկացման երեք մասերի ծրագրերը: Ա մաս՝ 100 յարդ, կես մղոն վազք, ցատկ երկարություն, ձողացատկ, սկավառակի նետում՝ մեծերի համար: Բ մաս՝ փոքրերի համար՝ 100 յարդ վազք, քառորդ մղոն վազք, ցատկ բարձրություն, ցատկ արգելքներով, երկաթի նետում: Գ մաս՝ բարքեր կազմել, ճիզակ նետել, երեք քայլ ցատկ, մեկ մղոն վազք, 2 մղոն հեծանվավազք, վազք ակումբների միջև: Մասնակցության համար պարտադիր է եղել սպորտային համազգեստների կրելը: Հայտարարության մեջ նշվում է մուտքի տոմսակների մասին, մրցանակների հանձնման և այլ՝ լուսանկարների մասին: Նախապես պատրաստված շքանշանների լուսանկարները տպագրվել են:

1912թ. հուլիսի 29-ին Պոլսում տեղի է ունենում հայ մարմնամարզական միությունների առաջին կոնգրեսը: Հայ մարմնամարզական միության առաջին համաժողովի բացման արարողությանը ականատեսները խոսել են արևմտահայ միջավայրում մարմնակրթության վիճակի, նրա զարգացման հեռանկարների, կատարվելիք աշխատանքների, սպորտի մասսայականացմանն ուղված ծրագրերի ու ծախսերի, գործադիր մարմինների ընտրության, բյուջեի և այլ բազմաթիվ հարցերի մասին: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին միայն Պոլսում գործել են շուրջ 47 մարզական ակումբներ: Այդ օրերին «Ահարոնյան» և «Նարբեյ» հայկական ֆուտբոլային թիմերը մրցում են Պեշիկթաշում: 1912թ. սեպտեմբե-

րին Քաղքեդոնի միացյալ ակումբի դաշտում «Ֆեներբահչե» ակումբի կողմից առաջին ազգամիջյան սպորտային մրցումներ են կազմակերպվել: Հայերը առաջին տեղերն են գրավել հետևյալ մրցաձևերից՝ հեծանիվի, մոտոցիկլի, ձողացատկ բարձրություն, գնդի, սկավառակի, նիզակի նետում, 100 յարդ վազք: Մասնակցում էին Քաղքեդոնի «Ֆենիքս» ակումբը, Սահակյան վարժարանի և թուրքական Ռուշտիյեի (դպրոցի) ֆուտբոլի թիմերը: Սամաթիայում նրանց խաղի հաշիվը լինում է 2:0:

Մարմնամարզական ակումբների կազմակերպումը վարժարաններում սկսում է դառնալ արժանապատվության, դպրոցականների ինքնահաստատման, իսկ վարժարանների համար՝ հեղինակության խնդիր: 1912թ. Իզմիրում «Աղլաս» սպորտային ակումբ է հիմնադրվում: 1912թ. Էրզրումում հիմնադրվում է երիտասարդական մարմնամարզական ակումբ, որի մրցումները անցկացվում են քաղաքի փալի ու այլ պաշտոնյաների ներկայությամբ: Տարբեր մարզաձևերի մրցումներում մասնակցում էին հարակից վայրերից եկած մարզիկներ, հեծանվորդներ:

Հայկական երրորդ օլիմպիադան կայացել է 1913թ. հունիսի 16-ին, Պոլսո Հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի (1868-1947) բարձր հովանավորությամբ և Կոմիտաս վարդապետի նախագահությամբ, որը վերջում մրցանակներն է հանձնել, միշտ նույն «Union club»-ի մարզադաշտում, «Քնար» նվագախմբի մասնակցությամբ, Բարսեղ Կանաչյանի և Վ.Սրվանձտյանի ղեկավարությամբ: Այս անգամ արդեն օլիմպիական խաղերին իրենց մասնակցությունն էին բերել Զմյուռնիայից, Կեսարիայից, Ադաբազարից եկած մարզիկները, սկաուտներ, արենուշներ: 1913թ. խաղերում յարդի, ձողի փոխարեն ներմուծվել է մետրի չափը, որը համապատասխանում էր ժամանակի միջազգային համակարգին: Սահմանվել են ռեկորդներ:

Մանկավարժ Հովհաննես Հինթլյանի 1913թ. հիմնադրված «Նոր դպրոց»-ի ֆուտբոլային խմբում, Գրիգոր Հակոբյանի կողմից Թուրքիայում առաջինը լինելով Բոյ-սկաուտական շարժմանը ծանոթացնող արշավներ են կազմակերպվել: Բոյ-սկաուտական խմբեր են ստեղծվել Նշանթաշի, Կարագյոզյան, հայկական մյուս վարժարաններում, որբանոցներում: Քաղքեդոնում հիմնադրվում է «Մասիս» սպորտային ակումբը 5 անդամներով: Հիմնադիր անդամներից հայտնի են Թերճիմանյանը, Նախնիկյանը, Ս.Քալենդերը: 1913թ. հունիսի 16-29-ը կայանում են Քաղքեդոնի միացյալ ակումբի Հայկական երրորդ օլիմպիական դաշտային և մարմնամարզական մրցումները՝ Պատրիարք հոր հովանավորությամբ, Պոլսի «Սպորտինգ Կլուբ»-ի հետ միասին:

1913թ. Սամսունի Վեզիր Քյոփրու Քազայում՝ «Արծիվ» մարմնամարզական ակումբն է հիմնվում: Կեսարիայի Ժառանգավորաց վարժարանի մայիսյան մրցումներում 50, 100, 200, 1000 մետր վազք ու տարբեր մարզաձևեր են ներկայացվում:

1913թ. Իզմիրում սպորտային, մասնավորապես ֆուտբոլային մրցումներ են կազմակերպվում Պարտիզակի «Արծիվ» միության հետ համատեղ: Իզմիրի «Աղլաս» ֆուտբոլի խումբը մրցում է «Շանթ» խմբի հետ 4: 0 հաշվով: Իզմիրի հայկական «Աղլաս» ֆուտբոլի խումբը մրցում է թուրք-հունական միացյալ «Քոչա Էլի» ակումբի հետ՝ 3: 1 հաշվով:

1913թ. Բոյաջիքեոյում 16 տարեկանից ցածր երեխաների բարոյական, ֆիզիկական և մտավոր զարգացմանն աջակցելու համար սպորտային ակումբում և Ֆողքըլը մարզահ-





րապարակում մրցումներ են կազմակերպում՝ վազք (տարբեր հեռավորություններ), բռնչք բարձրություն, սկավառակի նետում, ձողացատկ, գնդի հրում, բռնչք երկարություն, և այլ ձևեր: 1913թ. Կոնիայում հիմնադրվում է Ենենանյան վարժարանում և «Մասեաց» միությունը, իսկ Սամսունում՝ Երիտասարդաց միությունը: Մարզական խմբեր են գործել Մանիսայում (Արարատ), Էդիրնեյում, Ուրֆայում, Երզնկայում (Ժայռ), Տրապիզոնում (Արծիվ), Սամսուն (Արծիվ), Տարսոնում (ս.Պողոս վարժարանում), Կարինում (Սանասարյան վարժարանում), Սիվրի Հիսարում (Առյուծ), Սեբաստիայում (Վարագդայան), Մարզվանում (Շավարշյան, «Անատոլիա» քոլեջում) և այլուր: Դորթյոլի Կեդրոնական վարժարանի «Միավան» միությունն իր կազմում ունեցել է տարբեր տարիքների մի քանի ֆուտբոլային խմբեր՝ «Ռուբեն», «Լևոն», «Հերուն»: Տեղի բնակչությունը, նաև ղեկավարությունը խանդավառ միջամտություն են ցուցաբերել այս շարժմանը: Նրանց համար հարմար դաշտեր են ձևավորվել, որպեսզի մրցումներ անցկացվեն: Հիմնական մարզաձևերն են եղել՝ տարբեր երկարության վազքը, վազք՝ արգելքներով, ցատկ երկարություն, ցատկ բարձրություն, ձողացատկ, սկավառակի, գնդի, երկաթի նետումներ, հեծանվավազք, ֆուտբոլ: Ոգևորող տարբեր հանգամանքներ են մտածվել, սպորտային հագուստներ, մեդալներ ու նվերներ տրվել հաղթող մարզիկներին, խմբերին: «Մարմնամարզը» պարբերաբար անդրադարձել է Պոլսի, հայկական նահանգների, Կիլիկիայի, Լիբանանի, Սիրիայի, ինչպես նաև եգիպտահայության, բուլղարահայության, ռումինահայության մարզական միությունների գործունեությանը, տպագրել փաստական, լուսանկարչական հարուստ նյութ:

Զմյուռնիան եղել է արևմտահայության կյանքում մարմնակրթության, սպորտի առաջամարտիկներից: 1900թ. Իզմիրում Պետրոս Մելիքյանի ջանքերով կազմակերպվել է առաջին հայկական ֆուտբոլի խումբը: Զմյուռնիայում այս ասպարեզի նախաձեռնողներն են եղել Գրիգոր Ճոլոյանը, Զավեն Կույումճյանը, Արթուր Էլմասյանը: Վերջինս ֆրանսիական իր փորձը ներդրել է տեղի՝ մասնավորապես Մեսրոպյան և Ազգային դպրոցներում, 1901թվականից պարբերաբար կազմակերպել մրցումներ: Նա ստիպված է եղել թողնել Զմյուռնիան, սակայն նրա գործի հետևորդ-աշակերտները շարունակել են այն: 1905թ. Իզմիրում հիմնվել է Մեսրոպյան սպորտային ակումբը:

1908թ. Իզմիրում կազմակերպվում են «Վասպուրական», «Քնար», «Ղարաբաշ», «Վարդանյան» և «Կորդելիո» հայկական ֆուտբոլային խմբերը:

Իզմիրում հայտնի են եղել «Արմենիա», «Սահակյան», «Հայ որսորդական միություն» սպորտային ակումբները: Վերջինս ամենաբազմամարդն է եղել և հաճախ է մրցել տեղի հունական ֆուտբոլային թիմերի հետ:

1910թ. անցկացվում է «Արծաթ բաժակի» խաղարկման մրցումները, որի հաղթողը մասնակցելու էր միջազգային մրցումներին: 1911թ. «Արմենիա» ֆուտբոլի թիմը Իզմիրում առաջին անգամ գրանցվեց հունական ֆուտբոլային ֆեդերացիայում: Նա դարձավ տարվա չեմպիոն: «Արմենիան» հրավիրվում է Պոլիս, Գալաթասարայ, հայկական միացյալ «Ֆեներբահչեի» և «Քաղքեդոնի» միացյալ ակումբների հետ մրցման: Իզմիրում հունական «Պանիոն» և Հայ Որսորդական միության ֆուտբոլային թիմերի խաղը 1911թ. հոկտեմբերին, ապա 1912թ. մարտին, նրան դարձնում են Զմյուռնիայի չեմպիոն: Իզմիրի «Հայ որսորդաց ակումբ»-ի ֆուտբոլի խումբը մրցել է Պոլսի Գալաթասարայի, Ֆեներբահչեի ֆուտբոլային խմբերի հետ:

Իզմիրում սպորտային կյանքը չի սահմանափակվել ֆուտբոլային մրցումներով: Ավելին, այնտեղ սկիզբ առած մարմնամարզական շարժման արդյունք է ֆուտբոլը, որն այնքան մեծ տարածում էր գտել և այնպիսի հաջողությունների էր հասել, որ հրավիրվել են տարբեր քաղաքներ, և մասնավորապես, նաև Պոլիս՝ մասնակցելու երկրի առաջնություններին: Այս ակումբներն իրենց մեջ ներառել են տարբեր մարզաձևեր և միացյալ մրցումներ անցկացրել՝ սկսած դպրոցական, թաղային, համայնքային շրջանակներից մինչև քաղաքային, այլ ազգերի ակումբների հետ: 1912թ. Իզմիրի «Որսորդների միությունը» հիմնադրեց մարմնամարզական «Սենթուրի կլուբ», «Ջենբելմանս քայժ» ակումբ: Նրանք հունական «Ապոլոն», «Կոբոնիկո» թիմերի հետ ֆուտբոլի մրցումներ են անցակացնում: Այս ակումբների հրատարակած Կանոնագրերը վկայում են նրանց գործունեության, նպատակների մասին: Իզմիրի հայոնի «Վասպուրական» սպորտային ակումբը Փոնքայի «Փանիոն» սպորտհրապարա 1913թ. հոկտեմբերի 22-ին տարեկան մրցումներ է անցկացրել 400, 1500մ վազք ու մնացած սպորտային շատ ձևերից: Զմյուռնիայի աղջկանց ամերիկյան վարժարանում «շվեդական» մարզանքը և սպորտը կարևոր պայման են համդիսացել (1913): «Մարմնամարզ»-ը հատուկ կոչանք է կազմակերպել այն օրիորդների համար, որոնք պետք է գնային գավառ, հայկական վարժարաններում աշխատելու համար: Նրանք առացել են մարմնակրթության դասերի օգնական-մասնագետի դասընթացը և մարմնամարզության դասավանդելու իրավունք: 1911թ. Շավարշ Քրիսյանի նախաձեռնությամբ Էսայան վարժարանում Պոլսի առաջին իգական մարզական միությունն է ձևավորվում՝ «Էսայան սանուց միությունը»: Մի քանի ամիս անց, 1912թ. Սկյուտարում ստեղծվում է երկրորդ իգական մարզական ակումբը՝ «Հիգիենա» (L'hygiéne). 1913թ. Նիկողոսյան վարժարանի սանուհիների կողմից ստեղծվել է «Եռանդ» իգական մարմնակրթական միությունը: Կարինի վարժուհիների «Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւն» երկամյա դասընթացների ավարտական վկայականում որպես առարկա նշվել է նաև առողջապահությունը: Այս առարկան աստիճանաբար մտնելով դասացուցակների մեջ, նշվել է նաև ավարտական վկայականներում: Մեծ եղեռնից հետո այն միահյուսվեց նաև սկաուտական շարժման մեջ:

Հարկ է առանձնակի ուշադրություն հրավիրել հայ աղջիկների, օրիորդների, տիկինների մարզական միություններում ներգրավված լինելու փաստին: Այսպիսի նյութեր առատորեն տրամադրել է նույն «*Մարմնամարզ*»-ը: Այստեղ ևս նախաձեռնությունն իրենց ձեռքն են վերցրել միսիոներական վարժարանները, մասնավորապես ամերիկյանները:

Հայկական չորրորդ օլիմպիադան կայացել է 1914թ. հունիսի 14-ին, որին մասնակցել են հայաշատ կենտրոնների 13 ակումբների 81 մարզիկներ: Բացման արարողության ժամանակ աղավնիներ են թողել, ի հիշատակ հայոց նավասարդյան խաղերում ընդունված ավանդույթյան:

Հայկական մարմնամարզական մրցույթի հետ է կապվում **Օլիմպիական խաղերում** Օսմանյան կայսրության առաջին պատվիրակի մասնակցությունը:

1906թ. Աթենքում կայացած օլիմպիական ոչ պաշտոնական խաղերին մասնակցել է ոմն Հարեր Փափազյան, կարդում ենք Ալեքսան Մկրտիչյանի գրքում[7]: Միջազգային օլիմպիական կոմիտեի կողմից Օսմանյան օլիմպիական ընկերակցությունը[8] գրանցվել է 1911թ.:

7 Ալեքսան Մկրտիչյան, *Մարզիկին գիրքը*, , Կ.Պոլիս. 1926.

8 Ըստ թուրքական աղբյուրների, օսմանյան օլիմպիական ընկերակցությունը հիմնադրվել է 1907թ. հուլիսին:





1912թ. հունիսի 22-ից հուլիսի 22-ը Ստոկհոլմում կայացած միջազգային 5-րդ օլիմպիադային Օսմանյան կայսրության կողմից **առաջին անգամ** լինելով մասնակցում են պոլսեցիներ Վահրամ Փափազյանը և Մկրտիչ Մկրյանը: Վահրամ Փափազյանի ավանդը թուրքական սպորտի պատմության մեջ որոշակի է: Նա օլիմպիական խաղերին պատրաստվելու շրջանում ամեն օր Բեբեկ թաղից վազելով գալիս էր Չաղալօղլու, բերբեր գնում ու նույն ճանապարհով ետ վազում Բեբեկ, բերբերը թողնում, ապա վազում Ռոբերտ քոլեջ, իր դասերին: Հայկական «Արտավազդ» մարզական ակումբի կողմից ձեռնարկված հանգանակության օգնությամբ նա մեկնում է Ստոկհոլմ: Օլիմպիական կոմիտեին նրանք ներկայանում են որպես Օսմանյան կայսրության ներկայացուցիչներ: Երկու հայ մարզիկների մասնակցության առիթով թուրքական դրոշները են կախվում մարզադաշտերում, փողոցներում, մասնակից մյուս երկրների դրոշների հետ մեկտեղ: Նրանց մասին գրել են շվեդական թերթերը: Վահրամ Փափազյանն առաջին օսմանցի օլիմպիականն էր, որը սակայն 1500 մ վազքի եզրագծին վայր ընկնելով, չի գրանցում հաջողություն[9]: Պոլսի «Ռոբերտ քոլեջի» 19-ամյա շրջանավարտ Մկրտիչ Մկրյանը հաջողությամբ է հանդես եկել հնգամարտի և սկավառակի նետման մարզաձևերում: Մինչ այդ, 1910թ. աթենքյան մրցումներին նա հնգամարտի մարզաձևերում մրցանակ էր շահել: Թեև երկու հայ մարզիկները հաղթողների թվում չէին, այնուհանդերձ նրանց մասնակցությունը օլիմպիական խաղերին, շապիկների վրա թուրքական դրոշ, մեծ արձագանք է ունեցել ժամանակի եվրոպական, օսմանյան մամուլում: Պարզվում է, որ շվեդական օլիմպիական կոմիտեն չի ցանկացել բարձրացնել օսմանյան դրոշները, ելնելով այդ երկրում տեղի ունեցած ջարդերի, հալածանքների փաստից: Սակայն հայ մարզիկների մասնակցությունը փոխել է այս որոշումը: Շվեդիայում թուրքական հյուպատոսը, որ պետք է ուղեկցեր պատվո երթի իր երկրի երկու մասնակիցներին՝ մարզադաշտ դուրս չի եկել: Անեն դեպքում այս մասնակցությունը պատմական իրողություն է: Առաջին անգամ Օսմանյան կայսրությունը մասնակցել է միջազգային օլիմպիական խաղերին, շնորհիվ իր երկու հայ հպատակների՝ Մկրտիչ Մկրյանի և Վահրամ Փափազյանի:

Օսմանյան օլիմպիական կոմիտեի որոշ անդամներ հանդես են եկել ցավագին մտայնությամբ, ափսոսելով, որ Ստոկհոլմում ոչ մի թուրք չի մասնակցել: Ի պատասխան Սելիմ Սըրրի, «Մարմնամարզ»-ը նկատել է տվել երկու հայերի մասնակցությունը օսմանյան դրոշի ներքո, շապիկներին օսմանյան մահիկ կարված: Ափսոս, որ իրենց հայ հայրենակիցներով հպարտանալու փոխարեն, նրանց անցատում են ու ձգտում տարբերություններ դնել այս հարցում ևս[10], նկատել տալով, թե Օսմանյան կայսրությունը միայն թուրքերի հայրենիքն է:

Այս վերաբերմունքը արևմտահայության մարմնամարզական մրցույթի պատասխանատուներին դրդում է ստեղծելու մի կառույց, որը մեկ գաղափարի ու դրոշի տակ պիտի միավորեր արևմտահայ պատանեկության ու երիտասարդությանը: Այդ կառույցը կարող էր լինել 1918թ. նոյեմբերին ստեղծված Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը և կամ՝ սկաուտական համակարգը, որը միավորում էր շատ ակումբների, միությունների:

Հայ մարմնակրթական ընդհանուր միության վարչությունը ներառել էր միութենական

9 1922թ. հաստատվում է Կանադայում, ղեկավարելով հայ մարմնամարզական ակումբը, հաճախ այցելում օլիմպիադաներում իր ներկայացրած Թուրքիան:

10 *Մարմնամարզ*, Կ.Պոլիս, 1912, օգոստ:

օդակների 25 դեկավարների: Այստեղ առանձնակի ուշադրության առարկա են դարձել ֆուտբոլային թիմերը: Ֆուտբոլային մրցումների ժամանակացույցը շատ հագեցված է եղել և նախապես հայտարարվել է պարբերականների էջերում: Նույն այս պարբերականները պատասխանատու կերպով արձագանքել են ամեն մի խաղի ու համդիպման արդյունքների մասին: Պոլսում հիմնված Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) Շիշլիի ֆուտբոլի խումբը թուրք, հույն, անգլիացի խմբերի հետ է մրցել: Խաղացողների շարքում հիշվում են՝ Ռուբեն Ալյանդյան, Ժիրայր, Զարմայր, Դանդակ, Պողոս, Արծիվ Զեկայան, Զարեհ, Մանուկ անունները: Պոլսում հիմնադրվել են «Արաքս» և «Մասիս» ֆուտբոլի թիմերը:

Սկյուտարում, Բաղչաբաշըյում հայ աղեխիզմի ու սկաուտական միություն է հիմնադրվել: Մաքրիքեոյում վերակազմավորվել է «Սասուն» մարմնամարզական միությունը:

1919թ. ապրիլի 27-ին Հայ մարմնակրթական ընդհանուր միության կողմից կազմակերպված դաշտային, մարմնամարզական և ֆուտբոլի մրցումների հայտարարության մեջ նշված է, որ Շիշլիի Բուլղարական հիվանդանոցին կից դաշտում անցկացվող մրցումների մուտքի արժեքն է 100 փարա:

Հայ մարմնակրթական ընդհանուր միության կողմից 1919թ. օգոստոսի 31-ին Պոլսի սաբեկյան օլիմպիական խաղեր են կազմակերպվել Քաղքբեոյի «Union club» մարզադաշտում, Պատրիարք Հոր նախագահությամբ: Անատոլիական իր մասնաճյուղերի հետ ՀՄԸՄ-ն մրցումներ է կազմակերպել շրջական հայաշատ բնակավայրերում, վերախթանելով սպորտի նկատմամբ հետաքրքրությունը:

Հայ մարմնակրթական ընդհանուր միության վարչությունը 1919թ. հոկտեմբերից սկսում է հրատարակել «Հայ Սկաուտ» պատկերազարդ 16 էջանոց կիսամսյա պաշտոնաթերթը, Կարո Ուշագլյանի խմբագրությամբ, Հրաչյա Տեր Ներսեսյանի պատասխանատու տնօրինությամբ: Արտոնատերն էր Կարո Շահինյանը: Պարբերականը տպագրվում է մինչև 1922թ. Օննիկ Արզումանի տպարանում, իսկ 4 ամյա դադարից հետո՝ 1927-1935թթ. շարունակվում է հրատարակվել Փարիզում:

Այս կիսամսյա հանդեսի 1920թ. ապրիլյան համարը[11] նվիրված է եղել Մեծ եղեռնին նահատակված կամ մահացած հայ մարզիկների հիշատակին և անվանվել «Սգապատ»: Այս համարում տեսնում ենք «Մարմնամարզ»-ի խմբագիր, նշանավոր մարզիկ և սպորտային, ազգային գործիչ Շավարշ Քրիսյանին, որը Այաշի աքսորյալ մեր անվանի մտավորականների խմբում է եղել, և նույնիսկ այդ պայմաններում ոգևորել է նրանց, սովորել ամենօրյա մարզանքներ կատարել, իսկ հետո՝ դաժանաբար նահատակվել է: Արևմտահայ մարզաշխարհի մյուս աղետյալ նահատակ մարզիկներից կարդում ենք Գալուստ Ալիխանյանի, Վարդևար Յաղուբյանի, Գևորգ Քերեստեճյանի, Հայկ Ճողոյանի, Երվանդ Նշանյանի, Հովհաննես Գորյանի, Ղազարոս Կույումճյանի և տարբեր միությունների, ֆուտբոլային խմբերի հիմնադիր-մարզիկների անունները: Նրանց մի մասը, ովքեր ծառայում էին օսմանյան բանակում, զոհվել են հայ զինվորների համատարած նախճիրի ժամանակ:

Առաջին համաշխարհայինից ու Մեծ եղեռնից հետո ապրելու կոչվածները կրկին փորձեր են արել վերագտնելու նախկին արժեքները, այդ թվում՝ մարմնամարզական մշակույթի ավանդույթները: Նորից սկսվել են հիմնադրվել միություններ, ֆուտբոլային խմբեր, կրկին

11 *Հայ Սկաուտ*, Կ.Պոլիս, 1920, N 12





մրցումներ են կազմակերպվել, նոր ռեկորդներ ու չեմպիոններ ի հայտ եկել Ստամբուլում և գավառներում:

1920թ. սեպտեմբերի 5-ին, Պոլսում, Քադըքեոյի «Union club» մարզադաշտում կայացել են ՀՄԸՄ-ի կողմից կազմակերպված Հայկական ընդհանուր օլիմպիական խաղերը: Հայերեն և ֆրանսերեն ազդագրերից տեղեկանում ենք, որ ըստ ընդունված սովորության, այն նախագահելու էր Պատրիարք հայրը՝ Զավեն (Միքայել) Տեր-Եղիայանը: Այս խաղերին մասնակցել է Հայաստանի ներկայացուցիչ Արմեն Թախբաճյանը, մասնակցելով պարգևատրման արարողությանը, շնորհավորել է նրանց, որպես «Հայաստանի ապագա քաղաքացիների»:

1920թ. ՀՄԸՄ-ը Սկյուտարի ակումբների մրցումների Բ տարին, աղեխիզմի Բեյրա-Շիշլի մասնաճյուղը անցկացնում է Բաղչաբաշըի մարզադաշտում: Ամենամյա մարմնամարզական մրցումներ են անցկացնում Բանկալթըի գերեզմանատանը կից Հայ մարմնամարզական ընդհանուր միության նորաշեն մարզադաշտում: Որոշ միություններ, խմբեր ունեցել են իրենց մասնավոր խաղադաշտերը: Միջոցառումներին մասնակցել են նվագախմբեր, ֆանֆարներ (փողային նվագախմբեր), իսկ մարզական կյանքից պատմություններն առիթ են տվել պիեսների, զավեշտների ներկայացման:

«Մասս մեջն է կամ Կաղ սկաուտ» 3 գործողությամբ զավեշտի նյութը պոլսական ազգային սկաուտական կյանքից է վերցված եղել: Այն ներկայացվել է 1920թ. սեպտեմբերին Բերայի «Փթի շան» թատրոնում, Կավռոշի (Երվանդ Թոլայանի) զավեշտախմբի կողմից: Հեղինակներն են եղել Երվանդ Թոլայանը, Ա.Քեչյանը, Գրեն Սիմոնը:

Համահայկական օլիմպիական խաղեր են կազմակերպվել Քադըքեոյի «Union club» մարզադաշտում հետագա 1921, 1922 թվականների օգոստոս ամիսներին, որոնց մասնակցել են գավառի, նաև՝ Պլովդիվի հայ մարզիկները: Օլիմպիական խաղերին ընդառաջ տարբեր մրցումներ են կազմակերպվել քաղաքային մարզական ակումբների միջև: Հայ մարզիկները մասնակցել են նաև Պոլսում տարբեր մարզաձևերի գծով մրցումների, անգամ հունական ակումբների կազմում:

«Հայ Սկաուտ»-ն իր էջերում մանրամասնորեն լուսաբանել է այս խաղերը, առանձին անդրադարձել տարբեր մարզաձևերում ռեկորդներ սահմանած կամ ուղղակի հաղթած մարզիկներին, ներկայացնելով հարուստ լուսանկարչական նյութ: 1921-22թթ. Կ.Պոլսում Ռոստոյանի կողմից լույս է ընծայվել Հայ մարմնամարզական ընդհանուր միության «Սկաուտ» կիսամսյա պաշտոնաթերթի 9 համարներ միայն: 1920-22թթ. Կ.Պոլսում լույս է տեսնում «Հայ պատանի» պատկերազարդ շաբաթաթերթը, որը կիսամսյա հանդես է վերածվում: 1920-22թթ. Զմյուռնիայում հրատարակվում է «Պատրաստ» կիսամսյա 4 էջանոց պատկերազարդ պարբերականը, որը Իզմիրի հայ բոյ-սկաուտների օրգանն է եղել: Այն 45 համար է տպագրել, «Ներկա մանուկն է ապագա մարդը» բնաբանով: Արտոնատերն ու պատասխանատու տնօրենն է եղել Պիտր Կույումճյանը, խմբագիրը՝ Զավեն Հարեթյանը:

1922թ. օգոստոսին սկսել է լույս տեսնել մարզական հերթական «Մարզաշխարհ» ամսաթերթը, Վահան Փափազյանի խմբագրությամբ, «ուժ և լույս» բնաբանով: ՀՄԸՄ-ն ունեցել է իր կազմակերպության տարբերանշանը, ուր մեծ ու փոքր Մասիսների մեջտեղում՝ նոր ծագող արևն է, ներքևում՝ Արաքս գետը: Պետրոս Ադամնու առաջարկությամբ որպես կարգախոս է ընտրվել՝ «Բարձրացիր, բարձրացուր»-ն: Այս կառույցն իր մասնաճյուղերն է

տարածել Պոլսում, ամենամյա մրցումներ, օլիմպիական խաղեր կազմակերպելու նպատակով, շրջաբերականներով տեղեկացրել իր որոշումների և առաջիկա հանդիպումների մասին: Մարզական գործունեությունից առավել այս կազմակերպության առավել նշանակալի ավանդն է եղել հայ որբուկներին փրկելու, հավաքելու, գնելու, աղետյալներին օգնություն հասցնելու առաքելությունը: Նախկին մարզիկներից շատերը հաստատվելով տարբեր երկրներում, շարունակել են կրթել հայ երիտասարդներին, ստեղծել նոր մարզական միություններ: Կարևորագույն առաքելություն է եղել վարժարաններում, և մասնավորապես որբանոցներում մարզական ավանդույթների հաստատումը զուգահեռ նրանց ամենատարրական օգնություն կազմակերպելու խնդիրների իրագործումը: Մարմնակրթական, սկաուտական վարժանքները, արշավները պիտի մարզեին և գուցե դույզն իսկ փորձեին մեղմել եղեռնական ճակատագրի հազարավոր այս զոհերի առօրյան:

Հետպատերազմյան տարիների համար մարզական կյանքում նոր ու սիրելի սպորտաձևեր են հանդես եկել: Այն է՝ բասկետբոլը: Վարժարաններում բասկետբոլի խմբեր են կազմակերպվել: Գալով ֆուտբոլին, մեկ միասնական ֆուտբոլային լիգա է ստեղծվել, ինչին որ ձգտել էր Շավարշ Քրիսյանը: Երբեմն պարբերականները հետաքրքրաշարժ լուրեր են հրապարակել նախկին չեմպիոնների մասին: Այսպես օրինակ, հեծանիվի չեմպիոն Աշոտ Մամիկոնյանը Բերայի «Յունիոն Ֆրանսեզի» դահլիճում կազմակերպված պարի մրցույթում ոմն օրիորդ Լիզա-ի հետ 21 ժամ և 10 րոպե առանց ընդհատման պարելով՝ առաջին մրցանակ է շահել (1921):

Հատուկ իգական մարզային ակումբներ քիչ են եղել: Սամաթիում 1919թ. հիմնադրվում է «Փարոս» աղջկանց մարզական միությունը: Հիմնվում է նաև «Խարիսխ» ուսումնական միությունը:

Այնթապի մի քանի լուսավորյալ երիտասարդ ուսանողների կողմից հիմնադրվում է «Անդրանիկ» սպորտային ակումբը: Այսպիսի ակումբները, միջազգային սկաուտական շարժման օղակներ հանդիսացող հայ սկաուտական միությունները շատ ավելի արագորեն են ստեղծվում եղեռնից մազապուրծ փրկված հայ գաղթականների ծվարած երկրներում, հայկական նոր գաղթօջախներում:

Արևմտահայ սպորտի օրագրությունը հայտնի է նաև դժբախտ դեպքերով, դժբախտ հետևանքներով: 1921թ. սեպտեմբերին Թաքսիմի «Շանթեկլեր» թատրոնում կազմակերպվում է բռնցքի մրցում ամերիկացի բռնցքամարտիկ, նավաստի Բերլինգ Քելլիի և հանգուցյալ Բագրատ Թահրանյանի միջև: Բագրատը պայքարում է մինչև 7-րդ ռաունդ և մահանում է Այազփաշայի անգլիական հիվանդանոցում, ռինգում ստացած հարվածից:

Թահրանյան Բագրատը (1896-1921) եղել էր օդանավորդ, մեքենավար, նիզակ նետող, ապա հանդես էր եկել որպես բռնցքամարտիկ: 1920թ. եղել էր Թուրքիայի չեմպիոն:

1921 նոյեմբերի 22-ին տեղի է ունեցել բռնցքի մի այլ մրցում՝ «Կոփամարտ», աշխարհի չեմպիոն Գոնմ Սիմոնի և Թուրքիայի չեմպիոն Վ.Պաղտասարյանի միջև: 11 ռաունդ պայքարի շրջանակում ներկայացվել է «Անուշ» օպերայից 1 արար:





## ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բազմաթիվ հասարակական, բարեգործական, խնամակալական, կրթասիրական-մշակութային, նպատակամետ, մասնագիտական ընկերություններ, տիկնանց տարբեր միություններ ունեցել են իրենց կանոնադրությունները (դրանք տպագրվել են հայերեն, հայատառ թուրքերեն, օսմաներեն, երբեմն նաև՝ ֆրանսերեն) և իրենց մասնաճյուղերն են տարածել Օսմանյան կայսրության ողջ տարածքով՝ Հալեպի նահանգից մինչև Եգիպտոս, Բալկաններ, գավառական հայաշատ կենտրոններ, մեծ քաղաքներ: Թե ինչպիսի՞ նպաստ են ունեցել դրանք արևմտահայ իրականությունում և թե քանի՞ միավոր կազմակերպություններ (պայմանականորեն այսպես անվանենք) են եղել՝ դժվար է ասել, թեև դրանց մի մասն այնքան կարևոր առաքելություններ են իրականացրել, այնքան երկարակյաց են եղել ու այնպիսի հայտնի, տաղանդավոր մասնագետների, մտավորականների, տիկնանց կողմից են ղեկավարվել, որ դարձել են ուսումնասիրության առանձին նյութ, առնչվելով այս կամ այն անհատի կյանքի ու ստեղծագործական ժառանգության հետ[2]: Հետաքրքիր է այն հանգամանքը, թե որքանո՞վ են այս միությունները իրենց գործունեության ընթացքում դուրս եկել զուտ հայկական շրջանակներից, համագործակցել Օսմանյան Կայսրության մյուս ազգությունների, և առաջին հերթին տիրապետող ժողովրդի՝ թուրքերի հետ և որքանո՞վ են նպաստել այդ երկրի առաջխաղացմանը, բարենորոգմանը, եվրոպականացմանը, զարգացմանը: Երբ ժամանակագրական կարգով հետևում ես արևմտահայ մամուլին, ապա ակնհայտ է դառնում, որ կայսրության հասարակական կյանքում, մասնավորապես Թանզիմաթի (բարենորոգումների), ընդհանուր զարթոնքի շրջանում (ընդհուպ մինչև 20-րդ դարի առաջին 15 տարիները) հայ-թուրք մտավորական առնչությունները կյանքի տարբեր բնագավառներում՝ առանձին, հազվադեպ երևույթներ չեն եղել[3]: Դրանք կրել են պարբերական բնույթ և այնպիսի տպավորություն է ստեղծվում, կարծես Օսմանյան կայսրությունը փրկելու, այն անգրագիտության ու ֆեոդալական հետամնացության անդունդից հանելու, առաջադեմ, ազատական գաղափարներ ներշնչելու, Եվրոպայի ու աշխարհի աչքին բարբարոս երկրի կերպարը փոխելու համար ոտքի էր կանգնել երկրի ողջ առաջադեմ խավը՝ անկախ ազգությունից, դիրքից, ունեցվածքից՝ հայ ուսուցչից ու դերասանից մինչև թուրքական որոշ «եվրոպական» տիրաններ, պալատական ու մտավորական առաջադեմ ավագանին: Այս շրջանում ծաղկել են արհեստները, մշակույթը, նոր զարգացող արդյունաբերությունը եկել էր փոխարինելու ֆեոդալական կացութաձևին: Մասնավորապես Պոլսում սկսել է զարգանալ ժողովուրդների բարեկամության ու փոխադարձ բարյացակամության մթնոլորտը, որը երբ

1 Միհրան Զարդարյան, *Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը*, 1921, էջ 299-315:

2 Այս մասին տես՝ Էմմա Կոստանդյան, *Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության* (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2005.

3 Որպես կանոն շատ ցուցահանդեսներ, համերգներ, բարեգործական պարահանդեսներ, երեկույթներ, ներկայացումներ, նույնիսկ թատերախաղեր կատարվել են համատեղ և շատ հաճախ որպես հովանավոր ընտրված, ազդեցիկ, մի խումբ՝ մշակութային հավաքույթների, հանդես են եկել գահաժառանգները (օր Յուսուֆ Իզզեդինը), պալատական, փաշայական ընտանիքների անդամներ, երևելի կանայք (օր. Ահմեդ Ռըզա բեյի քույր՝ Սելմա հանըմը, Նաջի բեյը և շատ ու շատ այլ անուններ), «Միացյալ ընկերության» անդամներ ու համակիրներ:

շատ հեռու գնաց, ապա սկիզբ շուտով տապալեր Օսմանյան կայսրությունը մինչանց միջև բաժանելու եկած եվրոպական տերությունների, Ամերիկայի, Հռոմի հեռացնող ծրագրերն ու ցանկերը: Եվ քանի որ զարթոնքի շրջանի այս շարժման առաջամարտիկները հայերն էին, ապա հենց նրանք էլ գաղութարար երկրների համար ներկայացան որպես իրենց ծրագրերի իրականացման ճանապարհին կանգնած առաջին ու կարևորագույն թշնամի, կրելով այդ բոլոր հավակնոտ երկրների համատեղ վրեժխնդրության արդյունքը: Այն է՝ ծրագրելով հայերին որպես խոչընդոտ իրենց ճանապարհից վերացնելու մտադրմամբ, դարի ամենադաժան հաշվեհարդարը՝ հայերի Մեծ եղեռնը:

Իսկ մինչ այդ՝ կարճ, սակայն երանելի մի ժամանակաշրջան, երբ «Ազատությունը» բոլորի շրթերին էր, ինչպես հայկական թատերախմբերի բեմերից, իրենց շուրջը համախմբելով առաջադեմ թուրք մտավորականությանը, լուսավորիչներին, քաղաքական գործիչների մի մասին: Համագործակցության ամենատարբեր ասպեկտներ՝ կյանքի ամենատարբեր բնագավառներում: 19-րդ դարի երկրորդ կեսը Օսմանյան կայսրության տիրապետող ժողովրդի համար (նույնիսկ աբդուլհամիդյան ծանր, դաժան գրաքննության տարիներին) նշանավոր դարձավ թուրքական լուսավորիչների, ժամանակակից թուրքերեն գրական լեզվի ձևավորման ու զարգացման, թուրք նոր գրականության ու պարբերական մամուլի, մշակույթի մյուս ճյուղերի նորովի կազմավորմամբ ու զարգացմամբ: Ներհամայնքային կյանքում մշակութային կազմակերպություններին կից ստեղծվել են գրական մրցանակներ շնորհող հանձնաժողովներ, ինչպես Իզմիրի գրասերների կողմից 1887թ.՝ «Իզմիրյանց գրական հանձնաժողովը»: Այն պետք է խրախուսեր մշակույթի մարդուն:

Հայկական միությունները, որոնց գերակշռող մասը երկրում ընդհանուր զարթոնքի շարժման արտահայտություններ էին և եվրոպական հովերի արձագանք, հիմնականում կառուցվեցին «զուլումի» տարիներին: Այն պալատի կողմից դիտվում էր որպես ազգի միաբանական ոգու արտահայտություն, որքան էլ որ նրանք ամենատարբեր նպատակներ էին հետապնդում, որքան էլ որ նրանց կազմակերպիչներն ու անդամները ծայրահեղորեն տարբեր դասերի ներկայացուցիչներ էին, տարբեր՝ հասարակական, քաղաքական ու դավանաբանական տեսանկյունից: Ժամանակի ֆրանսիական սալոնների օրինակով, հայ ամիրաների ու հարուստների ապարանքներում ու սրահներում հավաքվում էին ազգի տարբեր խավերի, մասնավորապես մշակույթի ոլորտի մարդիկ, որոնց հանդիպումների, զրույցների, քննարկումների ու վիճաբանությունների արդյունքում ձևավորվում ու իրականացվում էին գրական, թատերական, հրատարակչական, կրթական, բարեսիրական ու այլատեսակ նախաձեռնություններ, հիմնադրվում տարբեր ընկերություններ ու միություններ: Ու այս բոլորը՝ հանուն ազգի առաջադիմության, հանուն ազգի վաղվա արժանապատիվ ապագայի:

Պոլսահայ կազմակերպությունների Ռուբեն Զարդարյանի կազմած ցուցակը չափազանց արտահայտիչ է ժամանակի մթնոլորտն արտահայտելու տեսանկյունից: Արժե միայն հիշատակել մի քանի միությունների անուններ, որը հեռավոր պատկերացում գուցե կտա իր ժամանակի մասին՝ «Դպրոցասեր տիկնանց միություն», «Աղքատասեր տիկնանց ընկերություն» (հայ կաթոլիկ տիկնանց), Ազգային Հիվանդանոցի ու այլ հիվանդանոցների, որբանոցների, ծերանոցների, աղքատախնամ տարբեր թաղամասերի տիկնանց և երիտասարդաց միություններ (օր. Շիշլիի, Սկյուտարի և այլն), տարբեր վարժարանների ու եկեղեցիների հոգա-









Անժել Ալյո
Հայ տիկնանց բարեգործական միության հիմնադիր

բարձրության խորհուրդներ և կրթական ակումբներ, «Կիլիկյան որբերու պաշտպան մարմին» (մասնաճյուղերով), «Աշխատանքի տուն», «Հայ բժշկական ընդհանուր ժողով», «Արաքս» խնամողական ընկերություն, «Օսմանյան երկրագործական կլուբ», «Թրքահայ հրատարակչական ընկերություն», «Ուսուցչաց օգնելու (հանգստյան) սնդուկ», «Հայ թատերական ընկերություն», «Քնար» նվագախումբ, ապահովագրական տարբեր ընկերություններ, շոգենավային (անանուն) ընկերություններ, արտասահմանյան բանկերի, ապահովագրական գործակալությունների, ամենատարբեր առևտրական տների մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և այլն: Գավառներին բազմազան աջակցություն ապահովելու համար Պոլսում ստեղծված էին ընդհանուր, ու նաև՝ հատուկ, այս կամ այն քաղաքի համար մասնավոր ընկերություններ: Դրանց գերակշռող մասն ինքնին ուղղված էր ուսումնական, մշակութային, արհեստագործության զարգացմանը: Միաժամանակ աշխուժորեն տարբեր ընկերություններ էին բացվում հենց տեղերում, տարբեր գավառների տարբեր քաղաքներում, գավառակային կենտրոններում:

Նպատակներից գերագույնը՝ ազգի գրագետ լինելու խնդիրն էր: Հակոբոս Գ. Սերոբյան պատրիարքի օրոք (1780-1862), 1858թ. պատրիարքարանի կողմից հիմնադրվում է առաջին Ուսումնական խորհուրդը: 1870թ. «Արարատյան», «Դպրոցասեր», «Կիլիկյան», «Ընկերսիրաց» ընկերությունները Անատոլիայում 24 դպրոցներ են բացել, երբեմն նաև դպրոցընկերացումներ, ինչպես Արաբկիրում և այլուր: Անատոլիայում բացվում էին նաև բարձրագույն դպրոցներ, ճեմարաններ, ինչպես 1870թ. Կիլիկյան ճեմարանն Այնթապում, Մկրտիչ Սանասարյանի անվամբ վարժարան՝ Կարինում (1881):

Եղել են զուտ կանանց համար միություններ, ինչպես օրինակ կանացի առաջին «Ազգանվեր հայուհյաց ընկերություն» կազմակերպությունը, որը 1857թ. է հիմնադրվել, ապագա հայտնի գրագիտուհի, այդ օրերին 16-ամյա Սիպիլի (Զապել Խանճյան) կողմից: Երկրորդ նման կազմակերպությունը Անժել Ալյոյի (Խանճյան) և Օրթագյուղի Հռիփսիմյանց վարժարանի սանուհիների կողմից 1879թ. հիմնադրված և Պատրիարք Ներսես Վարժապետյանի (1874-1884) նախագահությամբ բացված «Դպրոցասեր Հայուհեաց Ընկերությունն» էր, որը հետագայում վերանվանվեց որպես «Դպրոցասեր տիկնանց ընկերություն» և այսպես շարունակ... Այն համարվել է առաջին լուրջ ուսումնական ընկերությունը և շատ շուտով իր մասնաճյուղերն է ունեցել ողջ հայաբնակ գավառներում: Անդամների թիվը 1500-ի է հասել: 1879թ. նրանք 17 հոդվածներից բաղկացած մի կանոնադրություն են հրատարակել: Նրանց գործունեության ծրագիրը, որ հրատարակվել էր Արշակ Կարոյան տպարանում, կազմված է եղել 54 հոդվածներից: Նույն տարի այս միությանն է միացել ժամանակի հայտնի կին



Հայ բարեգործական ընդհանուր միության հիմնադիր անդամները
Կ.Մեսայան, Գ.Նորատունկյան, Պողոս Նուպար, Տ.Քելեկյան, Ա.Բաբաջանյան,
Ա.Ճեվահիրճյան, կանգնածները՝ Մ.Չերիկյան, Զ.Նուպար, Ա.Սեֆաճյան, Լ.Գյուլպենկյան,
Տ.Կամսարական, Լ.Բաշալյան (1925)

Ահա հասարակական, մասնագիտական զանազան միությունների համառոտագույն մի ցուցակ (այբբենական կարգով), որոնց մասին առիթ չի եղել անդրադառնալ մեր ուսումնասիրության տարբեր մասերում՝

- **«Ազգային պաշտպանության միություն»** (1914, Պոլիս):
- **«Ազգօգուտ»** միություն Անատոլիայի երկաթուղային հայ պաշտոնյաների (1919, Պոլիս), ունեցել է 1000 անդամ:
- **«Ակիշան»** գրականության և արվեստի միություն (1921, Պոլիս):
- **«Աղքատասիրաց»** ընկերություն (1861, Իզմիր):
- **«Անատոլիական երկաթուղու հայ ծառայողների միությունը»** (1908, Պոլիս, վերակազմավորել է իր գործունեությունը 1919թ.):
- **«Առաջադիմական ընկերություն»** (1878, Վան): Հիմնադիրներ՝ Մկրտիչ Փորթուգալյան, Տիգրան Ամիրճանյան, Հայրապետ Ճանիկյան:
- **«Ասիական ընկերություն»** (1875, Պոլիս): Հիմնադիր ժողովը ղեկավարել է Գրիգոր Զոհրապը:
- **«Ասպարեզ»** լսարանական միություն (1910, Պոլիս), 190 անդամ: Կոչված էր նպաստելու հասարակության մտավոր, բարոյական ու ֆիզիկական դաստիարակությանը: Նրա **«Հսկայորդիներ»** գեղարվեստական միությունը 1909թ. հոկտեմբերին երկսեռ երգչախումբ է կազմել: Միության Մայր դիվանի ատենապետն է եղել դոկ. Հ.Սիմսարյանը:
- **«Արդուշան»** գրական, երաժշտական երկսեռ միություն (1918, Պոլիս, Բերա), 25 անդամ: Նպատակն է եղել՝ տարածել գրականությունն ու գեղարվեստը: Ատենապետն է եղել Վահրամ Սևանին:





- **«Արարատյան»** (1876), հիմնադիրն է եղել Մկրտիչ Փորթուգալյանը[7]:
- **«Արարատ»** երկսեռ միություն (1908, Ռումելի Հիսար): 35 անդամ: Ատենապետ՝ Միքայել Ալմուխանյան: Վերակազմվել է 1919թ.: Նպատակն էր՝ անդամների միջև ընկերային կապ ստեղծել, օգնել և օգտվել:
- **«Արծիվ»** լսարանական միություն (1918, Խասգյուղ): 50 անդամ: Նպատակն էր՝ նպաստել հասարակության մտավոր և բարոյական զարգացմանը: Ատենապետ՝ Ալեքսիս Եազճյան:
- **«Արուեստասէր»** երաժշտական միություն Բերայի (1918): 40 անդամ: Կոչված էր գեղարվեստի և երաժշտական ճաշակի ներմուծել երիտասարդության մեջ: Ստեղծել են 20 երաժիշտներից նվագախումբ՝ Հ.Սինանյանի ղեկավարությամբ:
- **«Բարեսիրաց»** լսարանական միություն (1920, Օրթագեոյ): 54 անդամ[8], նպատակը՝ նպաստել երկսեռ հասարակության մտավոր, բարոյական և ֆիզիկական դաստիարակությանը: Ատենապետ՝ Հ.Արզումանյան:
- **«Գյուղատնտեսական միություն»** (1919, Բերա), 220 անդամ, ատենապետ՝ Կարապետ Նուրյան: Նպատակ ուներ սատարել Հայաստանի վերաշինությանը, պատրաստելով հողագործներ և մասնագետներ:
- **«Դպրոցասէր»** տիկնանց միություն (1879, Պոլիս), վերակազմված Օսմանյան Սահմանադրության հռչակման ժամանակ: Կոչված էր նպաստելու գավառի հայուհիների մտավոր զարգացմանը՝ վարժուհիների պատրաստմանը:
- **Եկեղեցասիրած տիկնանց միություն** (1921, Պոլիս):
- **«Երիտասարդ քրիստոնեայ բողոքական հայ երիտասարդներու ընկերություն», «Գրական միություն», «Թատերասերների միություն», «Աղքատասիրաց միություն»** (1915, Ադաբազար):
- **«Զինակիր»** երիտասարդական ընկերություն (Էրզրում):
- **«Էյ-Բի-Սի»** (այբուբեն՝ ABC) էկոնոմիկ կլուբ-միություն: Բացումը կատարվել է Թաքսիմի հռոմեական աղջկանց վարժարանում: Անդամների թվում են եղել Համդի բեյը, մի քանի ժամանակակից երևելի կանայք, իշխանուհի Նազլը հանըմը, Գրիգոր Քյոչեօղլուն (նույն օրը բացվել է նրա Խոսքը՝ Ղալաթիայում), Պողոս Շաշյանը, օր. Սերվիչեն, օտարներից՝ Փրեզիոսին և որդին, Ֆարներին, Գարտաման, պալատական ճարտարապետ Վալորին, տիկ. Վոլքերը, Ֆրանսիայի դեսպան Տիսոն և ուրիշներ:
- **«Ժողովուրդ ընկերային եւ Հայ»** մշակութային միությունը (1918, Սամաթիայի ս.Գևորգ եկեղեցում) Միքայել Թուղլաճյանի գլխավորությամբ: Հայ համայնքի հարցերի և ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծում, քննարկում:

7 Վանի Արարոց բաղում մի քանի Կրթասիրաց ընկերության անդամներ և մի քանի բանաձևեր արդյունքարար համաձայն Աստվածաշնչի կարգաւո, կրթությանը մեծ զարկ տալու համար հիմնում են «Ազգանվեր ընկերություն հայոց» կենտրոն, կիրակնօրյա դպրոց: Մկրտիչ Փորթուգալյանը 1881թ. Վանում ուսուցիչներ պատրաստող փակված դպրոցի փոխարեն հիմնադրում է Կենտրոնական վարժարան: 1911թ. հասարակական, քաղաքական գործիչ, լրագրող և գրող **Մկրտիչ Փորթուգալյանի** (1848-1921) 40-ամյակի հանդես է կազմակերպվել Պոլսի «Փրի Շան» թատրոնում: Համերգ, հյութեր՝ Ռուսաստանից, Իրանից:

8 Վանի նույնանուն ընկերության նպատակներից է եղել միաժամանակ երիտասարդությանը հետ պահել բոլշևիզմից (սկսածից), ծարդիից ու ննան այլ խաղերից, նրանց ուղղել դեպի ընթերցարաններ, թատրոն, կիրակնօրյա դպրոցներ:

- **«Ժողովուրդ»** միություն (1918), 75 անդամ: Նպատակը՝ ձգտել նպաստելու հայ ժողովրդի քաղաքացիական, մտավոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը:
- **«Ժողովրդային»** լսարանական միություն (1909, Պոլիս), 100 անդամ: Նպաստել Մարբիթեոյի հայ բնակչության մտավոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը:
- **Իմաստասիրաց, Ծաղիկյաց ուսումնասիրաց, Հայ զավակներ, Արմենուհյան Ներսիսյան** (Յոզղաթ): Տպագրվել են բոլորի հայերեն և հայատառ թուրքերեն կանոնադրությունները:
- **«Լուսաբեր»** միություն (1912, Պոլիս): Այն աջակցելու էր Սվազում հիմնված «Հայ բահանայական միությանը» և հայ շրջանավարտների միությանը:
- **«Խրիմյան Հայրիկ միություն»** (1908) աղքատներին գրել-կարդալ սովորեցնելու համար:
- **«Կիլիկյան»** ընկերություն (1876, Պոլիս), Մինաս Չերազի և ուսանողների մի խմբի հետ:
- **«Համագործակցական»** հայ լսարանական միություն (1919, Պոլիս): 30 անդամակցող միություններ: Նպատակը՝ ազգային հրատապ, անհրաժեշտ խնդիրների լուծում, անկախ դասակարգային, կուսակցական պատկանելությունից:
- **Համազգային հառաջդիմասեր կանանց ընկերություն** (Անկարա, 1909):
- **«Հայ դերասանական ընկերակցություն և թատերական միություն»** (1920, Պոլիս):
- **«Հայ երիտասարդաց»** միություն (1919), 50 անդամ, Միացյալ, անդամակցող երիտասարդության շրջանակների միջև բարոյական և մտավոր կապ հաստատել:
- **Հայ երաժշտասերների միություն** (1908, Պոլիս):
- **«Հայ թատերական ընկերություն»** (1860, Պոլիս՝ Գումգափը):
- **Հայ Կարմիր խաչ** (1918, Պոլիս), 5000 երկսեռ անդամ, քաղաքին և գավառական 40 մասնաճյուղեր: Նպատակն էր՝ խնամել և դարմանել տարագիր ու որբ հայ հիվանդներին Պոլսում և գավառներում, մայրանոցներում հովանավորել ծննդաբերություններ, որբանոցներում ու ապաստարաններում պատսպարել մահապուրծ փրկված, ազատագրված տղաներին ու աղջիկներին:
- **Հայկական Բանակի «նվիրահավաք մարմին»** (1919, Պոլիս): Նպատակ ուներ օգնել հայ բանակի անհրաժեշտ պետքերին, Հայաստանի կառավարությանը: Անդամներն էին Պոլսի բոլոր կուսակցությունների, միությունների և մամուլի երկսեռական լիազոր ներկայացուցիչներ:
- **Հայկական Լիգա** (1918, Պոլիս): Հիմնադիրներ՝ Վահան Թորգոմյան, Հ.Թոփչյան, Ա.Բարսեղյան, պրոֆ. Աբրահամ Տեր Հակոբյան, Հմայակ Խոսրովյան, Հակոբ Սիրունի, Բ.Մսրլը, Տիգրան Չայան, Վ.Շահրիմյան, Մ.Մանուկյան, Լ.Թոփանյան, Բ.Դեյիրմենճյան և Թ.Սուքիասյան:
- **«Հայ կանանց կոմիտե»** (1911, Պոլիս), հիմնադիր՝ Նվարդ Տիգրանյան[9]:
- **Հայ կանանց Լիգա** կամ **«Հայ կանանց սոսյալության»**՝ Հ.Ավետիսյանի նախագահությամբ, (1919), 40 անդամ: Նպատակն էր՝ կապ հաստատել միությունների իգական սեռի ներկայացուցիչների միջև և միասնաբար հոգալ կին ծառայողների, գործավորների կարիքները:

9 Մինչ այդ, 1907թ. հուլիսին ֆեմինիստ գրող Հայկանուշ Մառքը հրատարակել է «Լույս» շաբաթաթերթը:






- **«Հ.Հ.Դ. Ուսանողական»** միություն (1910, վերակազմված՝ 1920թ.): 70 անդամ: Զարկ տալ ուսանողների բազմակողմանի և մասնավորապես՝ հասարակական զարգացմանը:
- **«Հայ սահմանադրական գեմոկրատական կուսակցության ակումբ»** (1919, Մարաշ), Հովհաննես Շիշմանյանի նախագահությամբ:
- **«Հայ որբախնամ միություն»** (1905, Պոլիս, վերակազմվել է 1919թ.):
- **Հայոց միացյալ ընկերություն** (1870, Պոլիս):
- **«Հայուհյաց ընկերություն»** և **«Սանուց սուրբ գրոց»** ընկերություն (1888, Ադանա):
- **«Հայուհի»** միություն (1911, Մարզվան): Հիմնում է ս.Հռիփսիմյան աղջկանց վարժարան:
- **«Մարդասիրական ընկերություն»** (1879, Սվազ), ավելի ուշ՝ «Սենիքերիմյան միություն»:
- **«Նավասարդ»** գրական, գեղարվեստական և գիտական միություն (1913, Բերա, վերակազմվել է 1918թ.), 35 անդամ: Հիմնադիր՝ Դանիել Վարուժան: Նպատակն էր՝ արթնացնել և արծարծել հայ երիտասարդության մտային բարում կարողությունները, քաջալերել դրանց զարգացումը: )
- **«Նոր Այգ»** միություն-նվագախումբ (1918, Եսի գավառ): 35 անդամ: Երիտասարդության շրջանում զարգացնել երաժշտությունը: Հիմնադիր՝ Հակոբ Չիլինկիրյան:
- **Նպատակամատույց** ընկերություն (1870, Պոլիս՝ Քաղքեդոն):
- **«Շուշան»** հայուհյաց միություն: (1918, Պոլիս՝ Խասգեոյ), հիմնադիրներ՝ տիկ. Է.Բյուրատ և Ա.Զարիկյան:
- **«Շուշան»** հայուհյաց միություն (1911, Մարզվան):
- **«Պաշտպան Ազգի և Կրոնի ընկերություն»** (1878, Մարզվան):
- **«Սանդուխտյան կանանց ընկերություն»** (1883, Աղաբազար), Նազենիկ Տերտերյանի գլխավորությամբ:
- **«Սանուց սուրբ գրոց ընկերություն»** (Ադանա):
- **«Սեբաստիոյ Ազգային Հաստատությանց օժանդակ միություն»** (1913): Հիմնադիր՝ ՀԲԸՄ: Պիտի օգներ Սվազի հիվանդանոցին, որբանոցին:
- **«Սևակ»** լսարանական միություն (1918, Իջխանաց կղզիներ), 30 անդամ: Նպատակը՝ բարձրացնել հայ Կղզիի բարոյական, կրթական և ընկերական մակարդակը:
- **«Սվազցիների հայրենակցական (վարանիկներ) միություն»** (1872, Պոլիս):
- **«Տիկնանց»** միություն (1908, Պոլիս, վերակազմված 1920թ.):
- **Տիկնանց բարեսիրաց ընկերություն** (1886, Օրդու):
- **«Րաֆֆի-Առաջադիմական»** միություն (1908, Պոլիս՝ Սկյուտար), 150 անդամ: Նպատակն է եղել սպորտական ոգով փույթ տանել միության անդամների և ժողովրդի մտավոր ու ֆիզիկական զարգացմանը: Հիմնադիր՝ Կարապետ Տեովլեթյան: Ունեցել է նվագախումբ:
- **«Քաջորդիների միություն»**, (1914, Մարզվանի ավետարանական դպրոց):
- **«Քնար»** երաժշտասիրաց ընկերություն (1910, Պոլիս՝ Կեսիկ փաշա): 65 երաժիշտ անդամներ, հիմնադիր՝ Գր.Աբրարյան: Մշակել գործիքային երաժշտությունը, նվագախումբ են կազմել և ժողովրդականացրել երաժշտությունը:
- **«Օշական»** (1915, Պոլիս՝ Կեսիկ փաշա, վերակազմված 1919թ.), 50 անդամ: Աղքատ

երիտասարդ ուսանողներին նյութապես և բարոյապես սատարելու համար: Առենապետ՝ Երվանդ Աբրահամյան:

- **«Օժանդակ ընկերություն»** (1872) հիմնադրել են Պոլիս գաղթած արաբկիրցիները:

* * *

1875թ. Պոլսի տարբեր թաղերում բացվել են հետևյալ կազմակերպությունները՝

**Ամերիկյան աղջկանց քոլեջը**[10], **Բժշկական, «Գոնսրանբրանիթրդ քոլեջի»** (նախկին սանունյաց), **«Հայ օրիորդաց ճեմարան»**-ի նախկին սանուհյաց (Արնավուտքեոյ), **«Ազատ»** լսարանական միություն (**Քաղըքեոյ**), **«Ահարոնյան»** ակումբը (Պեշիկթաշ), **«Այգ», «Ծանծառ», «Հայ Մարմնամարզարան», «Պենկյան» թատերախումբ, Պերպերյան** նախկին սանուց, **«Թատերասիրաց»** (Սկյուտար), **«Առամնարուժական» և «Արարատ»** (Գարթալ), **«Արևելյան» թատերական, Հայ դրամատիկ, Ճարտարապետական, «Յառաջդիմասեր Տիկնանց»**, (Գումգափու), **Ազգային պաշտպանության կոմիտե, «Աստղիկ»**, **«Դպրոցասերի»** օժանդակ, **«Կայծ», «Հայ ակումբ», «Ռոստոմ»** գրադարանական միություն, **«Տավրոս»** կանանց միություն, **Տպարանական հայ բանվորների, «Էսայան»** նախկին սանուց, **«Հայ սպայից»** (Բերա), **Դերձակագործական, «Զարթոնք»** (Ենի-Գափու), **Իրավագիտական, «Կամք»** օրիորդաց միություն (Պեշիկթաշ), **«Կոկուհեան»** (Թոփգափու), **«Կրթասիրաց»**, **«Հայ ակումբ»**, (Քաղըքեոյ), **Հայ Մարմնամարզական (Հ.Մ.Ը.Մ.** թաղային մասնաճյուղերով), **«Նոր ուժ»** (Սան Ստեֆանո), **«Ռոբերտ քոլեջի»** նախկին սանուց միություններ (Ռումելի Հիսար) և այլն:

**Կեսարիայում** հայկական թաղում 1844-1921թթ. 15 անհնատարբեր միություններ են հիմնադրվել ու գործել, սկսած 1852թ. Ընթերցասիրաց ընկերությունից[11], 1863թ. հրդեհի 300 աղետյալների օգնության միությունից մինչև մշակութային ու բարեգործական, մարմնամարզական միությունները:

**Կոմիտասյան** հինգ սանուց միություն է գործել՝ (Բերա, Սկյուտար[12]), **«Կոմիտաս»** նվագախումբ (Գումը Չեշմե), **«Մասիս»** նվագախումբ (Սամաթիա), **«Գուսան»** երգչախումբ, **«Արինգ»** նվագախումբ (Մաքրիքեոյ), **Ծանծառ** (Սկյուտար) հիմնված 1909թ. և վերակազմված 1919թ.[13]:

Պոլսի առանձին թաղերում գործել են հետևյալ միությունները ու ակումբները, որոնք հիմնականում տեղական գործունեություն են ունեցել՝

10 Այս ցանկը, ինչպես և մնացյալ հաստատությունների տարեկերպյան և հետագա շրջանի թվականները կատարվել են հիմնականում Արշալույս եղբայրների յուսանկարչատան կողմից:

11 «Արջինեն համար ասեր է հանդիսացել Նիկողայոս Զորայանի 1852թ. դպրոցական գործածության համար հրատարակված «Ընթերցասիրություն»: Այն պարունակում էր հատվածներ անգլիացի, ամերիկացի հեղինակների գործերից, համառոտված ուսմունքի, հետաքրքրական դրվագներ պարունակող հատվածներ: Այն մեծ ընդունելություն է գտել հատկապես եվրոպական կրթություն ստացած երիտասարդների կողմից, որոնք մասնակցած էին հայ ժողովրդի հետամնաց վիճակից դուրս բերելու և եվրոպական ժողովուրդներին հասցնելու խնդիրներով: Այս միության անդամներն էին Կարապետ Ութուճյանը, Համբարձում Այրանյանը, Մկրտիչ Աղաթոնը, Տիգրան Կյումանչկերտյանը, Պետրոս Խորասանճյանը, Նիկողոս Զոլյանը, Ստեփան Արգությանը, Սահակ Ապրոն, Մկրտիչ Մոմճյանը, Հակոբ Ռեկյանը:

12 Սանուց միությունները առաջացին հիմնադրվել են համարյա բոլոր հայաշատ գավառներում: Արաբկիրում, օրինակ, 1877թ. Կարապետ Միրիճանյանի կողմից հիմնված Սանուց միությունը զբաղվում էր նաև խեղճ երեխաների օգնության հասցնելով:

13 Դաղաչյան Սիրական (1837-1913).- Սիրոգիստ: Բժիշկ, դասախոս: Հիշվում է նրա անունը տեղեկագիրը բրջահայ դպրոցների մասին (մենք չենք տեսել):







**Քաղըքեոյ** - «Ազատ» լսարանական միություն, Կրթասիրաց միություն, Հայ ակումբ:

**Պեշիկթաշ** - Ահարոնյան ակումբ, Իրավագիտական, «Կամք» օրիորդաց միություն:

**Սկյուտար** - Այգ, Ծանծառ, Պերպերյան վարժարանի նախկին սանուց միություն, Թատերասիրաց միություն, Հայ Մարմնամարզարան, Պենկյան թատերախումբ:

**Գարթալ** - Առամնարուժական, Արարատ միություն:

**Գումգափու** - Արևելյան թատերախումբ, Յառաջդիմասեր տիկնանց միություն, Հայ դրամատիկ, Ճարտարապետական:

**Առնավուտքեոյ** - Բժշկական, «Գոսրանբրինապօլ» գոլեճի նախկին սանուհյաց, «Հայ օրիորդաց ճեմարանի» նախկին սանուհյաց միություններ:

**Բերա** - «Դպրոցասերի» օժանդակ միություն, Կայծ, Հայ ակումբ, Տպարանական հայ բանվորների միություն, «Ռոստոմ» գրադարանային միություն, «Տավրոս» կանանց միություն, Ազգային պաշտպանության կոմիտե, «Աստղիկ», «Էսայան» նախկին սանուց միություն, Հայ սպայից միություն:

**Ենի Գափու** - Դերձակագործական, Զարթոնք միություն:

Հայրենակցական միությունները հիմնականում կազմվել են Պոլսում, Զինադադարից հետո, իրենց կործանված ծննդավայրերը վերակազմելու, աղետյալներին փրկելու, ապրեցնելու առաջադրությամբ: 1909թ. **Աղաբազարում** հիմնադրվել են սանուց և սանուհյաց միություններ, գեղարվեստական, ընթերցասիրաց միություններ: Բացվել է Կեդրոնական ակումբ: 1910թ. **Մարզվանում** սկսել են գործել Կանանց զարգացման միությունը, Կրթասիրաց միությունը և Հայոց աշակերտական միությունը:

Տարբեր գավառների համար առանձին կենտրոնական վարչություններ են եղել՝ «Սիսեբրիանյան» (Սեբաստիա), Տարոն-Սալնաձոր, Եկեղյաց (Երզնկա), «Բազրատունյաց» (Կասմա), «Ռազմիկ» (Շաբին Գարահիսար), «Արծիվ» (Շաբին Գարահիսարի գյուղեր), «Մնձուր» (Գուրու-չայ), Վասպուրական, Բութանիական (Իզմիր), «Դարանաղյաց» (Քեմախ), Նիկիա (Իզնիկ), «Եփրատ» (Խարբերդ), Օրդու, Ռոդոստո, Տիվրիկ, «Բարկեն Սյունի» (Բինկյան), Էֆքերե, Անկարա, Մարզվան, Տայք (Խոտորջուր), Քղի, Ամասիա, Կեսարիա, Կիլիկիա, Էվերեկ և շատ ու շատ տարբեր միություններ Օսմանյան կայսրության սահմաններից դուրս, հայերի և օտարների կողմից: Հիմնադրվել են բազմաթիվ նոր՝ օրիորդաց, երիտասարդաց, որբախնամ միություններ, ուսանողական նոր պարբերականներ են հիմնադրվել: Հայկական «Կարմիր խաչը» օգնության կենտրոններ է բացել արևելյան գավառական կենտրոններում: Պատրիարքարանի կողմից հիմնադրվել է «Ազգային խնամատարությունը», որը շարունակելու էր 1885թ. հիմնադրված «Նպաստամատույց միության» գործն ու ավանդույթները: Այս միություններից շատերն ունեցել են կամ պարբերաբար հրատարակել են իրենց տեղեկագրերը:

Իզմիրի մեկ տարվա օրինակով կարելի է պատկերացնել հայկական տարբեր միություններ հիմնելու ձգտումները: Այսպես օրինակ, միայն 1906թ. Իզմիրում սկսում են գործել «Հայ պաշտոնյաների», «Քնար» երաժիշտների, Որսորդների (200-ից ավել մարմնամարզության հետևող անդամներ), որբախնամ, տիկնանց ընհանուր և բարեգործական միությունները, «Վասպուրական», «Քարաբաշ», «Վարդանյան», «Կորդելիո» հայկական ֆուտբոլային խմբերը:

Տարբեր միությունների հիմնադրումն ուղեկցվել է բազմապիսի ակումբների ստեղծմամբ: Մի ամբողջ շարք երիտասարդական և տիկնանց ակումբներ կոչվել են «Հառաջդիմասեր», որոնց նպատակն է եղել երիտասարդներին կրթելու գործը, լրացնելով մեկը մյուսին, ջանալ գավառահայ երիտասարդությանը կապել արևմտահայ կյանքում տեղի ունեցող երևույթներին, միմյանց կապել, կենտրոնացնել հայկական բնակավայրերի (Ադանա, Ադաբազար, Կիրեսուն, Գյումուշխանե, Հաճըն, Խարբերդ, Մարաշ, Մալաթիա, Մարզվան, Սամսուն և այլուր) մշակութային, մարմնակրթական և բարեսիրական հաստատությունները Պոլսի կենտրոնների հետ:

Ազգի առողջապահական խնդիրներով մտահոգված գործիչները երկրի հայաշատ վայրերում մարմնամարզական ակումբներին զուգահեռ հիմնել են վատ սովորություններից հրաժարվելու ակումբներ, որոնք հիմնականում հանդես են եկել որպես ծխարգելական միություններ: 1900թ. «Ծխարգելական ընկերություն» է հիմնվել Օրդույում, իսկ արդեն 1910թ., նույն Օրդույում ստեղծվել է «Հայ հառաջդիմասեր ընթերցասիրաց միություն»: Բնականաբար այս միությունները, հայկական հասարակական մյուս խմբավորումները, ակումբների նման իրենց բարերար ազդեցությունն են ունեցել կայսրության մնացած ազգերի համար ևս: Անվերապահորեն այն վերաբերվում է և՛ բարեսիրական, և՛ մարմնամարզական, և՛ մշակութային միություններին: Դրանց օրինակները բազմաթիվ են:

1910թ. Սվազում միանգամից մի քանի միություններ են ստեղծվել: Այն է՝ Սվազում սովի դեմ պայքարի հայ միություն, «Հայ համալսարանականների միություն», «Արենյան երկսեռ բանվորական միություն»:

Երբեմն նույն վայրում հիմնվել են նույնատիպ մի քանի մշակութային, մարմնակրթական, ուսումնասիրաց երիտասարդական միություններ, ակումբներ: Այս առատությունը բացատրվում է տվյալ վայրում Մխիթարյան միաբանության[14], կաթոլիկ և բողոքական միսիոներական վարժարանների, տարբեր հաստատությունների գոյությամբ:

Որբանոցներ ու որբախնամ մարմիններ են բացվում Պոլսի համարյա բոլոր հայկական թաղերում, նույնիսկ Խասքոյում, Շահբազ էֆենդիի ապարանքում:

Թուրքերի կողմից ևս կազմակերպվում են որբախնամ ընկերություններ: 1916թ. խլամացված հայ որբերի հավաքման գործը գլխավորում էր թուրք գրագիտուհի Հալիդե Էդիպը՝ Նիզյար հանըմը: Նա Մեհմեդ Ջեմալ փաշայի հետ Դամասկոսում հավաքում էր հայ որբերին և տեղավորում որբանոցներում:

Թուրք, հայ, հույն, հրեա կանայք Աղաչան Ֆիզրի էֆենդիի կնոջ գլխավորությամբ մի կանոնագիր են հրատարակում, ըստ որի առաջարկում են միացյալ ուժերով աղքատների համար աշխատանք գտնել, տարբեր արհեստանոցներ բացել: Մի շարք նահանգներում այս միությունը փորձում էր վերոհիշյալ ազգերի ներկայացուցիչների լեզուներով գրադարաններում, ընթերցասրահներում, դպրոցներում գրքեր ապահովել, որբերին տեղավորել դպրոցներում, կանանց և աղջիկներին արհեստներ սովորեցնել, օգնել կարիքավորներին: Այս հիմքի վրա ստեղծում է **«Հիլալ ի ահմեր»** բարեգործական ընկերությունը (1906, նոյեմբեր):

14 1866թ. Պոլսում, Բանկալթըում հիմնվել է Վիեննայի Մխիթարյան միաբանության հովանու տակ գործող վարժարան, Մաղաքիա Սամուելյանի ղեկավարությամբ: Օսմանյան կայսրության գավառներից բացի հետագա տարիներին Մխիթարյան վարժարաններ են բացվել նաև եվրոպական մի շարք երկրներում:





# ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

(19-րդ դ.)

Վերջաբանի փոխարեն

Օսմանյան կայսրության տերերն իրենց բնույթով քոչվորական տիպի ժողովուրդների ներկայացուցիչներ էին: Այն երկրները, որ նրանք նվաճել էին՝ նստակյաց ժողովուրդների պետություններ էին, որ տարբեր մշակութային ավանդույթներ ունեցող ազգեր արդեն դարեր ի վեր զբաղվում էին հողագործությամբ, արհեստներով, արվեստներով, վաճառականությամբ, ունեին գիտական, գրական բանավոր ու գրավոր ավանդույթներ, որոնք պիտի շարունակվեին արդեն որպես հպատակ ժողովուրդների գլխավոր զբաղմունք և գոյության միջոց: Գերավարված ժողովուրդների հետ ապրելով, մահմեդական մասը ստիպողաբար և ստիպված պիտի սկսեր նրանց նման մշակել հողը, ընդօրինակեր նստակյաց հպատակ ժողովուրդների զբաղմունքը, փորձելով նորովի ապահովել իր կյանքը, շնորհիվ իր հպատակների՝ տեր դառնալով նաև մշակութային նոր արժեքների:

Հայերի դերը Օսմանյան կայսրության մշակութային կյանքի ամենատարբեր ոլորտներում չափազանց զգալի է եղել: Արևմտահայ մշակույթը, չնայած գոյության սոցիալ-տնտեսական տաժանելի ու անհարմար պայմաններին, 18-րդ դարից սկսած այնպիսի մի հզոր զարթոնք է ապրել, որ դուրս է եկել զուտ ազգային, հայկական շրջանակներից, դարձել կայսրությունում լուսավորության տարածմանը և եվրոպականացմանն ուղղված շարժման առաջամարտիկ:

Այս ներազդման, համագործակցության հաջողությունն առանձնապես պայմանավորված է եղել բոլորին հասկանալի, մի ընդհանուր արտահայտչամիջոցի գոյությամբ, որը դարձել էր հայատառ թուրքերենը: Այն ծնունդ է առել որպես արևմտահայության ինքնապահպանման ու ուծացման դեմ պայքարի միջոց, հաղորդակցման միջոց ոչ միայն հայերեն չիմացողների, թրքալեզու դարձածների, այլ նաև մասամբ հայերենին տիրապետողների համար, քանզի բռնի մահմեդականացման, թուրքացման քաղաքականության արդյունքում Արևմտյան Հայաստանում իրենց պատմական հողերի վրա ապրող ավելի քան կես միլիոն հայեր թուրքախոս էին դարձել:

Որպես մշակույթի հզոր, բազմաժանր, ինքնուրույն, ինքնատիպ մի ճյուղ, հայատառ թուրքերենի ինստիտուտը ոչ միայն արդարացրել է արևմտահայությանը ծառայելու իր առաքելությունը, այլև վերածվել է ավելի լայն գործոնի: Նա, առավելապես գոյության տպագրական շրջանում, ծառայել է նաև Օսմանյան կայսրության թուրքալեզու ժողովուրդներին, իր մեծագույն ներդրումն ունենալով նրանց ընդհանուր, մշակութային զարգացման, լուսավորության գործում: Այս ոլորտում առաջին հերթին և առավելապես վերաբերում է թուրք ժողովրդին: Հայ տպարանատերերի, հրատարակիչներից շատերի գործունեությունը դուրս է եկել հայկական շրջանակներից: Բազմաթիվ հայկական տպարաններում են տպագրվել թուրք հեղինակների օսմաներեն, հայերեն, հայատառ թուրքերեն երկերը, թարգմանությունները, փոխադրությունները, ինչպես նաև հայ հրատարակիչների, պատասխանատու խմբագիր-

ների կամ՝ հայ տպարանատերերի օսմաներեն, ինչպես նաև ֆրանսերեն կամ հայերեն, հունարեն, օսմաներեն, ֆրանսերեն, քառալեզու, շուրջ 80 անուն պարբերականները, օտարալեզու գրքեր, որոնք տարածվել են նաև ողջ Կովկասով:

Հայ արտոնատերերի ու գլխավոր խմբագիրների կողմից, հիմնականում նաև հայկական տպարաններում են հրատարակվել թուրքական (օսմաներենով) հետևյալ հայտնի պարբերականները՝ ***Sabah, Saadet, Servet, Yeni Fikr, Hazine-i Fünün, Ceride-i Fenniye ve Edebiye Servet, İrtika, Tarik, Malûmat, Terakkı, Maarif, Geveze, Hafta Karakuş Ezop, Nevsal-i Osmani, Necat-ı Millet, Şikayet, Istanbul, Musavver Turkistan, Resimli Gazete, Resimli Ziraat Gazetası, Yeni Gazete, Mekteb*** և ֆրանսերենով պարբերականների մեծ մասը՝ ***La Reforme, L'Eclair, La Patrie, Intransigeant, Jeun Turc, La Verité, Renaissance, L'Information d'Orient, . Indicateur General des transports en Turquie*** և այլն:

Բացի հրատարակիչ-տպարանատերերից, կարևոր ավանդ է վերապահված եղել հայ գրաձուլիչներին: Նրանք տարբեր լեզուների տառեր են հեղինակել, մատակարարել հայկական և օտար տպարաններին, հսկայական ավանդ են ունեցել մեծ քաղաքներում, գավառներում տպագրական գործի հիմնադրման ու զարգացման մեջ:

Օսմանյան կայսրության լուսավորական մթնոլորտի հաստատման մեջ մեծագույն ավանդ են ունեցել հայ գրավաճառները:

Արևմտահայերի կողմից ստեղծվել է մեծածավալ գրականություն: Հայատառ թուրքերեն պարբերական հարուստ մամուլը, ինքնուրույն ու թարգմանական, մասնավորապես ֆրանսիական արկածային գրականությունը օրը օրին, սովորության ուժով կարդացվում էին մեծ ու փոքր քաղաքների հասարակական վայրերում, սրճարաններում, թեյարաններում, պաշտոնատեղիներում՝ հարյուրապատիկ մեծացնելով ընթերցողների շրջանակը:

Ստեղծվել է օսմաներեն լեզվի ուսուցման դասագրքերի, բառարանների աննախընթաց առատություն (հայերեն, հայատառ թուրքերեն, օսմաներեն բացատրական տեքստերով): Ամենից շատ այն օգնել է նոր թուրքերեն լեզվի կայացմանը, նրա բառացանկի հարստացմանը: Հայ լեզվաբանների հեղինակած թուրքերենի (հայատառ թուրքերենով) հարյուրի մոտ դասագրքերով ու բառարաններով թուրքերը տասնամյակներ շարունակ սեփական լեզուն սովորել են դպրոցներում, նորաբաց տարբեր մասնագիտական, նաև բարձրագույն, բժշկական, տնտեսագիտական, նույնիսկ զինվորական ուսումնական հաստատություններում կրկին հայատառ թուրքերենով օգտագործվող մասնագիտական (ինքնուրույն ու թարգմանական) գրականության հետ միասին:

Գեղարվեստական գրականություն (ինքնուրույն և թարգմանական), պատմական աշխատություններ, գիտական, գիտա-հանրամատչելի գրքեր, փիլիսոփայական տրակտատներ, դասագրքեր, լուսավորական գրականություն, հրապարակախոսություն, բառարաններ, իրավագիտական ակտեր, դիվանագիտական գրագրության որոշակի մասը, տարբեր տեսակի ուղեցույցներ, բժշկական, կենցաղային՝ երգարաններից մինչև երազահաններ ու խոհարարական գրքեր, առողջապահական հրատարակություններ, գրքեր երեխաների համար և այլն: Հայատառ թուրքերեն գրականությունն օգտագործվել է ստեղծելու համար կայսրություն մուտք գործող գիտության, տեխնիկայի, գյուղատնտեսության, արհեստների ու մշակույթի գրականությունը, որը կոչված էր ծառայելու ոչ միայն հայ, այլև Օսմանյան կայսրության





բազմախոս ազգերին, թուրքերին: Հայատառ թուրքերենը եղել է կենդանի օրգանիզմ և ծառայել է ողջ կայսրության շահերին: Իզուր չէ, որ պալատական վերնախավային շրջանակներում 19-րդ դարի կեսերին հարց է առաջացել օսմաներեն լեզվի արաբական այբուբենը հայկականով փոխարինելու շուրջ, որի կենսունակությունն արդեն ապացուցված էր:

